տանաց սրբոց մեհենացն անարգու, և որ զանպղծելի սըբ-
բութիւն գերեզմանացն չմեծարեաց, Թողեալ յերկիր
Թշնամեաց հնգետասան բիւր գիակն անթաղ, երթայ ի
կարքեդոն ի գժոյգակն մահ, տալ զվրէժս նախատանաց
գից և մարդկան։

Իսկ բռնաւորին կասկած լեալ յայլազգի Թիկնա-

ԱՄ ԱՀԱՒՈՐ պահան, արձակեաց ի նոցանէ բիւր մի, և ետ նոցա որ-
պէս թէ ի վարձ զ| Եւմտիոն քաղաք՝ որ դիւր իսկ էր
ի բնակուել և ի գիպան տեղւոջ կառուցեալ. և օտար-
ազգիս ած զիւրեւ պահ, և զտարուկս՝ զորս ազատե-
Գէտ. ԺԴ. 3 ցոյց ։ Լուս խլտեր տիրել ի Ասիկլիա և յաշխարհս մե-
30 4-310 ։ տաւորս, և մանաւանդ զՀռեգիոն նուաճել ։ Լուս կաս-
կածեալ ի վտանգէն ազգք Լոտալոց, նիզակակից լեալ
ամիրացան՝ կալ ընդդէմ աշխարհակալութեան նորա. և
կողմնակք երկաբեան անպարտելի կացին ի պատերազմի ։
Յ--ԳԻՒ. Ծ. Օ այսու ժամանակաւ Պաղղիացիք, չետ ամոց ինչ
է ։ հրահրեցելոց զՀռոմի, հրեշտակութիւն առաքեցին առ
Պիտեսիոս՝ կռել դաչինս ընդ նմա։ Լուս նա յայնժամ
Լոտալիա, և լուեալ Համբաւ՝ զի Կարքեդոն մեծաւ
պատերազմաւ զօրաժողով է ի վերայ իւր, հարկեցաւ
դառնալ ի Ասիկլիա։ Կազմեցին բանակ մեծ կարքեդո-
նացիք, և զօրավար կացուցեալ զԱգաթո, և անդրէն
ձգնեալ, դարձեալ ձախողեցան. և ի խաղաղէ խօսե-
ցեալ ընդ բռնաւորին՝ դադարեցին ։

Յարձեալ միւսանգամ խաղաց բռնաւորն ի վերայ
3615· 389 Հռեգիոնի, և Տարուած խիստ յաւանգնութեան նուագին ըն-
Գէտ. ԺԴ. 312-320 ։ կալաւ։ Լսեալ յայսմ Հռոմայեցւոց և զերեալ
բիւր մի ի նոցանէ, զանձոյսոյն ազատեցոյց առանց փրկա-
նաց, զի ի Հռեգիոնացւոցն լուծցէ գնոսա, և քակեսցէ
զՀզօրն նիզակակցութիւն՝ որ մարթէր եղծանել զնորհրդս
նորա ի վերայ Հռեգիոնի։ Լուս քաղցրութիւն և առատու-
թեամբ յինքն արկեալ զամ աշխարհն, և բարեկամս և
նիզակակիցս զթշնամիսն արարեալ, դարձաւ ի Հռե-
գիոն ։ Օ ի եր ճանրացաւսն ի վերայ քաղաքին՝ վասն
նախատանաց մերժելոց գնա բնակչացն և ըմբոստ պա-
տասխանւոցն, յորժամ հարան իւր խնդրեաց ի նոցանէ ։
Հռեգիոնացիք, զի ոչ կարէին զդէմ ունել բազում
ամբոխին՝ որ պաշարէրն գնոսա, և զի մահ և անհրա-
ժեշտ ի վերայ կայր՝ եթէ բռնի նուաձէր քաղաքն, խոս-
տեցան ի հաշտութիւն. և զնդալ բռնաւորն՝ տուժեալ ի
նոցանէ երեքարիւր քանդար, և զամ նաւս նոցա՝ որ
էին եօթնամաւոն, և հարիւր այր պատանդ ի նոցանէ
կալաւ, և ելոյծ զպաշարումն. իբր ոչ եթէ առ գուժ
ինչ և քաղցրութիւն, այլ զի տկարացուցեալ գնոսա՝ ան-
վրիպելի կորուսցէ, որպէս արարն ։

Օ ի ի միւսում ամի պատճառս յուզեալ ի վերայ նո-
ցա, բարբարոսք ուխտադրժութիւն դարձոյց զպատանդս նո-
ցա, և եկն պաշարեաց գնոսա ամ զօրօք։ Ձիկն բազում

երկուսեակք գործեցին. Կէսք ի վերէ, կէսք յերկիւղէ անողորմ պատուհասին գրգռեալ՝ Փիտոն հրեշտոնա-յեցաւ զօրավար գոռ և անվեհեր, և ի վտանգս արիա-գոյն, ստէպ խիզախեալ՝ յարձակէր զօրուն. և ի միում ուրեք ի յարձակել նորա՝ խոցեալ բռնաւորն, մահա-պարտ եկեաց ի վերացն։ Եւ յերկարեր պաշարումն քա-ղաքին, և ամիսք մեռասան ի վերայ անցանէին, և սաստ-կանայր սովն յոյժ՝ մինչև եղև կէսքն ցորենոյ հնգից մինչ-սուց։ Պատեցան ձիք և գրասէք բեռնաբարձք ի կե-բակուր, և ամրքն և զկաշի եռացուցեալ կերակրէին. մինչև ապա հանգոյն անասնոց խոտաձարակ եղեն ի գաշտս. և զայն ևս պաձար փուքացեալ երթալ ի նա-ցանել բռնաւորն, ձարակեցուցեալ ձիոց զնոմ գալարք խոտոյ շուրջ զբազաբանն։ Ընտացաւ հարկն, անձնա-տուր եղեն պաշարեալք, և եհաւատ բռնաւորն ի քա-ղաքն, և էր այն լի սովամահիցն դիակամբք, և կմախք ապրեալքն երևէին. և կալեալ վեց հազար այր, գերի խաղացոյց ի Սիրակուսա. և որ բաւական էին ի տաժել մի միասն զնոսա արձակեալ, զայլս վաճառեաց։ Եւ ըզ-ցասումն իւր եհեղ ի փիտոն, և զնոմ վրէժն ի նմանի եւոյծ։ Եւ նախ զօրգի նորա հրամայեաց ի ծով ընկէ-նուլ. և զնա ի վաղուն ետ պրկել ի բարձր կախաղանի ահեղութեամբ, և անդ գաժել նմա զծովահէզն կորուստ որդւոյն։ Եւ պատասխանի ետ հիւպատեալ հայրն. Ո՛ ազագոյն ապա քան զիս եհան բազդի։ Եպա հրամայեաց բռնաւորն գանիւք և նախատանօք շրջեցու-ցանել զնա ընդ ամ քաղաքն, և քարող կարգայր զվնաս նորա՝ զի որ զՀունեփիոն ապստամբեցոյց, զդաւայ և զնէն գունն վրէժս տայ։ Իսկ արի ախոյեանն ազատուէ ի տե-սիլ մահուն առաւել ևս արիացեալ, ասէ ցքարոզն. Ո՛ այդպէս, այլ գոգիր, զի որ չմահանեացն զբաղաք իւր և զՀայրենիսն բռնաւորին՝ զՀաւատառուհունն վրէժս տայ։ Եւ ամենեքին ի տեսիլ յայն և ի լուր փղձկեալ ար-ձատուէին, և զինուորքն իսկ բռնաւորին։ Եւ բռնա-ւորն հրամայեաց նոցա ընկեցիկ առնել զնա ի ծով, թէ գուցէ մինչև յայգեալ էր վրէժխնդրութեն զբերին զերծուացեն։

ԳՕԴՈՒԱՆ Դ.

Վ ասն Վրնեհեայ մոլորելեն ի ժերեռուբէ, և փեսուբէ ի նոյն. և վասն արտուհեացն փաղաչեայ ապաստարուբէն, և արբեկան փիլ լոխենի համարյակուբէն, և Վրնեհեայ դիսանելոյ, և որ ի նմա ելոր ինել էր։

Դէպ. ԺԶ. 3։8։ Ի Հաեգիհոյի արշաւանէն խաղաղուբէ առեալ Վիռնեհեայ, քանզի փառացաւ տեսչ անպարտուբելի եր ի նմա, և ի հանձարոյն և ա քաջուբէի պանծայր, զվէարիդես զեղբայր իւր յղեաց յԱղիմպիա փոխանակ իւր՝ մրցել ի կառարշաւս և ի վէճս քերթողացն։ Վ՚յլ արդ քանզի ա առաջի կայ մեզ ասել զախորժակաց նորա կամ մաննատանդ զնուլուբէնէն ի քերթուբէի և ի բանասիրուբէի, որ են տիպք կերպարանաց նկարագրին նորա, և ի նմա չար ընդ բարւոյ խառնեալ գտան, հարկ է զգուշելն ի նմա և զնպերանացն ընտրել։

Օ այս՝ և զնմ՚ բնաւորուբէց նորա ասեմք. զի զիա ռամնուբէն և զբռնաւորուբէն չարին՝ յորում քէ և մեծամեծ բարեօք մեղմեաց, զորս ոչ է պարտ լռել. քանզի և եղեռնաւորացն պարտի ձշմարտասացումն վկայ իրաւունս առնել, զի ոչ ամենևին ինչ չարք են։ Վ՚ցայ քէն բազում ինչ գովելի իրս զբարուց Վիռնեհեայ ասացաք, զի քաղցրուբէ ազատախօս բանիցն Վիռնի իսէր պատմուբեան, և զի զարմացաւ ընդ հմարձակ և ընդ արիական պատասխանին քեռն իւրոյ Ֆաւստայ՝ վասն փախստեան առնն, և զի մարդասիրապէս բազում ուրեք զիջանէր ընդ սիրակուսացիս, և խնամարհեցուցանէր զանձն ընդ ռամկին և ընդ գործաւորս, և զի գնայն սէր առ երկոսին կանայսն կալաւ, և զի պատիւ և մեծարանս առնէր նոցա։ Ոյրովք ուղղուբէի և չափ և բարուբէի և աշխուժականուբէի անակնկալ՝ի նմա տեսանին. զի ոչ որպէս զվաղարիան որ եր բռնաւորս այս, կամ իբրև զՎ՚զբեսանդր զփերեսացին, կամ իբրև զՎալենտիանոս, և զՎ՚երոն, և զՎարակալա։

Վ՚րդ՝ի կարգն եկիմ՝ի քերթողական ախորժակս Վիռնեհեայ։ Պարապեալ՝ի Հոգոց իրաց աշխարհին, զորս նոյը ընդ հանձարեղս, և՝ի փոյթ արուեստից և գիտուբեաց։ և առաւել՝ի տաղաչափել և՝ի բանաստեղծել, մանաւանդ ողբերգուբեան։ Վ՚ինչև ցայս վայր ուղիղ խոհ

և ի պատշաճն էր խնդ Վիմնեսեայ բանասիրելն և մեծարել վիմաստունս, և բարի առնել նոցա, և զպարա-
պոյ ժամանակն յայն ի կիր արկանել։ Օ՛ի ոչ առա-
ւել լաւ էր ի հրահանգս մտայ ծախել զայն՝ քան ի
խնջոյս և ի պար, ի տեսիլս, ի խաղս, ի մսոտի զբոյցս,
և ի վնասակարն ևս ի զբօսանս։ Օ՛այս այսպէս իմաս- Պլուտ. ի Տի-
տուեցեր խորհեցաւ կրտսերն Վիմնեսիոս, մինչ էրն ի մոն. 243։
Աղրնեթոս. քանզի փիլիպպեայ մակեդոնացւոյ յընդհրմն
ընդ նմա՝ հինգնեակ և ծաղր արարեալ զայր նորա, թէ
չգիտեմ որպէս պարապ գոռաներ ի յօրինուած տաղիցն
և ողբերգուելոցն, խոստ և հանճարեղ ետ զպատասխա-
նին. Ոչիրաւի չգիտիցես. զի զպարապոյ ժամանակին զայն
գու և ես և ամբոխ մարդկան՝ ի գիներբուս և ի զբօ-
սանս անցուցանեմք, նովին իրրւ և եմք սոցին իրաց դժուա-
րահաւատք։

Ա՛յս և Ոյուլիոս կայսր և իւրքնակաչն Ադոստոս քեր- Սուետոն. ի
թողականին բարգաւաճողք եղեն և արարին ողբեր- Կես. Ծէզ. և
գուելիս։ Ի ուկուլլոս գլխաւոր պատերազմացն, զորս Պլուտարք. ի
միւեաց, խորհեցաւ ի չափ տաղի աւանդել։ Այս կատակ- Լուկ. 492։
երգուածքիդ Ջերենտեայ՝ համարեին Ի ելիոսի և Վկէ
պիոսի, որ երկոքին գոռ պատերազմողք էին, մինա-
նդ Վկիպիոն. և կարծիքն այն ի համբաւ ածեալ ի
Հռովմ, ոչ ի տգիտաց եղև նոցա՝ այլ մանաւանդ ի
փառս։ Այսպա պարապուն այն ոչ էր իւքնին գործելիք,
և ոչ քերթողականին ախորժակք ի պատշաճն սահմա-
նեալ՝ եսերելի. այլ զի Վիմնեսիոս ի վեր քան զնմ
քերթողն թեւակոխեր, այն ի նմա ծաղրելի էր։ Օ՛ի
և ոչ միով իւրք ի վայր կամ հաւասար լմնեալ այլում
յանձն առնոյր. և վասն զի իշխանութիւն ի վեր էր քան
զամենեսին, համարէր և յոյժ մասունս հանձարոյ գե-
րազանցել։ Համառօտիւ ասացեալ ամենևին չյամի բըռ-
նաւորեր։ Վահասխրուելն և տիրապետուելն տենչ,
յոր բարձիւն գրգեր, էին հզօր պատճառք ամբարշա-
ւառուելին. էին դարձեալ և շողոմ աքբունիքն, և միա-
բան անլռելի գովութիւք հաճախոհիցն ի պատրել զնա
հրապուրական պարծանօքն։ Այս եթէ աւագ ոք է կամ
իշխան կամ թագաւոր, և գովի հանապազ և սպասա-
ւորի յամենեցունց, յինչ զանձն անձեռնհաս կարծի-
ցէ՝։ Ընդրանաւորն Աիւլեւ, որպէս ամենեցուն է յայտ-

1 Ձկէ ինչ յոր զանձն կարծիցէ ոպիկար։
Ինչ զինչ իշխան ոք գովեսցի հաւասար։
Յոհան. Էրփին. Ֆ. 71։

նէ, ի բազմազբօս հոգս իրաց՝ ոչ միայն թատերգուհիս արար, այլ և ձգնեաց զերազանցել յարուեստին. յայն նախանձ մնեալ՝ մինչև խլեալ սոգտմանել զքերթածս քաջաց քերթողաց, զորս նախապատուէ ժողով լսնաստ նոց՝ անխոթ գատաւոր և արդար լերիս յայսմիկ։

Ոչ խորհեցաւ Պիսնեսիոս՝ զի բազում ինչ ինքն իւրև գովելի է և սոսկականին փառս գործէ, այլ թագաւորի գերազանցել ի նմա գժպատեհ է։ Պարձեալ վերստին յիշեմ զվիլիպպեայ մակեդոնացւոյն, զի զորդին իւր զԱլեքսանդր ի ինջոյս ուրեք ի ձարտարն երաժշտել խրատեր. Յամաչես այգպէս քաջ նուագել։ Օ՛ն այն քաջալերիւն արքայազնին անձնաշ էր։ Լթէ կեսար և Օգոստոս ի քերթել զողերգուհին՝ հաւասարել խոչհին Սոփոկղի կամ յաղթել, ծաղր կայնի. նա և յաղթեալն ի նախատինս էր նոցա։ Լաւ ընդէր։ Պանզի թագաւորի կարևոր և անհրաժեշտ պարտք են՝ հոգալ հանապազ յերս աչխարհին. և ի բազմաթախտան հոգս իւրաքանչիւրոց պատեղեալ, զի ի նա ամենեքին իբր ի միջակետ գիմեն, առ ի սիսփուսն միայն և առ սուղ ինչ մարթի զգիտութիւք գալ, և չէ նմա կարևորն պատրուակ ի յաղթել այնոցիկ՝ որ զնովիմբք ևւեթ գայցեն, և զնմա փոյթ յայն ժողովելն։ Պայն իբրի ժողովրդեան տեսեալ զթագաւոր՝ յաղթասէր ի գիտութիւս, գուշակէ զքերահոգ խնամն նորա ի կարևոր պարտսն և ի յարգարել զբարեկենդանութիւն աչխարհին, վասն պատրուակելոյ նորա ի զբաղումն՝ յոր ընդ վայր ժամանակ նուրա և կորովք մնացեն վատնին։ Պայլ պարտ է ասել՝ զի Պիսնեսիոս քերթողութիւն խանդիս ոչ կասեցոյց զփոյթ և զմտադիրութիւն ի հոգս կարևորացն, և ոչ ինչ թողացոյց յայնցանէ։

Դիոդ. ժգ. 518։ Պիսնեսիոս պարապ առեալ ի պատերազմէ, որպէս յառաջ ասացաք, յղեաց զեղբայր իւր զԱնտիոքոս Աղքմնիա փոխանակ իւր՝ մրցել ընդ կառավարութիւս և ընդ քերթողս։ Որ իբրև եկն եշաս անդր ի Տնդկս, զարմանային ամենեքին ընդ գեղ և ընդ բազմութիւն կառացն, և ընդ պերճ և փարթամ կիսուած վրաննացն ոսկւոյ և արծաթոյ։ Լաւ ի լուր տագնիցն զմայլեցան ամենեքին. զի ընծերցողս՝ յորդառձիսս քաղցրաձայնս փափկավանկս ընտրեալ էր՝ որ յատակ ի հեռուստ լսելի լինէին, և քաջալերը արտասանութիւնն՝ ազ-

1 Որ Հագներգուք Լեգէն։

գոյ և գաշնակաւոր առնելին զառաջն ։ Յակինթոս եղեն լսօղք , և քաջ առողջանալ՝ արուեստիւ և քաղցրութիւ պատրեաց զամենեսին ։ Ա՛յլ ոչ յաւելին՝ ի գնայլսանն, և ոչ միաբ յոմնկանէն ընդերկար խաբեցան. տաղիցն անհամուճի ծանուցաւ, և ամաչեցին գոլօղք, և դրուատ և ծափ ՚ի ծաղր գարձան և ՚ի հնչուն թշնամանաց. Յայն արհամարհանս և ՚ի սրտմտուել ամենեցուն ածեալ զի զսակեաւամուկ գրանս բռնաւորին հերձուին ։ Իսպիաս Ձարտարախօս անուանի, որ անգր յողիմպիական ՚ի խաղն եկեալ էր ՚ի հաւատոյականին գուսպ՝ բազմայաղթ նահատակն, խօսեցաւ և եցոյց հանձարեղ Ձաւխ՝ թէ նախատինք են Հելլենաց, անօրանացն և սիբոյաց ազատութիւ, ՚ի սրբազան տօնս խաղուցն զբռնաւորն զամպարիշան մուծանել, զայն որ ծառայեցուցանէն զԼլաղա խորհէր ։

Ա՛յլ ոչ կարծեմ և զերժանիին զայն ՚ի թշնամանս նոր յաւելել. բայց արկածք իմն ոչ ինչ ընդ Ձատ յայնմանէ հասին նմա ։ Վանգի կառք նորա յասպարիզին՝ անգր գան գնացատուին յախտուն վարեալ, ընդհարեալ յերեսաց՝ խորտակեցան ։ Ձե այն և ևս չար ազէտք. նաւն՝ որով գնայրն ՚ի նամանէ յՈղիմպիա տեսուչք խաղուցն՝ հարաւ յուժգին մրրկէ, և մազապուր գարձեալ անկաւ ՚ի Ալերտուսս ։ Ձե նաւավարք առ ատել և անգոմանել զբռնաւորն՝ համբաւեցին ընդ քաղաքն, զի ՚ի պատձառս գձուձ տաղից նորա՝ և ընթերցողացն և կառավարաց և նաւուն գվնասին հասին չարիք ։ Ա՛յլ ՚ի ձախող արկածիցն ոչ լքաւ բռնաւորն, և ոչ ցածեաւ յամբարշաւաձ ձուխնէն ՚ի քերթողական աժխոյժս ։ Օի և մարդահանոյք խոհեալ գնացաւ յերբունեսս գնախանձն էս մացուցանելին նմա լուտանաց քերթածոցն պատձառս, իբր թէ ընդ լուսն մախայ, և թէ վաղ կամ անագան և նորին նախանձողք հարկեցին յանկնել Ձմարտուեն թենին՝ իրաւ առնել նմա, և քան զամ՝ քերթողս գնա սնծարել ։

Կաբի կամակոր էր յայսմիկ բռնաւորին յամառութե ։ Կոռ պատերազմին և քաջ զօրավար, տաղիքն պանծայր ՚ի վեր քան զամ՝ քերթողս. և քան զբռնաւ յաղթութենին՝ առաւել գքերթածոն համարէր իւր ՚ի փառս. և թէ ոք գնաբան խորհէր նշաւակել, ընդունայն Ձինեալ և գժպհի ևս լինէր նմա ։ Ալին իրն և քանաձգեալ և քերթողք յաձախ սեղանակից լեալ ընդ նմա, ՚ի լուր տաղիցն յակինթոս և ՚ի զարմացմանն լինել կեղ

ծաւորէին. և Թուէին տաղք նորա ամենեցուն վեռնէ և վերէն և արքայականք, և դիւցականք իսկ։ Յամենեսին՝ ի նոսա փիլոքսենոս ընդ ուղիս մարդաձաձոյ գովելեցն ոչ զառածանէր։ Այլ էր նա ականատես, և քաջ Հայկդանէնին քերթուէին. և ասի զնմանէ բան, զոր և Աֆրոդիէն բարւոք ի կիր առնու, զի Յընթրիսն երբեմն ընդ բռնաւորին՝ եդաւ առաջի նորա ձուկն փառքիկ, և բռնաւորին առաջի մեծ. և նորա զկնի առեալ յունկն մերձեցոյց։ Այր հարցեալ ի բռնաւորէն՝ ասէ. Օ բոյցս զԱերեայ ժամանակաց հարցանեմ, այլ ծովաքնակս հիւր կրսեր է յայժ ժամանակաւ և ոչ գիտէ. իսկ զոդ երեց է և հինաւուրց, և զերս ժամանակս կացն անչուշտ գիտիցէ։

Այդ զսա ի միւմ աւուրց ստիպեաց բռնաւորն՝ զիւրոց տաղտկի դատաստան առնել ընթերցեալ առաջի նոր՝ զտաղն. և նա ազատօրէն համաձայնակ, որպէս Թուէրն նմա, ասաց։ Այլ բռնաւորն յանդգնել պատասխանոյն խոցեալ, ի մխանան գրեաց նմա զայն, և հրամայեաց տալ զնա ի քարաշատ ի բանտ հասարակաց։ Ազնեան արբունքն Թագաւեալ և սասանեալ՝ գԹային ընդ արի առնն պատուհաս, և աղերսանօք ազատեցուցին զնա։ Ի վաղիւ անդր արձակեցաւ փիլոքսեն, և դարձեալ սիրելի եղև բռնաւորին։ Այր ի նմին աւուր դարձեալ բռնաւորն նոցին կոչնականաց ընթերիս տուեալ առհասատեայ հաշտութեն՝ ուրախութիւ և զուարթութեն քան յայլ նուագս, յետ բազմախորտիկ յերկար ձաշոյն՝ ի գրոյցն ի ներքս էած զտաղս իւր, որպէս յամաին խօսեր զնոցանէ. և հատուածս յայնցանէ, յորս բազմաչխատ լեալ էր, և համարեր զայնոսիկ գլուխ քերթածոցն իւրոց, ախորժիւ և ամբարհատածութեն վերծաներ. այլ էր ինդութեն նորա թերի՝ առանց վարկի և գովութեան փիլոքսենեայ, զի զնորայն յայժ առաւել քան զայլոցն գատաստան մեծարեր՝ վասն ոչ չհայլելոյ նորա զգովութիւն։ Այլ նա յերիկէ բառ ևս խրատեալ, ի միւսանգամ հարցանէն ի բռնաւորէն՝ ոչ խռովեցաւ, և ոչ ինչ ետ պատասխանի. այլ դարձեալ առ Թիկնապահն՝ որ զսեղանոյնն կայնի, լուրջ և զուարթ ասէ. Վարձուցէք զիս ի բանտ։ Այսբը և ազդոյ և անկեղծ զուարճախօսութեանն խեղճացեալ եղև բռնաւորն, և յայլ ինչ ոչ խորհեցաւ. Օ ի հանձարեղ ասացուածն զհայթ համարձակախօսութեն բեթեցոյց, որ այլազգ՝ խոցերն և կսկծեցու-

ցանկը զնա. և ծիծաղեցաւ միայն բռնաւորն, և ոչ զբաղեցաւ[1]։

Պլուտ. բա-
րոյ. 78. 853։

Ա՛ՍԼ ընդ ծաղրածուին Պտոլեմէոսի ոչ արար այն-
պէս. զի նորայն պլազդ ինն էր, սաստիկ և վայրագ։
Օ՛ի ժողովի ուրեմն եհարց բռնաւորն՝ թէ որ ազգ
պղծոյ ախտագոյն է. և իբրև այլք այլ ինն ասէին,
Պտոլեմէոս ասէ. Ա՛յն՝ յորմէ Բրիսթոտիմոսի անդրիք կանգնեցան[2]։ Այս ի վարձ հանճա-
րեղ ասացուածոյն, եթէ հանճարեղ զայն մարթի ա-
սել, ընկալաւ զմահ։ Ա՛ստ բարեկամք փիլոբաննեայ
խիթացեալ զի մի ի կարի համարձակութենէ և նմա հաս-
ցեն չարիք, խրատ ետուն նմա՝ զի որում ընդ թագա-
ւորս կեայն, պարտ է ըստ մտի նոցա բարբառել. զի ըզ-
հաճոյն ցանկան լսել նոքա. և որ կեղծաւորէն չլե-
ւոիցէ, ոչ է նմա անկ յարբունիս կալ. և արժան է ընդ
չորշհայն և ընդ առատ պարգեւաց առնել զՀաղոյս ինչ
բռնաւորին. և զի արդարախօս համարձակութեան՝ ոչ
միայն իշխանութէ իւրում, այլ և կենաց գործէ վտանգ.
և փիլոբաննէ յանձն էառ լսել նոցա, և յայմ հետ
երկիւղս առնել զպատասխանին, և զբռնաւորն հաձել՝
առանց դրժելոյ ձշմարտութեան։

Դիոդ. ԺԷ.
332-337։

Հետ սակաւ ժամանակի դարձեալ ընթերցեալ բըռ-
նաւորին առաջի նորա զմի ի տաղերգուացն, զոր ի տխուր և
ի սգալի ինն եղերերգեալ էր՝ յողբս և ի գոռոզ լսո-
ղայն, և եհարց զնա թէ նա երկդիմի բանիւ, Հղօրութիւն
է տաղդ, ասէ, Հոր և զեղերականն յայտ առնէ զարբա-
մասութն զաշխարհին և զգործակատն, և այլազգ ևս՝
զդծուծն զանհամ և զանալի։ Ա՛յդ բռնաւորն մեծաս-
մեռել ի տաղս իւր, և հեռի ի կասկածանաց եպերա-
կան իմաստից, բարւոյ մասին վարկաւ զասացուածն, և
հաձեցաւ ընդ փիլոբաննէ. իսկ այլք ստոյգ իմացուածիւ
ի վերայ կացեալ բանին, լռեցին։

Ա՛յդ Պտոլեմէոս զակատեալ զհետ քերթուածէ ան-
կասելի, միւսանգամ՝ որպէս կարծեմ Պտոդորի սիկի-
լեացւոյ ասել՝ յղեաց Հաղեմիմիա տաղս հանգոյն առաջ
նոցն, և դարձեալ ծաղր լեալ՝ զնոյն զառաջինն նախատինս
կրեաց։ Ա՛յլ լուեալ զայդ իբացն, քանզի չմարթէր ծած-
կել զայն, անկաւ ի դառն տխրութէ անմխիթար՝ մինչև մե-

1 Հայնժամ ընդ ծաղրածուէն Դիոդ. ԺԷ. 33։
բանին ծիծաղեալ Պտոլեմէոս,
ոչ ընդ միս ինչ տաբաւ. քան-
զի ծաղր զսգագանն թթեցոյց։

2 Որ վկայեն ի բռնաւորէ պէ-
տութեան ազատելոյն։

լեգնել և ցնորել. և վարկանէր զնահանձ և զմահսոս՝ որ անշաւտ թշնամիք են քաջութեան՝ յանմուէր մարտ զրգռել, և զոհեցեր միաբանել՝ ի կործանել զիատս իւր. և զբարեկամս մտերիմս իւր՝ համարեր նոցին դաւակից։ Այլ բարբանջ զգաղումս՝ ի նոցանէ սպան, և զայլս աքսորեաց, և զ[1] եպտիսէս զեղբայր իւր ընդ նոսա, և զՓիղիստոս՝ որ մեծամեծ վաստակս նմա ածեալ կեալ էր, և զիշխանութեն նորա պահեալ։ Այլ մեկնեցան գնացին նոքա ի Թուրիոն. և յետ սակաւ ժամանակի՝ կոչեցեալ անդրէն, կալան զառաջին փառսն և զմեծութեն. և ետ Լեպտինեայ բռնաւորն զգուսար իւր հնութեէ։

Ամարթեր նմա առանց զգաղանաց սեպհեալ՝ ի տրտմութենէն վասն եպերանաց տաղտկի. և պատերազմունք և շինուիք եղեն նմա ի զգաղումն։ Պաղեստինս հզօրս խորհեցաւ բնակեցուցանել՝ ի կողմն Լատլոյ, որ առ Հանդրէն ծովուն կացեալ Հայի Լայպերոս, և պատրաստել ամուր ապաւանի նաւատորմին իւրում՝ ի մղել զնդ այն պատերազմ։ Լմին իբրև զնդ լուրիկացին ուխտ նիզակակցութեան եդ, և զԼգեետաս արքայ Պողոսոց գարձոյց յիշխանութեէն իւր. քանզի խորհեր արշաւել նախ Լայպերոս, և ըմբռնել զանբաւ գանձն՝ որ ի վաղ ժամանակաց ի մեհենին Պեղպեայ մեբերեալ էին։ Այլ ի նոյն խորհուրդ, յոր կազմէը մեծաւ հարկ էր պատրաստել, դիւրին ինն արշաւանս փորձեաց. և դիմեալ Լայտրուբիա, իբր թէ զՀնոս զնդ ծով վանեսցէ, կապտեաց զմեհենին բազմագանձ՝ որ էր յարձակավայրս Լգիլեայ քաղաքի, և առ անտի աւար հազար և հինգ հարիւր քանքար։ Լմին իսկ նմա պէտք արծաթոյ՝ ի ծախս յոլովս ի Լիբանկուսա՝ յամուրն նաւաշանգստին. և զի խորհեր պատրաստել անդ տեղի ընդարձակ երկեքիւր մարտիկ նաւաց, և պատէ զքաղաքն ամուր պարսպ պզբ, և կառուցանել մեհեանս հոյակապս և վարժոց առ Լնալ գետով։

Դիոդ. 338. 384, [1] Ի նմին ժամանակի խորհեցաւ և գկարքեդոնացիս բնաբարձ առնել՝ ի Լիկիլիոյ՝։ Այլ միանգամ գյաղթեաւն կալեալ, խրախուսեաց յելս գործոյն. այլ յերկրորդումն ձակատու Լ եպտինէս եղբայր նորա անկաւ, և բարձաւ յոյս նորա, և Հարկ եղև նմա կռել դաշն ընդ կարքեդոնացիս, և Թողուլ՝ ի նոսա քաղաքս, և

[1] Ջոյնանէ՝ ի վեց կարեզորի տասոյս։ Հատ. ա. 154։

տուժել զծախս պատերազմին գանձս բազումս։ Այլ յետ ամաց, մինչ դեռ Կարբեդոն աւեր անմարդկ կայր ի ժամանակին, պատեհ առեալ՝ միւսանգամ եկ ի պա-
տերազմ, և զարձեալ ձախողեաց նմա։

Այլ այլ ինն յաղթութիւն իբրև զղինեալն ցանկալի նմա՝ փոխանակեաց ընդ պարտուէն, կամ դէթ մխիթա-
րեաց զնա։ Վասնզի Արքէնիա ի սպանդարանոցական բազմահնչակ ոռնին ի մրցմունսն էհան զողբերգուն իւր, և յաղթող քարոզեցաւ առաջի քննադատից կռ-
ուածոց աթենացւոց. որով յայտ առնի՝ զի ոչ յոյժ անարուեստը և գծուծք եին բերթածք նորա. այլ յո-
ղիմիկական խաղս՝ առ առելութենէն Թերևս ընդ բռնա-
տորն ունելոյ՝ անարգեցին Հելլենք զտաղս նորա։ Արդ այս որպէս և է, ընդ աւետիս յաղթութենէն անչառ խրն-
դութեն եղև նմա։ Միաբանական գոհութենէք մատուցան դից, և խունկելոցն բազմութենէ անձկանալին մեհեանք. և ինձգք և խրախունք քաղաքաժողով արարան, և յորդ-
առատ պարգևս բաշխեաց բռնաւորն ամ բարեկամաց իւրոց։ Այլ ևս ամբարհաւատեալ՝ որպէս ի բուն ծայր փառաց հասեալ, զուարթութենէ և սթափութենէ զկոչնա-
կանս մեծարէր, և պատշաճ վայելչութենէ՝ ընդ որ ամե-
նեքեան զարմանային։ Այլ օրինակաւ քան բանիւ յոր-
դորեալ զայլս ի ձաշ և խրբուսն, յառաւելն չուայ-
տել՝ ի տշալ կերակրոցն խիթք ի փոր նորա անկան, և յախտ մահու ջերաւ։

Այն նմա որդիք երեք ի Պաղեայ. և յորք Այքիս- Պլուտ. Դ
տոմաքեայ, յորոց երկոքին՝ գաւեղք եկին, միւսին անուն՝ Պաղ. 960։
Պտիրոսինէ, միւսումն Այքետէ։ Այս ամաւնսացաւ Պ-
տիրոսինէ ընդ անդրանկին նորա ընդ կրտսերոյն Պխինե-
սեայ՝ զոր ծնաւ նմա Պաղիս. և Այքետէ ընդ եղբօր իւ-
րում Պէպրիդեայ. և յետ Պէպրիդեայ մեռանելոյ՝
զայրին նորա զԱքետէ կալաւ Պխին ի կնուէ, զդուստր
քեռ իւրոյ։ Այլ իբրև ոչ ևս էր ապրանաց բռնաւորն,
յանձն եառ Պխին խօսել ընդ նմա վասն որդւոցն՝ որ
ծնեալ էին նմա Այքիտոմաքեայ ի քեռանէ իւրմէ,
զորոց զբայրն կալաւ կնութենէ, և հաւանեցուցանել նմա՝
զի զսիրահաւսեցոյ կնոջն որդիս քան զայլազգւոյն պա-
տուեսցէ։ Այլ կրտսերոյն Պխինեսեայ՝ որ ի Պաղեայ
ի լսելիսացոյ կնոջին ծնեալ էր և Թագաժառանգ օգ-
նական եղեն բժիշկք, և ժամանեալ չետուն պարապ
Պխինի։ Վասնզի բռնաւորին Թմբրադէղ խնդրեալ ի
նիրհ, նոքա զսաստիկն եռուն յարբուսին, յորմէ քնաւ

զգայուէքն ընդարմացան, և քնոյն յաջորդեաց անընդ-
մէջ մահ։ Եւ մեռաւ Պղիտոս, թագաւորեալ զամս
երեսուն և ուէթ։

Այս այր քաջ և բազմահմուտ լեալ քաղաքավարու-
թեամբ և ի հրահանգս զինուց, զի և չմարթէր իսկ նմա
այլազգ ի ռամիկ բաղդէն ամբառնալ ի բարձր աւա-
գութենն, և զերեսուն և ուէթ ամ խաղաղութեամբ կալեալ
զիշխանութենն, ժառանգեցոյց զայն որում յորդւոցն
հաճեցաւ. այնպէս հաստահիմն արարեալ զայն, զի և
ապիկար որդին յառաջնորդութեան անկորուստ կալաւ
զհայրենի իշխանութենն զամս երկոտասան։ Արդ այս ա-
ռանց մեծի քաջութեան չյաջողէր. այլ որ քաջութեն ծաճ-
կեսցէ զչարիսն՝ որովք ատելի եղև ամ ժողովրդեան.
զփառամոլութենն անդր քան զպայման և զօրէնս, զա-
գահուէն անխիղճ և ի կողոպուտ սրբոց մեհենաց, զան-
գթութեն անխնայ և յընտանիսն, և զկոլանէ անպատկառ
ամպարշտութեն՝ որ յարհամարհել միայն ունէր զաս-
տուածգիտութեն։

Կէն. յաղ. էն. ԻԹ. ԺԷ. ԺԳ. ԺԷ։

Ո պերսեփոնեայ մեհեանն կողոպտեալ ի Հռոկրիս, ի
դառնալ իւրում աջողակ հողմով ի Սիրակուսա, ասէր
ցիւրսն հենգնելով. Տեսէք զիարդ զիք անմահք յաջողեն
սեղանակապտից զնաւարկութեն։ Եւ ի սպառազինութեն
մարտին ընդ կարքեդոնացիս՝ կարօտ լեալ արծաթոյ,
կողոպտեաց զմեհեան Պրամազդայ, և զնորին իսկ զոս-
կեձոյլ օթոյն զերծ, զոր բռնաւորին Հերոնի յաւարէ
կարքեդոնացւոց նուիրեալ էր նմա ի զարդ, և ասէր
ընդ ծաղր, Թէ ոսկեզէնն այն ծանր է յամարայնի, և
ցուրտ ի ձմերան. և ետ արկանել զնովաւ աստուի զիւ-
րատար յամ ժամանակի։ Եւ զԱպիդաւրեայն Պ.ս-
կղեպեայ զոսկի մորուն հրամայեաց բառնալ, իբր թէ
անպատեհ է հօր[1] անմորուի՝ մորուանի որդի։ Պարձեալ
և յամ մեհենաց զսեղանս ոսկիս եբարձ, և զի ԱՒ ԴԻՍՆ
ԲԱՐԵՐԱՐՍ արձանապրել ի նոսա ժողովուէն էր հել-
լենաց ի վաղ ժամանակս, ասէր. Կամիմ ինձէն զչափ
առնուլ բարուէն նոցա։ Եւ զախոյենակս և զբաժակս
և զպսակս ոսկիս ի ձեռաց դրօշելոց բառնայր անխիղճ.
իբր ոչ յափշտակուէն, այլ պարզեւս ի նոցանէ ընդու-
նելով. զի ասէր, Ընդի է որ ցանկ բարիս մաղթէ ի
դից, և յինքնաձեռն ընձեռեալնոցա՝ հրաժարէ և չառնու-
ցու։ Եւ զայն ամ կապուտ հրամայեաց ածել ի հան-

1 Զի վանդոն վհայր Աւիղեպեայ անմորուս դրօշէն։

դէս վաճառաց. և առեալ զդինն, ասպա հրովարտակ արար՝ զի առ որում միհենական լինչ կայցէ, ածցէ՛ի սահմանեալ ժամանակի յիւրաքանչիւր միհեանս. և զանձ իրաւունս յառել յամպարշտութիւն։

Օ երկիւղալից և զլի տագնապաւ կեանս նորա՝ յամե ընդ ելական զգուշութեացն՝ ի միա առնուելք, որովք զգուշանայր անձին։ Օ՛ի զբաղ պղնձի ընդ հանդերձիւն կրէր. և առ ժողովուրդն յաւետարակէ բարձուէ հրաւ պարակախօսէր. և անմատոյց՝ ի մարդկանէ կայր յամրի. և չուսացեալ յոք՝ և՛ ի բարեկամն և յազգականս, յայլազգեաց և՛ ի տարեաց ածէր զիւրև պաշ. և դուն ուրեք, որպես մարթէրն, ելանէր արտաքս, առ գեղական կացեալ իբրև՝ ի բանակ յերկիւղէն։ Ա՛ամ զայսոսիկ խիստ զգուշութիւն ընդ ժամանակս լինչ երեւի արարեալ, մինչ գաւառանաքն յանձակէին և երկիւղն և կասած։ Օ՛ի յայլ ժամանակս համարձակ էր ընդ ժողովրդեան և՝ համ՛ոյր և ընտելասէր, որպես ասացաքն. այլ՝ ի կասկածանն և յերկիւղ՝ ամենեքին թշնամիք թուէին նմա։ Ի՛նդ միով բարբառոյ՝ որով պարծեցաւն ընդ խազ վարսակիրսն, զի՛ի փող բռնասուրին մատուցանէր առեալ զածելին, մահու՛ամբ վերժ էառ։ Ո՛չ ոչ ևս զպարանոց և զկեանս իւր հատուցող բռնասուրին՝ ի վարսակիրսդ, այլ զդատերան մատաղս յանարգ պաշտօնն կացոյց. և իբրև յարբուն հասին, և՛ ի նոցանէ եթարձ զկիրատ և զածելին, և խեղեալ ընկուզոյ ուռոյց զմորթսն և զհին իւր կիզուլ, մինչև ապա անձամբ անձին սպառաւորէր՝ և յիւր դատերան կասկածեալ։ Ո՛չ երիկունն մինչ չև յառագաստ մտեալ, դարանայոյզ առնէր շուրջանակի. և զանկողնոյնն խրամ լայն և խոր արարեալ էր, և կամուրջ փորր բառնալի յանցս։ Ո՛չ ամրափակեալ զդուրս սենեկին, և զաղին և զնիւ ածեալ, բառնայր և զկամրջեանն, զի անկասկած՝ ի քուն լինիցի։ Ո՛չ որդւոյ և եղբօր ոչ էր օրինն՝ ի սենեակ անդր մտանել՝ առանց հանդերձիցն փոխելոյ և քննելոյ՝ ի պահպանաց։ Ա՛րդ իցէ թագաւորել և կեալ՝ յայնպիսի արհաւիրսն լինել հանապազ։

Ցղփացեալ՝ ի մեծութիւնէ և լինչս և՝ ի գրգանս, յամ ժամանակս թագաւորութեանն իւրոյ՝ ընդ ամ իբր քառասուն՝ յորդ և առատ պարգեւաքն և չուայլութիւնդ ոչ զոք արար իւր բարեկամ։ այլ ընդ ահաբեկ սարսուռն կեալը և ընդ չոգոմարար վատ մարդկան. և ոչ առ զնաշակ քաղցը սիրելութեանն, և ոչ զմայլեցաւ յանկեղծ միաբա-

Պլուտ. յոչ. կէս. 508։

Պլուտ. յոչ. կէս. 508։

Պլուտ. յոչ. դոյս. 506։

Պլուտ. ի Դիոն. 961։

նուէրն և ի վստահուէն անկասկած։ Օ՜որ և ինքն ա-
հա խոստովան եղև։

Կէսեր. յա-
ղագս Ե. Էջ-
միածնի Վեր.
Մա. Ե.

Ա՛ռանդն Ղամոն և Պլեթիա՝ աղանդակիցք պիւրեթագո-
րեանք ի մանկութենէ, յօգիւ սրբով մեր իմ բարե-
կամութեանէ ոգեհառնեալ էին և ուխտեալ ընդ միմեանս
հաւատարմութիւն անդրժելի, որ ի փորձ մեծ՝ ընտիր
գտաւ։ Օ՜ր մին ի նոցանէ պարտաւորեալ ի բռնաւո-
րէն ի մահ, ինդրեաց պարապ մինչ երթեալ ի գա-
ւառ իւր հրամանն տացէ վասն տան իւրոյ, և խոստացաւ
դառնալ ըստ ժամադրութեան, և միւսն երաշխաւոր ե-
կաց։ Ընդունէրն ամ և բռնաւորն ինքն ժամ ի ժամ
մնային կատարածի նոր և բազմամտանգ գործոյն։ Նոյն
ժամադրութեան, և երթեալն չդառնայր, և զամսիսն և
զյանդուգնն նախանձ երաշխաւորին բամբասէին ամենե-
քեան։ Իսկ նա աներկիւղ և անկասկած, առանց խոհ-
ւելոյ, վստահութիւ ասէր՝ մի ինչ ումեք երկմտել ընդ
գարձ նորա։ Նա ահա ի պայմանեալ աւուրն և ի ժա-
մու եկն եհաս. և բռնաւորն զարմացեալ ընդ չքնաղ
հաւատարմութեանն, և ի ցանկալի բարեկամութեանն գթա-
ցեալ, հնարէաց պարտաւորին զիւանման, և յոխտ բա-
րեկամութեանն նոցա և ինքն եմուտ։

Կէս. գաւա-
ռի Խոր. Ե. Էջ.

Վարձեալ և պլաղդ խոստովան եղև զանդիւրական
կեանսն։ Ա՛ռանդի Ղամոկը ոմն ի սպասաւորացն Տանա-
պաղ գովէր զարմացմամբ զգանձս նորա, զվեճութիւն,
զառատանկոյտ գօրս, զպայծառատաւ պետութիւն, զփառս
արքունեացն և զաղգի ազգի բարուէ և զգրգանս՝ յորս
կեպչէն, և յաձախ երաներ զնա, և քան զնմ ոք բա-
րեբաղդ զնա կոչէր։ Ընդ բռնաւորն ի միում նուա-
զին ասաց։ Նա զի այդպէս ծերի քեզ, կամիցին զգալի
և զփորձ առնուլ բարեբաղդութենէ իմոյ։ Իսկ նա մոա-
զիւրագոյն յանձն էառ։ Նա հրամանն ետ բռնաւորն
բարձ և տապաստակ ոսկեհուռ և կիտուածոյ արկանել,
և բազմեցուցանել զնա։ և եդան առաջի նորա սեղանք
յօրինեալ կահիւ և սպասուք ոսկեզնեօք և արծաթեզ-
զինօք, և սորուկք գեղեցկիք պայծառագեացք շուրջ
կային կազդք ի հրամանս նորա, և բռնութենքն անուշից
իւղոց և ազնիւ խնկոց զեղեալ։ և ըստ նմին պայմանի
ամ Ա՛նձն գործեալ։ Հայեցաբան բարուհան Ղամանդէս լի
խնդութ, որպէս երանելի լեալ քան զամ մարդիկ, ամ-
բարձ զաչս իւր և եհաս յանկարծ սուսեր սուր ի վերոյ
կախեալ զձարէ նրբոյ, և ի ցուրտ քիրտն հարեալ, ոչ
Ա՛ս ինչ տեսանէր՝ այլ զսուրն միայն, զի երկիւղ վտան-

գին անդադարեաց գնա։ Այլ զարհուրեալ՝ խնդրեր ելա՝ ամ աբ-
նել ի բաց, և գարշեր ի բարեացն։ Ալ խոկացանչ
պատեր կենայ բռնաւորի։ Այլ բռնակալեաց Վխոնե-
սիոս, որպէս ասացաք, զամն երեսուն և ութ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Զկրասերոյն Վխոնեսեայ իբր զորդւոյ երիտասի, որ 563ա · 37
բռնակալեացն ի Միրակուսա, և զԻոնի մերձաւորի Դիոփ · ԺՆ ։
ազգականին նորա, պատմեմ ի գլուխս յայս։

ՅՕԴՈՒԱԾ Ա·

Կրասերոյն Վխոնեսեայ պայազատել ընծային. զի որպէս ինա
Վխոն՝ խնդել զՊղատոն յաբրոնեան, և պարծանալ փոխհուսին փա-
ղբսոփեամբ նորա փորձեալ անդր. և վասն դասոյ արհամարհեացն ի նա-
ֆանել զայն։

Զերիցն Վխոնեսիոս պայազատեաւ համանուն նորին
որդին, որ յառաջս ևս կոչի կրտսերն Վխոնեսիոս։ Ալ
զՀայրն փառաւք մեծաւ յուշարկաւորեալ, կուէաց զժո-
ղովուրդն և աղաչեաց զնոսին քաղցրութեի՛ զոր ընդ հօրն
կալան և ընդ իւր ունել։ Ա՛յլ յոյժ այլաբարոյ ի հո-
րէն էր որդին. զի նա ածխոյժ և ձեռներէց, իսկ սա
մեղմ և հանդարտ էր. և ոչ այնու փաստակար էր ժո-
ղովրդեան, եթէ քաղցրութենին այն և հանդարտութենն
յիմաստասէրենէ և ի չափոյ էին, և ոչ յօլուռէ և չիու-
թոյ։

Ո արմնամբ ընդ խաղաղ յայրորդել նորա ի բռնա-
կալութի՛ հօրն՝ իբրև ի հայրենի ժառանգութի՛. մանաւ-
անդ զի սիրակուսացիք, տենչօղք ազատութի՛, այնու
պատեհաւ մեռանելոյ հօրն՝ առաւել ևս զրգռէին ի
ցանկութի՛ն. և այն զի վատ և անմիւռ ոք էր որդին։
Ա՛յլ որպէս կարծեմ, երիցն Վխոնեսիոս ի վերջս իշ-
խանութի՛ իւրոյ քաղցրութի՛ն ընդհանացոյց նոցա զբռնա-
կալութի՛, մանաւանդ քաջայաղթ պատերազմօքն ընդ
ծով և ընդ ցամաք՝ որովք սպառ անուն մեծ, և պիտոս
պետութեան Միրակուսայ գեր ի վեր բարձրացոյց, և
զԿարքեդոն առաջի նորա սարսեցոյց, և զազգս Հզօրս
Իտալիա և Իլլեազա։ Կարձեալ զի և երկնչէին սէ-

բակուսացիք՝ Թէ գուցէ ի փոփոխուիլն իշխանութեանն՝ մարտք քաղաքականք ազետաւորք բառնայցեն ի նոցանէ զայմ իսկ զաբուեթիւն, իսկ ի քաղցր և ի համբոյր բարուց Վիճենեսայ կրասերոյն՝ բարեաց ակն ունէին։ Եւ կալաւ նա խաղաղութիւն զամենս Հօրն։

Չանգոյն ինն և Լ Ինդղկա դիպաւ։ Օ ի խրև Վրաց մահ անաւանին, որպէս լաւ և քաջ Թագաւոր խաղաղութիւն ի մանիձոն մեռաւ, և ընտրելոց Թագաւորաց սպասաւ և փառաւք Թաղեցաւ, զի Վիճարտ որդի նորա կացուցին անգլեայիք իշխան խնամապետ, և Տնտեսն դեցան նմա որպէս Հօրն, Թէպէտ և ի Հայրենի պայծառ առաքինութեացն կասէր։

Պլուտարխ. ի Դիոն. 960։

Վիճն այր քաջ և իմաստուն յամ սիրակուսացիս, քեռայր կրասերոյն Վիճենեսայ, կարող էր զօրաւիգն լինել նմա՝ եթէ նա իրատուն իւրում անայր։ Յառաջնում նուագին ի ժողովել բարեկամացն առ Թագաւորն, այնու իմաստութիւն խօսեցաւ և եցոյց զկարեւորն և զօգտակոր ըստ պատշաճի իրաց ժամանակին, զի այլք առաջի նորա Թուէին գիտս մանկտւոյ քերել։ և առաջի ազատասօս Համարձակութեան նորա՝ ստրկաբար վտար երևէին մարդաշահոյք։ Եւ առաւել ևս այնու զարմանալի էր, զի ի սարսել ահեղագուն յահէ չարեացն, քանզի կարբեղդացիք կազմին գալ անկանել ի վերայ Սիկիլոյ, նա յանձն առնոյր նաւարկել անյապաղ Հ Ռիկիոյ, և ցածուցանել զմրրիկն ըստ կամաց առ քայի՝ եթէ ընդ խաղաղութեն կամեսցի։ ապա Թէ ընդ պատերազմ, խոստանայր կազմել յընչից իւրոց և պահել նաւս յիսուն եռաթիս ամ կազմութեբ։

Օ արմացաւ Վիճենեսիոս, և գովեալ զարիւն և զառատութեն նորա, Հնարէս կալաւ զսիրոյ նորա և զբարեկամութենէն։ Հ Յլ իշխանք արքայի ի կշտամբանս իւրեանց տարան զառատութեն Վիճի, և զգօրութեն նորա ի տարածեալ իւրեանց. և բարւրս ի վերայ նորա եդեալ, զամ քսիս ստութեն մատուցին ի չարացուցանել ի վերայ նորա զԹագաւորն։ Եւ չարախօսէին զնմանէ, Թէ գօրութեն պատրաստ իւր ընդ ծով ի բռնակալուելն, և նաւատորմ՝ ի փոխանակել յաթոռ զորիս Հ բիս տումբեայ քեռ իւրոյ։ Եւ յաւելուին ի Հնութենէն ուղղութեն Վիճի, որ էր նոցա Հանապազ ի յանդիմանութիւն։ Վանգի պարբերեալ զանվնաՀանգ սիրտ բռնաւորին, Հնարէին զաղեցուցանել զնա անդադար ի շուայտութեն ի վեղխութեն և յամ գլգանա ամենայ

զառաձեցուցեալ։ Ի սկզբան Թագաւորութիւնէ իւրոյ զա- ԱՂԱՒ. Յ. 435։
միս երիս արար ուրախութիւն, փակեալ զապարանս իւր
ազգի իմաստնոյ, և լցեալ արբեցողօք և խեղկատակօք
և ծաղրածուօք խառնիխուռն. և հնչէր դաղսպան ի
ցուցս խենդչս, ի կաքաւս, ի ձայն խաղալկաց, և ամ-
լկտութիւն։ Հարկ էր Վիճակի դժպհի լինել անդ, և ծանր
էր աւագանւոյն տեսանել զնա անյարմար յանպատեհին։
Վասն այնորիկ զուղղութիւն նորա մխիթարել, նոքօք զլռե-
ցուցանէին զնա առաջի բռնաւորին, զխորհրդականութեի
նորա՝ խրախուսին ցուցեալ, և զհամարձակախօսսն՝
խռովարար ընթռոստութեի։ Օ՛ի եթէ խրատս իմաստունս
տայր, բամբասէին զնա՝ թէ որպէս մանկածոս խիստ
անձնահաճ յանդիմանել և կշտամբել զարքայ։ և զի՛ ի զեղ
խուսթեցոյն հրաժարէր, մարդատեաց զնա ասէին և մտաղ
ձայցոյց, իբր թէ առաքինութեքն ամբարհաւաճեալ՝ սր-
համարհեր զայս, գատաւոր մարդկան ինքնակաց լեալ։

Այսպէսն Վիճակ գժուարաբարոյ էր և խիստ իմն, որով
խրոխտեալն կարճեր այլոց, և մարթէր սաստուցանել այ-
նու ոչ միայն զմնունկ արքային՝ որ ի փաղաքշանս և ի
գգուանս սովորեալ էր, այլ և զմտերիմսն իւր բարեկամս
և զսիրելիս։ Ուր ընդ ուղղութեի նորա և ընդ անսասան
և ընդ աշխատասէր միտն զարմացեալ, խրատէին զնա
մեղմել զիրքր ի ինչ խստութենէն և զլայրագութենէ, զի
չմարթի առաքինորդականին այնու բարդիւք ածել և
չանկուցանել զայլս ի խորհուրդ իւր։ Այս չետ ժա- ՊՂՈՒԱՐ.
մանակի աշխատ եղև Պղատոն՝ ուղղել զնա ի թիւրու- Գ։
թենէն, և ընդելացոյց զնա ընդ զուարճախօսի ումեմն և
քաղցր իմաստասիրի՝ որով մարթէր նմա յամբք և ի
համբոյր բարս ածել։ Ի միում ուրեք ի Պղտենի զայս
խրատ գրէ նմա. Տեսջիր, ազաչեմ, զի խիստ և դեգ
առգտանիս. և գիտեա քաջ զի քաղցրութենէն է անվրիպ
պէղի յաջողուած, և խրոխտութիւն զընաւս մերժէ, և ա-
մենի առնէ զայր։ Հայց Թէպետ և այսպիսի ոք էր
Վիճակ, այլ մեծարեր յարքունիս. և պատուպարան էր
աշխարհին բազմահմուտ մեծաբն և գերազանց քաջուբ-
մանաւանդ ի ժամանակին յայնմիկ յորում վտանգք
մեծամեծք ի վերայ կային։

Այլ քանզի զարքային մանկանն սիտս չարաչարս յանձ- ՊՂՈՒԱՐ. Դ
հրահանգ մանկենէն և ի տգիտութենէ պարտուցն վար- ԴԻՈՆ. 962։

1 Ի՛ն' αὐσθάδειαν, ἐριστικὸν ξύνοικος. բառիդ հարիմաստ ցուցանել նմ այլ տեղ։ Ցեղ. ուս. հատ. Ֆ. 505։
2 Տե՛ս հարիմաստ. խրոխտութիւն ընտակից է ամբարտաւանութեան։ ՕԶՆ.

Գլուխ ԽԲ. Ե. 327։

կանէր, կարի իսկ ջանացաւ ընդելացուցանել զնա ընդ իմաստունս, զի օգտակար և հաճոյ կենակցութիւն նոցա ախորժաբար կրթեսցի. քանզի ոչ չարաչօժար էր ի բնէ, և տեսցի յառաջիկայս առ ի բարւոն և յառաքինութիւնս միտս[1] նորա։ Այն իսկ ի նմա ախորժակք և ձգտումն արուեստից և գիտութեանց։ Անճարէր ըզհանճարեղս և զպիտանիս, և բերկրէր կենակից լինել ընդ ձգտարս, և ընտանութիւն ընդ նոսա տեղեկացաւ բարձր հմտութեանց. և ընդ արքունի գահուն ընտանեցոյց զպիտութիւն՝ որ ոչ իշխեն կարի հպել անդր, և որպէս մտերիմն իւր արար զնոսա և համարձակեցոյց և ի պատիւ հաճ թեարկութիւն իւրով՝ որպէս գրաշխատ ասուածոց։ Այլ բերկրանք բարեկամուն ոչ անագդականք եղեն ի նա. բարեգութ էր յընտանիսն և տանուտէր քաջ, և մատուցելոց առ ինքն սիրելի։ Ընդ մէտ ի բնէ ի բռնութիւն և յանդգնութիւն. պայազատութիւն և ժառանգութիւն բռնակալեաց, և ոչ մտադիւր ջանիս։ Այսպէս եթէ չլինէին անհնարք բնաւորք բերմունք նորա ի բարին, մարթէր լինել նմա թագաւոր քաջ։ Այլ հայր նորա՝ որում ամ քաջութիւն կասկածելի էր՝ ևս և յորդիս իւր, ջանացաւ զամ սերոյն բարւոյ ապահանել ի նմա, և յամ բարձր և յաջնուական մտածութիւնք զմիտս նորա բնաւորացանել նուաստ և չարաչութ դաստիարակութիւնք, զի մի ձեռն ընդդէմ իւր ամբառնալ կարիցէ։ Հարկ էր ապա խնդրել զոք այնպիսին ինամող, կամ մանաւանդ զնա ինքն յորդորել ի խնդիր։

Այլ իւրն զամ ձարտարութիւն ի գործ էարկ Պիհոն, յաւուրս ընդ նմա ստէպ զՊղատոնէ զձարտարամտիցն զանուանեալսն յիմաստասիրս, զորոյ գաքաջութիւնն ինքն իսկ զիտէր առաւել էր՝ զամ ինչ ի նմանէ ուսեալ։ Պատուիրէ զգեղեցիկ հանճար նորա, զյաճախաւալ գիտութիւն, ըզքաղցր բարս, զհաճոյ կենակցութիւն, և մանաւանդ զներհուն հմտութիւն առաքինութեանցն քաջ յարմար ի հրահանգս բարւոյ թագաւորութեան, յորում է և ժողովրդեանն և թագաւորին բարեբաստութիւն։ Այս յորդորեր զնա և ասէր. զի ժողովուրդն քաղցրութիւն յայմ հետէ ուղղեալ՝ որպէս ընտանիք ի բարեգութ տանուտեառնէ, մտադիւրագոյն ճափոյիչ և արդարութեան հաստատութեան զաւրութեան, զոր ակամայ այժմ տուժին հզօր ձեռնդէ և բռնութեան. և եղիցես բռնաւորդ թագաւոր զգծն, և ժողովուրդք սիրով ի ներքոյ քո անկցին։

Այսոսիկ որպէս ըստ դէպս ի զբոյցն խառնեալ,

և ոչ մասն լեալ խորհրդոյն, վառեաց զհնչ արքային մանկանն ի տեսանել զՊղատոն և խօսել ընդ նմա. և գրեաց առ նա Թուղթս մեծարանաց հարկեցուցողս, և սուրհանդակս արձակեաց Յ|ԼԹԷՆ՝ փութացուցանել զնա առ իւր։ Իսկ Պղատոն երկեաւ ի վտանգէն. և օգտի ինչ յերթալոյն ոչ ակն կալեալ՝ յապաղէր, և էջրա- ժարեալ յայտ՝ ծանրանայր առ հրաւէրն։ Ետես զի խաչ փայք՝ զորս պատճառէր՝ ոչ լքուցին զարքային, այլ մա- նաւանդ առաւել զնա ի ցանկութիւն ածին՝ որպէս այս յաձախ պատահէ։ Ի Պիւթագորայ աղանդոյն իմաս- տասէրք, որ էին ի մեծն Յունաստան Յ|տալիա, և ճոռա յաւելլին յաղաչանս Թագաւորին և Վիոնի. քանզի և Պիոն Թախանձեաց զՊղատոն, և պատճառս դիպողս անհրաժեշտս մատոյց նմա։ Ո|անգի, ասէ, աստ ոչ զմիոյ ումեքէ ի ժողովրդենէն խնդիրք են, այլ զհզօր Թագա- ւորէ՝ որ փոփոխումն զամ աչխարհին գՀետ ձգէ, ղորոյ զբազմատարած ընդարձակութիւն ապաքէն գիտես։ Ո|նքն կանխեալ խնդրել, ինքն ստիպել և Թախանձել և կոչ քեզ յօգնութիւն՝ զամ բարեկամն քո աղերս ածեալ։ Որամ դիպողագոյն ժամանակի կայցեմք՝ զերկնատուրը պատեհն կորուսեալ։ Ո|րկիր, գուցէ մինչ դու դանդա- ղիսդ, փաղաքուշք խանեալ զմանուկ արքային՝ վիս- րեանս ձգեսցեն զնա, և զմիտս նորա շրջեսցեն, և կրշ- տամբանս խիստս ածիցես զքեզ, և նախատինս մեծ խնա- տասիրութեանդ գործիցես, զի ասիցեն. մարթէր Պղատոնի ուղղել խրատուքն զԴիոնեսիոս, և խնամտուն և արդար առաջնորդութիւն ի Սիկիլիա Տատատել, և ընկերցել զնա ի խորս չարեաց բռնակալութեան՝ վատասրտեալ յաչխատութենէ Ձանապարհին, և ի խոյիչ չգիտեմ յորից՝ մնոտեաց։

Ձկարաց Պղատոն անլսող լինել ուժգին թախանձա- Պլուտ. 963։ նացն. և ի պարտս հայեցեալ զոր ի գիրս իւր ազդ առնէ, և վասն զի մի պատճառս տացէ բամբասողաց՝ Թէ բանիւք միայն խնամատասիրէր՝ վերջացեալ ի գործոց, և գարձեալ հայեցեալ ի կարևորն օգուտ՝ զոր մարթէր յոտին իւրում առնել Սիկիլիոյ, յանձն եդաւ երթալ։ Ո|ապանին մարգահաձոյ՝ զնգիտեալ ի խորհրդոց ար- քային՝ զի ոչ լուաւ խրատուց նոցա, և զարհուրեալ ի գալստենէ խնամատասիրին՝ զի զհնդերձեալսն գուշակե- ին, միաբանեցին ընդդէմ հասարակաց ոսոխին։ Ո|ան- զի խորհէին՝ զի եթէ ըստ նորոց կարգաց տեսցեն Թեան քաջք և պիտանիք մեծարելին միայն, և վաստակք Լևեթ

փոխարինեին, Թափուր հաստատեր ինալ նոցա ի պարգեաց, և ընդ վայր դեգերել յաբբունիս։ Այմն իբրև մնեքենայս հղօրս կանգնեցին, անդորձ առնել զպալատս իմաստասիրին՝ զոր խափանէին չկարէին. և ատիպեցին զԹագաւորն՝ դարձուցանել զիիղիստ յաբտարանաց։ զայր պատերազմող և վիպագիր քաջ, Ճարտարախոս հղօր և մատենագած, որ բռնաւորաց նախանձաւոր էր. և խրճն գրէին զնա ի հակ կշռութեան ընդդէմ Պղատոնի և իմաստասիրութեանն նորա։ Օ նա երեցն Այխինեսիս ապա- Դէոդ. ժԳ. 222։ ղեաց՝ վասն գժկամակութեանն ընդ նմա ունելոյ, և կայր նա ի Աբդիրա քաղաքն. ուր և զմատեանսն երևիի մեծաւ մասամբ գրեալ։ Օ ի արար նա զվէպս եգիպտացւոց յերկոտասան գիրս. և զսիկիլիացւոցն ի մատասան. և զԱխենեսայ բռնաւորին ի վեց գիրս. այլ կորեան շատագրածք նորա։ Այովէ յոյժ զնա Պլինիոս, և Ցուվենտիդիեակ՝ զնա կոչէ, զմանութեին նորա յայտ արա- բելով Հպատուագոյն ի տիպս բանից Ցուվիդիդեայ։ Աբդ սա գարձաւ յաբտարանացն. և միաբանեցին աւա- դանին բողոք կալան առ արբայ զԱխինէ, իբր Թէ ձեռն նորա էր ընդ Ցերակղիդեայ. որ ի ծածուկ Թշնամիք էին արբային, Հնարել բառնալ ընդ նոսա զբռնաւորութեան։

Պլուտարք. ի Դէոդ. գ65։ Իբրև այս իրք էին ի Աիկիլիա, Հասս անդր Պղատոն, և սիրով մեծաւ և փառօք հիւրընկալեցաւ։ Այս իմեալ յեռաեմիոյն, եւ ի կառս արբունի՝ նստեալ և կազմեալ ի սարս չքեղ։ Այս բռնաւորն զոհ մատոյց, պարգև մեծ յերկնաւոր տեսլենէն վարկուցեալ զպալատս իմաստասիրին, զի և էր իսկ։ Օ ի և Թագաւորի խորհրդականն իմաստուն և Հանձարեղ՝ գանձ պատուական, և մեք կշռելի ընդ Համայն Թագաւորութեն։ Ա՛լ սակաւք մեծ արգելն զայն. և Հա սակաւք այն են՝ որ վարիցին նոսվաս։ Իակ Պղատոն եկեալ եգիպտ զսիրտ արբային մանկանն կազմ և յօժար ի բարին, և փոյթ ի լուր խրատուց և վարդապետութեն իւրոյ։ Այս որպես ուսեալն էր ի խրատուց և յօրինակէ վարդապետին իւրոյ Աիկրատոյ, որ Ճարտարագոյնն էր յամենայն հեթանոսս ի խե-

1 Սմա (Թուկիդիդեայ) հե- ռանեաց փիղիսոս սիրակուսեցի, բռնաւորին Դիոնեսեայ մտերիմ, զպարապայ ժամանակն զրագեալ ի վիպագրել. և որպես ինձ Թուկիդեայ նմանեաց։

Աիկիլացին այն խոս, սուր, հակիրճ, և Թուկիդիդեակ Էին։ Ցոյն. Խոսքի սա Կ-ԻՒՒ. էէբ. ք. ծԳ։

լամեալ առնել մարգկան զՀնմարտութիւն, բաղումք զգուշութիւն հետապատեաց գմիտս մանկանն. ոչ՝ ի դիմի հարեալ ախտիցն, այլ մեղմով և ողջոյլ զսիրտ նորա յանկուցեալ, և՝ ի սէր առաքինութիւնն ձգեալ գնա, և յաղթող արարեալ զառաքինութիւն չարութիւն՝ որ հրապուրեաց նոքա և եթ և քաղցրութիւն և գրգանօքը որոգայթին գմարդ։

Իդարձ և յանկարծ փոփոխմամբ՝ մանուկ արքայն դառնացաւն, որ ընկղմեալ էր ի հեշտութիւնս և ոգևտ պարտուց պաշտամանն, քանզի այս անանձնատ է յառաջնմէն, որպէս զԱմբիբ մահու թօթափեալ՝ էթաց զաչս ի նշմարել զգեղ առաքինութեանն, և քաղցր և տարփալի եղև նմա յօգտակարսն զուարճալից լինել, և մտադիր բութիւն պարապէր յուսումն և՝ ի հրահանգս՝ յորոց խոր չէրն և փախչէր յառաջագոյն։ Իւագանին հետևիտ և նմանող արքային, որ ըստ հաճոյս նոցա կերպափոխի, նախանձեցաւ նմա։ Վատիքեր արբունեաց վարժոցք եղէն երկրաչափից, լի փոչով՝ զոր՝ ի գիծ ձևոցն՝ ի կերբ արկանէն. և՝ ի սուղ ժամանակի յաձախեալ իմաստասիրութիւնն և բարձր գիտութեանց ուսումն՝ զախորժակս բնաւից գրաւեաց։

Ոգուտ մեծ է իշխանաց՝ ի Քանից աստի. զի ցանկալի և կարևոր հմտութիւքը ընուն, և՝ ի գատարկութիւնէ և՝ ի պղերգութիւնէ և՝ ի մեռոյ զբաղմանց արբունեաց պահէն, և՝ ժիրք և փութաջանք սովորին. և յեռանդն ածին գէտութիւն պարտուց իւրեանց, և թէ այք յառաջ քան զնա սա քաջք Թագաւորեցին. և Համառօտիւ ասացեալ՝ լինին կարողք յառաջորդութիւն և անհնատեսք ևմի, յորում է ստացն Թագաւորել։ Ամին այսմ ընդդէմ միաբանեալ արքունիքն, ըստ իւրեանց սովորութեանն, զանձն Հարան՝ ի միոջէ բարբառոյն՝ որով յայտ արար Թագաւորն զազգեցութիւն խրատուց իմաստասիրին, երանեալ զԹագաւորն սիրելի Ժողովրդեան խրև Հայր, և աւագ գեալ զբռնաւորս ատելի նմա և գժսիվն։ Վանգի յետ աւուրց Հասանելոյ իմաստասիրին, եկն օր ուրդ արքայի՝ որ ամի ամի յարբունիսն կատարեր՝ ի բաղդ արքային։ Ինդ իբրև քարոզն՝ ի ձայն բարձր զսովորութիւն աղօթիցն մատուցաներ, կեցուցանել գնդ երկայն աւուրս զբռնաւորն, և զբռնակալութիւն կանգուն պահել, աղաչեաց Վիմնեսիոս՝ գադարել յանիծիցն. քանզի տա կաւ բռնակալութեանն անուն տաղտկանալ նմա։ Ինդ այն բարբառ զամի Հարաւ Փիղիստոս իւրովքն. և գիտաց յինն զի ազդումն խրատուց իմաստասիրին, այն՝ որ՝ ի սուղ

աւուրս շրջեաց զմիտս արքայի մահկանն, ժամանակաւ և սովորութիւն անկուն և անպատեհն լինելոց էր՝ Ղևին իբրև հզօրագոյն զհակառակամարտ մեքենայիւն կազմեալ, ծաղր առնելին զհրաժարական կենցաղ Թագաւորին, և զի պարապէրն յոյսուն՝ իբր թէ փիլեսոփոս Թագաւորի պարտ էր լինել՝ Լ՛ի վերայ այսորիկ միաբանեալ, կասկածելի ևս առնելին զնախանձ Դևինի և զՊղատոնի, և առելիս զնոսա որպէս դատաւորս տատանս և խոտ մահկածուս [1] իշխանութիւն առեալ՝ ի վերայ արքային, անձամ արքունի փառացն և տիոց՝ Լ՛արդ եթէ Թագաւոր մնուկ, թէպէտ և բարեբեռն և՛ ի մէջ բազում բնակեալ, գժուարաւ մարթի՝ ի բաւականն կալ՝ ի բան, ոչ ինչ զարմանք են՝ ի բազմավտանգ հրապոյրսն ըմբռնեալ Դևինեայ յարբունս՝ որ՝ ի բազում ժամանակաց զկնճեալ էր, և էին անդ նախանձընդդէմք միւսանց ախտք չարք, և յայտ կողմանց՝ փաղաքշանց սպաս, որ հանապազ դոլէին և բարձրացուցանէին զնա [2]։

Լայլ քան զայժ իակ այն փոյթ եղև աւագանւոյն՝ չաբահմբաւել զԴևին և զուղղութիւն նորա, ոչ ևս առանձինն՝ ի ծածուկ՝ այլ միաշամուռս և համարձակ։ Օ՛ն և առաջի առնելոցն և որոց լսելին նոցա՝ բամբասելին զնա, թէ զձարտարախօսութիւն Պղատոնի օգնական առեալ՝ մոգ և կախարդ զարբայ, զի զնա կամակար յիշխանութիւն հրաժարեցուսցէ, և յինքն նուաճեալ զանձնոն՝ զբեւռորդիս իւր Թագաւորեցուսցէ զորդիս Աբիատոմաբեայ։ Լ՛ոչ զոյգս աւագակաս՝ ի համբաւ ածէին, թէ աթենացիք՝ որք հզօր զօրութիւն ընդ ծով և ընդ ցամաք եկեալ՝ ի Սիկիլիա, և զնաւս պարտեալ՝ զՍիրակուսա չկարացին նուաձել, արդ՝ ի ձառս ուրուսն խնամատակին վիշխանութիւն Դիոնեսեայ կործանեն, հաւանեցուցեալ նմա՝ զբիւր զոյլապզի թիկնապահն արձակել, և տալ՝ ի բաց զբովեբարիւր սպառազէն նաւսն կազմն՝ ի պատերազմ, և Թողուլ զբիւր այրուձին և զմեծ կէս հեռակացոյս, և երթալ խնդրել Յ՛Գադեմա՝ ի վարդապետանոց Պղատոնի՝ զանձառելին զկարծեցեալ ծագ բարեբասուութեանն, և երկրաչափականին հմտութիւն երանաւետել յանուրջս, Թողեալ՝ ի Դևինի և

1 Որպէս խոտ և հպարտ դառաւրս կենաց այլոց, և որպէս դատաւրական ամենեցուն։ Սենէկ. Բղբ. Ճիբ.

2 Հայեաց՝ ի հրահանգս բարեաց անհեղ կայ ամեն. խակ՝ ի մրցել անխոչ չարաց՝ և պատկառանաք և պարկեշտութիւն և ետ լաւութիւք մերժին։ Տօնիս. Քրեպ. ի. ֆե։

'ի քեռորդիս նորա զտոյգ բարին և զհաւատարիմն , որ յիշխանութենէ, 'ի գանձս, 'ի յղկութենէ և 'ի գրգանմն է ։

ՅՕԴՈՒԱՆ Բ ։

Ա ան Պիտեր ասօրելոյն . և Պղատոն խոնարհել վերնել յարքայ-
նէից , և փառնալ յԱրևելս . և անդ Պիտեր առ խմասուանս էր-
նել զարմանալի . և գնասանգամ Պղատոն 'ի Աիբահասա երկիր ։

Ձգաւանին շրջապահք արքային մանկանն , կազմէր և ժամանակ 'ի չկորուսանել զպատեհ, զօրհեալ զհորհուրդսն կեղծ նախանձու տիրասիրութենէ, և որպէս ոչ լինչ թէնաւ մուրհակն ունելով ընդ Պիտեր , յորդորէին անդադար զթագաւորն՝ զդուշանալ իշխանութենէ իւրմէ և կենաց։ Ոմանք կասկածեալ բռնաւորին 'ի Պիտեր , վաղ զառաջաւ 'ի մանկէն ցառուն և 'ի յայտնի թշնամութենէն ։ Ձամանակի գաղտ մատուցաւ արքային , յորմէ Պիտեր առ հրեշտակս կարբեդոնացւոց գրեր ։ Ձնէ 'ի խաղաղութենէն կամէր խօսել ընդ Պիտեսեսայ , ինձ լու 'ի լու խօսեսջիք , և օգնական եղէց յամրութենէ և 'ի հաստատութենէ ուխտիդ ։ Ձե զայն ընթերցեալ բռնաւորին ա- Դիոփ . ԺՀ. ռաջի Վիղիստեայ , խորհեցաւ ընդ նմա վասն Պիտեր . 410։ և հրապուրեալ գնա պատիր բանիւք , և կեղծեաք հաշտեալ ընդ նմա , աճ գնա 'ի ստորոտ գղեկին 'ի Ծոլեզեն, և ցուցեալ գնաւանդսին նմա՝ տիրանալոյ և համախոհ ընդ կարբեդոնացիս դաւեցաւ գնա , և ոչ ետ նմա տեղի պատասխանւոյ . այլ վաղվաղակի հանեալ գնա 'ի նաւ մի հինական , պատուէր ետ նաւավարացն՝ արկանել գնա յերկիր 'ի Ծոլեզերս ուրեք յԱտալիա ։ Ընդ փութաց ցեալ նաւեաց Պիտեր 'ի Պեղոպոնես ։

Ընդ տարապարտուց առնն պատուհաս խռովեցաւ Պլուտ . 964։ ամ՝ քաղաքն, որպէս Հարկ իսկ էր , և քինացան ամենեքին Պղատ . Ե. ընդ բռնաւորին . մանաւանդ զի Տամբաւ և սուտ Տնէրը սպանեալեան Պղատոնի ։ Ձե բռնաւորն երկուցեալ , քաղցրութիւ՛ քանացաւ խափանել զբողոքն . և ետ նաւս կրկին ընծանեաց Պիտեր՝ բառնալ զամ՝ գանձս նորա և զկայ , զի էին նմա սպաք Թագաւորի , և երթալ առնա 'ի Պեղոպոնես ։ Իբրև մեկնեցաւ Պիտեր , ապա բրաւորն աճ բնակեցոյց զՊղատոն 'ի գղեկին՝ իբր թէ 'ի պատճառս մեծարանաց , այլ Ձնմարտիւ խորհէր 'ի դիպահոլ ունել գնա , զի մի երթեալ յարեսցի 'ի Պիտեր ։

Ի՝ին Թերևս և այլ պատճառք ունելոյ զնա առ իւր, որպես զի ստէպ և անաչխատ լուիցէ նմա։ Վասնզի քաղց բուժէ բանից նորա զմայլեալ ցանկայր որպէս մարթեալն հաձոյ լինել նմա և սիրելի. և ի յայժ մեծարանացն, կամ մանաւանդ մոլելոյն ի նա, ածաւ ի նախանձ. և ոչ ի վայրապար նախանձ, այլ և չկամէր՝ թէ լցեն ոք նախանձողք իւր և ոսոխ ի սէր նորա. և միայն ցանկայր ժառանգել զնա, և բովանդակ յինքն գրաւել զմիտս և զսիրտ նորա, և միաչնակ արգոյ և սիրելի լինել նմա։ Փոխանակեր իակ ընդ սիրոյ նորա զամ գանձս և զիշխա նութիւն, եթէ էր հնար առաւել քան ընդ Պիտի սէր և բարեկամութիւն ունել նմա ընդ իւր։ Հնարաւի ապա կուէաց զայն Պղատոնոս սէր բռնաւորական՝։ Այլ բազում ինչ վիշտք յայսմանէ հասանէին Պղատոնի. զի ամ կիրք նախանձաւորութիւն էին ի սէր նորա՝. մերթ բարեկամութիւն և գգուանք և գութ գորովոյ անչափ, և մերթ կշտամբութիւն, սաստ մանկունութիւն, երագազեղջ ապաշաւ, ողբք և խնարհ աղերս ի հայցել զՊողութիւն,

Այլ ի ժամանակին յայնիկ դէպք պատերազմի ի բարի յաջողեցին Պղատոնի, վասն որոյ հարկ եղև բրա նաւորին արձակել զնա յազատութիւն։ Այս ի մեծապար գև յուղարկելն զնա, հրաժարեաց Պղատոն ի պար գևացն, և խնդրեաց միայն դարձուցանել ի հասանել դարմայոյ զԻ՝ին յաքսորանացն։ Այս խոստացաւ բրա նաւորն, այլ ոչ կացեալ ի խոստմանն՝ զեկանուժոն միայն առաքեաց նմա. և առ Պղատոն գիր աղերսական գրեաց, պատճառս գրժելոյ դաշինն զպատերազմն ածեալ. և խոստանայր ընդ կատարել մարտին դարձուցանել զնա, եթէ միայն և ինքն Պիտի խաղաղ նստիցի, և մի յիրս աշխարհին խառնեսցի, և մի զինքն առ ՝ոյնս չարաչար բաւեսցէ։

Պղատոն ի դառնալ իւրում Սիւրակուսա՝ անց Սիղիմ պիա ի տեսիլ խաղալոյն. և անդ ընդ ականատես յեկացն

1 Սիրեաց զնա սէր բռնաւորական։
2 Են ի սէրոյ անմեկին
Մարտ և համբոյրք վերստին։
Ովիդ. Էրգիք. ճ. Ֆ. 267։

Բընաւքս ի սէր դարանին կիրք,
Լայտ և նախանձ, հերձք և դրգռոք,
Մերթ գութ մարտի, մերթ զինամարտ,
Եւ հաշտութիւն խիտ վերադարձ։

Տիբուլ. ի Նեբոխին. արարած. ա. գլուխ. ա. 1։

օԹեվաճաւ՝ ընդ նոսա սեղանակից լինէր և կենակից զաւուրս բազումս, և իբրև զի ի բազմաց անդուք ձեռն կեայր, ոչ ինչ զՅովկրատայ կամ զՎլադեմայ ծանօԹս առեալ, բայց միայն զի կռէր Պղատոն։ Օ արիմաչին որ ընդ նմին էին՝ ընդ քաղցր և ընդելասէր բարս նո֊ ա. այլ զի ոչ ինչ բարձրապատուհաս ձառէր, չհամարեա֊ յան Թէ իցէ ինքն բազմհռչակ իմաստասէրն։ Վ՚այս ի կատարել տօնիցն՝ չոքան ընդ նմա ՀՎԹէնս, և կալաւ գնոսա անդ առ իւր Պղատոն։ Վ՚ոչքա ստիպէին գնա ա֊ ծել զինքեանս առ Պղատոն անսուանի իմաստասէրն ա֊ շակերտ Սոկրատայ. և նա ժպտելով ասէ. Վ՚ս ինքն եմ։ Վ՚ս հիւրքն հիացեալ, զի յանգէտս զգանկալի գանձն ժառանգելին. զայրանային ընդ միտս և գանձինս դարո֊ վեին, զի ոչ ծանեան զնէՀ առաքինութիւնն ընդ անսլա֊ ձոյՀ և հաճեստ զգեստոին, և առաւել ևս զարմանային ընդ նա։

Վ՚ս ՀՎԹէնս ոչ դատարկ եկաց Վ՚ևոն, այլ կարի իսկ յիմաստասիրականին ուսումն պարապեաց՝ յախորժա֊ կանն իւր, յոր զակատեալն էր։ Վ՚ՀՎ զչափ պատշաճին և զի նմա կալաւ՝ անկասելի զի պարտուցն, որ դժուարին յառաքինութենն է։ Զի ժամանակին յայնմիկ ընտա֊ նեցոյց գնա Պղատոն ընդ Սպեւսիպպեայ քեռորդւոյ իւրում, որ ընդ լուրջ իմաստասիրութեՀ զընդել և զյաճ֊ կուցող բարս առագանւոյ կցորդէր, և ընդ մեծամեծ և ընդ կարևոր իրս զնաղս և զՀաճեստ զբօսանս. որով առաւել քան զայլս յիմաստնոցն գնաստութեՀ և զդժնեհու֊ թիւն բարուց Վ՚ևոնի կարող էր ամբռել։

Զինչ դեռ Վ՚ևոն ՀՎԹէնս էր, դեպ եղև Պղատոնի խաղս և ողբերգութեՀս տալ՝ ի տեսիլ՝ ի սպանդարամե֊ տական տօնին, որ շքով մեծաւ և բազում ծախիւք կա֊ տարէր՝ առ սաստիկ նախանձու քերԹողացն ելևէնս առ֊ նելոյ գնորեօք։ Վ՚ս զնա ծախս Հանդիսին Վ՚ևոն ետ. և ոչ ընդդէմ եկաց նմա Պղատոն, զի նովաւ յաւելցէ ունել Հնոյս առ աՀենացիս, և փառաւորեսցի։

Վ՚ս և ընդ այլ քաղաքս Հռլադայ շրջեալ՝ եղև ամ֊ ուրեք՝ ի տօնս և՝ ի ժողովս և ընդ ՀանՀարեղ մարդկան և ընդ խորագէտ քաղաքավարս։ Վ՚ս ոչ ՀոխոռԹեամբ և ամբարՀաւաՀուԹեամբ՝ որպէս զայլս յաւադաց՝ որոշեր յայլոց, այլ անոյշ և Հաճեստ ձևովն։ ևս առաւել՝ գե֊ ղեցիկ ՀանՀարուն և բազմհմուտ գիտուԹեՀն և խոր֊

1 Եւ զդժուարինն՝ ի գիտուԹէ զափ կալաւ։ Տ։Ի։Բ։ ՀԱ։Բ։Ի։ Բ։

հրդեհականութիւն։ Այս առ ամ՝ ազգն փառաւք բազմեալ մեծարեր, և ընդ քաղաքացիսն խառնեցին զնա սպարտացիք, ոչ ինչ՝ ի տասմանէն Վխոնեսեայ երկուցեալ, որ ի կարևոր ժամանակին ձեռն տայր նոցա ընդդէմ Յունեայ։ Յաւելեալ մեծարանացն և ի փառաց նորա ի նախանձ ածեալ բռնաւորն խափանեաց զեկամուտս կալուածոց նորա, և յարքունիսն հրամայեաց հատանել։

Պշտ.թ--գ. է. 338. 340։ Պւ--ոտ։ Ի Դ.Է.Ռ. 964. 966։

Վխոնեսիոս վճարեալ զպատերազմն ի Սիկիլիա, զոր ոչ զհնգամեայս չգիտեաք, զի մի եպերեսցի առ իմաստասէրս և թշնամի նոցա համարեսցի վասն այնպիսեան առնելոյ ընդ Պղատոնի, կոչեաց յարքունիսն զքաջ իմաստունս Յունաստանեայ. և ժողով առներ, և յանդուգն ամբարհաւաճութիւն ի վեր քան զնոսա թևակոխեր ի Հալմատարիտսու թիւ և ի հնձոյ թիւ, մերթ ացոյիւքն ի Պղատոնէ բանիւք Հանդարտակեալ։ Այլ այն քանք ի միտն միայն էին՝ անուրջք ի սիրտն, նմին իրի և փոյթ աղուիւք նոցա ցամաքեաց։ Վխտաց յայժամ բռնաւորն զկնռուտան մեծ, զի ապահոս արար զգանձ իմաստութեանն՝ մինչ առ իւրն եր, և ոչ հանապազորդեաց ի լուր գերազանց խրատուց վէրչ խնամատարիւքն։ Այս որպէս առ ամ ինչ սատակիւ և խեռ է բռնաւոր, յանկացաւ յանկարծ տեսանել զնա անդրկին. և յանժոյժ ցանկութենէն զամ հնարս գործեաց, և ստիպեաց զԱքթատս և զայլ իմաստասէրս ի պիւթագորեանցն գրել առ նա, թէ մարթի անվտանգ դառնալ ի Սիրակուսա. և տալ վկայութիւն, զի զամ զոր և խոստացան էր Թագաւորն արասցէ։ Ապա առաքեցին զԱքթիդեմոս ի դիմաց իւրեանց առ Պղատոն. և բռնաւորն ետ ընդ նոսա կրկին եռասթիս և զգազումս ի բարեկամաց իւրոց աղաչանս. և նահանկանի իւրով ձեռամբ գրեաց յայտ սպառնացեալ, զի թէ ոչ դարձցի և ոչ Վխոն յաքսորանացն արձակեսցի. իսկ թէ գառնայցէ, զամ չնորհս խոստանայր առնել Վխոնի։ Ի տան նմին օրինակ և ի հնոլէն և ի քեռանէ իւրմէ գիր եհաս Վխոնի, որ ստիպէին յորդորել զՊղատոն գալ ի Սիկիլիա ըստ կամաց բռնաւորին, և մի յապեղուշնա պատճառս խոստանալոյ։ Պղատոն յայժ դժկամակեալ, այլ չկարաց հակառակ կալ ուժգին թախանձանացն. և յանձն առ գնալ երբորդ անգամ ի Սիկիլիա, և եր յայնժամ ամաց եօթանասնից։ Այս իբրև եկն, քաջալերեցան անդրկին ժողովուրդն՝ յուսացեալք զի գետոյ ապա խնաստութիւն յաղթեսցէ բռնաւորութենէ։

Յայժ ուրախ եղև Վխոնեսիոս. և ընակեցոյց գնա ի

բուբաստանս ի պատուականագոյն կողմն. և ընաւ ան-
կասկած համարձակեաց մտանել նմա յամ ժամ առ-
ինքն առանց քննութեան, որ և մտերիմ բարեկամացն չէր
օրէն։ Պղատոն յետ մեծարանաց բանից՝ կամէր խօսել
ընդ նմա վասն գործոյն Վիթոնի, վասն որոյ առաւելն հե-
գայր, և յայնմանէնէ յորդորեալ եկին անդր։ Իսկ բըռ-
նաւորն պատճառանաւք նախ վաղուց ի վաղիւ արկեալ,
ապա սկսաւ քրթմնջել և գժանել, այլ զանխուսէ՝ վասն
ահին թէ գուցէ զգայցէ զայն Պղատոն. զի ջանայր յա-
ճախեր նմա փառս ամ փուքով և մեծարանաք, զի կա-
տեցուսցէ զնա ի բարեկամութենէն Վիթոնի. կեղծաւորեր
և Պղատոն, և ոչ ինչ զգայրանալ իւր ընդ անվրաս
գրժանս բռնաւորին յայտներ։ Իբրև նոքա յայսմ
մնաց խորհրդի էին, և կարծէին երկրբեան ի ծածուկ
ունել զխորհուրդ իւրեանց, Լդլիկոն կիզկիզեցի մտերիմ
Պղատոնի գուշակեաց զնուաղել արեգական ժամանա-
կաւն, Լյս ի նշանակեալ ժամուն ի ընուլ գուշակութենէն՝
հիացաւ բռնաւորն, որով անվմաստասիրութենէ նորա տե-
սանի, և ետ Լդլիկոնի քանքար մի ի պարգև։ Օ որ
Լբխտիպպեայ ծաղր արարեալ, ասէ ցայլ իմաստա-
սէրսն. Զքաղ լիս և չհաւատալի գուշակեցից և ես Լյս
իբրև սակաւ ժամանակ, և Վիթո-
նեսիոս և Պղատոն մտերիմք դարձցին և եղիցին թշնա-
միք։ Լյս որպէս գուշակեացն՝ տաղտկացեալ բռնաւորին
և ոչ ևս ժուժկալեալ, ետ ի վաճառ զամ կալուածս
Վիթոնի, և զգինսն կալաւ. և զՊղատոն փոխեալ ի
պարտիզացն, բնակեցոյց արտաքոյ դղեկին ընդ թիկնա-
պահսն որք ի բազում ժամանակաց առելութէ էին
ընդ Պղատոնի, և խնդրեին սպանանել զնա, զի խրա-
տեր զարբայ կասել ի բռնակալութէ և արձակել զնոսա
ի բաց, և ի սեր ժողովրդեանն ամրանալ։ Լյս եթէ
բռնաւորին չէր արգելեալ բարեկամութէն զմիջեցու-
թիւն նոցա, վճարեալ էր ի նոցանէ չարութիւն վասն
Պղատոնի։

Լբքիտաս իմաստասէր մեծ ի պիւթագորեանցն, նախ-
իշխան ի Տարենտոն և առաջնորդ, իբրև լուաւ զվտանգ
Պղատոնի՝ հրեշտակս արձակեաց վաղվաղակի և նաւ ե-
րետուն թիակօք, բառնալ տանել զՊղատոն, որ երաշ-
խաւորութէ նորա և պիւթագորեանցն անկասկած է-
կեալ էր ի Սիրակուսա, և յուցանել բռնաւորին՝ զի
գրժէ խոստմանն յարգելուլ զնա բռնի կամ նախա-
պինն ինչ արարեալ ընդ նմա, և առ ամ լաւս չարա-

ԱՄԱՀՆՈՒ համբաւեայի , Չաղերբական յանդիմանութիւն արծաթ-
ծեցաւ՝ եթէ ինչ կայծակին պատկառանաց էր ի սիրտ
բռնաւորին , և զՊղատոն արձակեաց Ա[illegible]լադա :

Պլուտ . էմ. Յամաստասիրութիւն և հանճար մեկնեցան յարքունեացն
էյ. 52: ընդ Պղատոնի , և ընդ հաճոյ և օգտակար բանից , և
փութոյ և անսոքժակաց արուեստից և գիտութեանց , և
կարևոր և խոհական զգաստմանց , որ իմաստուն առաջ-
նորդի վայելէին , փոխանակեցին ընդվայրաքաօսութիւն ,
զգաստութն մտոտի և խօթամիտ յուղութիւն հակառակ կա-
րևորացն հոգոց : Դարձեալ չուայտութիւն և զեղխութիւն
գնախնի իշխանութիւնն կալան . և վարժոցն առաքինութիւն
Պղատոնի՝ եղև ախտիւ օթեան Ա[illegible]կրկայ :

ԳՕԴՈՒԱԾ Գ·

Օ[illegible] երթայ Դէոն ազատել զԱ[illegible]թաքուսա , և երագ յաղողուին նո-
ցա . և վասն դժնեայ ապերախտութեանն սիրաքուսացոցն , և չնչաղ
անչիզաքարութեանն Դիոնի առ նոսա և առ ոխերիմ ըղձափուռ էութ . և
վասն մահուան նորա :

3643 . 361 . Պլուտարք . ի Դիոն . 966 : 968 : Յորժ մեկնեցաւ Պղատոն ի Սիկիլիոյ՝ անդր ևս
քան զամ պայման համարձակեցաւ Դիոնեսիոս յանօ-
րէնութիւն . և ետ գքոյր իւր զԱրետէ զկին Դիոնի՝ Տէ-
մոկրատեայ բարեկամի իւրում՝ ի հինութիւն : Այն անաւ-
ժան գործ՝ եղև ի նշան մարտի , և յայտնի օրէ հաստա-
տեաց ի մոլի իւրում Դիոն համարձակ ի դիմի հարկա-
նել , վերաժինդիր լինել ամենայնի զոր ի բռնա-
նաւորէն կրեաց : Պղատոն զամ հնարս գործեալ ի դա-
ձուցանել զնա ի խորհրդոյն , և ոչ ինչ օգտեալ , գու-
ժեաց ապա գքաջիս՝ զոր ածելոց էր , և հրաժարեաց յամ
օգնականութենէ խորհրդով և ձեռնտուութիւ . զի ի սե-
ղան բռնաւորին մեծարեալ , և յարքունիս նորա բնա-
կեալ , և զոհիցն հաղորդ լեալ , յիշեր հանապազ զաս-
պրնջականութենէն փոխարէն զպարտս . դարձեալ և վասն
բարեկամութենէն ընդ Դիոնի՝ ոչ ի նա ձեռն տուեալ և
ոչ ի սա , հաշտարար երկոցունն լինէր՝ համոզել ի մէջ
նոցա , և հակառակ կալ խորհրդոյ նոցա՝ որ խոհայինն
ի կորուստ մխեանց :

Պղատոն ի խոհեմութենէ ինչ , չգիտեմ , թէ յերբա-
տագիտութենէ , և կամ զի ոչ օրէն համարեր Դիոնի
զԴիոնեսեայ աթոռոն կործանել , խորհեցաւ այսպէս :

Ա՛յլ Պաեւսիպպոս և այլ ամ բարեկամք Վիմոի ոչ դադարէին ի յորդորելոյ զնա՝ գնալ ազատել զՊիկիլիա, որ որպէս բազկատարած զգիրկսն սփռէը՝ ընդունել զնա անձամբ խնդութեամբ։ Ոչնմարտիւ իսկ ցանկային ամենայն սիրահաւատացիք, որպէս և ինքն Պաեւսիպպոս յորժամ էրն առ նոսա ընդ Պղատոնի՝ տեղեկացեալ գիտաց, զի միաբան բողբք բարձեալ հրաւիրէին Թախանձանօք զՎիմոն, մի ինչ հոգալ թէ չիցեն նմա նաւք և հետևակք և հեծեալք, այլ ելանել վաղվաղակի ի նաւ մի պատրաստական ի մի ի վաճառականացն նաւաց. և տեսլեամբն միայն և համբաւով գալ զօրապետն լինել նոցա ընդդէմ բռնաւորին։

ԵՒս ևս երկմտեաց Վիմոն ընդ խորհուրդ բարեկամացն, թէպէտ և ծանր թուէը նմա յոյժ. զի յորմէ հետէ վտանեաց զնա բռնաւորն ի Սիրակուսայ և՝ ի Սիկիլիոյ, վաներ կենցաղ զառն բանասիրի, ի խաղաղութեան ընդ իմաստասէրս կեցեալ, և վիճաբանութեանց նոցա ունկնդիր լինէը, և կարի իակ գեղով հանձարոյն և հաստատուն խորհրդովքն պայծառանայր։ Շ բնէը ընդ ազգս Լատին դայ բարգաւաճեալս իմաստութեամբ, տեսանել զարս ընտիրս իմաստունս և հանձարեղս և խօսել ընդ նոսա, և խորհել ընդ քաղաքավարս հմուտս. և ամ ուրեք թողոյր զնշանակս առատաձեռնութեան իւրոյ և զառատ պարգեւս. և ծանօթէին ամենեցուն սիրելի լիներ և մեծարոյ, և ամ ուրեք վառաւորեր վասն քաջութեանն զոր վասն ազգին։ Ա՛րդ ի քաղցր կենաց աստի հրաժարեալ՝ երթայր յօգնութեի աշխարհին, որ ի նա ապաւինեալ, բառնալ ի նմանէ զլուծ բռնաւորութեան՝ ընդ որով հեծեր ի բազում ժամանակաց։

Խորհուրդ արիական քան զայս չգիտեմ թէ լսի՛ խորհեալ ուրուք, և խոհականապոյն ի գործ մատուցեալ։ Օ՜ օրս ի ծածուկ ժողովեաց Վիմոն ի ձեռն այլոց՝ զի մի յայտնեսցին խորհուրդքն։ Ոչ բաղումք յաւազաց և որք իրաց աշխարհին վերակացուք կէին՝ յարեցան ի նա։ Ա՛յլ այն իակ զարմանք էն, զի յաջորելոյ ի բռնաւորէն, յարանց իբրև հազարաց, քան և հինգ միայն այր եղէն ընդ Վիմոնի. զի յահէ բռնաւորին ամենեքեան սարսեին։ Ոչ զօրաժողով զօրացն ի Օ՜ ահինեմոն կղզի, և անդր եկին համախմբեցան արք իբրև ութ հարիւր թուով, այլ ամենեքին ընդ ծանր պատերազմունս անցեալ, կիրթք և կորովիք, արիասիրտք և հմուտք քան զամ պոռ պատերազմիղ վարժ ի մարտ, և կարողք ե-

առանձն ածել զօրացն՝ զորս յուսայր Վիոն գտանել ՚ի Սիկիլիա, և մնել Ճակատ ընդդէմ բռնաւորին զօրուեթեամբ մեծաւ՝ որպէս պարսն էր ՚ի յաջողելի մեծի գործոյն։

Այլ երբոր կազմեցան նոքա ՚ի չոլ, և գիտացին՝ զի ՚ի Սիկիլիա երթան ընդդէմ բռնաւորին, քանզի միտքն ցայսժամ չէր յայտնեալ նոցա, լուծանն լքան և զղջացան զի յանձն առին զպատերազմն, որ Թուէր իսել, և անմիտ յանդգնութեի՝ որ ՚ի յուսահատութեան գայմ ինչ ՚ի վտանգ արկանէ։ Հարկ եղև Վիոնի գայմ պնդագագմ արուեստի և գՃարտարախօսութեի ՚ի կիր արկանել ՚ի խրախոյս և ՚ի քաջալերութիւն նոցա։ Խօսեցաւ ընդ նոսա վստահութեամբ անխորհուրդ, և ասաց ոչ ՚ի զինուորութիւն զնոսա ածել, այլ զի սպայք ՚ի վերայ սիրա կուսացուց զօրացն կացցեն և ամ ազգաց Սիկիլիոյ՝ որք ՚ի բազում ժամանակաց խնդրէին պարապ յապստամբութեի։ Նա վհատութեի և տխուր լռութեի դարձաւ յազազակ ցնծութեամբ և ուրախութ, և փութային զօրքն ՚ի չոլ։

Օ՜ոհ մեծ պատրաստեաց Վիոն Ընդդէմն, և ՚ի գլուխ սպառազէն զօրացն կացեալ՝ ած զնոսա հնչակաւ ՚ի մեհեանն. և ապա ետ մեծահչդ ընթերից ամ զօրականին։ Նա ՚ի կատարել ընթերացն և քաւութեի կենդանի աղօթիցն, և խաւարեր լուսին։ ԱսացՎիոն, քանզի էր գիտակ արուեստի երևութեան, փարատեցոյց զերկիւղ զօրացն. և ՚ի վաղիւ անդր ելիցն ՚ի կրկին բեռնբարձ նաւս, և այլ նաւ զՏետ նոցա՝ ոչ յոյժ մեծ, և երկու այլ անցի նաւակք երեսնեաւթի։

Դիոդ. ԺԳ. 13։

Ամարթի և խորհել, ասէ ՚ի վիպագրացն ոմն, խիզախել երկոքումբ բեռնբարձ նաւսը ընդդէմ Թագաւորի՝ որում չորեքբարիւր նաւք պատերազմիկ էին, տասն բիւր հետևակք, և բիւր պրուէի [1], և ամենայարդար պատրաստութիւն զինուց և պաշարոյ, և գանձք ՚ի լիութիւն բաւականի ՚ի պահել զայնչափ ամբոխ զօրացն և տալ ռռձիկ նոցա, և որ միւսք ՚ի մեծամեծ և յամուր

1 Ձգիպեմ սրպես մարթեր կարելաք գթաւորին Բեռի տեղաւորել առ, զրո նաւսս և ցամաք պահել Վիոնին սեանցն. զի ՚ի նոցն ի Սիկիլիոյ առ. լաք ձախոն՝ զոր էրեցն Վիոնիսիոս ՚ի մանէր բնակութեի նոցա յահագ առ. կամայ ձկանցին Նաւապարսոյն ձա. ման։ Ազատեցին ՚ի ձամանակութեին մեր. խաց, և ՚ի ձեղբնել և ՚ի պահել զամ խոցս յոյժ և հարուածոց Սիրակու. բուս ձեր զրաց, և ՚ի նաւսյոց հարս. սա, և բռնաւորին հանելին հարիս ձնա. կան չինուածոց։ Ասաց, զի ոչ առ. նան ՚ի գազաւոյ՝ որ ընդ յետմէ նա. ւէ իմ զայսմանէ վիպագիրք գրուվ ընդ ցս էին ՚ի Սիկիլիա և յԻտալիա, այլ

քաղաքաց ժամանակին իչխեր՝ որում նաւահանգիստ և պինանոցք էին և դղեակք մեծաիկք, և բազմութիւն հզօր ազգաց նիզակակից և զօրաւիդն։ Ա՛յլ յետին կատաբածէ իրացն տեսցի՛ եթէ իցէն բռնութիւն և զօրութիւն շղթայիւ անդամանդեայք յանխզելի պահել զիչխանութիւն՝ որպես մեզօրեալ կարծէր երեցն Պիտեսիոս, եթէ հզօր և անլոյծ պահիցէն զայն քաղցրութիւն և մարդասիրութիւն և արդարութիւն Թագաւորն և սէր ժողովրդեան։

Պիտեսիոս։ Ի Դէոն. 968։ Դիոդ. ԺԷ. 414։

Պիտի գոյզն գնդաւն եղ ընդ ծով, և զաւուրս երկոտասան նաւարկեալ մեղմ և տկար հողմով, յաւուրն երեքտասաներորդի եհաս ի Պաքիոն ի հրաւանդան Ակիլլեայ հեռի ի Սիբակուսայ իբրև երկոտասան կամ հնգետասան փարսախ։ Ա՛ւ իբրև մերձ եղեն ի ցամաք, ձայն ետ նաւապետն փութալ լինջանել յերկիր. զի երկնչեր հեռանալ ի ծովէղերէն՝ վասն կասկածանաց ուժգնից մրրկի։ Ա՛ւայց Պիտի ոչ իշխեալ մերձ առ թիչտալին իջուցանել, խորհեցաւ պատել զհրաւանդանսն և հեռագոյն ուրեք մատչել յերկիր. և ընդ պատել նոցա՝ եղև մրրիկ սաստիկ և չանիթք և որոտմունք և բուքք և անձրեւածք, և վարեցան ընդ արևելս աշխարհին ափրիկեացոց, մանչասուր լեալ ի նաւակոծելոյ ընդ սեպս ժայռից։ Օ՛ի յանկարծ անակնկալ յաջողելոյ հարաւ շնչեաց, և ետուն զառագաստս ի հողմն, և առ դիմս պաղատեալ արկին ի խորս ծովուն ընդ Սիկիլիա։ Ա՛ւ զաւուրս չորս երագ նաւեալ, ի հնգերորդումն մտին ի նաւահանգիստն ի Սիրակուսա քաղաք փոքրիկ ի Սիկիլիա ընդ իշխանութիւք կարքեդոնացւոց, ուր եր վերակացու Սիննաղոս մտերիմ Պիտիի և ասպնջական նորա. և ընկալաւ զնոսա ամ մարդասիրութիւք։ Ընդ խորհիր Պիտոն հանգչել առ ժամանակ մի, և զզօրսն արծարծանել ի խիստ աչխատութենէն մրրկին. այլ լուր եղև՝ զի Պիտեսիոս մեկնեալ էր ի Սիբակուսայ, առաւրըք յառաջ նաւարկեալ ընդ Իտալիա ուխտաւն նաւօք, և Թախանձեցին զնա զօրքն փութալ չուս առնել, և աղաչեաց զՍիննաղոս յղել զշէտ իւր զաղխոն ըստ ժամանակին, և դիմեաց զօրքն ի Սիբակուսա։

Ա՛յլ երթայր և ստուարանայր բանակն յեկամից յամ կողմանց զօրացն՝ որ ի նա յարեին։ Ի ու եղև վաղվաղակի ի Սիրակուսա՝ զի գայր. և Տիմակրատ՝ որ զնին նորա զբոյր բռնաւորին առեալ էր կնութե՛, և փութանակ իւր Թողեալ էր զնա բռնաւորն ի մեկնել իւ-

բում, արձակեաց սուրհանդակ զՀետ նորա Յոտալիա հանդերձ նամակաւուով, և ազգ առներ զՏասանել Վիճենի։ Եւ սուրհանդակին ի վերջս ուղեցոյն խոնջեալ ի ցայգազնաց աչխատութենէն, հարկ եղև հանգչել առ վայր մի և ննջել. և ահա մի ի գայլոց հասեալ ի հոտս տեղոյ մնոյն, զոր ընդ պարկին կրէր, բարձ տարաւ ընդ մնոյն և ղպարկն յորում էին Թուղթքն։ Եւ անագան ապա լուաւ յայլոց Վիճենիոս զգալոստ Վիճոնի։

Եւ Վիճոն իբրև մօտ եղև ի գեօն Վշնագ, որ Հեռի է ի քաղաքէն կէս փարսախաւ, զտեղի էառ անդէն։ և ի գետեզերին զոհ մատոյց և պաղատանս արեւուն յէլեն։ Եւ ամենեքին որ անդն կային ընդ տեսանել զՎիճոն ծաղկապսակ առ զՀին, միով ոգւով և նոքա վառեալ պսակեցան։ Եւ ամ զօրքն՝ որք զՀանապարհէն յաւելան՝ էին աւելի քան զՀինգ Հազար. և էին նոքօք ի քաղաքն։ Ի Եծամեծք քաղաքին, որք կացեալ էին անդ, եկին ընդ առաջ նորա ի գրուհս պայծառազգեացք ընդունել զնա։ Եւ ամենայնեան ամբոխն ի վերայ բարեկամաց բռնաւորին, ի կորուսանել զլրտեսն և զչարաչխատս, զայգ անիծապարտ զԱհնամի գիշ և մարգկան՝, որպէս կուէ զնոսա Պլուտարքոս. որք դեգերեալ Հանապազ ի քաղաքին ընդ ժողովրդեան, և օտարատեսուցք լեալ զամ քան և խորհրդ Հասուցանէին առ բռնաւորն, և յամախ եւ՝ զոր ոչն ասացեալ էր և ոչ զմտաւ ուրուք ածեալ՝ Ի զոր նախ մոլեգնութեն ամբոխին դէշ անկան՝ չարագան առ հետեղ սպանեալ։ Եւ Ջհանկրատ չկարացեալ ի դղեակն անկանել էլ ի ձի և փախեաւ ի քաղաքէն։

Եւ ինքն եկաց Վիճոն առ պարսպօքն ի գլուխ վառելոց զօրացն ի զէն և ի զարդ, և յաջմէն և յահեկէ Հեռակայէ եղեալր նորա, և Ալիսպոս աթենացի ծաղկաբոյ պսակք. և զՀետ նոցա Հարիւր այր ընտիր յայլազգեաց, Թիֆինապահք կորովիք։ Եւ այլ զօրքն գեղեցիկ կարգաւ որպէս ի Հնոյս մարտի զՀետ նոցա գային զօրապետք զանդերձ և սպայիւք։ Ի տեսին յայն ցնծացան սիրակուացիք. և որպէս զՀնոգս սուրբ և ածաՀածոյ ընկալան զնոսա. զի բերէր մնոտացանէր նոցա Վիճոն զռամկապետութեն և զազատութիւն՝ որ մերժեալ էին ի քառասուն և ութ ամաց Հետէ։ Իբրև եմուտ ի քաղաքն Վիճոն, փող Հնչեցոյց՝ լռեցուցանել զաղմուկն և

1 Ջարան զանիծեալս զԱհնամ ասից։

զաղաղակ . և իբրև լռեցին , ՚ի ձեռն քարոզի Հաչակե-
ցոյց և ասէ . Վիմն և Աեգակիկս ահա գան բառնալ
զբռնաւորութիւն , և զամ ազգս Աիկիլեոյ ազատել ՚ի
լծոյ բռնաւորին : Այլ ինքն և Վիմն եղ ՚ի բարձու ու-
րեք եկաց ընդ կողմն Աքրադիոյ առ ՚ի հրապարակա-
խօս լինել . և ընդ ամ փողոցս ընդ որ անցանէր՝ սե-
ղանք ՚ի սերակուսացուց կանգնեալ էին նմա , և բաժակք
և զոհք պատրաստեալ . և ծաղիկս ՚ի տանց երկին երկին
ցանէին մինաւ յանցանէին , և ուխտս և մաղթանս որ
պէս դից մատուցանէին : Ետ սմին օրինակի կռապաշ-
տութեանն սկիզբն եղեւ . զի զնճական պատիւն առ ընձ-
ծայեաց ժողովրդեան այնոցիկ՝ որ բարիս Հաճոյս նմա ա-
բարին . և որ ինչ քան զազատութիւն Հաճոյ և սիրելի
կայցէ ժողովրդեան : Ըստ ատորատով դղեկին ստորև
Պետապիղեայ էր ժամացոյց արեգակնային բարձր
յոյժ , զոր Վիմնեսեայ կառուցեալ էր . անդր էլ Վիմն
հրապարակախօսել , և ամ ժողովրդին շուրջ կայէին . և
խրախուսեաց զնոսա ձգնել ՚ի վերայ ազատութեան ՚ի
կանգնել և ՚ի պահել զայն : Աիրակուսացիք յակձիռս
եղեալ , և ասա ՚ի Հաւատոխ երախտապիտութենէն և սի-
րոյ՝ կայուցին զնա եղբարբն Հանդերձ սպարապետ ամ
զօրացն լիով իշխանութբ : Այլ խրատու և աղերսիւ նո-
ցա՝ յաւելին և օգնականս քան այլ յականաւորաց քա-
ղաքին . կէաք ՚ի նոցանէ էին յաքսորելոցն ՚ի բռնաւո-
րէն , որք եկին ընդ Վիմնի :

Այլ ապա կալաւ Վիմն զամբոցն Ապիպոլեայ , և զար-
գելեալսն ՚ի նմա զբազաքացիսն ազատեաց , և պատեաց
զայն ամուր պարսպօք : Ձետ աւուրց եօթանց ապա ե-
հաս բռնաւորն Աոտալիոյ , և եմուտ ընդ Ծով ՚ի միջնա-
բերդն : Ի նմին աւուր հասին սայլիւք բազմօք և զէնքն
Վիմնի , զորս առ Աիկոդեայ Թողեալն էր . և փութա-
ցեալ բաշխեաց զայնոսիկ քաղաքացոց՝ որոց ոչ էին
զէնք . և այլք առ հասարակ , որպէս մարթէր լուրաքան-
չիւր , զինեալ կազմեցան մտադիւր և յօժար :

Հրեշտակս արար վաղվաղակի բռնաւորն առ Վիմն
և առ սերակուսացիս , պայմանս բարիս եդեալ . նոքա
ետուն պատասխանի՝ հրաժարել նմա նախ ՚ի բռնակա-
լութենէ . և նորա յանձն առեալ , եկին յանդիման եղեն
խորհել ՚ի միասին : Այլ զայն ամ կեղծաւորեր բռնաւ-
որն , զի պարապ կալցէ , և զեռանդն սերակուսացոց
յուսով հաշտութենն մեղկեսցէ : Վանզի կալաւ ապա և
էդ ՚ի բանտի զպատգամաւորս՝ որ եկին խօսել ՚ի հաշ-

տուէին. և զօրահատոյց արարեալ գունդ մեծ, դիմեաց Յանկարծ ի պարիսպս՝ զոր վիճաբերդաւն ածեալ էր սիրակուացոցն, և խրամատս ի նմա գործեաց բազումս։ Ձանահիկալ ուժգին յարձակմանէն խուռվեալ և խուճապեալ զօրականքն Ասպէկին ի փախուստ, և ոչ կարաց արգելուլ զնոսա Վխին. և քան բանիւ՝ օրինաւկան զնոսա ազդոզազդոն խրախուսեալ, յարձակեցաւ արիաբար ի Թշնամիս, և անասան ընդդէմ Հարուածոց նոցա կացեալ՝ արար կատորած մեծ։ Այլ տիգասոց ելեալ ձեռն նորա, և զրահ[ի]քն իւրովք հանել պատրաստեր ի տարափս նետից՝ որ տեղային ի նա. և ի տեգոցն և ի զեղարգեանց՝ ասպար նորա ճակատեցաւ, և ինքն անկաւ յերիվիր. զոր զօրականացն փութացեալ յափշտակեցին ի միջոյ Թշնամեաց։ Յոր Թողեալ փոխանակ իւր զՀիմնիգէս, հեծաւ ի ձի, և ընդ ամ քաջ զաքն ընծացեալ՝ արձել զսիրակուացոյն փախստեայս. և այլազգի անխոնջ զօրականաքն՝ զոյս նստուցեալ էր ի պահ կողմանն Այրարենայ՝ խաղաց ի վերայ խոնջ և վաստակ զօրաց բռնաւորին, որ յանկարկալ յայցող-գողդ դիմահալալեցին վհատեալ լուծան. և ոչ էա պատեղամ էր անդ, այլ բեկումն. զի ամբոխ բազում ի տեղւոջն անկան, և այլք մազապուր եղեն ի միջնաբերդն, և մեծ և պայծառ յաղթութեի կանգնեցաւ։ Այստ ի վարձ քաջութեի այլազգի զօրաց էտուն սիրաւկուացիք միւս միւս կշռո բազում արծաթոյ. և զօրքն պակ ոսկի ածին Վխնի ի պատիւ։

Յոր ահա հրեշտակք Տաճն առ նա Հանդերձ նամանականով յրնտունեաց նորա և ի բռնաւորէն. և ետ Վխին ընթեռնուլ զպատգիր ի ժողովի։ Վանգի բռնաւորն աղերսական պատասխանի առնէր և աշագին սպառնալից ընդդէմ սիրելեաց նորա քեռն և կնոջ և որդւոյ։ Այլ էր Ձարտար և մեքենաւոր յօրինուած Թզնդին, և կասկածելի առներ զՎխին, յիշեցուցեալ օրշափ արար նա յառաջ ի Հաստատութեի բռնաւորութեի՝ յեռանդն և ի նախանձ վառեալ. և որպէս գաղտ և ծածկաբար, այլ ծանծաղ բանիւք, յորդորէր զնա մի քնաքարշ առնել զբռնաւորութեի, Հնայել գնեի յանձն իւր, և մի Համբ արձակել փաղաքշոց, և մի ի կասն ազատութեի յոզդողդ և մալն ամբոխին ապատան առնել զիւր և զբանեկամացն և զաղգատվին փրկութեի։

Պատ. 972։ Դիոդ. Ժիզ. հւց։

Յոչ ընդունայն եղեն խորհուրդք բռնաւորին, վասն որոյ զբեսոյն զիծուղեին։ Օ՛ն սիրակուացիք ի վերայ

այնչափ բարուքեցին Վիմի և ամուսնական առաքինութեանն, զի զիւրն զնմ ապահա արար, և զողորմութիւնն և զբնութիւնն լուեցոյց վասն ազատութեանն նոցա, եղեկաւ ի տղոց զօրութենէ նորա անիրաւ կասկածանօքն՝ յոր և Էս հաստատեցան ի հասանել Հերակղիդեայ։ Վասն զի և սա ընդ աքսորեալսն էր, այլ պատեհապահ և եռանդեալ ի զօրսն՝ վասն մեծամեծ իշխանութեանց ընդ բըռնաւորքն ունէր, արի և փառասէր և գարմանակալ Վիմի, ընդ որում և վէմք լեալ էին նմա ի Պեղոպոնես։ Ա՛ա եկն եօթամբք եռաթիւով և այլովք երիւք նաւօք, իբր ոչ ի գումարել ընդ Վիմի՝ այլ միայնակ խիզախել ընդդէմ բռնաւորին, որ եր յայնժամ արգելեալ ամրացեալ ի միջնաբերդին։ Իբր նախ խորհեցաւ յինքն արկանել զժողովուրդն, զի կարէր իսկ յանկուցող և ընդելական բարուքն. իսկ Վիմն խիստ և լուրջ բարուք ատելի էր նոցա, մանաւանդ զի նորոգ յաղթութեանն իրօրոտացեալ և խեռեալ՝ մինչ դեռ ի ծառայութեան էին՝ ոսոխասէտականին իշխանութեան պատուոյ Թեկն ածէին, և մեծարանս և քաղցրութիւն և գթանս և զիմ հաճոյից իւրեանց լուսին խնդրէին, որպէս տապաւորագոյն հելլենն տայ իմաստս[1]։

Իսկ զոր հատուցումն բարի հատուցանիցէ խոտնիձաձանձն, որում պիտոք և չախտուն բերմունք խորշոմանք են։ Վերակուսացիք փութացեալ իւրովի ժողով կոչեցեալ, կացուցին զօրավար ընդ ծով զՀերակղիդէս։ Ի վերայ հասեալ Վիմն, բոլոր կալաւ՝ զի իշխանութէն, զոր տային Հերակղիդեայ, զիւրն եղծանէին՝ զոր ետունն, և ոչ Էս սպարապետ ինքն ամ զօրացն լինէր՝ եթէ այլ ոք ծավամարտիցն իշխեր։ Իբ աղերսական յանդիմանութէն ասիսեալ, լուծին ակամայ զՀերակղիդէս ի նորոգ իշխանութէն։ Իբ յարձակել ժողովոցն՝ կոչեաց զնա Վիմն, և մեղմով յանդիմանեալ զնա վասն խեթիւ ընդ նմա գնալոյն ի բազմավատանգ ժամանակին՝ յորում ի գոյն անմիաբանութէ մարթէր հասանկոր ծան ամ իրաց լինել, կոչեաց ասա վերստին ժողով, և առաջի ժողովրդեան՝ կացոյց զՀերակղիդէս ծովապետ, և Թիկնապահն նմա որպէս իւր։

Յարհեր բարերարութէնքն յաղթել մախանաց ասոխին. այլ Հերակղիդէս բանիւք միայն վեր ի վերոյ մեծարեալ զնա, Հնօրհակալ լինէր, և խոստանայր յիշել

1 Կուսակից լինել ժողովրդեան՝ որոց առաջնորդէն նմա կամին։

ԱՄԱՀԱՆՔ անմահաց զընտրչս նորա, խոնարհէր զիջանէր առաջի նորա, և զնա՛ր հրամանս նորա երագ և անսխալ կատարէր՝ բոլորանուէր ի ծառայութիւն նորա, որպէս միայն հաճոյ նմա լինել ցանկացեալ. իսկ ի գաղանիս դաւով և նենգութիւ՛ք գրգռէր զանհնարսն ընդդէմ նորա, և ամենևին խափանել զնա ջանայր։ Օ՜ի ի յանձն առնուլ Վխրմի ուխտ դնել ընդ Վխրեանայ և Թողուլ ելանել նմա ի միջոցաբերդէն, բամբասէին զնա՝ թէ խնայէ ի բռնաւորն և փրկել զնա հնարի. իսկ ի մնդել ըստ կամաց նոցա զպաշարումն՝ մերժեալ զպայմանս հաշտութեան, դարձեալ բամբասէին զնա՝ թէ վասն իշխանութե՛ան զօրավարութե՛ն յերկարաձգէ զպատերազմն, և վասն մեծարելոյ ի քաղաքացոյն և ահաւոր գոլ նոցա։

Ի.ԱՀ իբրև Փիլիպատոս՝ որ բանսւութե՛ն մարտիկ նաւագ յօգնութե՛ն բռնաւորին ի Պալիւնեայ եկեալ էր՝ պարտեցաւ և սպաւաւ, հրեշտակս սրար Վխրմեսիոս՝ տալ Վխրմի զմիջոցաբերդն և զնա՛ զէն և զնուռս որ ի նմա, և արծաթ բազում հնդամենայ ռոձիկ զօրացն, եթէ միայն ուխտ դիցէ, և Թողցէ երթալ նմա Յ.տալիա, կեալ անդ մինչև ի վախճան, և տացէ զեկամուտս կալուածոց ինչ մերձ ի Սիրակուսա։ Ա՛այց սիրակուսացիք յուսացեալ կենդանւոյն ունել զնա, մերժեցին զպայմանսն. և նորա յուսահատ եղեալ, եթող զմիջոցաբերդն յանդրանիկն իւր Յ.պողոկրատէս, և աջողակ հողմով նաւարկեաց Յ.տալիա ընդ մտերիմս իւր, հանդերձ 3644. 360
գանձիւքն ցանկալեօք։ Ա՛ր Հերակղիդեայ ծովապետին ի սոգիւտ մեծ եղև, զի յուլութե՛ն նորա ժամ առեալ՝ զերծաւ բռնաւորն։ Ա՛.ԱՀ նա ի հաշտ առնել զամբոխն՝ ետ սահմանել ի ժողովն նոր բաշխս կալուածոց, յուցեալ հինն ազատութե՛ն զհաւասարութե՛ն, և զաղբատուե՛ն սկիզբն ծառայութե՛ն։ Ա՛յսմ հակառակ եկաց Վխրմ. այլ Հերակղիդէս հաւանեցոյց ժողովրդեան՝ նուազել զսակ ռոձկի այլազգի զօրացն երից հազարաց, և վերստին զկալուածս բաշխել, և զօրավարս նորս կացուցանել՝ զի ի դժոխրմբեր խաւութե՛ն Վխրմի ազատեսցին։ Հաճոյ Թուեցաւ սիրակուսացւոց, և կացուցին սպայս քսան և հինգ, ընդ նոսա և զՀերակղիդէս։ Ա՛չ զայլազգի զօրսն հրապուրեցին զգաղ՝ նշխահել զՎխրմ և յաւելուլ յիւրեանս, և հաղորդել իշխանութե՛ն ընդ բնիկ քաղաքացիս։ Ա՛.ԱՀ առաքինի զօրքն մերժեալ անարգեցին զպարգեւսն, և զարմանալի սիրով և հաւատարմութե՛ն ի միջ առեալ զՎխրմ, և անձամբ իւրեանց

և զինուք պատսպարեալ զնա՝ ածին արտաքոյ քաղաքին. և ոչ ումեք մեղուցեալ, բայց միայն որոց պատահէին յուղով՝ կշտամբելին զասպերախտութեն նոցա և զդրժմանս։ Այլ սիրակուսացիք արհամարհեալ զգուշանն սակաւաձեռն, և վարկուցեալ զառաքինութեն նոցա յերկիւղ և ի վատասրտելոց, դիմեցին ի վերայ նոցա՝ որպէս թէ ի քաղաքամիջի անդ պարտել զնոսա, և ընդսուր հանել զամենեսեան, և ոչ թողուլ ի նոցանէ ապրեալ։

Ի խիստ հարկին, քանզի պարտ էր ընդդէմ քաղաքացոցն մարտնչել կամ՝ կորնչել գնդացն, բազկատարած աղերսեր զնոսա Վխոն, գութ և գորով արկանէր, ցուցանէր զմիշնաբերդն լի Թշնամւօք՝ որք ոտնհար լինէին ընդ աղէտս քաղաքին։ Այս իբրև ոչ ոք լսեր, և ոչ կարեկիր ոք լինէր աղերսանացն, հրաման ետ զօրակատարն ամրակուռ յերեսաց՝ յառաջ խաղալ, և մի լուծանել զպաշտն ի յարձակումն։ Այս արարին այնպէս, և ի շաւիւն զինուցն և ի ձայն մեծ աղաղակին՝ Թուէր յարձակել նոցա ի վերայ սիրակուսացւոյն. որոց զարհուրեալ յամբոխեն՝ փախեան, և ոչ ոք իշխեաց կալ առաջ նոցա։ Այս Հեպեցոյց զերբոն Վխոն՝ անկանել ի սահմանս լեռնոտացւոց։

Այսպէս սիրակուսացւոց ծաղր կացին և առակ նշուաւկի կանանց քաղաքին. և ի կանգնել զկօրանսն՝ հրաման ետուն զէն առնուլ զօրացն, հետամուտ լինել Վխոնի. և հասեալ զհետ նորա յանցս ուրեք գետոյ, զհեծելազունդն յառաջ մղեցին։ Այս իբրև Վխոն պատրաստեր համարձակ զդէմ ունել, և ցասմամբ մեծաւ դարձուցանէր ի նոսա զզօրսն, զարհուրեալք՝ վաս ևս փախըստեամբ անկան ի քաղաքն։

Վաղուք և շքով մեծաւ ընկալան զՎխոն լեռնոտա- Պետ. 97ե։
ցիք, և պարգևս բազումս ետուն զօրացդ նորա, և ընդ- Դեմ. 422։
քաղաքացիս զնոսա ընկալան։ Այս յետ աւուրց առաքեցին առ սիրակուսացիս՝ դատ դնել վասն անիրաւութեին, զոր արարին ընդ զօրսն։ Այս նոքա փոխանակ առաքեցին՝ բողոք ունել զՎխոնէ. քանզի արբեցեալ էին յիմար խնդութեամբն, և խրոխտացեալք յաջողութէ, և խորհել ինչ և դատել չկարէին։ Այ մեծայն ինչ յաւելցուր գրգռել զնոսա յամբարտաւանութիւն։ Այստկանացոյց սով՝ ի միշնաբերդին. և զօրք բռնաւորին յետ բազում նեղութեին հաստատեցան տալ զամրոցն ի ձեռս սիրակուսացւոց. և հրեշտակս արարին ի զինչերին յայնմիկ՝

առ վաղուն լինել անձնատուր։ Ա.ԱԼ յառաւօտուն մինչ դեռ պատրաստէին կռիւ զդաշն, Ալեքսիոս զօրավար այլ քաջ և խորհրդական՝ զոր բռնաւորին յղեալ էր ի Վեսպասիանոս, և ընդ նմա ցուրեան և արծաթ պաշարեալ, հասեալ նաւատորմիւն՝ մատեաւ յերկիր առ Ա.ՒՐԻԵԹաստաւ, և յանկարծ զսոսին յառաւսուԹի զարձոյց։ Եւ հանեալ ի ցամաք զզօրս իւր՝ ժողով կուգայց, խօսեցաւ ըստ պատշաձի իրաց ժամանակին, և խրախուսեաց զնոսա յանձն առնուլ զիմ վտանգս։ Ա.ՒՐ անակնկալ յաջողուԹեամբն փրկեցաւ միջնաբերդն, որ դեռ ևս ի Թշնամիսն նուաձեր։

Զայն վայր սիրակուսացիք եղեալ ի նաւս, դիմեցին ի վերայ տորմին Թշնաւեաց։ Եւ զկնիս ի նաւաց նոցա ընկղմէին, դիպս ի գերուԹիՒ վարեցին, և զայլսն հալածեցին մինչև յերկիր։ Ա.ԱԼ եղև յաղԹուԹիՒն այն նոցա ի կորուստ։ զի ոչ գոյր զօրավար առաջնորդ նոցա և ոչ խորհրդականք, այլ ազատք և ինքնիշխանք սպայք և զօրքն առ հասարակ ետուն զանձինս յուրախուԹիՒ ի խնջոյս ի գինեբուս և ի գեղխուԹիՒն և յամ ցոփուԹիս։ Եւ Ալեքսեայ զայն ժամ պատեհ կալեալ, մինչ դեռ ամենեքին Թալացեալ ընկղմեալ էին յարբեցուԹիՒն, յարձակեցաւ ի պարիսպս միջնաբերդին։ և կալեալ զայն, և խրամատս բաղումս ի նմա գործեալ, արձակեաց զզօրս ընդ քաղաքն յաւար։ Մինայն ինչ խառն ի խուռն էր, և ամ ուրեք աղմուկ։ աստ քաղաքացիք խոզխոդեալք ի նիրհ, անգ առնուք աւար Հարեալ և այլ ուր կանայք և մանկունք գերեալ, և բանի ի միջնաբերդն մտեալ ածեալ ողովք և աղաղակաւ։

Ա՝Իրաւ ուժգին մարԹէր վախձան առնել չարեացն և փրկուԹիՒ քաղաքին, և ամենեքին վկայէին զայն ի միտս իւրեանց, և ոչ ոք իշխէր համարձակիլ ասել՝ վասն սաստիկ ամպոհին, զի անարգաբար հալածեցին զնա։ Ա.ԱԼ ի տխրիլ վասնզին և ի մտել ի կողին Ա՝լբադինայ, յանհնարին նեղուԹիՒն և ի յուսահատուԹիՒ, ձայն եղև յանկարծ ի գնդէ նիզակակցաց և հեծելոց՝ կոչել զԱ՝լեքսիոն հանդերձ պետովսն նեսայի գնդաւն, որ էին յերկրին լեռնոտաց։ Ո՝ այն ինչ միով ուրուք իշխեալ ասել, միա համուռ ամ բաղմուԹիՒն սիրակուսացւոյն զՀետ կցեցին. և զուարճախառն ողովք պատսպարին առ դիս՝ դարձուցանել զԱ՝լեքսիոս. և յուսոյն իսկ գարձին նորա խրտնեալ, զօրացան կալ առաջի Թշնամեացդ։ Ա՝նդադեալ պահք արձակեցան հեծեալք, ողբ ընդ մեռս արեւուն

հասին ի Լեւոնտին. և իջեալ յերկիր, դիմեալ անկան յոտս Վիրվին արտասուօք, և ցուցին նմա զնեղուլեն մեծ սիրակուսացւոցն։

Եւ ոմանք ի լեւոնտացւոց և զօրք պեղպոնեսացիք բազումք ի տեսանել զնոսա՝ կուսեցան ի վերայ Վիրվինի. քանզի ի շտապոյ եկելոցն և ի խոնարհ ձևոյ գուշակեցին՝ զի նեղուլեն մեծ հասեալ էր նոցա։ Եւ իբրև լուաւ Վիրվին, վաղվաղակի ժողով կոչեաց. և լի նախանձու՝ ժողովրդեն խոնեցան անդր, և ած զպատգամաւորսն ի ժողովն։ Վկնաւորք ի նոցանէն երկու մարտ ի նեղքս, ցուցին կարճ ի կարճոյ զաղէտս չարեաց քաղաքին, Թախանձ արկեալ այլազգի զօրացն՝ հասանել օգնել սիրակուսացւոց, և մի յիշել զչարիսն՝ զոր կրեցին ի նոցանէ, ընդ որ յոյժ և նոցա զնդղ էր, և ընկալան իսկ Հատուցումն խոստ՝ որպիսի ոչ ոք և ի կարի չարակրելոցն կամէր նոցա։

Եւ իբրև վախճանեցին զբանսն, լռեաց ամ Թատրն՝ ուր ժողովեալ էին ի տխուր լռութիւն։ Ապա յոտն եկաց Վիրվին, խօսել սկսաւ, և ուղիք արտասուաց գետ լուին զբանս նորա։ Եւ զօրքն այլազգի կարեկից լեալ քաղաքեցիկն զնա. և իբրև փոքր մի ոգի էառ, ասէ. Զքե պեղպոնեսացիք, և նիզակակիցք ամենեքեան լուա բուք. ածի զձեզ այսր խորհել վասն ձեր. իսկ ինձ այլազգ ինչ չմարթի խորհել ի վտանգին Սիրակուսայ. եթէ փրկել զնա չկարեմ, սակայն ընդ նմա կորեայց, թէ ղեցայց ընդ փլատակօքն։ Այլ դուք եթէ զարձեալ չանձն առնուք օգնել իմոյն անմտաց և հիքայ, եկայք. և յարիցէ միաւանգամ և կացցէ ձեօք Սիրակուսա՝ զոր մի անգամին կեցուցէք։ Այլ եթէ արդար վրիժոյ Թողուցուք զնա ի վտանգին կորնչել, չնորհեսցեն դիք վարձս արժանի հատատարմութեդ և սիրոյ՝ զոր մինչև յայսօր արարէք ընդ նմա։ Այլ յիշեսցի Վիրվին, որ ոչն եթող զձեզ չանիրաւել առ ձեզ քաղաքացիսդ, և որ ոչ դարձեալ զքաղաքացիսն եթող ի թշուառութիւն։

Այնչ չև ևս վախճանեալ էր զբանսն՝ յոտն կացին այլազգի զօրքն, և խրախոյս բարձեալ Թախանձիկին փութալ ընդ նմա յօգնութիւն քաղաքին։ Այլ հրեշտակք սիրակուսացւոցն լի ցնծութիւն գիրկս արկեալ ողջունեալ զնոսա, մաղթիկն Վիրվին և զօրացն առնեցուն զամբարտութիւն և գյաջողութիւն ի դէպ։ Եւ ի գադարել ամբոխին, հրամայեաց Վիրվին զօրացն՝ երթալ պատրաստել ի չու, և յետ ընթրեացն վառեալ ի գէն՝ ժողովել

դարձեալ ՚ի տեղի անդր. քանզի խորհէր՝ ՚ի գիշերին յայնմիկ չոբ առնել հասանել յօգնութիւն հայրենեացն։

Այլ սպասք բռնաւորին ՚ի Պիրակուսա զնամ չարիս՝ յոր ձեռնհաս էին գործելոյն, և ապա ընդ երեկս առ բացան ՚ի միջաբերդն, այլ ոմանք ՚ի նոցանէ սպասեան։ Իսկ առաւնաբանք խուովիչք քաղաքացոցն՝ վայրիկ մի պարապ առեալ քաջալերեցան. և յուսացեալ զի ոչ ևս յաւելուցու նեղել զնոսա Թշնամին, յորդորեցին զժողովուրդն մերժել զՊիւռն ՚ի գալ նորա այլազգի զօրաջոքն յօգնութիւն. և յաւելուլ քան զնոսա քաջութիւն, փոխանակեալ զանձինս ՚ի վերայ քաղաքին և ազատութեան։ Իսկ փութացեալ սպասք ամ զօրացն արձակեցին այլ հրեշտակս առ Պիւռն ՚ի խափանել զնա, և այլք գլխաւորք ժողովրդեանն և բարեկամք Պիւռնի ՚ի փութացուցանել զնա։ Իսկ Պիւռն վասն երկպառակութեան և անմիաբան հրեշտակութեանն դանդաղեալ յամէր ՚ի չուն, մինչև ՚ի մէջ գիշերի կալան Թշնամիքն նորա զդրունս քաղաքին՝ խափանել զմուտս նորա։ Դիպեալոս իբրև գիտաց որ ինչ անցք անցանէին ՚ի քաղաքին, եհան զզօրս իւր ՚ի միջնաբերդէն յոլով քան զառաջինն և արիս. որք ՚ի սպառ զպարիսպն շուրջանակի աւերեցին, և յամ կողմանց խուժեալ ՚ի քաղաքն՝ աւար Հարին. և էին ամ ուրեք գիակունք անկեալ, և արեան ճապաղիք գնային։ Սակաւ ինչ փոյթ եր զօրացն ՚ի կողոպտել, այլ յաւեր և ՚ի կործանումն փութային։ Իսպղոկրատ որդի բռնաւորին, յոր հայրն զմիջնաբերդն եՒող, յանահատեալ և լի ոխութիւն ընդդէմ սիրակուսացւոց՝ կամ միր իմն ՚Ի՛ընդ փլատակօք քաղաքին ծածկեր բռնաւորութիւն։ Այնչ չև Պիւռնի հասեալ՝ կանխեցին զօրքն յառաջագոյն ատեր և յապաւանութիւն, և իբրև զի հրձիգ արարին ջահիւք և ՚ի բոց յարդի զամ տեղիս՝ ուր և հասանէին. իսկ այլոցն նետս հրաւառս արկանէին։ Ընդ սիրակուսացիք ՚ի հրոյ խուսափեալ ՚ի սուր անկանէին ընդ փողոցս, և որք ՚ի բազմախողխող երկաթոյն փախուցեալ ՚ի տունս դիմէին, անտի բոցն զնոսա վառեր. քանզի տունք բորբոքեալ ՚ի վերայ անցաւորացն անկանէին։ Իսկ Պիւռն հրգեհիւն եպիտ մուտս, զի վասն հարկին միաբանեալ քաղաքացիքն՝ բացին նմա զդրունս. և արձակեցին սուրհանդակս զՀետ միմեանց՝ ձեպեցուցանել զնա. և ինքն իսկ Հերակղիդես, ոսկերիմ և անկեղծ ասոխ նորա, յղեաց առ նա զեղբայր իւր, և զՀետ նորա զՀօրեղբայրն զԱնդոգոտ, ատիպել Թաւանձել զնա

յօգնութիւն քաղաքին. զի ոչ ոք էր՝ որ զդէմ ունէր Թըշնամեաց, զի ինքն կարելիբ լեալ էր, և քաղաքն գրեթէ ի սպառ աւերեալ և յաձիւն դարձեալ։

Մինչ դեռ Վիմն հեռի էր ի քաղաքէն վաթսուն ասպարիզաւ, հասին առ նա հրեշտակքն. և անտի զօրքն՝ շտապ տագնապաւ մնոգիւրութիւն՝ հասին վաղվաղակի առ դրունս քաղաքին։ Այլ եմուտ Վիմն ընդ կողմն քաղաքին՝ որ Հարթիւրոտնեանն կոչէր. և զթեթևացեալն զօրն հասոյց ընդդէմ Թշնամեաց, զի տեսեալ զնա սիրակուսացիք քաջալերեցան։ Այլ զհետևականն սպառաւ զէնս խառն ընդ քաղաքացիս, որք յամ կողմանց գային յարձկին՝ ի զօրս նորա, կարգեաց ի ռազմ։ Այլ ի գունդս անձուկս և ի խորս կարգեաց զնոսա, և գնդապետս կաց ցոյց, զի ընդ բազում առաջս ի դիմի հարցին Թշնամեաց, և զի հզօր և ահեղ այնու երևեսցին։

Ցայժմ ինչ կազմեալ, և պատատանս դիցն մատուցեալ, խաղացին ընդ քաղաքն ի վերայ Թշնամեաց, Հնչեին փողոցք՝ ընդ որ անցանէին՝ ի գոչիւն և յաղաղակ ցնծութեբ սիրակուսացւոց, ի ձայն մաղթանաց, ի խրախոյս և յերկս յաղթութեբ. զի կարգային զՎիմն փրկիչ և ստուած, և զզօրս նորա՝ քաղաքակիցս և եղբարս իւրեանց։ Ընդ այմ որ զկեանս իւր ի վերայ Վիմնի փոխանակէր. և քան զայմ զօրացն զկենաց նորա աւանել խիթային, զի նախայարձակ ի վտանգն մեծ խիզախեր ընդ արիւն և ընդ հուր և ընդ դիակոյտ՝ որովք ծածկեին փողոցք և հրապարակք։

Լայց և Թշնամեացն էր տեսիլ ահաւոր. լի ցասմամբ և յուսահատք ձակատեալ առ պարսպաւն՝ որք աւերաց կօք գժուարամատոյց էր տեղին և բազմամարտ, միջնաբերդին միայն պահ ունէին՝ որ աւուր ապաւինին էր նոցա, և ոչ իշխէին մեկնել անտի՝ թէ գուցէ Թշնամին ընդ մէջ անկանիցի։ Այլ առաւել տագնապէին զօրք Վիմնի ի վտանգէ հրոյն, որ ի գնացն տաժանեցուցաք ներ զնոսա. զի ընդ որ կոյս դառնային, ընդ առաջ լիներ բոցն ի տունսն ձարակեալ. և հարկ էր ընդ աւերակս և ընդ հուր, և ընդ վտանգս հոսելոց պատարայն և յատակաց և յարկաց՝ որ կիսակէզ փլանէին, և ընդ ծուխն Թանձր և ընդ փոշին՝ պնդակազմ կարգաւ գնալ։

Հասին ապա առ Թշնամիս, և սակաւք ոմանք աստի և անտի ի կռիւ մատեան վասն անձկութեբ տեղւոյն և անհարթութեբ։ Լայց ապա դիմեաներցն խրախուսեալ

և արիացեալ ի գոչիւն և յեռանդն սիրակուսացւոց, և ձիգն մեծ գործեալ խուճապեցուցին զջօրս Ալիպեայ։ Զորոց բազումք ի միջնաբերդն անկան՝ որ մերձ էր անդր. և որք արտաքոյ այսր անդր ինացին, հալածեալք յայլ ազգի զօրացն՝ կոտորեցան։ Իսկ սիրակուսացիք ի թիւրաւուրեէ ժամանակին՝ չկարէին յարգասիս և ի խրնդութիէ յաղթութենէն վայելել և տօնել զմեծ քաջութիէն. քանզի ցրուեցան իւրաքանչիւր իւրում տանն խնամ ունել, և զնամ գիշերին աշխատեալ՝ հազիւ զհուրն շիջուցանել կարացին։

Իսրև առաւօտ եղև, ոչ որ յատենաբանիցն խռովեայ իշխեալ կալ ի քաղաքին, փախեան ինքնահալածք զերծանել ի պատժոյ՝ որ ի վերայ նոցա կային։ Իսայց Հերակղիդէս և Ալեդոտ խնարհեցան ընդ ձեռամբ Ալխոնի, խոստովան եղեն զյաբիս իւրեանց, և աղաչեցին մի զխոխարէնն առնել. և ասէն, զի որում ամիս ի վերոյ ես քան զայլ մարդիկ՝ պարտ և պատշաճ է և մեծ անձնութիէ յաւելուլ, և նուաճել զաբարկուէ և ներել ապաշորհայ՝ որ ոչ ներելոյ արժանի համարին զանձինս։ Իսրև նոքա զայս ազերս մատուցանէին, բարեկամք Ալխոնի գերգահէին զնա՝ մի խնայել յարս չարս և ի մախասերս, տալ զՀերակղիդէս ի սրտմտուն զօրականին, զի բարձցի ի միջոյ ոգին խռովութիէ և դաւանաց, ախտն մոլեգին՝ զարհուրելի և աղետաւոր քան զառնաւորութիէն։ Իայց Ալխոն համնդէր զնոսա և ասէր։ Իյլք ի զօրաւարաց ի ում ինչ պարապեն՝ ի վարժս յաղթութիէ թշնամեացն. այլ ես յերկար ի հեմարանին ուսայ նուաճել զրտմտութիէ և զնախանձ և զնամ հակառակութիէն։ Իայն որ յաղթող է կարեացն՝ որ քաղցրանայն և մարդասիրէ առ բարեկամն և առ լաւս, այլ որ անիրաւացն անյիշաչար է և ներող։ Իյ իշխանութիէ և հանճարով կամիմ յաղթել Հերակղիդէս, այլ բարութիէ և ուղղութիէ, որ ստոյգ և անկասկած յաղթութիէն է։ Օ ի չար և մախասցող է Հերակղիդէս և գրուժան, չիցէ պարտ այնու Ալխոնի կոխել և աղարտել զառաքինութիէն վատ սխութիէ։ Իհեպետ և ըստ հասարակաց մտաց՝ ոչ իբրև զանիրաւելն անօրէն գտանի վրէժխնդրութիէ, այլ ի միոյէ վատութիէ երկոքեան ծնանին. և չիբ խեռ վաբերութիւն՝ անողոքելի ի բարերարութիէ։ Ի ման այսր ամի ներեաց Ալխոն Հերակղիդէս։

Խորհեցաւ ապա շուրջ պատնէշ գնել զմիջնաբերդսն, և պատուէր ետ սիրակուսացւոց ամենեցուն՝ երբ

Թալ Համանել իւրաքանչիւր ոից մի և բերել։ Յե՛ի գիշերին յայնմիկ, մինչ Հանդչէին սիրակուսացիքն՝ աշխատեցոյց զղօրս իւր, և առ գաղտ շուրջանակի ձորոյն։ Որ երբև տեսին՝ ի վաղիւ Թշնամիքն և քաղաքացիքն զգօրձանն մեծ, զարմացան ընդ երագ կատարելն։

Յոր ապա Գիմն յետ կատարելոյ զցոյսապատնէշն, ետ Թաղել զդիակունս, և զգերեալսն ազատեցոյց, և ապա ժողով գումարեաց։ Ընդ Հերակղիդէս յառաջ մատուցեալ, խրատ ետ գՊիմն սպարապետ ՚ամ զօրաց կայցուցանել ՚ամ իշխանութե՛ ընդ ծով և ընդ ցամաք։ Մինեւգոն, որ լաւքն էին և պատուականագոյնք ի քաղաքին, Հանձոյ Թուեցաւ. և միաբանութե՛ ՚ամ ժողովրդեանն կամեցան Հաստատել զայն. այլ նաւաստիք և ազգն կրպակաւորք զարհեալ ընդ լուծանել Հերակղիդեայ յիշխանութե՛ն, զի համարէին զնա՝ Թէպէտ և այլ լոյս ՚ամէ ստորև քան զՊիմն՝ այլ ժողովրդասէր քան զնա, Հակառակ կացին ՚ամ զօրութե՛։ Յե՛ Պիմն առ ի չգրդռելոյ ընդ նոսա՝ զիջաւ, և եթող ի Հերակղիդէս գծովապետութե՛։ Յոյ բաշխից կալուածոց և տանց Հակառակ եկաց. և եղծեալ և մերժեալ ՚ամ վշտաց նայա, առելի եղև նոցա ի սպառ։

Որայն ժամ պատեհ կալեալ Հերակղիդէս, վերստին զարթնեցոյց նենգն սկսաւ ընդդէմ նորա կազմել և համարձակեաց զմեքենայսն ի Հնարս տիրելոյ Սիրակուսայ և Հալածելոյ անտի զՊիմն, այլ ոչ յաջողեաց նմա։ Յե՛ Հաշտեցոյց զնա դարձեալ ընդ Պիմնի սպարապետի ամն առաքեալ յօգնութե՛ ի Սիրակուսա. և ուխտս անելոյ և Հաստատ Հաստատուն եղ ի մէջ նոցա, զի Հերակղիդէս Հպատակ կացցէ Պիմնի. այլ այն ՚ամ դիւրախզելի կապանք էին առն անիրաւի և դժողի։

Սիրակուսացիք արձակեալ զնաւամարտիկ զօրս, որ ոչ էս ի պէտս էին, զայլ ՚ամ զօրութե՛ն ածին զմիջնաբերդատն, և կանգնեցին անդրէն զպարիսպն կործանեալս։ Յե՛ երբև ոչ ոք գայր յօգնութե՛ պաշարելոցն, և Հաց էս պակասէր նոցա, և զօրքն ստահակեին և ոչ Հպատակէին կարգաց, Յպղծակրատ անյոյս լեալ և անապատան՝ խօսեցաւ ընդ Պիմնի ի Հաշտութե՛, եթող ի նա զվիշապերդն Հանդերձ ՚ամ գինուք և պատրաստութե՛ք մարտի. և առեալ զնայն և զբորս իւր, և վինս և զարս բարձեալ ի նաւս Հինգ պատերազմիկս, երթայր խնդրել զՀայր իւր, զի եթող գնա Պիմն ապատ անվտանգ։ Յայրդ ցնծութե՛ եղև քաղաքին չուել երթալ նորա՝

մարթի գուշակել. զի և կանայք և ծերք և տղայք խուռն ի նաւահանգիստն դիմէին՝ տեսանել զՀաճդ տեսիլն, և հռչակել զօրն բարենշան՝ յորում զՀետ բազմացուալ ամաց ծառայութենէն՝ ծագէր վերստին արեգական յաղաւտութենէ Հիրակուսայ։

Իբրև Լոզոկրատ մեկնեցաւ, և գայր մնաներ Վիհն ի միջնաբերդն, տիկնայք՝ որ էին անդ՝ կանխեցին ընդառաջ նորա առ դրունն, Քրիստոսաբեաց ածեալ ընդ իւր զորդեակն Վիհնի, և զՀետ նորա գայր Լբեռէ կին Վիհնի՝ զաչս ի վայր արկեալ արտասուօք։ Լյ զիրկս էարկ Վիհն քեռ իւրում և որդւոյ, և Լբրիստոմաքէ յառաջ մատոյց զԼբեռէ զկին նորա, և ասէ. Լքոյս սուքզ որ յաչաց դորա իջանէն, մինչ ցնծուէքն և կեանս ածես մեզ, և ամենեքեան նկարեալ ի դէմն դորա, և լուռ թէ և տագնապ յայտնէն զցաւս սրտին ի տեսիլ առն իւրոյ՝ ընդ որում զայլ ոք բնկի փոխանակեաց, անբաւ ժան ոչուռնի յիւրմէն. իսկ զի ողջունեսցէ նա զքեռէ իւր, իսկ զի գիրկս արկցէ առն իւրում։ Լյ գումէ անկաւ ի բանիցն ի սիրտ Վիհնի, և փարեալ արտասուօք զկնաւն, ետ ի գիրկս նորա զորդեակն, և հրամայն ետ նմա գալ ի տուն իւր, քանզի խորհէր ենողուլ ի սիրա կուսացիս զմիջնաբերդն՝ յառաւել ինն հաւատիս ազատութենէ նոցա։ Լյ պարգևս արքայազարդ առատաձեռնեալ նեաց աւետեցուն, որ յայնոցիկ ենեցն օգնական եղեն, ըստ իւրաքանչիւր պատուոյ և քաջութենէ։ Լյ լի փառօք և պատուով, և անուանի եղեալ ոչ միայն ընդ Հիկիլիա՝ այլ և ընդ Կարքեդոն և ընդ ամ Լլլադա, և խնամուն և բարեբաղդ համարեալ քան զամ զօրավարս՝ որ նախ քան զնա կացեալ էին, անպատմայ որպէս ի սկզբան նէն կենցաղավարեր, հաւատ ի զգեստս և ի սպասաւորս և ի ձաշ, որպէս ընդ Պղատոնի յԱկադեմիայն կեցեալ՝ քան ընդ արս պատերազմողս ընդ սպայս և ընդ զօրս, որք հեշտութենց և սելրձանաց յաձախ ցանկացողք էն։ Լյ ի գրել առ նա Պղատոնի՝ Թէ ի քեզ միայն հայի աշխարհ, նա արհամարհեալ զզարմացումն հասարակաց՝ դառնայր հայէր ի ձեմարանն ի վարժոց խնամուտութենէ և ուղղութենէ, ուր ոչ ըստ երևելի փառացն՝ որ մեծամեծ գործոց և յաղթութենց կոչդ էն՝ դատաստանք լինէին, այլ ըստ չափոյ և խնամուտութենէ որոյք ոք վարէր նոքիմք։

Լայց Վիհն խորհէր հաստատել ի Հիրակուսա զկարգ իշխանութենէ սպաթոցւոյն խառն ընդ կրետականին,

զանուսապետութիւն՝ յորում գտատատանք ճանուանք ի ծերակոյտ ատենի գատեցեալն։ Ի յմ և այսմ ըստ ընդհանրական բարուցն հակառակ եկաց Ներակղիէս՝ խոտովանեցաւ և աղաչեալ, որ ողբով և մարդահաճութեամբ յինքն ջանայր արկանել զամբոխն։ Ի միում աւուրց կոչեցեալ ի Վիտակ ի ժողով, հրաժարեաց և ասէ. Պարտ է ինձ սոսկալեաւի առն ընդ այլ քաղաքացիս միայն ի ժողով ժողովրդեան գնալ։ Որով ոսկիին պաշտօն արարեալ, ջանայր յաչաց հանել զԼիտն։ Իսկ Վիտակ տաղտկացեալ յերկայնամտելոյ ընդ բազում նախատինսն, ոչ եւս արգել զձեռս դարտնակալաց նորա, և չքան ապանին գնա ի տան։ Տեսեալ տեղւոյն որ ինչ լինքն Վիտն զայտանել դատաստան առնէ։

Իսկ կոծեցան գնա սիրակուսայիք կոծ մեծ. այլ Վիտ նի շքով մեծաւ յուզարկաւորեալ գնա, և ամբոխիւ ամ զօրացն զՀետ երթեալ, և խօսեցեալ ընդ ժողովրդեանն, ողբեաց գնասա, և ներեցին նմա. զի անմարթ եր խաղաղութիւն առնուլ քաղաքին՝ յերկոցունցն միանգամայն առաջնորդեալ։

Ո՛Հետ Ներակղիէսեայ սպանութեանն՝ ոչ եւս դիւր և ինդութիւն եղև Վիտին։ Խուճապք ահաւորք գիշերի և ցերեկ՝ լցին գնա արհաւրօք և դառն տխրութիւն։ Կին մի Հայ Հանգոյն ընդդայից ժանտից դժոխոց՝ կազմիւքն և կերպիւ և զարհուրական տեսլեամբն՝ աւել ուժգին ածէր տան նորա. և զՀետ այնորիկ օրգւոյն մահ, որ առ վշտին արկ զանձն ի բարձուէ տանեաց, համարեցաւ տեսլեանն լուծին. և այն սկիզբն եղև չարեացն Վիտին, զոր ասա Կալիպպոս կատարեաց։

Իսկ եր Կալիպպոս աթենայի. և ընդելացաւ նմա Վիտն՝ հիւր լեալ առ նմա յԱթենս, և յայնմ հետէ բնաւ անկասկած եղեալ ի նա՝ ոչ ինչ թագուցանէր ի նմանէ։ Այլ Կալիպպոս ի խորհուրդս փառասիրութեանն իւրում սիրակուսացւոց՝ արհամարհեաց զօրենս սուրբս բարեկամութեանն և ասպնջականութեանն, և դարանակալ եղև Վիտին՝ որ միայն կարող եր ընկիճել նմա։ Իսկ հնար եր Քանայր ծածկել զխորհուրդս իւր, այլ չշուկ գաւոյն ազգեցաւ յունկն կնոջն և քեռ Վիտին. որք փութիով մեծաւ խոյզ և խնդիր արարեալ՝ ստուգեցին զՀաւատս տխուր։ Այլ Կալիպպոս կամեցաւ ենկն առ նոսա պատասուսուբք ի տրամութեանն՝ որպէս ընդ տարապարտ կասկածանս եղեռանն զիւրմէ, և զի սոսկալի չարեացն գործոցն նեայ գնա համարեին։ Այրա ստիպեցին տալ ձերդուհին

Պլուտ. 581։
Դիոդ. 452։

ԱՄԱՀԱՐ զմեծ. զօր սովորութիւն էր առնել ի մեհենի՝ զպեղել զպերսեփոնեայ ծիրանին, և ջահ ի ձեռին լուցեալ, նզովելով զանձն ահագինս՝ որպես մարթ էր։

Եւ ոչ հրաժարեաց նա յերդմանէն, այլ և ոչ այնու հաւատարիմ եղև. զի համապատ հաւատովքը գաւսպն ի վէր երևեալ յաւելուն կասկածանս տիւհացն և Վիտենի, և ամ բարեկամք նորա յորդորէին զնա՝ կանխել խափանել զոճիրն արդար և երագ պատուհասիս։ Եւ նա ոչ իշխեր. զի Հերակղեդեայն սպառնացն՝ զօր խնամ և գառն նախատինս վարկանէր համբաւոյ իւրում և առաքինութեանն՝ ոչ մեկներ ի մտաց նորա, և էր նմա անդադար արհաւրքն ի գեղջ և յասպարէս. գայգ և գցերեկ խղճ չարեացն գահիճ էր նմա, և ընտրեր մեռանել մահուընս բազումս, և տալ զպարանոց իւր ի սուր սպառողաց, քան հանապազ պահ ունել անձին, ոչ ի թշնամեաց միայն՝ այլ և ի մտերիմ բարեկամացն։

3646. 358 Ասայ Կալիպպոս չէր իսկ արժանի բարեկամ կոչելոյ. և վաղվաղեաց յեղեռնին, և ետ սպանանել զՎիտոն ի տան՝ ի ձեռն զօրականաց զակնածացուց, որ հաւատարիմք էին իւր։ Եւ զքոյր և զկին նորա արկ ի բանտ. ուր ինքն յերկունս լեալ՝ ծնաւ արու. և Հարկեցաւ մնուցանել զնա անդ։ Եւ յետ սպանութեանն Կալիպպոս եկեաց ի բարութեան առ ժամանակ մի, տիրեալ Սիրա կուսայ զօրքին՝ զօրս կաշառեաց յինքն էարկ, և ինաւ զանդիման նմա։ Եւ զհեթանոսք յաստիս ինդգրկին զեղած և զպայտնի պատուհաս եղեռնաւորաց. նմին իրի ասել Պլուտարքոս՝ բողոք մեծ լեալ առ դիս զաւրեբաղդութեան Կալիպպեայ, զի չարագործն քան զնամ մարդիկ՝ երկայնամտեալ նոցա՝ խաղաղութեան և անպատուհաս ամբարձաւ ի բարձր աւազութեանն սոսկալի անկարշտութեանն։ Եւ ածահինամ տեսութեան վաղ արդարացաւ, ածեալ ի վերայ Կալիպպեայ զդատաստան անօրէնութեանն։ Օ՛ի յերեքամեայ զօրօք ի նուաճել զկատանա, ապստամբեցին սիրակուսայիք, և ընկեցին զլուծ ամբռնապատ ծառայութեանն։ Եւ զայս գիտեալ ի Հռոմէ, զորոյս զօրս բազումս և զզակինեացի զօրսն՝ որ սպանին զՎիտոն։ Եւ յամ քաղաքաց Սիկիլիոյ առեալ մերժեալ վասն անպարտութեանն, մեկնեցաւ ի Հռոմէ. և անդ առ ժամանակ մի ի թշնաւութեանն կեցեալ, ապա սպանաւ ի Լեպտինեայ և ի Պոպիպերքոնէ նովին սուսերաւ՝ որով Վիտոն սպանաւ, որպես պատմին։

Խնամակալութեանն այսքան հոգ ի պատուհասել զո-

Ձիրս մեծամեծս, զսպանուլեի, զգրժանս և զմատնուլեի, սակաւ ուրեք երևի ի վէպս. և պատուհասեալ ոչ յաւրինորդս եւեթ չարեացս և ի պաշտօնեայս, այլ և ի գործակիցս՝ օրըզ հաղորդք իւիք եղեն չարեացն։ Ի յաւուրս օրինակաւ այ արդարուլեին ընդ ժամանակս ժամանակս յայտնի ի խրատել՝ զի ոչ անտես առնիւ զանիրաւուլեիս, և ի խափանել զՀեղեղս չարեաց՝ որ անպատիժն յորդեն. այլ ոչ միշտ յաւուրս յայտ զպատուհասն ածեալ, զի գիտացեն անօրէնքք՝ թէ սաստկագոյնք յանտիս ինան նոցա։

Օ Աբիստոմաքէ և զԻ֯ռեաէ, երբըև արձակեցան ի բանդէն, Ի֯կետաս սիրակուսացի բարեկամ Վ֯իմնի ընկալաւ առ իւր, և հաւատարմուլեաբ և բազում առաքուլեբ յանձանձեր զնոսա, նախանձելի՝ եթէ նոքունպիսի կայր ցերուն։ Ի֯յԼ հրապուրեալ ի Թէնամեաց Վ֯իմնի, և պատրաստեալ նաւ, եմոյծ զնոսա անդր՝ իբր թէ ի պէտ դոպոնես յուղարկիցէ. և պատուէր ետ որոց ընդ նոսա էին՝ սպանանել զնոսա զՀանապարհայն և ընկենուլ ի ծով։ Ա֯չ ոչ յամեաց պատուհաս սոսկալի դաւոյն. և ինքն մնանեալ ի ձեռս Տիմոթեայ, սպանաւ. և ոչ այս միայն, այլ և ի վրէժ սպանուլեհանն Վ֯իմնի՝ զերկոսին դաւեբս դաւաճանին սպանին սիրակուսացիք։

Ի֯նդ մեռանել Վ֯իմնի՝ ազգականք և բարեկամք նո- Պղտ.-ի վ. 8։
րա գրեցին առ Պղատոն վասն աղվիի խռովուլեին Ա֯լեքսակուսայ, թէ գոր կարգ իշխանուլեի կալցին։ Ա֯չ Պղատոն քանզի գիտէր՝ զի սիրակուսացիք ոչ ազատք ամենևին լինել և ոչ տարկաբար ծառայել կարէին, խրատ ետ և յորդորեաց առնել խաղաղուլեիւն ամ՝ մարթանօք, և ընդ բռնաւորուլեի՝ որ լսկալ անուամբն ատելին էր՝ փախանակել զօրինաւոր թագաւորուլեի, որում քաղցր և հաճոյ է հնազանդել։ Խրատեր զարձեալ որպէս ի Վ֯իմնի՝ կացուցանել երիս թագաւորս, զԱպպարիհանան երկուս՝ զորդի Վ֯իմնի և զեղբայր կրսերոյն Վ֯իմնեսեայ զկուսակից ռամկին, և զինքն զՎ֯իմնեսիոս՝ եթէ առցէ յանձն հնազանդել օրինաց, զոր սահմանեացեն նմա. և տալ երեցունցն իշխանուլեի՝ որպէս գրեեի զթագաւորացն սպարտացւոց. և կացուցանել դատաւորս երեսուն և հինգ, զի զգուշացեին օրինաց և կալցին ի խաղաղուլեի և ի պատերազմի իշխանուլեի Հզօր՝ ի կշիռ իշխանուլեի արքայիցն և աւագանեացն և ժողովրդեան։ Ի֯յԼ որպէս կարծեմ, ոչ լուան նմա սիրակուսացիք. զի և անպատեհը լսկ մեծամեծք էին ի խորհուրդն։

Դիոդ. ԺԶ. 456։ Կայր գնապարինեայ զերջօրէ Վիմնեսեայ պատմին՝ բազմութեաբ նաւաց և զօրաց եկեալ՝ ի Սիրակուսա, և հալածեալ զԱլխիպպոս, և զերկեամ կալեալ անդ իշխանութիւն։

Եւ ոչնին իբքս այս, զոր ցայս վայր պատմագրեցի, միջոց ժամանակի ասն իբրև յիսուն՝ ի գահակալութեաբ երիցոյն Վիմնեսեայ՝ որ Թագաւորեաց զամն երեսուն և ուձ՝ մինչև ի մահ Վիմնի։ Յառաջիկայս գարձեալ զիբս Սիկիլեայ պատմեմ, զվախձան կրտսերոյն Վիմնեսեայ, և թէ որպես Տիմոլեոն գարձոյց զԱիբակուսա յազատութեաբ։

ՅՕԳՈՒՆԴ Դ.

Ներբողեբ Վիմնի։

Ժողովուրդք ի միում ուխտ ժողովին առաքինութեաբ՝ որ եղեն ի Վիմն։ Ամողեալ զզարմանալի ախորժակս գիտութեաբն՝ զոր ընդ կարևոր իբս աշխարհին կցորդեբ ի պատերազմի և ի խաղաղութեաբ, և որովք օրէնս ուղղութեաբ կենաց և առաքինութեաբ ձարտարամտեբ, և զբաղեբ նոքօք ի պիտանի և ի պատշաճ զբօսանս, ըստ առաքինոցդականին ևեթ նկատեսցուբ զնա՝ յոր յայժ զարմանալի է։ Ա եհանձնութեաբն, ազնուական խնամոք, առատաձեռնութիւն, դիւցազն արուեստք ի մարտի անխուձապելի և խոհեմ ի վեր քան զհասարակաց մտաց խոհականութեաբ, միաբ ընդարձակ և վսեմամոհ, հաստատուեալ անսասան ի մեծամեծ վտանգս և յամառիկեալ յեղմունս բազդին, և սէր հայրենեաց և հասարակաց բարւոյն ծայրագոյն, այս ամ՛ ըստմամանեալ ասացեալ առաքինութեաբք Վիմնի, և խորհուրդն ազատութեաբ աշխարհին ի լծոյ բռնաւորութեաբն, և արիութեաբ և խիզախութեաբ՝ որովք ազատեացն, ցուցանեն բաւականութեաբ մեծ։

Այլ որ ինչ կարի չքնաղ և սիրալի թուի ինձ, և թէ պարտ է ասել՝ գեր քան զմարդոյ առաքինութեաբ, էր մեծախոհութիւն նորա և երկայնմտութեաբ յոյժ՝ որով ապերախտութեաբ քաղաքացւոցն համբեր։ Յամենայնի հրաժարեալ, զամ ինչ ընդ սիրոյ հայրենեաց փոխանակեալ յօգնութեաբ նոցա, և զբռնաւորութեաբ յաչին կորստեան առեալ, մինչ գեռ աշա գարձուցաներ զԱիբակուսա յինքնիշխան ազատութեաբ, ընդ այնքան բարութեաբն հա-

լածի նախատանաւոք ՚ի քաղաքէն Ջակատիւ փոքու այլազգի զօրացն՝ որք անկաշառելի կացին հաւատարիմք ընդ նմա, և Թէնատանի և կրէ գառն անարգանս ՚ի վերայ դրժմանաց ։ Ա՛ւ ձեռն պատրաստ էր նմա խնդրել վրէժ յատկերահարին և յասպատմբաց՝ նեբրեալ և եթէ սըրտմտութիւ զօրականին. այլ նա և զիւրն և զնոցայն սիրտ նուաձեալ, զյախուռն նոցա բերումն կասեցոյց. և առանց մերկանալոյ ՚ի նոցանէ զդէնս՝ արդել զարդաւ ըզցասումն նոցա, ահացուցանել միայն հրամայեալ զթշնամիս և ՚ի սաստկացեալ պատերազմի, և մի սպանանել զոք. զի եղբարս և քաղաքակիցս իւր հաստատուն Թեամբ համարէր զնոսա ։

Ա՛ռնէր սոգտանելի ինձ Թուի Պռնոս. զի խիստ ինն և դաժան բարուքն դժուարամատոյցն էր և դժուարընդունելի, որով և լաւքն և սիրելի բարեկամք նորա հեռի կային ՚ի նմանէ ։ Օ որ և ստէպ ազդ առնէին նմա Պղատոն և այլք՝ որք ձշմարտիւն կամէին զիւառս նորա, մի՛ կարի լուրջ և խոժոռ և խիստ և անողոքելի լինել ընդ ժողովրդեան. այլ նա և յայմ ազդեցութեցն ոչ ամենևին կամէր զանհրաժոյշ և անմեղելի ունէր միտս ՚ի բնէ, և կամ զի յուղղութեի և ՚ի զգաստութեի խորհէր ածել զսիրակուսացիս՝ որք զեղծեալ և զառածեալ էին փաղաքշանօք և մարդահաճութեք ճարտարախօսացն, և նմին իրի պարտ համարէր խիստ և անյողդողդ կալ ընդ նոսա ։ Ա՛յլ խաբեցաւ ՚ի կարևոր պարտս առաջնորդականին. զի ՚ի Թագաւորէ ցյետին պաշտօնեացն, ամենեցունն՝ որոց հոգը տեսչութեի և ուղղութեի մարդկան յանձն էն՝ նախկին արուեստ է վարել զսիրտս ՝ և յանկուցանել և փոփոխել և ՚ի կամս ածել. Ա՛րդ այս չյաջողէ սաստիւ և գոռալով և անմեղելի խոստիւ յօրէնս և ՚ի պարտս բռնադատօսելով. զի և ՚ի բարւոջ և յառաքինութեի և ՚ի լուսոյն ամ պարտաւ է ձչգուռն ՚ի ինն և խոտութեի, մանաւանդ Թէ և կարծրութեի, որ ըստ չափ ելեալ՝ փոխի յաձախ ՚ի մոլորութեի ։ Ա՛պաքէն չէ պարտ Թիւրել զօրէնս. այլ գովելի է և հարկ իսկ բազում անգամ, մեղմել զախտսսիկ և գիւբրնտելս առնել՝ որ առաւել ողղոված և քաղցրութեք գործի, զպարտս ոչ միշտ խոստիւ պահանջել՝ այլ զփոքունսն և զորուսս բազում ուրեք անտես առնել, և քաղցրութեք զձանուհսն խրատել. և

1 Ա՛ՓՆ ԽՐ Ի ՆԱԽՆԻ ԽԷՐՈՎԱՅՆ ՈՒՆ ՀՅԱՐԹՈՒՐԱՆՈՒՔ ՅՈՒՔԸ ։ ԿԻԿ. ՀԱՂ. ԻՀԱՆՑՈՂ ՍՐԹ ԵՒ ԱՄԵՆԱՅՆՑ ԳՀԱՆՑ ԸՂԹ. ԵՒ. Յ։

ԱՄԱՀԱՆՔ Համառօտ ասացեալ, ամենևին սէբեւէլ լինել և առնել զառաքինութիւն և զպարտս։ Ի՞ողացումն սպանութիւն Հերակղիդեայ, զոր դժամակեալ՝ մանաւանդ թէ և բռնի եւթող հակառակ բնաւորականին և մտացն խմաս տից, եղև նմա ծանր. և տարտնապ և դառնութիւնք ոչ պակասեցին ի նմանէ յայնմ հետէ մինչև ցմահ, և մահ առիւք իսկ եղեն նմա։

ԳՕԴՈՒԱԾ Ե.

Արտաքոյ Պետեհէսեայ վերաբէր փախչելոյ. և սէրակառացոյց օփնահառուն ընդրել ի կրնիացոյց, և առնուլ զՏիմանն. Տեմալեայ փալ մահել ի Սերակուսա յաղել Լիկեայ, և Պետեհեսեայ դնոան լինել և վերնել ի Լորնոս։

361. 357 Պետ. ԺԴ. 43ա. 436։

Ալիպպոս սպանմամբ Պետեհի լինէն նուաձեալ զաթոռն, ոչ լերկարեաց ի նմա. զի իբրև եղեն ամիսք երկքսասան, Լպպարինոս եղբայրը Պետեհեսեայ հասեալ ամբոխիս նաւաց ի Սիրակուսա՝ հալածեաց զնա անտի, և զՀայրենի աթոռն զերկեամ կալաւ։

363. 350 Նա ապա մինչ դեռ սերակուսացիք և բնաւ ամ Սիկիլիա վէր ի վայր հարեալ ի հերձուածոց և յընտանի պատերազմաց՝ էին ի թշնաւութեն, պարապ առեալ Պետեհեսեայ, և զոր յայլազգեաց ժողովեալ, հալածեաց զՆիպսեոս ի Սիրակուսա՝ ուր բռնակալէրն, և յինքն անդրէն կալաւ գիշխանութենն՝ յետ տասն ամաց կորուսանելոյ։ Նա նմին իբրև թերևս ի գոհութեն դիցն վասն անդրէն գահակալութեն առաքեր յայնժամ Ակղիմպիա և ի Պեղիա զդրօշեալսն ծանրագինս ոսկի և փղոսկրեայ։ Ակղ զնաւս՝ որ զնուէրսն ածէին՝ գերեաց Ոփիւկրատ առ Կարիւբրա, և եհարց Ակղենոս վասն սրբոց աւարացն։ Նա նոքա եռուն պատասխանի՝ մի կարի երկիւղածութիւք քննել ուժ նուիրելոցն, այլ ի պետս զօրացն արկանել։ Օրմէ Պետեհոս ի միւմ ուրեք ի Հելենս գառն բաղդք ունի զաթենացոց, և արգասիք Թէ Հզօր բանիւք կշտամբել զաղահութեն և զամպարիշտ սեղանակատութեն նոցա։

Տիո. Լխ. Ը. 5։ Պետ. ԺԴ. 307։

Երկիւղած և մարդասիրագոյն գտաւ քան զնոսա իշխան Հելենյն Հոռոմոց առ Հռոմն յառաջ քան զամն իբր չիսուն։ Օր իբրև կալան Հռոմը զՀէյս՝ տասն ամ պաշարեալ զքաղաքն, յղեցին ասպ ի Պեղ-

փիս բաժակ ոսկի։ Հրեշտակք որ ածէին զնուէրն՝ գե-
րեցան ընդ ծով ի հինից լսպարացւոց, և վարեցան ի
Լսպարա կղզի։ Այն օրինք բնակչացն բաժանել զամ-
աւաք յիւրեանս՝ որպէս ինչս հասարակաց։ Այլ եր յայնմ
ժամ իշխան ի կղզւոջն Տիմասիթէոս, անունն կղզւոյ-
նոցն՝ Հանգոյն Հռովմայեցւոց. Նա արժանի անուանին
ցուցեալ, և ակն առեալ հրեշտակացն, և սուրբ սպա-
սուն՝ զոր ածէինն և յոր սակս ածէին, և առաւել եւս՝
փառաց դիցն, ի նոյն երկիւղածութէն և ի մեծարանս
զամբոխն եած՝ որ իշխանին ցանկայ նմանել. և ընկա-
լեալ փառաւք զհրեշտական, որպէս մարթէր, ի գանձուց
Հասարակաց ելից զամ պէտս նոցա. և ինքնին հզօր օգ-
նականութէ առաքնորդեալ նոցա ի Վէոլիս, անտի ած
զնոսա ի Հռովմ։ Ընդ այնչափ ազնուականութէն առնն
յոյժ զարմացեալ Հռովմայեցիք, որպէս ոչ հարկ է ա-
սել, մեծապարգև մեծարեցին զնա պատուիրանաւ ծե-
րակուտին, և հիւր զնա ընկալան [2]։ Յորմէ անցին ամք
աւելի քան զհարիւր և լիսուն և կալան Հռովմայեցիք
զի իպարա ի կարքեդոնացւոց, երախտագէտ մտաք՝ իբր
դէռ ևս ընկալեալ զարբերարուածին, մեծարեցին զնա-
ւակ բարերարին, և ազգատոհմիւ զնա ապահարկ արա-
րին մինչև ի սպառ յամ հարկաց՝ զոր տային կղզայինքն։
Ցրիտուր չքնաղ և վսեմ. իսկ աճենացւոցն յոյժ ամե-
ծատպարտ։

Վիսենեսիոս զդիս մեծարեալ առ ժողովուրդն քնաւ
անողոքմ ցուցաւ։ Ոչ միայն չիրատեալ չարեօքն և չա-
մբեալ ի խաւարչենէ, այլ առաւել ևս վայրենացաւ։
Այ և հզօր քաղաքացիք չհանգուրժեալ խիստ ծա-
ռայութէն, ապատեցան յԱկեսաս արքայ լբունատաց-
ւոց. և զնա զօրաւոր ընտրեալ, յանձն առին հնազան-
դել նմա. իբր ոչ եղեալ լաւ ոք եր Ակեսաս քան զբռնա-
ւորս, այլ զի ոչ գոյր այլ ապաւէն։

Դիոդ. ԺԿ. 459։
Պլուտարք. ի Տիմոլ. 256։

1 Տիմասիթէոս ի յոյն բարբառոյ բառիցն ի հայ ետծապաստա։

2 Օրէնք էին քաղաքին որպէս զդիցն հասարակաց բաժանել զաւարս։ Դէպ եղև Տիմասիթէոյ ուսմանն կալ անդ ի տաքուցն յոյն միկ աւագ իշխան, այլ Հանգոյն Հռովմայեցւոյ քան իւրայոցն. որ ի հրեշտականն անն ածեալ և ի սուրբ սպասուէն, և ի գիշն ում նուիրեցն և վանս որոյ նուիրեր, ի նոյն օրինաւոր երկիւղածութէն յորդորեաց և զամբոխն որ առաջ նորդին ցանկ նմանել, և ի հասարա. կաց վանս ընկալաւ զհրեշտական. և ուղեկցեալ նոցա նաւօք ի Դէլ փիս, անտի ած գարձոյց զնոսա անվտանգ մինչև ի Հռովմ։ Ընդ ասսիջականութէն պատուիրանաւ ծերակուտին և պարգևք մեծ մեծք հրապարակաւ տուան նմա։

ԱՄ ԱՀՆՈՒ Կարքեդոնացիքը անդադար պատերազմէին ընդ սիրա-
կուսացիս, և ի ժամանակին յայնմիկ ամբոխիւ նաւաց
եկեալ ի Սիկիլիա և հզօրացեալ էին յոյժ։ Յերեք
հարցմանէն նոցա՝ յիերաւի զարհուրելով սիկիլացիքն
և սիրակուսացիք, խորհեցան հրեշտակութիւն առնել
Ադլագա՝ ինդրել օգնութիւն ի կորնթացւոց. զի ի նո-
յանէ հատուած բնակեր Սիրակուսա, և միշտ և ցանկ
ասէին նոքա բռնաւորաց համարձակ, և ախոյեանք
ազատել։ Ակեսաս զօրավար կացեալ, խորհէր նուա-
ձել զՍիրակուսա քան ազատել. և վէր ի վերոյ հաւա-
նեալ ընդ խորհուրդս նոցա՝ որպէս թէ հանդարաքար
խորհիցին, հրեշտակս ընդ նոցայն արար ի Կորնթոս,
այլ գաղտ համախոհ էր ընդ կարքեդոնացիս։

3655. 349 Խարուեր զհրեշտակն ընկալան կորնթացիքը, և յանձն
առին տալ օգնութիւն սիրակուսացւոց, և վաղվաղակի
կացուցին զօրավար զՏիմոլէոն՝ որ ի քսան ամաց հրա-
ժարեալ էր յամէ գործոց աշխարհին, և ոչ յայմմ հետէ
և յայմմ հասանին խորհէր զօրավար կալ։ Ապա աղ-
նուազգի ի Կորնթոսէ, այլ հայրենասէր լեալ և հեղ
առ ամենեսեան, բռնաւորաց և անզգամաց մարդոց թշ-
նամի էր. զօրավար քաջ ի մանկութեան զվիտս զգօնա
ծերունւոյ բերեալ, և ի ծերութիւն զեռանդն և զարու-
թիւն աժխոյժս մանկաւոյ։ Իբր նորա եղբայրն անդրանիկ
Տիմոփանէս՝ ջերմն սիրելին, զոր ի ձակատս ուրեք պա-
տերազմի անձամբ իւրով պատապարեալ՝ ապրեցոյց, վիր
զմեծ սերն յայսմանէալ զանձն ընդ նմա փոխանակելոյն.
այլ առաւել ևս քան զնա զՀայրենիսն սիրէր։ Օ՛ի իբ-
րև ամբարձ զձեռն իւր Տիմոփանէս բռնակալել տիրել
Հայրենեացն, ընդ դառն դարանակալութիւն ի խոր խո-
ցեցաւ Տիմոլէոն. և ամ մարթանօք յուղղութիւն ջանա-
ցեալ ածել զնա, ողբով, բարեկամութիւն, գթով և ա-
ղերսիւ և սպառնալեօք, իբրև ամ ձիկն ընդունայն և-
ղև, և նա ի խստասիրտ փառամոլութենէն չվերջանէր,
յանդիման աչաց իւրոց եհ սպանանել զնա արանց եր-
կուց՝ որ բարեկամք իւր էին և ազգականք, լաւագոյն
համարեալ զիրաւունս Հայրենեաց քան զընտանեն։

Ընդ որ արք մեծամեծք բաղումք և իմաստասէրք զար-
մացան, և գովեցին զայն, և բարձրագոյն ձիկն առաքի-
նութեանն մարդոյ զայն վարկան. որոց և Պլուտարքոս հա-
մախոհ Թուի. այլ ոչ ամենեքին զայն այնպէս գտանեցան.
զի և այլոց եղեռն եղբայրասպանութիւն այն Թուեցաւ,
վերիժապատ ցասման դիպն։ Դաւաել ևս քան զամենե-

սին սրտառուչ ցաւովք մայր նորա անէծ զնա նղովիւք աշխատութեամբ։ և իբրև եկին Տիմոթէոն միւթաբել զնա, չհանդուրժեալ մերն Հայել՝ի սպանող որդւոյն, մերժեաց զնա ցասմամբ՝ զգուշն ընդդէմ ձգեալ։

Ոմանեաւ Տիմոթէոն զմեզն և սոսկացաւ։ և՝ի խղճէ չարեացն, զի ոչ ևս իբրև՝ի բռնաւոր Հայէր՝ի Տիմոթէոն՝ այլ որպէս յեղբայր, եդ՝ի մտի սովամահ լինել։ Այլ աշխատ եղեն բարեկամք նորա՝ի դարձուցանել զնա՝ի ձախողակ խորհրդոյն։ և՝ի ստէպ թախանձանացն հաւանեցաւ առնուլ կերակուր, այլ օխտ եղ յայնմ հետէ յամայութեն կեալ մինչև՝ի մահ, և հրաժարեաց յիւր իշխանութենէ, և քնաւ ոչ եմուտ՝ի քաղաքն յամեն յառաջինս, այլ ընդ անմարդի անապատս թափառեր տիւր և թախիծ հիւծեալ՝ի վիշտս։ Օ՛ի ոչ փաղաքշաց գովեստք, և ոչ ձարտարմտութեն քաղաքավարաց լռեցուցանէն զբողբջ խղճի, որ վկայ և դատաւոր նոյն ինքն և դահիճ է այնոցիկ՝ որ կոխեն զօրինս սուրբս կարգաց բնութեն։ Այսպէս զքսան ամ եկաց, այլ՝ի վերջին ամն եկեալ՝ի Կորնթոս՝ իբրև զի ոք յամբոխին կեայր առանձինն, և անմերձ յիրս աշխարհին։ Եվ՝ի իւր խորշեր և յայնժամ՝ի զօրաւարութենէ, այլ անդրադիժշտ պարտս վարկաւ օգնել Հայրենեացն, և զնոսա իւր ընդ պարտուցն փոխանակեաց։

Այնչ դեռ Տիմոթէոն համախմբեր զզօրն և պատրաստեր նաւարկել, եհաս Թուղթ Յակեայ՝ի Կորնթոս, և էր գրեալ այպէս. Այ՛ի ընդունայն զօր ժողովիք, զգանձս վատնէք, գալ՝ի Սիկիլիա յանչուշտն վտանգ։ զի կաբեդոնացիք իրագէկ լեալ՝ ստուար նաւատարմաւ մնան ձերումդ յուզումդ։ յերկար սպասեալ օգնական նուէիդ՝ի ձէնջ, Հալի հղև զնոսին կաբեդոնացիս կարգալ յօգնութեի ընդդէմ բռնաւորին։ Այանգի ոխիտ եդեալ էր ընդ նոսա գաղտ՝ Հալածել զՎիմոթեոս՝ի Ասիա բակուսայ և յինքն ունել զաթոռն։

Օ՛այն Թուղթ իբրև ընթերցան կորնթացիք, առաւել՝ի նախանձ գրգռեալ՝ ձեռկին՝ի չու զՏիմոթէոն։ Ոը տասամբք պատերազմիկ նաւագ յաջող նաւարկեալ եհաս Յոտալիա։ այլ անդ գայժ առեալ՝ի Սիկիլիոյ՝ վաթանեցաւ, և լքան զօրք նորա։ Օ՛ի Յակեայ Հարեալ զՎիմոթեոս, և մեծի մասն Սիրակուսայ տիրեալ էր, և արգելեալ պաշարեալ զբաւաւորն՝ի Կղզեայն՝ի միջնաբերդին, և պատուէր տուեալ կաբեդոնացւոց՝ մի Թողուլ Տիմոթէոյ մտել և իջանել յերկիր, զի իբրև

նա ընկերկեսցի՝ խաղաղութիւ բաժանեսցեն յԱբեանս զԱիկիլիա։ Եւ յղեալ եւս էր կարքեդոնացւոց ի Հռեգիոն նաւս քսան պատերազմիկս։ Ընդ հասեալ Կորբուլեացիք, պատահեցեալն պատգամաւորացն՝ որ գային յԱ-կեայ հրաւիրել զՏիմոկէս ի Միրակուսա, գալ նմա առանց զօրաց։ Եւ նա՝ զի ոչ էր Թշնամանք եկին և առաւել վարանեցուցիչք Տիմոկեայ. զի պատերազմէ՛ի ծով ընդ կարքեդոնացիս, որ զանցս ունէին, անմարթ համարէր, զի և՛ ի կէս չէր նոցա զօրութիւն. և՛ ի յետս դառնալ՝՛ի չարիս մահսերս զԱիկիլիա՝ որ ահա պատրաստէին լինել վարձ նենգութեան Կեմայ, և՛ ի հատուցումն կարքեդոնացւոց՝ զի ձեռն էտուն նենգաւորին ի բռնա կալել։

Ի բազմամանգ ժամանակին խորհեցաւ Տիմոկեան խօսել ընդ հրեշտակն և ընդ գլխաւորս՝ի սպայից նաւ-ապետին կարքեդոնացւոց և ընդ հռեգիոնացիս, և առ պարտ լինել և անկասկած, զի մի ապա դատեսցի անլսող և մատնիչ հայրենեաց։ Եւ ագահն և դատաւորք հռեգիոնացւոց էին ընդ խորհուրդս Տիմոկեայ, և ըղձիւք ցանկալին ունէր կորնթացւոց զԱիկիլիա, զի յայժ կաս-կածէին՝ի խժիւն դրացեաց։ Ժողով կոչեցին, և փակե-ցին զդրունս քաղաքին՝ իբր զի մի ոք՝ի քաղաքացոցն ելցէ արտաքս, և անդբօս խորհեսցին։ Եւ՝ի ժողովել ժողովրդեանն՝ յերկաբեալ ընդունայնախօս լեալ, զմի մեանց բանիւքն ստէպ գային և գնովին պատճառանօք, կամ այլ յօդեալ, վասն յերկարաձգելոյ ժողովոյն և ժամ տալոյ նաւացն կորնթացւոց. զի էին՝ի նոցանէ մեկնեցան յայնժամ՝ անխափան՝ի կարքեդոնացւոց. քանզի հաճարեցան նոքա՝ զի հաւանութիւ տային բռնաւորին, որ՝ի ժողովն անդ էին, դառնան՝ի Կորնթոս. իսկ մեք՝ի նաւաց՝ եկաց անդ, որով Տիմոկէս՝ի Միրա-կուսա առ Կեմայ երթալոց էր։ Ընդ եղև Տիմոկեայ՝ թէ ելցէ նաւքն ընդ ծով, և ինքն լռելեայն սպրդեալ ընդ ամբոխն, որ անդ գնորհրդարանսն խռնէր՝ օգնել փախստեան նոցա, էջ՝ի ծովեզրն. և Ձեպեալ՝ի նաւ, եհաս զՀետ իւրոցն և եմուտ ընդ նոսա՝ի Տաւրոմինիոն քաղաք Սիկիլիոյ։ Միրով գնոսա ընկալաւ Ընդրոմաքոս իշխան քաղաքին. և յաւել զզօրս իւր ընդ նոսա՝ երթալ ազատել զԱիկիլիա։

Եւ այլ զաղջութիւ և զամթն կարքեդոնացւոցն ընդ խաբս իւրեանց՝ ոչ է հարկ ասել. զորոց հնչսկնեկին ոմանք՝ թէ չէ պարտ փիւնիկեացոյ ապշել և զբարել ընդ հնարս

և ընդ խաբէութեի, որք քան զամ սպաս խորամանկք համբաւէին։

Ակեսաս իբրև լուաւ թէ Տիմոթէոն ի Սիկիլիա հասեալ է՝ երկեաւ, և առաքեաց կոչեաց առաւել քան զկին նաւատուին կարքեդոնացւոց. որոց էին հարիւր և յիսուն նաւք երկայն, և հինգ բիւրք հեւակաց, և երեքարիւր գերանդազէն կառք։ Որեւսաւ ամ յոյս փըղկութէ սիրակուացւոց. զի զնաւանդիսն կարքեդոնացիք կալան, և Ակեսաս սիրեալ քաղաքին պատնէշ պաշարմամբ արգել զԴիմոկեսիոս ի միջոցէորդն, և Տիմոթէոն ի խորշ մի Սիկիլեոյ ամբացեալ ի Տաւրոմենիոն քաղաք փոքրիկ, և յոյս սակաւ, և զօրութէ նուազ էր նմա. զի էին ընդ բնաւ՝ հազար զօրականք, և հազիւ կէսքարիւր զնոսա։ Այլ ոչ քաղաքք Սիկիլեոյ վստահ էին ի նա, զի վասն չարեացն՝ զոր այն ինչ կրեալ էին ի ծանունց հարկաց և ի հարստահարէլոյ՝ առեին զամ զօրաւարս. մանաւանդ յետ սոսկալի դաւոյն Կալիպպեայ և Փարաբսայ, զի մին յԱթենայ և միւսն ի Սպարտայ է, կեալ ազատել զՍիկիլիա և հալածել զբռնաւորս, խիստ տուայտանօքն զոր ածին զնովաւ՝ քաղցր և ցանկալի ազբարին նմա զլուծ բռնաւորի. և կասկածէին սիկիլիացիք զնոյն չարիս և ի Տիմոլէայ։

ՅԱգրանոն քաղաք փոքրիկ ի Սիկիլիա առ ստորոտով Ետնայ լերին՝ երկպառակեալ բնակիչքն, կէսք զԱկեսաս և զկարքեդոնացիս, այլք զՏիմոլէոն հրաւիրեին. և երկաքանչիւր գրեթէ ի միասին հասեալ կացին առ քաղաքաւն։ Ակեսաս էին աբբ իբրև հինգ հազար, Տիմոլեայ հազար երկերիւր։ Ասայ Տիմոլէոն թէպէտ և սակաւաձեռն էր, խորհեցաւ՝ զի կարքեդոնացիք պատռղէին ի բանակ հարկանել ի խորանս կանգնել, և խաղացոյց զզօրս իւր և ոչ հոգաս հանգիստ՝ որպէս սպաչքն խրատէին, և եհաս ի վերայ Թէնաւեաց։ Նոքա աճապարեցին ի փախուստ, և սակաւք ի նոցանէ սպանան՝ ոչիք իբրև երեքարիւր, և եղեն գերեալք վեց հարիւր։ այլ բանակն ամ աղեխուն եղև յաւար։ Ոչ բացեալ զդրունս՝ ընկալան ագրանացիք զՏիմոլէոն, և յայլոց քաղաքաց հրեշտակք ստիպաւ հասին՝ հնազանդութէի մատուցանել։

Յաքն իսկ բռնաւորն վհատեալ ի մտոտի յուսոյն, և գրեթէ յանհնարս լեալ, արհամարհեաց զԱկեսաս՝ զի պարտեցաւ վատութէ. և լի զարմացմամբ մեծարեալ զքաջութէն Տիմոլեայ, հրեշտակս արար հնազանդել

ԱՄԱՀՆԵՐ կորնթացւոց և տալ ի նոսա զմիջնաբերդն ։ Այլ Ցիմալէեան զայն անառնկալ յաջողութիւն յօգուտ արկեալ, զսպասս երկու կորնթացիսն զԱլկղիդես և զՑելեմաք չնբաբարիւր զօրականօք անցոյց լռելեայն ի գղեակ մնդր, ոչ համախումբ և ի տունջեան, զի չմարթէր վասն կարգաւորացոյն ունելոյ զնաւահանգիստն, այլ ի ջոկս անթեսաբար ։ Որոց ի ներքս ի գղեակին անկեալ յաջողութիւն կալան գայն, և զամ կահ և զպատրաստութիւն բրնաւորին. զի էին նորա երիվարքք բազում, և ամենայնիւ կազմածք մարտի և նետակալք, և սպառազինութիւն մարտից իբրև եօթն բիւրուց էր անդ մթերեալ ի բազում ժամանակաց ։ Այն նմա և երկու հազար ընտիր զօրք, և զնոսա այլովքն հանդերձ ամենաքրմօքք եթող ի Ցիմոլէան. և առեալ ընդ իւր զգանձս և զոմանս ի բազմացն. եկ ի նաւ գաղտ ի զօրացն Ալկեայ, և եկն առ Ցիմոլէան ի բանակն ։ Այլ որ ի բռնաւորութեանն ծնեալ, և ժառանգեալ էր զաչխարհ Տիոր՝ որպիսի ոչ որ ի բռնաւորաց կալաբ, առ ։ նախ յամ կեանն իւրում յանարգ և ի ռամիկ կերպի տեսաբ աղայաւոր ։

Այլ բռնակալեաց նա զամն տասն, մինչ չև Պիռռի դէն առեալ էր ընդդէմ նորա, և յետ այնորիկ զամն քանի մի՝ անդադար ի պատերազմ ։ Այլ նաւաբ միով 3657. 347 մարտկաւ յուզարկեալ ի Կորնթոս, առանց սպասաւորի և զոյգն արծաթով, եղև ի տեսիլ ամենեցուն. զի կէսք առ որսութեբ գնային ոտնհար լինել կարեաց բռնաւորինն՝ որ լռիկ անուանբն ատելի էր նոցա, և կէսք առ կաբեկցութեան՝ թէ յոր խորս չարեաց ուստի էջ ։ Այլ ի Կորնթոս տարագոյ կենացն արհամարհ և գժպհի եղև ամենեցուն. քանզի հանապազ առ իւղերփեաց դեպերեր և ի պանդոկի և առ պոռնիկս և կատակերգուս և գուսանս, և վիճեր ընդ նոսա զարուեստից երաժշտականաց և զյարմարութէ երգոց ։ Որմանց առ քաղաքավարութէ կարծեցաբ այնպէս կենցաղել Պիտնեսեաց, զի մի տացէ կասկած խորհրդոյ կամ ցանկութէ վերստին բռնակալելոյ ։ Այլ այս կարի մեծարանք էն. յոյժ հաւանագոյն էր սովորելումն ի շուայտութէն և ի զեղխութէն յընդհանրական դառնալ, և ի սարկութէն իմն իբրև ի բրնաւորութէն կեալ, զի ոչ գոյր նմա այլ սիփփումն և դիւբ սբտի ։

Կին. գոս. Ապէն գնմանէ, առ յոյժ կարօտութեանն զարոյց քա-
Խոր. Գ. ԽԷ. ղեալ ի Կորնթոս՝ աշակերտել մանկունս յընթերցուսն.
Վազ. Մոսս. զորմէ ընդ ծաղր, ոչսպէս ինձ Թուխ, ասէ Ալկէոսն՝ թէ
Գ. Բ.

վան այն Թեբևս վարժապետէը , զի մի ՚ի սովորակա- ԱՄԱՀՆԵ
նէն ՚ի սպառ հրաժարեացէ , ՚ի հրամայելոյն բերկրա-
նայն ՚։ Այդ Թէպէտ վանն այն , և Թէ վանն այլ իրիք
մանկամարզէը , սակայն Վիրոնեսիոս Սիրակուսայ տէրն
և քնար գրէՒէ Միկիլեզ , որպ գանձուցն ոչ գոյր Թիւ ,
և հրամանաւ նորա խաղային ընդ ծով տօրմիղք բազմա-
հոյլք նաւաց , և ձամբաւք ընդ երիվը մեծամեծք և այլ-
ուձի հզօր , նոյն ինքն ՚ի մէջ գոգոյն անկեալ և Թա-
գաւորն գպրապետ լեալ , ՚ի խրատ մեծ աւագանւոյն և
կաց՝ մի յոտաւ ՚ի մեծուՒէն և մի ՚ի յաջողուած բաղդին
յենուլ [1] ։ Օ որ սպարտացիք յետ ամաց գրեցին Փիլիպ- Դեմեր.ի-ա
պեայ ՚ի խրատ , զայս ինչ սպառնալից Թզեայ նորա պա- յոն. գերձոբ.
տասխանեալ . Վիրոնեսիոս ՚ի ԿորնԹոս ։ Ջ։

ԼՀ այլ ինչ գնմանէ ասեն , որ Թէ արդարև Ձնմարիտ
իցէ՝ մարԹի ասել Թէ և զձախողուԹիւն և զյարիս յօգուտ
էարկ , որ փառք էն նմա , Թէպէտ և Հակառակ Թուի
այս նախապատուիս իմում բանի ։ Օ ՚ի միւզ դէռ ՚ի
ԿորնԹոն էր , մի ոմն յեկեալ՝ այր Թանձրամիս և տխմար՝
անձահս ծաղրելով զնախկին ընտանուԹիւն նորա ընդ ե-
մատաւերս ՚ի պայծառ փառն իւրում , եՀարց կատա-
կելով Թէ զինչ շահ եղև նմա յիմաստուԹիւնէն Պղատո-
նի . և պատասխանի էտ Վիրոնեսիոս ։ ԼՀ-ն իսկ զի չա-
րեացս այսոցիկ ժուժկալուԹիւ Համբերեմ ։

ԳՕՂՈՒԱԾ Զ ։

Տիմոէայ ՚ի ձախսս բազումս յաղՒուՒէն , և պիրաՒոսա ապա-
պեցոցանել , և օրէնս Ենասոանս կարճել ։ և հրաժարել յնշ-
խանասէնէն՝ առանչին կալ և ճեռանել ։ և վասն գառաց չե-
շապկի նորա ։

3658 · 346
Պլուտարէ · ՚ի Տիմոէ · 243 ։ Վիրգ · ժՀ · 465 ։

՚Ի մեկնել գնալ Վիրոնեսեայ՝ Կիւետաս զմիջնաբերդն
Նեղեաց և սաստկացոյց զպաշարուԹիւն , և բազում աշխա-
տուԹիւ Հասանէին առ ԿորնԹացիսն պարկեաք զոր երբեք
երբեք յղեր նոցա Տիմոէեոն ՚ի Կատանայ ։ Կիւետաս և
Ա՝ադոն ՚ի խափանել և զպաՀ չոքան պաշարել և զկա-
տանա ։ ԼՀ երբև նոքա գնացին , Լ Եւոն ԿորնԹացի՝ որ

1 Վիրոնեսիոս ՚ի ԿորնԹոս վար- ժապետէը , չկարացեալ գոգոյնէ՝ ՚ի պետուԹէ հրաժարել ։
լեալ , յեղեմամբ բազդին եղև ՚ի խրատ աւագաց՝ մի յոտաւ ՚ի բաղդն ։
2 ՚Ի բռնաւորուԹէ վարժապետ

ի միջնաբերդին հրամայէր՝ հայեցեալ եւտես ի բարձանց պատնիշացն, զի որ անդ ի պահ զգուշութեանն պաշարմանն կային՝ ոչ բարւոք զգուշանային, և յանկարծ ի վերայ նոցա յախուռն յարձակեալ մինչ այսր և անդր ցրուեալ էին՝ զկէսս սպան, զայլս հալածեաց, և կալաւ զԿրա դէսա զհզօրագոյն կողմն քաղաքին, և որ քան զայլ տեղեան անաւերս ի Թէմնաձաց կայր. և ձեպով ամրացոյց զպատնէշս նորա, և ընդ միջնաբերդն կցորդեաց զայն ի գործածս ամրաձաւուկս։

Օգոյժ առեալ Կռետայ և Աագոնի, ածասպարէզին յԵոս։ Յայնժամ և զօր բաղում ի Կորնթոսէ մնին յաջողութեանն ի Սիկիլիա, անցեալք ընդ պահ զգուշութեանն կաբեդոնացի նաւագնդին։ Օ որս՝ ընդ իջանել նոցա յերկիր՝ ինդութեանն ընկալաւ Տիմոլէոն. և նուաձեալ զԱեսանա, անտի խաղաց ի Սիրակուսա չորեքշաբաթ մատկօք։ Այս իբրև մերձ եղև անդր, առաքեաց փութով առ զօրս Կռետայ ասել, զի նախատինք են Յունաց՝ բազկաւ իւրեանց մատնել զՍիրակուսա և զնմա Սիկիլիա ի ձեռս կարբեդոնացւոց, չարացն և խժիկ քան զնոսա այլազգիս. և թէ միայն միաբանեսցէ Կռետաս ընդ Տիմոլեայ, նուաձեսցի հասարակաց Թշնամին։ Այս վաղվաղակի ընդ ամ՝ բանակն ի Համբաւ ածան բանքս այս, և յանհնարին կասկածանս մատնութեանն եղև Աագոն. և զի յառաջմէն խնդրեր պատճառս հրաժարելոյ, եւ գնաց Ա՝Կիրիկէ, մերժեալ զթախանձ Կռետայ, և ձեռնթափ լեալ ամենայն յաշխարհակալութենէ Սիկիլեայ։

Ի վաղիւ անդր ձակատեցաւ Տիմոլէոն զքաղաքին, և ընդ երիս առաջս ուժգին յարձակմամբ եհար ամ՝ ուրեք զզօրս Կռետայ և հալածեաց։ Այս զժուարագիտ յաջողութենէ ի սուղ ժամանակի նուաձեաց զՍիրակուսա, որ էր ըստ ամ՝ ժամանակի քաղաք հզօր, և ոչ հնապատից իբրև զԱթէն ի հայկազուկ գեղեցիկ շինուածս հասարակաց և յատուկս. այլ զի մի՝ ի նոցն կասկած անկցի, յոր տարապարտուց բամբասեալ այսն մեծ կորեաւ, ի ձայն փողոց հրաւէր կարգացոյց՝ զի այր սիրակուսացի, որ ինդրէ քակել զամուրս բռնաւորաց, առցէ ըզգործի իւր և եկեսցէ։ Յայն ձայն սիրակուսացիք առնեքեան դիմեցին, համարեալ զօրն զայն և զբարբառ փողոյն՝ կարապետ ցանկալի ազատութենն. և ոչ միայն զմիջնաբերդն՝ այլ և զառաբանս բռնաւորաց կործանեցին, և զսակերնոցա բրեցին ի գերեզմանաց՝ աւերեալ

զՀիրիմն նոցա ։ Եւ յաւրջոյն տապալել և ՚ի հաւասարել քաղաքին՝ հրամայն եւս Տիմոկէոն կառուցանել ՚ի նմին տեղւոջ տաճարս դառաստանի ժողովրդեանն, զի ուստի բռնաւորք վհիւս արիւնահեղս տային հանապազ՝ անդ ամուր և ապաւէն լեզի ազատուել և անվնեղուել ։

Օ սիրակուսա կալաւ Տիմոկէոն, բայց ամայացեալ էր ՚ի քնակչաց. զի կէսք ՚ի պատերազմունս կորեան և ՚ի խռովել ապստամբաց, և կէսք ՚ի խիստ լծոյ բռնաւորացն փախեան. և եղև Սիրակուսա անսպատ, և խոտ իբր ՚ի վայրի ՚ի քաղաքամէջս աձեաց յարօտ երիվարաց. հանդգոյն ինն և այլ ամենայն քաղաքք Սիկիլեայ անապատաբնակեցան ։ Յորհեցաւ ապա Տիմոկէոն ընդ սիրակուսացիս՝ գրել ՚ի Կորնէթոս, զի հաստատեսցէ ՚ի Հունաց եկեսցեն բնակել ՚ի Սիրակուսա, քանզի այլազգ անհնար էր շէնել երկիրն, զի և վտանգ պատերազմի դարձեալ ՚ի վերայ կայր ։ Վասնզի համբաւէր Մագոնի անձնասիրն, և կարբեդոնացւոց դալոյ ընդ վաստուել նորա, և ըզդիահինն զիայտել կասել, և մեծաւ ևս պատերազմաւ զօր ժողովել՝ առ ՚ի գալ յարձակել գարնայնոյն ՚ի Սիկիլիա ։

Հրեշտակք ՚ի Սիրակուսայ աճեալ գնամականին, աղաչէին զկորնէթացիս՝ ողորմել ՚ի վերայ քաղաքին, և դարձեալ միւսանգամ հիմնադիր լինել նմա։ Իսկ կորնէթացիք ոչ նուաստախոհ քաղաքավարաբէք զալեաս նոցա պատեհ կալան ՚ի մեծութեն իւրեանց և ՚ի նուաճել գնոսա ընդ իւրեանք. այլ ընդ ամ Ելլադա քարոզս առաքեցին ՚ի տօնս խաղուց և ՚ի ժողովս, հռչակել զի կորնէթացիք բարձեալ զբռնաւորութեն ՚ի Սիրակուսայ, և զբռնաւորն վանեալ, Թողուն ազատս ինքնիշխանս զսիրակուսացիս և զամ քնակիչս Սիկիլեայ, և որ կամին դարձեալ յաշխարհ իւր, և բաժանեացեն իւրեանս ամ արդարութեամբ զերկիրն ։ Լսաքեցին և սուրհանդակս Ասիա և յամ կղզիս՝ յորս բազումք ՚ի փախստեից ամայացեալ էին, հրաւիրել գնոսա՝ գալ փութալով ՚ի կորնէթոս ։ և նաւս և զօր և առաջնորդս տային նոցա՝ ժամանել անվտանգ յաշխարհն իւրեանց ։

Եւ ՚ի հռչակ համբաւոյն գալչին և օրհնէին կորնէթացիք, որպես վայելէր իսկ ։ և ընդ ամ տեղիս պատմիչս բանքս այս գնացանք՝ թէ զՍիրակուսա ազատեալ ՚ի բռնաւորաց, և Թափեալ ՚ի ձեռաց խուժադնոց, գարձուցին ՚ի քնակիչսն ։ Եւ յերկարեմ ՚ի գովեստ մեծի և ազնուական առաքինութեանն կորնէթացւոյն, զի և իբրեւ

լոկ վէպք քարոզին զգեղ և զմեծութիւն նորա . զի առաւել քան զամ աշխարհակալութիւն և գյաղթանակս՝ յաձախեցին փառս նոցա ապախտիք իւրեանցն խնդրել ։

Ազոզվէլքն ի Կորնեթոս քանզի սակաւք եկին, աղաչեցին զնա առ ի Կորնեթոսէ և յամ ազգաց Հելլադայ յաւելցին ի բազմութիւն նորա գաղթականութեան ։ Հաւ ետ որպէս բիւր մի մարդկան , նաւեցին ի Իթակաս սա , և գտին անդ ամբոխս բազում ժողովեալ առ Տիմէոն յամ Խոտլոյ և ի Սիկիղեայ , ոգիս առաւել քան զվեց բիւր՝ որպէս պատմեն ։ Որոց Տիմոէոն ձըի բաժանեաց զերկիրն . այլ զտունս վաճառաւել՝ արար կիւռ բազում արծաթոյ , և հրամայեաց ետ նախնի բնակչաց՝ զիւրեանցն իւրաքանչիւր գնոց առնուլ . և մնացեալ գանձս բազումս ի պէտս ժողովրդեանն՝ որ և ի կարիսն չքաւորեր , և չէր բաւական ձեռն նորա ի ծախս պատեր բազմի ։

Ի աձառեցան հրապարակաւ և անդրիք բռնաւորաց և յամ Թագաւորաց՝ որք վարեցին զԱիրակուսա ։ Ի յամ յառաջագոյն եղև գնոցանէ գաւազանն ըստ օրինաց . և ի խիստ ատենէն Կերոնէն միայն զերծաւ վասն մեծի յաղթութեանն՝ որով զկարքեդոնացիսն առ Հիւերաւ պարտեաց , և որ բարութիւք և արդարութիւք ուղղեաց զժողովուրդն , և էր սիրելի և մեծարայ յիշատակ նորա ։ Իսկ զայս քննութիւն լիներք և այժմ զանդրեաց , լինի Թուի՝ սակաւք յայժ մնային կանգուն ։

Ա-ՓԷՈՒ. Ի ԼՒ. ՊԱՏԱՌ. Ջ. 364։

Ի ալլոր գտանեմք՝ ի վէպս զանդրի՝ ի գտատտան ածեալ . և թէպէտ ոչ հանգոյն այսմ , այլ վասն արժանի յիշատակի դիպացն ընդհատումք գկարգ բանիս ։ Ահա զոր ընթերցարիւր [2] կալաւ ի տօնս խաղոյց Հելլադայ . և ոչ պակասեցին նմա յաչադիտոյք ։ Օ նա յետ մահուան մի ոմն յոսեփաց նորա նախատեր , և ի հարկանել ստէպ զանդրի նորա՝ Թերևս ի վրէժ հարուածոյն զոր ի մէյմանան երբեմն ի նմանէն ընկալեալ էր՝ անկաւ ի վէրայ նորա անդրին յաղթանդամ որպէս զդացեալ նա , խոտանացաւ , և սպան զնա ։ Իսկ որդիքն սպանելոյն զատտափետեցին զանդրին մարդասպան , և խնդրելին պատուհասել զնա ըստ Վրաքանի օրէնսդրութեան ։ Վանգի

1 Թաւսոս կղզի է յեգեան ծով։ Տաքնափքր. ի և այնպես ի՛ի հորի
2 Կոլոսէի՛ ընդ Ռի՛ք, ռէ գոր- ին է ։
ջե Վրիզոնս հաղորդ յաւելու է սա

Վրաց, օրէնսդիրն մեծ ազնուացուցն, առ ի զարհուրեցուցանելոյ զնոսա ի մարդասպանութենէ և անընդհատ սահմանեաց պատուհաս, եթէ անկեալ սպանցէն զոք ։ Ասա սմին օրինաց կողոպտիչն գտանել զանդրին, պատուէր եւտուն ծովավէժ առնել զնա ։ Ո՛չ հետ ասաց եղև սոլ սաստիկ, և ել պատգամ ի Վէղիւեայ՝ հաներ զայն ի ծովէ, և յառաջին գանգնել։

Այլ երբ Աիրակուսա ի կործանմանէն կանգնեցաւ, և յիմ կողմնից եկին խոնհեցան ժողովուրդք բնակել անդ, խորհեցաւ Տիմոլէոն ազատեցուցանել և զայլ քաղաքս, և բնաբարձ առնել ի Աիկիլիոյ զբռնաւորս և զբռնաւորութենէ, և չու արար զօրօք, եկն սուիպեաց զի հետաս հրաժարել ի միաբանութենէն ընդ կարթեդոնեայս, և կործանել զամուրս իւր, և առանց խշխանութենէ կեալ ի Լեոնտիոն ։ Լեպտինես, որ բռնակալէր զԱիպոդնիա և զայլ քաղաքս և զերդս, երկուցեալ ի բանի նուաձելոյ՝ կամակար անձնատուր եղև ։ Լուս ապրեցոյց զնա Տիմոլէոն, և յղեաց ի Կորնթոս. զի քան զիմ փառս պանծալի և գեղեցիկ համարեր, ցուցանել Ելլադայ խնարհեալ զբռնաւորս Աիկիլիոյ, և որպէս գրեթէ աքսորեալ։

Ընդ դարձս ի Աիրակուսա՝ ուղղել զկարգս, և օրէնս կարևորս և օգտակարս սահմանել ընդ Կեփաղոյ և ընդ Վխինեսեայ օրէնսգրաց, որք ի Կորնթոսէ գային առ նա. զի ոչ էր ի նմա փոքրագի ցանկութենէ անձամբ գործելոյ զիմ և միաշունչ ունելոյ զիշխանութենէ ։ Այլ մինչ չէ եր մեկնեալ անտի, խորհեցաւ Ճոխացուցանել աւարաւ զվարձկան զօրականն՝ զի ի միտս քաջութեան կացցեն պնդակազմ, և ընդ Վխինաբեայ և Վեմոքատայ զօրավարաց յղեաց զնոսա ասպատակել Յիմ կողմանս՝ որ էին ընդ ձեռամբ կարքեդոնացւոց ։ Լուս նոցա երթեալ՝ զքաղաքս բազումս բարբարոսաց աւերեցին, և յղփացեալ, և կուտեալ աւար բազում, և գանձս յոլովս ածին ի նպաստս մեծ առաջիկայ պատերազմին։

Երբ այս իրք գործէին՝ հասին կարքեդոնացիք ի Լիբեան եօթն բիւրուք, և Այդրուբաղ և Վիլկար զօրավարեալք նոցա, և երկերիւր նաւք մարտիկք, և հազար բեռնրաբեր՝ որ զմէքենայս ածէին և զկառս գերանդաձև զնս և զերվարս, և զիմ առօք մարտի և զպաշար. զի ի մտի եդեալ գային վանել ի Աիկիլիոյ զիմ Հոյնս։ Կանխեաց Տիմոլէոն վեց կամ եօթն հազարաւ արամբ, որպէս ի ձեւս եկին նմա ի մեծի արշաւից ժամանա-

Պլուտարքոս ի Տիմոլ. 248.

կին, և փոքու գնդաւն պատահեաց ահեղ բանակի Թըշ-
նամեաց. և առ գետովն Արիմխեաւ կալաւ յայլմուԹի
մեծ, որ ի վեպս Կարքեդոնի մանրապատում արարեալ
է։ Եւ գարձաւ ի Սիրակաւսա ի բարբառ ցնծութեան
և ի ծափահարս գովաբանել ամ ժողովրդեանն։

Ընկճեաց նկուն արար Տիմղէոն զբռնաւորս Սիկի-
լիոյ, այլ չմարԹէր փոխել գնոսա ի բնութենէն, և ոչ
զգայնակութիւն բռնաւորութեամբ խլել ի նոցանէ։ Եւ միա-
բանեցին նոքա ի հղօր նիզակակցութիւն։ Ընձեռեաց
ընդդէմ նոցա Տիմղէոն, և դիւրայաղթ պատերազմաւ
եղեալ յաւիրեցուն ի նոցանէ զարգար վրէժ ապստամ-
բութեանն։ Նա և Իկետաս հանդերձ որդւովն որպէս
բռնաւոր և զրժող ի մահ վարեցաւ, և կին նորա և
դստերք ածեալ ի Սիրակուսա յատեան ժողովրդեան,
դատեցան և նոքա ի մահ և սպանան։ Որովք, որպէս
հաւաստի կարծեմ, վրէժխնդիր եղեն սիրակուսացիք
մահուն Վիմնի, որ նախկին ազատարար եղեալ նոցա։
Օ ի ինքն Իկետաս ի ծուլ ետ ընկենուլ զԱրեաւ զկին
նորա մանկամէն հանդերձ, և զԱրիստոմաքէ զքոյր
նորա։

Վաժաւրաւ խուսէ ի մահամեաց առաքինութենէ. զՏի-
մղէոն կրկին դատախազք յատեան կոչէին, և օր ե-
դեալ դատաստանին՝ ինդրէին ի նմանէ գրաւ։ Ոմանք
բացասուին եղև ժողովուրդն, և կամեր ազատ առնել
զայրն մեծաւատտակ ի հաստարակաց օրինաց. այլ պնդա-
գոյնս ընդդէմ եկաց Տիմղէոն, զի ի պահպանութիւն
ևԷթ օրինաց զայնպիսի վատասկն յանձն առեալ էր։
Եւ չարախօսէին զնմանէ իբր Թէ զեղծեալ էր իշխա-
նութենէն ի զօրավարէն. իսկ նա ոչ ինչ հոգացեալ հեր-
քել զպրպատութենէն, ասէ. Վահուեմի պիղ զի ոչ ընդ-
ունայն աղօԹեցի առ նոսա. զի ահա սիրակուսացիք ա-
զատ համարձակ խօսին զամ, որ առ բռնաւորօքն չէաք
Թէր. այլ էր պարտ հնարհիւն զեղծանել նոցա։

Ընդ սա այր զարմանալի, որ օրինս իմաստունս եդ
ի Սիրակուսա, և զՍիկիլիա Թափուր արար ի բռնաւ-
օրաց՝ որք ի բազում ժամանակաց հարստահարէին
զնա, և ամ ուրեք արար խաղաղութենէ անդրկեան, և
քաղաքաց կործանելոց ձեռն ետ և կանգնեաց, յետ
պայծառ արուԹեանցն՝ որովք մեծարէին յոյժ հրաժա-
րեալ կամաւ յիշխանութենէ և առանձինն կեայր։ Որում
սիրակուսացիք ընդ մեծաց վաստակոյն երախտագէտ
մնաք եառն քնակարան գեղեցիկ քան զամ ապարանս

քաղաքին, և ամարանոց ամենագեղ և ամենազուարճ, ուր յամախագոյն կեայր կանամբն և որդւովք, զի և գնասա ետ ածել առ իւր ի Կորնթոսէ, և ոչ ևս դարձաւ ի Կորնթոս, զի ի քնիկ գաւառ եղև նմա Միրտալեսս։ Այլ իմաստութիւնէ հրաժարեաց Տիմոկէոն յիշխանութենէ, ի բաց սպացեալ այնու ի մանանայ՝ որ ըզգայսիւք բարձամբք դարանի, և ոչ ի ստոյգ քաջութենէն ածեալ։ Ըն հարաւ նա ընդ ժայռն, յոր ականատուր մարդիկ նաւակոծին՝ անյագ ցանկութիւնէ փառաց և իշխանութենէ, և յաւելոյն իւրեանց մինչև ցվախճան հոգս և վիշտս անքերելի հասակին, և սիրեն ընկճել ընդ բեռամբն և մի ընկենուլ զայն ի բաց։

Իսկ Տիմոկէոն ոչ այսպիսի. այլ գիտեր զի բարի է հանգիստ ապուշականութիւնէ հանդերձ և փառաւոր. և եկեալ առանց իշխանութենէ մինչև ցմահ, բերկրեալ ի քաղաքս և յազգս՝ որք բազում իւրով կենին ի բարութեան և յանդորրոյ։ Այլ ի մեծարանացն ոչ անկաւ, և ի Ալիկիլիա որպէս ի դից խնդրեր ի նմանէ պատգամ. և ոչ դաշն խաղաղութենէ, ոչ օրէնսդրութենէ, ոչ բաժինք կալուածոց, ոչ կենցաղական կարգք յերկրեկին՝ առանց խորհրդոյ և հաստատութենէ նորա։

Ծերութիւն դժուարին եղև նմա կուրութիւնէ աչացն. այլ նա բազում ժուժկալութիւնէ համբեր ծանր վշտին՝ ի զարմացումն ամենեցուն. և ոչ որ այնու անարգեր կամ անմեծարեր զնա, այլ մանաւանդ յաւելուին ի պատիւ նորա. և ոչ ինքեանք միայն սիրակուսացիք առեալ այց առնէին նմա, այլ և զհիւրս անցաւորս ածէին առ նա ի քաղաքն և ի գիւղ՝ տեսանել զբերեալ իւրեանց և զազատեցուիչ։ Ուր ի խորհուրդս կարևորս իրաց աշխարհին կոչէին զնա. և հեծեալ ի կառս զոգձի, և անցեալ ընդ քաղաքամէջս՝ ի տեսարան քաղաքին, ի ձայն ցնծութենէ և ի գոչիւն ժողովրդեանն գայր մնայեր ի ժողովն. և հանգոյ թուեր միշտ ժողովոյն խորհուրդ նորա, և ասա գարձեալ ածեր ի ծառայիցն ընդ տեսարանն, և ամ ժողովուրդն գՀետ ընթանայիւն մինչև ի դուռն յուղարկեալ զնա նովին ձայնիւ ցնծութեան, և ծափս հարկանելով։

Ունաւել ևս յետ մահուն փառաւորեցաւ, և ոչ ինչ ի չուք յուղարկաւորութենէ նորա պակաս եր. այլ պերճ քան զամ զարդս հանդիսին՝ էին արտասուք և օրհնութիւնք ամ ժողովրդեանն. զի այսոքիկ ոչ ի սովորութենէ կամ ի պատշաճութենէ գործէին կամ պատուիրանաւ

իշխանութիւնէ, այլ՝ի մտաց և յանկեղծ սրտէ՝ի ջերմ սէր ըոյ բարեբարին և՝ի դառնականչիծ ցաւոց։ Այլ սահմանեցաւ՝ ամի ամի՝ի նոյն օր մահուան՝ի պատիւ յիշատակի նորա առնել մըցմանեաս երաժշտականաս և ըմբշամարտս և ձիընթացս։ և որ կարի յաձախ նմա փառս, վէմիս եւ տուն սիրակոսացիք՝ յայնմ հետէ յայմ պատերազմանեաս Սիկիլեոյ ընդ պյլազգիս՝ի կռնութացւոց միշտ կացուցաս նել զօրավար։

Այս զի՞նչ քան զսորայս մեծամեծ և անհերեի ուղղութիւնք՝ի վեպս կայցեն։ Լծողեալ անդր զպատերազմական արուեստին և զյաջողութիւն յայմ գործս, զոյր նկարագիր գեղեցիկ ընծայէ Պլուտարքոս, և այնու զնա վիճ քան զայլ ժամանակի ականատոր որեարն համարի, և օրինակ զաձանելի՝ի ներքս ածեալ՝ ասէ. Ո՞ որ օրինակ՝ի նկարս և՝ի քերթուածս են գործածք հրաշագանք՝ որ ընդ տեսին զնարտասն քարոզէն, այլ կէսք քաղցր ձգամիք երևին կերտեալ, իսկ այլք գիւրութեամբն և ինքնագործ գեղով ազնուագոյնք են, որպէս Հոմերոսի քերթածքն, ըստ նմին օրինակի և արուեստի Ապամիանա գայ և Պղեսիլայոսի առ Տիմոլեայ արուեստքն՝ երևին զօրութիք մեծաձ և բիւրազգի գծուարութիք գործեալ, իսկ Տիմոլեայն անձան և գիւրայաղթ. ոչ արգասիք քաղ գի, այլ առաքինութիւն որում քաղցն տարփացեալ յաջողէ։

Այլ զպատերազմական արուեստին Տիմոլեայ թողեալ, որպէս ասացի, կարի՝ի նման զարմանալ ընդ սերտ հայրենասիրութիւն առանց իրիք իւրումն խնամոյ, զի բերկրեր՝ի տեսանել զայլս՝ի բարութիք վաստակոք իւրով վայելեալ, ընդ անսերելութիւն բարձի և իշխանութիք, ընդ ազնուական հրաժեշտ նորա՝ի գիւղ ընդ հանուստութիք և ընդ չափոյն, ընդ ապահասիս փառաց, և ընդ ատելութիք ամ մարդահաձութիք և պատշաձիցն գործութիք, որ յոյժ սակաւուց է։ Օ՞ի՝ի գովել վասն խնամատութեին և արիութիք և փառաց՝ որովք զբռնասուրսն վանեաց՝ գոհանայր ևեթ զդից, որք՝ի տալ խաղաղութիւն և ազատութիք Սիկիլեոյ՝ զնա հաձեցան առնուել պաշտօնակաց մեծի սպասաւորութեանն։ զի զձաձանիսամ տեսչութեին դասաներ ամ պատահարաց ուղղիչ և անօրէն ծածուկ հրամանատն [1]։ Ո՞վ գանձ և բարութիք ժո-

1՝ի լսել զդովութիք իւր, զայս զնս կացուցին զօրավար, և եռասն միայն ասէր. Գոհանամ և շնորհ ունիմ զդից, զի հաձեցեալ կանգնել՝ի կորնթացիսն զՍիրակուսա զօրութիւ։ Օ՞ի առանց դիցն տեսչութիք ոչ ինչ իմիք՝ի մարդկայնոց վարկաներ գործել Կ՝ասէ՝ի Տիւ։

ղովրդոց, որ ընդ այնպիսի իշխանաւն կեան։ Այլ քաջ գայս ՚ի միտ առնուլք աստստին ՚ի Աիրակուսայ. որպէս սի ինչ եր առ Պէհնիսօքն բռնաւորօք, և զինչ առ Տէմոնեաւ։ Վաղաք նոյն, նոքին քնակիչք և ժողովուրդք, այլ ոչ նոյնգունակ ընդ սովաւ և ընդ նոքօք։ Այսբա խորհէին միայն ահ արկանել և նուաճել զժողովուրդն, և եղէն ըստ ցանկութեանց իւրեանց ահարկուք, հանգոյն և առելիք և գաբշելի ամենեցուն. և առաւել երկիւղ եր նոցա ՚ի ժողովրդենէ՝քան ժողովրդեանն ՚ի նոցանէ։ Այսպէս Տիմոլէոն որպէս հայր ժողովրդեան և միայն բարեաց նոա ցա խնամակալ, բերկրեր իբրև յորդիս՝ սիրելի և մեծաւ ոյ լեալ ամենեցուն, և ոչ լռէին նմա օրհնութիւնք. զի և չեր մարթ ՚ի խաղաղութեան և ՚ի ցնծութեան կեալ, և չէր չեղ զհանճարեղ օրէնսդիրն զմեծի պարգևին տուողն։

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ջպատմութիւն երկուց բազմահռչակ զօրավարացն Թեբացւոց, զԵպամինոնդայ և զՊելոպիդայ, ունկնդիր տալ գիրքս այս. և զնոսին Կգեսիլայոսի արքային սպարտացւոց, և զՄիւհեղն Կբրատաչխի արքային Պարսից։

ՑՕԳՈՒԱՆ Ա.

Որ ինչ էրն ՅԱՂԼԱՏԱ զնեա խաղաղութենն՝ զոր արար Կնոյաղիդէս. և վասն սպարտացւոցն նշանակելոյ զնմանէնս մարտն առ ողխինաւքս, և որբել Նեպոտեբ զդնէին Յունէայ, և ողխինացւոցն նուաճեալոն։

ԱՄԻԱՆՈՒՆ 361ՐԴ. ՔՐԻՍ. ԾՆՆԴ. ՀԱՅԿ. Ը. 550։

Կնոյաղիդեայ խաղաղութիւն, որ ասացաւ[1], զրգիռք և հերձուածք մանկան ընդ աղգս Յունադայ. զի ըստ ուխտին հարկ էր Թեբացւոց՝ ազատեցուցանել զքաղաքս Յունաստան, և առնել զնա ազատ ինքնիշխան։ Պարտացւոցն միայն, որ ինքեանք եղեն պատճառք և կռուողք ուխտին, եղև այն չօգուտ. քանզի չաւելան նուաճ՝ի զօրութիւն, և նա չաւելուլ խնդրէին. և ատիպեցին զնահատինէացիս քակել զպարիսպս իւրեանց, և զքաղաքն՝ի չորս բաժանել՝ որպես էրն՝ի քոյ, իբր Թէ անկիրա-

ԴԻՒՐ. ԺԲ. 341։

ւութիւն բազում՝ի նորոգ պատերազմին կրեալ՝ի նոցանէ։ Կգեսիպողիս և Կգեսիլայոս արքայք կրկին Պարսից, առնելին պյաբարդք՝ի միմեանց, պյաղգ և զերք ձակայ իրացն խորհրդին։ Կգեսիպողիս խաղաղասէր և արդարակրօնք՝ խրատ տայր սպարտացւոց ազատեցուցանել զքաղաքս Յունադայ ըստ ուխտին, և մի անկիրաւ տենչալ աշխարհակալութիւն խուովել զխաղաղութիւնն նոցա, և չաւելուլ՝ի չարահամբաւութիւնն՝ որով բամբասէին չորմէ հետէ զխաղաղութիւնն արար Կնոյաղիդէս։ Իսկ Կգեսիլայոս անհնազարտ պատերազմասէր փառասիրէ և տենչող աշխարհակալութեան, միշտ՝ի պատերազմ չանկայր։

1 Ձառագ. Բ. 477։

Ի ժամանակին յայնմիկ հասին ի Պարտաւ հրեշ- ԱՄԱՀՆԻՔ
տակք Ա[illegible]քանթեայ և Ա[illegible]պղոնիոյ, ի հզօր քաղաքաց 362։ 383
Պարսից Ատ. 554։
Ասիոյ, խօսել վասն Ղևոնթեայ քաղաքի՝ որ է ի
Ծրգաիա՝ զոր ունէին Հոյքն բնիկք Ա[illegible]ադկեայ քաղաքի
Ա[illegible]ւբիա ։ Ա[illegible]թենացիք յայնժամ ի Պաղամիա և ի
Պաւլագն՝ ունէին քաղաքս բազում ի Ծրգաիա և
շուրջ զաշխարհսն ։ որք ի պարտել աթենացւոցն ի
սպարտացւոց ի Պղոպոնդեայ մարտին՝ վտարանդեցին,
և էր ընդ քաղաքն և Ղևոնթոս ։ Ոմն որոյ հրեշտակք
ականջայիք, և որք Ա[illegible]պղոնիոյ եկեալ էին, ցուցին
Յաեան ժողովոյ դաշնաւորաց ամենեցուն՝ զի Ղևոնթոս
մերձ ի սահմանս իւրեանց կազդուրէր և զօրանայր օր
ըստ օրէ, և երթայր և տարածանէր զաշխարհակալու[illegible]թիւն
իւր, զքաղաքս շրջակայս նուաճէր և միաբանէր ընդ իւր,
և պատրաստէր կռել դաշն ընդ աթենացիս և ընդ Թե-
բայիս ։ Յորհուրդ ի մէջ առեալ՝ միաբանեցին յառնել
պատերազմաւ ի վերայ ողնեթացւոց, պայմանեալ՝ ազ-
գի դաշնաւորի տալ բիւր մի զօրական ։ և որ կամի ար-
ծաթ ընդ մարդոյ փոխանակել՝ տացէ դանկս երիս Թո-
շակ առաջեայ հետևակաց, և երկուասան դանկ հեծե-
ղոց ։ Եւ փուքիոյ անցապաղ յղեցին սպարտացիք զիւ-
րեանց զօրս ընդ Ա[illegible]դամիդայ զօրավարի, որ ինդրեաց
ի պարետաց՝ զի որ զՀետ գալոց էին զօրքն, և նոցա
փերիգաս եղեալք իւր կացցէ զօրավար ։ Եւ հասեալ
ի Ծրգաիայն Ասկեդոնիոյ, ետասոյց պահակսացանս ի
քաղաքսն՝ որ նուաճեցան ի նա ։ և զՊոտիդէա քաղաք
դաշնաւորք ողնեթացւոց առանց կռուոյ նուաճեաց, և
ընդդէմ ողնեթացւոց մերք մեղմով պատերազմ, զի հա-
մախմբելոյ զօրացն մնայր ։

Հետ ընդ հետ հասեալ և փերիգաս ի Թեբէ, քա- 362։ 382
նահեցաւ Հանդէպ քաղաքին առ Համակրեթարանաւն ։ Պլուտ. յԱե-
Ապրկպառակեր յայնժամ Թեբէ ։ և Ասինեոս և Ե- կես. 608։
ւսոտիդէս մարտպետք և ասպ իշխանք առաջորդք էին ի Պեւտ.
երկպառակութիւն ։ Վասն Ասինեոս, որ և զՊեղոպի- 280։
դաս միաբանեաց ընդ իւր, Հեծամի էր սպարտացւոց և Դիոդ. ԺԵ.
341։
տեղի նոցա, զի համարձակ ախոյեան էր ռամկավարու-
թեան և ազատութեան ։ իսկ Լեւոսոփդէս սակաւապետու-
թեան ։ և սմա սպարտացիք նմ զօրութեամբ օգնեին ։
Ասոր զայսոսիկ դրօշմեմ՝ զի գիտիք որ առաջին կանոն՝
յայնմանէ կալան պատճառս, և զպատերազմին մեծ դրդե-
ցին ընդ սպարտացիս և ընդ Թեբայիս ։

Իբրև այս հերձուածք էին ի Թեբէ Լեւոսոփդէս

ջոքաւ առ Փեբիդաս, և խրատ տայր տիրել Կադմեայ դղեկին, և Հալածեալ անտի զիամենեանս՝ նուաձել զայն ընդ սպարտացւովք, և ասէ. Օ ինչ մեծ քան զայնպիսի փառն կայցէ, մինչ եղեալը քո Ձգնի ի վերայ Կղնեթեայ՝ նուաձել և քեզ գՀաբէկ. և դիւրեացես նմա ի յաղթուելն. զի Թեբացիք, որ արգելին հրովարտակ կամ մի ումեք ընդդէմ ողնեթացւոց գնուաբորել, իբրև տիրեացես դղեկին՝ տացեն Հեծեալը քեզ և հետևակս, որչափ և կամիցիս, յօգնութեն եղբօր քո։

Փեբիդաս, այլ փառասէր և նիզ Հանձարով, որ Հնարս խնդրէը առնել իւր անուն քաջութեան, ոչ ինչ զմտաւ ածեալ՝ որ զՀետ գային յարիքն, դիւրահաւան եղև խրատուն Եւմոլիդեայ։ Եւ մինչ Թեբացիք աներկման ի բաղում ապահովի, յուսացեալ ի դաշինս խաղաղութեն՝ որ նորոգ ընդ ամ ազգս Լակեդայ կուեացան, կատարելին զԱեմոլոբեայ տօնսն՝ քնաւ անկասկածք ի դրժանացն, փեբիդաս առաջնորդեալ ի Եւմոլիդեայ՝ կալաւ զդղեակն։ Իր յայնժամ աւագանեին ժողովեալ. և առ նոսս Հաւաճ Եւմոլիդես, ասէ. Ի երկնչէք ի սպարտացւոցդ՝ որ մինչ ի դղեակդ, զի նոքա խռովարարաց Թշնամիք են։ Իսկ ես զի մարտիչս կացեալ եմ, և ե ինձ իշխանութեն աւնելոյ զդաւոյն Հայրենեաց, ահա գնամ արգելուլ ի դիպահոջ զԼակեդեմոնացի և զանխաղաղասէրսն։ Եւ վաղվաղակի կալեալ եած զԼամենիոս ի դղեակն։ Իսկ խամենեանց, իբրև բարձաւ առաջնորդն նոցա, երկուցեալ ի բռնութեն Թշնամեաց՝ փախեան Ձեպով ի քաղաքէն, և անկան Լ Թենս աքը աւելի քան զչորեքհարիւր. և անտի հրովարտակաւ ամ ժողովրդեանն վաղվաղակի մերժեցան, ընդ նոսա և Պելոպիդաս։ Եպամինոնդաս ի խաղաղութեան կայր ի Լհեբէ, արհամարհեալ յամենեցունց՝ որպէս մնեալ յիմնասասիրութեն և անփոյթ զիրաց աշխարհին. և չքաւորութեն ոչ ումեք կասկածելի էր։ Եւ մարտպետ նոր փոխանակ Լամենեայ կացուցաւ, և ե Եւմոլիդես չոքաւ ի Սպարտա։

Ի Համքաւ գրժանացն Փեբիդեայ, զի ի ժամանակի խաղաղութեն բռնութեն կալաւ զդղեակն՝ որ այն անկ էր նմա, եղև քրթմնջիւն բազում և բողոք մեծ. մանաւանդ ոսոխք Լպեսիղեայոսի կասկածեալ՝ զի ձեռն նորա ընդ նենգաւորին էր, Հարցանէին՝ եթէ ոչ հրամանաւ ժողովրդեան Հեծաւ Փեբիդաս յԵրեռնաւոր գրժանն։ Վասն Լպեսիղեայոս եթէ չո ձգէին չայնի կշտամբանքն, և ոչ

վեհերեաց Յատագով կալ Փեբիդայ, և ասէ համարձակ լու՛ի լու առնեցուն. Պարտ է՝ի գործն հայել թէ ե՞ւ չօգուտ, և որ օգտակարն իցէ Պատրաստ՝ զայն առնոց ուրուք հրամանի առնել յանձն՝ օրէնն է և պարտ իսկ։ Օ՞այս մեզաւ իմաստասիրեաց անդ Ք՝գեսիղայոս, որ այլուր գլուխ ՚ամ առաքինութեանց զարդարութեան վերձեալ ցուցանէր, և առանց այնորիկ զաքօքեն և զնամ մեծամեծ առաքինութեան անպիտան։ Որ երբեմն զՊարսից արքայէն լուեալ՝ զի մեծացուցանէին զնա, ասէր. Օ՛մարդ մարթի լինել մեծ՝ որ փոքրն է քան զնս արդարութեան։ Ք՝զնուական իմաստք և զարմանալի, զի արդարութեան է չափ և կշիռ մեծութեան և գեղց. այլ չըմտիրք միայն յարգեր զայն Ք՝գեսիղայոս, գործոնի ուրացեալ. որպէս և բազմաց՝ի քաղաքավարաց նոցն այնպէս կարծի՝ թէ պարտ է գոլել զարդարութեան, այլ յօգուտ աշխարհին՝ի բաց պարուրել զայն։

Ի ուրիցուք արդ զլիճիս վսեմմիտաւ սպարտական առնին, այն որ իմաստութիւն խորհրդոյն և արդարախոհութեան դատաստանացն հռչակեր։ Երկարեաց խորհուրդն, և պատճառք երկուստեք քննեալ հոլանեցան, և եկաց այս բան խորհրդի. Փեբիդայ անկանել յիշխանութեան, և տուժել տասն բիւր դրամանշիւս. այլ զդեհկն ուղեղել սպարտացւոց, և զուռնդ հզօր պահակապան նոտուցանել անդ։ Ո՛վ դատաստան թիւր, գոչէ Պողիբիոս, ո՛վ տապալումն կարգաց և բանին. պատուհասել զյանցաւորն, և յանցանացն կամակից լինել, և ոչ վայրապար կամակից՝ այլ և տիրացուցանել զայն կնքաւ հաւարակաց իշխանութեան, և՝ի նոյն յանցանս աշխարհաւկաւելոլ վասն չարաշահութեան։ Լ՛ւ ոչ այսչափ միայն, այլ և յաղագս դաշնաւորաց նոցա պատուիրակք՝ի Ֆիւեբէ ժողովեցան՝ի գղեակն՝ դատել զՄանկինոս, և պարտաւորեցին զնա՝ի մահ և սպանաւ։ Ո՛չ դուն ուրեք անիրաւութեան եղեռն ինոյ անպատուհաս. և որ զայն գործէն՝ ոչ հայրենեացն բարւոյ և ոչ անձանց կամեցողք են. զայս մինչև ցայս վայր ասէ Պողիբիոս։

Տելեւտիաս եղբայր Ք՝գեսիղայոսի վաղվաղակի զօրաւար կացուցեալ փոխանակ Փեբիդայ՝ խաղացուցանել Ա՛ղգինեոս զինացորդս զօրաց դաշնաւորաց, աձապաղեաց անդր։ Լ՛ւ էր քաղաքն հզօր, և ՚ամ կարևորքն կազմ՝ի գիմամարտ. և յաձախ յարձակմունք եղեն անտի յաջողութիւք, և ձակատք բազումք, և՝ի միումն անկաւ Տելեւտիաս։ Ո՛ւ միւսում ամի զօրավար եկաց

Բ.ԵՒԽ. Ջ. 556։ Դ.ԽԹ. ԺՀ. 142։

ԱՄԱՀՆՈՒ Ա[գեսիլաոս արքայ, և եղեն պատերազմունք Թէթևաք՝ յերկոցունց կողմանց անպարտելի. և նա ոչ ինչ յերկա-
բակեաց լեալ, մեռաւ ախտիւ հիւանդութեամբ։ Ա[ւ յա-
ջորդեալ զաՒոռն եղբայրն նորա Ա[ղեսիլաոս, Թագաւո-
362ձ. 380 րեաց ամս ինն։ Ա[յն ամ սկիզբն եր Յարիւրորդի ողիմ-
պիադին։ Ա[պա դարձեալ Ձգնեալ սպարտացւոց վճռ-
բել զպատերազմն ընդ ողինթացիս՝ զՊողիբիդաս ար-
ձակեցին զօրօք. որոյ եկեալ սաստկացոյց զպաշարումն
ի վերայ քաղաքին. և առ սովոյն վտանգի անձնատուր
եղեն ողինթացիք, և յաւելան ի դաշնաւորս սպար-
տացւոց։

ԳՕԴՈՒԱԾ Բ.

Ա[ռաջնորդեալ բաղդին յաջողութիւն. և նկարագիր երկոց մե-
ծաց զօրավարացն Ռէբացւոց, Ա[պանիմոնդայ և Պելոպիդայ. և պ
խորհի Պելոպիդաս ապարեգոյանել զնոսա։ և վասն համահա-
հութեանն ընդդէմ բռնաւորացդ իմաստութիւն նկարելոյ և յաջողել. և
դրգիռն Ռաֆոսի։

Պայծառ քան զամ ժամանակս՝ նշոյղեր յայսմ-
բե։ 565։ սպարտացւոց բաղդին, և երբ հաստատիլին իշխանութիւնն
Ա[ռ. 334։ նոցա։ Ա[մենայն Ա[ւլադա հնազանդեր նոցա, և էին կա-
մաւ կամք բռնութեամբ։ Ո թերեւ նուաճեալ՝ քաղաք հզօր,
բոլորուին Ա[ռհասիոյ ամրեին նոսաւ. Ա[ղջոյս խոնար-
հեալ երբ ընդ նոքօք. և ամենևին հզօր եղեալ Ա[ղինթոս՝
ի հրամանս նոցա կայր. և Ա[թենք ամայի անօգնական
ի նիզակակցաց՝ ոչ կարէին կալ առաջի զօրութեանց նոցա։
Ա[ւ ուրուք յազգաց կամ ի քաղաքաց ժպրհեալ ի վտա-
նանել, արագ պատուհասիւ անդրէն նուաճէր՝ չահ և
յերկիւղ այլոցն։ Ա[ւ ընդ ծով և ընդ ցամաք իշխան
եղեալ՝ զղացուցանէին զերկիր. և Թագաւորք հզօրք,
և արքայից արքայն Պարսից, և բռնատէրն Ա[իրակուսայ
ի նախանձ մտեալ՝ զնիզակակցութիւն և զբարեկամու-
թիւն նոցա խնդրէին։ Ա[յլ խարխուլ է բազդ յերեկոյ
յանխրատութեանէ. և ահա ուր առաւելն բռնացան գոր-
ծել զանխրատս, և ուստի ոչն կասկածէին, անտի ի վե-
րայ ելեալ հարուածք՝ ընկճել զիշխանութիւն նոցա. և Պե-
լոպիդաս և Ա[պամինոնդ, փարազունք վերայ, չքեղք
ի տեսիլ գայթէին ի Թատր Ա[լադայ. զորոյ պարտ է
ասասէն տալ ծանօթս։

Ալրկաքանչիւր յաղնւագունից տանց Թեբացւոց էին։ Պլոսարէս։ Ի Պղատպիդաս մնալ՝ ի փարեհամ մեծուքիւնս, և մինչ Պլէտ։ 279։ դեռ տղայն էր՝ միայնակ ժառանգ եղեալ հայրենի հարստւոյ և բարգաւաճ ագգատոհմին, առատաձեռներ կաթոսելոց և որ արժանի ողորմւոյն էին, որպէս տէր ընչից և ոչ ստրուկ։ Ո՛չ որպէս Պլատարքոս յԱլբիստոս տելէ ասէ, ՝ առաւել այնոքիկ էին ՝ի փարեհամոց՝ որ ագահեալ յինչսն չկարելին, կամ շռայլեալ զայս վատնեին։ Ապա Ալտամինոդ յաղքատ կենցաղ ձահաւորեալ՝ համարեր զայն ՝ի փառս, և ուրախ լինէր և բերկրեր նովաւ։ Ընդեալ աղքատ, և յառաջին տիոց ընդելեալ յաղքատութիւն, առաւել և բնտանեցոյց իւր և քաղցբասցոյց զայն իմաստասիրութիւն։ Ալրում Պղատպիդաս, որ բազմաց քաղաքացոյն ձեռնտու լինէր ընչիւք, ոչ կարացեալ ընդունելի առնել զնա զպարգեւսն և մեծութիւնս հաղորդ առնել զնա, ինքն նմանեաց բարեկամին՝ զաղքատութիւն յանձն առեալ. և եղև յօրինակ և ՝ի զարմացումն ամ՝ քաղաքացոյն՝ պարկեշտութեամբն ՝ի զգեստս, և զգաստ սեղանով։

Ալայց Թէպէտ և չքաւոր էր Ալտամինոդ յընչից, այլ Պ։ Նէդ։ 1ն։ ՀՀոխ իմաստութիւնք և արիւնեւեամբ, զգաստ, խոհական, պար։ Ֆ։ լուրջ, Հարտար առ ՝ի յօգուտ արկանել զյաջողութիւն, Հմուտ իրաց պատերազմի տեղեակ, քաջաբազուկ և քաջանձաւթ, դիւբրնտել և Համբուբասէր, և երկայնամիտ անպատմելի ՝ի Համբերել անիրաւութեանց քաղաքացոյն, և և բարեկամաց. ընդ ՀրաՀանգս մարտի և զգխուռւթեց փոյթ զարմանալի լծորդեալ և սիրող ՀՀրամարտութիւն և անկեղծութիւն, որ և ընդ խաղ ՝ի զբօսանս խղճէր ստախօսել։ Հանգոյն նմին երկաքանչիւր Պլոսարէս։ Ի մտք և յօժարք յառաքինութիւն, այլ Պղատպիդաս ա- Պլէտ։ 279։ ռաւել ՝ի մարմնոյ Հրահանգս, Ալտամինոդ ՝ի մտացն առաւել զբօսնոյր. որով մին զպարապոյ ժամանակն յրմբշամարտս և յորս զբաղէր, միւսն ՝ի զրուցատրել և ՝ի փոյթ իմաստասիրութիւն։

Ալլ որ ինչ ՝ի նոսա կարի զարմանալին էր իմաստնոյն և քաջախոհոյց, և դժուարագէպ յայնպիսիսն, զի ըզմիաբանութիւն ընդ միմեանս և զբարեկամութիւն անլոյծ կալան ՝ի սպառ՝ յամ ժամանակս իշխանութենն ՝ի միաբնն ՝ի խաղաղութիւն և ՝ի պատերազմի։ Ո՛չ ահա և յոր-

1 Բազումք այնոքիկ են՝ յորոց հեաք լինչսն չկայելին, այլք շռայլեալ զնդխին։

ԱՄ ԱՇԽԱՐ ժամ Ա՛րիստիդես և Ա՛նտիստոկղ, և յորժամ Պերիկղէս և Ա՛լկիմն, և Ա՛լկիւսա և Ա՛լկիբիադ կային ի վերայ իրաց աշխարհին, եղեն ի նոսա յաձախս գժտութիւնք և հերձուածք և վէճք։ Իսկ Պերզոպիդաս և Ա՛տալէ նոսին, զորոց այժմ մեր բանքս են, էին ասագ իշխանք, և ընդ ձեռն նոցա ամ իրք կարևորք գործէին, և ի նոսա յանձն էր հոգ ամ. այլ և ի գժուարբնաւ յորս ստիպ դէպք և պատահարք լինին զրգռութեանց և նախանձու, չեղեն այլամիտք և այլակամք, և ոչ դոյզն նախանձ ըզսերտ միաբանութեանց նոցա և զմտերմութեանց սասանեցոյց. զի հաստատին էին յառաքինութեան. որով, որպէս Պլուտարքոս ասէ, ոչ պիտառս կամ զվէճութեան խնդրէին ի գործս իւրեանց՝ զնոսղս չարեաց գրգռուէն և հերձուածոց, այլ զհաստարակաց բարիս. և ոչ զազգատհմ իւրեանց յանկային յառաջ մատուցանել և փառաւորել զտուն իւրեանց, այլ զհայրենիսն հզօր և բարգաւաճ գործել. Վաղս երկոքին քաջք ի տեսարան ելանիցեն աստ տալ պատահար մեծամեծ անցից, և կերպարանափոխ առնել զԱ՛թէնացիս։

3626 · 378 Ա՛ւետիդես իբրև կիտաց՝ զի փախստեայքն ի Մանէսիոյ էին Ա՛թենս, և բարւոք հիւրընկալեալ ·Բ·Բ·Ե· Ը· 566· բայ ներեալ էն Ա՛թենս, և բարեսէր հիւրընկալեալ Պերոսոս· Ի ի ժողովրդենէն, և յաշուառականաց քաղաքին պա- Պերզոս· 280· տուեալ, արձակեաց դաւով արս ծպտեալս սպանանել Ե յ·ղ·ԳԲ·ԼՒ զքիւլաւորս ի նոցանէ։ Ա՛յլ Ա՛նդրոկղէս միայն սպա- Մ·Ի· 586· նաւ, իսկ յայլսն ամենեսին ընդունայն եղեն խորհուրդք Տ9Ղ· նոցա։ Ի ժամանակին յայմիկ հրովարտակ արարին Ա·Ի·Ա· ԺԸ· սպարտացիք Ա՛թենս, մի ընդունել զաքորեալսն և մի 344· Կ·Ն&Ղ·Ի ձեռն տալ նոցա, այլ հալածել զնոսա՝ որ առ ամ նէ- Պերզ· զակակից ազգս Թշնամեաք ամ Հնդնաց յայտնեալ էին. Ա՛այց աթենացիք սեփական և բնիկ մարդասիրութիւնն ուրժեցին զանարժան հրամանն, մանաւանդ զի խնդրեին եթէ արդեօք պարտական էրաքսեացն Թեբացւոց դալ ձուաձս արասցեն։ Օ ի ինքեանք Թեբացիք եղեն պատրաս նոցա ի ռամկապետութեանն՝ հրովարտակաւ ընդդէմ խափանածոյ սպարտացւոց։ Վարձեալ զի և Փրաս սիբուղ ի Մեթայ եկեալ՝ ազատեաց զԱ՛թենս յերես նից բռնաւորացն։

Պէղոպիդաս, որ դեռ էս մանուկն էր յայնժամ, չը քաւ առ աքորեալսն՝ յորս էր ընդ գլխաւորս Ա՛ւէրն, և յողովեալ զնոսա ասէ. Ա՛ն ի դէպ և ոչ արժան է զանձինս միայն ապրեցուցանել, և անկարելիր տեսանել զաւերումն հայրենեաց։ Ա՛թենացիք Թելպէտ և

բարեկամք ջերմք խչեն մեզ , այլ ոչ օրէն է ի հրուալը տակս նոցա զբաղդ աշխարհիս յինուլ , զոր հուպ ընդ հուպ փոփոխել մարթեն յողդողդ կամեցն , կամ ձաղ տարաիօսացն չար արուեստիւք , որ զսիրաս նոցա պա րուրեալ ունին : Պարտ է զամ վտանգ ըստ օրինակին ի֊րասիբուղեայ յանձն առնուլ , և նմանել անսասան քաջուձեն և վեհագոյն արուեստ նորա . և որպէս նա ի ի֊ձեայ եկեալ ի֊Թենայ եհաս վանեայ զլուռնաւորս , նոյնպէս ի֊Թենայ երթալ դարձուցանել զի֊ձեբ յա զատուեցին :

Իստ ամ ակնկալուեցե պէղոպիդայ յորդորելոյն աք սորելոյն , և առաքեցին դաղտ ի ի֊ձեբ զեկուցանել բարեկամացն զխորհուրդ իւրեանց , և հաձոյ Թուեցաւ նոցա յոյժ : Իսկ Վարուն ոմն՝ ուեց ի քաղաքին՝ խոստա ցաւ ասսինձնականել առ իւր զհամախոհս : Իսկ փիղիդաս սպրդեալ եմուտ եղև դիւանադպիսը Ի֊ձբեայ և փի֊ լիպպեայ , որ էին յայնժամ մարտպետք՝ աւագ իշխանաք քաղաքին : Իպամինոնդ ի բազում ժամանակաց ջա նացը հնարեբ յորդորել մեղմով զմանկտին ի֊ձեայ ի նախանձ ազատուեցե ի Թոթափել զլուծ սպարտացւոց :

Օ գաց և զխորհուրդ աքսորելոյն , այլ ոչ Էաւ յանձն Պլուտ . յոչ. էե֊էն Ս֊ուբ . 5գն .
Հաղորդել դասուցն , և Թանալ զձեռն յարիւն քաղաքակ ցաց . զի Թէպէտ և գործն օրինաւոր և արդար էր , այլ էկայը ի չափուն , և բռնաւորացն միայն մնհոլամբ չէձա բեր , Վարձեալ զի և ինքն ոչ յոր հակամիտեալ՝ առա ւել հաւատարիմ լիներ առաջի ժողովրդեան :

Ժամադիբ եղեն . և աքսորելոյն բարւոք Թուեցաւ՝ ժողովել փերենիկեայ զգաւակիցս և կալ ի ի֊ռիսախա աւան՝ մերձ ի ի֊ձեբ , և առուգպռնիցն ի նոցանէ սակաւուց դիմագրաւել մնանել ի քաղաքն : Ձարիա կան գործն յառաջամատոյց եղեն պատանիք երկոտա սան յազատագունդ մանկտոյն ի֊ձեայ , սերտ և ան լոյծ սիրով զօգեալք ընդ միմեանս , այլ նախանձիդդ դեմք ի պատիս և ի փառս քաջուԼեբ , յորս էր և Պե զոպիդաս : Վիրկս արկեալ զզինուորագքն , և սուր հանդակ առաջի արձակեալ՝ ազդ առնել Վարուին զլուռ իւրեանց , յուղի անկան անշուք ձևով , և բարակք որ սակաւք ընդ նոսա , և երթագոյցն ցիցք ի ձեռս , զի որք տեսանիցեն զձանապարհսյն՝ մի ինչ կասկածիցին , որ սորգս համարեալ զնոսա՝ Թէ յորս գնայցեն : Իհաս սուբ հանդակն ի ի֊ձեբ , և պատմեաց Վարուին՝ Թէ ահա գան . և ոչ ի մեռալուստ վտանգն երկմտեաց Վարուն ,

զի էր այր քաջասիրտ և փառասէր, և պատրաստեաց նոցա զտուն իւր։

Ա՛ի ոմն ՚ի խորհրդակցացն, այր լաւ և հայրենասէր, բարեկամ և բարերար աքսորելոցն, այլ յոդգոդ և վէ. հերոտ անբաւական ՚ի գործն, ՚ի դժուարինսն ևեթ յա. ռեալ և ՚ի բազմապատիկ արգելս, և ՚ի տեսիլ վտան. գացն վատասրտեալ, մեհենեցաւ գաղտ ՚ի տուն իւր. և առձակեալ զմի ՚ի բարեկամաց իւրոց առ Ա՛ելսն և առ Պէզոպիդաս, աղաչէր զնոսա գառնալ յԱ՛թենս, և ունալ դիպողագոյն ժամու։ Ա՛յլ դէպք ՚ի բարի յաջո. ղեցին, և չգտեալ առնն զսանձս ձիոյն, և դանդաղեալ ՚ի կազել ընդ կնոջն, ոչ ժամանեաց ուղեայ լինել. և Պէզոպիդաս և ընկերք նորա ծպտեալ ՚ի շինականութե կերպարանս, ընդ այլ և այլ ձանապարհ ընդ այլ և այլ գրունս մտին ընդ երեկս ՚ի քաղաքն։ Ա՛յս աւուրք էին սկզբան ձմերայնոյ, և հողմն հիւսիսի և ձիւնաբերք օգ. նեցին դաւոյն ծածկութեան. զի յիւրաքանչիւր տունս քաղաքացիք ՚ի ցրտոյ ամրացեալ էին, և ինքեանք պատ. ձառանօք ցրտոյն զերեսն ծածկէին։ Ա՛յս օրք ՚ի քաղաքի անդ համախոհք աքսորելոցն էին, առեալ ածին գնա սա փութով ՚ի տուն Վ՛արռնի, և գտան անդ ամենեքեան՝ աքսորեալքն և համախոհքն նոքա՝ օրինք քառասուն և ութ։

Փիղիպաս, առաջնադասիք Ա՛ղեքսանդրեցոյ՝ և համա. խոհ ընդ դաւակիցս, հրաւիրեալ էր զՊ՛ղբիաս և զա. մենեսին որ ընդ նմա էին՝ տալ նոցա ընթրիս մեծ գոյն օր, և ածել առ նոսա զտիկնայս քաղաքին գեղեցիկս։ Ա՛ողովեցան կոչնականքն ՚ի ժամանակին և բազմեցան յընթրիս. և իբրև ընդ գինիս մտին, և աքբենային, չգիտեմ արդեօք չշնջիւն իմն եղև ՚ի բազմականն՝ թէ աքսորեալքն մտին ՚ի Ա՛ղեք։ Փիղիպաս ոչ ինչ խոհա. վեալ, հնարեր այլ ինչ բանս ՚ի ներքս արկանել. բայց Պ՛ղբիաս յղեաց զմի ՚ի սպայիցն առ Վ՛արռն, վաղ հա. սանել առ նմանն։ Ո՛րն տարաժամէր, և Պէզոպիդաս և դաւակիցքն պատրաստեին յարձակել զրահաւորք սուր ՚ի ձեռին, և ահա քաղնեցաւ դուռնն։ և մի ոմն ընթացեալ եկն պատմեաց շտապալ զպատուէրն հրամա. նի աւագանւոյն՝ զի կուգին զՎ՛արռն, կարծելոցն ամե. նեքին նշանակեալ զգաւն, և գկորուստ առաջի աչաց տեսանէին՝ մինչ չև զգործ արուեալ գործեալ. այլ լաւ

1 Ի՛նքնա՛ն և գլուխ, որ ՚ի Թուէ ա՛—ընդդէմ ոտնին, ի՛նչին Բէզոպատեաք։

համարեցան չտունդանել հրամանին, և Վարոնի երթալ անվեհեր և համարձակ յանդիման լինել աւազակացն որպէս անպարտ։ Վարոն արի և անսասան էր ի վտանգս իւր. այլ յայնժամ ընդ վտանգս բարեվտանգն զարհուրեալ, և խիթայեալ թէ գուցէ ի կորնչել բազմութեանն քաջաց քաղաքացեացն ի տան նորա՝ կասկած մատնութեան տացէ, դիմեաց ի սենեակ կնոջն, և յաւ փշտակեալ զորդի իւր զմահու, որում չէ էին ամբ աւելի քան զՀնգետասան՝ այլ գերազոյ և զօրութիւն ոչ ոք ի հասակակից մանկացոյն հաւասարեր նմա, ետ զնա ի ձեռս Պեղոպիդայ և ասէ. Երթ ելգ յիս ինաս մատնութեամբ կամ նենգութեամբ, ահա ի ձեռս ձեր է որդեակ իմ միամօր և սիրելի. արարեք ընդ դմա՝ որ ինչ հաճոյ իցէ, և զհաւատադրուժ հօրն վրէժ առանց ողորմութեան խնդրելոյ։ Պատրաստեցան ի բանիցն ի սիրտս նոցա, և մոռմոքէին մանաւանդ՝ զի զայն ապաշնորհ վաստակիւն կասկածէր զնոցանէ։ Եւ աղաչէցին զնա մի՛ թողուլ առ իւրեանս զորդին, այլ դնել զնա յամրի՝ զի կացցէ բարեկամացն և հայրենեաց վրէժխնդիր, եթէ յաջողեսցի ապրել նմա ի ձեռաց քանաւորաց։ Որոց պատասխանի տուեալ հայրն ասէ. Ա՛ի այգպէս, այլ ընդ ձեզ կացցէ ի կեանս և ի մահ. և թէ մեռանել հասանէ նմա, որ մահ գեղեցիկ կայցէ՝ քան ընդ հօր իւրում և ընտրելոց բարեկամաց մահկանից լինել։ Եւ դու, որդեակ, քաջ լեր քան զմիս մանկութեանդ. և թևեցո արուեստի արժանի քեզ և հօր քում. ահա ընտիրք քաղաքացոցդ առաջի քո, կրթեցից զայգպիսի ուսուցչօք ի վեհ հրահանգս փառաց. ուսիր պատերազմել, և թէ հարկ լիցի՝ և մեռանել ընդ նոսա ի վերայ ազատութեան։ Եւ այլ ես յուսացեալ և վստահ եմ՝ զի արգարութեան մերում խնամակալ և օգնական են դիք։ Եւ ապա առ դիմն պաղատեալ, և գիրկս ածեալ ամենեցունն, հրաժարեցաց ի նոցանէ։

Եւ զձանապարհայն հանդարտեր զանձն, և զխռովեցեալ երեսաց և զբարբառոյ ցածուցաներ, զի մի տացէ կասկած։ Եւ իբրև եհաս ի դուրս տանն՝ ուր էին կոչունքն, ընդ առաջ եղէն նմա Եպբիտա և Փիլիդաս, և հարցին զհամբաւոյն՝ եթէ ձմարտիւ գաւաձանաց մեռեալ իցէ ի քաղաքն, և ի տան ուրեք թաքուցեալ։ Եւ Վարոն որպէս զարմացեալ ընդ բանսն, քանզի գուշակեաց ի բանից նոցա՝ զի ստուգիւ ինչ ոչ գիտէին, համարձակ ասէ. Հաւաստի թուի սուտ գոլ համբա-

ւսոյն, մի զինջոյսդ խառվէք. այլ զի մի յանդուգն լըզ-
համբաւն ապահաս առնիցեմք, փութացայց հնարել
ստուգել զիրսն։ Այլ գովեաց վիրդիոս զհնաստութիւն
նորա և զնախանձ, և դարձաւ ընդ Աբքիայ ի սրահն,
և ընկղմեաց զնա ի գինեբուռս, և յերկարեր զինջոյս
ուրախութիւն՝ մինչև կանանին գայլեն։ Իսկ Աբարսի
դարձեալ առ իւրն՝ եգիտ զնոսա կաղմն, ոչ ի յաղ-
թել և ի կեալ՝ այլ ի նախձիրս գործել և մեռանել
փառօք։ Այսց նորա ի զուարթութենէն երեսացն ծա-
նեան վաղվաղակի՝ զի ողջոյն էր. և լուեալ ի նմանէ
զայմ իրսն ստուգութիւք, խորհուրդ կալան փութով կա-
տարել զգործն՝ որում դոյզն յապաղումն մարթէր յա-
ձախել արգելս։ Օխ և յորժամ այս իրք լինէին, և
այլ ահեղ և մեծ ևս վտանգ պատահէաց՝ յանդրիպելի
խափանումն գործոյն։ Վանդի սուրհանդակ Աբքենայ
էին շտապաւ թղթով հանդերձ, յորում ամ իրք դա-
ւոյն, որպես ապա յայտնեցաւ, մի ըստ միոջէ գրեալ
էին. և ածաւ վաղվաղակի առ Աբքիաս, մինչ դեռ ի
գինեղ էր և ընկղմեալ ի խրախուն։ և զպատգամն
տուեալ՝ ասէ. Վաղվաղակի ընթեռնուլ զթուղթդ պա-
տուիրէ՝ որ գրեացն, և մի յապաղել. զի իրք կարևորք
և ծանուցք են ի դմա։ Այլ նորա ծիծաղեալ՝ ասէ.
Ծանուցք առ վաղուն։ Որ ասէի յառակս եղիւ առ
Հելլենս։ Այլ առեալ զթուղթն՝ արկ ընդ բարձիւն[1],
և դարձաւ ի խնջոյս և ի գինեբուռս։

Այլ ելին ի տանէ դաւակիցքն. և կիսոցն առաջնորդ-
դեր Պեզոպիդաս ընդգեմ Եւմոլպեայ, որ ոչ ընդ
կոչնականան էր, և պյեցն Աբարսն ի վերայ Աբքիայ,
որոց զգեաց կանացի ի վերայ զգահիցն արկեալ էր, և
պսակ ի գլուխս ածեալ առձի և կաղամախ առ ի ծածխ
կել զդէմսն։ Այլ իբրև հասին ի դուրս սրահին, եղև
գոչումն և աղաղակ ցնծութենէ կոչնականացն առնելոցն։
Այզդ եղև ի ներքս և ասեն՝ Թէ չմտանեն կանանին ի
ներքս, եթէ ոչ նախ ի բաց արձակեսցին սպասաւորք։
Այլ հրաման եղև նոցա անցանել ի միբձակաց տունս, և
զինի առատ տուաւ նոցա։ Այսոքին մարթամբոք անվրիպել
լի պատրաստեալ գյաղթութենէն, սուր ի ձեռին ի ներքս
յարձակեցան դաւակիցք մերկացեալ զկէզծիս. և սրա-
կոս աւարին զամ կնչնականան, և զաւագանին անաշ-
խատ սպանին, զի թաւալեալ էին ի գինւոյ և անզօրք

[1] Ցոյն ի վերայ բարձի բազկին ի ձախ։

'ի դիմակալել ։ Ասայց Պեղոպիդաս առաւել եղև աշխատ ընդդէմ Եւմոնիդեայ . զի նա 'ի շշուկ աղմկին ընդոստուցեալ 'ի քնոյ՝ վազեաց զպարագին յանկողնոյն, և առեալ սուր՝ էարկ տապատ առ ոտս իւր զոմանս 'ի նորայոյն , մինչև ասպ և ինքն սպանաւ ։

Յաղին յաջողուեալ և փուքիոյ զգործն մեծ վճաբեալ , սուրհանդակս ստիպաւ արձակեցին 'ի Լակեդեմոն առ այլս յաքսորելոցն՝ որ կային անդ . և խորտակեալ ըզդրուսս բանտից՝ լուծին զկապեալս զարս հինգ հարիւր , յաղատուեալ կոչեցին զԵբեացիս , և զամենեսին՝ զորս և գտին՝ զինուորեցին , բարձեալ զկողոպուտս՝ որ 'ի գաւխէն կախեալ կային , և առաջ հարեալ զկրպակս զաշտագործաց և զդաբձնոցս զինուց ։ Եւ Հպատմոնիդ և Պօրգիդաս սպառազինք հասին յօգնութիւն ամբոխիւ մանկտոյ և ծերոյք ոմանօք՝ որչափ 'ի լաւացն 'ի ձեռս եկին ։ Ի եր քաղաքն արհաւրօք և աղմկաւ , և ջահք 'ի տունս բորբոքեալ , և անձկանային պղտոտացք երթևեք կային բազմութիւք . և ամբոխն պակուցեալ , զի չէ ևս բաղդին իւրոյ իրագէտ էր , ինայր ցանկութիւք այգուն լինելոյ ։

Եյս վրիպակ մեծ գործեցին զօրագլուխքն սպարտացւոց , որոց պարտ էր զայնու աղմկաւն հասանել անկանել 'ի վերայ նոցա . զի էին 'ի դժեհին զօրք պահակաց պանք Տաղար և հինգ հարիւր , և 'ի քաղաքացւոց և յէլեաց ամրացեալք անդր՝ ոգիք առաւել քան զերեք հազար ։ Եյլ նոքա զարհուրեալք յայղաղակէն և 'ի ջահ հիցն լուցելոյ 'ի տունս և յաղմկէ ամբոխին այսր անդր ընթանալոյ , կային անշարժ՝ պահ միայն կաւեալ դժեհկին . և առաքեցին սուրհանդակս 'ի Սպարտա պատմել զիրս , և խնդրել տիպաւ զօր 'ի Թիկունս ։ Ի վաղիւ անդր ընդ առաւօտն հասին 'ի Ֆլեբէ աքսորեալքն վառեալք զինուս , և ժողովեցաւ Ժողովուրդն ։ Նդր Հպատմինդ և Պօրգիդ ածին զԱեղոպիդաս և զդունդն նոքա , և զոհարարք ընդ նոսա՝ պարանօքն սրբալք 'ի ձեռին, և խրախուսեին զժողովուրդն՝ պաշտպան կալ դիցն և հայրենեաց ։ Զայն եբարձ 'ի տեսիլն յայն ամբոխն , և ծափս հարին , և ընկալան զդաւակիցս օրպէս բարեբարս և ազատաբարս իւրեանց ։ Հյս առաջին զՊեղոպիդաս և զԱՀելոն և զԵՀարոն կացուցին Հելլեսպոնտոս ։

Օ հետ աքսորելոցն հասին և հինգ հազար հետևակք և հինգ հարիւր հեծեալ , զորս աշխենապիք ընդ Կեմոփոն առ Պեղոպիդաս յղէին ։ Հասին և 'ի քաղաքայ

Ռեովխոյ գունդք զօրաց. և եղեն միահամուռ երկոտասան հազար հետեւակք, և այրուձի հոյակապ. և վաղվաղակի պաշարեցին զդղեակն, նուաճել զայն՝ մինչ չև ի Պարթեւս օգնութիւն հասեալ էր անդր։ Իսկ որ ի նեղեալս էին՝ հզօրապէս զդէմ կային, յուսացեալք յեղբարեաց ի Պարթեւս օգնութենէն, և զմահ յանձն առեալ ի պահ դղեկին, մանաւանդ սպարտացիք. այլ նոքա սակաւք էին քան զիւրս զօրացն. և իբրև համբարձան նուաճեցին, սուին սատկանայր, տիպեալք յայլոցն՝ յանձն առին խօսել ի հաշտութիւն։ Նոյնժամայնմ ապրեալ՝ արձակեցան ազատք, գնալ՝ ուր և կամիցին։ Այլ ընդ միւնետ նոցա՝ օգնականքն հասանէին. զի պատասխեաց նոցա Պղոմբրոտ ի Կեպարա հզօր ամբոխիւ, որ փոքր մի ևս աճապարեալ՝ փրկէր զդղեակն. այլ սպարտացիք յաձախ զկարևորն յայղուութենէ դանդաղանօքն իւրեանց կորուսանէին։ Նրբեքքին կարգապետքն հրամայեաց, որ խօսեցան ի հաշտուէ, ի դատաստան ածեալ՝ երկուք ի մահ պարտաւորեցան, և մին ի տոյժս ծանուսս, զոր ոչ կարացեալ հատուցանել՝ փախեաւ գնաց։

Նոյնժամայնմ եղեն Պեղոպիդաս՝ ամ փառք մեծի հռակաւոր յաղթութենէն, որպէս ոչ լեալ էր երբէք դարւոյ և դարանաւ։ Զիերաւ զայն ընդ Ալրասիբուղեայ քաջութենէն համեմատ, Պլուտարքոս. քանզի երկաքանչիւր հարաձեալ ի հայրենեաց և անօգնական, յօտար ազգաց խըլեն դրեցին օգնութենէ՝ դոյն ինդաս խիզախեալ ընդ անձեղ պատուել ի պատերազմ։ Նոյնպէս արիութեամբն և երկխեալ զնոյ և զխուժ խափանարար խորհրդոցն, յաջողեցան երկաքանչիւր ազատել զչնչին աշխարհն, և կերպարանափոխ առնել։ Ալ ի աթենացիք զերագ և զնաբերքադղ փոփոխումն Ալրասիբուղեաւ կալան, որ դարձոյց զնոսա յազատութենէ՝ ի բռնութենէն՝ ընդ որով հեծեծէին, և յառաջին փառսն նորոգեաց, և զօրացոյց զնա դարձեալ խոնարհել զսպարտացին, և դողացուցանել զչին և զանհաշտ ոսոխն։ Նոյնպէս պատերազմին, որ ընդ Հուպ նիոն արասցէ զիւրոխտացեալն, և կատեսցէ զիշխանութիւն նորա ընդ ծով և ընդ ցամաք, Պեղոպիդաս քաջութեամբն կանգնեալ՝ զոր յայնմ գիշերի գործեաց, առանց քաղաքս և ամբարտուաձելոյ, մեռասան արարիք մտեալ ի տունն, և լուծեալ խորտակեալ զղեկայս՝ որով ի սարկութենէ ուներ Պարտա զաղգս՝ որպէս անլոյծ և անխորտակելի կապանօք[1]։

[1] Եթէ պյաբանել զհամարութիւն պարտ էցէ, եղեալ Պեղոպիդ

ՅՕԹՈՒԱԾ Գ·

Ա ամն Ա֊փոքրէսյ սպարապետ ընդունայն խորհրդոյն ընդդէմ Պէ֊
ղէնի · և աչէնապետ փաբանել ընդ Ռէբայոչ · և վասն որ ընդ
Ռէբայոչին և ընդ սպարապետն Յաչապ֊ փոյռնդ մղեցան ։

Ա֊ պարատացիք , որպէս զանիրաւութիւն կրեալ քաջդա֊ Թեամն Պեղոպիդայ , զյարեալ՝ խորհեին վրէժս լուծա֊ նել։ Իսայ Ի֊գեսղայոս քանզի չհամարէր ի փառս զորո֊ նաւորաց մարտ մղել , պատճառանօք ծերութեան հրա֊ ժարեաց , և եթող զայն ի Կղեմբրոս՝ որ այն ինչ զհետ Ի֊գեսիպղեայ մեռանելոյ Թագաւորեալ էր ։ Իսկ խա֊ ղաց Կղեմբրոս զօրօք ի Լեվտիա , և արուեստի ինչ ոչ գործեալ՝ բայց միայն յանդս ուրեք ասպատակեաց , և կասեցաւ ։ և զկէս ի զօրացն Թողեալ ի Պտղրիաս՝ որ ի Աեսպիէս հրամայէր , դարձաւ ի Պարտս ։ Իսայ աստիճանացիք զի ոչ իշխէին կալ առաջի զօրուն սպար֊ տացւոց , երկուցեալ ի չարեաց հետեւանաց պատերազ֊ մին՝ յոր միաբանեցին ընդ Թեբացիս , զղջացան յետս կացին ։ և որք տակաւին ի նոսա հակամտէին , կալեալ զնոսա՝ զկէս սպանին և զկէս աքսորեցին , և տոյժս ծա֊ նունս մեծատանց արկին ։ Իսկ իբր Թեբացւոց ի սպառ եղծան , և ոչ ոք օգնական էր նոցա ։ բայց Պեղոպիդաս և Վորգիդաս , որ յայնժամ իշխանք էին ի Աթէնք , խոր֊ հեին ընդ միմեանս Թէ արդէս զաթենացիս արկցեն ընդ սպարատացիս ։ և գտին հնարս այսպէս ։

Իսր Աթգրիաս սպարատացի կացեալ ընդ կէսս ի զօ֊ բացն ի Աեսպիէս , լինէր ընդունող և ապաւէն քէով֊ տացւոցն՝ որ ի Թեբացւոց հատուածիցին ։ Իսկ էր նա անուանի ի պատերազմողս , և ի յանդգնութիւնէ անհնազ և ի փառաց ցանկութենէ , այլ ծանծաղամիտ և անձն յարգ , և լի յուսով մնուտով ։ Իսկ սա Պեղոպիդաս և Վորգիդաս յղեցին գաղտ զի աձառական զոմն բարե֊ կամ՝ նորա ։ և երթեալ մատոյց նմա իբրև յիւրմէ կշռո֊ բաղում արծաթոյ , և խոսեցաւ ընդ նմա բանս հրապու֊ րանս փառասիրութենէ նորա՝ քան զողոք կաշառոյն ։ Իսկ յորդորեաց զնա ընդ քաջութենէ և ընդ համբաւոյ և

3627 · 377 Քն֊ն · գաբ֊ հեա֊ Ե֊ 568։ Պւ֊ա · ԱՆ֊ գե֊ · 600 · ի Պէշդ · 284։

գաս և խորտակեաց զկապանս իշխանութենէ սպարատացւոց , զկարծե֊ ցեալսն անլոյծ և անխզելի ։

արուեստի մեծ գործել յանմահ յիշատակ, և խրատ ետ հասանել յանկարծ ի վերայ աշխատասէրս, և զՎկերեան ունել. զի քան զայմ ինչ այն ցանկալի եր սպարտացւոց՝ իշխել Լակեդեմոնացւոց. և թէպարիք ի գործս ժամանակին ոչ օգնէին նոցա, զի նորա լքին զուարճս և գրժեցին։

Վփոդրիա քանզի ցանկայր առնել անուն քաջուրեան, և նախանձեր ընդ փառս Վերիդայ, զի համարեր պայծառանալ նմա և համեմատել եղեռամբն՝ զոր ընդդէմ Թերացւոց գործեաց, խորհեցաւ՝ քան զնա պայծառագոյն լինել և փառաւորել իւրովի կալեալ զՎկերեան նաւահանգիստն, և զծովակալութեան բարձեալ յաշխատասէրս նոցա, յանկարծ ի վերայ նոցա հասեալ ընդ ցամաք։ Լաւ մտադիւրագոյն յանձն էառ զգործն, որ քան զվտանգեայն ոչ ինչ ընդհատ անիրաւ և եղեռնական եր, իսկ կատարածն՝ ոչ հանդոյն նմին արիական և յաջող։ Օ ի եղ գիշերայն ի Լեսպեայ՝ մնանել ընդ արշալոյսն ի Պիրեան, այլ լուսացաւ նմա ի դաշտին Լսրիասիոյ մերձ Լչէսոս. և նշանակեալ՝ դարձաւ ամենայն ի Լեսպիեայս աղքատ աւարաւ։

Հրեշտակս արարին ի նմին վայրի աշխատասիրքն ի Սպարտա՝ բողոք ունել. այլ մինչ չև հրեշտակացն հասեալ էր, կանխեալ սպարտացւոց կոչեցին զՎփոդրիաս յատեան, և ապա հասին դառնապազքն։ Վփոդրիաս ոչ իշխեաց յանդիման լինել ատենին, երկուցեալ ի վճռոյ դատաստանին և յարդար ցասմանէ քաղաքացւոցն, լաւ եր նմա որդի մի, և նա սիրելի եր և մտերիմ որդւոյ Լգեսիպոսի. և ի բազմաթախանձ աղաչանաց նորա, կամ մնաւանդ ի ծանրատաղտուկ անդադար ժուռ թենէն, յանձն էառ հայրն պաշտպանել Վփոդրիայ, և ետ աբձակել զնա անպարտ։ Օ ի զարդարուեցի ընդ օգտի բանիկացն փոխանակել ոչ խղճեր, որպէս յառաջագոյն ասացի։ Վանուանդ զի և գիւրագրով եր յորդիս և զամ կամն նոցա առնէր. զի և խաղայր ընդ մանկունս իւր, որպէս ասեն զնմանէ, և հեծեալ ի ցուլ՝ մանկաբար ընդ նոսա ձիավարեր. և ի մի աւուրց ի վերայ եհաս ոմն ի բարեկամացն, և աղաչեաց զնա Լգեսիպոսոյ՝ մի ուսեալ պատմել զայն, մինչ չև հայր լեալ իւրմ որդւոյ։

Բ-ԲՒՒՈՖ. Շ. 584։ Լգեսիպոսիք զգարեալ ընդ անիրաւ աղատութեամբ Վփոդրիայ, խորհուրդ կալան նորոգել զուլտ նիզակակցութեան ընդ Թերացիս, և օգնական լինել նոցա ամ զօրու։
ՊԼՈՒՏ. ՅԱՆ. ԳԼՈՒ. Ի ՊԷՂՊ. 285։ Թէ՝ Լյ. կապեցին նաւս վաճառուն. և զօրավար զորդի Լրեւելեւոյն Լոնանի կացուցին զՏիմոթեոս, որ արիու-

Թեամբն և մեծամեծ գործովք քաջութիւն ոչ ինչ պա-
կաս գտաւ քան զՀայրն։ Ընդ նմա ոսոխքն նախանձեալ
վասն փառացն յաղթութեանցն, արարին նմա պատկեր նիւ-
թագործ՝ յորում նիրհէր, և առ ոտս նորա բազդ ցան-
ցեր զբաղաքս։ Այլ եցոյց նոցա աստ Յիմնթեոս՝ զի
արհնուն կայր. և աւար հարեալ զծովեզերս Լ ակմիոյ՝
դիմեաց ի Կորկիւրա, և նուաճեաց զայն. և քաղցրուն
արարեալ ընդ բնակիչսն, և յօրինս իւրեանց և յազա-
տութիւն թողեալ զնոսա, արար բարեկամն աթենացւոց
զքաղաքս՝ որ շուրջ զնակեալ էին։ Կազմեցան և սպար-
տացիք հզօր զօրուբ. և խորհեցան յափշել նախ զԿոր-
կիւրա, որ պատեհ տեղեաւն ընդ Սիկիլիա և ընդ Իտա-
լացս՝ կարևոր էր նոցա յոյժ։ Արիաբանեցին և զբուռ-
նաւորն Կլեոնեմոս ի պատերազմն, և խնդրեցին ի
նմանէ զօր յօգնականութիւն. և զՆաուսիպպոս յայնմ
վայրի խաղացուցին ընդ ծով նաւատորմաւն։ Իսկ առա-
քեցին աթենացիք նաւս վաթսուն յօգնականութիւն Կոր-
կիւրայ, և փոխանակ Յիմնթեայ կացուցին զօրավար
զՎիկիրատ. զի Թուեցեալ նոցա Յիմնթեոս դանդաղել։
Նաուսիպպոս վէս և խիստ բարուբ և ագահութեամբ
առելի եղև զօրացն, և ոչ զգուշացան նմա, և կորեաւ
ի ձակատու ուրեք պատերազմին։ Իսկ յետ մեռանելոյ
նորա հասեալ Վիկիրատեայ, և լուեալ զի նաւք տասն
պատերազմիկք գային ի Սիրակուսայ, ածապարեաց ի
վերայ նոցա, և ոչ զմի ի նոցանէ ապրեցոյց։ Այս ի գալ
իւրում՝ զՎալլիստրատ ձարտարախօս և զԼաբրիաս
զօրավար զերեւելի ի ժամանակին խնդրեաց յաթենա-
ցւոց օգնական իւր. վասն որոյ գովէ զնա Քսենոփոն,
զի խմաստութիւն և մեծախոհութիւն յօժարեաց կարօտ ե-
րևել խորհրդակցաց, և յանձն եառ զփառս յաղթու-
թեանցն բաժանել ընդ այլս։

Օ օրացն որ ընդդէմ Թեբացւոց կազմէին գնալ,
Կլեսիպպոս բռնի կացուցաւ զօրավար. և մնեալ ի
Կռովխիա՝ արար չարիս բազումս ընդ Թեբացիս, այլ
ոչ սակաւք և ի զօրաց նորա կորեան։ Ընդադար ի
կռիւ կային կողմանք երկոքին, իբր ոչ ի ձակատ՝ այլ
ի նահաշաւիղ մարտի և ի հրաձանգս Թեբացւոց, որ
արիք և յանդգնութք և կիրթք յաձախ փորձիւն լինէին։
Վասն իրի Ընտաղիկեայ սպարտացւոյ աւանդեն ասա-
ցեալ զԿլեսիպպոս ի դառնալ նորա կարեւէր ի Կռով-
տիոյ. Խարուք զնարձս վարժիցդ կալաք, Կլեսիպպոս,
որ ուսուցեր զԹեբացիս ի հրաձանգս մարտի, յոր ծոյլք

էին յառաջագոյն և էին իսկ առաւել ։ Այսմ իրի և Լ
կուրգոս ի միում յերից կարգադրութեցն, զորս պատ-
գամն կոչեաց, պատուիրէր սպարտացւոց՝ մի յամեայն
ընդ նմին թշնամւոյ տալ պատերազմ, գուցէ սոսկեալ
զնոսա ի գիմամարտ՝ հրաժանգեսցէն ի պատերազմ։
Ընդ ձակատ բաղումք եղեն պատերազմին առանց
պարտութեան. զի զօրավարացն Թեբացւոց ոչ բարւոք
Ի՝ստ Դեմոսթենէս ոչ ձգիւ մի ըստ միոջէ զբանս հակառակորդին եղծանէ. այլ խուսափէ՝ի հակառակ մարտնէն, զի մի տկար՝ի պատասխանին կարծեցի առաջի ամբաւուս սերտ փաստիցն՝ որ անպարտելի Թուէին։ Ա՝ւ այսպէս ապա վախճանի զիստատբանութե՝ն. Ա՝ո-

քիմքը խեղամռեալ, ո՛րք, և յոլասհատեալ ՚ի խաղաղութենէն, զի զպատերազմն զոր վաղ և գործովքն հրատարակեր Փիլիպպոս՝ արդ և հրովարտակաւ յայտառնէ, փոխանակեցեալք զգանձս աշխարհիդ, և մի՛ կինչս իւրաքանչիւր խնայեք. եթէ և զայն դեպք պահանջիցեն՝ փութացարուք ընդ դրօշակօք, և զօրավարս քաջագոյս կացուցէք. մի՛ ոք համարիցի, զի որք տապալեցին զկրս աշխարհիդ՝ նոքին կանգնել կարասցեն զայնս. Եւ մի մակեդոնացի առ սեր աշխարհակալութեամբ տեսիք զիարդ խիզախ ընդ վտանգս, զի ՚ի խուռն սաստկացեալ մարտին մտանէ և ելանէ խոց և վիրալից. իսկ աթենացիք՝ որոց հայրենի օրէնքն են հշնամանդել ուսեալ, այլ զինուք օրինադրել այլոց, վատասրտեալ և յուլացեալ և ՚ի փառաց նախնեացն վերջացեալ, ապաստ առնեն զօգուտ հայրենեացն. խորհեցարուք զայսմ ՚ի մեծ։

Պլուտ. ՚ի Փոկ. 748։

Այ՛ինչդեռ յայսմ խորհրդի էին աթենացիք՝ լուեալ մերժուին Վ՚արեայ. և ՚ի բրթմինչել ամենեցունն ընդ տմարդութեանն գաշնաւորացն և ՚ի զայրանալ և ՚ի գղջալ թէ ընդէր առաքեցին օգնութեա՛ն ՚ի Վ՚իւզանտիոն, յոմն ելայ Փոկիոն և ասէ. Ո՛չ ընդ կասկածանս գաշնաւորացն ցաստցեալ էք, այլ ընդ գործս զօրավարացն ձերոց բարկացարուք՝ որովք եղեն կասկածելի. զի նոքա առեալն և աշարհս առնեն գձեզ և կարօտեալսն ևս օգնականութեդ ձերում ՚ի փրկուն։ Ո՛չ էր Վ՚արեա, որ պէս ասացաք, վատ և անհմուտ հրահանգաց մարտի. և զամ քաջութիւն նորա եղև ՚ի զօրանալ առաջի ոամկին վստահութեամբն և համարձակութեամբ, Զանձնասպաստանութի ծածկեր ՚ի նմանէ զասպիկարութի նորա, և զօրաքաղութեամբն՝ յոր ինչ և ձեռնարկէրն՝ յաջին վերեսէր։

Ոամկին յորդորեալ ՚ի ձառս փոկիոնի՝ վաղ փոխեցաւ ՚ի խորհրդոցն. և նմին ինքեան պատուէր ետ երթալ այլով գնդաւ յօգնութի նիզակակցաց Վ՚իւզանտիոն. և ընտրութին այն առաւել քան զնա՛մ ինչ զօրավիգն ՚ի փրկութի եղև բիւզանտացւոցն։ Ո՛չ էր անուանի փոկիոն, ոչ միայն քաջութեամբն և ՚ի նմանութեամբ ՚ի հրահանգս մարտի, այլ և լաւութեամբ և անզօրաքաղութեամբն։ Խնդութեամբ ընկալան զնա բիւզանտացիք, և զզօրս նորա ՚ի տունս իւրեանց ասպնջականեցին որպէս զորդիս և զեղբարս։ Ա՛ւ զօրքն և սպայք զարմացեալ ընդ հիւրասիրութի նոցա և ընդ վստահութիւն,

զգօնք և համեստք և անստգիւտք կացին առ նոսա ։ Այլ
ի մարտի զարմանալի եղեն արուեստիւքն, անվեհերք
յիւր յարձակմունս, և ի վտանգս խիզախս ։ Որոց քաջ Դիոդ. Ժ. 468։
ջութեամբն, և խնամոութեամբն իւրով հարկեցոյց Փա
կիոն զվիրկսպոս՝ թողուլ ապատ զԻլիւզանեան և զՊե
բենեոս ։ Իսկ Փիլիպպոս հալածեալ Անդրեասպոտեայ,
զհամբաւն զառաջին կորոյս · զի անպարտելի համարէր
յառաջագոյն, և ոչ ոք իշխէր կալ առաջի նորա · այլ
Փոկիոն դերեաց նաւս ի նմանէ և քաղաքս ամենայն թա
փեաց, յորս էին պահակազունք նորա · և զօրս բազում
ուրեք ի չուսցեալ յերկիր նորա՝ եհար աւար զիւր դաշ
տավայրս, մինչև գումարեցան Թշնամիք խափանել զինս ·
և վիրաւորեալ ի նոցանէ դարձաւ յետս ։

Իւզանդացիք և պերինթացիք երախտագէտ մնօք Դիոդ. Ի
փոխանակ բարեացն աթենացւոց արարին ի փառս նո կ. 487։
ցա հրովարտակ պերճ, զոր ի միում ուրեք ի չառիցն
ի ներքս ածէ Դեմոսթենէս · անտի համառօտեալ բովանդ
դակեմ աստ զնմանտան ։ Այս քրմապետութեամբ Ա ոս
փորիկեայ ՝ Վամագետ հրամանաւ աւազանացն խօսե
ցաւ յատեան ժողովոյ և ասէ · Վանդի՝ ի վաղ ժամա
նակաց՝ աթենացւոցն սերտ բարեկամութիւն առ բիւզան
դացիս և պերինթացիս, նիզակակիցս և հայրենակիցս,
ի բիւր դէպս երևեալ՝ պայծառագոյն ևս այժմ ի մե
ծոյ ցուցաւ, մինչ մակեդոնացին Փիլիպպոս զինուորեալ
ի սպառսպուռս աւերած քաղաքացն մերոց՝ զպարիսպս
հարկանէը, զանդաստանս տոյտրեք, զծառատունկս կո
տորը, և յայսմ նեղութեան ժամանակի նաւս հարիւր
և քսան զօրօք զինուք և պաշարաւ ի Թիկունս մեզ հա
սուցին ազգն բարերար, և ի մեռանելոցս կորստենէ փրկ
եցին զմեզ, և հաստատեցին ի խաղաղ ժառանգութիւն
աշխարհիս և օրինաց և հայրենի չիրմացս, նոցա փոխա
րէն մեք բիւզանտացիք և պերինթացիք չնորհեմք հրո
վարտակաւ ազատութիւն աթենացւոց՝ ընակել համար
ձակ յերկրի մերում, զաւակ խառնել, կալուածս ստա
նալ, և հաւասար քաղաքացւոց ունել չնորհս ։ Տացի նո
ցա գաղձեալ տեղի ուրոյն ի տեսարանս, և յատեան
աւագանւոյ և ժողովրդեան՝ առ քրմապետաց արկցի նո
ցա գաւ ։ Այս ասի աթենացի ընակեալ ի մի յերկուց
քաղաքաց՝ ազատ լցի և ապահարկ · և անդրիք երեք՝
վեշտասան կանգնեայք ի բարձրութիւն առ նաւահանգըս

1 Ուր եր, որդեւ խոցեմ, գահերեց ասպանոյն։

տէն կանգնեցին, պատկեր ժողովրդեանն Իւլիանոպոլ-
եւ Պերինթեայ՝ զաթենականն պահելով։ Այս պարագաք
ի յորեանն տօնս խաղաց Յուլադայ յղեցին, եւ քարո-
զեցի անդ պահ ի միջոջ ժողովրդեան աթենացւոց, զի
ընդոցա մեծամեծութիւն եւ զբիւզանտացւոցն եւ զպերին-
թացւոց երախտագիտութեի ընդհանուր գիտացէք ամ
յունաստան։

Հանդերձ սմին եւ բնակիչք Պերսոնի հրովարտակ ա-
րարին. եւ այս իմաստք էին հրովարտակին. Ընակեալ
ի Պերսոն ազգք՝ սեստացիք, եղէհնացիք, մագիտացիք
եւ աղոպեկոնեսացիք, պահ ոսկի վաթսուն տաղանդաց՝
աւազանեց եւ ժողովրդեան Աթենայ հրամայեն, եւ
բազիս կրկին դիցուհեյ երախտագիտութե, եւ աթե-
նացւոց. զի մեծ արարեալ բարութե՝ զՊերսոն ի լծոյ
փիլիպպոսի փրկեցին, եւ ի բնակեալ ի նմա ազգս՝ զիւ-
րաքանչիւր քաղաքս եւ զօրէնս եւ զազատութիւն եւ զին-
հետս դարձուցին։ Որոց բարութե յիշատակ կեցցէ
առ մեզ յաւէրժ, եւ ամ զօրութե անմոռաց պահեցուք
զայն. յաւետեան ժողովոյ միաբան հաւանութեամբ վճռե
ալարաք։

Ց---ԽՒ. Ք. Ի. Իսկ Փիլիպպոս ստիպեալ բառնալ զպաշարումն Իւի-
զանդեայ, խաղաց ընդդէմ Աթեայ արքային Ակիւ-
թաց, ընդ որում խոժոռեալ էր. և զօրդի իւր զՆէք-
սանդր ած ընդ իւր. և դիւրին պատերազմաւ հարեալ
զամենայն մեծ Ակիւթաց, եաւ աւար բազում. ոչ գոսիոյ
և զարճաթոյ, զի այնոցիկ պէաք և յարգ անճանօթ էին
յայնժամ առ բարեբաղդ ազգն Ակիւթաց, այլ զան-
դեայ և զձիան և զամենօս կանանեայ և զմանկտւոյ։ Այ
իբրև դարձեալ գայր՝ կալան զառաջս Տրիբաղք,
ազգ բնակեալ ի Միջեւս, և պահանջէին յաւարին
մանաւ։ Հարկ եղեւ զէն ի գործ առնել. և մարտ սաստիկ
արիւնաղող ի տեղւոջն գործեցաւ, և ամենօս բազում
դիտապաստ երկուստեք անկան, և Փիլիպպոս վիրաւո-
րեցաւ յազդրէ, և ձին ընդ նովաւ խոցեալ սպանաւ.
բայց Աղեքսանդր յօգնութե հասեալ և վահանաւն զհայրն
պատսպարեալ, եհար վանեաց զյարձակեալսն ի նա։

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Փիլիպպեայ սպարապետ էր ամ Ցունաց, զաւուրս ղընդրօնիկեան
խալեալ յԱթենիոնացւոյ. և գնդապետ նոտաձել, և աւելնալոց և
ընդարձակող զարձրբալ անսի, գիաբանել ընդդեմ նորա. և ի խա-
ղաղութենան յորդորել նորա զնոսա, և Ալեքսանդրեայ հաճոյանալ կալ
նմա և զի առ ՝Ալեքսանդրա խոնի պարգեւս, և յաղթութենան ձեռ
հանգիպել Փիլիպպոս, և վասն Աթենացւոց պատասխանել ընդ Ալեքսա-
նդրեան, և պարզատրել իւր ի ձորոց։

Փիլիպպոս արշաւանաւն ի Թիւրգանդիոն համարեցաւ 3666 · 358
համարձակել զգրգռութեն և զպատերազմ ընդ աթե- Պլ–ԿՐ · Է
նացիս. և յելից երացն կասկածեալ, զի զարհուրեր ի փ։ 748։
զօրութենէ նոցա՝ վայրապար դրդեալ զնոսա ի թշնա-
մութենէ, հրաւիրեաց զնոսա ի խաղաղութեն և յիրա-
ւահաւութեն, զի անցուսցէ զցասումն և զբէն նոցա։ Եւ
Փոկիոն դիւրահաւան լեալ, և յելից վտանգաւոր մար-
տին խիճացեալ, խորհեր զիջանել. բայց Ալեքսանդեան
քանզի խելամուտ էր բարուց մակեդոնացւոյն, ծանեաւ
զխորհուրդս նորա զի զբաղեցուցանել կամէր և զառանց
ցուցանել զաթենացիս, որպէս յաշխոյն, և արգել զնո-
սա մի յանձն առնուլ զխաղաղութենէ։

Եւայց Փիլիպպոս ցանկալի վաղագոյն զրաւ առնել Դեմոս. ի
պատերազմին, յորմէ նեղէրն. և մնաւանդ ի հինիցն Կոնոն. 497։
սպառազէն նաւաց, որ ստէպ արշաւեալ ընդ մերձակայ
ծովիս զվաճառաշահ խափանէին, և զելուզմուտ ամի՝ որ
ինչ յաւելոյն կամ պակասէր ի Աթենեդոնա։ Խորհե-
ցաւ Փիլիպպոս՝ զի չմարթէր խաղաղութիւն առնել, և
վշտաց մարտին վախճան, բայց թէ զթեսսաղացիսն և
զթեբացիս գրգռեալ ընդդեմ աթենացւոց։ Օ ի ոչ
ընդ ծով և ոչ ընդ ցամաք յաջողէր նմա արշաւել Աւ-
թենս. քանզի էր ընդ ծով տակաւ յոյժ քան զաթենա-
ցիս, և ընդ ցամաք փակ էր առաջի նորա ուղին Աւ-
տիկէ՝ ցորչափ թեսսաղացիք չմիաբանէին ընդ նմա, և
թեբացիք չգործէին նմա անցս։ Եւ եթէ յիւրն միայն
թշնամութեն յորդորեր զնոսա ընդդեմ աթենացւոց՝ ոչ
ոք խլրտեր. իսկ եթէ պատճառէր յանձն առնուլ զՀոգ
հասարակաց պատերազմին նոցա, և ի նոցանէ ընտրեալ
կայր զօրավար, յուսայր ձգել զնոսա զհետ իւր ողջով
կամ նենգաւ. և զայս ուշ նպատակին և խորհուրդ ամ-

բաճաճուկ ունէր, և քնաւ անկասկածելի։ Այն նմա վարձկանք չտայ քաղաքն՝ որք զնմանէ բան հասուցանէին առ նա, և սպաս պիտանի մատուցանէին՝ ըստ առատ կարաւորին։ Ի ձեռն նոցա յարոյց պատերազմ ընդ Լուկրացիոն Ղողս, որ և ամենայացնէր կուռին՝ զի էր մայրաքաղաք նոցա Լմիխա. և աշխարհն նոցա էր ընդ Փռվկիա և ընդ Լտողիա։ Եւ պատճառս ի վերայ նոցա յուզեաց, որպէս թէ զանգս դեղիական մեհենին սղգեալ էր նոցա, և վարեալ զերկիրն՝ որ Ալիւռենոյն դաշտն կոչէր։ Խանգոյն սմին և մեհենական պատերազմին դրդեցաւ, որպէս յառաջադոյն պատմեցաք։ Լտենի Լմիխ տիրանացն անկ էր դատաստանին. և եթէ պատուիրակ փոխանակ իւր զոք ի ծանօթից կամ ի կասկածաւորաց կացուցանէր անդ, հաւաստեաւ մեհենայքն նշանակէին, և առանց երկբայուե թեբացիք և թեսաղացիք կազմ կային ընդդէմ նորա։ Կային իբրև ձարտար և հնարիւք զանխլաբար զբաւն նուիթեաց, և ոչ ի վեր եհան զնոր հուրգս իւր։ Օձ ի ձեռն վարձկանացն՝ որ էին նմա Լթենա՝ ընծրեաց ի Պիղագոր զԼսքինէս, որ բուրդ վին ի նա յանկուցեալ էր։ Եւ Պիղագոր կոչէին՝ յիւրաքանչիւր ազգաց Յունաց պատուիրակք եկեալ յամփիկտիոնեան ժողովն։ Ընդ Լսքինէս հղօրագոյն օգնական եկաց Փիլիպպէոյ. այնու զի ոչ էր կասկածելի Լթենայ քաղաքացին՝ որ երիմ թշնամի նորա։ Եւ ազերսանօք Լսքինէսայ սահմանեցաւ այց առնել տեսանել զտեղին, զոր ի սկզբանէ հետէ որպէս ժառանգու թեամբ սեփականաբար կալեալ ամիիացուց, ասբեստանեալ լինելին յայնժամ յամպարիշտ և ի սեղանակապուտ յափշտակութենն։

Եւ մինչ դեռ դատաստանաւոր երկրին այց առնէին Լմիխտիոնք, յանկարծ ի վերայ նոցա հասեալ լուրց ինք Թանդրախտ նետիւք վանեցին զնոսա ի բաց. և ժպիրչ եղեռամբն՝ լուցին զթշնամութեի և զպատերազմ ի վերայ իւրեանց։ Կոտիփոս, մի ոմն Լմիխտիոնացն, զոր յարոյց ի խնդրել վրէժս յապստամբացն. այլ ի ժամադիր տեղի մարտին չժամանեցին զօքըն ամենայն, և չհոս գարձաւ անգործ։ Ալիւսանդամ Լմիխտիոնք ժողովեցան, և խիստ քննութեի եղև ի խորհրդեանն։ Ընդ Լսքինէս զձարտարախօսութեի իւր ի գործ արկեալ, բազմաքանդակն Ճառիւ եցոյց պատուիրակաց ազգաց՝ զի պարտ էր դրամաժողով առնել յիւրաքանչիւր աշխարհաց, վարձել զօրս ի վրէժ ըմբռնութիցն, կամ զվիճ

լիպպոս կացուցանել զօրավար։ Իսկ պատուիրակքն խնայեալ զնուրբանչիւր աշխարհ ՚ի ծախուց և յաշխատուԹենէ և ՚ի վտանգաց մարտին, գյետին խորհուրդն կալան ։ Իսկ հրովարտակաւ առ Փիլիպպոս մակեդոնացի հրեշտակք արձակեալ, յանուն Պղոմեայի և Լիմնիկոսի նացն՝ աղերսեն սոխալաւ զօգնուԹիւն նորա, և Թախանձեն ինդրել զվրէժ ատուածոյն՝ զոր նախատեին ամպարշտուԹեամբ ամիխացիքն։ և յայտ առնեն նմա, զի նմին իրի միաբան ամ Հայիք ժողովականք ամիխիկտիոնեան ատենին՝ ընտրեն զնա զօրավար, լիով իշխանուԹեամբ առնել զամ՝ որ ինչ բարւոք Թուեսցի նմա ։

Իսկ ՚ի բազում ժամանակաց ցանկայր Փիլիպպոս, և ՚ի նմին խորհէր հանապազ, և անդր զամ կազմածս իւր ուղղէր ։ Այլն իրի առանց ամ յապաղման աճապարեալ՝ ժողովեաց զզօրս իւր, և կեղծիւք ՚ի Կիւռենոյն դաշտն արշաւման՝ մոռացեալ զկիւռացիսն և զլսկրացիս, որ պատճառանք էին արշաւանին և ոչ ինչ փոյԹ էր նմա զնացանել, կարաւ զԱղատիա զմայր քաղաքաց փոկիսացւոց առ Կեփիս գետով, որ էր սեփհականագոյն տեղեաւն ՚ի սանձահարել զԹեբացիս ։ Իսկ բացան յայնժամ աչք նոցա, և տեսին զերկիւղալի վտանգն ։

Էզ եղև ընդ երեկս Ա ԹԷնս, և լն եղև քաղաքն աՀիւ. և ՚ի վաղիւն յատեան ժողովոյ քարոզ կարդայ ըստ սովորուԹէ՝ հրաւէր ՚ի բեմն, և ոչ ոք էր. յանձնախեաց հրաւէրն, և դարձեալ ոչ ոք յոմն եկաց, ԹէպԷտ և ամ զօրավարք և ձարտարախօսք անդ էին. և աչխարհապաղատ բարբառ հայրենեաց Թախանձէր խրՆ զբեր խորհուրդս փրկականս. զի ասէ իսկ Դեմոսթենէս, յորմէ զայսոսիկ առեալ գրեմ, զի յորժամ քաղաքն գոչէ զպատգամ օրինացն, բարբառ հայրենեաց զձայն նորա ՚ի դէպ է վարկանել ։ Իսկ իբրև առնեքեան լուեին ՚ի զարհուրանացն, Դեմոսթենէս խրախուսեալ ՚ի տեսիլ մեծալուստ վտանգին՝ եւ ՚ի բեմ քաջալերել զԹենացիս, և ըստ պատշաճի ժամանակին և պիտոյից տալ խորհուրդ ։ Իսկ ձարտար քաղաքավարն և ձարտարախօս՝ լսէն և խոր հանձարովն երագեալ խրատ ետ որ ինչ պարտ էր նեՀրդոյ և արտաքոյ ընդ ծուլ և ընդ ցաւմանք գործել։ Իսկ ՚ի վրիպակ կարծեացն ջանայր շրջել զմիտս նոցա, զի վարկանէին զԴեմոսթենէս անլոյծ սիրով ընդ Փիլիպպեայ կամակաւ և ՚ի շահ օգտի միաբանեալ, և ցուցանել նոցա, զի յոլովք քան զամենս ՚ի Թեբացւոց՝ ինդրեն պարապ ՚ի նշմարել զնա, և զի յառմանէ Իղա-

տեայ ծանեան՝ որ ինչ մնայրն նոցա ի նմանէ ։ Վասն ձեալ զի զմտերիկ վարկանէին հին և ահաւոր Թշնամի. և ոչ ի կարեաց ժամանակին կամէին օգնել նմա ։ Իսկ ի վաղ ժամանակաց յայտնի ոխութիւն ընդ Մովսէս և ընդ Աթենս, մինչև Պինդար՝ զի ի միում ուրեք ի տալ զնոյն զԱթենս գովեաց՝ կշիռ մեծ արծաթոյ դատակնիք քաջ Թեբացւոց տուեցաւ ։ Այլ Վեհմանթենես հաւատակ կամեսակալ կարծեացն՝ որ խորարմատ ի միտս նոցա հաստատեալ էր՝ օգնական եկաց Թեբացւոց, և եցոյց՝ զի այն իսկ յօգուտ էր Աթենայ, և ոչ ինչ հակոյ գործէին մակեդոնացւոյն՝ քան զԹողուլ նմա զՄակեդ. զի ի կործանել նորա բանայր նմա ուղղ անխափան ի Աթենս ։

Այսպա նշանակեալ զխորհուրդս Փիլիպպեայ՝ վասն որոյ նուաճեացն զԱրդտիա, ասե. Յակ զինչ խորհի Փիլիպպոս, և ընդհէր զԱրդտիա բռնակալեաց. զի ի տեսիլ բազմամբոխ զօրացն և հզմանծոց մարտի՝ որ չուրջ զմեբաւ կան՝ խրախուսեսցէ զկռուսակիցս իւր և յանդգնասցուս գործեսցէ զնոսա. և զի ընդդէմ հակառակորդաց կշռեսցէ զշարուածն, ի սասանեցուցանել զնոսա և ընկճել ահիւ կամ բռնութեամբ ։ Այդ նա զօրինակ մարտին՝ ըստ որում պարտիքն առնել, ցուցանէ ձեզ. ժողովեցէք մերձ Ալեսիս զմանկտին առոյգ զընիկ զօրսդ, և զայրուձիդ յաւելէք ի նոսա. և գիտասցէ՝ ամ Ալլադա՝ զի է զէն ի ձեռին ձերում, և խրախուսեսցին կուսակիցք ձեր ի Մովսէս ապնդ ունել զիրաւունս իւրեանց, և մնդակազմ կալ առաջի հակառակորդացն՝ յորժամ տեսանիցեն, զի որպէս որ մակեդոնացւոցն վաճառեն զհայրենիսն՝ նոցա պատրաստ կան Ալդտիա զօրք յօգնութիւն ի վտանգի, նոյնպէս և որ ի վերայ առատութիւն մարտիցեն՝ դուք կացէք կայցեք յօգնութիւն նոցա ընդդէմ հինից յարձակմանց ։ Այս խրատ ետ սպրն դաւեսպանս արձակել առ ազգս Ալլադայ, և վաղագոյն առ Թեբացիս, միաբանել ամենեցուն ի մի նիզակակցութիւն ընդդէմ Փիլիպպեայ ։

Ձամէոյ Թուեցաւ ամ աւագանւոյն խմաստուն և օգտակար խորհուրդն, և հրովարտակաւ զամ եղեռն Փիլիպպեայ՝ որովք վախաղաղութիւն եղծ՝ յայտ արարին, և

1 Ջի խոչէ պայծառ և հռչակէ բնենոյիւ ալ գիտն պատչին հապուշին, զի և Ալլադայ պատուար և ձոխ այլ և անգրի նմա կանգնեցին ։ ՀԱՆԻՆ։ Աւաւ խոխանչ այնուհի ։

էր աւարտ հրովարտակին այս. Ի՛մին իւրմէ աւագա-
նին և ժողովուրդ Ի՛ռլենայ, նախանձաւորք մեծախոհու-
թեն նախնեացն, որք զիրկութեի քնիկ աշխարհին՝ ի վե-
րայ ազատութեե Յունադայ փոխանակելոյն, հրամանն տան՝
զոհ և մաղթանս առնել դիցն և դիւացաղնից խնամակա-
լուացդ Ի՛ռլենայ և ատտիկէատան աշխարհին, և հանել
ընդ ծով երկերիւր նաւս պատերազմի, և այսր քան զը-
Ա՛ներմոպիլէ նաւատորմաւն երթեւեկել ծովակալին, և
զօրավարաց հզօր հետեւակագնդաւ և այլոցձիով երթալ
բանակել զԻ՛ռլեսեաւ. և առ ազգս ելլադացիս հրեշտակս
արձակել, և վաղագոյն ի Ա՛ռեբէ՝ ուր ի մեծագ մնակեդա
նացին սպառնալ, և խրախուսել զնոսա՝ զի մի երկիցեն
ի նմանէ և ոչ միով իւրք երկիւղիլ, այլ արիաբար ի
վերայ իւրաքանչիւր իշխանութե և ի վերայ ազատութե-
ամ Յունադայ մարտիցեն. և յայտ առնել, զի եթէ խոս-
ժոռութե ինչ ուրեք ի ներքոյ անկեալ զսէր Թողացու-
ցեալ իցէ ընդ նոսա և ընդ Ի՛թենս, աթենացիք մոռա-
ցեալ՝ զօրու, զինու, գանձու, և ամ օգնականութեամբ
ձեռն տան նոցա. զի Հելլենք քնիկք մարթեն վերձել
ընդ միմեանս փառաք զգահերիցութենե, այլ օտարին
Թողուլ զայն ի կապուտ և յանձն առնուլ զնախաստինս
ծառայութե՝ չմարթի առանց աղարտելոյ զփառս ազ-
գին, և ի քաջութենե նախնեացն հրաժարելոյ։

Պլուտարխ. ի Դեմոսթ. 853։

Դեմոսթեն գլուխ պատգամաւորացն վաղվաղեաց ի Ա՛ռեբէ. զի ոչ իսկ էր ժամանակ դանդաղելոյ, քանզի երկօրեայ Ճանապարհաւ հեռի էր փիլիպպոս Յ՛ոտիկեայ. որ և նա պատգամաւորս յղեաց ի Ա՛ռեբէ, ի նոսա աւագագոյն էր Պիւթեաս՝ և առաւել եռանդուն և յանկուցող և դժուարամարտ Ճարտարբասութեամբն՝ առ որում այլք ի պատգամաւորացդ Թոթովել Թուէին. այլ աստ ի Դեմոսթենեայ պարտեցաւ։ Ոչ ի միում ի Ճառից ի յիշել զվաստակս իւր՝ զոր վաստակեաց աշխարհին, խրոխտագոյնս պանծացեալ Յայն՝ ի գլուխ քաղաքավարական քաջութե՝ կարգել զյաջողումն մեծի և կարևոր հրեշտակութե։

Դեմոսթ. ԷԷ դաւիճ. 509։

Օ օրավկն մեծ էր աթենացւոց նիզակակից լինել ընդ Ա՛ռեբացիս, որ յետս սահմանաց Յ՛ոտիկեայ բնա-
կեալ՝ պատապարանք լինէին աշխարհին, և էին նոցա
գունդք քաջակիրթք, և յորմէ հետէ զպայծառ յաղ-

1 Պլուտարխ այս բէնսէրտորի էր, և յետս ի Կոճ փիլիպպոս։ Դեմոսթ. Ա՛ռենայ տազտուի մէջ, ե ապրեր 193. և 745։

թուԹեան առ Ա֊ևւկտրաւ և առ Ա֊անուհետ կալան, նոքա առաջինք էին յաղգս Ա֊լլոդեայ քաջուԹեամբ և հրահանգօք մարտի։ Ա֊Այլ դժուարին էր գործն այնու՝ զի դեռ ևս՝ի պատերազմին՝ի փայլիկ մեծամեծ բարուԹիս փիլիպպեայ արարեալ էր ընդ նոսա, և ոխերիմ ևս հնացեալ ատելուԹիւնն ընդ Ա֊թենս՝ խափանէր զայն։

Այսպեսգան նախ հրեշտակք փիլիպպեայ, և յայտնի ակներև ցուցին զբարուԹիս նորա՝ զոր յաձախեաց առնել ընդ Ա֊թենս, և զյոլով չարիսն՝ զոր յանԹեմացուց կրեցին Ժեքացիք. և լի արարին զնոսա յուսով փարԹամ աւարաց Ա֊տիկեայ աշխարհին, մանգեոց և ընչից և իշխանուԹե՛ի նոսա հասանելոյ. և զի ընդհակառակն՝ի նիզակակից ընդ աԹենացիս՝ Ա֊էվոլտիա ասպարէզ լինէր մարտին, և կորուստ և ապականուԹե՛, և հրդեհ և ամ չարիք կցորդք պատերազմի անհրաժարելիք՝ անդր յաձախէին։ Ա֊յս ապա խնդրեալ նիզակակից լինել նոցա ընդ փիլիպպեայ ընդդէմ աԹենացւոց, կամ գէթ տալ նմա անցս ընդ աշխարհ իւրեանց Ա֊տիկէ, վախձանեցին զգաման։

Ա֊եմոսԹէն վառեալ սիրով աշխարհին և արդար ցասմամբ ընդ դրժանս և ընդ յափշտակուԹիս փիլիպպեայ, առաւել ևս՝ի լուր ձարտարախօսին՝ որ վիճէր ինն ընդ նմա զիաւաց՝ բորբոքեցաւ՝ի նախանձ, և յաւելաւ յերանդն։ Ա֊յս ընդդէմ պատիր փաստիչն ՊիւԹիոն զԹըշնամական գործս փիլիպպեայ եդ, և՝ի վերայ ամենայնի զնուաձնուն Ա֊զատեայ՝ որով ամ խօրհուրդք նորա նշաւակեցան։

Հանդիմանեաց զհաւատարուԹի՛ նորա, զանդգնուԹիւն, զփառամոլուԹի՛, և զաբարուետ նենգուԹիւն. զի զամ Ա֊լլադա խօրհէր բռնակալել, այլ յանձրևևան յաղողուն՝ ի ըստ միոջէ հուաձեր զաղգս. և զի կարծեցեալ բարուԹիք նորա՝ վարիք էին ազգաց դիւրահաւանից, որ չճանաչէին զնա, առ՝ի զինքնակեց առնել զնա՝ որոց նախանձու ազատուԹեան հաստարակաց մարԹիր ընկիՀել խօրհրդոց նորա։ Ա֊յլ խելամտեցոյց զնոսա՝ զի աշխարհակալուԹեամբ Ա֊տիկեայ ոչ յագեր ագաՀ յաբերութիւնս՝ զոր փըշտակասիրուԹի՛ նորա, այլ մանաւանդ զրդռեր այնու և զվնասէ նուաձել, և զայլ քաղաքս յուհատասանի. և զի յօգուտ երկաբանչիւրոցն ազգաց, որ յայնմ՝հետէ կից գնային, Հարկ էր մուռանալ զամ անցս, և ընդդէմ հաստարակաց ԹշնամուոյնՀամախմբել զզօրուհիս իւրեանց։

Ի երկմտեցին Թեբացիք յերկար։ Հզօր Հարտաբիա Թեոդոսի
սուէրն Աւտոմենի, ասէ ոմն ի մատենագրաց, որպէս Պլուտ. ի
հոգին ուժգին ընդեալ ի սիրտ նոցա՝ արծարծեցոյց զնա, Դեմետ. 854։
խանձ հայրենի և զսէր ազատութեան, այնպիսի եռանդն
աճեալ նոցա՝ զի մտացան զայմ երկիւանս և զսորհուրդս
խոհեմութեանն և երախտագիտութեան, հիացեալք և զմայ-
լեալք ի Հաւուց նորա, և որպէս ածարեալք և գեղեցիկ
իմն փառասիրութեամբ մնէալք։ Ջեռ լինձ զնարդ ազդէ
ի սիրտ Հարտաբիասուսն Թէր՝ սիրով և նախանձու հասա-
րակաց բարւոյն։ Լ՚այր մի իշխէր ի ժողովս աթենացւոց
և Թեբացւոց, և էր յԱթենս և ի Թեբէ նմանպէս սէր
բերի և մեծարոյ և հզօր։

Ւսկ իբրև եղեծաւ խորհուրդ Փիլիպպեայ՝ նիզակակ-
ցութեամբ երկուց ազգացն, հրեշտակս արար նա առ
աթենացիսն՝ի բաց ընկենուլ զդէնս, և կալ ընդ իւր խա-
ղաղութիւն։ Լ՚այր նորա զայրացեալ էին, և իրաւացի էր
կիւղիւն անսաստք, և կեղտակարծք ընդ բանս Թագաւո-
րին՝ որ մեղմախօսքն գնայր ընդ նոսա։ Լ՚մինսին ինչ
կազմ էր ի պատերազմն, և զօրքն ոչ էս ժոյժ ունէին,
և արք չարասէրք հնարեցան չկրճատանել զեռանդն նո-
ցա և մեղկել զնոսա՝ գոյժս և ահաւոր գուշակութիւնս
տուեալ բարբառել դեղփական հարցկին. այլ Աւտոմե-
նեայ յուսացեալ ի գէնս Հիւնաց, և վստահագոյն
խրախուսեալ ի բազմութեն և ի քաջութեն զօրացն՝ որ
փութային վաղագոյն պատահել Թշնամեաց, խրատէր
զնոսա մի պատրել պատգամօքն և ոճային գուշակու-
թեամբք։ Լ՚ս ասա՝ի դէպս յայս ասաց զՀարցկէն Թէ
Էնվպպենայ, որպէս Թէ կաշառօքն Փիլիպպեայ աստուա-
ծարեալ՝ տայ պատգամս՝ի դէմս գՀապհոյս նորա։ Հիշե-
ցուցանէր Թեբացւոց զքաղաքակիցն նոցա զԼ՚ապամի-
նոնդ, և աթենացւոց զիւրեանցն Պերիկղէս, որք զպատ-
գամս դիցն և զգուշակուհիս՝ կեղծիս զարհուրանաց վար
կանէին, և զմիտս և եթ իւրեանց հարցանէին։ Ո՛ զուլա-
զակի զօրքն աթենացւոց յօդել անկեալ՝ հասին յԱրև-
սիս։ Լ՚ս Թեբացիք զարմացեալք ընդ երագ հասանել
նոցա՝ խառնեցան և նոքա ընդ նոսա, և կազմք միայնոյն
Թշնամեաց։

Ւսկ Փիլիպպոս ոչ զԹեբացիս խափանել կարացեալ
ի նիզակակցութենէ աթենացւոց, և ոչ զաթենացիս միա-
բանել ընդ իւր, համախմբեաց զզօրսն և եմուտ ի Լ՚եռվ-
տիա։ Լ՚ռաւել էր զօրօք քան զթշնամին, և ելին նմա
երեք բիւրք հետևակաց, և երկու հազարք հեծելոց։

Աբիուդիւն Հանգոյն իմն էր երկուստեք, այլ զօրավարացն քաջութիւն աննման. զի զմարթ էր ընդդէմ վիպապեայ ի Ճակատ հանել։ Իփիկրատ և Վաբրիաս և Տիմոթէոս զօրավարք անուանիք Աթենայ՝ ոչ ևս եկին, փոկիոնի մարթ էր ոսոխել ընդ նմա. այլ պատերազմն այն հակառակ խրատուց նորա միւոք, և հակառակորդք նորա ի բաց մերժեալ գնա՝ զԱրաբես զայր վատանդն, և զ[illegible]ւսիկղէս՝ որ յանդգնութեամբն միայն և յանձնապատանութեամբն անուանին էր՝ կացուցին զօրավարս։ Հայսպիսւոյ յանձնաձար ընտրութենէ զօրավարաց՝ պետութեանցն հասանէ վախճան։

Այսոքիկ քանակքն երկոքեան առ Վերոնեաւ, որ է քաղաք ի Ռեռվտիա։ Եւ կացոյց փիլիպպոս ի ձախսումն զՂեբսանդր, որ էր յայնժամ վեշտասան կամ եօթն և տասն ամաց, և եդ ընդ նմա զքաջս ի սպայիցն. և ինքն յաջումն եկաց։ Իսկ զթշնամեացն զաջ թեւացիք, և աթենացիք զահեակ թևն կալան։ Ընդ ծագել արեւու՝ երկոցունց կողմանցն կոչ առնէր փող. և ի խոստ և յամառ պատերազմին յերկարեաց յաղթութենէն յերկայս, զի զարմանալի արութեամբ և քաջութեամբ երկուստեք ձգնէին։ Ղեբսանդր որ անդստին ի ժամմանակ ամսի գեղանչոյլ հրոյն վառեալ՝ ցանկայր առնել անուն քաջութիւ, և մի վրիպեցուցանել գյոյս հօր իւրոյ, առ որոյ մարդիկքն՝ նախկին ընդ կիրթ զօրավարութեան եկեալ, ցուցաբ ի Ճակատու անդ Ճարտար որպէս հինաւուրց զօրավար, և արի որպէս առաջ սպայ պատրաստական ի մահ։ Նա զգուշդն սուրբ ընտրելոց թեբացւոցն երկար և հզօր պատերազմաբ եհերձ. և այլ զօրք՝ որ էին զնովաւ, օրինակաւ նորա խրախուսեալ խորտակեցին զայն ի սպառ։

Պոլիէնոս. խմբ. Համառ. Ջ։

Իսկ հայրն էւս, զի մի քան զորդին խոնարհ երևեսցի, յաջում թևի հարկանէր ուժգին զաթենացիս, և դրդուեցոյց զնոսա, և յետս ընկրկեաց. այլ նորա անդրէն քաջալերեալ զնախկին տեղին կալան։ Եւ [illegible]ւսիկղէս՝ մի յերկուց զօրավարացն՝ հերձեալ զդուստրատակ մահկեդոնացւոց, և որպէս բռնադակեալ զյաղթութենէն լի յանդուգն վստահութեամբ գոլեաց. փութացարուք, արք զինուորականիցք իմ, ձեպեսցուք մինչև ի Մակեդոնիա։ Իսկ երբև ետես փիլիպպոս զաթենացիս՝ զի փոխանակ յօգուտ արկանելոյ գյաջողութեն և հարկանելոյ զնշաղանգ իւր ի կողաց, սաստկագոյն զայլ գումարտակսն հալածէին, ասէ անխռով. Ցգետ են աթենացիք

յաղթութիւն։ Այլ վաղվաղակի պատուէր ետ փաղանգին ընկրկել՝ ի մի՛ ի բլրոց, և՝ ի ցրուեալս խառն՝ ի խուռն գՀետ գնդացն՝ զորս Հերձին, յարձակեցաւ փաղանգաւն, և յետ կուսէ և առ՝ ի կողմն կուսէ Հարեալ՝ վանեաց գնոսա։ Ընդ որս և Վեմոմեթեն զէնըսկէց լեալ՝ փախեաւ, քանզ քաղաքավարն քան պատերազմող։ որ իբրատս կեցուցիչս տայր Ճառիւքն, այլ՝ ի գործել գայնս՝ ոչ էր նմա անվնհեր արիւթիւն։ Այլ աւանդեն, զի՝ ի փախչել նորա կառեաւ տառատոն՝ ի մորենւոջ, և առ աչի ընդռնելոյ՝ ի թշնամեաց՝ աղաղակեր խնայել՝ ի կեանս իւր։ Այլ անկան՝ ի տեղւոջ անդ աւելի քան զՀազար այր յաթենացւոց, և աւելի քան զերկուս Հազարս գերեցան, ընդ որս և Վեմադէս Ճարտարախօս։ Ոչ ինչ նուազ զօրք և՝ ի թերացուցն կորեան։ Այլ կանգնեաց փիլիպպոս նշան յաղթութեան, և զոՀս գոՀացողականս մատոյց դիցն՝ վասն յաղթութեանն, և սպայիցն և զօրաց բաշխեաց պարգեւս ըստ իւրաքանչիւր կարգի և քաջուե։

Իսկ յետ յաղթութեանն եղոյց՝ զի առաւել դժուարին է յաղթել անձին, և պատրել զախտս քան զսպառազինն Թշնամիս։ Օ՛ի արար նա սպայիցն ընթրիս մեծաՀաց. և գՀետ Ճաշոյն՝ ոչ ինչ նուազ ուրախութեամբն քան գնուաղ զօրք և՝ ի թեթացուցն կորեան։ Այլ կանգնեաց փիլիպպոս նշան յաղթութեան, և զոՀս գոՀացողականս մատոյց դիցն՝ վասն յաղթութեանն, և սպայիցն և զօրաց բաշխեաց պարգեւս ըստ իւրաքանչիւր կարգի և քաջուե։

Իսկ յետ յաղթութեանն եղոյց՝ զի առաւել դժուարին է յաղթել անձին, և պատրել զախտս քան զսպառազինն Թշնամիս։ Օ՛ի արար նա սպայիցն ընթրիս մեծաՀաց. և գՀետ Ճաշոյն՝ ոչ ինչ նուազ ուրախութեամբն քան գնուաղ զօրք և՝ ի տեղի պատերազմին, և ոտնՀար լեալ՝ ի վերայ դիականց՝ որ ծածկեին զերկիրն, գՀրովարտակին՝ զոր սադրեաց Վեմոմեթեն՝ ի խրախոյս Հաւնաց՝ ի պատերազմն յայն՝ զսկիզբն նորա յերգ արկեալ նուագէր ըստ ոտին չափոյ. Վեմոմեթեն Պէտանաց ցոյց որդին Վեմոմեթեն ասաց զայս։ Այլ չար Թուեցաւ տեսողացն, զի անձամբ զանձն անարգեր և աղաբտեր գիտաւս իւր նուաստութեամբ՝ որ անպատեհն եր յաղթող Թագաւորի. այլ լուռ ևեթ կային։ Իսկ Վեմադէս Ճարտարախօս, աղատ՝ ի գերութենէ, նա յամենեցունցն՝ ի նոցանէ իշխեաց զանսպատշաճն եպերել, և ասէ. Ձեր արքայ, քաղդն Հաւասարեաց զքեզ Աքամենեան։ և չամաչիցես Ճերբսիտեայ նմանել։ Չարիական վերՀամարձակութենէն ընդոստուցեալ, սեծափեցաւ փիլիպպոս. և ոչ ինչ խոժռեաց ընդ Վեմադէս, յաւել ևս՝ ի սեծարանս և՝ ի սէր նորա, և լի արար զնա փառօք։

Ձայնի հետէ փոխեցաւ փիլիպպոս՝ ի մտացն և՝ ի բարուց, որպէս՝ ի յաՃախելոյ ընդ Վեմադեայ զգծացեալ, ասէ ումն՝ ի մտաենագրաց, և ընտելացեալ յատիկեցի քաղցրութենէն[1]։ Ձյատեաց զնմ գերկին աթենա-

1 Վեմադեաւ ընտելացեալ ատտիկեցի ընթրեցոյ։

Պլուտարք. ի կեան Ճարտ. բաժն. 845։

յի առանց փրկմանց . և բազմաց ՚ի նոցանէ պարզևեաց զգեստս , զի առաստութեամբն գյաղթէ պետութիւն աթեա-
Ե . 359 : նայոց զիւրև ածիցէ : Ապրիլ այլ ինն պանծագոյն և շա-
հեկանագոյն յաղթութիւն կալաւ , ասէ Պողիբիոս . զի ՚ի
մարտի ձակատելոցն միայն յաղթեաց քաջութեամբն ,
իսկ աստ բարութեամբն և գթութեամբ զնոմ քաղաքն
կալաւ , և զսիրտս ամենեցուն նուաճեաց : Այս նոքոգեաց
ընդ աթենացիս զառաջինն ուխտ բարեկամութեան և նի-
զակակցութեան , և խաղաղութեան արար ընդ բեռվտացիս ,
նստուցեալ գումդ հզօր պահակական ՚ի վերայ :

Պլուտ . յիսուս . Իսկ Իսողբատայ , որ քան զնմա հռետորս ժամանակին
Երատ . 857 : անուանին էր և հայրենասէր յոյժ , չհանդուրժեալ տե-
սանել զարև յետ կորստեանն և ամենայն՝ որ ՚ի ձակա-
տու պատերազմին առ Պերոնեաւ հասին հայրենեացն ,
և ընդ առնուլ զգոյժ պատերազմին՝ կասկածեալ զելից
յաղթութեն փիլիպպեայ , որպէս ասացաք , ընտրեաց յա-
զատութեն մեռանել՝ ձեպեցուցեալ զօրհասն անսուա-
ղութեամբ : Այլ մեռաւ նա ամաց խնամուն և ութից ,
Ի խլին մեզ զմտահնագրութեանց և զոմոյ նորա ՚ի դէպ
տեղւոջ բանք :

Դեմոս . ՚ի Այայ վնաս ահաւոր կոտորածին՝ որ եհասն Պ՚Աթենայ
Կոնէպ . 5 և 4 : և զօրհասական հարուածն ետ պետութեն ՚ի կործանումն
Պլուտարք . ՚ի անկանգնելի , անկաւ գԴեմոսթենեաւս . և ընդ հնչել
Դեմոս : գաժի դառնադէտ պարսուածին ՚ի սուգ ընտանեաց բազ-
մաց , յոյժ կասկածելի էր՝ զարհուրելոյ ամ-
բոխին բրդել ՚ի ցասումն ընդդէմ այնորիկ՝ որ պատ-
ճառս իմն ահագին վշտացն էտ . այլ նա տակաւին ՚ի
խորհուրդս Դեմոսթենեայ ապաստանեալ , խրատուք նո-
րա կարգեաց զզգուշութիւնն՝ պահակապահս կացուցեալ ,
կանգնեալ ղպարիսպս , և խրամն հատեալ . և զնա ինքն
ամբարտաւետ և ոստիկան ՚ի վերայ ամրութեն պարսպացն
կացոյց : Որ առաստութեամբ բազմաւ նորոգեալ զպա-
րիսպս , արար իւր փառս մեծ . և պակ ոսկի աղաչանօք
Կտեսիփոնի տուաւ նմա յիշխանութենէ , վասն պար-
գևիւն զոր արար հասարակաց՝ գանձս բազումս տուեալ
յիւրմէ ՚ի հնուլ զթերին ծախուց ամրութեն :

՚Ի սմին ժամանակի զհետ պատերազմին Պ՚Երոնեայ՝
ատենաբանք հակառակորդք Դեմոսթենի միաբանեալ
ընդդէմ նորա , ձգեցին զնա յատեան՝ դատափետել
զնա : Պ՚Այլ ժողովուրդն արձակեաց զնա անպարտ յամ
բարբանաց և յամբաստանութենէ . և յաւել նա առ-
նել նմա պատիւ՝ որպէս չէր արարեալ այլում . քանզի

փառք Հայրենասէր նախանձուն և հաւատարմութեանն նո-
րա և կարի չարաց արկածիցն յաղեցեալն ։ Ի՝ Թէնացիք,
ժողովուրդ յողդողդ և յեղակիտ, և որ զինաս սխալա-
նաց հեղգութեանէ իւրեանց յայլս արկեալ՝ զանպարտուն
պատուհասեալին, յորոց ձեռս դանդաղութեանց նոցա ձախո-
ղէին ստեպ իրք, ասա՛ ի պատկերի զ՝Աեմոնէն՝ի մեծի
նեղութեան աշխարհին՝ որում նայն Թուեր պատճառ,
փառս մեծ ընծայեցին Հարտարութեանէ և ուղղութեանէ նո-
րա . և խնամուն և վեհական գործոյն խոստովան իմն
եղեն գյանցանս իւրեանց, և զղջացան՝ զի անփոյթ ա-
րարին վաղագոյն լսել խրատուց նորա ։

Ոչ այս միայն, այլ և զոսկերս անկիւղոյն առ՝ Պլուտ. անդ։
րոնեաւ եռուն ածել զ՝Աէնս՝ի Թաղուսի, և զ՝Աեմոնէ Դեմոս. ի
Թէն ընտրեցեալն՝ի Հառ դամբանականին քաջաց նահա- կեսարի. 519։
տակացն, զկայեալ յայտնապէս՝ զի ոչ գնա ինասպարտ
համարէին Հախող պատերազմին, այլ՝ի դիպն տեսուածէ
լեալ զայն՝ որք իշխեն պատահարաց . և պարզագոյն այս
գշիրմաւ արի նահատակացն արձանագրեցաւ ։ Ոչ է ար-
ձանագրին օրինակ այս .

ՈՐՈՑ ԱՒՏԱՒ ՉԻՆ Ի ՎԻՐԱՑ ՀԱՅՐԵՆՆԵԱՑ,
ՀԱՒԱՆԵՑԻՆ ՀԶՕՐ ԲԱՁԿԱՒ ՉԻՆՆ Ի ԲԱՑ,
ԱՀԵՂԱԽՐՈՒԵՑՐ Ի ՀԱԿԱՏՈՒ ՆԱՀԱՏԱԿԻՑ,
ԶՍԱՆԴԱՐԱՄԵՑԸ ՆԿԱՏԵԱՒ ՅԱՂՔԱՆԱԿ .
ԶԻ ՄԻ ՀՆԱՂՆՆ ԸՆԴ ԽՈՒՄԱՑՆՈՑԸՆ ԼՕՌՎ,
ԿՐԵՍՑԻՑ ԶԴԱԺԱՆՆ ԾԱՌԱՑՈՒԹԵԱՆԸՆ ԴՈՐՈՎ.
ՉՆՈՑԱ ԿՈՉՈՂ ՄԱՐՄՆԱՑ ՅԻՒՐ ԾՈՑ ԾԱՆԿԻ ԱՍՏ
ՀԱՅՐԵՆՆԻՑ ՀՈՂ, ԱՅՍՊԻՍ ՎՃՌԱՑ ԱՐԱՐՁԱԴ.
ՈՒՂԻՂ ԳՈՐԾԵՆ ԴՒՐ ԶԱՐԵՆԱՑՆ ԵՒ ԱՐԴԱՐ,
ԽՈՒՍԵԼ Ի ԽՍՏ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՈՉ Ի ԿԱՐ ։

Ի՝այց Ի՝աքինէս ոչ դադարէր՝ի կշտամբելոյ զ՝Աեմոնէ Դեմոս. ի
Թէն վասն արկածից մարտին . որում նա զայս արձար կեսար. 505։
պատասխանի առնէ . կշտամբեսջիր զիս խրատուըն՝ զոր
ետուս , և մի արկածիւքն զրպարտեր . զի չայջողուԹէ և
կատարած իրաց՝ի վերին տեսուԹենէն է , այլ ըստ իրաւ
տուցն դատելի են միտք խրատուԹին ։ Ի՝Թէ դէպք չա-
ջողեցին Փիլիպպեայ՝ի չաղԹուԹի՝ մի ինձ մեղադրես-
ցի , զի զչաղԹուԹի՝ երկնից է տալ , և ոչ իմ . այլ եԹէ
ոչ ուղղուԹիւք և խնամով և անխոնջ փուԹով՝ի վեր քան
զիմ կար ձգնեալ և զայմ հնարս իմաստուԹէ մարդոյ՝ի
կիր արկեալ՝ խորհուրդս քաջուԹեր վէՀ և արժանի ա-

Թէնացւոց և կարևորս ազգեցեալ, ցոյց լինէ զայն, և ամբաստանեաց զնս, և մի խնայեր։ Այլ ապա զվսեմ և զբարիական ձև բանին ի կիր առնու՝ որ գեղեցկագոյն հատուածն համարեալ է յամ Ճառին, և ի յայտնագոյն տեսիլ զգեղ նորա ածէ զ ունկնսս։ Օ ի՛ ի տալ Աթենացւոց՝ զի ոչ սխալեցին ի պատերազմել ընդ փիլիպպէայ, ոչ պարզաբար յօրինակ ածէ զքաջազուն՝ որ ի նոյն պատճառս ի Մարաթոն և ի Սալամին և ի Պղատիէս նահատակեցան, այլ այլ իմն ազգ ձևացուցանէ զանն. և յանկարծ որպէս թէ ածարեալ, ասէ Պղնձ գինոս, և ազգեցեալ Հ՚պղոմնէ՝ երդնու ի քաջազօր առիւծանն Հրակղէս, և ասէ. Ունէ, քաջդ, ոչ. երդուեալ յարիագունդ նահատակն՝ որ ի Մարաթոն և ի Պղատիէս ընդ ցամաք, և ընդ ծով ի Սալամիս

և հայրենասիրութիւն անչէջ, և անեղծ առաքինութիւնն և ստոյգ փառաց ախորժակք։

Ի նմին ամի պատերազմին Վերոնեայ, երկեամ մի յառաջ քան զմեռանել Փիլիպպէայ, Լաքինէս նախանձեալ ընդ փառս ոսոխին՝ խնդրէր եղծանել զհրուանտակն, որով պսակ ոսկի ընդհեղին նմա աթենացիք. և ամբաստանեաց ի Կաէսխիոն զԱեմոսթենէս, այլ յետ եօթանց կամ ուրեմն ամաց ի հինգերորդ կամ ի վեցերորդ ամի թագաւորութեանն Ալեքսանդրի եղև գատաստանն. զոր աստ ոչ ըստ կարգի պատմեմ, այլ վասն անընդհատ պատմելոյ ապա զկրս Ալեքսանդրի։

Եղև հանդոյն այնմ գատաստան բազմահանդէս և ցանկալի ի լուր. զի յայմ կողմանց անդր ընթանային, և ոչ վայրապար, ասէ Կիկերոն՝։ Ի զինչ քան զայն պայքար երկուց ձարտարախօսացն ցանկալի գոյր ի տեսանել, քանզի երկաքանչիւրն գերածայրեալ էր յաղգի իւրում. և բնիկ հանձարովն և մանաւանդ արուեստին, և առաւել ևս անհաշտ գժտութիւքն և անողոքելի ոխութիւք գրգռեալ էին ոսոխ ընդ ոսոխի։ Այս կրկին ձառք յայտ ժամանակի ընդ գլուխս գործոց նախնեացն համարեցան, մանաւանդ Աեմոսթենին, Կիկերոնի զոր ամբաղձ թարգմանեալ էր, որով յայնմի գատաստան նորա զայնմանէ. այլ յարկածից ժամանակաց՝ նախադրութիւն նորա միայն գերծաւ, որ գլուխ ձառին կորուստ առաւել աւաղելի առնէ։

Ի բազմապատիկ գեղ երկուց ձառիցս՝ որ յամ մասամբ գեղեցիկ են, երևի ինձ թերութիւն իմն ոչ դուշնաքեայ, եթէ օրէն իցէ զաւագ արանցն շաղապրածս քննաբանել. անուուեր թշնամանքն առ միմեանս՝ որ զպայծառ գեղ նոցա աղօտացուցանէ, և որ ինձ թուի հակառակ օրինաց բարուոք և ողջամիտ ձարտարախօսութեան։ Օնոյն և զԿիկերոնի ձառիցն ասեմ ընդդէմ Վատոնիոսի։ Օայն ոճ և յօրինուած եպերական՝ հակառակ վարկայ բարւոք ձարտարախօսութեան. զի որ ինչ ի յայսմանէ և ի վերիժինդրութիւն ձառք սադրին՝ կեղակարծ են դատաւորաց, իսկ կորովի և անպարտելի փաստք զդուշեաւ և անզայրանալի ձառիւն՝ ողոքեն զսիրտ և խելամտեցու-

1 Ցայմ ելեալոյ անդր ի դա- զնայրագոյն ձարտասանին ի տատանն ասեն խռնեալ ամբոխ ծանր դատաստանին գիմեայ և բաղում, զի զինչ առաւել ցան- ոխերիմ վէձ։ Կիկ. յաչ. 1ՈՀՈ կալի էր ի սեսել և ի լուր, քան ձարթ. էբ։

ԱՄԱՀՆՈՒ ցանկն, և՛ հաւան ածէն. ոչ զօրուԹիՂ իրաւանցն միայն, այլ և վասն մեծարելոյ նուաւաՀ ՀարաւարախօսուԹեան։

Ոչայց ԹԷպէտ և ժամանակն կարի՛ դեպ էր Հաբէ. նեայ, զի մանկաՀնացեալն կողմն որոց միշտ օգնական եղև՝ Հզօրք էին յոյժ ա՛լ ԹէՀնս, մանաւանդ յետ կործանելոյ Ծէբայ, սակայն Հաբէնէս պարտեցաւ, և յանդուգն ամբաստանուԹիՂ զարդար վըճռոյ ելոյծ զըպարտըզն աքսորմամբ։ Ու չորեաւ նա բնակել՛ի Հռոդոս, և անդ դպրոց ՀարաւարախօսուԹեան կանգնեաց, որ ընդ դարս յոլովս փառաւոր պայծառանայր։ Ու նախ քան զամ՛ դերկոսին ատենաբանուԹիւնն՝ որովք աքսորեցաւն՝ ընԹեռնայր աշակերտաց իւրոց՛ի դաս, և որ լսէինն գովէին յոյժ գնորայն. իսկ՛ի լսել զ՚ԱՀմանԹենին՝ կրկին աղաղաւաւ ծափս Հարկանէին. և անդ յայնժամ ասաց Հաբէնէս, զզարմանալին բան՛ի բերան ոսոխի և նախանձորդի, ԹէՀ գ՚ինչ ապա մնայր ձեզ առնել՝ եԹէ նմին ինքեան ականջալուր լինէիք։

Ու ոչ ՎԱՀմանԹենէս յաղԹուԹիՂն զեղծաւ. այլ՛ի մեկնել Հաբէնեայ՝ գնաց՛ի Հռոդոս, զՀետ նորա եր. ԹեալՀ արծաԹ բազում՝ ետ նմա բռնի՛ի պարգև. որ յանակնկալ պահուն յոյժ ախորժելի էր. և գոյեաց Հաբէնէս. Ի՚ՀաղՀ զրկելումն՛ի Հայրենեաց, զի և բարեկամն այլոցը ոչ գտանեմ ազնուականս Հանգոյն ոսոխիս իմում՛ի Հայրենիս [1]։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

ՓիլիպպեայՀ յաղԹարձողըն Ի՚ՄիԹրիդատեայ կայսրացանել զինն սպարապետ Հռոմայ ընդդէմ Պարսից, և կալՀ՛ի ձեռ նորա երկուասանն. և վասն առ փնին նորա ազիւացն, և արքայՀել զՀղէմոնէս և այլ ինն առնել. և վասն Հարանեցոյն գծին Ղէնոպատրայ դստերն նորա ընդ ՂէՀտանդրէ արտաչին եղբարցոյ, յորոմ սպանան Փիլիպպոս։

3667. 337 Ո՚վՀլաղայ մարԹ իսկ է ասել՝ ԹԷ՛ի ՎԻերմնեայ պատերազմին եղև ընդ Լծով։ Ու յոր Պարսք բազմաբիւր զօրաք ընդունայն ջանացան՛ի Պղատիէս և՛ի Ա՚ազոմիս և՛ի Ա՚արաԹոն, Ա՚ակեդոնիա երիւք բիւրովք

1 Ջայս ԼԷԽ՛ի մաՀնագիսն Դիւ. ՆԷւ և նմա վէՀ երէն ամն ապրուԷւ Հռոմէնի վարուխն առաջեալ՛ի Հաս. ՛ի Հայրենեացն։

վձարեաց։ Փիլիպպոս ՚ի սկզբան Թագաւորութեանն իւրոյ վանեալ և ցրուեալ և զկնի[ն]կէց արարեալ զեհեմաիս, և ապա զհոգս ազգս Իլլադայ՝ զկնէս դաւով զայլս բռնութեաբ տուաձեալ, և իրաւարար եղեալ նոցա, որք այժմ պատրաստի խնդրել զվրէժ անիրաւութեացն՝ զոր խաժք ընդ Իլլադայ արարին, և ձգնի կործանել զտէրութիւն նոցա։ Օ երախայրիս նորոգ յաղթութեանն՝ յոր ՚ի բա- Դիոդ. ԺԶ. զում ժամանակաց անթարթ ակամբ նկատեր՝ ընկալաւ 479։ յաչսարհաժողովն Հնունաց, կացեալ սպարապետ նոցա ընդդէմ Պարսից։ Իբր այնու իշխանութեբն կազմեցաւ ՚ի վերայ հզօր պետութեանն։ Իբր զկնէս ՚ի զօրացն տուեալ Թագաւորն և Պարմինիոն, զի եր քաջայոյս ՚ի կորով և ՚ի խորհրդակատութեբ նոցա, ՚ի փոքրն Ասիա արձակեաց զնոսա։

Փիլիպպոս զամ ինչ ուղղեալ և յարդարեալ զիրս աշ- Պլոպ. յԱ- խարհին, իսկ առ անկն լի եր հոգովք և տրտմութբ. զի 669։ հերձուածք և աղմուկք վեր ՚ի վայր առնէին զարբուներն։ Վանգի ՚ի դժնեայ բարուց Ողիմպիայ դշխոյին՝ որ դիւրաւրանաձն եր ՚ի բնէ և բարկացող և ոխակալ՝ հանապազ վէրք և կագք լինէին, և տաղտկացեալ եր ՚ի կենացն Փիլիպպոս։ Դարձեալ և ըստ արժանի դրժա- նացն իւրոց ասէն զնմանէ դրժանս կրեալ ՚ի կնոջէն, մին- չև արձակել զնա. այլ թէ արդարև եգիտ ինչ ՚ի նմա, թէ ՚ի յողդողդ և ՚ի յեղյեղուկ բարուցն արձակեաց զնա, ոչ գիտեմ. բայց ընդ այն նախատինս մօրն սրտմտե- ցաւ Ալէքսանդր, որ կանխաւն իսկ բազում իրօք զրժդ- մեալ էր։

Իսկ Փիլիպպոս արար իւր կին փոխանակ Ողիմպիա զԿլէոպատրա դուստր քեռ Պտտաղոսի. և եր օրիորդն կարի մատաղ, այլ ՚ի հրապուրանաց չքնաղագեղ կեր- պարանին չկարաց ժոյժ ունել Փիլիպպոս։ Իբր ՚ի ինջոյս հարսանեացն ՚ի կինկերդուս՝ Պտտաղոսի մօրեղբօր նորա հարսինն ուշ ՚ի կուրծս անկեալ, ասէ. Պարտ է մանկե- դնացուց խնդրել ՚ի դից հարազատ զոք Թագաժառանգ։ Ալէքսանդր դիւրագրգիռ ՚ի բնէ՝ զայրացեալ ընդ Թշնա- մանադիր բանին, ասէ. Ես անօրէն, աղջկորդի ուրեմն իցեմ ես։ Իբր եհար բաժակաւն զգլուխ նորա։ Իբր ՚ի կրկնել նորա դարձեալ, սաստկացաւ վէճն։ Իսկ անդ ՚ի մէջտեղ երախանին Փիլիպպոս ընդ աղմկել խնջոյիցն զարբեալ, և զի կաղն իսկ եր՝ մռնացեալ զայն, դիմեաց սուսերամերկ ՚ի վերայ որդւոյն։ Ալ դեպք ՚ի բարի յաջողելոյն զլծել նմա, և կոչնականացն ժամանել ՚ի

մէջ անկանել նոցա։ Կայր Պղեքսանդր զժուարողբելի գտաւ քան զկայրն. և ծանրացաւումն լեալ ընդ դժուգակ նախատինսն, թէպէտ և զկայրենի և զարքունական մեծարանաց պատուս առաջի առնէին նմա, նա զվերեժ քինաւն դառն հեգնուԹիւք ելոյծ, և ասէ. Կարւոք յուսացեալ էն մանկտւոյնիք գործել Յունոպայ աշխարհն անցս Ասիա քաջ զօրավարաւն, որ չհարաց սեղանոյ ի սեղան առանց վտանգի մահու անցանել։ Նէ յետ այնորիկ մեկնեցաւ ընդ Պղնմպիայ մօր իւրում, և ի ծանր նախատանացն զերծուցեալ՝ ած զնա Ասպիրոս, և ինքն Էանց ի Իւրիկէ։

Ի ժամանակին յայնմիկ Պեմնարատ կողնԹացի, որում ընդ փիլիպպեայ ասպնջականուԹենէ իրք էին, և բազում ՀանդարձակուԹիւն ունէը և մուերմուԹիւն ընդ նմա, եկին եՀաս յաբքունիսս նորա։ Նէ ողջունեալ, Համբուրեցան ընդ միմեանս. և ապա եՀարց փիլիպպոս զՀոգնոյ՝ եԹէ կեաՀն ի բարւոք միաբանուԹենէ։ Նէ Պեմնարատ պատասխանի ետ և ասէ. Էիրաւի զմիաբանուԹէ Նէլադայ կասկածես, տէր արքայ, զի լեր զարքունիդ հերձուածողք և խռովուԹիւք։ Խելամուտ եղև Թագաւորն կշտամբանացն, և սՀաՀփեցաւ. և սորոյցեալ՝ դարձոյց առ ինքն զՊղեքսանդր, զնոյն ինքն զՊեմնարատ առաքեալ յողոքել զնա։

Կայր փիլիպպոս գէտ ակն ունէը Հանապազ յաշխարհակալուԹիւն Պսիոյ. և ի վարանս մեծի խորհրդոյն՝ զգիտն եՀարց զելից պատերազմին։ Նէ դեղփական Հարցուսն ետ պատասխանի, Թէ պսակեալ է զուարԹին օր. Հասական և մեծ ի գենուսն։ Նէ զերկիսոս պատգամն առանց երկբայուԹենէ բարւոյ մասին վարկաւ, ընդ որ երկմտեալն պարտ էը։ Նէ փուԹացեալ արար խաղաղուԹեն յարքունիսն, զի անդադար լիցի նմա խորհել յարշաւանն ի Պարսս, և ուշ ունել ի միայն յաշխարհակալուԹեն Պսիոյ։ Նէ մատոյց Հաչակաւ զոՀս գիցն, և պատրաստեաց առնել Ասիա քաղաք Մակեդոնիոյ զՀոսանիս Պղեսպատրայ գտաւ իւրոյ ընդ Պղեքսանդրի արքային եպիրացւոց, եղբօր Պղնմպիայ կնոջ իւրոյ, մեծաւ անՀնարին սպասուք։ Նէ յամ Նէլադայ արս եւ բև եղիս անդր Հրաւիրեաց, և արար ընդ նոսա զամ սէր և զպատիւ՝ փոխանակ զի սպարապետ զնա ամ Յունաց կացուցին։ Նէ ի նախանձ մտեալ ընդ միմեանս ազգք առաքէին նմա պակս ոսկիս, և նախանձաւոր քան զամենեսին եղեն ՊԹենք։ Կեոպտղոմեայ քերԹողն ողբեր

գումէ՝ ի հարամախտ արարեալ էր զվիճերան կոչեցեալ յոր զՓիլիպպոս կերպարաներ յաղթոյլ Դարեհի և աշխարհակալ Պարսից։ Յակ Փիլիպպեայ խնդութիւն զաւետաւոր գուշակութիւնն լուեալ՝ որ հրամանին ևս պատասխանեայ դիցն ի գեպ գայր, ոչ ևս ընդ յաղթութիւնն երկմտեր։ Այլ ի վաղուն յետ կոչնոցն եղեն տօնք խաղուց և տեսլեանց, և զի այսօրիկ ի կրծոս համարիկն՝ աճան անդր հանդիսիս և պարտամարքը և պատկերք դից երկոտասան հրաշակերտք։ Այլ այլ ինն պատկերք Փիլիպպեայն դիցատիպ գրոշմեալ, ծածկեր զիտառս աստեղուցն։ Իբրև ժամ եղեալ՝ եկ նա յասպարանիցն պայծառագեայ, և սիգաձեմ ի Թատրն գնայր՝ ուր ամբոխ բազում յոյժ մակեդոնացւոց և օտարաց ինչպին նմա անժոյժ ցանկութիւք. և ամ բազմութիւնն ձայնիւ ցնծութիւք ծափս հարկանէին։ Այլ Թիկնապահքն առաջի և զկնի երթային ի հեռուստ, որպէս պատուիրեալ էր նոցա, զի երևելին տեսողացն կացցէ Թագաւորն, և չայսնի լեցի ամենեցունն՝ զի ամբագոյն զնովաւ պահ ունէր սէր եւլագացոցն։

Այլ ամի սպասուց տօնիցն և շքոյ հարսանեաց վաթ ձան եղև սպանութիւք Թագաւորին, և սպանաւ վասն ոչ առնելոյ զերաւունս։ Ի՝անգի յառաջ ժամանակաւ Այտտաղոս ի գինեբերս և ի շուայտութիւք գնծեցոյց Թինամանօք զՊաւսանիաս իշխան՝ պատանեակ մակեդոնացի։ Այլ նա ի բազում ժամանակաց ոխայր վասն դառն նախատանացն, և սրտառուչ Թախանձանօք վրէժխնդրութիւն ի Թագաւորէն հանապազ հայցէր։ Նայց Փիլիպպոս առ ի չարտմեցուցանելոյ զԱտտաղոս զքեռւի Ալէհպաս տրայ՝ զոր փոխանակ Ոլիմպիայ հաս կնութիւն, չսէր բռ զգոյն Պաւսանիայ. այլ առ ի սիրփել գնա և առ ի ցոյց մեծարանաց և վստահութիւն ընդ աւագ սպայն կացոյց գնա։ Այլ Պաւսանիաս վրէպեալ ի խնդրոյն՝ զղայրոյնի ի մտեգնութիւն փոխեաց, եղ ի մոմ ի դատաւորէն զվրէժն լուծանել, և սրբել զնախատինս իւր՝ չաղախեալ ի սոսկալի տիրասպանութիւն։

Որ զանձն ի մահտանէ չխնայէ՝ հզօր և ահագին է։ Պաւսանիաս սպանութիւք խորհրդոյն պատեհ վարկաւ զօր մեծի հանդիսին, յայսմի ինն կամեցեալ առնել ա-

ԱՄԱՐՆԴ առաջի յոդնախոսմբ բազմութիւնն զվերեժինդրութիւն, և կշռել զհատուցումն նախատանացն զոր կրեաց, և զինքն զթագաւորն պատժապարտ առնել, զի եթէ զնմանէն առ ի չլսելոյ զբողոք նորա, և ոչ խնդրեաց զվերեժ արդարութիւն։ Այլ իբրև միանակ հեռի ի թիկնապահացն երթայր, դիմեաց ի վերայ, եհար զդաշոյն ի սիրտ նորա, և տապալեցոյց զնա յոտս իւր, իբրև այն ինչ անգրկին նորա բերեր ի թատրն, որպես Պետրոս զհրեշտակն նէ։ Իբրեւ զբերծաներ անվտանգ, այլ յարկածէ ինն խափանեալ՝

3668 . 336 անկաւ ի ձեռս, և գիշատեցաւ։ Ի յս կատարած եղև փիլիպպէայ. և մեռաւ նա ամաց քառասուն և եօթանց, թագաւորեալ ամս քսան և չորս, յամին յորում և Յուստաչէս Պիզբոս արքայ Պարսից մեռաւ։

Ագաթ. Ժդ. գէմ. կեսէէ. 440։

Պետմոթենի գիտացեալ ի ծածուկ զմահ փիլիպպէայ, ի խրախուսել վաղագոյն զաթենացիս՝ յանդիման եղև յատեան ժողովոյ զուարթագէմ, և պատմեաց տեսիլ ի գիշերին յայնմիկ տեսեալ զի բարուրեցի մեծ պատրաստեր նոցա։ Այս հասին ընդ հուպ սուրհանդակք ազդեսցեալք մահուն փիլիպպէայ. և լցան աթենացիք անյաղ և անպայման խնդութեաւ առաւել քան զդէպն, յորդորեալք և ևս ի Պետմոթենեայ՝ որ ծաղկապսակ և պայծառազգեաց ելեալ ի հրապարակ, Թէպէտ և դեռ և ևս եօթն աւուրք էին ի մեռանելոյ դատերն նորա, խրատէր զոյս գոհացողականս դիցն վասն աւետեացն մատուցանել, և հրովարտակաւ պսակ ոսկի շնորհել Պաւսանիայ՝ յորմէ ձեռն սպանութեանն գործեցաւ։

Ի յստակօր և Պետմոթենն և աթենացիք հակառակ իւրեանց բարուցն գործեալ, չգիտեմ ընդէ՞ր նշաւակեցին զինդութեանն իւրեանց ընդ եղեռն տիրասպանութեանն, զվայրապար նախատինսն յանձն առեալ, որպես քնաւ յիմ բարուեցէ և ի փառաց ցանկութենէ կասեալք, և ոչ դոյզն ինչ քաղաքավարութեաւ կեղծաւորեցան։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Ա.բջանի չէլաւոյէն էբէ և բանի փիլիսոփայէ, և նէյաբաքէր նորա ետ ընդ բաբայ խոսան։

Ի վէպս արանց աւազաց դուշնաքեայ իրք և բանք յայտնագոյն ընկարագիր նոցա տան՝ քան պայծառ մեծագործութիւնք։ Զի ի գործել զմեծամեծս՝ ձեւանան և այլակերպին նոքա յաձախ, և առ ի տեսիլ գործեն. իակ յայլն ընդելաբար խօսին և գործեն առանց աբուեստի և հնպատանաց։ Տրթուռհյլ բաղում ինչ յիբայ և ի բանից փիլիսոփայ զարժանին մատենագրեալ հետազօտեալ ժողովեաց. մանաւանդ որ ինչ սեփականագոյն տիպք նկարագրին նորա էին։ Ա.յլ զի ինքնուրոյն իրք են և առացուածք, չկարեմ ոձով զայնոսիկ կարգաբանել։

Փիլիպպոս Թէպէտ և սիրեր զմարդահաձոյս և վարձատրեր զնոսա, մինչև զկնդաստիդոս ոմն ի Մակեդոնացիս վասն մարդահաձութեան Թագաւորը անուանէաց, այլ և ոչ միշտ զչնմարտութեի ատեայր։ Զի և Ա.քիստոտե- լի խրատուցն յաղագս բարւոք առաքինորդութեե մտաբերիլ լսեր, և չնորհ ուներ զնարտարախօսացն աթենացոց, որոց կշտամբանօքն զղաձածանս իւր ուղղեաց։ Այլ եր ոմն առ նմա վարձկան յիշեցուցիչ, որ հանապազ նախ քան զաղերս ժողովրդեանն, ասէր ցնա. Ցիշեա, փիլիպպէ, զի մահկանացու ես։ Այլ ոչ խոժոռեր ընդ խիստ և ընդ թշնամանագիր բանս, մանաւանդ ի կշտամբողականս ախտիցն, որ ոչ փոքր զարմանք էն. զոր առաքինութեի մեծ կոչէ Պևենեա ի բարւոք առաքինորդութեի[1]։ Ընկալեալ երբեմն գՀրեշտակս աթենացիս՝ որք բողոք ունէին զնմանէ, վասն թշնամութեե ինչ իրիք գործոյ, եհարց զնոսա՝ թէ զինչ սպաս կարեմ մատուցանել. և գՀեմոքարէս պատասխանի եառ և ասէ. Օ՛ր սպաս մեծ մատուցանել կարիցես՝ քան թէ ի խեղդ երթայցես։ Ընդ որ ՚ամ առեանն յիրաւի ցասեան, այլ Թագաւորն ասէ անխռով. Արթայք սասցէք տերանցդ յինէն, զի որ ըմբռստանան զայդպիսիսդ բարբառել՝

Ա.քիսո.ի.ն։ Պլուտ.ի հան. ճառք. 177։ Ելդան. շ. ք.ե. և ք.ե.ծ։ Սենէ.ք.ի։

1 Եւ այլ իմն ուղղութիւն էր բաւիղն յայնութիւն Թագաւորն՝ համբերել թշնամանաց, զոր բուեան։

անբարեաւանդագոյնք են և անխաղաղասէրք, քան որ նե-
բելովին լսիցեն ։

Ի վաճառս գերեացն անդ երբեմն և ինքն անձահձ առ-
ընթեր կայր . և մի ի գերեացն մատուցեալ՝ ասէ ցնա
յոհնկասէ . Ո՞րկ զքաղնցս քո ։ Եւ նա ասէ . Ո՞ծանէ-
ցիք զայրդ զայդ , ոչ գիտէք՝ թէ բարեկամ է ինձ ։ Եւ
յորժամ ամ աւագանին յորդորէին վրէժ խնդրել ի
պեղպոնեսացւոց փոխանակ ապերախտութեն, զի այսն
արարին զնա հրապարակաւ յողիմպիական խաղսն , նա
պատասխանի ետ և ասէ . Եթէ ընդ երախտեաց ծաղր
արարին զնա , իսկ զի՞ արացեն փոխարէն չարեաց ։ Եւ
յորժամ սպառաւորքն խրատ տային նմա՝ հալածել ըզ-
չարախօս ոք , ասէ . Եւ հալածիցեմ զնա , զի ընդ ամ
ուրեք երթեալ չարախօսեսցէ զնովէն ։ Եւ այլ երբեմն
խրատ տային հալածել զաւազ ձգ՝ զի յանդիմաներ զնա ,
և ասէ . Ո՛չ տեսից՝ գուցէ ոչ վայրապար յանդիմանէ
զնա ։ Եւ գիտաց՝ զի այնն այն ոչ ինչ չահեալ յարբու-
նուստ՝ ի կարօտութէ կեայր , արար նմա պարգեւս ,
և զկշտամբանսն փոխեաց ի գովութէն , նմին իբրև ասէր՝
թէ ի կամ Թագաւորի է սիրելն լինել և ատելն ։ Եւ
որոց Թախանձէինն զնա՝ խնայել իշխանութէն իւրով ի
պարտաւորսն ոք , որ բամբասելոցն էր դատաւնիքսուն , ա-
սէ . Լաւ է նմա լինել ի բամբասանս քան ինձ ։

Եւ կինն ումն պարտաւոյլ , մինչ ի խրախճանաց յարու-
ցեալ գայր Թագաւորն , աղերս արար և խնդրեաց ի
նմանէ իրաւունս . և մերժեալ ի նմանէ և պարտաւո-
րեալ , ասէ անխոռով . Ո՛չ բողոքեմ ։ Եւ Փիլիպպոս
ասէ . Եւ յո՞ բողոքիցես ի վեր քան զԹագաւոր ։ Եւ
կինն ասէ . Ի Փիլիպպոս նօթի բողոքեմ ։ Եւ անխոժո-
լուեալ զպատասխանին , որպէս զգօն և զգաստ Թագա-
ւորի վայելէր , քննեաց վերստին զդատաստանն , և ծա-
նեաւ զանիրաւութէնն , և արար նմա իրաւունս ։

Եւ աղքատ ումն կին գայր առ նա ստէպ՝ յանդիման
լինել , աղերս մատուցանել , խնդրել զարդարութէն . և
մերժէր զնա Թագաւորն՝ որպէս ոչ ունելով պարապ ։ Եւ
կինն վճատեալ ի յաձախ մերժելն , ասա ի միւմ
հնուագին զայրացեալ՝ ասէ . Եթէ ոչ ունիս պարապ առ-
նելոյ իրաւունս , և մի Թագաւորեր ։ Լսելեամբ եղև
Թագաւորն զօրուէ սրտառուչ բարբառոյն՝ զոր ցասումն
արդար տառապելոյ հնոյն տայր բարբառել . և ոչ ինչ
գժգոհեալ , արար նմա վաղվաղակի իրաւունս , և զամ-
նեցուն յայտ հետէ մատուցելոցն զաղերս ընդունէր ։

Պիտաց՝ զի ոչ ինչ խոիր է ընդ Թագաւոր և ընդ դա-
տաւոր . զի է աթոռն ատեան , և բազմելոյն ի նմա գե-
րագոյն իշխանութիւն է , և պարտք անհրաժեշտ՝ առնել զի-
բաւունս , և ոչ չնորհիւ՝ այլ հարկաւ և ի պարտուց ի-
րաւ առնել ժողովրդոց , և ծախել զկարևւորս ժամանակն
յայն . զի օրէնն է նմա օգնականս ունել իշխանութեն՝
այլ ոչ ի նոսա զիշխանութեն Թագուլ , և չմարթի զձա-
գաւորութեն առանց դատաւորութեն ունել Ի յամ ասի
ի մի յայն պարզ և ի բազմահանձար զրոյց կնոջն՝ մի
Թագաւորել , հասու եղև Փիլիպպոս :

Խնդրեաց էր բանից զաւետչականաց , և ախորժէր
ընդ հանճարաբանութեն , և ինքն ևս հանճարաբան էր :
Յոգեցաւ երբեմն զկոյրդ լուն , և վիրաբոյժն յաւելոյր
օր ըստ օրէ ինդրէր չնորհս ինչ . և նա ասէ . Օ ամենայն
չնորհեմ՝ զի զփողէ իմմէ ունիս : Նա զնաասպարտիոյ
երկուց աւանդէն ամբաստանեալ զիմմեանս առաջի նո-
րա յայլ և այլ եղեռն , և նորա զմին աքսորեալ և զմիւսն
կենդ նորա վարեալ :

Ինեկրատ բժիշկ զառանցեալ մնաց՝ կարծեալ զանձ
նէ թէ իցէ ինքն Ի յամաղդ , զրեր առ Փիլիպպոս այսպէս.
Ինեկրատ Պիոս առ Փիլիպպոս ողջոյն : Նա Թագա-
ւորն գրեաց պատասխանի . Փիլիպպոս առ Ինեկրատ ,
ողջամիտ լինել : Նա ոչ այս միայն , այլ և ի բժշկել
զզառանցանս մտաց նորա՝ այլ ինն ախորժական դեղ
կազմեաց : Օ ի արար Հայ մեծահաց , և սեղան ուրոյն
եդ նմա . և փոխանակ համադամից խուհնկս և հնդրուկ
հրամայեաց ածել առաջի նորա , մինչ այլք ի կոչնակա-
նաց զՀամէտն կերակրէին : Ինեկրատ զառաջինն ընդ
աստուածականն պատիւ ուրախ լեալ , մնացեալ զբնու-
թեն . այլ ապա առ քաղցին ուսեալ՝ զի մարդ էր , տաղտ-
կացաւ ընդ ածութեն , և խոժոռեալ՝ հրաժարեաց ի
ինջոյիցն :

Նա Ի Ինտիպատրեայ ի հազարապետէ իւրմէ յան-
դիմանեալ՝ մի կարի յերկարել ի քուն , փաղաքշելով
և մեծարանօք ետ պատասխանի , զի թէ ես ննջեմ՝ Նա
տիպատրոս արթուն կայ :

Հրեշտակք յամ Նլլադայ եկեալ՝ յանդիման լինել
նմա , և յերկար սպասեալ՝ զի յարիցէ ի քնոյ՝ քրթմընա
ջեին . և Պաւմնեան ասէ ցնոսա . Նա զի զարմանայք
թէ ննջէ , մինչ դուք արթուն կայք . զի և յորժամ

1 Ասէ յոյնն ՕՂՀԱՒՏՍ Ե ողջ լինել Ե ողջամիտ նշանակի :

տքնէրն ինքն՝ դուք ի քուն կայիք ։ Որով քաջ կշտամբեր զյուլոսէն նոցա՝ զի Թմրեալ կայիս յօգուտ աշխարհին իւրեանց, մինչ փիլիպպոս իւրոյն հակէր. զոր և Դեմոսթենէս ընդելական համարձակութեամբն անգադար յանդիմանէր ։

Վանզի ի տասանց ցեղից Լիթենս ամ ըստ ամէ մի մի զօրավար ընտրէր, և փոխանակաւ օր օրէ կային սպարապետ, զայս ինչ փիլիպպէայ ծաղր արարեալ՝ ասէր. Չամ կեանս իմ վաստակաւ գտի զմի օր զօրավար, զԱրմենիոն. իսկ աթենացիք զօրավարս տան ամի ամի գտանեն ։ Եւ ի Թղթին առ Լրիատոկլ, զոր վասն ծննդեան որդւոյ իւրոյ գրեաց, յայտ առնէ զախորժակս իւր ի գիտութեան և ի գեղարուեստս, և զի յոյժ մեծարէր զդիտունս ։ Եւ այլն ևս Թուղթք նորա անկորուստք՝ ոչ ինչ նուազ գործէն նմա փառս ։ Լսէր ի նմա հանճար պատերազմի և քաղաքավարութեան գործոյն, յոր ոչ ոք հաւասարէր նմա. և ասա ի գէպ կ զերկաքանչիւրումն ասել ։ Լայց գիտասցեն ընթերցողք՝ զի զայսոսիկ գրեթէ զամ ի Տրեթուելեայ ածեմ, ի նմանէ զտիպ նկարագրին փիլիպպէայ պատկերեալ ։

Ի հրամանէս մայրսի եթէ յառաջնորդութեն առաջելոց քաջութ՝ գժուարագատ է ընտրութեն ։ Ի սկզբանէ Թագաւորութեն շուրջ պատեալ ներքոյ և արտաքոյ ի հզօր և յահաւոր թշնամեաց, զկնէս հնարիւք, զայլս բազմաւ նուաճեաց ։ Ոմն գործեաց և յայողեցաւ պատահանել զհակառակորդս իւր, և առ անսիթալ հարկանելոյ՝ խուսափէր ի հարուածոց, և զսպառնալիս նոցա խոտորեցուցանէր ։ Խոհական ի յաջողել և ի ձախողել բաղդի, չգեղծանէր յաղթութեն. և մնդակագմ ի խնդիր և յանկանելութեն այնորիկ՝ ձեպէր կամ հանդարտէր խորհրդով. և յոր խոհեմութեն չժամանէն՝ Թողոյր ի հաձոյս բաղդին, ամուր և անսասան կացեալ ի սահմանի արուեստն անմիտ ի յանդգնութեն ։ Լզգաց նելուկակոց հանգոյն ինն իւրոց ժողովրդոցն իշխէր, և ոչ ինչ ընդհատ ահաւոր էր ի կռել գաշանց՝ քան ի ձակատ մարտի. Թագաւոր խնամող և ժիր, ինքն վերակացու էր և հազարապետ և զօրավար ։ Օ փառս անյագ ցանկութե՛ խնդրեր ծանրագնի՝ ուր ՚ուրեք և գտաներ, և վաստակք և վտանգք սխորժագոյն զօսանեք էին նմա. հանապազ զպատշաճ և գյարմար կցորդութեն կազմէր զյանձնաձանաց և գլուոյ՝ որ յարշաւանս կարևորն է. և այսու ամենայնի առաւելութե՛ դիմէր

յաղագս՝ որ յերկայն պատերազմաց պարտատեալ էին, և ընծանի հերձուածովք պառակտեալք և մատնեալք ի քաղաքացոց իւրեանց, և որոց զօրք այլազգիք էին կամ խառնաղանդ, անհլուք իմաստութեանն խորհրդոց, կաղմք ի կորուստ։

Այս և զանհամբոյրսն ընդ միմեանս և զդժուարընդդէմ առաքինութեանն յանձին եդեալ. և զերկայնամտութեանն և զհանգարտութեան, որովք զամ աջողեալ յօգուտ արարեալ՝ անխոտով յամ արիածից խաւսունցոց չկորուսանեն զպատեհ, կցորդեաց ընդ ժրութեանն ընդ եռանդն և ընդ սթափութեանն՝ որոց ոչ ժամ հանգստեան և ոչ անհարթութիւնք յեղանակաց և ոչ վտանգք ծանուցեալք կրձնին էին։ Ընդակայ որ հանգոյն նմին զօրավար արի և անվեհեր ի մարտի։ Ո՞ դեմանձնեալ վկայութեան՝ անկասկածելի ի մասին յայսմիկ՝ ածեմ այսր անփոփոխ, որ վկայեալ զվառս նորա՝ ասէ. Յետանէի և զվիլիպպոս, յորժամ պատերազմէին ընդ մեզ, վասն ի՛նքնակալութեանն և գահ երիցութեան՝ վիրալից, ակնկոց, կրծաքեակ, խեղեալ ձեռամբ, կաղ յոտանէ, խիզախեալ ի վտանգս՝ յօժար ի տալ բաղդին զոր և յայլ անդամոցն կամիցի, միայն զի ապրեցեալքն ի պատիւ և ի փառս կեցցէ։ Պատմագրութիւն Կոստանդեայ. էջ 485։

Ո՛չ ինքն առանձինն միայն եղև վիլիպպոս քաջ, այլ և զայմ զօրականն ածի քաջութիւն։ Ո՞չ ի ինքն առ մարտուսոյցս ձարտարս՝ որպէս ասացաք՝ հրահանգեալ, գիտաց և զզօրսն հրահանգել ի մարտ, և քաջակիրթս զնա սա առաք հանգոյն իւր, և կարողս յօգնութեան մեծամեծ խորհրդոցն։ Խնամարհեցուցանէր զանձն ընդ զօրսն՝ առանց նուաստութեան, և որպէս տանուտէրք յիւրում տան՝ զքան զօրավար ի բանակի հրամայեր, բայ նեղել զնուաստագոյն հրահանգաց։ Ո՛չ նուիրն ընտեսասէր քաղցրութեան, որ առաւել չնչութեան և մեծարանաց արժանի էր՝ չպահանջելովն զայն և հրաժարելովն ի՛ն յայսմանէ, այլ խոնջս յաշխատութեան և առնելոյն չնչութ զարաք զզօրսն։

Եւ զք գաւոյ ի մարտի առաւել եղև քան զնա. ի մանկութեանն յաձախ ի վտանգս դիմադրաւեալ՝ ուսաւ զսէտս նախահոդ զգուշութեան և մարթանաց։ Ո՞ գօն կասկածանաք, որ ձիգրիտ զտեսիլ վտանգին ընծայէ, ոչ վհերոտեր և վարաներ՝ այլ յաւելոյր ի զգուշութեան և ի խոհեմութեան, և յաներկիւղ յաջողուած բաղդին չվստահեր, և զգաստութեան միայն համարեր յաղթել թշնամացն։ Որովհետ մնոք և անվհատելի ի գիւտ հնարից, խորհեր զանբաւս, և զարմանալի հանձարով

կարգեր զդէպ ժամանակ կատարելոյ խորհրդոյն, և կարի աջողակութիւն ծանկաբար գործէր. և ի կարևոր բարեկամոյն Թագուհաներ վիպոս իւր, յայժ ինչ ձեռն արկեալ և զամ զանխլացուցեալ։ Որ և զաթենացիսն, որպէս տեսաք, հնարէր վէր ի վերոյ խաղաղութեամբն պատրել, և ի դիւրահաւան վստահութեն նոցա և ի զա ջացու յուսութեն՝ հիմնարկել զմեծութեն իւր։

Այլ այս ամ ուղղութեիք հակառակօքն ի նմա խառն էին. զի ի գիներբուս և ի շուայտութեն առանց չափոյ զանձն հեղեալ շռայլէր, և ամենևին զերգ և անառակ էր բարուք. որ և ի մտերմացն և ի յաճախելոց ընդ նմա չար ամբոխէն յայտնի է. զի զերգիք և ցոփք և խեղ կատակք և հոսպիտք, և ևս չար՝ մարդահաճոյք, ագահք և փառամոլք, զպարգևաբաշխ տերամբն խանեալք՝ մտերմագոյնք էին նմա, և առաւել նոցա բարերարք։ Օ այս ոչ Աւետմութեն միայն կշտամբէ, ընդ որ մարթէր վասն օսերիմ թշնամութեն ընդ փիլիպպեայ՝ թերահաւատել, այլ և Ագեսլաոսիմ՝ ոչ տրուպ ոք վիպագիր, որ ի յիսուն և ութ գիրս զՓիլիպպեայ վէպն գրեաց. այլ ասաղ զի հաւատկոիր քանք յայնմանէ ապրեցան։ Արդ նա առաւել ևս բարեասէ և ասէ զնմանէ՝ թէ Օ պարբ. կեշտութեն և զլաւութեն խոտոր, և շուայտոտք և՝ կարի ի ցոփութեն զառածեալք մեծարեին առ նմա, և յառաջ պարգևս նոցա վայելէին։ Այս որ ի հեշտութեն ընկեր կին նմա՝ նոցա կամեր և անօրինութեն և չարութեամբ, որպէս եղծագործութեամբն, յաղթել իւր։ Այս զնր ա մեն զնր եղեռն չգործէին նոցա։

Այլ որով զարմանալին է բաղմաց և Ճարտար քան զնմ թագաւորս Թուի, քաղաքավարութեամբն, նոյնի իսկ առաւել եպերելի է լինել։ Օ ի որպէս ի վէպս պա տերազմաց նորա տեսաք, ի սկզբանն թագաւորութեի իւրոյ ուշ եդեալ և կէտ լինն սահմանեալ՝ աշխարհակա լել զամ Ագլագա, յայնմանէ երբեք ոչ խոտորեցաւ։ Այս զնդրդ մարթէր մտաբերել նմա՝ի խորհուրդն յայն, կամ մանաւանդ՝ի գործն ձեռնարկել, մինչ չև ամրա ցեալ էր յաթոռ իւրում՝ շուրջ պատեալ՝ի հզօր թըշ նամեաց։ Այլ նա անդր հանապազ դէտսին կալեալ զպատերազմունս և զկռիւս և զուխտ խաղաղութեի և զդաշանց և զնիզակակցութեի անդր ուղղեր։ Օ ոսկի և զարծաթի շռայլէր անխնայ, առնել իւր ձեռակամս։ Ընդ ամ քաղաքս Ագլագայ համախոհք էին նմա՝ի ծա ծուկ, և վարձկանք առատ առատ հասուցանէին առ

Դիոդ. Ժչ. 408։ Թեոդոսիոս Ազդն. չ. 260։

նա զնա՛մ խորհուրդս՝ որ ինչ ուրեք հաստատէին, և ի՛ ձեռն նոցա փոփոխեր զայնօսիկ ըստ հաճոյս։ Պարզ դա-
ւեաց զիմաստութե՛ն, ընդունայն արար զձի՛ղն, և նիր-
հեցոյց զարթնութե՛ն ազգաց՝ որ աջողագոյն և խոհեմք և զգուշագոյնք քան զամենեսին ընդ ա՛մ յունաստան հա-
մարեին։ Հետազօտեալ զնոցա նորա ընդ ամն քսան, տեսանէմք զնա անյեղլի ընթացիւք յուշ նպատակին յա-
ռաջ խաղացեալ, այլ ընդ կամակոր և ընդ գողոզի շարիլ, և յելսն զխորհուրդս նորա յայտնեալ։

Պողիբիոս յայտապատում առնէ՝ որպէս նուաճեցոյն զ[ք]ե[ս]սաղիա, որ եղեւն նմա զօրավիգն ի կատարումն գործոյ նորին։ Օ ի ոչ համարձակ եւ ընդ թեսա-
ղացիս պատերազմ՝ այլ պատեհ եգիտ զհերձուածս՝ յոր քաղաքք և բնաւ իսկ աշխարհն պառակտեալ էին։ Տայր խնդրողաց օգնութե՛ն, և ոչ ի յաղթեն՝ հարկա-
նէր զպարտեալս ի սպառ, և ոչ մերկանայր զոսպառա-
զինութե՛ն նոցա, և ոչ զպարիսպս նոցա քակտէր, այլ թէպէտ տկարաց, և նկուն և խոնարհ առնէր զհզօրս։ և համայն ասել, փոխանակ խաղաղութե՛ն գրգռեր զնո՛ւ վրութե՛ն առնեմաօսքն վարձկանք՝ որ ձարտար խոտո-
րացն էին, և որպէս հրձիգք աշխարհաց։ Այս ոչ զինուք, այլ դաւով զ[ք]եսսաղիա կալաւ։

Դ[ք]եմոս. ե. գ[ք]եր. ը. ի[ք]։

Այս ա՛մ սքանչելիք ինն են և ծայր արուեստին քա-
ղաքավարութեան։ այլ զո՞ր մնաքննայս կազմեալ, և զինչ պիսի՞ նկարիւք կատարեաց զկորհուրդն։ Խորամանկութե՛մբ և դաւով և նենգութե՛մբ և խաբէութի՛ւք և զրժանօք և ատերդմութե՛մբ, որ ոչ առաքինութե՛ն են զինք։ Սնափառութի՛ն նմա անդր քան զպայման տե-
սանի մտեալ՝ ձարտար և յանկուցող և խորամանկ և չար-
արուեստ մտօքն։ իսկ ստոյգ մեծուի ոչ ևս երևի։ Հաւա-
տարուժ և նուաստախոհ, զա՛մ հնարս օրէնս և արդար համարեր ի յաւելուած իշխանութե՛ան։ Օ չգործե-
լիսն խոստանայր։ և դարձեալ զորս գժուարին էր նմա պահել կուբր։ և զնենգ ձարտարութե՛ն վարկանէր, և ըզ-
փառս փոխանակեր ի պատրել զդաշնակիցս իւր։ Այս զի՛ յերկարեմ։ ոչ ինչ ամնի՛ համարեր, որպէս զմանկտին խաղալ, և զարս երդմամբք պատրել։ Վայց մեղ մեխանօք և խարդախանօք և նենգաւ և խորամանկու-
թեամբ երևելի լինել քան զընաւս, և չարաշահեաւ զպիշատակն թողուլ, չարաշուք փառք են թագաւորի։

Եղ. ե. գ[ք]։

Որ զամենեքումբքն խաղ առնեն և զխաբէութիւն և զգրժանս յառաքինութե՛ն համարին, որպիսի՛ ինչ նոքա

'ի ժողով մարդկան Թուխիկն ։ Լսակ եթէ 'ի սկզբան մարդիկ նողկալի է ամենեցուն այն նկարագիրը, ժանդ և աւեր ընկերութիւն մարդկան, և որպէս արգոյ և զարմանալի իցէ 'ի Թագաւոր և յիշխան, որոց վասն գերապատուութեանն և կարևոր պաշտամանն առաւել քան զայլս պարտ է հաւատարմութիւն և անկեղծութիւն և արդարութեան պատկառ կալ, և մանաւանդ սրբութիւն դաշանց և ուխտից՝ որ կռին յանուն և 'ի փառս մեղոջելի վերջին հնդրկին հաւատադրժութիւն և անպարշտութիւն ։ Լսել և խոստումն ուրուք՝ որ ակն ածէն յօրինաց՝ սուրբ և անդրժելի է, քանի՛ և Թագաւորացն ։ " Օ՜ն չմարտուԹիւն պարտ է խօսել ընկերի, ասէ մեծ ոմն մատենագիրն · զի է և 'ի խօս անդ լուսելեացն ինն խոստումն չմարտութիւն, վասն որոյ տուաւն իսկ բարբառ մարդոյ։ Չէ սա դաշն ուրուման ընդ ումեմն, այլ հասարակաց ամ մարդկան, և իրաւունք իմն ազգաց, և բնութիւն իսկ իրաւունք և օրէնք. և որ ստէն՝ կոխէ զօրէնս զայս և զհամաշխարհական դաշն ։ " Օ՜ր եղեռնութիւն չյաճախէ 'ի դրժանս՝ սրբութիւն երդմանն և այ վկայութիւն, որ միջնորդն է 'ի դաշինս ։ " Լ՜ռել հաւատարմութիւն և չմարտութիւն մերձ եկել չամ երկիր, սակայն պարտ էր նոցա 'ի սիրտ և 'ի շրթունս Թագաւորաց օթևել ։ " Օ՜այս ասաց մեծն Յալէան արքայ Վաղղիոյ, յորժամ հրապուրէրն յուխտադրժութեան ։

Նշանակութիւն չնչին բերց · եւ ինչ ինչ պիեսք պատճառն ։

Մեդբեթ ։

Լ՜ՍԼ զի առանց այսորիկ անհնար Թուի քաղաքավարացն յաջողութեան իրաց, նմին իրի և զառածանեին 'ի սոյն։ Որ Թէ և էրն անհնար, ո՛չ դժպատեհ տուրևառք էին՝ ընդ յաջողութեան իրաց փոխանակել զլուսութիւնն զխաւս և զկրօնս ։ Լ՝ ուզովիկոս երկոտասաներորդ ասէր դպրոցն մեծ Լ՜ւսորիոյ · Լ՜ներն քո դրժեաց, այլ ես չեզնչ նահանդ նմա. ընտրեմ անկանել յաշխարհակալութենէն Ղեպետոյ՝ զոր մարթ է գտանել անդրէն, և մի զանց գիւտ փառն կորուսանել ։ Սակայն և 'ի կարծիս իւրեանց խաբէին քաղաքավարքն արհամարհեալ զկրօնս և զփառս ։ Օ՜ի ոչ 'ի քրիստոնէից միայն կային Թագաւորք և իշխանք՝ հեռի 'ի չարարուեստ քաղաքավարութենէն, այլ և զի աստուծին 'ի հելլենական պատմութենէն խեղամեսցուք, բազում արք աւագք 'ի յանձանձաւոր իրաց աշխարհի, 'ի դաշինս պատեհագոյն և խաղաղութեան, և 'ի բնաւ չամ իբս կարևորս ամենևին ամ ուրեք յաջողեցան՝ առանց օգնականութեան չար հնարիցն և խաբեութեան։ Ասպիսի ոք Լ՜բիատիդէսն էր, որպիսի ոք Կիմոնն և Փո-

կիոն և այլք բազումք. յորոց կէսք այնու երկիւղածու-
թեամբ զգուշացեալ ձչմարտութեէ, զի և ընդ ծաղը և
ընդ խաղ՝ ոչ օրէն համարէին ստել։ Կիւրոս աշխարհա-
կալն անուանի՝ քան զայմ ինչ անպատեհ թագաւորի հա-
մարեը զստէն և զխաբէութէ, և ոչ ինչ թշնամանագիր
նման քան զայրասիկ, և ոչ ինչ սեփականագոյն յատելի
առնել գնա։ Այլցի ապա աներկբայելի, զի չէ հնար,
և ոչ ի դէպ խակ է յաջողութեան՝ ձաձանչիւ բաղդին
ծածկել զամէն և զնախատինս անհաւատարմութէ և
ուխտադրժութէ։

ԴԻՐՔ ՀՆԴԱՏԱՇՆԵՐՈՒԹ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

Ասնին վէպք իրացս Աղեքսանդրի, որպէս յառաջ ասացաք, չափ ժամանակի՝ երկոտասան ամ և ամիս ութ, բռնադատեալ ի գիրս յայս։

ԳՕԴՈՒԱԾ Ա·

Ա ման ծննդեան Աղեքսանդրի, և հրճւէքվելոյ ի նմին աստեր հրճնին Ա֊ֆէլեոս, և բարեաւ յօժարուէիւ նորա · և ման վարքաւեպէին նո֊ րա Աբիսաորենի իրնելոյ զնա յախորժակս պարմանական փիսոնեց, և պՀնչափելոսան երիվար նոսաձէլ նորա ։

ԱՄԱՀՆԻ 3648 · 356 ՊԼՈՒ֊ՐՔ֊ՅԵ։

Յամին առաջնում հարիւրորդի վեցերորդի ոլիմ֊ պիադին ծնաւ Աղեքսանդր ։ Ի նմին աւուր ծնդեան նորա բազմահռչակն Աբտեմայ դիցն մեհեան այրեցաւ Ա֊փեսոս, որ ընդ եօթանեսին հրաշակերտան ի համա֊ րի էր՝ որպէս ամենեցուն է յայտնի ։ Այս էր մեհեանս այս կառուցեալ ի գանձուց ամ աշխարհին փոքրուն Ա֊սիոյ՝ ընդ բազում ամս [1] ։ Ա֊րկայնութիւն նորա՝ չորեք֊ հարիւր քսանևհինգ ոտնաչափ, և լայնութիւն՝ երկերիւր և քսան ։ Այս սիւնք հարիւր քսան և եօթն բառնային գլխովին՝ բարձունք վեհութեան ոտնաչափ · զորս հարիւր քսան և եօթանից [2] թագաւորաց մեծակառոյցս ընդ հա֊ կառակս միմեանց կանգնեալ էր յոլով գանձիւք, ի ձեռն քաջ ճարտարապետաց ։ Այս ամ մեհենիս ըստ նմին պայ֊ մանի մեծագործեալ էր ։

ՊԼՈՒ֊ ՅԱՆ֊ ՔՒՈ֊ · 665 ։

Պլուտարքոս Ա֊ւեսեայ մագնեսացւոյ [3] զպատճառս հրդեհին ածեալ, որ ասէ " Այս մի որ զարմացի ընդ պա֊ րել մեհենին, զի գայն օր Աբտեմիս առ Ալիմպիայ կայր

1 Պլինիոս երէկերիւր և ֆոան ամ բռանկնոր մ ի ֆոփասոյ կոյին։ 3 Մագնեսիացիք առ Պիզդիա որ֊ ֆեն գիտանալ էնոսացոյ նորա, որ գիտասրհասոպալի է։

2 Ի վաղ ժամանակ ի տաղտս խա֊

'ի ծնուցանել զԱղեքսանդր», յաւելու. Որվ հանձա-
բաքանուելի ցուրտ, որ և զերդեկն զայն շինելոյ անել
մարելոյ[1]։ Ակնարկ Տիմէի զանս զայս ընծայէ. և զի
հանձոյ Թուխնամ[2], ընդ այն յոյժ զարմանամ. Թերևս
'ի զաւեշտականացն միտելեմէն՝ դիւրահաւան այսպի-
սեաց էր անհամ զրուցաց։

Օ մեհեանս զայս Աբդոսարատ անն հրձիգ արար. և
խոշանդակալ'ի յայտնել վասն որոյ երաց եկն յերեզոն
Յայն, խոստովան եղև՝ զի անօգանի ցանկալոյ լինել յա-
պայս, և անմահ Թողուլ յիշատակ հրաշակերտին եղե-
ծմանէ։ Զայն երի հրովարտակ արարին աշխարհս ազգք
ասիացիք անյիշատակ առնել զանուն նորա, և խափա-
նել զնորհաւրդ նորա. այլ առաւել ևս հրովարտակաւն
գրգռեցին զչետաքրքրիր յանկուցիչ. և վիպագիրք ժա-
մանակին գրեթէ ամենեքին'ի պատմել զայլանդակ իրն՝
յանուանէ զերեզմանագործն նշանակեն։

Պլուտ. յԱ-
լեք. 665. և
'ի Բոզդն Ա-
լեք. 342։

Յառնադան յոխոտն Աղեքսանդրի անդստին յառա-
ջին տեսոց եր եռանդն իմն և ըղձալի տենչ փառաց, ոչ
խառն'ի խուռն։ Փիլիպպոս Հայր նորա սոփեստաբար'ի
Հարտաբիսսոսելի պանծայր և'ի գիտութիւն ընտիր բար-
բառոյ, և զկառամարտիկ ողիմպիական յաղթութեանն
պատկերս փառասիրելով'ի գրամին տայր տպաւորել.
իսկ Աղեքսանդր փառացն այնմիկ ոչ ցանկացաւ։ Յան-
զի հրաւիրեալ իսկ'ի սիրելեացն իջանել յասպարէզ, զի
եր նա երագոսն Թեթևբնթաց, ասէ. Իջից եթէ Թա-
գաւորք կայցեն ինձ ոսոխ։ Լբ յորժամ գաւեսիս մե-
ծամեծ յաղթութեանց հօրն և նուաճելոյ նորա զքաղաքս
լսէր, 'ի համաչխարհական ցնծութեն՝ ինքն Թաղծեալ,
ասէր ցամենեսին մինդակիցս իւր. Այսոսածեմ, արք բա-
րեկամք, զի նա զսիեզերս նուաճեալ ոչ ինչ Թողիցէ մեզ
'ի գործել։

Հրեշտակք 'ի գրանէն Պարսից եկին յարքունիսն,
մինչ ոչն եր անդ Փիլիպպոս. և պատուասիրաբար և պատ-
շաճ շքով ընկալաւ զնոսա Աղեքսանդր, և պաշտեաց
նոցա սեպան, մինչև զարմանալ նոցա յոյժ. և առաւել
ընդ հանձար նորա և ընդ խոհականութեն՝ զոր 'ի բա-

1 Կասկածել չի Պլուտարքեայն դեան Աղեքսանդրի, ճանապարհս
շրջապատի եր էան զայն հանձարոտա- յաւելեալ, ասէ. Եթէ ընդ այս ոչ
նութիւն։ ինչ զարմանք, քանզի Աբսա-

2 Տիմէոս, որպես բազում ու- մա առընթեր կայր Ողիմպեայ մօր
րեք, և'ի վիպել զայրեցուցմ մե- կուսան, և հեռի գաւս'ի տանէն։
հենին Լեփսոս'ի գիշերին ծնընդ- Յոպ. Բ». դեյ. ք. կէ։

զուամ նուագս ՚ի խօսելն ընդ նոսա երևեցոյց. զի ոչ ինչ
ըստ մանկական տիոցն զգերապանծ զօդակաւոյց բու-
րաստանացն հարցանէր և զփարթամ գանձուցն և զշը-
քեղ սպասուց արքունեաց պարսկաց՝ որ ընդ ամ աշ-
խարհ զարմանալիք էին, և զբազմահնչակ սօսոյն ոսկւոյ,
ԱՌԷՆ. Ք. և զոսկի որթոյն՝ որում ողկոյզք յակինթեայք էին և
739: զմրուխտք և կարկեհանք և ազգ ազգ գոհար ականց,
ընդ որով հրեշտակք յանդիման լինէին թագաւորին Պար-
սից, որպէս հռչակէրն. այլ քնաւ ամենևին այլ հար-
յուածս մատուցանէր, եթէ ոչ Ձանապարհ ՚ի վերինն
Ասիա աճէ, և որչափ անտի անդր ՚ի միջև ուղին էցէ, և
ինչ է զօրութեանն և ամրութեանն Պարսից, և ՚ի Ձակատու
պատերազմի որ տեղի թագաւորին, և զինչ օրէնք էցեն
պատերազմի և տեսչութեան: Ընդ որ հրեշտակքն զարմա-
նեալ կային, և ՚ի մատաղ հնասակին տեսեալ՝ որ ինչ ՚ի
նմա արութիւնք աՃեալոց էին, ասէին ընդ միմեանս. Ա՞ն
նուկս այս թագաւոր մեծ է, իսկ մերն փարթամ: Ձա-
մառօտ բանիւն յայտ արարեալ զկտիրն ընդ Ասղեք-
սանդր և ընդ Արտաշէս [1]. զի կարի անձուկ սահմանին
փառք ՚ի գանձս, առանց այլ իրիք քաջութեան:

Ստոհականութեան գեր քան զհասակն՝ բարւոք դաստիա-
րակութեամբն էր ՚ի նմա, քան ՚ի քնէ բարւոյ: Ի պատ-
պետք բազումք էին նմա ՚ի կրթել ՚ի պատշաճման զժա-
ռանգ մեծի թագաւորութեն, և վեհ ՚ի նոսա Ի եւռնի-
դաս ազգական դշխոյին խիստ և ժուժկալ: Ո որմէ ինքն
Ասղեքսանդր պատմէր, զի յուղեկիցն լինել ընդ իւր՝ ո-
րոնքեր ստէպ յարկեղէն և յարդոբս անկողնոց և հան-
դերձից, թէ գուցէ Ի ղևմպիայ մօր նորա աւելորդս ինչ
ընդ նմա եղեալ էցէ՝ սպասս փափկութե և զեղխութե:

Ո գտակարագոյն քան զնմա բարես որդւոյ իւրում
արար Փիլիպպոս՝ աշակերտեալ զնա Արիստոտելի ե-
րևելոյն և վեհագունի յիմաստասէրս ժամանակին, և
զնմա հոգ և զդաստիարակութե մանկանն ՚ի նա յանձն
արարեալ: Ա՛ւ վասն այնորիկ զքաջն և զերևելին կա-
ցոյց որդւոյ իւրում վարժապետ, զի ՚ի սխալանաց քազ-
մաց՝ յորս ինքն սահեալ անկաւ, պարսպեսցէ զորդին.
որպէս ասէրն իսկ ինքն: Ո՛անեաւ զյարդ գանձուն՝ զոր
ունէր նուաւս. և ռոձիկ և գարման առատութեամբ
կարգեաց նմա. և այլ իմն փառաւորագոյն վարձս յա-
ւել ընդ վաստակոցն: Ո՛անզի Ստագիրա [2], քաղաք ուս-

[1] Ս՛ինդն է Ասփաչեան Ոչխոս: [2] Գաղափ ՚ի Մակեդոնիա մերձ ՚ի Թրակիան:

տի էրն Ա.րիստոտէլ, աւեր և փլատակ կայր. և զայն առ սէր իմաստասիրին կառոյց անդրէն, և դարձոյց անդր զհին բնակիչն՝ յորոց կէսք մեկնեալ էին անտի և այլք դերեալ, և՝ ի բացավայրս քաղաքին ետ նոցա տեղի մեծ չրջափակ յուսումնարան և՝ ի ժողովեստղ։ Եւ կային անդ ցաւուրս Պղուտարքեայ բազմոցք քարեղէնք, զորս եդ իմաստասէրն, և ծառատունկք երկայնուղլի ձեմելիք հովանաւորք։

Եւ Ա.ղեքսանդր ինքն ոչ ինչ նուազ զվարժապետն մեծարէր, և իբրև զհայր այնպէս սիրէր զնա. զի՝ ի հօրէն զկեանն, իսկ՝ ի նմանէ զբարուք կեանն դաւանէր ընկալեալ[1]։ Ա՝ստ խնամոց և քաջութեան վարժապետին՝ զարդացաւ աշակերտն զակատեալ զհետ իմաստասիրութեան՝ ըստ չափոյ իւրոյ պայմանին։ Ո՝ դատումն նորա ուղղել ջանացաւ Ա.րիստոտէլ, և ետ նմա անսխալ օրէնս յընտրութեի կեղծ և ստոյգ իրաւաբանութենէ, և ուստոյց նմա յստակել՝ ի պատիր սեթեւեթից զբուռնն՝ յորում է՝ամ հաստատութեի բանին։ Ա՝ արժեաց և՝ի բնաբանականն, որոյ չափով հմտութիւն պիտանի է յոյժ թագաւորաց. քանզի նուաւս խելամուտ լինին հանգամանաց մտաց մարդոյ՝ զի է այլաբուն՝ ի նիւթոյ, և զի զհոգեղէնն իբր տեսանիցէ, և՝ ուրախս ընդ եղելոց իրաց զգայցէ, և՝ ի հանգոյն սոցին գիտութիւնս։ Ա՝ա և՝ ի չափաբանութեի, որպէս ոչ ինչ երկբայելի է, կրթեաց զնա՝ ի չշդեել և՝ ի չշգրտել զմիտս նորա. և՝ ի սքանչելիս բնութե, որոց ուսումն՝ հանդերձ յոլով շահիւքն՝ և ցուցանէ զի անհաս են հետազօտութե մարդկան գաղտնիք իրաց, որ հանապազ ակնարկ գործին։ Ա՝յլ առաւել բարոյականին փոյթ կալաւ Ա՝ղեքսանդր, որ սեփական նագոյն թագաւորաց գիտութիւն է, ձանաչել որ ինչ է մարդ և զաւենայն զպարտս նորա։ Ա՝մին իրի պարապով այնմ խորազգած եղև, և անդստին՝ ի մատաղ տիոց հիմն խոհեմութե և իմաստուն առաջնորդութե վարկաւ զայն։ Ո՝ովին դաստիարակութեամբ՝ անձին և ժողովրդոց բարուք առաջնորդէ թագաւոր։ Ա՝ա և բժըշկականին տեղեկացաւ, ոչ տեսականին միայն՝ այլ և գործականին. զի և՝ ի թուղթն ուրեք գրէ՝ զբազումն՝ ի բարեկամացն կեցուցեալ՝ ի հիւանդութէ, դեղ և դարման և հրամանս զկարևորսն կարգեալ։

Ո՝ւեստորացն վեհագոյն՝ որ՝ ի վաղ ժամանակս կացին, Աւրիպ. ի Հերոդ. ա՝

1 Զի նուաւս կեամ, իսկ սուաւս բարուք կեամ։

Ագաթ. 608. 609. այն՝ որ և զօրինս արուեստին գրով եառ՝ի մատեան ընծաիւք, ի նոյն և զաշակերտն հրամանագեաց։ Այլ նա՝ի կարևոր պատերազմի առաքեաց ինդրեաց՝ի նմանէ թագաւորական ձառս՝ի վերայ այնորիկ. և այն իսկ է մատեան կարգեալն ՀԱՐՑԱՐԽՕՍՈՒԹԻՒՆ ՀՐԱՀԱՆԳԻՒ ԱՂՔԻՒՍԱՆ ԴՐԻՒ։ Յոր՝ի յառաջաբանին խրատէ զնա Լուսաւորիչն՝ թէ հզօր զօրավիգն է թագաւորի ձարտարախօսութիւն, որով՝ի սիրտս ամենեցուն իշխէ, որպէս անկ է նմա և իմաստասիրութեամբն և զօրութեամբ իշխել։ Այ թագաւոր և՝ի հրովարտակս Աղբատացդրի՝ որ կան անկորուստ, երևի քաջ ձարտարախօսութիւն նորա կորոյն և հզօր, հած և ըստ իմաստիւք, և իրօք յորս չիք աւելորդ ինչ, և ամ բառք ձարտարախօսեալ թագաւորի ընծայեն օրինակ[1]։

Այ մեծարանացն և՝ի մոգութենէն առ Հոմերոս երևի խանդ և աշխոյժն նորա՝ի բանասիրութեն, և զմարդ հանճարաբար վարեր նուաճ, և գտայդ շահն անտի կեներ։ Օ՛ի ոչ առ ունայն ցանկութեն կամ՝ի զբաղումն կամ առ՝ի կրթի անօրժակաց բանաստեղծուե ընծեռնոյր զբերմոն, այլ՝ի կրթել յիմաստս արժանիս մեծի արքայի և աշխարհակալի, յարիւթէն, յաներկիւղութեն, ի ժուկալութեն, ի մեծամտութեն, ի խոհականութեն և՝ի բարւոք առաջնորդութիւն պատերազմի և ժողովրդեան։ Այս ձահասորագոյն վարկաներ յայն գտոյն զԱլամիմեայ ասացեալ, թէ էր թագաւոր բարի և պատերազմող քաջ[2]։

Այ՛ի ոք ապա զարմասցի՝ թէ այնպէս զքերթողն մեծարգեր Աղեքսանդր։ Օ՛ի և՝ի պատերազմին առ Աւբելեաւ՝ ընդ աւարն և ընդ կապուտ Վարիւն գտեալ տապանակ ոսկի ականակուռ, յորում էին խոնկոք ազնուք՝ի սպաս թագաւորին, ինքն ընդ փոշի եկեալ՝ ոչ ինչ ցանկացաւ խնկոց և բուրմանց, և զՀոմերոսի գիրսն հրամայեաց դնել՝ի նմա. զի ծայր հանճարոյ և գերազանց յարգասիս մնաց համարեր զայնս[3]։ Այնանուանգ ընդ Իղիականն զմայլեալ՝ կոչեր զայն պաշար պատերազմող մարդկան։ Այ ուներ հանապազ առ իւր զօրիս նաին քննեալ և ուղղագրեալ Աւրիստոտելէ, որ արիեզական օրինաւն կոչեցաւ. և զայն զնոյն գիշերս ընդ մաս-

Աւետ. Գիւտ. բիւզ. հ. Բ։

1 Հակիրճ՝ի տիպս կերպարա- նաց բանից՝ որպէս է թագաւորի անկ։ Տ՚ոնի։

2 Պատերազմող գոհ նոյն և քաջ թագաւոր։ Խոսկ. Ֆ. 179։

3 Պատուականագոյն մարդկէն զին հանձարոյ գործ։ Պլան. Հ. ԽԲ։

նախանձաւոր յամ իբս փառաց, և գժդմեցաւ ընդ վար-
ժապետին իւրում Արիստոտելի, զի ի տարակուսել
իւրում հրատարակեաց զիրս ինչ ընդզանցականս՝ զորս
կամէր ինքն առ իւր ունել։ Եւ մինչ աշխարհակալերն
Ասիա և Հալածէր զԱրեհ, գրեաց առ նա գանգա-
տանս, և է անկորուստ գիրն այն, յորում ասէ. Չիան-
կամ բարձրագունեցն և գերակայից գիտուք յաղթել
այլոց, քան մեծութեամբ և ընդարձակութեամբ իշխա- Արիստ. 609։
նութեան։ Եւ այս ամենայնի գրոյն, զորոց ա-
սացի, աղերս առնեք մի հրատարակել ընդոստս։ Արդարեն
ոչ ի պատշաճին էր նախանձն այն, խափանել զբանա-
խիւն այլոց՝ ի պայծառութիւն իւրում, այլ ուսումնասէր
բնութիւն յարբունական փառն գովելի է. որով յայժ
հեռի էր յայժմու ազատագունդ մանկտւոյս անսրբելու-
թենէ ուսման, կամ մանաւանդ արհամարհելոյ և առե-
լոյ գգիտութենէ։ Պղուտարքոս առաջ բանիւ ցուցանէ որ
պիսի օգուտ մեծ եղև Աղեքսանդրի յախորժակացն յոր
վարժապետն քաջ, եթէ եղև որ երբեք քաջ ի մասին
դաստիարակութենէ նախակրթեաց գնա յառաջին տիոցն.
զի սիրէր, ասէ, ընդ գիտունս զբօսնուլ և ուսանել և
վերծանել[2]։ Եւ յա են աղբիւրք բարեաց առն ծագաւո-
րի, և յորժնց վտանգաց յաւազարգել պատահէցք, և
հնարք անսխալ յուսումն առաջնորդականին։ Ընդ գի-
տունն զբաղումն՝ կրեթէ գնա զբօսանաք հանդերձ, և ա-
ռանց յոլով ճգանց՝ բազում ինչ իրաց տեղեակ առնե
կարևորաց և ցանկալեաց։ Ի արժք բարձրագոյն գի-
տութենէ. և մանաւանդ քաղաքավարականին, զմիտս
քաջ հրահանգէն, և յօրինս խնամոտունս տեսչութեան
խրատուն։ Եւ որ ուարտ ամենայնին ընծերացումն, մանա-
ւանդ պատմութեան, յամ դէպս և յամ ժամանակի
խորհրդական է նմա և անատաղտուկ խօսի զՀնարտուն,
յոր այլ ոք չիշխէ. և յայլս գնա ինքն ցուցանէ և ծա-
նուցանէ նմա և զժամանակակից մարդկին, որ են նմա
յամ ժամանակի։ Եւ այս ամ՝ քաջակերթի գաստիարա-
կութեն Արիստոտելի՝ շահք գործեցան Աղեքսանդր։ Պլուտարք. Ի
բան Աղեք.
Եւ
էջ. 335։
Այն նմա և արուեստից ախորժակք ըստ պայմանի իշ-
խանութենն, առ ի գիտել գլարդ և զպիտանութեն նո-
ցա։ Եւ բարգաւաճեցին յաւուրս նորա երաժշտութիւն
և նկարչութիւն և քանդակ և Հարտարապետութիւն. զի էր

1 Լաւագունացն հրահանգաք՝ քան զորութենէ կամէի առաւելուլ։
2 Իշր բանասէր և ուսումնասէր և ընթերցասէր։

Կ-ինք · ը · էն ։

նա հանձարեղ ընտրող և առատ պարգեւատու, և արդարակորով վարձահատոյց քաջութեա՛ն ։ Այլ զմտոտի և զանօգուտ ձարտարութեա՛ն արհամարհէը ։ Իսանդէն զմա՛նկ՝ զի հանդիպեալ երբեմն ուսման, որ խնամով մեծաւ ունդս փոքրկուսս ընդ ծակ ասղան [2] ձահոզակի՛ն ներքոյ արիանէր ի բաց, և աւեներքին զարմանալին ընդ նա, ետ նմա պարգև արժանի արուեստին՝ գրիւ մի ոսկեայ ։

Իսայց Այ՛ղեքսանդր սաստիկ և խիստ էր բնութեամբ, և յամառ ի կարծիսն, և բռնի ումեք չհաւանէր, այլ յաղերս իրաւանց դիւրաբա զիջանէր ։ և ընդ այնպիսւոյն վարել արուեստ է ։ Այ՛սին իբրև փիլիսպոս և հայրենի՛ և աքբունի իշխանութեամբն չիշխեր բռնանալ ի վերայ նոցա, այլ ողոքեր զնա, և սիրելի քան ահաւոր առնէր զանձն նմա ։

Ի դիպաց ինն յոյս մեծ կալաւ փիլիսպոս յԱ՛ղեքսանդր ։ Օ՛ի ի Ղաւսաստիոյ երիվար մի պատեհագոմիկ յաղթ և իրրոստ և աչխոյժ և բոցակն ածաւ փիլիսպեայ, և ձիոյն անուն կոչեր Բիւկեփաս [3] ։ և սակ հատեալ էր նմա երեքտասան քանքար ։ Այ՛ը թագաւորն Իանդէրձ աւագանւոյն ի գիւղի փորձել զնա ։ և ոչ ոք կեծանել կարեր, զի էր ստուերախիրտ երիվարն ։ և ի մօտել վերելակին՝ ամբառնայր յողն կայր ։ Այ՛ւ փիլիսպեայ սրամտեալ՝ կետս հրամայեաց տանել զդժոխախեռ զանհնաւաճելի երիվարն ։ Այ՛նդ էր Այ՛ղեքսանդր, և ասէ ։ Այ՛ազ, զո՛ր երիվար չաջողակութեամբն և երկչոտութե՛ կորուսանեն։ Այ՛ւ խօլական յանդգնութե՛ մանկան զոյց Թուեցաւ փիլիսպեայ բանն այն ։ այլ ի յամառել դժկամակել նոցա ի դարձուցանել զձին, հրամայ ետ նմա հայրն փորձ փորձել ։ Այ՛ւ նա վստահաբար խնդութեամբ մատուցեալ կալաւ զանձին, և յարեաւ կոյս դարձոյց զնա, զի ի տուերէին՝ որ զառաջեաւն անկանէր՝ անտի սպառնայր և խեռէր երիվարն ։ և գլուխաւք և ողոքով ամբեաց զնա ։ և ժամադէտ լեալ՝ արկ յանձնէ զկրկնոցն, և ոտն աճեալ աշտանակեաց յերիվարն, և Թռ զացոյց զանձն, և ոչ էհար և ոչ մերակեաց՝ մինչև ցայծեաւ ձին ի սպառնական կատաղի վայրենութենէն, և ձեպեր յընթացս ։ Այ՛պա մերակ ի կուշտ արարեալ, ձիարձակ լինէր յոխորտ կարդացմամբ ։ Այ՛նդ փիլիսպոս

1 Կայան ականատես և դաստ. ուր զհանձարեղ ընտրողն և զառ. գթարակորով վարձահատոյց ։

2 Գործի ին ասղոյիս երեւի լինել։

3 Պարբառս այսմ տեառնահալեալ ձալոյնեն ոմանք յն շրթելոյ պիտի ասել յիւրն ի ձոխաթն ։

ՔՀ ՝ամ՝ աւագանին յահի և ՚ի դողմանն կարկեալ կային ։ Լոկ իբրև ՚ի գլուխ ասպարիզին դարձաւ ելին սիգաձեմ լի խնդութիւ՝ նուաձեալ ՚ի վեր քան զակնկալութիւն զմբոստ ձին , ՝ամ աւագանին ՚ի նախանձ մտեալ՝ գովութիւ և կայթիւք ուրախ եղեն ընդ նմա ։ Այս անդ Փիլիպպեայ ասեն արտասուեալ առ խնդութիւն , և զիրկս արկեալ որդւոյն յիջանել նորա ՚ի ձիոյ , և համբուրեալ զձա- կատն ասելով . Խնդրեաջիր աշխարհ արժանի քեզ, որ- դեակ , զի Մակեդոնիա փոքր է ։

Օ ՚ցլագլեայս ձիոյ զարմանալի իրք պատմին . որպէս Ա՛ել. Գէլլ. ե. ք։ և ՝ամ ինչ Պղեքսանդրի իրք հրաշալիք էն ։ Օ ի յորժամ կազմէր և սպառազինեալ ՚ի պատերազմ, զհեր իւր մի- այն հեծուցանէր , իսկ այլոյս ումեք չմարթէր անվտանգ մնալ ՚ի նա . և խոնարհէր ՚ի գուռն կայր երկրպագութիւք առաջոյ ոտիւքն՝ զուս ՚ի հեծումն տուեալ նմա ։ Այս կէսք զնմանէ պատմեն՝ Թէ ՚ի պատերազմին ընդդէմ Պորոսի , յորժամ Պղեքսանդր յանդուգն ՚ի խուռն Թշնամեաց յարձակեցաւ , նա խոց կարեւեր զվերելեակն ապերոյժ . և պարտասեալ և ՚ի վիրալից մարմնոյ նորա գրեթէ ՝ամ արիւնն հոսեալ , զերծոյց զտէրն ՚ի խառնէն , և ՚ի տեղի անքոյթ օրհասական զօրութեամբն զնա աճեալ՝ անկաս կածելի ՚ի վտանգէ , և որպէս Թէ ուրախութիւք զնահ յանձն առեալ յետ այնպիսւոյ քաջութեանն , անկաս մե- ռեալ ՝ ։ Այս ելոյց զնա զառնապէս Պղեքսանդր՝ որպէս զհաւատարիմն բարեկամ և զսիրելի կորուսեալ ։ Այս ՚ի փառս յիշատակի նորա կառոյց քաղաք ՚ի տեղւոջն՝ ուր Թաղեցաւ դին նորա առ Հիդասպ գետով , և անուա- նեաց զայն Ռուկեփաղա , որ է Ձկաղլուխ ։

Որպէս ասացաք , Պղեքսանդր ՚ի տիս վերջինսն ամաց եկաց ՚ի Ա՛ակեդոնիա իշխան՝ փոխանակ Փիլիպպոսի , յորժամ երթայր նա ՚ի տարաշխարհս . և խնամոտութիւք բազմաց և արիութիւք կալաւ զիշխանութիւնն . և ապա ՚ի պատերազմին առ Ա՛երոնեաւ արար անուն մեծ քա- ջութեան ։

՝ Այս յանդորր ածեալ զվերև- գոյ խնդութեամբ մեռանէր։ Ա՛ել. լեակն զայր իւր , զորէն նմա մար- Գէլլ։

Յետ փիլիպպեայ ղեսանելոյ ինձաւորել Պղէտանդրի ամաց ՟ա-
նէր. և նոտաձել և հնազանդել պղտիս ապստամբս, որ ընդ պմիկ-
դոնացոտվք բնակէին. ել անցանել նա յԱրշտաս՝ խափել միւրակ-
ցոտնէ ընդամեայն, և առեալ առերբ գՕնէբէ. ել ներբ աքենա-
ցոտց, և ի ձողնէ ի Կորնթոս սպարապետ կայ ամ Հռոմոց ընդ-
դէմ Պարսից. և տարեալ ի Պաղեստինէ՝ կողմն արշաւել Պտո-

3668 · 336 Պետ. յԱ-
ղեք. 670։ Դիոդ. ԺԷ. 486։ Աւրէլ. յԱ-
րտաւան. Ա-
ղեք. 2։

Յամին յորում Թագաւորեաց Վարէհ՟ ի նմին ամի
եհաս և Պղեքսանդրի Թագաւորել քսանամեայ. և նախ
քան զնամ զՀօրն յուղարկաւորելի չքով մեծաւ կա-
տարեալ, զլրեժ մահուն նորա ինդրեաց։

Պատանեք անչնարինք ի գահակալել իւրում յամ
կողմանց յաչխարհին. ել խռովքն և դուժք, ընդ որս ան-
դադար յամ ժամանակս Թագաւորելե իւրոյ պատե-
բազմեցն փիլիպպոս, և երկիր բազում ի սահմանաց նո-
ցա հատեալ և ընդ նահանգաս արարեալ էր, և զԹա-
գաւորս բնիկս նոցա բարձեալ, զայն ժամ՝ նորոգ գա-
հակալելե արքայորդւոյ մանկանն պատեհ վարկան ի
դառնալ յաշատելի, միաբանեալ ընդդէմ հասարա-
կաց յափշտակող Թշնամեացն։ Պարձեալ և յելլագա-
ցոցն նմա նոյն վտանգ էր. քանզի փիլիպպոսի զիւրա-
քանչիւրոց ազգաց և զքաղաքաց զկարգս տեսուլեաեն
վեր ի վերոյ Թողացուցեալ, զբունն նոցա փոխեալ էր,
և տիրապետեալ նոցա. և իշխեր ի հեռաստանէ ի ժո-
ղովս նոցա, և ոչ ինչ առանց հաճոյից նորա հաստատեր։
Այլ առիւ զինուց և դաւով քաղաքավարուլեաեն նուա-
ձեալ զԱյլագա, ոչ էա բաւեաց յընտելացուցանել և ի
սովորեցուցանել զնոսա յիշխանուլիւնն իւր, այլ ի քա-
զում խռովուլել եՅողղ զիրսն՝ մինչ չև զիջուցեալ ըզ-
սիրտս և ի ծառայուլեի հակամիտեալ։

Ի բազմալտանգ ժամանակին խրատ ետուն Պղեքսան-
դրի մակեդոնացիքն՝ Թողուլ ազատ գյուշաստան, և մի
յամառալ բռնակալել զայն. զիսուժադուժն՝ որ ընդ-
գէմ նորա զինուորելին՝ ամրել, և Թովել իմն զնոսա,
և զառաջս ունել ապստամբուլեեն և զնորաձևուլեան,
յինքն արկեալ զնոսա ողորմով և քաղցրուլեբ և յանկու-
ցանելով։ Այլ նա ոչ լուեալ վեհերոտ խորհրդոյն, քա-
ջայանդուգն մեծամեծնուլեամբ խորհեցաւ հաստատել

զիրս իւր և յամրի առնել։ Օ՛ի թէ անդէն ի սկզբան մեզկէր և վատասրտէր՝ ամ ուստեք տափնապէին զնա. և եթէ յոխտ մնային՝ հարկ էր նմա Թոզուլ զամ աշխարհալուծիս Հօրն, և անձկանալ ամիսփել ի Ա՜ա կեդմիա։ Ա՛մին իրի աձապարեալ ընդ առաջ խուժայնոց ազգացն ի վանել զնոսա, խաղացոյց տախալա զզօրս իւր և եհաս ի Վանուբ. և ի գիշերի միում անցեալ ընդ գետն՝ պարտեաց մեծաս պատերազմս զաբբայ Տէրն բաղացն, և զԱՀտս փախոյց՝ զի ոչ իշխեցին կալ առաջ Ջի նորա, և զխուժականացն զկէս աՀիւ Համբաւոյն, զայլս բռնութեամբ զինուց նուաՀեաց. և եղոյց Հակառակ յոխորտ պատասխանւոյ հրեշտակաց նոցա՝, զի մեռատլս և քան զանկումն երկնից և աստեղաց սպառնացեալ էր ի վերայ նոցա վտանգ։

Ա՛ինչ դեռ Ա՛ղեքսանդր զտարաշխարհական պատերազմին Հարկանէր, ազգք Ա՛լազոյ առաւել և խրախուսեալք ի Վեմոթենեայ՝ միաբանեցին ընդդէմ նոր քա ի Տլօր նիզակակցութեի։ Ա՛յլ ի սուտ համբաւոյ մնՀուն նորա թեբացիք յանդգնեալ՝ ածին ի վերայ իւրեանց կորուստ, սպանեալ զկէս ի մակեդոնական գրնգէն՝ որ պահ ունէին ի միջնաբերդին ի Թերէ։ Իսկ Վեմոթենեն զօրՀանապազ հրապարակախօս լինէր, անգուսՀեն զԱ՛ղեքսանդր, տղայ կոչէր զնա և պատանի ասուշ[2]. և վատահելեր փարատեր զերկիւղ, իբր թէ Թագաւորն մակեդոնացւոց այն ինչ գահակալեալ և ոչ արտաքս մակեդոնացւոց։ Եւ զի Ա՛ղեքսանդր զտարաշխարհական պատերազմին Հարկանէր, ազգք Ա՛լազոյ առաւել և խրախուսեալք ի Վեմոթենեայ՝ միաբանեցին ընդդէմ նորա ի Տլօր նիզակակցութեի։ Ա՛յլ ի սուտ համբաւոյ մնՀուն նորա Թեբացիք յանդգնեալ՝ ածին ի վերայ իւրեանց կորուստ, սպանեալ զկէս ի մակեդոնական գրնգէն՝ որ պահ ունէին ի միջնաբերդին ի Թերէ։ Իսկ Վեմոթենեն զօրՀանապազ հրապարակախօս լինէր, անգուսՀեն զԱ՛ղեքսանդր, տղայ կոչէր զնա և պատանի ասուշ[2]. և վատահելեր փարատեր զերկիւղ, իբր թէ Թագաւորն մակեդոնացւոց այն ինչ գահակալեալ և ոչ արտաքս քոյ աշխարհին կոխել յանդգներ, և զսահմանս իւր ի խաղաղութեի և յամրի ունել մեծ էր նմա։ Ա՛յլ զբեր ստեպ առ Ա՛ոտաղոս, զոր փիլիպպեայ փոխանակ իւր ի փոքրն Ա՛սիա ընդ այլս կացուցեալ էր, և Հրապուրեր զնա յայտատմբութեի։ Ա՛յլ էր Ա՛ոտաղոս քեռի Կղէոպատրայ՝ երկրորդի կնոջն փիլիպպեայ, և խնդութեամբ զՀրապոյրն Վեմոթենեայ լուաւ։ Ա՛յլ զի կասկած զնմանէ առեալ էր Ա՛ղեքսանդրի, և ոչ տարապարտ, առ ի քաջ ծածկել զդաւն՝ յղեաց առ նա զնաւականին Վեմոթենեի։ այլ և ոչ այնու պատրուակել կարաց ըզնենգն։ Ա՛յլ տեսեալ մի ոմն ի զօրավարաց յղեալ Ա՛ղեքսանդրէ Ա՛սիա, պատուիրանաւ նորա դաւեաց զնա։

1 Քանզի Ա՛ղեքսանդր կործեր հաճ էր, եթէ ու սասեք՝ բայց ըե էրիմս բառ՝ զոգոյնսն ել զպա. և նշաւ և սաքեզ անյնի։
զէրեպատ նոցա՝ ըե յոմնէ էրիմնեն։ 2 Հայոն սակ մարդիկս, որոմ և նոցա համարյակ էրան պատասխա. այլ այլ ինչ փոս ընծայեն։

ԱՄԱՀՆԻ [Ա]ե իբրև նա սպանաւ՝ հանդարտեցին զօրքն, և ետ՝ հեր-
ձուածք խափանեցան։

3669. 335 [Ա]ե իբրև ամրացոյց զթագաւորութիւն իւր Ա[ղէքսանդր
յաղթող խուժաստոյ, յելեւդացւոց աշխարհն ապա շտա-
պեալ՝ անց ընդ Ծերմոպիլէ, և ասէ ցիւրսն. Գիտեմ-
[Թ]են, մինչ դեռ ես [ի] իւրիկի և յերկիր Տրիբաղացն
էի, տղայ կոչեաց զիս, և պատանի՝ մինչ դեռ [ի] [Մա-
սաղիայն էի, և արդ ժամանակ է առ պարսպօք Ա[թե-
նայ ցուցանել զի [ի] չափ առն հասեալ եմ։ [Ա]ե [ի] Ա[հռով-
տիա այնպէս երագ ժամանեաց, զի [ի] տեսիլ աչացն Թե-
բահաւաւէին Թեբացիք։ [Ա]ե կացեալ առ պարիսպս
քաղաքին՝ հրաւիրեր զնոսա [ի] զգաստութիւն, և զկենիքս
միայն և զփրոթոմոյտ զառաջնորդս ապստամբութեանն
խնդրեր գերի, և ձախիս փողոյ անչնչաւորութիւն և ան-
երկեան ազատութիւն ամենեցուն՝ որ գառնայցեն՝ հրա-
մայէր։ Իսկ Թեբացիք փոխարէն [ի] նմանէ խնդրեցին
ընդ արհամարհանս զփիլոտաս և զՆոտիպատրոս. Նմին
նման հրատարակեալ՝ զի որ ձեռն տալ կամիցին յազա-
տութիւն [Ա]լլադայ, եկեսցեն խառնեսցին ընդ իւրեանս։
[Ա]ե ոչ կարացեալ [Ա]ղէքսանդր ողբանօք մեղմել զյա-
մառութիւն նոցա, տրամեցաւ՝ զի չարկ էր զնուռը զվէհն
սահմանել։ [Ա]ե [ի] խիստ պատերազմի արիաբար քա-
ջութեամբ [ի] վեր քան զզօրութիւն իւրեանց Թեբացիք
մարտեան, միայնակ ընդդէմ յոգունց ոսոխաց Ա[ղէքսա-
[Ա]լ մինչ դեռ պնդակալքն տակայինն, ապրեալքն [ի]
մակեդոնական գնդէն՝ որ [ի] միջնաբերդին պահ ու-
նէին՝ իջին անկան յետ կուսէ [ի] վերայ նոցա. և պաշա-
րեալ [Ա]ետ կողմանց Թեբացիք՝ բեկան [ի] սպառ, և եղև
քաղաքն յաւար և [ի] կողոպուտ։

Ել կարեմ զվիշտս տառապանացն պատմել՝ զոր առա-
ջորդքն հասուցին քաղաքացւոցն։ [Ա]ղդ ումանք [ի] Թրակա-
ցւոց զՏիմոկղեայ զաղնուականի տիկնոջ և զառաքինւոյ
դստերն հարին, և զնա կարասին և զգանձս յափշտա-
կեցին. և զօրագլուխն նոցա զնկին գերի ա-
ռեալ, և զմեկեան սիրոն յագեցուցեալ [ի] նա, իսն-
դրեաց ապա՝ եթէ իցէ նորա ոսկի ուրեք և արծաթ
ծածկեալ։ [Ա]ե Տիմոկղէ առ [ի] խնդրել զվրէժ, ասէ.
[Ա]յո։ [Ա]ե ածեալ զնա միայնակ [ի] պարտէզ իւր, եցոյց
նմա ջրհոր, և ասէ. Օ ոմ զգանկալի ինչս իմ այսր [ի]
նեղել քաղաքին ամացի՞։ [Ա]ե ուրախ լեալ սպայն՝ մերձ
եղև [ի] ջրհորն, և մինչ խոնարհեալ հայեր [ի] ներքս [ի]
խորն, մղեաց զնա Տիմոկղէ զօրուքեամբ և արկ [ի]

գուբն, և քարինս ի վերայ հոսեալ՝ կոչնոձամահ սարաւ
զնա։ Ի վերայ հասեալ Թրակացիք. կալան ածին զկինն
Հղթայակաս առ Ա՛ղեքսանդր։ Ի կերպարանաց նորա
և ի ձեմ ոտից ծանեաւ վաղվաղակի Ա՛ղեքսանդր
զաշխուահանութիւն և զարիւնքն նորա, զի սիգաձեմ
զհետ վայրենեացն գայր անխռով և անվհերէր։ Ա՛հարց
զնա Թագաւորն. Դու ով ես։ Ա՛ն նա ասէ։ Ես ձա-
նեայ քոյր, այնմ՝ որ ի վերայ ազատութիւն Ա՛յլադայ ընդ
Հօր քումմ պատերազմեցաւ, և ի Հակատուն առ Վի-
րոնեաւ զօրավարեալ՝ սպանաւ։ Օ արմնացաւ Թագա-
ւորն ընդ արիական պատասխանին, և առաւել ևս ընդ
գործն՝ զոր գործեալ էր, և հրամայեաց Թողուլ զնա
ազատ Հանդերձ որդւովքն՝ գնալ յո՛ւ և կամիցի։

Ա՛յն կոչեաց Ա՛ղեքսանդր ժողով, խորհել զձեւացոց
Ա՛նդ փոխեացիք և պղատացիք և Թեսպացիք և որբոմե-
նացիք՝ նիզակակիցք Ա՛ղեքսանդրի և օգնականք ի յաղ-
Թութիւն՝ ցուցին զանողորմ խստութիւն Թեւացոց, զի
և զքաղաքս իւրեանց կործանեալ էր նոցա, և անգրժե-
լի նախանձ ընդ Պարս կալեալ՝ որոց ձեռն տային հա-
նապազ ընդդէմ Ա՛յլադայ, և էին առելի ամ Հունաց,
և մերժէին ի նոցանէ. և Հաւաստիք իրացն, զի ուխտ
ընդ միմեանս եդեալ էր Հունաց՝ ընդ պարտել զՊարս
կործանել զՄակեդ։ Այլեւս ի՞ զերեաց Հրաման ա-
ռեալ խօսելոց, անբասիր իմն պարս գնաւորանութիւն
Թեւացոց, որպէս զիւրահաւան և յանդուգն անմտու-
Թեան սնալուծն, և ոչ չարութիւն կամաց յայտնի նենգ.
իբր Թէ ի սուտ Համբաւոյ մահուն Ա՛ղեքսանդրի՝ կարի
տենչանօք ազատութեան ապստամբեցին, ոչ ընդդէմ
արքայի՝ այլ որ զԱՀռոմ նորա ունելոց էին։ Ա՛յն Թէ որ
ինչ վրիպական գործեցին, զխիստ Հատուցումն այնո-
րիկ ընկալան՝ անհնարին Հասեալ չարեօքն. զի ոչ ևս
որ ի քաղաքին մնաց՝ բաց ի կանանց ակարաց և ի ման-
կունց և ի ծերոց, որոց ոչ ինչ էր կասկած վտանգի, և
արժանի ողորմութեան էին՝ անհաղորդք ապստամբութեան։
Ա՛յլ մերեցուցանէր Թագաւորին զի ի վեբ, ուր դիք
բազումք և գիւցազունք կացեալ էին, յորոց և բազումք
ընդ նախնիս նորա Համարէին, անդ և Հօր նորա Փիլիպ
պեայ նորածին փառացն խանձարուրք էին, և վեբ
երկրորդ իմն գառաւ նորա։

Հզօր աղերսք, այլ Հզօր ևս էր բարկութիւն յաղԹա-
կանին, և կործանեցաւ քաղաքն։ Ա՛սայց գբուրմն, և ո-
րոց ընդ մակեդոնացիս ասպնջականութիւն իրք էին, և

զՊինդարեայ զաւակն զերևելեայ քերթողին՝ որ զայնպիսի փառս յաւել Լիւդիա, և զայնոսիկ՝ որ առաստամբուլէ խորհրդոյն հակառակ կացեալ եկին զամենեսեան ապրեցոյց։ Իսկ զայլսն, արս իբրև երիս բիւրս, վաճառեաց. և՝ ի պատերազմին անկան արք իբրև վեց հազար։ Ընդ վիշտս ահռելեայ աթենացիք տրտմեալ յոյժ, առ կսկիծ ցաւոցն՝ զԼեսբեայ զխորհուրդն մեծ չհատարեցին, մինչ ժոխիցն ժամանակ հասեալ էր. և հիւրընկալեցին զապրեալս ի մարտէն և յաւարառութենէ ահռելեայ զինախուցեալսն։

Հերագ արշաւանէն Պղեքսանդրի Լիւկիա՝ ի կոր կործանեցան Լիթիք՝ ի խրոխտմանէն, և Պեմոսթենի կորովք բանիցն յանկարծ լուծան. և յերագագոյն աւերմանէն ահռելեայ՝ ի սպառ վհատեալ աթենացիք և խնամարհեալ՝ աղերսաւորս յղեցին առ Պղեքսանդր մաղթել զգըթութի։ Իսկ ընդ աղերսաւորսն և Պեմոսթենն. այլ նա, իբրև՝ ի Նիթերոն լեառն հասին, ահիւ ցասման Թագաւորին՝ դարձաւ յետս, կասեալ՝ ի հրեշտակուէն։ Ի աղվաղայի հրեշտակս արար Պղեքսանդր Պիթիոն՝ մատնել՝ ի ձեռս իւր տասն այլ յատենաբանիցն. քանզի զիւրեսն Թէ նաքա առաջնորդք եին նիզակակցութենն՝ զոր գտակեաց առ Պերոնեաւ փիլիպպոս։ Իսկ Պեմոսթենն զառասպել գայլոցն և շանց արկ առ ժողովուրդն. զայն՝ զի խնդրեն գայլք՝ ի խաշանց՝ մատնել նոցա զշուներն պահապանս իւրեանց, զի խաղաղութենէ արասցեն ընդ նոսա։ Իտաներգոյն և Հաշողագոյն էր առաստաբնն, մանաւանդ յատենաբանս՝ զորս կարի՝ ի դէպ՝ ի չուներս առակեր՝ ի հակոզս իրաւաշաջս, որ՝ ի փրկութենէն հօտին Հգնեին։

Ի վարանս տարակուսի աթենացւոյն, զի գՀարտասխսանս մատնել՝ ի մահ ոչ կարէին. և ոչ այլ հնար գոյր փրկութենէ քաղաքին, Պեմոսդէս՝ զի շնորհս ունէր առաջի Պղեքսանդրի՝ յանձն առ պատգամաւորել բարեխոսել վասն նոցա։ Ահագաւոյն յագեալ՝ ի վրէժխնդրութենէ, կամ՝ ի հնարս փոխարինելոյ մարդասիրութիւն դժնդակ և անողորմ չարեացն՝ զոր արար ընդ Ահեթ, կամ մանաւանդ առ՝ ի բառնալ զկրճին և զնախանձ յաջողութենէ մեծի խորհրդոյն, զի մի՝ ի մեհնել իւրում յաշխարհին՝ պատճառք կամ բաղաք գրգռութենէ՝ ի մի ջի կայցեն, Թողացոյց նոցա զատենախօսսն, բայց միայն զՊարիդեմոս զորեացի՝ աքսորեալ, որ քաջութենէ վաս

տակօքն՝ Լ[ԹԵնայ քաղաքացի լեալ էր, և զԵրէքսո-
ելեպտեայ արքային Թրակացւոց զդուստր ածեալ իւր
կնութեՂ, և ի հրահանգս մարտի աշակերտեալ էր Լփի-
կրատեայ, և ի բազում պատերազմունս զօրավարեալ
աԹենացւոց։ Լ[րդ սա հալածեալ ՍՂէքսանդրէ, ան-
կաւ առ արքայն Պարսից։

Կայց աԹենացւոցն ներեաց Լղէքսանդր զնմ՛, և արար
ընդ նոսա սէր և բարեկամութիւն, և յորդորեր զնոսա
ստեպ՛ գումն գործել ուշակալ լինել մեքձակայից իրացն,
զի ի ձախողել իւրում՛ նոցա անկ էր օրէնս տալ Լ[լեք-
դայ։ Լ[ւ աւանդէն՝ ԹԷ ընդ բազում ժամանակս զՀետ
պատերազմիս խիղճն ՃմԹեցուցաներ զնա վասն չարեացն՝
զոր արար ընդ Թեբէ, և ապաւէն տորժանօքն յաւել ի
քաղցրութիւն և ի մարդասիրութիւն առ այլս։ Օ ընդ
խստութիւն նորա՝ զոր արար ընդ հզօր քաղաքին, սար-
սեաց ամ՛ Լ[լեքսա ահիւ ամենայացի զնուց նորա։

Ա[տղով՛ կոչեաց Լղէքսանդր ի ԿորնԹոս յամ՛ աշ-
խարհաց և յաղատ քաղաքաց յունաստանի, և խնդրեր
կալ սպարապետ ընդ դէմ Պարսից՝ որպէս ի նոյն իշ-
խանութիւն եկաց հայր իւր սակաւ ինչ յառաջ քան զմե-
ռանելն։ Ա[՝եծ և կարևոր խորհուրդ առաջի կայր. զի
խորհէին ի ժողովն անդ արևմտեաք ի կործանումն ա-
րեևելից, ի հնարս վրէժխնդրութեան հնացեալ ոխու-
Թենն ի դարէ հետէ։ Լ[յսմ հրաւիրատուամ՛ չհաւատալի
վէպքն առին պատձառս, և վրդովմունք՛ յորոց կերպա-
րանափոխ եղև գրեԹէ ամ՛ աշխարհ։ Լ[ւ ոչ միաբերել
զգ կարէր ի խորհուրդն յայն, բայց միայն Թագաւորդ
արի և ձեռներէց, գոռ պատերազմող, մեծախոհ, ակա-
նատուր ի մարտի, անվհեր ի վտանգս, անարգել՝ի
խոչից, և որ ընդ իւրև զամ՛ ազգս ՉՅունաց մարԹեր ժո-
ղովել. զի ուրոյն ի միմեանց յանդգնել գործոյն չէին
բաւական, այլ հարկ էր միաբանել նոցա ընդ միով զօ-
րավարաւ՝ որ վարեր զնուրաքանչիւրս ի մասանց մեծի
մարմնոյն՝ ի մի ուշ և ի մի վախճան. որպիսի զգ Լղէք-
սանդր էր։ Ա[և ինչ դժուարին եղև նմա արծարծանել
ի միտս ազգացն զվաղեմի ոխսն Թեբէին ընդդէմ Պարսից
անհաշտ և մշտնջեան ԹշնամեացՀ, զի և յաձախ ի կո-
րուստ նոցա երդուեալ էին, և ի կործանումն նոցա խոր-
հուրդ կալեալ՝ եԹէ միայն պատեհութիւնքն նոցա ի դէպ

1 Ա[ՀՀ ՀՀՀՀՀՀ ՀՀՀ ՀՀՀՀ ՊՀՀ. ՀՀՀՀՀՀՀՀ ՀՀՀՀՀ ՊՀՀՀՀՀ՝ ՀՀՀՀ Ծ-
ՀՀՀ, ՀՀ ՀՀՀ ՀՀՀՀՀՀՀՀ. ՀՀՀ ՀՀՀ ՀՀՀՀՀՀ ՀՀ:

կայցեն. զոհուելիին՝ որ Թէպետ և յընտանւոյ հերձուա-
ծոյն աղօտացեալ, այլ անդէմ պահէր ։ Վաջայաղեն նա-
հանջ բիւրեղն յուսական զօրականին՝ ընդ պարսկա-
խումբ աշխարհազօր բանակն, և դողումն՝ զոր Վաչեսի
զայոս ջանասիրն փոքու մինչև ի Հ օշ հարկ, ցուցա-
նէին անկարև որ ինչ անկասլուելիք էր ի զօրացն ընտրե-
լոց յամ ազգաց Աղուանից և Վաչեդոնից, որոց սպայք
և զօրավարք ի հրահանգս մարտի ի Փիլիպպէսի ու-
սեալ էին, և համայն ասել՝ որոց Վաչեքանդը առաքնոր-
դէր ։ Ըստ ինչ ապա երկմտեալ ժողովականացն՝ հասարակ
հաւանութիւն կացուցին զՎաչեքանդը սպարապետ ընդ-
դէմ Պարսից ։

Նա փութացեալ սպայք բազումք և պետք քաղաքաց և խնամտատեքք գային առ նա, խնդալ ընդ նմա վասն իշխանութեան. և յուսայր Վաչեքանդը զի և Վիտգենես սենեկապետն, որ յայնժամ ի Կորնեթոս էր, գայցէ ընդ այլսն ։ Վայլ նա զարձ և զպատիւ արհամարհեալ, չհա-
մարեր Թէ ուրախ լինել պարտ իցէ ընդ պատուելոյս յաւագութեան, այլ ընդ այսոսիկ՝ որք զպարտսն անվերին գործէին. նախ իրի և ոչ խոստացաւ ի տեղւոջէն ։ Վայլ ինքն Վաչեքանդը չորաւ առ նա ամ աւագանւոյնն, և էր նա յարևոջ ընկողմեալ. և իբրև ետես զազգսն ամ-
բոխն՝ նստաւ, և պշուցեալ հայեր ընդ Վաչեքանդը ։ Վակ նորա զարմացեալ ընդ մեծարոյ խնամատասիրին ան-
շուք կեանսն, և ողջունեալ զնա քաղցրութիւ, եհարց՝ եԹէ զինչ խնդրես. և նա ասէ. Ըէ ինչ այլ, բայց զի ի բաց կացցես՝ չխափանել չինէն զարևդ ։ Վրհամար-
հեցին զնա աւագանին ցասմամբ, այլ Թագաւորն զայ-
լեալ ընդ վերջ պատասխանին՝ ասէ. Ըթէ չէի Վաչեք-
անդը՝ կամէի լինել Վիտգենես ։ Որ խորագոյն ունի խնամտս, և զխորս սրտի ի գնին ածէ ։ Օ ի ցանկայր Վաչեքանդը ունել զնա, և անդր զակն մնացն պիշ ու-
ներ հանապազ, և զայն ծայր բարեբաստութեան համա-
րեր. իսկ առանց այսորիկ՝ բարեբաստագոյն զհրաժա-
րելն չյամէ համարեր. և պարզ իսկ՝ ոչ ինչ կամ զնա ինչ ցանկայր ունել. այս է Վաչեքանդրն և Վիտգենես, Ասաց Թէպետ և Վաչեքանդը մեծ և կարող կարծէր զանձն Թէ իցէ, այլ Տարկ եղև նմա խոնարհել առաջի այնորիկ որում ոչ տալ և ոչ բառնալ ինչ ի նմանէ կարէր ։

1 Որ ի վեր քան զպայման ամ տալ և ոչ առնուլ ինչ ի նմանէ բարեհաճաբար մարդկան առաքա կարող էր ։ Աւետ. յաղ. Բարէբ. Նպարն, եռեա զայր մի որում ոչ Ե. Չ։

Մինչ չև չոչ արարեալ Յ[ս]իա՝ խորհեցաւ Հարցա-
նել զ[Ի]պողոն վասն պատերազմին, և չոքաւ ի Դեղբիս.
այլ ի տարաժամու դիպաւ գալուստ նորա, յաւուրս՝ որ
չարագուշակքն համարեին, յոր չէր օրէն առնուլ հրա-
ման պատասխանւոյ ի պատգամախօսէն. և հրաժարեր
հարցումն երթալ ի մեհեան. Յ[ա]յլ Ա[ղեքսանդր բուռն
և աստիկ էր ի կատարել զամ կամս իւր. և կալեալ
զձեռանէ նորա՝ ձգեաց ի ներքս բռնի. Յա՛ հարցումն
գոչեաց. Ընկնիկձելի ես մանուկ դու. Յա՛ ոչ ևս յաւել
Ա[ղեքսանդր հարցանել զնա, իբրև պատգամ ի նմանէ
զգաւն ընկալեալ. և երթայր ի Ա[ղեքսանդրիա կազմել
ի մեծ արշաւանն։

ՎԱՍՆ ԱՌԱՋԻԿԱՑԻՍ ՋԵԿՈՒՑՈՒՄՆ։

Ի հարհեցայ և կամէի ասա ի սկիզբն պատմութիւն ար-
շաւանացն Ա[ղեքսանդրի՝ առնել տեղագիծ պատկեր, որ
պէս զկրսերոյ Կիւրոսին, վասն հեշտի ընթերցողաց՝ զի
ակներև զդիւցազնին աշխարհակալութիւն տեսցեն. այլ
վասն լսմանաճաւալ տարածութեն չկարացեալ, զթերին
ջանացայց՝ որպէս մարթ է՝ լնուլ, համառօտեալ ի մի
վայր զաշխարհն՝ ընդ որս կանցն, մինչև գարձաւ նա ի
հնդկաց։

Ընդ առնել ի Ա[ղեքսնդիոյ Կիւրոպականն թուրքաս
տանէ, և անցանել ընդ Եփեսոնտա կամ ընդ կիրճն
Դարդանիոյ։

Եւ ընդ փոքրն Ա[սիա անցանել, կրկին Հակատամարտ
մղեալ. միանգամ յանցանելն ընդ Գրանիկ գետ, և միւս
անգամ առ Խեաւ քաղաքաւ։

Ապա յետ երկրորդ Հակատուն մտեալ Յ[ո]սոբիա և ի
Պաղեստինէ, գնայ Յ[ա]գիպտոս և անդ զԱ[ղեքսանդրիա
կառուցանել զՆեղոս։ Եւ ի ներքս ի Եւ իբրև յա
ռաջ խուզացեալ մինչև ի մեհեան Յ[ա]մմէի Զ[ե]ւսմազ-
դայ, գառնայ ընդ նոյն Հանապարհ ի Տիւրոս, և անտի
յառաջէ Յ[ա]փրատ։

Ընդանել ընդ այն և ընդ Տիդրիս, և առ Ա[ր]բեղաւ
զբազմահնչակ յաղթութեն կանգնել։ և առնուլ զնայրա
քաղաք բաբելաստանի զԱ[ր]բելոն, և զԱ[ր]բեհան զՄա-
րսայն։

Ընտի խաղալ ի Ս[ո]ւսիանս մինչև ի Պասպից կամ ի
վրկանիկն ծով, ի Պարթեւս, ի Դրանգիա, և ի Պա-
րոպամիս։

ԱՄ ԱՀ.ՆԲ Վառնայ ի Բակտրիա և ի Սոգդիա, և գայ մինչ ի Յաքսարտ, զոր Աւրտխոս Տանայիս կոչէ, առ որով յայն կոյս Ալիւթք ընակէն, և ի Սկիւթիա մնան մեծի ծաւալարացն։

Նոյնժամայն ընդ այլ և այլ աշխարհս՝ անցանէ ընդ Մեդս գետ, և ի հնդկիկս մտանէ յայս կոյս Վանգեայ բնակեալս, որ են Մողոք մեծ. և ի գետն մտանէ՝ անցանել ընդ նա, այլ զօրքն կասեն։ Նոյնժամայն տեսանել նեթ ցանկացեալ, իջանէ ի վայրն ուր Մեդս բերանացեալ յանդի ի ծով։

Ընդ ի Մակեդոնիոյ մինչև ի Վանգէս, յոր հասեալ մտածեաւ, ի միջի ուղին չէ ինչ մարթ՝ թէ իցէ նուազ քան զՀազար և զՀարիւր փարասխ։ Յաւելեալ ապա և զղջմանն՝ զոր արար ի ծագաց Ալիւկիոյ, ուր ձախատամարան առ Իսեաս մնեցաւ, մինչև ի մեհեանն Ընդամանդայ Մնեվեի ի Իլիա և անտի ի Տիւրոս, յորոց ի միջի ուղին չէ ինչ նուազ քան զերեքհարիւր փարասխ, և այլ և նոյնպէս յաւելեալ զայլոց աշխարհացն՝ յորս արշաւեաց, ժողովին հազար և եօթն հարիւր փարասիսք՝ առանց դարձին նորա ի Բաբելոն՝ ամ ուղին, զոր ընդ սուղ ժամանակի քան զուրթ ամ։

ԳՕԴՈՒԱԾ Գ.

Ընդ Ալեքսանդրէ ի Մակեդոնիոյ՝ արշաւել ի Պարսս. և հասեալ յԱղեն՝ ղԱրիւեայ ընդդէմ գնացեալ. և վասն նախկին ճակատամարտին առ Գրանիկեաւ, և ընդ յաղթութեան։

3670. 334 Դիոդ. ԺԷ. 499։ Արրիան. ա. գրանն՝ խորհել վասն արշաւանին ի Պարսս, և որ ինչ կազմելն և պատրաստել պարտ էր ի յաջողութեանէ գործոյն։ Պլուտ. յԱՀ. 672։ Յոսեփ. Ժա. Բ։

Զնդ հասանել յաշխարհն իւր կուեաց Ալեքսանդր ի ժողով զգլխաւորս ի սպայից զօրացն և զաւագանի ազգին՝ խորհել վասն արշաւանին ի Պարսս, և որ ինչ կազմելն և պատրաստել պարտ էր ի յաջողութեանէ գործոյն։ Նամանաւանդ եղեն, սահմանեցին զնա, քանզի միայն նշխարատորոս և Պարմենիոն խրատ ետուն, մինչ չև սկսեալ զերկայն ժամանակաց պատերազմին՝ կին աճել արքայի և ծնանել ժառանգ Թագաւորութեանն։ Այլ Ալեքսանդր ըստ անժոյժ եռանդեանն՝ ոչ լուաւ նոցա. այլ սպարապետ կացեալ Յունաց, և զօրս անպատեհս ի Տօրէն ընկալեալ, ամենի համարեր ժամավաճառ լինել ի հարսանիս, և ժառանգին սպասել ծնանելոյ. Հաստատեցան ապա ի չուռ. և Թագաւորն մատոյց բա-

զում երևելի սպասուք զՆա գիշեր, և ի վաղիւ քաղաք Ալեքսանդրիոյ ետ կատարել Թատերախաղս[1], որ յուժ մեծիմ ի նախորդաց նորա ի Նուերէ Վիրոսի և Աուսպիցիոյ հաստատեալ էին, ինչուբեայ տօնք ըստ ինուննց դիցուհեացն Աուսպիցիոյ։ Կանգնեաց վրան մեծ վասն իւրոց ջոկոցն, և Տարիւր սեղան ի նմա, ինուննց Տարիւրոց բազմականաց՝ որպես ի գեայ ե կարծել. և զամ իշխանս աբքայազունս և գդեսպանս և զօրավարս և զսպայս հրաւիրեաց, և զամ զօրացն պարգևս բաշխեաց։ Ի սմին ժամանակի զերազն Տաշակաւոր ետես, ի յորդոր վաղ անցանելոյ Ալեքսիա։ զոր յետոյ պատմեացուք։

Այսր քան զչուս առնել՝ յերիւրեաց վերս Ալեքսանդրոյ, և կացոյց անդ փոխանակ իւր զՆաիպատոս երկոտասան Տազար հետևակօք, և ոչ ինչ նուազ այրուձիով։ Ալ և առանին զիրս բարեկամացն ուղղեաց, կիսոց գիւղս բաշխեալ, այլոց ագարակս, և ոմանց ըզմուտս միոյ միոյ յատանաց կամ զՏան նաւահանգստի։ Այլ ի սպառել եկամտից աշխարհին յատատ պարգևեմ, Պերդիկկաս առ ցԹագաւորն։ Այս զինչ ևս քեզ պատիցես, տեր արքայ։ Թագաւորն ասէ. Օ՛յոյս։ Այս նա ասէ. Այս մեզ ապա այն լեցի շատ։ Այս աշուսեաքան խորհրդով հրաժարեաց ի պարգևէն, զոր Թագաւորն տայր նմա։

Յայժ կարևոր է Թագաւորի խելամուտ լինել ցանկուԹեց սրտի, և հմուտ ի վարել զայն. և ուներ Ալեքսանդր զիտձ արուեստին, և գործէր յօգուտ ամենեցուն զմեծուԹիւն իւր, և ի բարերարել ևեԹ վարէր զինչ խանուի։ Օ՛ի այսպէս անչնիւր խնդիր օգտին ընդ Թագաւորին բարւոյ կից գնան, և զիւրն իւրաքանչիւր ոք զբարին և զզաղ ի նորայուն սիրէ, և որչափ ինչ իւրաց գանակ և որչափ ինչ գտանէ ի նմանէ, նոյնչափ կապաՆօք ընդ նմա հարստեալ է։ Յամ պատմուԹիս չիք ուրուք հանգոյն Ալեքսանդրի ուղղեալ զառաքինուԹիւնս զոյս, զի ի բարերարել միայն համարեր Թագաւորել, և եր անյագ և անսպառ ի յորդել զպարգևս։

Ակ իբրև յարմարեաց զամ ի Ալեքսանդրիա, և կազմեաց պատնեչս յառաջարգելս, զի մի խռովուԹիւն ինչ և ապստամբուԹիւն ի միջնել իւրում գործիցի, չոգ արար ապա գարնայոյն Ալեքսիա։ Այն ընդ նմա երեք բիւրք հետևակաց, և չորք կամ հինգ Տազար հեծեալ, ամենե-

[1] Ու թաշաբոյան խոսն է։

քին արք քաջք, հմուտք հրահանգաց մարտի, և ընդ
կիրճ իրացն յաձախ անցեալ առ փիլիպպեոս, որք և
զօրավարել ի կարևոր ժամանակի կարող էին [1]։ Յոլովք
ի սպայիցն անցեալ էին զվաթմանեանիւք. և ի ժողո-
վել կամ ի կարգել կալ ի գլուխս բանակին՝ Թուէին ճե-
ղակոյտ ատեան պատկառելի [2]։ Պարմենիոն հետևա-
կամբին զօրավար եկաց, և փիլոտաս որպէս տղա՝ հա-
զար և ութ հարիւր հեծելոց մակեդոնացւոց, և Կալլաս
Պերաղեայ որդի՝ Թեսսալացւոց նոյնպէս հեծելոց, և
այլ զօրավար՝ այլոց հեծելոցն, որք էին յազգաց Կռւա-
դայ՝ արք իբրև վեց հարիւր։ Կռ Թրակացւոց և պէո-
նացւոց, որ յառաջամարտքն էին, առաջնորդեր Կռա-
սանդր։ Կռ Կերկինայ լճէն ուղի կալաւ Կղեքսանդր
ընդ Կմիխալիս, անց ընդ Կտրիմոն՝ մերձ ի բերան գե-
տոյն, և ապա ընդ Կբրոս գետ, և յաւուրն քսաներորդ
դի եհաս ի Կեստ։ Կռ պատուէր ետ Պարմենեայ ա-
ծել զայրուձին և զհետ հետևակացն ի Կեստէայ Կհ-
բիդ, որ և ածն զնոսա հարիւր և վաթսուն պատերազ-
միկ նաւօք, և յայլ ևս բազումՙ ի կարճ և ի սուղար
նաւս. և ինքն էանց Կհղեռւս ի նաւահանգիստ ա-
քայեցւոց իւրով մարտիկ նաւաւն. և ընդ միշ Կղռւս
պոմտեայ զոհեաց Պոսիդոնի և Կհերեայցն զուարակ, և
ոսկի բաժակաւ եհեղ քաւութիւն ի ծովն։ Կռ պատմեն
զնմանէ, թէ ընկեց զգեղարդն իւր յերկիրն ի նշանակ
ժառանգութեանէ, և նախ քան զամենեսեսին վաղեալ ի նա-
ւէն ի ցամաք Կհսիա սպառազէն լի խնդութեամբ, կանգ-
նեաց ի ծովեզերին բագինս Կբամազդայ և Կթենասայ
և Հերակլեայ՝ զի յաջողեցին նմա իջանել յերկիրն. որ
պէս և ի մեկնելն իւրում Կռւրոպայ արար։

Կռ քաջայոյս ի յաղթութիւն պատերազմին և ի հա-
բուստ աւարն Կսիոյ, և ոչ արծաթ բազում վասն մեծի
արշաւանին պատրաստեալ էր. քանզի համարեր անդրս
տին ի մարտէն ընալ զծախսն յաղթութեանէ, և էր միայն
ի գանձ բանակին եօթանասուն քանքար, և պաշար ամ-
սօրեայ։ Ի մեկնել իւրում ի Մակեդոնիոյ, որպէս ա-
սացի, բաշխեաց զօրավարաց և սպայից զամ ժառան-
գութիւնս իւր. և մանաւանդ խրախուսեաց և լի արար
զնոսա յոյսով, զի ոչ որպէս ի պատերազմ՝ այլ իբրև
յանշուշտ յաղթութիւն երթային։

1 Ջի ոչ մարտիկք՝ այլ մարտուս. հայէր, տեսանէր իմն զծերակոյտ
սոյնք ընտրեալ Թուէին։ Յ---ին։ նախնոյ պետութենէ։ ԱԹ։
2 Եթէ ի գլուխ բանակին ոք

Լուի մտել նորա ի ամպսակն, զոր վասն ապստամբ վարուց
բուքն բնակչացն գնալը կործանել ընդ առաջ եղև նմա ՚ի ։

Աստքսիմն, որ էր անդստին ի նմին քաղաքի վիպագիրը ականատեսը, քաջածանօթ հօր իւրում Փիլիպպեայ՝ որ յոյժ զնա մեծարեր, և աշակերտեալ իսկ էր նմա ։ Վասն զաւորն գուշակեալ՝ վասն որոյ իրաց գայր նա, կանխեաց և երդուաւ՝ չառնել որ ինչ և ինդրեսցէ ։ Այլ Աստքսիմն խնդրեաց ի նմանէ կործանել զ ամպսակն, և այսու մարթանօք կեցոյց զՀայրենիսն ։

Ընտի Աղեքսանդր չոքաւ յԱղիւնն, և արար մեծաքանս յիշատակի Աքիլլեայ, և խաղս առ շիրմաւ նորա հանդիսացոյց ։ և զարմանայր և նախանձէր ընդ կրկին քաղդ նորա ։ զի բարեկամ այնպիսի հաւատարիմ եղև նմա Պատրոկղ ի կենդանութեն, և ի մահուն պայծառ քարոզ փառաց քաջութեն նորա Հոմերոս ։ Օ ի երէկ ոչ Հոմերի զՎղիական հրաշազան քերթուածն յօրինեալ էր, ի շիրմի անգ ընդ դիւոյն և անունն Թաղէր Աքիլեայ ՚։

Այսպա եհաս ի Վրանիկ գետ ի փութիպա ։ և յայնմ կուսէ կային նախարարք խոտանել զանցս նորա տասն բիւրուք հետեւակաց, և աւելի քան զերիս մի հեծելովք ։ Աեմոն հուդայի, որ ամ ծովեզերայ Ասիոյ վերակացու ի Վարեհէ կային, խրատ ետ զօրավարացն մի խըզախել ի մարտ, այլ ապականել զդաշտօրայս և զքաղաքաւքն զի ի սովոյ հարկեսցին զօրք Թշնամւոյն դառնալ յետս ։ Այլ էր Աեմոն ի զօրավարս Վարեհի չարատաք քան զամենեսեան, և պատկանաւոր զէն յաղթութեն ։ Ընկարեմ ասել որ ինչ ի նմա առաւել զարմանալի էր, խորախորհուրդ իմաստութիւնն, թէ արուեստի կամ թէ բարւոք առաջնորդութեն և կամ տիրասիրութեն ։ Վաղ էր և դիպող ժամանակին խորհուրդ նորա, և պատշաճ ընդդէմ յահուր և խիզախ թշնամւոյ՝ որում ոչ քաղաք ոչ ամբարանոցք և ոչ ապաստանք էին, և ի տար աշխարհ և յերկիր թշնամեաց պատերազմիր, և որ ի յապաղելն ևեթ՝ տկարանայր և վատթարէր, և միայն

1 ի Սիգեոն առ շիրմաւն Աքիլեայ կացեալ ասէ ։ Երանի՛ քեզ, պարմանիդ, զի Հոմերոս քարոզ եկաց քաջութեդ։ Եւ առաւել յերեսաց ։ զի եթէ չէր Ի զնաւեան, շիրիմն դիակալ և զանուն նորա ծածկէր ։ կիմ ։ յդ։

Աստիճ ։ ծԲ։

2 Յաստիճան վերնոյն էին զէն թնոյն ասէ, և Աստիճան երէսոս էին ։ երէսին ևս գծագրահանգ նոյն, և ի սոսկ երէսոյն էին գոյ ի բնագիրն, այլ ես վերադրի յօրինեան ինայ։

յերագ յաջողումն մարտին էր ապաստան : Ալիսեայ նախարար ՚ի Պուիւգիա հակառակ եկաց , և ոչ յանձն առ ապականել զերկիր իշխանութեանէ իւրոյ , և յաղթեաց նախարարին խորհուրդ էր՝ այլազգւոյն խրատու , ընդ որում կասկածէին պարսիկք՝ թէ յերկարաձգէ զմարտն զի մի յաղթութեանն առանց իւր վճարեսցի :

Ետյետ Ալեքսանդր խաղայր գայր հետևակօքն սպառազինօք կրկնապատիկ յօրինուածով ձակատուն , և զայրուձին յաջ և յահեակ կացուցեալ էր , և ՚ի վերջէ զկարասին : Իբրև հասին յեզը Պրանիկ գետոյ , խրատեցան պարմենիոն ռազմ գործել , բանակ կազմել , և կալ անդ՝ զի հանգիցեն զօրքն , և ՚ի վաղիւ անդր ընդ այգն նսեմաւ անցանել ընդ գետն , զի մի թշնամիք դիւրաւ զանցն խափանել կարասցեն : Պանզի և վտանգ իսկ էր յանդիման թշնամւոյ ընդ գետ անցանել , և ընդ դեմ խոր և թաւալագոյն ափամբք . զի այրուձին Պարսից՝ որ յայնմ կուսէ ձակատեալ կայր ընդդէմ նոցա , պարտէր զնոսա մինչ էև ռազմ գործեալ էին : Այլ եթէ պարտէին , ոչ այն միայն կորուստ հասանէր նոցա , այլ և այլք յաձախէին զՀետ , զի նախայաղթողք զինք ահաւոր են :

Ել հաւանեցուցին զԱլեքսանդր այս պատձառք , և առնթ համարէր՝ որ ընդ Ալեսպոնտն էանց՝ կասել և ոչ անցանել ընդ վտակ մի , քանզի այսպէս արհամարհեալ կոչէր զՊրանիկ : Այլ մինչ դեռ զարհուրեալ էին Պարսք յերագ գալստենէն և յարիական խորհրդոյն՝ զայն ժամ պատեհ վարկանէր , զի մի արհաւիրք քաջութեանէ իւրոյ և կորովոյ մակեդոնացւոց արհամարհեսցին ՚ի միտս նոցա : Ընծեալզօր Թշնամեաց բազմաձեռն՝ զգետեզերբն սիւնաւ տարածանէր , ձակատ մեծ ընդ երկայնութիւն գետոյն գործեալ՝ ՚ի խափանել զնա՛մ անցս : Իսկ հետևակազօրն՝ մեծաւ մասամբ ՚ի Յունաց վարձկանեալ՝ յետ կուսէ զետեղեալ կային ընդ զաւ ՚ի վեր :

Այս յայսկոյս և յայնկոյս ձակատքն երկոքին կացին յերկար՝ որպէս ընդ կատարած իրացն կասկածեալ . կէսք ճնայինն մտանելոյ Թշնամեաց ՚ի գետն՝ զի ուժգնագոյն հարցեն զնոսա ՚ի դիմել նոցա ՚ի ցամաք . և կէսք դիտէին հետազօտէին զԿուն՝ զանցի տեղի , և զզօրութիւն Թշնամւոյն : Այս հրամայեաց Ալեքսանդր ածել զերիվար իւր , և յորդորեաց զաւագանին լի քաջութիւն խրախուսել զԿետ իւր : Ելոյ Թևին ինքն զօրավարքն , և Պարմենիոն ՚ի ձախուձին . և եմոյծ զկէսս ՚ի զօրացն ՚ի գետն , զԿետ նոցա և զայլն խաղացոյց , և ապա զձախոյ Թևն՝

յորում էր Պարմենիոն, և լինքն զայլ ամ զօրան առեալ
գՀետ իւր՝ եմուտ ի գետն, և զաջոյ թևն վարէր, ձայ-
նիւ փողոյ և ցնծալից աղաղակաւ ամ բանակին։ Իբրև
տեսին զնոսա պարսիկքն՝ զի գային և մերձենային, սկսան
նետաձիգ լինել, և իջին ի խոնարհ՝ ուր դիւրագոյն էր
զառ ի վայրն՝ առ ստորոտովն պահ ունել։ Եւ անդ
ուժգին ընդ միմեանս հեծեալք բաղխեցան՝ կէսք ի ցա-
մաք աձապարեալ, կէսք ի խափանել զնոսա։ Յրու-
ձին մակեդոնական սակաւաձեռն էր յոյժ քան զԹշնա-
մեացն, և դժպատեհ նմա ձև մարտին, և նետք ի բար-
ձուէն տեղային ի նոսա։ Պարձեալ և ընտիրք այրու-
ձիոյն պարսկաց անդր ժողովեալ էին, և անդ Ա՛եմնոն
որդւովք իւրովք մարտնչէր։ Եւմին իրի գունդն մակե-
դոնական զառաջինն ուժգին դիմամարտեալ, այլ իբրև
յառաջամարտիկ կարգք անկան՝ նահանջեաց։ Ա՛ղեք-
սանդր որ գՀետ գայր՝ ընտրիւք զօրացն յետ կուսէ նո-
ցա յօդնուԹի, անդ յառաջ և քաջալերեաց զնոսա ի
տեսիլ իւր, և ցիր և ցան զպարսիկս ի փախուստ դար-
ձոյց. և ամ զօրքն գՀետ նորա խուժեալ՝ անցին ընդ
գետն, և ամ ուստեք յարձակեցան ի Թշնամիս։

Մինչամուխ եղև նախ խուռն այրուձիոյ Թշնաւեացն՝
ուր զօրավարքն մարտնչէին. և էր լինքն նշանաւոր աս-
պարան, և խոպոպիւք փետրոց՝ որ զսաղաւարտին որ-
պէս Թևք կրկին մեծատարած սաւառնէին, սպիտակք
յոյժ ակնախտիղ։ Եւ շուրջ զնովաւ եղև պատերազմ
խիստ, և հեծեալք որպէս գՀետևամարտս անշարժք, այր
ընդ ոսոխին կռուեալ՝ մղէին գիրեարս յետս ընկրկել։
ՍպիԹրոբատ նախարար Պոնիոյ, որ զդուստր Դարեհի
ունէր կնուԹե, նա յամ զօրավարն քաջագոյն էր։ Եւ
առեալ ընդ իւր իշխանս պարսիկս քառասուն այր զազ-
գականս իւր ականաւորս քաջուԹե, անյողդողդս ի մար-
տի, և արհաւիրս նոքօք հանդերձ ընդ բնաւս արկանէր։
Ընդդէմ նորա ձիաԹափ հասանէ Ա՛ղեքսանդր, և կա-
ցեալ առ միմեանս ի կռիւ, այր գընկեր գեղարդեամբ
վիրաւորեցին ոչ կարեվէր։ Ա՛խտարն կատաղեալ՝
ձգեաց զսուր ընդդէմ ոսոխին. այլ սա կանխեաց տա-
պալեցոյց զնա յերկիր՝ ոիպաւ ընդ դէմն հարեալ։ Ա՛ղ
Ոստակ եղբայր նախարարին յարձակեալ ընդ կողմն,
ած սակերը գլխանոցին, և ընդ ցցունն մինչ ի հերս նո-
ցա Թափ անցոյց գՀարուածն. և մինչ կրկներ գՀարուածն
ի գլուխ նորա մերկ՝ ընդ ձեղքուած սաղաւարտին,
Ալէքսոս եՀատ սուսերաւ զձեռն նորա, և կեցոյց զտէրն։

Ի տեսիլ մեծի վտանգին՝ յորմէ եկեաց Աղբեքսանդր, առաւել եւս խրախուսեալ զօրականքն՝ զարմանալի ձեւ գունս գործելոյն։ Իսկ որ ի միջակին հեծելոյն էին պարսիկք՝ ի Թանձրատարափ ներոից մեկնակազին հեռս սմաքարտիցն, որ ընդ պրոտձին խառն էին, ոչ եւս ժուժկալեալ առաջի մակեդոնացւոց դէմ առ դէմ պատերազմին՝ ընկրկէին. և աջ և ահեակ Թիւք զկապարձն դարձուցեալ փախեան։ Իսկ Հալածեաց զնոսա Աղեքսանդր, այլ զարձաւ ի վերայ հետեւակացն։

Այրքա սկիզբ կացին զառաջինն, ոչ խրզախմամբ՝ այլ ապշեալք, որպէս վկապագիրն ասէ. իսկ իբրև ընդ այրուձիոյն և փազանգն մակեդոնական եհաս՝ անցեալ ընդ գեան. և գունդ առ գունդ մատեան ի կռիւ, տկարացան Պարսք, և ոչ յերկարեալ զարձան ի փախուստ առ հասարակ, բայց միայն ի վարձկան գնդէն հետեւակացն Յունաց։ Իսկ սոքա ամրացեալ ի վերայ միոյ ուրուք ի բլրոց, խնդրեցին յԱղեքսանդրէ՝ Թողուլ զնոսա Համաստձակ. այլ նա յախուռն սրտմտութիւն յարձակեալ ի նոսա, կորոյս սուսերահար զձին՝ այլ ոչ գՕ ուարակապուխն. և զնովաւ ջերմն կռիւ լեալ, անկան բազմագոյնք անդ՝ քան որչափ այլուր ի նորայոյն վերաւորք կամ սպանեալք եղեն, քանզի ընդ հմտաւս մարտի և ընդ քաջակորով մարտնչեին և ընդ այնոսիկ՝ որոց յոյս կենաց հաստեալ էր։ Այս Հարան կոտորեցան ամենեքեան, բայց յերկուց հազարաց գերեցոց։ Այս զօրագլուխք բազումք պարսիկք ի պատերազմի անդ անկան. բայց Աբիստես փախեաւ ի Փռիւգիա, և անդ՝ որպէս պատմեն՝ դաւ արար անձին, զի ինքն էր պատճառք պատերազմին. այլ յաձախագոյն փառաց մարթեր նմա զնոյն ի ձեռն մեռանել։ Այս եղեն ամ անկեալքն ի պատերազմի անդ ի կողմանէն Պարսից՝ երկու բիւրք հետեւակաց, և հեծեալք՝ երկու հազար և հինգ հարիւր։ Այս ի մակեդոնացւոց անկան ի սկզբան մարտին քան և հինգ հեծեալք ի Թիւինապահաց արքայի ի նահնումս ձակատն։ որոց անդրիս պշնձի՝ ի Լ խիպպեայ Ձարտարագործեալ՝ կանգնեաց Աղեքսանդր ի քաղաք մի մակեդոնացւոց, որում անուն էր Պիա. ուստի յետ բազում ժամանակաց փոխեաց զնոսա ի Հռոմէ Ա։ Աետեւեալսն։ Իսկ յայլոց հեծելոց սպանան արք աւելի քան զվաթսուն, և հետեւակք իբրև երեսուն այր։ Աքք ի վաղիւն ի մի վայր ամենեքին Թաղեցան, հանդերձ զինուբն իւրեանց և կազմիւք. և ապահարկ արար Թագաւորն զոր-

դիս նոցա և զհարս յամ հարկաց և ի ծառայութենէ : ԱՄԱՀ·ՆՔ
Եւ վերաւորաց փոյթ և խնամ մեծ կալեալ, այց առնէր՝ տեսանել զդարման վերաց նոցա . խնդրէր և հարցանէր որ ինչ պատահէր ընդ ումեք ումեք անցեալ էին, և լսէր զքաջութիս նոցա և զպարծանս արութենէն : Օ՛ի բազում ինչ օգնէ Թագաւորի խոնարհեցուցանել զանձն առ ամենեսին և ընտանենալ : Նա և զառագաստ Պարսից ետ Թաղել, և զՅոյնս՝ որ նոցա զինուորեալ անկան : Ա՛յլ զգերեալսն ի նոցանէ՝ կապեալ ի շղթայս յղեաց ի Մակեդոնիա ծառայեցուցանել զնոսա, փոխանակ զի զէն առնուն ընդ խուժս ընդդէմ հայրենեացն, կոխելով զհրամանս աշխարհին :

Պարտ և հաճոյ Թուեցաւ Ա՛ղեքսանդրի հաղորդս փառաց յաղթութեն առնել զՅոյնս, և մանաւանդ զաթենացիսն՝ որոց երեքարիւր վահանս յաւարէ Թշնամեացն առաքեաց . և ի վերայ այլոց աւարաց զայս ինչ հրամանս ետ ի փառս Յունաց արձանագրել· ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԻԼԻՊՊԵԱՆ ԵՒ ՀԵԼԼԵՆՔ, ԱՌԱՆՑ ՍՊԱՐՏԱՑԻՈՑ, ԶԱՑՍՈՍԻԿ ՑԱՍԻԱՐՆԱԿ ԽԺԻՑՆ ԱԻԱՐՍ : Ա՛յս մեծախոհութիւ գործ նոր ինն և յոյժ զարմանալի է ի յաղթողս, որոց գժուարին Թուի բաժանել ընդ այլսւմ զփառս յաղթութիւն, և է մեծի խոհականութիւն Ա՛ղեքսանդրի ցոյց : Վասնզի դեռ ևս կարօտ էր օգնականութենէ Յունաց, և խորհէր ամրացուցանել զնոսա ի սէր և ի հաւատարմութիւն, փառաւիւոյս արարեալ զնոսա յաղթութիւն : Եւ զհամ անօթ ոսկի և արծաթի, զգորգս ծիրանի, և զհամ սպասս զեղխութիւն Պարսից, կամ գէթ զմեծ կէս մասն, առաքեաց առ մայր իւր :

ԳՕԴՈՒԱԾ Դ·

Ա՛ղեքսանդրի զիջուրն Ա՛ղեքսանդրիա գրելոյ զմա . և վասն աղբերն մահացու հնութեանցն՝ ի Սիդոնս գեպ լուացմանէն . և վէպ Փիլիպպեայ բժշկի երազ ապրուներլ զնա . և վասն անուէյ նորա ընդ հերձն Սիբիկեայ, և Ա՛ղբիդեմայ հաճարչակ պատասխանին՝ որ եղեն նմա ի մահ, և արշաւանքն Պարսից հնչարագիր :

Յաղթութիւն մարտին, որ զԴրանիկեաւն մղեցաւ, 3670 . 334
հետեւեցին ոչ անակնկալ երեք : Արշինկէ, զոր խուժքն պատուար ունէին պատերազմի ի ծովէ, նուաձեցաւ Ա՛ղեքս. Ա. Ա՛ղեքսանդր . և Թողաւ յինքնօրէն ազատութիւն : Եւ 36 . Բ . 60 :
Դէմ . ԺԷ . 503 :

Պատ. չԼ. ՀԵ. 673։ Կ. Կոչ. Ջ. Ֆ. Ֆ։ Յոյնք. Լ. Ե. Ե։ Սոքր. Ժ. 6։ Սոզ. Ե։

ետ ջորիս աւուրց եկն Կ՚ընդեանդր Ա՚փեսոս, և դար-
ձոյց ընդ իւր զվտարանդիս՝ որ վասն իւր Հալածեալ
եկն, և կացոյց անդ ռասկապետութիւն։ Ա՚ՀԼ զՀարկն
զոր տային արքային Պարսից՝ Հրամայեաց Տարկել ի սա-
հեան Ա՚ռտեմեայ, որում և զոհս մատոյց, և զորբուս
Թէս նորա չքուլ մեծաւ ետ Հուսկել, և որպէս Ձակա-
տու պատերազմի ամ զօրօքն ածեալ գՀանդիան՝ կատա-
րեալ զպաշտամունսն։ Ի Ժամանակին յայմմիկ եփեսա-
ցիք կանգնեին անգրէն զմեհեանն Ա՚ռտեմեայ, որ ի գե-
ղերի ծննդեանն Կ՚ընդեանդրի Տրիպղեցաւ. և յառաջա-
նայր գործ շինուածոյն։ Պ՚ինակրատ Ձարտարապետ ա-
նուանի՝ վերակացու էր շինուածոյ մեհենին, որ ասպա
զԿ՚ընդեանդրիա Ա՚գեխտոս կառոյց Հրամանաւ Կ՚ընդ-
սանդրի։ Ի մեծակառոյց մեհենին շինուած ի Հակա-
ռակ մտեալ ագռաւ՝ ընդ ելանել. և տիկնայք անգամ
մտադիւրութիւն զարդս իւրեանց և որ ինչ չքնաղ և
ցանկալի էր նոցա՝ նուիրէին։ Իսկ Կ՚ընդեանդր, զի ամ
ինչ փառաց ցանկայր նա, խոստացաւ Հատուցանել զամ
ծախս շինուածոյն, և որ ինչ յետ պատրիկ ծախեղոյն
էր, բայց միայն զի յարձանագիր մեհենին անուն նորա
գրոշմեսցի։ Ա՚ՀԼ ոչ յանձն առին զայն եփեսացիք, և
ոչ Համարձակ իշխեալ ժխտել նմա զփառս, չողմնական
Հնարիւք լուծին զվարանսն, զի ասեն. Ել վայելէ դից
արձան միւեանց կանգնել։ Այս մինչ չև մեհենեալ էր նա
Ա՚փեսոսի՝ Տեսչակք ի Տրաղաց և ի Ա՚ռնեսեայ ե-
կին, ածեալ նմա զպակասս քաղաքաց իւրեանց։

Ա՚յս խաղաց ի Ա՚ինէասս. և փակեցին մինէասցիք
զդրունս ընդդէմ նորա՝ յոսոցեալք յերապահս Հզօր
օգնութեի. քանզի տօրմիզ յաձախագունդ նաւացն Պար-
սից՝ կարծիս լինն տալ օգնելոյ նոցա. այլ իբրև բազում
անգամ Ջանացաւ զտօրմիզ Թշնամեացն դրդել ի մարտ
և չկարաց, Հարկեցաւ ընկրկել։ Ի քաղաք այսր Ա՚ենիան
ապրեցելովք ի պարտութէն իւրովքն բազմութէ մե-
ծաւ ապաստանեալ, ի մոլ եղեալ եր քաջութէ դիմա-
մարտել։ Կ՚ընդեանդրի աձապարեալ առանց ամ յա-
պաղման՝ յարձակեցոյց անդր չամ կողմանց զօրսն, և
սանդուղս ի պարիսպսն յեցոյց. և սաստկացոյց մարտ
ի վերայ քաղաքին։ Ա՚ոլին քաջութէ և քաղաքացիքն
պահ կալան ընդդէմ անխոնջ գնդացն, զորս Կ՚ընդեանդր
փոխանակաւոր ի պարիսպսն մատուցանէր զաւուրս բա-
զումս։ Այլ իբրև ետես զի չամ կողմանց չեռս վանէին
զօրքն, և կազմ իսկ եր քաղաքն պաշարեալ առ ի տուկ

երկարատև պաշարման, զիմ կազմածս մեքենայիցն ի գործ արկ, և խրամատս բազում ի պարիսպսն գոր ծեաց. և միանգամայն ընդ խրամատսն և ընդ սանդուղս յարձակեցոյց զզօրսն։ Ընդդէմ ոմ Ճգանց Թշնամեացն զարմանալի քաջութիւք քաղաքացիքն ժուժկալեալ, յետ այնորիկ առ ածին չտկալոյ ի սպառ՝ խօսեցան ի խա զաղութիւն։ Եւ արար Աղեքսանդր քաղցրութիւն ընդ բնիկ միւեատցիս. իսկ զեկին օտարս վաճառեաց։ Եւ ինչ աստ գ՝ենմանէ ասէ վկայագիրն, այլ յայտ է՝ զի նա խոյս էտ իւրովքն ի քաղաքէն։

Ի մեկնել հաւատոցմէն Թշնամեաց, խորհուրդ կալաւ Աղեքսանդր արձակել և զնւրն՝ յոր բազում ընչից ծախք լինէին, և ինքն ի կարևորսն չքաւորէր։ Համարէն այլք՝ Թէ զի առաջի կայր նմա տալ ընդ Դարեհի պատերազմ, յոր երկոցունց պետութեանցն բադդ կենցդ, խորհեցաւ բառնալ զոյս փախստի զօրացն, և զյաղթութիւնն միայն Թողուլ նոցա ապաւէն։ Եւ կալաւ առ իւր նաւս ի կրել զկազմածս մարտի, և սակաւս ի պատերազմիկ նաւաց։

Եւ կալեալ զ՝Իլէտոս, անց ի Կարիա պաշարել զ՝Զիկառնաս քաղաք զժուարամատոյց դիպող տեղեաւն և Հզօր ամրութիւք։ Դարձեալ և զ՝ենմանն Ճարտար և կորովի քան զիմ սպայս Դարեհի՝ անդր ամբոխիւ զօրաց անկեալ էր, ի պայծառացուցանել զքաջութիւն իւր և զտիրասեր հաւատարմութիւն. որ և մարտեաւ ուժգին ի վերայ քաղաքին։ Եւ մա զօրավիդն էր և այլ ոմն պէտ տանի և վաստակաւոր ի սպայիցն, Լիփեաղս։ Եւ աս տի և անտի ոմ անվէհեր արուեստ և ըստ ամենահմուտ հրամանաց մարտի Ճգնեցան։ Ո՝ակեդոնացիք զժուա բաւ և բազում աշխատութիւք լցեալ զկողմն մի խրամին, մատուցին ի պարիսպս զնեքենայսն. այլ զղջացան յոյժ, զի ի պաշարելոցն ասատիկ և ի տեպ յարձակմանէ վաղ ուշացեալք աշխատուէն նոցա, և կազմածքն Տրձիգ եղեն։ Եւ խոստ հարուածովք խոյիցն խրամատս լայնս ի պարիսպն գործեալ, ապա կարկեցան կացին՝ ի տե սանել նորակերտեալ յետ կուսէ միջնապարիսպ կիսա բոլոր, որ ի քեթեել ական վերբերէր ինն յերկրէ. ընդ որ չմարթեր առանց բազմամարդ մարդկան կոտորածի մարտ դնել, քանզի յաշտարակաց բարձանց երկուստեք հարկանէին զնոսա ի թևոց Թշնամիք։ Տէս ինձ՝ զի չքաջաբաղաքի ամրութիւն անկասկած քան զկորով և զքաջա թիւն պահակացն։ Յերկարաձգեցաւ յոյժ պաշարումն

քաղաքին, և ընդ ամենաձեռն դժուարութիւն ընդ որս ամ որ վճռեալ՝ երկայնամտեաց Կղեքսանդր. և յաջախութիւն վտանգաց՝ յաւելուին զօրք նորա ի խրախոյս, և անյողդողդ հաստատութիւն յաղթեցին։ Եւ մնեալ, քանզի ոչ էս մարթեր ժուժկալել կալ ընդդէմ Թշնամեաց, հարկ եղէ խոյս տալ ի քաղաքէն. և զի եր ազատ ընդ ծով, նստոյց պահակապանս գունդ հզօր ի միջնաբերդին՝ կամ պաշարաւ, և ամ քնակիցք հանդերձ և գանձիւք անց ի կոլ կղզի, որ ոչ ինչ կարի հեռի է յՀղիկառնայ։ Իսկ էս պարտ համարեր Կղեքսանդր պաշարել զմիջնաբերդն, զի ոչ իակ կարէաւր եր այն յետ աւերելոյ քաղաքին՝ զոր կործանեացն ի հիմանց. բայց միայն պատեալ զայն ամբոր պարսպաւ, նստոյց պահապանս յաչխարհին։

Իսկ Ա[ր]տեմիսիա աշխարհաճուհին Կարիոյ մեռաւ, և եթող Ադրիեասի եղբօր իւրում զթագաւորութիւն. և ի նահանջ Կդա քոյր և կին նորա ըստ օրինաց աշխարհին կալաւ։ Նայց Պէքսոդոր բռնակալեաց զայն ի նմանէ, և նմա հրամանաւ Դարեհի յաջորդեաց Ռոմոտոբատ, որ զդուստր նորա առեալ եր կնութեան։ Նայց Կդա պա հեաց զքաղաք մի հզօր զՂիկդ, զորոյ զփականսն տուեալ եր Կղեքսանդրի՝ ընդ մնանելն նորա ի Կարիա, և համարեալ զնա իւր յորդեգիրս։ Իսկ ոչ արհամարհեաց Թագաւորն զպատիւն, այլ նմին ինքեան զպահ քաղաքին ետ. և իբրև զՂիկառնաս կալաւ և տիրեաց ամ աշխարհին, զնա անդ իշխան կացոյց։ Իսկ նա ի հաւատսիս անկեղծ երախտագիտութենէն՝ խորտիկս ամպիւս և ազգի ազգի պղտիկունս ցանկալիս հանապազօր յղէր առ նա, և ետ նմա ի ծառայութենէ խահանութս և հայցարարս և պըշ- Պլուտ. յԱլեքսանդրոյ. գղտ։ զակունտրագործս ձարտարս։ Իսկ նա յղեաց պատասխանի, թէ սպասաւոր այգ անպիտանք են ինձ, զի խոհագործք ձարտարագոյնք են ինձ՝ ի դաստիարակ իմոյ՝ ի Լեւոնիդեայ տուեալ, ձեւիւ նախ քան զայգն, և զգաստ ձաշկերոյթ. և պատրաստի մին ինձ ձաշ հասեղ՝ և միւսն ընթրիս ածիս[1]։

Ի Թագաւորաց փոքուն Կղիոյ յոգունք նուաձեցան կամակար ընդ Կղեքսանդրիւ. ընդ նոսա և Ոիհրդատ արքայ պոնտացւոց, որ ապա յարեալ ի նա՝ յիմ ար-

1 Ջի լաւագոյն խոհակերք էին քայգաշջիսն, և առ ընթրեկերս՝ նորա ի դաստիարակն Լեւոնիդ. չափով ձաշկերոյթ։ գեայ տուեալ նմա առ ի ձաշ

շաւանան ընդ նմա երթայր ։ Այլ եր Ալինդրատոս այս որ- ԱՄԱՀ.ՆԲ
դի Ալբիոքարզանայ՝ նախաբարին փախուդեոյ , և Թագա-
ւոր Պոնտոսի , զորմէ այլուր ասացաւ ։ Օ սա վեցերորդ
գնետ Ալրտաւազդ ասէն Թագաւոր կացեալ . զի զպոն-
տացւոց Թագաւորութեն Ալրտաւազդ ասէն հինեալ ,
զոր կացոյց Թագաւոր հայր նորա Պարեհ Պ շատսպեանն ։ Փարթ. Է։
Այլ է ի յաջորդաց սորա անուանին Պնէրդատ , որ յոյժ
գնեռոմայեցիսն ձգնեաց ։

Պինչ չև եր ձերեալ Ալքեքսանդր , հրամայն ետ զօ-
բացն զի որ նորոդ զայն ամ կին ածեալ նէին՝ դարձցին ի
Պակեդոնիա ձերել ընդ կանայս իւրեանց , բայց միայն
գարնայնոյն դառնալ վերստին ։ Այլ ետ նոցա սպայս ե-
բիս զօրագլուխս , ածել դարձուցանել զնոսա ։ Օ սոյն Եբեր. օբին .
Պոլսեսիս օրինագրեաց ՝ած . և զի օրինքս այս կամ սո Եբ. Է։
վորուհեի չիք յաւելք յագգայ , ի դէպ է կարծել զի
զայն Ալբիստոել ի Հրէէ անտի ուսաւ , ընդ որում
եղէն նորա իրք յԱլիա , և խելամուտ լեալ խնստուն
և պատշաճ օրինին խրատեաց յայն զաշակերան , և նա
ատ զնոյն ի կիր էարկ ։

Ի միւսում ամի խաղացոյց փութով զզօրսն . այլ 367։ · 333
երկամեր գնալ դէպ ուղիղ ընդդէմ Պարեհի , և խոր-
հեր զայլ եւս ծովեզերսն նուաձել , յապահովագոյն գայս
վարկուցեալ զի լիցի յետ կուսէ անկասած ։ Ի սկզբան
արշաւանին խափաներ առ փասեղեաւ քաղաքաւ , որ է
ընդ Ա իկիա և ընդ Պամփիլիա . զի է անդ կիրճ առ ծով
եզերբն՝ ուսոի մերթ ցածնու տեղի տայ ծով , և դիւ-
րագնաց բանայ ճանապարհ , և մերթ ամբարձեալ ծած-
կէ զցամաքն ջուրբ ։ Այլ եր ձմեռն յայնժամ . բայց Ա-
լեքսանդր անկասելին ի խորհրդոյն չեկաց չնոյց ջուրցն
ցածնլոյ , այլ խաղացոյց զզօրսն զօրն զայն ողջոյն ընդ
ջուրսն միւսև ցգօսի ։ Կէաք ի վիպագրաց ի սեթևեթ
մատենիցն պատմեն՝ դիցն ինն շնորհիւ հնազանդեալ ա-
լեացն Ալքեքսանդրի՝ և ի տարաժամս ըստ ոչ սովորու-
թեէ տեղի տուեալ , գործել համարձակ անցս ։ Օ այս
և կուրտիոս այսպէս վկայէ ։ Օ արմանամ զի և Ցով-
սեպոս՝ հրաշաշաւիղ անցից իսրայէլացւոցն ընդ ցամաք
ի միջ կարմիր ծովուն՝ օրինակ ածէ զայս , և անարգէ
զհրաշն . զի սա և նորին Ալքեքսանդրի բանիւն սուտ
յանդիմանի . Վանգի ասէ ուրեք ի Թվէին , զոր ածէ
Պևուտարքոս , եթէ Ալեկնեալ ի փասեղեայ քաղաքէ ,
անցաք հետի ընդ կիրճ կիմաքսայ լերին ։ Այլ այն
յայտ է՝ զի Ալքեքսանդր ի յաջողանն մեծամեծ խոր-

հրդոյն խնդրէր պարապ ի պատրէզամիկն, իբր թէ կարի խաման ունկնդիր նմա դիք։

Ինչ դեռ էր ի կողմանս փասէզեայ, դիտաց զդաշանուէնն Աղեքսանդրի որդւոյ Նրօպայ՝ զոր այն ինչ ի վերայ պրուժիոյն Թեսսաղացւոց փոխանակ Կալասայ կացուցեալ էր, զի զկալաս եղ մարզպետ։ Քանզի Վաբերդ արքայ գիր ի նենգաւորէն ընկալեալ, խոստանայր նմա հազար քսիւքար ոսկւոյ և զնմակեդծական պետուէնն՝ եթէ գաւել միայն կարասցէ զԱղեքսանդր։ ոչ ինչ զմտաւ ածեալ՝ զի յոյժ Թանկագին ստանայր եղեւամբ զաղատուէնն յահաւոր Թշնամւոյ։ Աղ Թզիաբերէն, որ ածէր զպատասխանին, ըմբռնեալ խոստացան եղև, և զարժանին պատուհաս նենգաւորն ընկալաւ։ Այլ իբրև ուզղեաց Աղեքսանդր զիրս Կիլիկեայ և զՊամփիլիոյ, ած զզօրս ի Կեղեխ քաղաք փռիւգիոյ, ընդ որ Աթենաս գնայ գետ, ի քերԹողացն վէպս պանծացեալ։ Յոմեցաւ ընդ պահակապանս միջնաբերդին՝ ուր քաղաքացիքն ամրացեալ էին, տալ ի ձեռս իւր զքաղաքն։ Որ քան յանառիկ ամրութէնն յուսացեալ ըմբռստ եւտուն պատասխանի, Թէ ե տակաւին չունչ յանդունս մեր։ Այլ իբրև ի նեղ անկան՝ խնդրեցին դուլ առնել զինուց զաւուրս վաԹսուն, և եԹէ չգամանեսցեն նոցա օգնութէի՝ անձնատուր լինել. և չեհաս օգնութէնն, և ի ժամանակեալ աւուրն մատնեցին զքաղաքն։

Ինտի Էանց Աղեքսանդր ի փռիւգիա, և ե մայրաքաղաք աշխարհին Կորդիոն, քաղաք վաղեմի և ակնաւոր՝ ուր Միդոնն եկաց Թագաւոր, կառուցեալ զԱպազար գեռով։ Որ կալեալ զայն, յանկացաւ տեսանել զանուանի կառն յորոյ առեղն եր գորդիանեանն կռնեցեալ Հանգոյցն։ Օյ եր այն կապ առեղին ընդ լուծն, կնձիուն իմն բազմամանուած և ձարտարաշիւս անեղր և անծայր. և աւանդութէի եր յաչխարհին՝ իբր Թէ պատգամ ի գից լեալ, զի որ որ լուծցէ զՀանգոյցն զայն՝ նա զԱսիա նուաձեսցէ։ Որ ի մտի Աղեքսանդր յինքն Հանել զպատգամն. և յերկարագոյն նուագօք զրաջան լեալ, ապա ասէ. Խակ զի փոյթ է Թէ ձրպես կնձիուն լուծանիցի. և եհան զայն սուսերաւն, ծաղր արարեալ կամ Թէ լցեալ զՀրաման պատասխանւոյն, ասէ վիպագիրն։

Այց Վաբերդ արքայ ամ կաղմութէ պատրաստեր ի դիմամարտ, և Աենոն հռոդացի խրատ ետ նմա՝ ի մա կեդոնիա կանխել ածել զպատերազմն. զի յապահովա-

զոյն էր խորհուրդն այն՝ի վարանս վտանգին։ Օ՜ սպառ-
տացիք յայնժամ և այլք բազումք յաղթող Յունաց
խռովել կային ընդ մակեդոնացիս՝ յօժարք՝ի միաբանել
ընդ Պարսիկն, և հարկ էր Լիքբսանդրի՝ի պահ բնիկ
աշխարհին փութալով անցանել ընդ ծով՝ մեհենաւ ա-
սիոյ։ Հաձոյ Թուեցաւ Պարսիկի խորհուրդն, և հաս-
տատեալ յայն՝ի նոյն ինքն՝ի իրատուն յանձնեաց
զգործն, և կացոյց զԱնմոն ծովապետ և սպարապետ
ամ պատերազմին։ Ձմարթէր Պարսիկի բարւոք և
ընտրութենեն առնել. զի ոչ ոք հաւասարէր Անմոնի
յաջողութ, և էր նա քաջ քան զամ զօրավարս, և՝ի
բազում ամաց ամ հաւատարմութ վաստակէր՝ի վե-
րայ աշխարհին Պարսից. և եթէ իրատուն նորա ան-
սային պարսիկք, խոյս տային՝ի Պրանիկեայ մարտէն։
Այլ նա և յետ պարտութեան մարտին՝ ոչ կասեցաւ՝ի
ծառայութենէ. ժողովեաց զկայ մեաց բանակին, և չո-
քաւ՝ի Միլետոս, և անտի Հղիկառնաս, և ապա՝ի
Կով կղզի, ուր և զՀրամանն ընկալաւ զօրավարութե
ընդ ծով և ընդ ցամաք։ Ընդ նաւատորմիղն խմբեցաւ
կազմ և պատրաստ՝ի հնազանդել նմա։ Այսաւ նա
զԽիոս կղզի և զԼեսբոս լուիս իւրով բաց՝ի Միտիլե
նեայ քաղաքէ։ Ոչ ապա մինչ պատրաստեր անցանել
Հելլեսպոնտ, և անդր խոկ Հելլադա և՝ի Մակեդոնիա
մղել զպատերազմն, հարկ եղև նմա պաշարել զԼիտի-
լենէ, և անդ մեռաւ՝ի մեծ աղետս պարսկայնոյ պետու-
թե։ Ցետ լինդ՝ զի չքք լինչ առն պիտանւոյ հաւասար, և
և կորստեան նորա յաձախագոյն զհետ գայ աշխարհին
կորուստ։ Մահուամբն Անմոնի խափանեցաւ առաջար-
կեալն խորհուրդ. քանզի Պարսիկի չգոյր այլ զօրավար
քաջ՝ի փոխանակել նմա, և ձեռնհասի եղև՝ի կարևոր
գործոյն՝ որով միայն փրկեալց եր աշխարհն, և յարևե-
լից զօրսն ունայր նմա յոյս հնարից փրկութե։ Այլ ոչ
յոք՝ի զօրավարացն յուսացեալ՝ խորհուրդ կալաւ ան-
ձամբ զօրավարել. և զօրաժողով ամ զօրացն՝ի Կաբի-
լոն սահմանեաց, և հանդէս արար անդ բանակին, և
գտան չորեքհարիւր կամ հինգ և կամ վեց հարիւր հա-
զար այր. քանզի այլազգ՝ի միմեանց զհամար զօրացն
դնեն վկայագիրք։

Իսայ Լիքբսանդր՝ի Պորդիկեան մեհենալ՝ եկն նուա-
ձել զՊամփիլագոնիա և զԼիտիրս. և անդ լուեալ զը-
մահ Անմոնի՝ առաւել ևս՝ի նոյն խորհուրդ հաստա-
տեցաւ, առանց յապաղելոյ խաղալ՝ի վերնագաւառս

Աչխոյ. և շատապ տաճնապաբ ՚ի Կիլիկիա դիմեալ, եկեն եհաս ՚ի դաշտն՝ որ կոչեր Կիւրոսի[1]. և ՚ի աստի մինչև ՚ի կիրճն Կիլիկեայ ՚ի միջի ուղին լիառնն ասպարեզ, և ընդ դառնն անձուկ հարկ էր անցանել ՚ի խաղալ ՚ի Դատրաց ՚ի Տարսոն. Իսկ որ ՚ի պահ դրանն ՚ի Դարեհէ կայր, նստուցեալ էր անդ դոյզն զօրս՝ որք ՚ի շուինդն հասանելոյ Թշնամեաց աձապարելոյն ՚ի փախուստ. Իբր մնեալ անդր Ալէքսանդր զինեաց ետես զտեղին, և ե. բանեաց զբաղդ իւր, և խոստովան եղև, զի մարթէր Թշնամեաց հարուածովք քարանց կասեցուցանել զնա անդ և պարտել դիւրաւ. Օ ի արք չորք սպառազինք դժուարաւ ընդ պահակն այն ՚ի միասին մնանել կարէին. և էր սար լերինն ՚ի վերայ ուղւոյն, և ուղին ոչ միայն նեղ և անձուկ՝ այլ և խիտ ընդ խիտ աւերեալ՝ յուսկից հեղեղաց լերանցն. Իբր խաղացոյց Ալէքսանդր զզօրսն ընդ այն՝ մինչև ՚ի Տարսոն քաղաք, և եհաս անդր յայնմ ժամու՝ զի հրձիգ առնէին Պարսք զքաղաքն, զի մի փաթ թամ աւարաւն օգնեացին Թշնամիք. Իայց Պարմենիոն՝ որ անդր հեծելովք ՚ի Թագաւորէն առաքեալ էր, ժամանեալ արգել զսառնումն հրոյն, և եմուտ ՚ի քաղաքն ապրեցուցեալ զայն, զի խուժք ընդ առնուլ զհամբաւ գային նորա՝ Թողին և փախեան.

Ընդ քաղաքամէջն հոսեալ անցանէ Կիդնոս՝ ականաւոր գետ, ոչ խորագատակ լայնատարած մեծութեամբն, այլ ականակիտ ցրտագին ջուրբքն՝ վասն հովանախիտ ափանցն. Իբր առնուն մերձ ՚ի վախձան, և բռնակիզաց գոյն ՚ի Կիլիկիա տապն, և հասեալ անդր Թագաւորն ՚ի տօթաժամու, և ընդ քիրտն և ընդ փոշն եկեալ, ՚ի վշտի և ՚ի մաքուր ջուրսն ցանկացաւ լուանալ. Իայլ հովացեալ ՚ի գետն, և անկաւ զնովաւ սաստիկ, և Թուէր մեռանել. Իձին զնա վաղվաղակի ՚ի խորանն, և էր անզգայեալ. և ՚ամ զօրքն վշատեցան, և ողջոյնն արտասուօք՝ զի հզօրն ՚ի Թագաւորս ՚ի ժամանակի չաղ Թուէին և աշխարհակալութեանց բառնայր ՚ի նոցանէ, ոչ ՚ի ձակատամարտի կամ ՚ի հարկանել զքաղաքս, այլ ՚ի լուանալ ՚ի գետն. և զի մերձ կայր Դարեհ, և մաքԹեր նմա մինչ չև տեսեալ զԹշնամին՝ չաղԹող լինել, և հալածել զնոսա փախստեայս ընդ աշխարհն՝ ընդ որս չաղԹանակաւ անցին, և ընդ աւերակս և ընդ անչէնս՝

1 Կիւրոսի համարի դեղեն կիւ. Կիւրիանոս ՚ի կիւրեղոյն, որոմ և եղեալ անուանեալ զքաղաքս զայս. այլ հասանիմ.

ուր սովով ևւեթ կորնչէին, եթէ Թշնամիք իսկ չէին նո֊ ցա հակառակամարտք . զարձեալ զի և ո՛ փախստէից կարէր առաջնորդել, կամ իշխէր ընդ Ղեքսանդրի փո֊ խանակել . այլ թէ և յաջողեր նոցա հասանել Լ֊ևսէս սմոնա , ո՛ տայր նաւս նոցա՝ անցանել ընդ ծովն : Լ֊ա ապա մոռացեալ զանձինս , զվազասուրն աշխարհին կո֊ ծով և մրմունջմամբ , զի՛ի ծայրէ հասակին՝ ի ծայր բաղ֊ դին՝ տէրն և զինուորակիցն նոցա իբր ի բազկաց նոցա յափշտակեալ բառնայր :

Լայց Ղեքսանդր տակաւ ոգեբերեալ , և ի միտս լեալ , ձանաչէր զմերձակայսն , այլ չև ևս Թուէր մեղ֊ մել ախտին՝ բայց միայն զի զգայր զայն : Լ֊ևլ առաւել տագնապէր սիրտ նորա հոգոյ՛ քան յախտէն մարմնին . քանզի ազգ եղև նմա մերձ հասանել Պարեհի, և զբաղ֊ դէն բողբէր՝ վասն վտանգին մատնելոյ ի ձեռս Թշնա֊ մւոյն , և զի զսպացառ յաղթութիւնն խորէր ի նմանէ՝ երագեալ ի վերայ նորա անդէն ի վրանին զանարգ մահ, յոյժ ի բաց յառաջարկեալ փառացն : Լ֊չ կուեալ առ ինքն զբարեկամս և զբժիշկս , ասէ . Լ֊հա տեսէք , արք բարեկամք , յոր տխպող վտանգ բաղդն մղեաց զիս . Թուիմ լսել զխօշիւն զինուց Թշնամեաց , և տեսանել առ իս զՊարեհ : Պատահեցի եր նա արդեօք չար բաղ֊ դէն՝ մինչ առ նախարարսն գոռալով և պերձուԹեամբ գրեր վինէն ' : Լ֊ևլ ոչ ըստ խորհրդոց նորա իբր վհատ֊ բրեցին , եթէ կամաց իմոց ոչ ոք հակառակ կացցէ : Լ֊նձ արդ բժիշկք վեհերոցք ոչ օգնեն, և ոչ երկարաձիգ գոր֊ ման . լաւ է երագ մահ՝ քան զդանդաղ բժշկուԹիւն : Լ֊Թէ յուսան բժիշկք գործման հնարել ախտիս , զի֊ տասցեն՝ զի ցանկալի է ինձ պատերազմ քան զկեանս :

Լ֊նդ վաղվաղել Թագաւորին անժոյժ եռանդեամբն՝ խոհոլեցան ամենեքին . և բժիշկք ահիւ ինասպարտու֊ Թեանն չօգտելոյ գործմանցն՝ ոչ իշխին անրմտել և սաս֊ տիկ դեղ մատուցանել , մանաւանդ զի Պարեհի հրո֊ վարտակաւ սակ հատեալ էր կենաց Ղեքսանդրի հազար քանքար : Լ֊ր անդ ոմն ի բժշկաց վիլիպպոս աքարնա֊ ցի , որ յառաջին տիոց նորա հանապազ ծառայեր նմա, և յոյժ սիրէր զնա , զի ոչ միայն Թագաւոր իւր էր՝ այլ և սան : Լ֊յս տիրասիրուԹեամբն ի վեր քան զամ խոհ֊

1 Քրնէի Դարեհ ի մի էրէսւ պատքել զիմոր մանուին, և զիեցու֊ սանոյ էրիմոսրիե յոգիել Ալէքսան֊ դրու, ոչու նա ծերուկի սա ի ծով՝ ո֊ դրի , գրեաց առ նախարարս իւր նա֊ պիսի ե յիսուս կողեցին յդեւ զնա առ մոլորի, և այսպէս պատրեր՝ ինչե : Փիլոյնտեմ. ի կ. կուրտս.

Հակառուելէ զգծացեալ, խոստացաւ տալ նմա ըմպելիս դեղոյ ոչ յոյժ սաստիկ՝ այլ երագ ազդողական. և խրտ դրեաց զաւուրս երիս՝ի կազմել զայն։ Սոսկացան ամենեքին ընդ համարձակուելէն նորա. բայց Ալէքսանդրէ, որ ըղձիւն յօժար լիներ առնոյ զդեղն, յամէլ Թուէր եռաօրեայ յապաղուելն կալոյ՝ի գլուխ բանակին։ Իմացեալ մատուցաւ նմա՝ի Պաբելոնիան՝ որ՝ի Վաւիրան կայր, և յայմ աւուրց դրանն՝ի նա առաւել վստահեր Թագաւորն. և ազգ առներ Պարմենիոն՝ի գրկին՝ զգոյշ լինել՝ի Փիլիպպեայ, իբր Թէ Դարեհի յինքն արկեալ էր զնա հազար քանքարաւ և խոստացեալ նմա տալ ըզքոյր իւր՝ի կնուէ։ Ալէքսանդրի ընդերցեալ զՅունդն՝ խռովեցաւ, և վարաներ յերկար ընդ յոյս և ընդ երկիւղ՝։ Այլ վստահուելէն՝ի բժիշկն, քանզի փոքեալ գիտեր զբարս Փիլիպպեայ՝ Թէ որպիսի գութ գործոյց ունէր ընդ նմա յառաջին տիոցն, և հաւատարիմ սեր նորա, զայմ վարանն լուծին։ Եւ ծալեալ զթուղթն եդ ընդ մաբարւն, և ոչ ումեք յայտնեաց։ Ժամնմանակեալ աւուրն եկեալ Փիլիպպոս, մատոյց զբաժակն դեղոյ։ Եւ Թագաւորին ձգեալ զԹուղթն՝ի մաբիւնն, ետ՝ի ձեռս Փիլիպպեայ ընթեռնուլ զայն՝ և առեալ զբաժակն՝ի ձեռն, և պշուցեալ հայեր ընդ երեսս նորա. և երբ զայն անեբկիւիա առանց կասկածանաց և երկիւղի։ Իսկ Փիլիպպեայ ընթերցեալ զԹուղթն՝ սրամտուելէ քան երկիւղիւ և ապշութէ, էարկ զայն՝ի վերայ անկողնոյ Թագաւորին, և ասէ անվեհեր. Ես արքայ, յերեռնաւոր տիրասպանուելէն բարբանաց՝ բժշկութիւն քո ընդ հալ ազատեսցե զիս։ Այլ հանգարտ լեր, աղաչեմ, զի մի ազգումն դեղոյն խափանեսցի. և մի միտ առներ սաստանց անժամ և անխորհուրդ նախանձուն ծառայից քոց։ Որովք Թագաւորն առնևևին վստահ լեալ, և լի յուսով և խնդութէ կալեալ զձեռանէ Փիլիպպեայ, ասէ. Եւ դու հանգարտ լեր, և մի տագնապեն զքեզ հոգք բժշկութէ իմոյ և քոյոց արգարութէ։

Ալեքսանդրէ նամակին զօրավիգն եղեն և դեղոյն ազդուութեանն արկածք։ Օ՛ի անկեալ գներ Թագաւորն նուաղեալ անբարբառ, և Թնդմունք երակացն անազդակաք, և հետք կենդանութէն՝ի նմա ոչ երևելիք։ Փիլիպպոս ոչ ինչ՝ի հնարից արուեստին Թողացոյց յօգ-

1 Հոգ մեծ՝ի սիրտ նորա էարկ յոյս և երկիւղ սագրէին՝ի խորս նամակագիրն։ ա որ ինչ երկուսակք սրտին կշռեր։ Կ. Կոստ։

նել նմա։ Այլ իբրև անձին զգաց Թագաւորն, սկսաւ խօսել նմա բերկրականս զմօրէն և զքեզըն և զմեծ յաղթութենէն՝ որ հասեալ կայր պատկել զնախաձակ յաղթանակս նորա։ Այլ ի ծաւալել համարձակ յիմ երակուն առաղջարար և կեցուցիչ գեղըն զորութեճ, նախ ոչիչն կազդուրեցան, և ապա մարմինն վաղ անակնկալ։ և յերիր աւուր եկաց ի գլուխ զօրացն։ Որք զմայլեալ ի տեսիլն՝ չհաւատային ի հնդուաթենէն, զի յոյժ ի մեծ վտանգէն զարհուրեալ և վհատեալ էին. և ընդ յոյժ ունելով զվիլիպպէայ, եկեալ դիրկս արկանէին նմա, և գոհանային զնմանէ իբրև զղէպ՝ զի կեցոյց զթագաւորն։

Ա՝ակեգոնացիք տիրամեծարք ի բարուց, չկարեմ ասել, քանի առաւել մեծարէին և սիրէին զ՝ղեքսանդր։ Օ՛ի առանց յայտնապէս օգնականութեճ դիցն ոչ ինչ համարէին գործել նմա. և յանդգնութեճ՝ ի յաջողել նմա խորհրդոց նորա՝ փառս գործեր նմա, և ահալին իմն թուէր ի նմա։ Այլ ի գործել զգեր ի վերոյս քան զՀասային զդժուարինս, տիոյն նուաղութեճ յաւելոյր շուք և ձաձանչ յարութիւնս նորա։ Վարձեալ՝ և հնարք ինչ, որ առ բազումս ապախտ առնին՝ այլ են հզօրք ի յանկուցանել զսիրտ զօրականին, յոյժ պայծառացուցանէին զքաջութեճ նորա՝։ Օ՛ի ախորժեր ընդ հրահանգս մարթնոյ, և կրեալ ի յաջողել և ի գերազանցել յարուեստըն. զգենոյր հանգոյն պլոց, և զինեալ ընդ խնարհս առանց նուաստութեճ, և ընդ բազմաշխատն և ընդ քաջակորով բաժանէր զվաստակս և զվտանգ. զորս թէպետ ի քնէ, և թէ ի ձարակէ մտացն առաքինանայր՝ սակայն սիրելի և մեծարոյ էր նոքիմքը զօրացն։

Ա՝ինչ գեռ այս իբր գործէին, խաղայր գայր Վարեհ յանդգնեալ յուսացեալ յաչխարհազօր խուժանն, և զիւրն և զթշնամեացզօրութեճ ըստ բազմութեճ զօրացն կշռեալ։ Վաշտք ասորեստանի՝ ուր բանակէրն՝ գիպող էին նմա ի տարածանել համարձակ զայրութեճն, և բազում ամբոխիւն զօրանալ. այլ նա յանդգնութեճ խորհեցաւ մտանել ընդ կիրճն, ուր այրութեճն նորա և բազմամբոխ զօրք անպիտան եղեալ՝ և ի խոչ և ի խափան լինէին նմա. և որում պարտ էր կալ և անկն ունել պատերազմին, կանխեաց ի խնդիր թշնամանցն, երագեալ

1 Որ թէթևքն թուին յիս պատերազմի, ծանուցք են յաշխ։ Կ. Կ։

խնդասիրեալ ի կորուստ : Ա.յլ նախարարքըն չողումարաբք և մարդահաւաքիւք՝ երանելին զնա մերձակայ յաղթութեն, եթէ թէ ի ձեռն ունէր զայն : Այս էր ի բանակին Վասրեհի Վարդենւոյ աթենայի, այր քաջ՝ իրաց պատեհ բազմի հնուտ, որ ոմայրն ընդ Արեքսանդրի հալածեալ հրամանաւ նորա ի Հայրենեացն : Ոնա եհարց Վասրեհ, և ասէ . Զթէ կարիցեմ զօրութեամբ այսուիկ բեկանել զձակատ թշնամեաց : Վարդենւոյն մնեալ և զարգացեալ յերկիր ազատ, և չյիշեալ զի ի ծառայութեէ կայր յայնժամ, և վտանգ էր նմա հակառակ կալ կամ թագաւորին, պատասխանի ետ և ասէ . Ի դժուարին թուեցայ քեզ, արքայ, լսել զՀնարտուրեէն . զի եթէ ոչ այժմն խօսեցայց , ոչ ևս լսեցի ժամանակ : Զդէ քո ամբարհաւաճ փարեամ կարասի և ամբոխ անհնարին, զի զնամ արևելս ընդ քեզ ածես, իցեն քաջ ահարկու ազգաց՝ որ շուրջ զքեզ բնակին։ Ոսկւոյ և զծիրանեաց շուք և պերճութեէն , որ զգօրագլուխն, չմարթեի զմտաւ ածել՝ որոյ չիցէ տեսեալ : Զմանկտնացւոցն ահա գնատեսիլ սպառազէնն բանակ՝ յուշայն տեսլենէդ ոչ չյացայ : Զոցա մի ինչ փոյթ է՝ պնդակազմ գունդ գործել, և ասպարօքն և նիզակաք ամրափակել : Այս է նոցա փաղանգն գունդ հետևակաց , յոր անվրիպըտ յիւրաքանչիւր կայից զինուորք՝ կազմին զինուքն պատնէշ անթափանց : Զոցա զօրականք՝ և սպայք կազմք , և ուշակալք հրամանի զօրավարացն ի ռազմ գործել ընդ դրօշակօքն , յայլ և յայնկուստ դառնալ , ի կրկնել զյօրինուած Ճակատուն , ի բախել յամ կողմանց ընդ թշնամիս , զամ շարժմունս ըստ պատերազմական հրահանգաց ի տալ նշանին գործեն : Այս մի կարծիցես թէ ոսկի և արծաթ վարիցեն զնոսա , զի մինչև ցայժմ այս հրահանգք օգնականութէ և վարժիւք աղքատութեանն կացին առ նոսա՝ : Ոչ ի թէ քաղցնուն , ամ ինչ կերակուր ախորժելի է նոցա , և թէ վաստակին՝ գետնախոտի նըման ջնին , և տիւ գնոսա ոչ ետես ընկողմանեալս : Զթէ չէ ծեալք թեսսաղացւոց և աքարնացւոց և եռողացւոց , ազգք անհնկունք և սպառազինք , խանձողք և պարսաքարամբք վանեսցին . պարտ է բազուկ առ բազուկ կալ ու ի խափանել զնոսա , և անդստին յարխարհն նոցա խնդրել զօրավիգն ընդդէմ նոցա : Վարձո զոսկիդ և

1 Եւ մի տեղւոյ ոսկւոյ և արծաթոյ վարժիւք աղքատութեեն կամաձայ մնել նոցա կարծիցես , լան։ Կ. Կոստր։
այլ զհրահանգս զայսոսիկ մնալ։

զարծաթի անպիտան՝ զոր տեսանեմ, և արա քեզ նոքօք գունդս հզօրս։ Պարեհ քաղցր և հեզ եր բարուք, այլ ո՞ր բարք ի բաղդէն չգեղծիցին[1]։ Ականաւք են ի թա-գաւորացդ արիք և անյողդողդք ի կալ հակառակ իշխա-նութեանց, ի մերժել զհրապոյրս մարգահաճոյիցն բազմաց՝ որք զրգռեն զախտս նոցա, և ի մեծարել զայր տիրասէր, որ յանձն առեալ դժպհի լինել նոցա՝ խօ-սեցի ընդդէմ նոցա զնշմարտութենէն։ Պարեհի զարեալ ընդ բանս նորա, ետ ի պատուհաս զասպատենեալն լինքն և զհիւր, և որ միայն զսիտանի խրատն մտացոյց։ Այլ Պարիդեմայ ոչ ինչ զիջեալ յազատութենէն՝ յոր սո-վորն էր, ասէ ձայնիւ մեծաւ. Ի՞երձ է վրէժինդիրն՝ որում հակառակ զիարան ետու քեզ. նա պատուհասեա-ցէ զքեզ՝ փոխանակ զի արհամարհեան զնա։ Ասէ դու բարձու իշխանութիդ օտարացեալ ի բարուցդ, լեցիս առ յասպ մարդկան ի խրատ, զի որ ի բաղդն անձնա-սուր լինին՝ հեղձուսցէ ի նոսա զնմ բարիս բնութենէն[2]։ Այլ Պարեհ զղջացաւ ընդ սպանումն այնպիսւոյ առնն, և ծանեալ անագան զնշմարտութիդ բանից նորա։

Յաւգացոյց զզօրս իւր ընդ Լփրատ. և եր ի վաղ ժամանակաց սովորութիւն Պարսից՝ ի ծագել արեւուն չու առնել, և յայնժամ յորքունսի վրանէն ազդ առներ փողն։ Իսկ զվրանսւն դնէին ի տեսիլ զպատիեր արե-գական յապակւոջ։ Իսկ այս կարգ եր չուոյ զօրացն։

Լսաջի տանէին բագինս արծաթի, և հուր ի վերայ՝ որ մշտնջենաւոր և սուրբ կոչէր. և զհետ այնորիկ գնային մոգք, երգելով օրհնութիւն՝ պարսիկ երաժշտու-թեամբ, և ընդ նոսա երեքարիւր վաթսուն և հինգ մանկունք՝ ըստ թուոյ աւուրց տարւոյ՝ զգեցեալք ծիրանի։ Ո՛հետ նոցա սպյ նուիրական Լսամազդայ՝ լծեալ ի ձիս սպիտակս. և նժոյգ մեծ անարդիլ զհետ կառացն՝ որ արեգականն ձի կոչէր, և ձիապանք սպիտակազգեացք՝ ցուպ ոսկի ի ձեռին։ Ո՛հետ նոցա տասն կառք՝ քան-դակօք ոսկւով և արծաթով յօրինեալ. և յետ նոցա հեծելազունդ յերկոտասան ազգաց պյլպլկնք և պյլս-բարոյք. և ապա անուանեալ անմահ գունդն բիւր զօ-րականաց, որ պերձագոյնք յամ խոժոհական բանակին

1 Հեզ և համբոյր եր բնութիդ աերութիդ յեղակարծ փոխեալ Պարեհ, եթէ ոչ զրուն նորա՝ լեցիս յեանոց ի խրատ, զի մար-զպետս զպյոց բազմաց՝ բաղդն դիկ թողացեալք ի բաղդն և բնու-զեղծուցանէր։ Կ. Կ՚օրթ։ թիեն մոռացումն առնիցեն։ Կ. Կ՚օրթ։

2 Յակ դու լինքնիշխանութեամբ Կ՚օրթ։

էին. որոց էր մանեակ ոսկի ի պարանոցին, և զգեստ դիպակ ոսկեթել, և տառատոկ թեզամաւորք՝ ընդելուզեալ ակամբք։ Այրեաւն քայլ յետոյ գային ազգա-կանքն [1] անուանեալ կամ մերձաւորք արքային բազումք՝ ոչնգետասան հազար այր, պճնեալք որպէս զկանայս, և շքեղք ի զգեստս քան ի զէն։ Օ հետ գային տիգա-կիրքն [2], որք զպատմուճանն արքային ածէին. և առաջի կառաց նորա երթային՝ յոր իբր ի բարձր գահոյս բազ-մէր։ Այս երկուստեք կառացն էին գրօշեալք գից յոս-կւոյ և յարծաթոյ, և ի միջոց ականակալ լծոյն կանգ-նէին անդրիճք կրկին՝ պատերազմի և խաղաղութեան [3] կանգնեան բարձրութիք, և ի միջի նոցա արծուի ոսկի հոլանեալ իբրև ի թռիչս։

Յակ թագաւորին պերճանեցուն մեացու-ցաներ։ Այրկեալ զիւրև տառատոկ ծիրանի արծաթա-թել, և զգեցեալ պատմուճան պճնաւոր՝ յեռեալ ոս-կւով և ակամբք, յոր բազէք կրկին ընդ ամէն խոյա-ցեալ կոցէին զիրեարս. և կամար ոսկի զօրէն կանանց ածեալ, զորմէ դաշոյն կախեր ականակուռ պատենին. և էր խոյր ի գլուխս նորա, և փակէղն լուրթ սպիտակա-խառն։ Այս աստի և անտի գնային մերձաւոր ազգա-կանքն, և բիւր տիգաւորք արծաթազարդ նիզակօք՝ ոս-կեզօծ ի տեգսն. և յետոյ նոցա երեք բիւրք հետեւա-կաց վերջապահք. և ապա ածէին չորեքբարիւր նժոյգք արքային ի ձեռն։ Այս Ախոհամբիս մայր նորա Հարիւր կամ քսան և աւելի քայլ հեռի՝ զհետ գայր բազմեալ ի կառս, և կին նորա յայլ կառս բազմեալ, և բազմու-թեն տիկնաց ուղեկից նոցա հնծեալք ի ձի։ Այս գային զկնի ի հնգետասան կառս մեծամեծս նստեալ արքայորք դիք և դստերաքոյր նոցա, և ամբոխ բազում՝ ներքին-նեաց ընդ նոսա՝ պատուականաք առ ազգս արևելից։ Օ հետ գային հարձք թագաւորին երեք հարիւր և վաթ-սուն՝ աւելի կամ պակաս՝ նաժիշտք բաժնեալք, և ջո-րիք վեց հարիւր և երեքարիւր ուղտք ածէին զգանձս արքունի, և խուժան մեծ գանձապահաց աղեղնաւորք։ Հետևէին տիկնայք սպասաւորաց արքայի և աւագաց մեծամեծաց գրանն, և ապա խահազորձք և սպասաւորք

1 Ազգականս արքայի ի մեծ. Նիզակ կոշտոտեան։
բանաց անուն էր, և բազում անթոն 3 Այլ գազգիր կոտրածոյ ի մա-
մարդիան ի մեծ. ազգականս արքայի։ նակ պատերազմի և խաղաղութեան
2 Որ ի նիզակահան էին, և էր նոցա ոսկի գինոսի և բնկայ։

քանակին ՚ի սայլս, և ՚ի վերջն գումոնդք մեհենակազինք ամուր՝նո-
սպայիւքն հանդերձ՝ առաքեա քանակին։

Օ ինական խաղուց հանդէս ՚ի դէպ է կարծել զայն, քան զուս քանակի՚ն պատերազմ։ Իսկ Թագաւորն իմաստ նոյ վայել ցայս վայր զառաջանել՝ մինչև զհետ քանակին ածել զսպաս գժուարապրելի կանանցն և տիկնոց և հարճից և նեղբինեաց և ծառայից և աղախնայց. այլ զի օրինք էին յաշխարհին՝ այն շատ իսկ եր։ ՚Ի վաթսունն բիւրուց ամբոխին, և ՚ի պերճ և պայծառ սպասն պանծացեալ Պարեհի, կարծէր Թէ իցէ մեծ ոմն. և ձև խոցեալ ամբարտաւանէր մնոտի շքոյին. այլ ՚ի չափու իւրոյ պայմանին և քաջութեան՝ յոյժ փոքր եր. և ոչ միայն Պարեհ սովին խորհրդով զառանցեաւ, այլ զոյն և զառաջաց պլոյց ՚ի դէպ է ասել։ Ա՚յլ արդ տեսցուք զզրգռել երկուց Թագաւորացն ընդ միմեանս։

ԳՕՐՈՒԱԾ Ե.

Ա՚ան վեցի յաղնուրեն Աղեքսանդրէ ընդդէմ Պարեհի առ Խեաս գաղաւաս, և որ պէտ այնորէի էրն։

՚Ի խելամուտն արշաւանին Աղեքսանդրի և Պարեհի, և առ ՚ի քաջ ՚ի միտ առնուլ զդիր և զտեղի երկրոցդի Ձախատուն, հարկ է կիրձս երից կամ պահակս օրոշել, զորս և զրունս ուրեք ուրեք կոչէին։ Այն ՚ի զառ ՚ի վայր լերինն Տաւրոսի, ՚ի սկիզբն Ձախատարհին՝ որ իջանէ ՚ի լեռնէն ՚ի Տարսոն, ընդ որ էանցն Աղեքսանդր ՚ի Գաւրաց ՚ի Կիլիկիա, որպէս ասացաք։ Երկրոցդն Կիլիկեայ կամ Ասորւոց կիրձ՝ որ ՚ի Կիլիկիայ մուտս Ասորւոց։ Եւ միւս ևս ամանեանն կիրձ՝ առնուանեալ Ա՚մանայ լեռնէ, որ Ա՚սորեստանէ մուտս ՚ի Կիլիկիա, և կայ ՚ի վերուստ Ասորւոց կրձին ընդ հիւսիս։

Աղեքսանդր զկէս ՚ի զօրացն տուեալ ՚ի ձեռս Պարմենեայ, արձակեաց՝ ունել զպահակն Կիլիկեայ, և անկանգնելի անցս զօրաց իւրոց պատրաստել. և ինքն մեկնեալ ՚ի Տարսոնէ՝ ՚ի վաղիւ անդր եկաս Ա՚նքիալաս, զոր ՚ի Ասդրանաբաղաց ասէն կառուցեալ, և է տակաւին չիրիմն նորա անդ, և ՚ի նմա արձանագիրս այս. ՚Ի ՍԱՐԴԱՆԱՊԱԼՈՍ ԱՆԻՒՆԱՂԱ ԵՒ ՏԱՐՍՈՆ Ի ՄԻՈՒՍ ԱՒՈՒՐ ԿԱՌՈՒՑԵԱԼ. ԵՐԹ ՀԻՒՐԴ, ԿԵՐ ԱՐԲ ԵՒ ՕՆ.

3671 · 333 Դիոդ · ԺԷ. 512։ Աբրիան · Բ. 66։ Պլուտ · յԱԼեքս · 675։ Կ · Կուրտ · Բ · ԶԲԷ։ Յոսեփ.ժամ. ԼՆ Ֆ։

ՐԱՒ ԼԵՐ. ԱՆՑԱՆՔ ԱՑԱՆ ԱՄԵՆԱՑՈՒ, Հշտի եկն ի Վաղ
գէ և մնացեալ Յոկղէսեայ դիցն զոմն ումն առաղուձեն,
և ամ բանակաւն ուղեկից եղև Հանդիսին մանեղինաք
լուցելովք, և ետ կատարել անդ խաղս, և գարձաւ ի
Տարսոն։ Իսկ պատուէր տուեալ վիլոտաս ածել զայրու-
ձին ընդ դաշտն Իղեայ ի Պիրամ գետ, խաղացք ինքն
հետևակօք և Թիկնապահօքն հեծելովք ի Վաղարս,
անտի ի Մալլոս, ապա ի Կաստաբաղ։ Իզդ եղև նմա՝
զի Վարեհ ամ զօրօքն բանակէր ի Ոքս յասորեստան՝
երկօրեիւ ճանապարհաւ հեռի ի Կիլիկեայ, և կոչեաց
ժողով խորհել վասն ամառորիկ. և ամենայն զօրավարքը
և սպայք ազատեցին զնա դիմել ի վերայ Թշնամեաց.
և խաղայոյց զնոսա ի վաղիւն ընդդէմ Պարսից։ Կայր
Պարմենեայ նուաճեալ եր զնոսս քաղաք փոքրիկ, և
կալեալ զդուռն Իսորոց, և նստուցեալ անդ պահա-
պանս։ Իսկ եՅող արքայ Յոսոս զհիւանդս, և անցեալ
ամ զօրօք ընդ կիլիքն՝ բանակեցաւ մերձ ի Կերհանդը
քաղաք վասն խստութեի օդոյ։

Իսր յայնժամ Վարեհ յընդարձակ դաշտի յասորես-
տան։ Օ օրագլուխք յունական գնդին վարձկան զօրաց,
յորս էր ամրութիւն բանակին, խրատ ետուն նմա անդ
կալ և անկ ունել Թշնամւոյն. զի եր տեղին համարձակ
յամ կռուիցն, և դիպող հեծելագնդին, և մեծի բազ-
մութեի զօրացն՝ ի տանել զնոսա հանդերձ ամ կարա-
սուին և սպառազինութիք մարտի։ Իսկ կամ թե այս ոչ
հաճոյ թուեսցի՝ բաժանել զընտիրս ի բազում ամբո-
խէն, և մի ի միում ձակատու զամ զօրութեան վտան-
գել։ Իսյլ աւագանին յաձախաւօրօք յարքունիս, ասէ
Իսրխանոս, համարեին զՅոյնս՝ սպգ նենգաւոր և ոխա-
կալ, և խօսեցան ընդ արքայի՝ թե խնդրեն պատակտել
զզօրս, զի ուրոյն մեկուսի կացեալ դիւրաբա առ Թշնա-
միս հատուածել կարացեն զօրօք իւրեանց։ Իսկ յոր-
գորէին զնա յաներկևանութեի շուրջ պահ արկանել, և
զամենեսեան զնոսա սրով կոտորել՝ ի մէնայուշ իւրատնեն-
գաւորաց։ Օ արհարեցաւ Վարեհ ընդ այնպիսի բանս
սըն՝ ըստ քաղցր և մարդասէր բարուցն, և ասէ. ՎՀաւ
լիցի ինձ գործել զսոսկալի ոճիրդ, և լինել ի կասկա-
ծանս առաջի ամ ազգաց. զի տարաբաղդ խորհուրդ, որ
յաձախին պատահէ, ոչ ուրեք զմահ ընկալաւ պատու-
հաս[1]. զի եթէ այն վատնգ առաջի կայցէ, ոչ ևս որ իշ-

[1] Ո՛չ է իմասաուրեի զխորհուրդ խոտան մահապարտ առնել. զի պա-

խել յայտնել զխորհուրդ իւր. և զինչ մեծ քան զայսպիսի սէր չարիս կայցէ Թագաւորի։ Եւ գովեաց զնախանձ և զզարեկամութիւնն Հոնտոց. և եցոյց վասն որոյ իրաց հրաժարէրն ի խորհրդոց նոցա։

Ասացի աւագանին պատրեցին զԱրեհ՝ թէ առ ահին յապաղել Աղեքսանդր, զարհուրեալ ի մերձենալոյ պարսկախուռմբ բանակին, զի ոչ ինչ վասն ախոյեան հիւանդութեանն նորա գիտէին. և թէ բայդն բարերար մղեաց զնա ի կիրճն, ուստի չկարթեր զերծանել նմա՝ եթէ հաւանեցին հարկանելին զնա անդ. և թէ չէ պարտ կորուսանել զպատեհ, գուցէ անապարեալ փախիցին թշնամիքն, և զերծանիցի Աղեքսանդր։ Ասէնմանեցաւ ապա այս բան խորհրդի՝ երթալ ինդրել զնա. քանզի դիք, ասէ, ոմն ի վիպագրաց, հարիւն զթագաւորն շղացուցեալ, Աւրիանոս։ և արիվն զնա ի խորխորատն պեղեալ նմա, ի կործանումն պարսկաշունոյն պետութեան։

Ասացի Արեհի յղեալ զդանձս իւր և զամ ինչս ցանկալիս ի Մամաեսս քաղաք Ասորիս դայլն գնդաւ, ընդ ի Անիւկիա ամ զօրքն գիմեաց. և ընդ առաջեան պահային եմուտ անդր, ի վեր քան զկիրճն Ասորւոց։ Եւ գայլն գՀետ բանակին ըստ սովորութե Պարսից՝ կին նորա և մայր և դստերք, և մանուկ արքայորդին. այլ ի ժամ մարտին կայլն նոքա ի բանակեստն։ Եւ յառաջ ջեալ Արեհ ի Անիւկիա՝ խոտորեցաւ Յոաս. և ոչ գիտէ՝ թէ հասանէ ի Թիկունս Աղեքսանդր, քանզի խաբեցաւ՝ թէ փախստեայ երթայ առաջի իւր, և ընկերկի խառն ի խուռն խուճապաւ Ասորիս. նմին իրի խոթհէր չալածել զնա։ Եւ առանց ողորմութե սպան զամ հիւանդս՝ որ Թողեալ էին Յոաս քաղաք փորձիկ, բայց միայն ի զօրականաց ոմանց. զորս շրջեցուցեալ ընդ ամ բանակն, և ցուցեալ նոցա զզառմութե զօրացն, ապա արձակեաց զնոսա։ Նոքա երթեալ պատմեցին Աղեքսանդրի՝ զի մերձ էր Արեհ. և ոչ ունկն մատոյց նոցա Աղեքսանդր, Հաւատալի համարեալ զայն՝ որում տեղ չիւն ցանկալի. այլ ապա յակնատես լինել՝ անապատ թեալ կազմեաց բանակ։ Եւ երկուցեալ ի յարձակմանէ խուճապային բազում ամբոխին, ամրացոյց զբանակն՝ փոս և պատնէշ շուրջ եդեալ. և յոյժ ուրախ լինէր ընդ յաջողութիւն ցանկութե՛ն ի կիրճն պատերազմելոյ. և ի

դիցն վարկանէր մղեալ անդր զՎարեհ, զի մատնեսցի ի ձեռս իւր։ Օ՛ի չմարթէր յանձուկ տեղւոջն բազմա-խուռն զօրացն շարժել համարձակ և ռազմ գործել, ո-րով հաւասարեր երկոցունցն զօրուն։ զի մակեդոնա-ցւոցն բաւական էր տեղին, այլ խուժանին Պարսից քաս-նասպետիկ բազմութեին անձկանայր։

Ա՛ւր որպէս և քաջաց զօրավարացն պատահէ յաձախ, ի մեծալուտ յաւենագրաւ վտանգին՝ բաբախիլ սիրտ Ա՛ղէքսանդրի. և մտայայլեալ յաղողութեամբն յաւե-լուին նմա կասկածանք յեղափոխելոյ իւրացն անգէն ի պահուն՝ յոր բաղդ նորա հաստատեալ էր։ Ա՛ւր վար-ձուցն ակնկալութիւք քաջալերէր, որ քան զվտանգն մեծա-մեծք էին յոյժ. և թէպէտ յաղթութիւն յերկբայս էր, այլ ի փառացն մահ յարժանին իւր խրախուսէր. և զտաղնապն թաքուցանէր։ Օ՛ի ոչ է պարտ սպարապե-տի երևել ի ժամ ահարաի տխուր և երկմիտ, այլ և վստահ զանձն զօրացն ցուցանել։

Պատուէր ետ զօրացն առնուլ կերակուր, և պա-տրաստ լինել յերրորդ պահ գիշերոյ՝ որ ի հասարակ գի-շերի սկսանէր, և էլ ի կատար միոյ ի լերանցն։ և ջա-հիւք զոն մատոյց անդ դից երկրին ըստ սովորութեան աշխարհին։ Ընդ հնչել փողոյն, զօրքն կազմէ ի խա-ղալ և ի մարտնչել՝ երագեալ ըստ հրամանին յընթացս, հասին ընդ առաւօտն ի տեղին՝ զոր գնային ունել։ Յայն վայր սուրհանդակք հասեալ պատմէին՝ զի երեսուն աս-պարիզաւ մերձ կայր Վարեհ։ Ա՛յն հրամանն ետ Թագա-ւորն գտեղի առնուլ զօրացն, և ձակատեցոյց զնոսա ի պատերազմ։ Իսկ բնակեաց աշխարհին զարհուրեալ, ազգ արաբին Վարեհի զհասանել թշնամւոյն։ և նա ոչ հաւատայր, ի մոլ եդեալ թէ Ա՛ղէքսանդր փախստա-կան երթեալ խուսե յերեսաց իւրոց։ Ա՛ւր՝ի լուր համ-բաւոյն խռովեալ աղմկեցաւ բանակն. և զօրքն խուճա-պեալ, խառն ի խուռն շտապաւ ի գնն ընթացան։

Ա՛ւ Ի սեաւ քաղաքաւ խոնեցեալ պատերազմ. զոր առ-տի ծով, և լերինք անտի առհմանեին։ և գաշտն ի միջի անդ, ուր երկոքին բանակքն Տարան, ընդարձակ էր՝ որ-պէս կարծեմ. զի յաձախագունդ զօրք էին պարսկաց-նոյն, որպէս ասացի։ Ա՛յս ընդ միջ Պինարն հոսէր գետ ի լեռնէն, և յանգէր ի ծով, հատեալ զգաշտն իբրև ի հաւասար կէս։ Ա՛յս խորշ լինի լեառնն գործեր՝ որպէս

1 Սովորութիւ էր առ հինն ի բարձրս զգեստ մաքրագնել։

ծոց ի ծովը, պարուրեալ սաստուիեն զկողմամբ հովհին։
Նոյն այս էր Ճակատու զօրացն Աղեքսանդրի կարգ։ Ի ծայր աջոյ թևին մերձ ի լերինս զՕրմաթասպարան կացուցց, և զԱրիկանովը զօրավար նոցա. և ապա զԱկենոս գնդապետ, և զՊերդիկկայ առ նովաւ. մինչև ցմիջ Ճակատուն։ Նոյն յահեկին ծայր զԱրիստոտ փաղանգն կացուցց, ապա զՊտղոմեայն, և զԼեղեագրեայն առ նովաւ։ Այս կարգ էր մակեդոնական հրաւառոր փաղանգին, որ ասա ահա ի վեցից գնդաց կամ ի վաշտից կազմեալ էր։ Ի հուժ մուծն զօրավարքը քաջք հրամայէին, այլ սպարապետ ի վերայ ամենեցուն կայր Աղեքսանդր, և զայժ շարժմունն ինքն ուղղէր։ Նոյն հեծելաք կային յերկուս թևս. յաջմ մակեդոնացիք ընդ Թեսսաղացիս, և յահեկէ պեղոպոնեսացիք ընդ այլ նմ զակաւիցս։ Ի ձախմէ կողմանէ հետևակազնդին առաջնորդէր, և Պարմենիոն ամ Թևին. իսկ աջումն ինքն Աղեքսանդր։ Պատուէր առեալ էր Պարմենեայ, Տալ գոյն՝ որպէս մարթէր՝ ի ծովէզրն կալ, զի մի պաշարեսցի ի թշնամեաց. և Արիկանովայ հեռի ի լերանցն կալ, քան զնետերկնէզ լեռնայնոցն, եթէ կալցէն զլերինսն Թշնամիք։ Օ այրուձի աջոյ թևին պատսպարեցոյց ասպատակօքն Պրոտոմաքեայ և պեռնացւովք, և զիւր հետևակազունդն աղեղնաւորօքն Նոտիոքոսի։ Նոյն զազբևացիսն[2] որոց Նոտաղոս առաջնորդէր, զանսուանիսն քաջուԹեամբ, և զգունդս ինչ զօրաց՝ որ այն ինչ յետ լրտացւոց աշխարհէն Հասին, պահեաց ընդդէմ զօրացն Դարեհի լեռնակոյացոյն։

Նոքա Դարեհի բանակին կարգ այս էր։ Վասնզի լուաւ Թէ Աղեքսանդր գայր հասանէր ի վերայ նորա, անցոյց յայն կողս ընդ Պինար գետ երիս բիւրս հեծելոց, և երկուս ոտեղնաւորաց, զի դիւրաւ յայս կողս զզօրսն զեւ տեղեսցէ։ Նոյն կացոյց ի մէջ Ճակատուն զերիս բիւրսն վարձեան զօրս ի Յունաց զընտիրս և զզօրուԹիւն բանակին՝ որք արուԹիւք քաջուԹիւք ընդ մակեդոնեան փաղանգին հաւասարէին. և յամմ նոցա երիս բիւրս ի կարգակաց. և երիս դարձեալ յահեկէ կացոյց, որչափ ինչ տաներ տեղին, զամենեսին սպառազինս։ Օ այլս ի հետևակաց զատուցեալ ըստ ազգս, զՀետ առաջնոյ կարգին կացոյց։ Նոյնդ, զի զՀանդուրԹիւն յօրինուածոյ եր-

1 Որ էին հեծելամարտք, և ասպարք 2 Ազբևիա տազգ էր ընդ Ոլեմ լեառն տեղեաւք նոցա, որոյ յայնկոյս որպէին, և ընդ Հարտոզե։
և մանաւանդ զարմանալի ծանօրինէն։

կուշ կարգացին հնչանակէ Աբրահամոս. զի խորագոյն յոյժ հարկ էր լինել նոցա անդ յանձուկ կիրճն՝ առ յոգնա-խուճաք բազմութեանէ զօրացն: Իսկ ի վերայ լերինն՝ որ ի ձախմէն կայր, հանդէպ աջոյ Թևին Աղեքսանդրի, կաք գեաց երկուս բիւրս՝ զկէս ի Թիկանց Թշնամեաց, զայլսն ի դիմաց, պատուաճով լերինն օգնեալ:

Իսկ կարգեալ զանակն, դարձոյց ապա զայրուձին յայս կոյս գետոյն և զբազումս ի նոցանէ յղեաց ի ծո-վակողմն ընդդէմ Պաբմենեայ, զի էր տեղին դիպող այրուձիոյ ի պատերազմ. և զայլս ի ձախմէ ի լեռնա-կողմն կացոյց: Իսկ ի նոցանէ զկէս անցոյց յաջ Թև, զի յանձուկ տեղւոջն անպիտանք էին. և ինքն ի միջո-ցին եկաց ի բուն բանակին, որպէս օրէն էր Թագաւո-րացն Պարսից:

Աղեքսանդր իբրև ետես խոնեալ գրեթէ զամ հե-ծելազօր Թշնամւոյն հանդէպ ձախոյ Թևին, յորում պեզոպոնեսացիքն միայն և այլոց նիզակակից ազգաց հե-ծեալքն կային, Հեպեցոյց անդր և զայրուձին Թեսա-ղացի յետ կուսակ բանակին անտես ի Թշնամեաց: Աղե-ք ի ձախումն առաջի հետևակացն կացոյց և զաղեղնա-ւորս կրետացիս և զԹրակացիս՝ որք ի Ալիտազկայ [1] ե-կեալ էին յօգնութէ, յետ կոյս այրուձիոյն գնոսա պատրա-պարեալ: Իսկ զայլազգի վարձկան զօրսն ի վերջէ բա-նակին կացոյց: Իսկ վասն զի ահեղին Պարսից քան զալ իւր ընդարձակագոյն էր, և մարթէր նոցա շուրջ պա-տել և կոլմանակի հարկանել զիւրսն, զօրահատոյց ա-րար անդր ի միջոց բանակին կրկին գունդս հետևակաց, պատուէր տուեալ նոցա՝ զանխոս ի Թշնամեաց յետ կուսէ անցանել անդր: Իսկ և զգունդն, զոր ընդդէմ լեռնայոյնսն կացուցեալ էր, ստուարացոյց: Իսկ զի լեռ-նակաքն ոչ իջանէին, զագրիպացիսն և ազեղնաւորս ի վերայ նոցա յարձակեցոյց, և ի գլուխ լերինն հալա-ծեաց զնոսա. և Թողեալ անդ երեքարիւր հեծեալս ընդդէմ նոցա, յաւել զայլսն՝ որպէս ասացի՝ յամրուճ աջոյ Թևին, և ընդարձակեաց զայն քան զԹշնամեացն:

Իսկ բանակքն երկոքին այսպէս կարգեցան կացին: Բայց Աղեքսանդր մեղմով զիւրսն խաղացուցանէր, զի հանգիցեն. և ոչ էր ակնկալուԹիւն խառնելոյ մարտին: Վասնզի Դարեհ յայս կոյս գետոյն ունէր զիւրսն, առ ի չկորուսանելոյ զդիպող տեղին. և ձողիս ի դիւրս գետ-

[1] Սխալ է ի բագաւորս Բրաֆոյացոյն էր:

ափանն պատեաց, նշաւակեալ զերկիւղ իւր ի յաբ-
ձակմանէ Թշնամեաց։ Այլ իբրև բանակքն երկոքին առ
միմեանս ձակատեցան, Աղեքսանդր ձեմ առեալ երե-
վարաբ ընդ կարգս զօրացն՝ զմի ի գլխաւորացս սպայիցն
յանուանէ կարդայր, զմակեդոնացիսն և զայլազգիս. և
զզօրսն խրախուսեր, ըստ ազգաց իւրաքանչիւր բարուց
և սովորութեանէ խօսեցեալ։ Չիչեցուցանէր մակեդոնաց-
ւոց զկանխակալ յաղթանակն Լեւկտրոպա, և ի մատոյ
զփառս պատերազմին առ Գրանիկեաւ. զի զքաղաքս
և զգաւառս նուաճեալս թողին զհետ իւրեանց. և զի
միայն այնուհետև մերձակայիւ յաղթութիւնն զպարսկական
պետութիւնն նուաճել, հանդերձէին, և զաւար զկապուտ
արևելից յաղթանակ քաջութեանէ իւրեանց և վաստակոց
ունել։ Յակ զՀայս ի վրէժ չարեացն գրգռէր, զորս
պարսիկն անհաշտ թշնամին յամախեաց առնել նոցա.
և յիչեցուցանէր նոցա զպատերազմունսն ի Մարաթոն
ի Թերմոպիլէ ի Սաղամիս և ի Պլատիես, և զոր այլ
յամախ ուրեք մղեալ անմահ փառս ստացան։ Այլ լիւ-
դիկեացոց և Թրակացւոց, որ ի յարչտակութենէ սակաւ
էին կալ, եցոյց զանահ Թշնամեացն վառեալ ոսկւով
և ծիրանեաւ, և լի աւարաւ քան զինուք. և յորդորէր
զնոսա դիմել առնաքաջ, և զկնացի զարգսն աւարել,
և փոխել զնահակութենէ իւրեանց ի ձիւնամեղաղ սառ-
նասոյզ լերանց ի դաշտս ցանկալիս և յերկիր պարարտ
արօտ ի պարսկաստան աշխարհ։ Այլ ձայն բարձեալ
Մահ զօրացն, խնդրէին դիմել վաղագոյն ի պատերազմ։
Աղեքսանդր ի սկզբան յամէ գնայր՝ ստէպ զկայ ա-
ռեալ, զի մի յօրինուած կարգացն և ձակատ փաղան-
գին եղծցի։ Այլ իբրև մօտ եղև ի նետընկէց մի, խա-
զացոյց զաջոյ թևէն ընդ գետն ի պակուցումն խուժաս-
նոցն, և առ թշնամին ձեռալ մատոյց ի կռիւ, զի մի
յերկար նշաւակ նետից նոցա կացցէն. և յաջողեաց նո-
ցա։ Այլ եղև ի տեղւոջն խիստ և յամառ պատերազմ.
և ի խռնել մարտին սուր ի գործ արկեալ, նախնիք մեծ
գործեցին։ Ո՛չ այր ընդ ընկերի կռուեալ, ի սուր սու-
սերի վիրաբանչիւր ոսոխ ընդ դէմն խոցեին։ Յակ Ա-
ղեքսանդր որպէս արդարև զինուոր՝ զօրավարն, միում
այնմիկ փառաց ցանկայր, իւրովի սպանանելոյ զՎարեհ.
որ ի կառս բարձր բազմեալ երևելի ամենեցուն, լիներ
տեսլեամբն ի հզօր խրախոյս երկաքանչիւրոցն մարտնէ-
լոյ ի վերայ նոր։ Այլ խուռն մարտին զայրանայր, և բազում
արք աւագք ի Պարսից Թաւալգլոր յերկիր անկանէին,

և աստի և անտի զարմանալի արուեստիք գործեցան։ Կայր Աքսաթը իբրև ետես զՎարեհ զեղբայր իւր խուճապեալ յերեսաց Աղբեսանդրի, զայրուձին՝ որում առաջորդէին՝ մլեաց առաջի կառաց նորա, և քան զանձնեին ինքն առաքինացաւ։ Երիվարք կառաւիցք Վարեհի՝ ի բազում վերացն խեղեալ ընդվզեալ զկաղամաճն՝ ի բաց ընկէնուին, մինչև՝ ի վտանգ տապալելոյ կառացն։ և Վարեհ առ ահին մատնելոյ՝ ի ձեռս թշնամեաց՝ վաղեալ յերկիր, հեծաւ յայլ կառս։ Նոյնպէս զէնընկէց՝ ի փախուստ դարձան, յոլով և կարեր ազ ապրել։ Նոյն Աղբեսանդր խոցեցաւ յաղեղն, այլ ոչ առ ի մահ։

Այնուհետև կէսք՝ ի հետևակաց մակեդոնացւոց յաջումն Թևի զթշնամին հարկանելին, այլք՝ ի յոտնական գնդէն նեղելին։ Քանզի երբև տեսին զնոսա Յոյնք յաջոյ Թևէ անպատասպար՝ ի հալածել Աղբեսանդրի զթշնամին, հասին՝ ի կողմանէ հարկանել զնոսա։ Նոյնպէս և պատերազմ խիստ, և յերկարեաց յաղթութիւն յերկոցայս. քանզի Յոյնք քանային վարել զմակեդոնացիս՝ ի դէմ, և զձախոյ Թևէն քակտումն կազմել. և մակեդոնացիք զհամ ձիւն գործէին՝ ի բուռանդակիւ դյաղթութիւն՝ զոր կալաւ Աղբեսանդր, և մի զիարս անպատրելոյ մակեդոնեան փաղանգին աղարտել։ Վարձեալ զի մակեդոնացիք և Յոյնք նախանձորդք էին միւսմիմեանց, և վաղէր զոյնոցա և յամառեցուցանէր վերկոսին նախանձն այն՝ ի դիմամարտութիւն։ Ընդ անկաւ Պտղոմէոս որդի Ալեւկեայ, որ ընդ մակեդոնացիսն էր. և ընդ նմա հարիւր և քան այր՝ ի քաջաց կորովեացն։

Յոկ յաջում Թևի յաղթողքն առաջնորդեալ՝ ի Թագաւորէն, պարտեալ զընդդիմամարտս իւրեանց, դարձան յահեակ ընդդէմ Յունաց՝ որք ընդ միացորդս մակեդոնական փաղանգին մարտնչէին, և վանէին զնոսա բռնութիւն. և յարձակեալ հարեալ զնոսա՝ ի կողմ, ՝ի փախուստ դարձուցին։

Ի սկզբան մարտին աջակողմեան հեծելազունդն Պարսից, նախ քան զյարձակել՝ ի նա Թշնամեացն, կանխեալ էանց ընդ գեան. և անկեալ՝ ի վերայ հակառակամարտ տիցն հեծելոց Թեսսաղացւոց, եբեկ զբազում՝ ի գնդացն նոցա։ Յոկ ապրեալքն առ՝ ի քակտել զբազմ Թշնամեաց և խուսափել՝ ի յանդուգն յարձակմանէն՝ վեր՝ ի վերոյ աշխ ընկրկեցան, որպէս զարհուրելոք յամբոխել Թշնամեաց։ Նոյն իբրև նոքա լի յոտով և յանդգնութիւ՝

որպէս յանշուշտ յաղթութեն յախուռն առանց զգուշութեն դիմել՝ ի հալածել միայն զթշնամիս ուշ ունելին, յանկարծ Թեսսալացիք՝ ի վերայ խռովելոցն դարձան՝ խրախոյս առեալ։ Այլ պարսիկք արիաբար զդէմ կալան՝ մինչ չև էր Պարեհի փախուցեալ, և Հոնաց առաջի մակեդոնական փաղանգին խորտակեալ։

Պարտութեք այրուձիոյն՝ ի սպառ բեկաւ պարսկաստումբ բանակն, և ձիանն տագնապելին յոյժ՝ ի նահանջէն՝ վասն սպառազինն ծանրութեց զրահից հեծելոցն, և զի խառն՝ ի խուռն փախստեամբն ընդ կիրճս խոնեալ՝ կոխակին զիրեարս, առաւել քան՝ ի թշնամեաց՝ ի միմեանց նեղեալ, և զի դարձեալ այրուձին Թեսսալացի հալածէը զնոսա բռնութեք, և ոչ ինչ նուազ քան զՀետաւկան՝ խուճապեցոյց զնոսա, և ոչ սակաւք՝ ի նոցանէ անկան՝ ի տեղւոջն։

Իսկ Պարեհ՝ ի բեկանել ձախոյ թևին, որպէս ասացի, ելեալ՝ ի կառս՝ փախեաւ. և հասեալ՝ ի դժուարս և յառապարս՝ հեծաւ՝ ի ձի, և եթող զաղեղն և զասպար և զեռն արքունի։ Այլ Մղեքսանդր, յետ պարտուեցեալ յոհնական զնդին՝ ի փաղանգէն, և այրուձիոյն Պարսից փախստեան, ապա իշեաց զհետ Պարեհի մանել, մինչ փախստեայն հեռացեալ էր։ Այլ վարձական զօրք նորա գունդն յոհնական, արք իբրև ութ հազար, առաջնորդեալ՝ քաջակորով սպայիցն՝ զարձան յետս զլեառն լեռնայն երթեալ՝ ի Տրիպօլիս Ասորիս։ Այլ էին անդ՝ ի ցամաքի նաւքն, որովք՝ ի Եսբեայ անդր եկեալ էին. և՝ ի նոցանէ զօրքն՝ ի սէտս էին՝ կազմեալ, զայլսն հրձիգ արարին, զի մի հալածեացէ զնոսա նոքօք թշնամին։ Իսկ խուճապական զօրքն արիաբար՝ ի նախկին ձեռս մարտուցեալ, ապա վաստութեք թիկունս դարձուցին. և զկեանս միայն շահեալ, գնացին փախստեայ յոմի և աշապարեաց զբ, կէսք ընդ ուղիղ ճանապարհ՝ ի Պարսս դիմել, այլք՝ ի հեռաւոր անտառս և՝ ի լերինս մտօրեալ, և սակաւք դարձան՝ ի բանակն. զոր յաղթականին կալեալ և աւար հարեալ էր։ Այն անդ Ալեքսանդրիա մայր Պարեհի, և կին նորա՝ նոյն ինքն և քոյր՝ երկոքումբք գտեերօք և մանկամն արքայորդւով, և՝ ի տիկնայ Պարսից ոմանք, զի զայլս՝ ի Դամասկոս յղեաց Պարեհ ընդ կէս գանձուն և ընդ այլ սպասս զեղխութեն և շքոյ արքունեացն։ Այլ գտան՝ ի բանակին երեք հազար քանքար. իսկ զզերծուցեալն կալաւ ապա Պարմենիոն յամառնէն զԴամասկոս։

ԱՄԱԸՆԴ Ղեբրսանդը պարտասեալ՝ի հալածելոյ զԱրեհ, և զի օրն տարաժամեր, և չմարթեր հասանել ունել զիա-
խրատեայն, դարձաւ՝ի բանակ Թշնամեացն՝ որ այն ինչ
367ա · 332 հիւրոցն կողոպտեալ էր։ Այս կատարած եղև մեծի հռչակաւոր պատերազմին, զոր՝ի չորրորդումն ամի Թա-
գաւորութեանն մերոց Ղեբրսանդր։ Այլ անկան՝ի Պար-
սից յայսմ մարտի՝ի ձակատուն տեղւոջ և՝ի փախստի
ամբոխս բազումք հետեւակ և հեծեալ՝։ Եւ՝ի մակեդո-
նացւոց սակաւք։

Այն օր ընդ երեկս արար Ղեբրսանդր խրախուճս
աւագանւոյն և գլխաւորաց սպայիցն. և սեղանակից
իւր եղև նոցա, զի ոչ՝ի խոր խոցեալ էր, այլ ընդ մար-
մնի։ Այլ՝ի բազմէն յընթերցիս՝ աղաղակ մեծ լսելի
եղև՝ի մերձակայ խորանէն, և ձայն հեծեծանաց. և երբ
կեան ամ կոչականքն, մինչև Թիկնապահաց արքայի՝ի
ղէն ընթանալ՝ առ կասկած խռովութեանն զոյացն։ Այլ
եր աղաղակ կոծոյ մեր և հնոյ Պարեհի և այլոց տիկ-
նացն՝ որք գերեցան. զի կոծէին զնա որպէս մեռեալ
ըստ խուժական բարուց կականաւ և սոսկալի կանչիւք։
Ի մի ոմն՝ի նեբրիներս գծիրանի Թագաւորին՝ի ձեռս
ուրուք՝ի զինուորացն տեսեալ, համարեցաւ դիակա-
պուտ արարեալ նմա զԹագաւորն, և զվերնպակ գոյ-
ետ նոցա։ Այն պատմեն, զի իբրև գիտաց Ղեբրսանդր
զպատճառս վերնպակ երկիւղին՝ չկարաց ժոյժ ունել յար-
տասուաց ընդ Թշուառութեանն Պարեհի և ընդ ամուսա-
գութեանն գորով տիկնացն, զի ընդ նա միայն հոգային, և
զաղէտս նորա աչխարհին։ Այլ յղեաց առ նոսա զի եւս
նատ զաւագ դրանն, աւետել նոցա թէ կենդանի է Պար-
սէհ։ Այն նորա առեալ ընդ իւր զամենս՝ի զօրականին,
եկն առ տիկնայսն, և ազդ արար՝ի խորանն՝ թէ չար-
քայ գայր։ Այն որք՝ի մէնոն կային՝ տեսեալ զարմն
սպառազէնս ընդ նմա, համարեցան զտիկնացն կորուստ
հասեալ. և դիմեալ՝ի ներքս՝ գուժեցին զօրհասն, թէ
գահինջք՝ի Թագաւորէն հասեալ գան։ Այրբա յապուշ
լեալ, կարկեալ կային լսել զգատակնիքն։ Պատուիրա-
կին յերկար սպասեալ, իբրև ոչ ոք ուրեք երևէր, կա-
ցոյց զզօրականսն արտաքոյ, և եմուտ ինքն՝ի ներքս։
Այն առաւել զարհուրեցան կանայքն, զի ինքնին մտա-

1 Կատրիոս և Աբրիանոս գան գտնացան համարի Կատրիոս հարիւր
ինր հեծեալաց և ինր ի հետիոտ և չետոտ հետնելոս և երեսարիար հե-
տեն գանելոս Պարսից. իսկ գմանէ գետ, ոչ լուսագրեալ ետուն։

նեը. և անկեալ յոտս նորա՝ աղաչէին նեբէլ նոցա վայրիկ մի, մինչև Թաղեսցէն զԼարեհ ըստ օրինաց աշխարհին իւրեանց. որպես զի զվերջին սպասն հատուցեալ նմա, խնդութիւն մեռցին։ Եւ եւս առաւել ասէ. Լաւ կէն դանի է Լարեհ, և ձեզ խակ չէք ինչ երկիւղ չարի. այլ ի շուք արքունի կեցցէք յառաջին վառսդ։ Յայնժամ Աիսիգամբիս ոգի առեալ միւթարեցաւ ի բանից Եւս նատեաց։

Ի վաղիւ անդր այց արար Լիլեքսանդր վիրաւորացն, և զմեռեալսն հրամայեաց Թաղել յանդիման ամ զօրացն, որ զինու և ամ զարդու վառեալ կային իբրև ի ձակատ մարտի։ Ոչնպէս և ընդ մեծամեծս Պարսից աբար. և մեր Լարեհի հրամայն ետ Թաղել զոր օր և կայ միւն՝ պարսիկ օրինօք և պաշտամամբք։ Լաւ նա զգօնութիւն ընդերողական հրամանն ի կարևոր ազգականն միայն, Ճգիւ և բազում զգուշեաւ՝ ըստ այնր ժամանակ կի իւրում պայմանին, ի կիր արկ։ Եւ ուրախ եղև Թագաւորն, և շուրջս կալաւ զամ զօրացն, մանաւանդ զառաջնոց սպայիցն, և գովեաց զարուեթիս նոցա՝ զորս ետեսն և զորս լուաւ. և վարձս ամենեցուն բաշխեաց ըստ իւրաքանչիւր քաջութե և պատուոյ։

Եւ իբրև կատարեաց որ ինչ վայելէր մեծի արքայի, ապա ազդ արար տիկնացն՝ Թե կամիր այց առնել նոցա. և զամենեսեան որ ընդ իւրն էին՝ Թաղեալ արտաքս, և միայն զԱփեստիոն առեալ ընդ իւր՝ եմուտ ի նեղըս։ Օի էր Լփեստիոն մտերիմ նմա և դայեկորդի, և ամ գաղտնեաց նորա հաղորդ, և առաւել քան զամենեսին համարձակութե ունէր ի խօսել ընդ նմա։ Լաւ այնու խոհականութե և զգուշութե զազատութին ի կիր արկանէր, զի իբր ոչ ի բնե և ի կամաց՝ այլ բռնազբօսեալ ի Թագաւորէն, ի հրամանե նորա Թուեր համար ձակախօսել՝ [1] Լին համատիք երկրքեան. այլ Լփեստիոն էր յաղթահասակ, և զնա կարծեցին տիկնայք Թե իցէ Թագաւորն, և նմա արարին պատիւ։ Լակ իբրև ի գերեզմանն նեբքինեաց ոմանք ցուցին նոցա զԼղեքսանդր, անկաւ յոտս նորա Աիսիգամբիս, և խնդրեաց Թողուլ Թե ի նմանե, զի չև ևս տեսեալ էին զնա։ Եւ Թագաւորն յարոյց զնա և ասէ. Աէ խաբիս, մայր դշխոյ, և

[1] Ըէր այլ ուանք համարձակու- Թեն այն ի խրատել զարբայ, այլ նա ի հրամանե Թագաւորին քան- նախանձայուզուբ Թուեր համար- ձակախօսել։ Կոբբ։

նա ինքն է Յղեքսանդր։ Վասնզի զոյց, որ ելիւքան-
չիւրումն յաճախէ փառս [1]։ Յետ այսպէս խորհելո միտ
և գործէը Յղեքսանդր, բազում պատահմունքն զմեծու-
թեն անուն ժառանգեր. այլ չէ ևս յայնժամ գերեալ
էր զնա քաղքին [2]։ Օ՛ի սկզբան՛ի տալու և յիմաս-
տութեն եկաց. այլ ապա զօրացաւ քան զնա քաղքն, և
յաղթահարեաց զնա։

Օայն ամ բարուեցաւ տեսեալ Աիսխամենայ, յոյժ
ընդրհապարտ լեալ, ասէ. Օ՞ր գոհութեն մատուցից,
աեր արքայ, քում առատ ընտրեիդ. մայր զիս և դշոյդ
կոյես՝ փառաց անուամբն զգերիդ. այլ ես որ ինչ ևի և
զօր եմ՝ գիտեմ։ Խնդամուտ եմ նահնոյ խոհմ լեա-
բախտիկ մեծութեն, և զայժմուս բախտի կարեմ բերել
գծանրութեն [3]։ Ա՛յլ քեզ վայելեն փառք, զի զամ իշ-
խանութեն կալեալ՛ի վերայ մեր՝ ի գթութեն միայն և ոչ
՛ի չարիս՛ի կիր արկանես զայն։ Այս քաջալերեալ զնոսա
Թագաւորն, և զարքայորդին՛ի գիրկս իւր ընկալաւ.
իսկ մանուկն ոչ ինչ հարթութեալ, փարեցաւ գնովաս.
և նա խանգաղատեալ՛ի վատահութեն մանկանն, գար-
ձաս և ասէ ցԱրիստիոն. Զանկարծ յորդւոյն բարե-
բարութեն չլիներ հայրն անկցորդ։

Այսպէսն Յղեքսանդր՛ի սկզբան Թագաւորութեն քան
զամենեսեան, որ նախ քան զնա Թագաւորեցին, ուղղու-
թեն կալաւ զնշխանութեն. և գեր՛ի վերոյ եղև կա-
րեացն, որ և զյոյժ կորովիւն պարտեալ գրաւէ։ Այր
դշոյդ Դարեհի կին չքնաղագեղ. և ինքն իսկ Դարեհ
գեղանի քան զամ Թագաւորս, անձնեայ, և պատահաւ-
լի կերպարանաւն. և գտեերք նոցա նմանք ծնողացն
էին։ Յո կային նոքա՛ի բանտիկին Յղեքսանդրի, ասէ
Պղուտարքոս, ոչ իբրև առ թշնամիս, այլ որպէս՛ի տա-
ճար սուրբ՛ի վեհապայր ապաստան զգաստութեն և պաշ-
կեշտութեն, ուր օրիորդքն և ամ՝ տիկնայք կային անտես
՛ի մարդկանէ. և ոչ ոք՛ի կանանոց անդր իշխեր մերձե-
նալ։ Այս և Յղեքսանդր միանգամ ըստ հարկի այց ա-
րար նոցա ոչ՛ի ծածուկ, որպէս ասացաք. և այլ ոչ ևս

1 Որ՛վ պարգև գերապանծ բար-
բառոյն, վայելուչ որում բարբա-
ռեցաւն, և առ որ բարբառէին։
Վեղ. Մ՚ա՛ս. ֆ. է։

2 Ա՛յլ չէ ևս յորդեալ էր՛ի
նա բաղդն. և չափով և զգօնու-
թեբ զսկիզբն կալաւ, այլ ոչ կա-
րաց զլրուեն նորա բերել։ Կ.
Կ՚ուպ։

3 Եւ նահնոյն խոհմ լեոյ բա-
րեբաստութեբ խնդամուտ եմ, և
զսերձակայիս լուծ կարեմ բերել։
Կ. Կ՚ուպ։

օրէն համարեցաւ տեսանել զկին Դարեհի՝ թէ գուցէ մեղկիցի՛ ի տեսլ գեղոյ նորա։ Եւ զայս արժանի չհրաման տակի իբր ինքն իսկ պատմէ՛ ի հրովարտակին առ Պարմենիոն, յորում պատուիրէ նմա սպանանել զմանկեղս նացիոն՝ որոց ընդ կանայս ունայց՛ի վարձկան զօրացն անօրինեալ էր։ Եւ զբէ անդ այսպէս . Օ՛ի ես չտեսի իսկ, և ոչ տեսանել յանձին կալայ զկին Դարեհի, և ոչ լսել զգեղոյ նորա։ Եւ մանաւանդ զի էր չայնժամ Աղեքսանդր՛ի հասակ արուեստ, և չաղթող՛ի մարտի, և չև ևս ամուսնացեալ. որպէս զնախնոյն Ալիպիոնէ՛ի Վաղ-Մոր- Հանգոյն գ.ֆ. գէպս ասի՝ թէ էր պատանի և ամաբրի և չաղթօղ։ Եւ միանգամայն ասացեալ, այնպէս գուէթ և սէր աբար ընդ սիրեալն՝ զի ոչ զգացին գերուելն. և ոչ ինչ չատաչին բարեացն պակասեաց նոցա, բայց միայն զի չվատահէին՛ ի Թշնամին, թէպէտ և բարեբարեր։

ՑՕԴՈՒԱԾ Զ.

Վառեալ Աղեքսանդրի չաղնախաւ չԱյորիս, և առնուլ զքանչս ամբարձեալս՛ ի Վամասկոս. և վասն չոխորդ գերոյն Վաբեհի առնա, և՛ ի նմանէ հանգոյն պատասխանւոյն. և Սէրունի նուաճել ընդ նովաս. և վասն Աղբդոնմոյ անակնել նախաորելոյ. և պալատել Աղեքսանդրի զՏիւրոս, և առնուլ զայն՝ հզօր գիմամարտիս գայնա ելոյն. և գոռչոռելոյ մարգարէից Լրոյն՛ ի Տիւրոս։

Եւայց Աղեքսանդր կանգնեալ առ Պինար գետով բա- 3672. 332
զինս երիս՝ Վիսյ և Հերակլի և Աթենասայ՝ արձանս Դիոդ. ժէ. 517։
չաղթութեան, գիմեաց ապա չԱյորիս. այլ չատաչայ- Եւրիան. ք. 82։
գոյն զՊարմենիոն՛ի Վամասկոս չղեալ էր, ուր էին գանձք Վաբեհի։ Վրաղաքատեան տիրանէդ, զի ոչ ևս բարեաց ինչ՛ի բնիկ տեառնէն ակն ունէր, գրեաց առ Աղեքսանդր, և խոստացաւր մատնել՛ի ձեռս նորա զնմա՛ գրոյ. ք. ը. ա։ արծաթն և զսպասս Դարեհի։ Եւ՛ի ձմեռն զնաց Յոան. ժա. ի գղաւն, որպէս ոչ չատացեալ չամրութեն քաղաքին՝ ընդ ծագել առաւօտու բարձոյց՛ի բեռնակիրս գնմա՛ զարծաթն, և որ այլ ինչ ցանկալի էր, և նմա՛ մեծութեչն հանդերձ փախեաւ՛ի քաղաքէն, իբր թէ զերծուցանելոյ գնոսա. այլ ձնմարտիւ՝ ածէր մատնել զանոսիկ Թշնամեաց, որպէս բանադնաց լեալ էր Պարմենեայ ընդ նմա, և ընթերցեալ զթուղթն՝ զոր գրեաց առ Թագաւորն։ Ոսկ բեռնակիրք և Թիւնապահք նոցա զօրքն ընդ տե-

սանել զզօրս Պարմենեայ՝ զարհուրեալք, Թողին զբե-
ռիսն և փախեան. և քաղաքապետն ինքն ընդ նոսա
փախեաւ, որպէս առաւել քան զայլսն ահաբեկեալ.
Այլ գանձք անբաւ ցան և ցիր ՚ի դաշտին կային, ար-
ծաթեն և ոսկի պատրաստեալ ՚ի ռոճկիկ մեծի բանակին.
և փարեցան սպառք աւազանսին և տիւնաց, անօթք
ոսկեղէնք և սանձք ոսկի, խորանք մեծագործք և կառք
անյայի ՚ի վարչաց, և համայն ասէլ որ ինչ ՚ի վաղ ժա-
մանակաց անթառամ բաղդիւ և խնայութիւն Թագաւո-
րացն մնեալ էին, ամենայնին Թողեալ էր յաւարի յաղ-
Թողին։

Այլ այն չար և աղէտք էին՝ տեսիլ տիւնաց նախա-
բարացն և իշխանաց Պարսից, հանդերձ մատաղ մանկը-
տունն՝ որ ոչ գիտէին զԹշուառութիւն իւրեանց, առաւել
և այնու արժանիք ողորմելիք։ Զոր էին և երեքին
օրիորդք դստերք Վէրայ՝ որ նախ քան զՎարեհ Թագա-
ւորեաց, և կին նորա այրի, և դուստր Քաքաբերեայ
եղբօր Վարեհի, և կին Քրստաւաղայ՝ որ էր աւագ ՚ի
դրանն, և Յղինեոս որդի նորա։ Վարձեալ և կին և
որդի Փառնաբազայ՝ որ ծուխպետ ՚ի վերայ ամ ծովե-
զերացն կայր յարքայէ, և երեքին դստերք Վենտորի,
և կին և որդի Վեհնամի մեծի զօրավարին. և ոչ զոր
ազգատոհմ ՚ի Պարսս ՚ի մեծէ նեղութենէն ղերծ։ Ընդ ՚ի
Վամասկոս էին և հրեշտակք ազգացն Հունաց, և սպառ-
տացւոցն իսկ և աթենացւոց, զորս Վարեհ որպէս յա-
մուր ապաստանի ՚ի հաւատարմութենէն նենգաւորին աւանդ
դեալ էր։

Ընդ բազմագանձ դրամն և ընդ արծաթեն գործեալ,
գերեցան և երեք բիւր մարդիկ, և եօթն հազար գրաստք
կարասեակիցք բեռամբքն հանդերձ։ ՚Ի Թղթին, զոր
գրեաց Պարմենին առ Ղեքսանդր, ասէ՝ Թէ էին ՚ի
Վամասկոս և երեքբարիւր քսանևհինն հարձք Վարեհի
քաջհմտութեամբ երաժշտականին, և բազում ամբոխ սպա-
սաւորաց՝ սեղանայարդարք, Հաշագործք, պսակահիւսք,
խնկաղացք, իւղեփեացք, խահմանքգործ և Հանճիւք, պղա-
կունտրագործք, մատակարարք, մատռուակք և այլ
պաշտօնեայք սեղանոյ, որք իբրև չորեքբարիւր հինսունն
և երկու, Հաշուոյ Թիհինապահք Թագաւորի՝ որ ՚ի կո-
րուստ իւր դիմէր երեմայր։

Վարեհ որ սակաւիկ մի յառաջ աշխարհազօր Հոից և
պերճ բանակաւն, ՚ի կառս բարձու բազմեալ, ՚ի սպաս
յաղթանակի քան Թէ ՚ի կազմն մարտի գնայր ՚ի պատե-

ԱԲԷՆ. ԺԷ. 607։

բազմ, նոյն ինքն փախստեայ դառնայր ընդ դաշտս՝ որ յառաջ ծածկեալ յամբոխէ մեծէ զօրաց նորա, էին յայնժամ անապատք անհուն և անմարդի։ Հիք և չուառ կիւբերպինաց փախստական երեթայր միանգամ ցառաջ ոտ ջոկատիս փոքու, զի ոչ ընդ նոյն ձանապարհ ամ զօրքն փախչէին. և յուղեկցայն իսկ նորա բազումք չհասանէին նմա, զի ստէպ զձին փոխէր. միանգամ ասպ ետ հաս ի Սոք [1], և զկաց մնաց բանակին Յոզուլեալ՝ արս իբրև չորեքհազար ընդ պարսիկ և ընդ այլազգի, անտի եկն ստիպոտ ի Մասպակ, զգետն Կուրա խորոց կա լեալ ընդ ինքն և ընդ Աղեքսանդր։

Յակ Պարմենիոն հաց զնոմ աւարն ի Դամասկոս. և պատուիրանաւ Թագաւորին եկաց անդ ի պահ նոցա և գերուցն։ Ի քաղաքաց Սորուց յոլովք քան զսակաւս՝ ընդ մօտել յաղթողին նուաձեցան։ Եւ միանգ դեռ էր նա ի Սարաթ, եհաս առ նա գիր ի Դարեհէ, յորում արքայից արքայ զանձն կոչէր, և զԱղեքսանդր առանց մեծարանաց անուանեց. և որում աղերսէն պարտ էր, իշխանաբար ինն պահանջէր զմայր և զկին և զորդիս իւր տալ արծաթոյ՝ որքան կամեցի. իսկ զվեհ իշխա նութէն միահամուռ մարտիւ հաւասար զօրութէն ասէր լուծանել. և խրատ տայր նմա, լսել և ի սահմանս պե տութէն նախորդացն կալ, և մի զայլոցն աւազակել, զի լինին բարեկամք և հաւատարիմ նիզակակիցք, և տա ցէն միանց երդումն։

Սրտմտեցաւ Աղեքսանդր ընդ տարապարտ ճոխաբա նել յոխորտ նամակին, և գրեաց առ նա պատասխանի, որ ունէր օրինակ զայս. Աղեքսանդրոս Թագաւորաց Թագաւոր առ Դարեհ. Այնինչ քո ես համառուն զհոգոյս բնակեալս յեղերս Կիլեսպոնտեայ, և զյանիրայինն՝ զնախ կին հաւատացեալ ի մէնջ գաղթեալ՝ կործանեաց. և ընդ ծով հզօր բանակաւ անցեալ, ած պատերազմ մինչ ի մէ ջերկրայս Մակեդոնիոյ և Կուլադայ։ Հետոտոս Վիսեղբ սէս պարակոսումբ ահեղ ամբոխիւն ի՛ կռիւ, և պար տեալ ընդ ծով՝ դարձաւ յետս, Թողեալ զՄարդոնիոս Կուլադա՝ աւար հարկանել զքաղաքս մեր, և զդաշտս ապականել։ Ալ զվնասլիպոս զհոգիս մեր, չիք ոք որ ոչ գիտիցէ՝ զաւով յետզազակաց սպանեալ, որք ի ձիոջ յուսով մեծաւ կաշառեցան։ Օ՛ ի Պարսիցդ սովորու-

1 Էր գաղտ այս հեռի ի փեշոյն մարթի երկուց կամ երից մեծուց ճանապարհաւ։

թէ՝ գոլծել անիրաւ պատերազմ, և զէն ի ձեռին՝ կե-
նաց թշնամւոյն սակ հատանել։ Իսկ զարդիս դու ինքն
զօրօք մեծաւ այսր հասեալ՝ հաղար քանքար ի դաւել
զանձն իմ խոստացար։ Իսկ արդ ես պահ ունիմ անձին,
և ոչ աւազակեմ. և արգարութեն վրէժխնդիր դիք յա-
ջողեցին զնուաց խմոց. և նոցա օգնականութեն զկողմն
մեծ զՍիսէոս նուաձեցի, և ձակատս պատերազմի յաղ-
թեցի քեզ։ Իզդ չեր պարտ ընդհարել քեզ և ոչ ինչ՝ անե-
րաւելումն մեզ, այլ ահա արձակեմք առանց վրկանաց
զմայր քո և զկին և զորդիս, միայն թէ խոնարհեալ խընդ
գրեսցես. և ցուցից՝ զի որպէս յաղթեցի գիտեր, գի-
տեր և ներել պարտելոց[1]։ Իպա եթէ կասկածես, եր-
դուեալ՝ թէ չար ինչ դիպեսցի քեզ։ Իյլ գիտա, ի միւս
անգամ գրել քումմ՝ առ Թագաւոր և առ տէր քո
գրել։ Իսկ հրամայեաց Ալէքսիպպէայ տանել զնուղեն։

Իսկ Իզդեբանդր անցեալ ի փիւնիկէ, հնազանդե-
ցոյց զԻրլեն քաղաք. և քաղաքք ի մօտել նորա անձ-
նատուր լինէին, այլ մնադիւրագոյն սիրտնայիք նուա-
ձեցան։ Օ ի յառաջ քան զնաԹուտան ամ կործանեաց
Ալէքս զքաղաք նոցա, որպէս յիւրում տեղւոյն ասա-
ցաք, և զամ բնակիչսն կոտոյս։ Իսկ իբրև դարձաւ նա
ի Պարսս, ապրեալքն ի կոտորածէն՝ որ ի վաճառա-
շահ կամ որ ըստ դիպոց ինչ մեկնեալ էին ի քաղաքէն՝
դարձան անդր, և վերստին կանգնեցին զայն։ Իյլ
յայնմ հետ ոխակալութիւ անգԹուԹեն գաղտնեցեալ ի
Պարսից, խնդութիւ բազմաւ ընկալան զպատերազմ
տութեն ի լծոյ նոցա. և կանխեալ յառաջ քան զամե-
նեսին արձակեցին առ յաղթօղն՝ հնազանդել նմա, թէ
պէտ և Պտրատոն Թագաւոր նոցա ընդ Դարեհի փա-
բանեալ էր։ Իսկ էառ ի նմանէ Իզդեբանդր զպատկն,
և հրաման ետ Իփեստիոնի պահել փոխանակ նորա զոր
ոք վէհ իշխանութեն անկ հանդերձի։

Իայց զԻփեստիոն ասպնջականէին եղբարք երկու
պատանիք՝ երեւելիք յաշխարհին, և նոցա վերագաւա-
րութեանն ետ։ Իսրա հրաժարեցին վասն հայրենի օրի-
նացն, զի չէր օրէն ումեք Թագաւորել՝ բայց միայն Թա-
գաւորազանց։ Իսկ Իփեստիոն զարմացեալ ընդ ազնուա-
կանութիւն նոցա, զի զոր ի սուր և ի հուր խնդրելին
այլք՝ նոքա արհամարհէին զայն, ասէ. Ճիմաստիկ այսի՝
որում դուք ի մարդիկ խելամուտ եղէք, առաւել փառս

1 Գիտեմ և յաղթել. և ի պարտեալն խնայել։

համոզեալ հրաժարել ի Թագէ՝ քան Թագաւորել, յայդմանէ մի երբեք կասիցիք։ Այլ ցուցէք զոր ինձ ի Թագաւորացանցն, որ ի Թագաւորել իւրում մի մոռասցի՝ Թէ դուք Թագաւորեցուցէք զնա։ Այնպա զամենս փառամոլացն անարգեալ, որ ըղձիւք տենչային ի բարձր պատուն, և ստրկաբար սպաս և պաշտօն մատուցանէին մեծերմացն Աղեքսանդրի, ցուցին զԱդդողնիմ արժանի պսակին. որ ի հասուց նախնեաց յարքունի տանէ սերեալ, էր յայնժամ աղքատ, և առ հարկին՝ միակու. Թէ զկեանն պաճարէր ի պարտիզի միում հեռի ի քաղաքէն. և յայն աղքատութեի վասն լաւութեին հասեալ էր, որպէս պատահէ բազմաց. և զարթուեալ պատահեալ, և ոչ զշտեմ խազմական զինուցն լսեր՝ որ դղրդէին զքնաւ զԱ՛սիա։

Այլ եկեալ առ նա երկոցունց եղբարցն՝ ածին զարքունի զգեստն. և նա զմոլաբոյսս քաղ հանէր, և ողջոյն ետուն և ասեն. Կեցցե արքայ։ Այլ միումն յառաջեալ՝ ասէ. Վերկեա զքնցոտիդ, և արկ զպատմուճանս՝ զոր ածաք. Թող զգեստ և զանարգ կերպարանդ՝ զոր մինչև յայնժ կրեցեր, և զգեցիր զզօրութիւն Թագաւորի՝. այլ բեր ի քեզ զառաքինութիւնդ որով արժանի եղեր Թագաւորելոյ, և ի գահոյս պինդ կալ ջեր զոյն։ Այլ ի գահակալել քում և յիշել կենաց և մահու՝ մի քաղաքացոդ, յիշեա մի մոռանայցես զկենցաղդ՝ յորմէ հրաւիրեցարն, զի վասն այսորիկ իսկ հրաւիրեցար յաՔոռ։ Այլ Աղդողնիմայ Թուէր յերազել. և ոչ կարացեալ կալ ի վերայ բանից նոցա, ասէ. Այս ոչ ամաչէք խաղ առնել զինեւ։ Այս մինչ դեռ նա դանդաղէր, ինքեանք յարդարեցին զնա, և զգեցուցին նմա զծիրանի ոսկեձամուկ, և երդմամբք բազմեք հաւատի արարին նմա՝ Թէ ճշմարիտ և ոչ ընդ խաղ ինչ գործեն. և ածին զնա յարքունիս։

Ա՛ղվաղակի համբաւն ընդ ամ քաղաքն տարածեցաւ. և բազումք այն էին՝ որ ուրախ լինէին, բայց կէսք՝ մանաւանդ ճոխքն՝ բրթմնջէին, անգոհանալ զնա վասն նախկին նուաստութեին և աղքատութեի, և անդէն յարքունիսն զխոժոռութիւն իւրեանց յայտ առնէին։ Այլ

1 Ընկալ զկոզի առաջնորդա- կան. և զժուժկալութի քո՝ որով ի բաւական հասանես, և ի գահ զոյն պինդ կալջիր։ Այլ ի գահակալել քում և յիշելել կենաց և մահու, տես մի մոռասցիս զընկենցաղդ՝ յորում Թագաւորես, և վասն որոյ Թագաւորեաց խակ։ Կ. Կ--ԻԲ։

հրամայեաց Յ[ովսեփ]ոսդ մուծանել զնա առ ինքն. և յառեալ ի նա, ասէ. Կամ և դեմքդ իսկ քո վկայեն համբաւոյ ազնիդ. այլ ասա ինձ՝ արդեօք երկայնամտեցեր քումմ չուառ բաղդին։ Նա ասէ. Երանի թէ նովին ձօրուվքէ և զթագս զայս կրեցեայ։ Օ՜ամ զվէտս իմ լցին ձեռաց այս. և մինչ ոչն ինչ ուշիի, ոչ ինչ պակաս սեաց ինձ[1]։ Նա ի բանիցն անտի՝ մեծի առաքինութեաբ նորա խելամուտ եղև Յ[ովսեփ]ոսդ. և ոչ միայն զկամ և զսպասս Պարտոնի ցանկալիս հրամայեաց տալ նմա, այլ և բաղում ինչ յաւարէն Պարսից. և յաւել ևս զմի ի սահմանակից գաւառաց յիշխանութեի նորա։

Դ[ատ]. ԺՀ. 518։ Ե[ղիս]. Բ. 87։ Պ[ետ]ր. ԻՆ. [ա]ՀՈ. 667 · 678։ Կ[որ]ր. Ֆ. Բ։ Յ[ով]ե. ԺԹ. Ֆ։

Եայց զՅ[ովսեփ] և զփիւնիկէ ունէին մանեդամացիք, բաց ի Տիւրոսէ։ Վասնզի Տիւրոս իշխան էր ծովու, և ոչ լոկ անուամբ. զի Հարկս յամ ազգաց երկրաբնակաց ընդ ծով ընդունէր։ Եայս գնաւարկութեան նախագիւտ պարծանն կալաւ, ուսուցեալ մարդկան՝ չնչին լաստա-փայտիւն ալեաց և մրլ կաց դիմագրաւել։ Նա վասն զի տեղին դիպող էր, և նաւահանգիստք նորա դիւր և ընդ-արձակ, և բնակիչքն ի բնէ ձարտարք, ժիրք, երկայն-նամիտք և օտարասէրք, անդր յամ կողմանց դիմէին վաճառականք. և ոչ ևս էր քաղաքն այն ազգի միւսի, այլ հասարակաց ամ ազգաց, և միջակէտ վաճառաշա-հութեան։

Եդ ի մտել անդր Յ[ովսեփ]ոսդ, հրեշտակութեի աւ-ուաքեցին առ նա տիւրացիք՝ հանդերձ պատարագօք, և կերակուր զօրացն. և յանձն առնուին լինել բարեկամ նմա, այլ ոչ ծառայել. և ի քաղաքն իսկ չետուն մնալ նել նմա, զի կամք մատուցանել անդ զոհ Հերակլեայ՝ որ վերակացու քաղաքին նոցա աստուածն էր։ Եայց Յ[ովսեփ]ոսդ քաջայաղթ աշխարհակալութիբն խրոխտա-ցեալ, չհամբեր նախատանացն. խորհուրդ կալաւ նեղել զքաղաքն պաշարմամբ, և քաղաքացիքն կազմեցան ի դիմակալել։ Եվ ի ասուրբ մերձ գարնայոյ. և Տիւրոս ի միջ ծովու բնակեր, չորիւք ասպարիզօք հեռի ի ցա-մաքէ, պատեալ պարսպաւ՝ որպ էր բարձրութեի հարիւր

1 Նա կերպարանդ իսկ, ասէ, զհամբաւ ազգին հաւաստէ. այլ ասա ինձ, արդեօք աղքատութեան այնմիկ ժուժկալութիբ տարար։ Նա ասէ. Յանկարծ նովին ոգւով և զթագս զայս կրեցեայ։ Օ՜ամ կարօտութեի իմ լցին ձեռաց այս. և մինչ ոչն ունէի ինչ, ոչ իմիք կարօտացայ։ Կ[որ]ր։

Գնդեղծիկ և ոսկեայ եմաստ։ Ի ա-րուն կրեն ասէ ըիսիք. ցոյցանէ զնա գաւառականին բեան պեծարելիք ման աղաչագոսնին։

և յիսուն ոտնաչափ, և ալիք բաղխեին զնա։ Եւ կաթ-
քեդնացիք գաղթեալք ի Տիւրոսէ հղօրք և յաղթք ի
ծովս, յորոց հրեշտակք ի ժամանակին յայմիկ եկեալ
էին անդր զվաշժամանակեայ սովորութենն զոհ տարեւոր
մատուցանել Հերակլեայ, խոստացան օգնել տիւրաց-
ւոց։ Եւ նոցա քաջայայս լեալ հաստատեցան չմնար-
հել. և կանգնեցին զկազմածն ի մարտկոցս և ի մահ-
արձանս, և զմանկտին վառեցին ի զէն. և արուեստա-
նոցս բազմամբոխ գործաւորացն՝ որ ի քաղաքին էին՝
կառուցին. և հնչէր գլորգմամբ համ քաղաքն ի կաղ-
մածոյ մարտին պատրաստութենէն։ Եւ խիղճ երկաթիս
դարբնէին ի կարթել և ի խլել զմինքնայս Թշնամեաց,
և ձանիս, և այլ ևս հանգոյն գործիս ի պահ քաղաքաց
ձարտարեալ։

Հաղուագ իրօք կարևոր վարկանէր Աղեքսանդր ու-
նել զՏիւրոս. զի և Հնդիկաստս արշաւել նմա դժուա-
րին էր, մինչ դեռ Պարաք ծովակալէին. և ոչ զվարեհ
մարթէր հալածել անվտանգ, Թողեալ զհետ իւր ազգս
Թշնամիս կամ կեղակարծս։ Վարձեալ և ի Յունաց
երկիւղ էր նմա՝ Թէ գուցէ խլրտեսցին. և ի Թշնա-
մեացն կասկածէր՝ Թէ ի մեկնել իւրում կալցին զքա-
ղաքս ծովէզերեայս փոքուն Խիոյ, և զտորմիղ նաւացն
ստուարացուցեալ՝ արշաւեսցեն յաշխարհս իւր, մինչ ինքն
զվարեհ ընդ դաշտս Հաբիլոնի հալածիցէ։ Վասն-
ւանդ զի և սպարտացիք, համաձայնակեալ էին զԹշնամիս
Թէ ընդդէմ նորա. և աթենացիք առ ահի քան Թէ ի
կամայ յօժարութենէ կային ընդ նմա։ Վասն եթէ զՏիւ-
րոս նուաձէր, զայժմ փխունիկէ կալեալ՝ պակաս առնէր
զկնս նաւատորմին Պարսից, որ ի փխունիկեացոց նաւացն
խմբէր, և դիւրաւ ապա զՀիւսրոս կղզի և զՂդիպատոս
առնոյր, զի ոչ կարէին հակառակել նմա՝ մինչ զծուլ
ունէր։

Իսկ անտի՝ պատերազմաց օրինաք հարկ իսին առնելին
նմա հալածել զվարեհ, և մի տալ պարապ Թշնամեացն
ուշաբերելոյ յարհաւրաց բեկմանն առ Խեաւ, և ան-
դրէն զօր ժողովելոյ։ Վասնզի անվրիպելի յաջողութեն
ահաւոր լիներ և հզօր ի վերայ Թշնամեաց։ Վարձեալ
զի Թէ չայջողէր յաղթել տիւրացւոցն, որպէս դժուա-
րին իսկ էր քաղաքն առ առնուլ, աղարտեր զահ զինուցն,
և զարգասիս յաղթութենն կորուսանէր, և ոչ ևս Թուէր
Թշնամեաց անյաղթելի։ Վայլ ևս, որ ի ձեռն նորա կա-
մէր զնորոստացեալն Տիւրոս պատուհասել, որպէս յԵլ

կատարածին տեսցի, եբարձ ի մտաց նորա զայս ամ
խորհուրդս. և շարժեաց զնա ի բազմավտանգ պաշա-
րումն քաղաքին ընդդէմ ամ գժուարութեցին, և ի վե-
րայ ամ հաւանութեցէ՝ որովք յորդորէին ի հալածել
զԱրաբեհ։

Այլ հարկ էր առ ի մատչել ի քաղաքն և ի հարկա-
հատ զպարիսպսն, լիր արկանել ի ցամաքէն մինչ ի կղզի
անդր. և Թուէր գործն անհնարին։ Վասնզի յանձուկ
կիրճին, որ գՏիւբրոս ի ցամաքին անջրպետեր, հողմն ա-
րեւմտեան ի հարաւոյ ընդեալ՝ յարուցանէր ստէպ ահա-
գին մրրիկս, և զամ գործածեն ի քթթել ական առեալ
տանելին ալիքն, փլուզեալ զամ վաստակս։ Վարձեալ
ամ կողմանց գբաղաքն ծով բաղխեր, և սանդուղս
ամրթեր ի պարիսպսն մատուցանել, և ոչ մեքենայս
հոտալ կանգնել՝ այլ ի նաւս ի բացի, զի էին ստոյոտք
պարսպացն ի ծով ընդարձակեալ անմատչելի։ Վարձ-
ձեալ և յաւելման յանկայուն նաւսն տիրանային հա-
րուածք բերդամարտիցն կազմածոց։ Այլ ոչ ինչ գհաս
տատուն և զարիւն Զէքսանդրի մեղմեաց, որ զամ վը-
տանգս յանձն առեալ էր ի նուաճել զքաղաքն։ Այլ զի
նաւատորմն նորա սակաւաձեռն մեկնեալ էր, և Հզօր քա-
ղաքին պաշարմանն մարթէր յերկարաձգել, փորձեցաւ
նախ դաշամբք գնորսն վճարել, և քարոզս արձակեաց ի
խաղաղութեի։ Այլ տիւբացիք սպանին գնոսա, կոխե-
լով զօրէնս պատերազմաց. և ի բարձուկ պարսպին ար-
կին զգլխակունս նոցա ի ծով։ Այս Զէքսանդր ծանրա-
ցասումն լեալ ընդ դառնագէտ նախատինան, և ոչ ևս
երկմտեալ, ամ փութով գՀողաբլոցն տայր կանգնել։
Այս յաւերակաց Հնոյն Տիւրոսի, որ էր անդ ի ցամա-
քին, և Պալետիւրոն կոչէր, նիւթ բաղում արկ ի լիր
Հողաբլոյն՝ զամ քարինս և գփայտակս։ Այս ի Լիբանան
լեռնէ՝ որ ոչ ինչ կարի հեռի էր, անուանին յաստուա-
ծային գիրս մայրեօքն, անտի ածէր փայտ ի ցից և ի
ձողս։

Օ օրքն ամ ժիրք ի գործն վաստակէին. զի Թագա-
ւորն ինքն մերձ կացեալ՝ տայր հրամանս. և Ձարտարու-
Թիւն ևս յողոքել և ի յանկուցանել մինչ զզօրս [1],
գկիսս գովաբանէ, գայլս ամբ կատաղութիւբ և քաղցրա-
խառն խոստմամբք յորդորէր։ Այրագ յաջողեաց գործն
ի սկզբանն. զի գիւրաւ զցիցսն հարկանէին ի տիղմն,

[1] Ըստ ինչ անհմտաւ յողոքել զսիրտ զօրականին։ Ի. Կոստ.։

որ լինէր քարանցն ի հաստատութեն ընդ կրոյ և ընդ շաղախի, և զի դեռ էս հեռի ի քաղաքէն անխափան գոր ծէին։ Ի.ԱԼ ըստ մեկնել ի յամաքէն՝ գժուարէր գործն. զի ծովն յաւելոյր ի խորութեն, և գործաւորք նեղէին ի թշնամեաց՝ ի բարձանց պարսպացն. դարձեալ և թշնամիք, զի ունէին զծովն, հինախաղաց նաւուք յաճեալ առ ափամբք Թմբոյն աստի և անտի, խափանէին զգործաւորս։ Ի.Ա Թշնամանս էս յաւելեալ նախատեհին զմակեդոնացիսն, թէ ահա գոռ պատերազմողք անուանիք ընդ տիեզերս՝ բեռինս շալակաւ կրեն իբրև զպառաւս. և հենդնելով ասէին. Այ՛ի թէ մեծ ինչ ոք իցէ Ի.ղեքսանդր քան զՊոսիդոն, և յաղթել էս նմա խրտմելոցէ։

Ի.ԱԼ յերգիծանաց անտի յաւելուին զորքն յեռանդն. և բարձրանայր գործ հողաբլրոյն յերեսս ջուրց, և ընդարձակեալ երկիր լայն՝ մտեր ի քաղաքն։ Ո՛ր տեսեալ տիւրացւոց՝ պակեան ընդ մեծագործ աշխատուէին, որ ընդ ալեօքն ծածկէր. և եկեալ մակուկօք տեսանէին զայն՝ մինչ էև ամրացեալ էր։ Ի.Ա պարսաւորք և ազեղնաւորք և տեգրակնեցք և հրձիգք խոնեալ՝ ի մակոյկսն, յաջմէ և յահեկէ Թմբոյն զգործաւորս նետիւք խոցճապեցուցանէին։ Ձորոց բաղումք խոցեցան, ոչ կարացեալ պատսպարել՝ ի հարուածոցն՝ ի գիւրերադ երթևեկէ մակուկացն, մինչև խափանեալք ի գործոյն՝ խորհէին ի պահ անձանց. և մրթմռէ առաւաստիւք պատսպարեցան. և աշտարակս կրկին ի ծայր գործածոյն կանգնեցին՝ չմատուցանել անդր զթշնամին։

Վարձեալ և ի ծովեզրն տիւրացիք զօրս ինքեանց անտես ի թշնամեաց, և զբեռնակիրս քարանցն կոտորեցին, և ի Լիբանան լերինն գեղջէք արաբացիք, ի մահեդոնացւոցն՝ որ անդր զփայտ երթեալ էին, սպանին արս իբրև երեսուն. և ոչ ինչ պակաս գերի կալան։ Վասն որոյ հարկ եղև Ի.ղեքսանդրի ի գունդս զօրսն բաժանել։ Ի.այց տիւրացիք ամ ձգամբք և մարթանօք քանային խափանել զգործն. և զի ի բեռնաբարձ նաւացն լինին խոտովք որթոյ և այլ կիզանուտ և թեթև նիւթոք. և զառաջս նաւուն ցանկեալ անդր խոկեցին զամն, և ձիւթ և ծծումբ և այլ նիւթս կային, և կայմն կըռնկին ի ցանկապատն կանգնեալ, և թէև առաւաստաս կալս կրկնակ յերկաքանչիւրսն հաստատեալ, կախեցին զնոցանէ կաճասյս ի ձիւթով և նաւթիւք. և քար և աւազ ի խէսն լցին՝ զի առաջքն ի վեր ամբարձցին։ Ի.Ա

'ի հնչել աջողակ հողմոյ՝ 'ի քարշ ածեալ զպէս պատերազ-
միկ նաւօք, մատուցին յաշտարակն. և խանձ՝ 'ի լուց-
կիսն արկեալ, արձակեցին զնա 'ի ծայր Թմբլին. և նա-
եաստքն, որ էին 'ի նմա, փրկեցան 'ի լեզ։ Իսկ Հրդեհն
բոցածաւալ յաշտարակն և 'ի փայտակերտս Թմբլոյն
տարածեցաւ. և 'ի տատանել Թևոց կայմիցն՝ հեղան 'ի
կաթսայիցն նաւթն և ձգեր 'ի հուրն, և Հրդեհն զայրա-
ցաւ։ Իսկ ոչ դադարէին տիւթացիք նետս հրավառս և
ջահս բորբոքեալս շուրջ զաշտարակաբն ձգել, զի մի իջ-
խեսցեն մակեդրոցիք մատչել անդր և զՀրդեհն շիջու-
ցանել։ Խազումք 'ի մակեդրոցւոց անդ 'ի վերայ Թմբլին
մնային չարաչ կորեան 'ի նետից կամ 'ի Հրակիզմանէն.
այլք զինքնակէզ 'ի ծով դիմեցին. և 'ի լողել նոցա՝ տիւ-
թացիք քարամբք և սուսար բրօք Հարեալ խեղդէին զոմ-
զուկս նոցա, քանզի կենդանւոյն կամչին ունել զնոսա,
և անփախուստս գերէին զնոսա։ Իսկ այլք 'ի քաղաքէն
շուրջ եկեալ նաւակօք զԹմբլոյն, զբիցս խլէին և զմե-
քենայսն Հնձիգ առնէին։

Իսկ Ալէքսանդր, Թեպետ և ամ խորհուրդք նորա
վեր 'ի վայր Հարեալ կործանեցան, ոչ լքաւ. և ոչ 'ի չա-
բեաց անտի և 'ի տուժիցն վհատեցաւ։ Իսկ գարձեալ
յաւելին գործաւորք 'ի ձիգն. և զաւերք Թմբլոյն նորո-
գեալ, կառուցին և կանգնեցին անդրէն մեհեանսյս ան-
հնարին երպտութիք, ընդ որ զարմանային Թշնամիքն։
Ոչ ինքն Թագաւորն մերձ կացեալ առ ամենեսին,
զՀնարս ազգի ազգի արուեստիցն ցուցանէր, և անձամբ
իւրով և Հարտարամտութիք առաւել քան զվաստակա-
ւորսն 'ի յաջողութիք գործոյն նպաստս լինէր։ Իսկ իբրև
աւարտեր գործածն, և Հուսպ 'ի պարիսպսն մատչէր,
յարեաւ յանկարծ մըրիկ սաստիկ, և զալիսն ուժգին 'ի
Թումբն մեեալ ելոյծ զնմ պահանգս. և ընդ քարա-
կոյտս ջուրն ընդմեեալ, եհերձ զոյն ընդ մէջ. և 'ի
քարանցն փլուզանել, և երկիրն որ 'ի նոսա կառուս-
ցեալ էր՝ սուզանալ 'ի խորս։

Ա՛նդ Ալէքսանդրի միայն մարթէր էլենել ձեռնհասի
'ի գործոյն, ուր և նա երկմտեաց, և խորհէր լուծանել
զպաշարումն։ Ա՛յլ ամ՝ քանզի սպառնացեալ և երբ-
դեալ էր կործանել զՏիւրոս, որում Ալէքսանդր
յանպէտս արբանեակըն, անյողդողդ կալաւ զնա, և ըզ-
վարանս նորա և զերկիւղ փարատեցոյց, և քաջալերեաց
զբացոյց զնա և զզօրս նորա։ Ընդ որպէս այն ինչ Հան-
դէպ քաղաքին Հասեալ, մնռացեալ զնմ վաստակն՝

որ ընդունայն եղեն, վերստին ձեռն ի գործ արարին՝ լիր արկանել ի ծովն անպարտասելի։ Այլ Տրդատ զքաջսնդր գիտաց՝ զի ոչ զթումբն կանգնել և ոչ նաւատձել զքաղաքն մարթեր, ցորչափ տիւրացիք զծովն ունէին. և խորհեցաւ ժողովել ի Սիդն զկայ միաց նաւատորմին։ Իսկ Թագաւորք Արտպ և Խոսրով[1]. իբրև լուան զի էառն զքաղաքս նոցա Տրդատ, ի պարսկական նաւատորմէն հատուածեալ՝ եկին առ նա նաւօք իւրեանց և սիգնացուց, միահամուռ ուժգնաւն նաւք։ Ել ինչ յառաջեալ և հանդացիք, նաւս տանն պատերազմիկս հասուցին առ նա. և ի Յողեայ և ի Տալեայ հասին նաւք երեք, և ի Լիկիայ տան, և ի Տահէդոնիոյ յիսնամէն մի նաւ։ Յր յետ սակաւ միոյ Թագաւորք Կիլղոսի լուեալ զգեհկումն պարսկաճուէ զօրացն առ Տաճաւ, և թէ Տրդատ զփիւնիկէ կալաւ, հասին և նորա նաւօք առելի քան զՀարիւր և քսան՝ գումարել ընդ նմա։

Որ՝ն գեա նաւատորմիցն և մնքենայք կազմէին, Տրդատ առեալ ընդ իւր հեծելազունդս և զթիկնապահն՝ դիմեաց ի Լ թրանաներն, որ է լեառն Ս.Քրաբիա։ Ս.Ղ վտանգ մեծ յասպատակելն անդր եհաս նմա վասն ծերունւոյ վարժապետին՝ որ ընդ նմա կամեցաւ գնալ. և էր նա Լ իւսիմաքոս, այն որ աշակերտին իւրում անուն կոչեաց Ս.քրիզէս, և իւր՝ փիղիքս[2]։ Յր իբրև ի ստորոտ լերինն հասին, Թագաւորն իջեալ ի բիւրաւէն՝ հետի ընդ զառ ի վերն ելանէր. և զբքն յաւելցին հեռացան յոյժ, և օրն ընդ երեկս կարճատեր։ Իսկ նորա ոչ կամեցեալ Թողուլ միայնակ զվարժապետն ծեր և զժուարաքայլ, միաց հեռի ի սակաւաձեռն զօրացն, և արամբք ոմանբք գիշերագնաց մնաց առ Թշնամին լինէր, որոց մարթեր ամբոխիւն մեծաւ հասանել հարկանել զնա։ Ս.Ղ բաղդ և արիւթի, անմեկինք ի նմանէ, զերծուցին զնա անվտանգ։ Յր հասեալ գհետ զօրացն, միջամուխ եղև յաշխարհն, և կալաւ գյամ քաղաքս, գկես բռնի զայլ դաշամբք. և յաւուրն մատաճառորդք դարձաւ ի Սիդն, և եգիտ անդ զՂեքեսանդր որդի Պողեմոկրատեայ, որ չորեքհազար զօրս ի Պեղոպոնեսոյ յոյնս ածէր նմա։

Յր էր նաւատորմիցն կազմ. և առեալ ընդ իւր Թիւնաւապահ ի զօրացն, և Հակատ յարդարեալ նաւարկեաց

1 Որ են տալտ և փիղիկէ։ փելեայ, տրգե յոյգ է։
2 Ջի էր փիղիս տաճիսաւ Ա-

ի Տիւրոս ի կռիւ։ Այլ երբ ինքն ի ծայր աջոյ Թևին՝ որ ի խորս ծովուն ընդարձակէր. և առ նմա եկին Թագաւորք կիսլացւոց, և փլունկեցւոցն. և ի ձախում կրատեր կայր զօրավար։ Տիւրացիք պատրաստեալ ի մարտ զառաջինն, ապա իբրև գիտացին զմիաբանել զօրացն բազմաց, և տեսին զմեծ սպառազինութիւնն, զի զտեղի առեալ Թագաւորն՝ ինայր ձախոյ Թևին, ամրացուցին զնաւատորմն ի նաւահանգիստ՝ պահ կալեալ ի մուտսն։ Այլ իբրև ոչ որ ուրեք երևեր, յառաջ մատեաւ Թագաւորն ի քաղաք անդր. և տեսեալ զնաւահանգիստն՝ որ հայեր ի Սիդոն՝ զի անառիկ եր վասն նեղ և անձուկ մտից, և բազմաթիւ նաւաց՝ որ զառաջն ի ծով դարձուցեալ պատսպարէին, ընկղզղ զերիս ի նոցանէ՝ որ առ դուրսն կային, և դարձաւ եկն նաւատորմաւն մերձ ի Թումբն, և արկ խարիսխս առ ծովեզերքն ի նաւակայս իւր։

Ինչ դէռ այս իրք գործէին, յառաջէր գործ հողալոցն. և ընկենուին գործաւորք մայրիս մեծամեծս ոստովքն հանդերձ ի ծովն, և քարինս ստուարս ի վերայ նոցա, և ի վերայ քարանցն այլ ծառս, և կաւ փսխաւնակ շաղախոյ, և գարձեալ ծառ և քարինս, որք ի մի զանգեալ ձուլէին։ Այլ լայն քան զառաջինն զԹումբս զայս գործեցին, զի մի յաշտարակն՝ որ ի միջոցին կային՝ հասցեն նեաք ի նաւաց, որ զէզերքն Թմբոյն կացցեն։ Այլ գարձեալ տիւրացիք զմա՛ փոյթ ի մէջ առեալ՝ ձգնէին խափանել զգործն. և առաւել լուղղոգքն վնասակար լինէին, որք անտես ի Թշնամեաց ընդ խորս ծովուն մատուցեալ անդր՝ զոստս ծառոյն կարթիւն ըզգցուեալսն արտաքս, և ձգեալ զնոսա ուժգին հանդերձ քարամբքն և հողով, փլուզանէին զԹումբն. և գործն յերկարձգեր։ Այլ յետոյ ապա գործաւորացն երը կայմամուտ Թի յադԹանակեաց, և գործածն յանկ եղ և կատարեցաւ։ Այդ ի վերայ Թմբոյն կազմածս ազգի ազգի մեքենայից կանգնեցին, խոյս պարսպամարտս և նետակալս և քարաձիգս և հրընկէցս։

Այլ Ալէքսանդր զՆդրոմաքոս նաւատորմաւն կիպրացւոց յղեաց, բանակել կալ առ նաւահանգստին՝ որ հայեր ի Սիդոն. և զնաւատորմ փլունկեցւոցն առաջի նաւահանգստին՝ որ էր յայն կոյս Թմբոյն ի կողմն Նդիպատոսի, առ ծովեզերքն՝ ուր զխորսն իւր հարեալ էր. և պատրաստեր դիմել յամ կողմանց ի քաղաքն։ Այլ սիւրացիք կազմեցան ի խիստ զիմամարտ. և կանգնեցին ի

կողմն Թմբին աշտարակ՝ի վերայ բարձրաբերձ և ստուա-
րակարկառ պարսպացն , որ ՝ի մեծամեծ քարանց կրա-
մած կառուցեալ էր : Այս ընդ այլ տեղիս հատորս մե-
ծամեծս վկայ առ ստորոտով պարսպին խափան արկեալ
էր՝ զի լոկի անմատոյց : Օ վհմին զայնոսիկ ջանացան մա-
կեդոնացիք ՝ի բաց առնուլ, և գժուարին յոյժ եղև նո-
ցա . զի ոչ էբրև ՝ի ցամաքի յանկայուն նաւսն մարթէր
գործել . և դարձեալ զի տիւրացիք յարկածաճուկ նա-
ւօք եկեալ՝ խզէին զպարանս խարսխի նաւաց նոցա , մին-
չև ստիպել Ալեքսանդրի յարկել ըստ օրինակի նոցայոցն
նաւս բազումս երեսնաթիս , և կարգել զնոսա կողմնա-
կի առ խարսխօքն , զի ժատչել անդր թշնամիքն մի կա-
րասցեն : Այլ լուղղդացն անտեսաբար մատուցեալ
կտրէին զպարանն . և հարկ եղև շղթայս ընդ այնոցիկ
փոխանակել : Այսպա զբարինսն պարանաւ ՝ի բաց ձգեալ
մեքենայիւք , յանդունդս ծովուն գլխէին , ուստի ոչ ևս
խափան առնէին նոցա : Այս ՝ի ստորոտե պարսպացն
զնոչ և զնուէ բարձեալ, ապա անխափան գնասն անդր
մատուցին . և յայմ կուսէ ՝ի քաղաքն յարձակեցան
ընդ ծով և ընդ ցամաք :

Այլոյ մակեդոնացիք նաւս քառաթիս պատերազմիկս
զոյգ զոյգ պնդեցին ընդ միմեանս , կից յառաջն, իսկ ՝ի
խելն անջատ՝ ոչ յոյժ անջրպետեալ զի գերանք ՝ի մի-
ջին կացցեն . և խելաց ՝ի խելս հեծանս հաստատեալ,
արարին տախտակամած ՝ի կայս զօրացն : Այս նոքունքք
կաղմեալ նաւօքն՝ Թի վարեալ, երթային ՝ի քաղաքն . և
էբրև ՝ի պատնիշաց՝ յառաջից նաւացն պատսպարեալ,
նետս ՝ի վերամաքոս պարսպացն արձակէին : Այս ՝ի մէջ
գիշերի պատեցին զքաղաքն , և յայմ կողմանց ՝ի վերայ
յարձակեցան : Իսկ էբրև տիւրացիքն այոյսք ձեռնթափ
կային , յանկարծ ամպք Թղեայորդ զերկինս պատեալ՝
և գնսեմ գիշերոյն զաղօտ նշոյլսն բարձին , և ծովիս յու-
զեալ զայրանայր տակաւ , և ՝ի մրրկայոյզ ուժգնին հող-
մոյն ալեկոծէր : Այս ՝ի բուռն յերեսաս բաղխել
նաւացն , պարանքն յօդակապք նոցա ընդ միմեանս՝
կէսք լուծան կէսք խզեցան . և ընդ տախտակամածս
հասակորձան աշագին գղորդմամբ ամբոխ մարդկանն
անկան : Օ ի չմարթէր ՝ի ստահակ մրրկին վարել զոյգս
նաւացն կողոդեալս . և նաւացն զօրականին և զօրականն
նաւագին խափան լինէր , և որում՝ հնազանդելն անկ էր՝
հրամայեր , որպես յաշախ յայսպիսի արկածսն պատա-
հէ . զի երկիւղն և խռով վեր ՝ի վայր հարեալ աղմկէր

զնմ: Ա.ՀԼ անվհատելի Հգաց Թիւալաքայն տեղի ետ ծով. որոց իբր զունի յալեացն Թափեալ զաւազմախոր-տան նաւն ածին ի ծովեզր:

Ի ժամնակին յայնմիկ հասին ի Տիւրոս հրեշտակք ի Կարքեդոնէ երեսուն այր, ոչ ինչ օգնութիւն ածեալ՝ որովհետև յուսով մեծաւ պաշարեալքն ձնային, այլ աղերս և պատասխանիս բերեալ մատուցանելիս՝ Թէ ցահ կալք քեզոնացւոց զի օգնել չկարեն. զի ոչ ևս զաշխարհական լուծենիւ՝ այլ ի վերայ բնիկ աշխարհին հասաներ նոցա մարտնչել[1]: Կանգն սիրակուացեալք ընդ քնար Ափրիկէ ասպատակեալ ծանր ամբոխիւ, մերձ ի պարիսպս Կարքեդոնի նստեալ բնակէին. Տիւրացիք ի մեծ յուսոյն վերպեալ, ոչ ինչ վհատեցան. այլ նախահղգ զգուշութիւն զկնայեան և զմանկունս մեծաւ մասամբ ի Կարքեդոն առաքեցին, զի ի մահ ինքեանք խիզախեսցին աներկիւղ, յամրլի կացուցեալ՝ որ գան զնմ ինչ սիրելի էին նոցա:

Դիոդ. ԺԳ. 226:

Եւ էր ի Տիւրոս պատկեր Ապողնի պղնձի հակայաձև, որ երբեմն ի Սիկիլիայն էր ի Գեղա քաղաք. և չորեքարիւր երկոտասան ամաւ նախ քան զԾն՝ բարձին զայն անտի կարքեդոնացիք, և քաղաքին տիւրացւոց նուիրեցին՝ որպէս մեր Կարքեդոնի. և տիւրացիք կանգնեցին զայն ի քաղաքին, և անդ պաշտեր: Եւ մինչ դեռ քաղաքն պաշարեալ կայր, տեսիլ ետես ի քաղաքացւոյն ումն՝ զի հրաժարեր ի նոցանէ Ապողն երթալ առ Ալէքսանդր: Եւ փութացեալ կապեցին զանդրկին ոսկի շղթայիւ ի բագինն Հերակլեայ, զի մի աստուածն փախիցէ: Կանգն խորհէր անհնայ ազգն՝ Թէ ի կապանսն աստուածն ըմբռնիցի, և ի Հերակլեայ՝ որ քաղաքին վերակացուն էր՝ արգելուցու անհնաստատ: Ջեւ ինձ՝ որպիսի կարծիս զդիցն կարծէին հեթանոսք: Եւ կնոք խրատ ետուն նորոգել զմարգաձեն տարեւոր զոհն՝ որ ի բազում ժամնակաց խափանեալ էր, յայսատաւնդ մանկտուց զենուլ զմին կռնոյ: Կարքեդոն զամպարիշտ սովորոյթն զայն ի նահապետաց ազգին կալեալ, պահեաց մինչև ի կործանումն իւր. և եթէ ոչ ծերակոյտն՝ որ զառաջին իշխանութիւնն ունէր ի Տիւրոս՝ հակառակ կայր, ունայնութեն պաշտօնն խծական չարչարեր կարգաց բնութեն:

Տիւրացիք չահն մնատլուտ նեղութեն՝ խորհուրդ

[1] Ուրեք յառաջեսմ մոգենին ի չեզո հարեբոնացոյն առաջս:

կալան հասանել հարկանել զնաւատորին կիպրացւոց, որ խարխս արկեալ կայր ի կողին Աիդոնի ։ Այլ պատեհ գտեալ, մինչ այսր և անդր նաւաստեքն ցրուեալ էին, և Աղեքսանդր մեկնեալ էր ի խորան իւր առ ծովեզերբն, խաղային զմիջաւուրբ երեքտասան պատերազմիկ նաւօք, ի ընտրելսվք զօրօք՝ որ էին կիրթք ի նաւակռիւ, և Թի վարեալ՝ հասին ի վերայ նաւաց Թշնամեաց, զի էին կնքք Թափուր, և յայլսն խառն ի խուռն խռնջայալ խուժէին Թշնամիք. և ընկղմէին զումանս ի նոցանէ, և զազումս ի ծանծաղս խրեցին ։ Այլ մեծ ևս վտանգ ի վերայ կայր, եթէ ոչ Աղեքսանդր ի լսել զչշուկ խլրտելոյ տիւթացւոց՝ անդր նաւատորմիւն յանկարծակի հասեալ ընկրկէր զնոսա յետս ի նաւահանգիստն, ընկղմեալ զոմանս ի նաւաց նոցա ։

Այսպա զմիքենայս ի գործ արկեալ՝ աստակացոյց զՀարուած քաղաքին յիմ կողմանց. և տիւթացիքն ի ներքսւտ ոչ լինչ նուազ դիմամարտէին. որք ի հարկեցուցող վտանգին յաւելեալ ի հրահանգս մարտի և ի խրախոյս, հնարս նորանորս հանապազ Ճարտարէին ի պահ քաղաքին և ի վանել զԹշնամիս ։ Այլ զձգմունս բաղստրացն ի գերև առնէին, զկէսս ի նետիցն խորտակեալ հոլովմամբ անուոց, զայլն ի բաց դարձուցեալ. և ըզԹափ վիմաց ձգելոց բեկանէին, պատառս Թոյլս առաք գաստաձև պարզեալ տեղի տալի քարանցն ։ Այլ ի խուճապեցուցանել զնաւս՝ որ ի պարիսպն մատչէին, խրոցս և Ճանկս և մանգաղս և կարԹս երկաԹիս ի գերանս և ի ցից հաստատեալ, և լարեալ յաղեղնաձև մեքենայսն փոխանակ նետից զտուաւր ձոյլն՝ յանկարծ ի Թշնամիսն արձակէին, և զկէսս ծանրուԹիւն ընկձեալ Ճնշէին, զայլս Ճանկիւքն և մանգաղօք պատառէին, և խորտակումն իսկ նաւացն գործէին ։ Այլ զաւազ ի հուր ջեռուցեալ՝ յասպարս պղնձիս ատրաշէկս ընուին, և ի բարձանց պարսպացն ի վերայ Թշնամեացն հոսեին. և առաւել քան զնմ՝ հնարս՝ այն զմահեդոնացիսն զարհուրեցուցանէր ։ Ի ընդ կարաւանդս զրահիցն աւազն հրացեալ հասեալ ի մարմինն, և մինչև յոսկերս Թափանցեալ կուռէր անջինջ. մինչև զօրացն զէնքունկեց լեալ, գնորձս պատառեալ, անյոյս ձեռնԹափ առաջի հարուածոց Թշնամեացն կային ։

Այս ապա Աղեքսանդր վասն ուժգին դիմակալութեանն վարանեալ, ուշի մտօք խորհեցաւ զպաշարումն լուծանել և անցանել Աղիպիտոս. զի որ զննաւս զԱսիա երագ

աչխարհակալեաց, անդ ձախողակի կառչեր, և զպատեհ կարևորացն խորհրդոց կորուսանէր ի նուաձել զմի զայն քաղաք։ Այլ այլազգ և՝ զի աղարտեր զՀամշեան, որով առաւել քան զինուքն յաղթէր, եթէ զԵիւրոս անկուն զհետ իւր Թողոյր ի նշանակ դիմամարտելի զօրուն Թեան իւրոյ։ Այսպա խորհուրդ կալաւ գործել զյետին ձիգն, յորով և քան զառաջինն ամբոխիւ նաւաց և ընտրիւք զօրօք։ Այլ ի խիստ նաւամարտի տիւրացիք հզօրապես մարտուցեալ, ապա իբրև ճանրացաւ ձեռն Թշնամեացն՝ կասեցին ամ նաւատորմաւն ի քաղաքն։ Ո՞չ հետ եղև Թագաւորն, այլ ոչ կարաց ի նաւահանգիստն մտանել՝ վանեալ ի նէտից ի բարձանց պարսպացն. բայց զբա զումն ի նաւաց նոցա գերեաց և ընկղդզ։ Այլ զաւուրս երկուս արծարծեալ զզօրսն յաչխատութիւն, ապա միա համուռ զամ զնաւատորսին հանդերձ մեքենայիւքն խա ղացոյց։ Խիստ և այս երկուստեք մղեցաւ մարտ. և ի յա ձախել վտանգին՝ յաւելոյր արիւնհեղ. և ի հզօրագոյն պատճառաց երկոքին և կողմանք գրգռեալ, առիւծա բար յիրերաս յարձակէին։ Այլ իբրև ի հարուածոց խոյոցն խրամատք ի պարիսպն գործեցան, կամուրջս ի խրամատսն արկեալ՝ նախ Այծաթասպարքն արիաբար գրոհեցին, և առաջնորդեր նոցա Այգիտ՝ մի ի քաջաց սպայիցն, որ ի խրախուսելն զզօրս՝ հարեալ աշտեիւ անկաւ։ Այայց ի տեսիլ Թագաւորին, և առաւել և օ րինակաւն քաջալերելին զօրքն. զի և նա ի մի յաշտա րակացն մարտկոցաց ի բարձր յոյժ, յորպիսի ինչ վտանգ երբեք ուրեք չէր խիզախեալ. քանզի շքօղն և ձևոնն աքքունի և ի փարթամ սպառազինութիւնն ծանուցեալ, նշանակ նետից Թշնամեացն արձանացեալ կայր, և ա րուսիթիս զարմանալիս անտի գործէր, զառաջս ի վերա մարտից պարսպացն տիգաշար սպանեալ. և հուպ և մատուցեալ՝ զվէս ի նոցանէ ի ծով, զվէս ի քաղաքն սուսերաւն և ասպարաս հարեալ ԹօԹափէր. զի աշտա րակն, ուստի մարթնչէին, ոչ ինչ քան զպարիսպն խո նարհագոյն էր։ Այս ապա լաստիք՝ հանդերձ ամ աւա գանուամբ անցեալ անդր, կալաւ զերկուս յաշտարակացն և զմիջակայր երկուցն։ Այս իբրև խրամատք յաձախե ցին ի խիտ հարուածոց խոյոցն, և ի նաւատորմէն նե ղեր նաւահանգիստն, և կէսք յաշտարակացն Թափուր ի զօրաց՝ մատնեցան ի ձեռս մակեդոնացոց, տիւրա ցիք անպատսպար դիմեցին ընդ ամբոցն Այգեոպայ, և անդ զտեղի կալան։ Այմ անդր հասեալ Այքեքսանդր

Թիկնապահ գնդաւն՝ զկէս սպան, զայլսն հալածեաց. և ընդ կողմն նաւահանգստին տիրեալ մակեդոնացիք, ի նեղըս չյամ քաղաքն խուժէին, և ոչ ումեք խնայէին վասն երկարաձիգ յամառ դիմակալութեն նոցա և չա բեացն՝ զոր ընդ ամենս ի մակեդոնացւոց արարեալ էին. զի ի գառնալ նոցա ի Միդոն, գերի կալեալ զնոսա՝ Յանդիման ամ բանակին փողոտեցին, և զդիակունսն ընդ պարիսպն ի վայր հռսեցին։

Չամ կուսէ յաձախեաց ի վերայ տիւրացւոց տագնապ. կէսք ի մեհենս ի դիմն ապաստանեցան, այլք ի տունս իւրեանց քան զսխերիմ սուրն կանխեալ զիւրովքն երթային, և կէսք յանգուգն ի թշնամին յարձակեցան՝ թանկագնի զկեանսն վաճառել։ Այս քաղուածք ի տանիս ելեալ, վէմս և որ ինչ առ ձեռն գայր՝ հռսէին ի թշնամիս ի մռնաւէնն նոցա ի քաղաքն։ Պատուեր ետ Թագաւորն՝ զամ բնակիչս քաղաքին սրակոխ առնել, բաց ի մեհենս ապաստանելոցն, և զանինսն քաղաքն հուբը դառնել։ Այլ թէպէտ և զպատուէրն զայն ի ձայն փողոյ հռչակեցոյց, ոչ ոք զէնրնակեց լեալ փախեաւ ի բագին. այլ աղջկամբք և մանկտւով լի էին մեհենք, այնքիւք՝ որ ի քաղաքին ինայեալ էին։ Իսկ ծերք առ դուրս տանցն կացեալ, ժամ ի ժամ ինային բազմախողխող երկաթոյն մնելգին զօրաքանացն։

Այլ սիդոնացիք, որ էին ի բանակին Ալէքսանդրի, շատ զոք ի նոցանէ ապրեցուցին. քանզի խառն ի խուռն ընդ յաղթողն ի քաղաքն մտեալ, և զգուեթ հայրենակցութենէն ընդ տիւրացիս յիշեալ, զի և զՏիւրոս և զԱՀ դոն Ալէքսոր զերկոսեանն չինեաց, զազգսն ի նոցանէ գերծուցեալ գաղտ ի նաւս իւրեանց՝ տարան ի Միդոն։ Այս զանխուսլ մարդասիրութեն ապրեցան ի սրոյ յաղթականին արք աւելի քան զՏնդետասան հազար։ Իսկ զկոտորելոցն նախնիք մեծ՝ ոչ է հարկ ասել. զի ի պատառս միայն քաղաքին գտան վեց հազար դիակունք անկեալ։ Այլ չէ ևս սրտմտութեն Թագաւորին յագեցաւ. այլ յաւել տեսիլ իմն՝ աղետաւոր և յաչս յաղթողացն։ Ո ի զապրեալսն վասն պատասելոյ մակեդոնականն գնդին ի կոտորած, գերկու հազար այր, ի խաչ հրամայեաց հանել առ ծովեզերբն։ Իսկ զՏրեչտակս կարգեդնացւոց, որ ի մայրաքաղաքն իւրեանց եկեալ էին՝ մատուցանել Հերակլի զՏայրենի սովորութեն տա բևորական զոհ, եթող ազատս։ Այս զամ գերին ընկիկ

ԱՄԱՀՆՔ և եկ, զերեսուն հազար այր, վաչառեաց ։ Ա.ՀԼ մահե-
դնացաւց տոյժք սակաւ եղեն ։

367ա. 332 Ա.Ե մատոյց զոհ Հերակլեայ Պղեքսանդր, և ամ սպա-
ռազին զօրօքն և նաւատորմաւն հռչակաւ զպաշտա-
մունն կատարեալ, և ըմբռնամարտս ՚ի պատիւ դիցն ՚ի
մեհենի անդ Հանդիսեաց ։ Լսի զպատկերն Պղտղոմի,
զորմէ ասացաքն, ազատեցոյց՝ լուծեալ զշղթայսն, և ա-
նունն կոչեաց նմա Պղեքսանդրեասեր ։ Ա.Ե Թէ ախորժէ
ոք լսել Տիմեայ, յայնմ հետէ Հելլենք զայն Հանդէս
պաշտաման կարգեալ կատարելին աստուածոյն, որպէս
նովաւ զՏիւրոս նուաճեալ. զի յորում աւուր բարձին
զպատկերն զայն կարքեդոնացիք ՚ի Կադեայ, ՚ի նմին ա-
ւուր և ՚ի ժամու առաւ Տիւրոս ։ Ա.ՀԼ զեօթն ամիս պա-
շարումն տեւեաց, և ՚ի վերջ կոյս սեպտեմբերի եղև ա-
ռումն քաղաքին ։

Ա.Ե կատարեցան սպառնալիքն ոմն ՚ի վերայ Տիւրոսի,
զոր խօսեցաւ մարգարէիւքն ։ Ցաքուբդոնոսոր նախ
պաշարեաց և էառ զայն. և ապա Պղեքսանդր կատա-
րեաց զպատառնալսին աւերածոյնք զոր ահա վերագրեցի ։
Ա.յսքիկ երևելի իրք են ՚ի վէպս. և վասն զի գիրք նա-
խապատում մանր զհանդամանս սոցա գրոշմեն, այսր ՚ի
մի վայր ժողովեցից՝ որ ինչ զՏիւրոսի ասեն, զգանձուց
նորա և զզօրութէն և զհպարտութենէ և զամպարշտու-
թենէ, և զնճաստաստ պատժոց պատուհասին՝ որով-
խորհրտումն նորա և ամ չարութէի պատուհասեցաւ, և
զայլ ինն ազգ վերստին վհռութենէն ։ Ի խռան արտաք-
նոյն հեթանոսական վիպաց ՚ի խոր մռռացման այ, զի
առասել ինչ մի ասիցեմ, ուր ուրեք գիրք ՚ի մէջ եկեալ՝
զնճաստւկ խորհուրդսն այ յայտնեն ՚ի վերայ թագաւո-
րութէց և պետութէց, և խրատեն՝ որով մնոք պարտ է
զմեծամեծաց և զզարմանալեաց մարդկան իրաց խորհել,
Թուխմ ոչի առեալ սփոփել ։ Ա.ՀԼ մինչ չև ևս զմարգա-
րեական բանսն ածեալ եմ, զմեծապանծ քաղաքին կարձ
՚ի կարձոյ եդից զպատմութէնն՝ առ ՚ի քաջ խելամտութէ
գուշակութեանցն ։

3752. 252 Օ Տիւրոս սիդոնացիք կառուցին երկերիւր և քառա-
Յե. դասմ. սուն ամաւ նախ քան զՀինուած տաճարին երուսաղէ-
նախ. ը. ֆ. մացւոց ։ վասն այնորիկ դուստր Աիդոնի ՚ զնա կոչէ Ա.-
սայի ։ այլ ոչ բազում ինչ ժամանակք անցին, և գերէ ՚ի
վերոյ եղև քան զմայրն մեծութէնք և զօրութէ և գանձիւք ։

1 Հատ. ը. երես 345 ։

Եւ պաշարեալ ի Աղմահասարայ, և միայնակ ամ- ԱՄԱՀ.ՆԻ
նատարմին՝ ասորեստանեօքն և փիւնիկեցւոցն զդէմ 3285 · 719
կալեալ, յաւել ի հպարտութիւնն։ անդ. թ.ֆէ։

Եւ ի ժամանակի յորժամ Լուծաղ թագաւորէր 3432 · 572
անդ, եկեալ Ալեքսանդրոսորայ, և երեքտասան ամ անդ. ժ.ֆ։
նստեալ զնովաւ, ապա էառ զայն։ Լայց տիբացիք ա-
ձապարեալ ժողովեալ զինչս և զստացուածս իւրեանց՝
մեկնեցան ի կղզի մի մօտաւոր, և անդ կառուցին քա-
ղաք նոր. իսկ նախնին եղև աւերակ ի գիւղ մի, և կո-
չեր Հին Տիւրոս։

Եւ մեծացաւ նորա և զօրացաւ յոյժ. և մինչ դեռ
յայնմ մեծութեան և ի զօրութեան էր, եկն պաշարեաց և
էառ զայն Աղեքսանդր։ Եւ անտի սկիզբն է եօթանա-
սուն ամաց լքմանն Տիւրոսի, զոր ասէն Լասայի։ Եւ
թէպէտ վերստին ի սուղ ժամանակի հաստատեցաւ,
քանզի սիդոնացիք՝ որք ընդ զօրսն Աղեքսանդրի մտին
ի քաղաքն՝ ապրեցուցին ի նաւս իւրեանց հնգետասան
հազար այր ի տիւրացւոցն, որոց ապա դարձեալ ան-
դրէն՝ վաճառաշահիւ և անխնդ ջանիւք զկործանումն
հայրենեացն կանգնեցին, դարձեալ զի և կանանկն և
մանկտին՝ որ ի կարքեդոն ամրացեալ էին՝ փութով ի
հայրենիսն դարձան, այլ Տիւրոս յայնժամ ի կղզի մի
սահմանէր, և շահավաճառ նորա՝ ընդ մօտաւոր քա-
ղաքս. և ոչ էս ծովապետէր։ Եւ ի գալ Նաբոգոնեայ
յետ ութ ամի նաւատորմիւս մեծաւ և ի պա-
շարել զնա, ոչ գոյր զօրութիւն տիւրացւոց՝ զդէմ ունելոյ
նմա ընդ ծով։ Եւ յերկրորդումն յայնմ պաշարման
դարձեալ ի ծառայութիւն անկեալ Տիւրոս նահանգաւ,
և ձգներ պայծառանալ, այլ ի վեցն անդ յամենց ժա-
մանակս բազումս ըստ յառաջ տեսութեն Լասայեայ։ Եւ
իբրև լցաւ ժամանակ նորա, ապա անդրէն յառաջինս
փառն համայն և ի չարիսն դարձաւ. մինչև ապա ի
հաւատս աւետարանին եկն, և եղև սուրբ և բարեպաշտ։
Օ այսոսիկ և գիրք ըստ մասին նշանակեն, որպէս արդ
տեսցի։

Նախ քան զգերութիւն Հրէից ի Բաբելոն՝ Տիւրոս եզեկ.ԻԶ.ԼԶ.
ընդ վաղեմի մեծապայծառ քաղաքս փառաւորեր, ծո-
վապետեալ ձարտարութեամբ և դիպող տեղեաւ, և զսի-
եղերայս վաճառաշահ յինքն ձգեալ։ Ի ծագայ Լրա-
բիոյ և ի Պարսից և ի Հնդկաց մինչ ի հեռաւոր ա-
րևմուտս, և ի Սիւրացւոց և ի հիւսիսական կողմանց
մինչև Ադրիատից և Ադեմոնիա և յաշխարհս հա-

ւոյ ՝ամ աղգք մեծուքի և փառս և զօրուքիւ յաւելուին նմա ։ Այլ ոչ միայն իրա՝ որ զմարդկան կենցաղ հաստատուն ունկին , այլ և որ ինչ չքնաղ և ցանկալի և մեծագործ և մեծագին ինչ էին և սպասք փափկութեան և պերճանաց և զգեստից ։

Այրկայն ժամանակաւն յաջողութեամբն խրոխտացաւ Տիւրոս , և մայր քաղաքաց զանձն հպարտացեալ կոչէր, և գեղապանծ լինէր՝ թէ ես զարգարեցի զիս ՚ի զարդ գեղոյ լմոյ , և յառգնօղն իւր ամբարհաւաձեր , և ՚ի վաձառականն՝ զի թագաւորաց նախանձելիք էին , և դաշնակիցք նմա և հնազանդեալ ՝ամ իշխանք ծովեզերեայց , և յաղխամաղխէ վաձառաց նորա մեծանային ՝ամ թագաւորք երկրի , և զարհուրելին ՚ի նմանէ աղգք։ Այլ ՚ի վերայ ՝ամ անօրէնութեան և յոյժ ամպարշտեաց , և ոչ ինայեաց յաղգ նորա , և ոանհար եղև ՚ի վերայ Այրուսաղեմի և անգոանէր . Ա՛ՀՀ վա՜յ, զի բեկաւ կոբեաւ . առ իս գարձոյին աղգքն որովհետև լին աւերեցյաւ ։ Այլ ոչ միայն զգերութիւն Հրեից արգել ՀԱյգոմ, և չյիշեաց զուխտ իւր , և վաձառեաց զորդիսն Այրուսաղեմի որգւոցն Յունաց , և մանեաց զնոսա ՚ի ձեռս խստից Թշնամեացն , այլ և զարծաթն ՚ան և զոսկին առ, և զընտիր ընտիրսն և զգեղեցիկ անօթն տարաւ ՚ի մեՅ֊Ե֊ Հեռաս իւր ։ Ա՛ամ այնորիկ վաղվաղակի տագնապաւ
Ա՛ա֊Ե֊ ընկալաւ զՀատուցումն ՚ի գլուխ իւր . և ՚ի վերայ չորից ամպարշտութեցն , զի յուսացաւ ՚ի զօրութիւն իւր և յիւր մաստութիւն և ՚ի գանձս և ՚ի դաշնակիցս , ոչ գարձաւ ՚ի նմանէ ա՛ՀՀ. և ած ՚ի վերայ նորա զԱպաւսբորդմասոր արքայ բաբելացւոց ՚ի հիւսիսոյ զարքայ արքայից՝ կառաւք և երիվարօք գումարագունդ հեծելօք ազգաց բազմաց յոյժ , որպես ելանէ ծով ալեօք իւրովք . և զպարիսպ նորա և զաշտարակս կործանեաց , և աւար էառ զզօրութիւն նորա , և կողոպտեաց զինչս նորա , և զգանկալի ապարանս նորա տապալեաց . և Հուր եկեր զՀիմունս նորա , և սատակեցան բնակիչք նորա և բարձան ։ Այ՛ ՚ի յանկարծ կործանմանէն նորա զարհուրեցան աղգք , յայտնապէս ՚ա զօրութեն երևեալ , զի ինքն ուղղէ զիրս մարդկան , և զաւգուս Հզօրաց նորօք խոնարՀէ ։

Այայց Տիւրոս կանգնեալ ՚ի կործանմանէն , չյիշեաց

զպատուհասն, և ոչ զանօրէնութիւնն ած զմտաւ՝ որովք պատուհասեցաւն. այլ դարձեալ հպարտացաւ սիրտ նո-
ցա ընդ փառս իւր, բնակեալ ի մէջս ծովու վաճառա-
շահ ազգաց, որ զայնպիսի հատուածսն գՀոյակապուհս
գաղթեալ բնակեցոյց, և վաճառականաք նորա համբա-
ւս և գանձիւք և փառօք ոչ ինչ ի վայր էին քան
զԹագաւորս և քան զիշխանս երկրի, և որպէս զձուկ
կուլեն այ բնակեր ի սիրտ ծովու, և ի ծագաց ժամա-
նակաց ի յաւիտենից զՀաս նահինս իւր իջուցեալ, և
յանմահութիւն զանձն ձակատագրեր։ Վասն զի հպարտ-
տուեցեր և ագահութեաւն զերդնութիւն արբեցեալ, չիրա-
տեցաւ առաքնով պատուհասիւն՝ զոր յաքքայէն բաբե-
լացւոց ընկալաւ, և խուճապեալ յիմ զօրութենացն
արևելից՝ դեռ ևս ի մտոի զօրութիւն իւր յուսայր,
սպառնացաւ նմա ած դարձեալ յետ ամաց իբրև ջրեք-
արիւրոց ածել յարևմտից պատուհաս, և կորուստ Ես. ի։
յերկրէն կիտացւոց ի Ալեքսանդրէ, ի փոքուէ և յան- ՄՈՒԻ։
նշան աշխարհէ, որ փոքր մի յառաջ արհամարհն էր
և ոչ գոյր կասած երկիւղն ի նմանէ։ Վասն ի բազմութեաւն
իմոյ ասելեաւն իւրոյ բարձրացաւ սիրտ Տիւրոսի. և չի-
նեալ ամուրս իւր, և գանձեալ զարծաթ իբրև զՀող, և
զոսկի իբրև զկաւ հանապարհաց, և յեցեալ ի պարա-
կայն պետութեաւն, ոչ ինչ խրթին ի նորոց թշնամեացն՝
որ ի միջերկրեայս բնակէին անզօր անարծաթ անձնան,
և նաւահանգիստ ուրեք ի ծովեզերս ոչ գոյր նոցա, և
ոչ նաւաստականն գմուտք էին, և ոչ երկրախուռճ զօ-
րօքն կարօղք ընդ ծով մարտնչել. և յանկասածի կայր՝
պատռպարեալ բարձրաբերձ աշտարակօքն և մարգարձա-
նօք, և որպէս խրամով և պատնիշօք չրջապատեալ ի
ծովէ։ Ա.ՀԼ Ալեքսանդր լիր արկեալ ի կիրձն՝ որ առ
Քատեր ընդ նա և ընդ ցամաքն, կորոյս զամրութեաւն նո-
ցա, և կործանեաց զնախապարիսպն՝ զորով ծուխն կրկնա-
պատեր։

Վասն անկեալ Տիւրոս ի փառաց, և աղաչին եղեալ
դէմ յոյն, և ստրուկ ազատն, և զպահն ձախութեաւն և
զկամարն մերկացեալ, լքաւ ամն եօթանասունն ի նուաստ
դերութեաւնէ. զի տէր զօրութեաց խորհեցաւ քակել զնմ
ամբարտաւանութեաւն փառաւորացս, և անարգել զնմ
պատուականն ի վերայ երեսաց երկրի։ Վեկաւ ընդ նմա
և վաճառաշահ ազգաց, և նմ բնակիչք կղզեաց տըրտ-
մեցան ի վերայ նորա՝ զի կորեաւ մեծութիւն նոցա և ոչ
ևս իցէ յաւիտեան։

Լբ. ապա ՚ի հաւատս ապառնալեացն ՚այ, զի ՚ամ խոր-հուրդք մարդկան և զօրութիւնք չկարեն կալ առաջի նորա, և ոչ խափանել զծածասցս պատուհաս Տիրոջն Հայաստ. եւ զեղծուածս, զ[1]Աբիլեան ՚ի ներքս ածէ Լասայի՝, այր կօր-ծանմանին խրատել պարտ էր Տիւրոսի՝ ՚Օձ էր Լաա-բիլեան, ուր ՚Աերբոլը հիմնարկեաց զԼագաւորութիւնն, վաղեմի և բազմամարդ քան զամ քաղաքս, և հասարա-կաց և իւրաքանչիւրոց հոյակապ շինուածովք զարդա-րեալ, և մայրաքաղաք նախնոյ պետութեան ՚ի վերայ երբ կրի, և իշխեցող տիեզերաց՝ որ գրեթէ ՚ի դատերաց ևեթ իւրոց բնակեալ էր ՚ի գաղթելոցն յիւրմէ։ Ապա՛ն և այն աւերեալ է, ասէ մարգարէն, և այն և տէրութիւնն նորա. և մահարձանքն և աշտարակք կանգնեալ առ անմոռոգ ամրութիւն, և հոյակապ ապարանքն յանմահ յիշատակ կանգնողացն, այն ամ ՚ի խորհուրդս ՚այ էին արօտք ՚ի ձարակ գրաստուց պատրաստեալ, և շինուածքն յաձիւն յաւերակ կամ ՚ի հիւղս։

Լբ. յառաջ ածեալ զամանն՝ ասէ. արդ անկաւ կոր-ծանեցաւ պարիսպ նորա. և Տիւրոս բազմապատիկ խո-նարհ քան զնա, յուսայցէ՞ թէ անցցեն սպառնալիք ներ, և մինչև ՚ի սպառ զօրասցի ձեռն իւր ՚ի վերայ ծովու, և հանապազ գայցեն նմա նաւք ՚ի կարքեդոնայ։

Լբ.[2] լքեալ ամն եօթանասնից՝ փոխանակ զի բարեօքն զեղծաւ, ապա յետ ամացն եօթանասնից անչքնութիւնն՝ դարձեալ խնդրեաց երևել, որպէս կին մի պառնիկ՝ որ հրապուրանօքն և արուեստիւք կախարդէ զերիտասարդս և զեղծուցանէ. և դաւով և նենգաւ և պատրանօք յինքն դարձոյց զնաձառաջաւ, և յածեալ ընդ տիեզերս՝ ած կուտեաց յամ աշխարհս՝ որ ինչ լքեալ և ցանկա-

[1] Եթէ յերկիրն քաղդէացւոց գնացեալ, սակայն և այն աւե-րեալ է յաստբեամանեայց, և անդ դուզ և գաւազ քեզ ոչ գտանիցէ։ Ասրկ զՏիին նորա Սիւիմ, կանգ-նեաց զմահարձանս նորա, և յա-րոյց զաշտարակս նորա. արդ ան-կաւ կործանեցաւ պարիսպ նորա։ Ապրացիք նաւք կարքեդոնացւոց, զի կոտեաւ ամրութիւն ձեր։ Եսայ. իգ։

[2] Եւ եղեցի յաւուր յայնմիկ լքեալ լեցի Տիւրոս ամ եօթա-նասուն. . . և յետ ամացն եօթա-նասնից՝ եղեցի Տիւրոս իբրև երգ պոռնկի միջ։ Ա՛ռ քնար, յա-ծեաց, կոծեաց, լքեալ քաղաք պոռնկութեան. քաջ հար, յաձա-խեա երգել, զի քո յիշատակ ծաւայե։ Եւ եղեցի յետ ամացն եօթանասնից, այց պատաճ տէր Տիւրոսի. և միւսանգամ անդրէն յառաքին կարգն հաստատեսցի. և եղեցի ՚ի նմա վաճառս ՚ամ թա-գաւորաց տիեզերաց ընդ ՚ամ ե-րեսս երկրի։ Եւ եղեցի վարձ վա-ճառի նորա ՚ան նուիրեալ. ոչ ան-ձանց ինչ ժողովեսցին՝ այլ ընա-կեցցին առաքի ՚ան եղեցին ՚ամ վա-ճառք նորա, ուտել լմնել և ո-րթալ լինել ՚ի նշան յիշատակաց առաքի ՚ան։ Եսայ. իգ. 15։

լին էր, առ ի զօշտել զազգս ի սպասս զեղխութեան և պերձութեան, և ի մերժել ի նոցանէ զպարզ և զանպա-ճոյճ զխոհեմացն բարս։ Կուն գործեալ նորոգեաց զգա-շինսն ըմբ ազգս, և անդրէն զառաջինն վաճառակիցսն լինչքն էարկ, և ելից զիսափանած շահուն զեօթանասունն ամացն՝ երագ դարձիւն առատութե. և որչափ այլ ա-րար նմա տեր ի յաջողութե և ի փառս, նա գործեալ ի գժպատեհ վաճառաշահն եկն՝ զոր խափանէին կամք ած, յամիռութե ի նմանէ զարբիս՝ որովք զեղծանէրն։ Այսպա ուրեմն եկեալ Տիւրոս ի հաւատս աւետարանին, ոչ ևս եղև ի գայթակղութե, և ոչ ևս զվարձ վաճառի նուիրեր կուոցն, այլ ճշն նուիրեալ ամ վաճառք նորա, և ծառայիչ նորա. և ոչ ևս անձին ժողովեր, այլ իբրև սերմն պարարտ սփռեր ի հաւատացեալսն և յաւետա-բանիչս։

Ի սպառնալ ամ մարգարէիւքն՝ մի և այս խորհուրդ էր, տալ զհաւատի կերպարան շահավաճառութե՝ որ յագահութե ծնեալ և մայր ի գրգռանաց և ունայնութե և եղծագործութե։ Օ ի ձախացեալքն նուաւ ազգք, և իւրաքանչիւր իսկ ոք, երանելի Թուին և նախանձելի, և արժանի ի տիպ նմանութեան վաստակք նոցա և ջան և ճարտարութե։ Այլ խայտառակ զայն ամ իբրև զկին մի պոռնիկ նշաւակ, թափուր յառաքինութենէ և ան-պատկառ, խոտորեցուցող և ապականիչ մանկտոյն, հրապուրօղ ախտից և զգայութե և թշնամի պարկեշ-տութեան և բարւոք փառասիրութե, որ ի բաց մերկա-ցեալ զամ երեսաց և ի նախատինսն յօրանայ։ Այլ ոչ եթէ վաճառականութե առանձինն ինչ էիցէ, որ ի պատշաճն՝ քնաւ արդար և օրինաւոր է, այլ զի եկամուտ ի նա ախտք խանգարեն զկարգն, և զարտու-ղեցուցանեն զնա յուղիղ դիմեցմանէն։ Տիւրոս ի հա-ւատս Քրիստի ածեալ, ուսոյց վաճառականաց զուղիղ շա-հավաճառն, և յոր ինչ զշահն մարթ եր պատշաճ ի կիր արկանել։

ԳՕԴՈՒԱԾ Ի.

Հրբիրդը անգամ նամակներն Վարդևի առ Աղեքսանդր - եւ վասն Աղեքսանդրի երկեալ յԱրուսաղէմ, եւ ճգնաբերել գհամակերպել, եւ վկանիլ գուշակութեան վասն իւր լըճի նմանի, եւ առնել ընծայս ճգամիգս Հրէից եւ պատմագրեալ անկիս առնել. պաշարել զՏապա եւ առնուլ գայն, եւ տապանել յԱրիմաթիա եւ տիրել, եւ զԱղեքսանդրիա հիմնաբիլել. անցանել ի Լիբիա, եւ այլ առնել մեհենիս Յմմեն Աքրամադայ, եւ դուլել իւր հայր պատրաստին, եւ դառնալ անդրեն յԱրիմաթիա։

Պատ. յԱղէք. էջ. 681։ Կորիւն. ջ. Ի. Ագրիան. ք. 101։

Մինչ դեռ Աղեքսանդր նստեալ պաշարեր զՏիւրոս, դարձեալ գիր եհաս ի Վարեհէ, յորում գրեր նմա մեծարանս Թագաւորի, և խոստանայր տալ նմա բիւր քանքար՝ զի դարձուսցէ զտիկնայս, որ ի դիպահող գերեալ կայկն, և զՄատերա զդուստր իւր տալ նմա կնութեան, և զամէ երկիրն մինչև ցԱփրատ՝ որ վաղ իսկ նուաձեալ եր։ Իսկ յամենից զօրացն պանծացեալ, յուշ առնէր նմա զյողդողդել բաղկին, և երկեցուցաներ զնա անցաւ նել ընդ Ափրատ և ընդ Տիգրիս և ընդ Հրապահ և ընդ Հիդասպ՝ ընդ պատնեշս աշխարհին, և զի ոչ միշտ ի գիշերապ և ի կերձն լերանցամէջս մնի պատերազմ, այլ և ի դիւրն՝ ուր փոքու ջոկատիւն ամաչեսցէ երևել։ Իսկ ի խորհուրդն կոչել Աղեքսանդրի, ասաց Պարմենիոն. Արքեն ես եմ՝ յանձն առնուի զայսմանէն։ Իսկ Աղեքսանդր ասէ. Իսկ ես եթէ Պարմենիոն եմ՝ յանձն առնուի։ Իսկ առ Վարեհ պատասխանի ետ՝ Թէ արծաթոյ չեն ինձ պէտք, և անձաւն զինի ինձ խոստանալ, և բաժանիս ընդ իս զերկիրդ կորուսեալ. եթէ դու միայն չգիտիցես՝ ուր է աշխարհդ, գործ մի դիւրին է ուսանել զայն ի ձակատ մարտի. և մի գետովքդ յուսացոյիս զարհուրեցուցանել զիս, որ ընդ անդունդս ծովուց անցի. և յո՛ և փախիցես, հասցէ զՀետ քո Աղեքսանդր։ Օ այն պատասխանի ընկալեալ Վարեհ՝ ոչ ևս յուսացաւ խոսել ի հաշտութեան, այլ դարձեալ կազմեցաւ ի մարտ։

Յովս. պատմ. Նախ. ժա. ը. ԵՒայց Աղեքսանդր չոչ արար ի Տիւրոսէ ի հրհասատան. զնոյն չարիս խորհեր և ընդ երուսաղէմացիսն անցուցանել, և խնդրել զվրէժ։ Վանզի տիւրացիք ի վաճառականութեն հանապազ պատերազմ ոչ գործէին զեր-

կիր. և զրեթէ ամ ցորեան և արմտի ի մերձակայ աշ-
խարհաց գայր նոցա, մանաւանդ ի Կալիլէէ և ի Սա- Գործ. ԺԳ.
մարեա և ի հրեաստանէ։ Լուտի և Ղեքսանդրի, ի 20։
պաշարել զՏիւրոս, հարկ եղև խնդրել պարէնս։ Նա ա-
ռաքեաց սրս՝ խօսել ընդ թնակիչս աչխարհացն, զի նմա
զանդեալ նմա՝ տացեն զպէտս զօրացն։ Որում Հրեայք
եւտուն պատասխանի, զի ուխտ հաւատարմութեան է մեր
ընդ Կարևհի. և այլևւս տեառն, մինչ դեռ կենդանի
է նա, չկարեմք հնազանդել։ Զբնաճղ առաքինութեան,
արժանի միայոյ ձեռապաշտ ազգին զայնու ժամանա-
կաւ։ Լուկ սամարացիք ոչ այսպիսի. այլ կամակար հնա-
զանդեցան Ղեքսանդրի, և ուղի հազար այր յղեցին
յօգնութեան նմա ի Տիւրոս և այլոց։ Նա վասն առա-
ջիկայ իրացս քաջ հասու լինելոյ ընթերցողաց՝ հարկ է
ասել աստ համառօտիւ զսամարացւոցն, և որ ինչ պատ-
ճառք որերիմ թշնամութեան էին նոցա ընդ Հրեայս։

Սամարացիք՝ որպէս յառաջագոյն ասացաք՝ ոչ Ա
բաչխել սերեալ էին, այլ հատուածք յազգացն Հեթանո-
սաց եկեալ յայնմ կուսէ Նփրատայ, զորս Սորգոն
արքայ ասորեստանեայց ած բնակեցոյց ի Սամարիա,
զԹագաւորութեն տասանց ցեղիցն բարձեալ։ Նա ազգքն
այնոքիկ կոչէին քուԹացիք. և զկրօնս ոչ ընդ օտարոտի
կռոցն պաշտամունս խառնեցին, և կալան անհաշտ թշ-
նամութեի ընդ Հրեայս։ Նա յաւելին ի թշնամութեին
չետ դարձի գերութեանն ի Խաբէոնէ, ի ժամանակս
վերստին շինուածոյ տաճարին։ Որում սպրդեալ մտին ի Եզեկ. ԺԷ.
Հրեայս հեթանոսական կրօնքն, յոր և չետ սրբոյ առնն Յովս. գաթ.
Նեեմեայ նորոգելոյ Երուսաղէմ զբրէնս՝ զի մի արաս Նախ.
ցեղ կին պլազգի, և քահանայապետական ցեղն գտաս
պղծեալ. այն՝ որում պարտ էր ամենեին ի միջանա-
կան խառնիցն սուրբ լինել։ Օ ի միում յորդւոցն Յո-
վիդեայ մեծ քահանային, զոր Յովսեպոս Անանաս ա-
նուանէ, եր կին Մանասէ դուստր Սանաբալատայ. և
չետ նորա բազումք զառածեալ էին։ Ակ Եեեմի լեալ
նախանձու վասն անարժան պղծութեն օրինացն, սպառ-
նացաւ՝ որ չայրազգեաց կին ածեալ էին՝ վաղ արձակել
զնոսա, կամ փուԹալ մեկնել չաչխարհէն։ Նա Անա-
սէ օտարուԹիւն չանձն առեալ չէեղող զկին իւր, և
մեկնեցաւ ի Սամարիա։ Օ չետ նորա ելին և բազումք
ի չամառելոց օրինազանցիցն, և պատսպարեցոյց զնոսա

1 ՝ի վեղ սասբեսաձևոյց. Հատ. ա։

անդ Մանասէ առ Աանաբաղատաց անէրոյ իւրոյ՝ որ իշխէրն ի Սամարիա։

Յայց Աանաբաղատ հրամանն առեալ ի Վարեհէ Հարձոզդոյ, որում ի փիւնիկէ երեւի եկեալ յայնժամ վասն պատերազմին Պարսից ընդ եգիպտացիս, կանգնեաց տաճար ի լեառն Վարիզին մերձ ի Սամարիա՝ ըստ նմանութեան երուսաղէմացոց տաճարին, և քահանայապետ ի նմա կացոյց զքեսայ իւր զՄանասէ։ Եւ յայնմ հետէ եղև Սամարիա տեղի ապաւինի ստա հակելոցն ի Հուդայ. վասն այնորիկ յոյժ խեռայինն Հրեայք ընդ սամարացիս. զի ընդդէմ օրինացն, որ յԵրուսաղէմ միայն հրամայէր պաշտօն մատուցանել ոչ, կանգնեցին սեղան և տաճար հակառակ երուսաղէմացւոյն. և զփախուցեալսն յԵրուսաղէմէ ժողովէին զմիաստպարտս, ազատ ի վրէժխնդրութէ օրինաց։

Յորդ այս իրք էին ի հրեաստան։ Յորժամ Պղեքսանդր զՏիւրոս պաշարեաց։ Եւ առաքեցին նմա սամարացիք, որպէս ասացաք, ոչ դոյզն օգնականութիւն. իսկ Հրեայք անիրաւ համարեցան ինաղանդել նմա ցորչափ թագաւորէրն Պարեհ, ընդ որում ուխտ հաւատարմութեան եդեալ էին։ Յայց Պղեքսանդր քանզի մերժողական պատասխանւոյ ոչ եր սովոր, մանաւանդ զի չետ չարդութեան և զՏիւրոս նուաձելոյ ոչ ևս կարծեր թէ իշխեսցէ ոք հակառակել նմա, խորհուրդ կալաւ հասանել ի վերայ անհնազանդիցն, և որպէս զսիւրացիսն՝ խստիւ և զնոսա պատուհասել։ Ի հարկեցուցող վտանգին Յադդոս քահանայապետ, որ վերակացու ի Պարսից կայր ի հրեաստան, ի մտաւուտ ցասմանէ յաղթականին երկուցեալ հանդերձ ժողովրդեամբն, կարգացին առ ած, և պատրաստս աշխարհաւ և զոհս մատուցին։ Եւ ի գիշերին յայնմիկ երևեցաւ ած և հրամայեաց ետ քահանայապետեանն՝ ծաղկափիւռ պատրաստել զհանապազորդն և ըզդրունս քաղաքին բանալ և քահանայապետական զգեստիւք և պայծառագեաց ժողովրդեամբն գնալ ընդ առաջ թագաւորին, և մի երկնչել, զի ես ընդ ձեզ եմ։ Եւ ըստ ամենայնի, որպէս պատուիրեաց տէր, արարին Հրեայքն. և ի վաղիւ անդր ելին մեծաշուք հանդիսիւ արտաքոյ քաղաքին մինչև ի բլուրն՝ որ կոչեր Սափա[1], ուստի ամ արձակ կալայրն և տաճարն և քաղաքն Երուսաղէմ երևէր, և անդ մնային գալստեան թագաւորին։

[1] Սափա չեբրայերէն ի հայ նշանակի դիտանոց։

Իակ ասուածոյն և փիւնիկեցւոց զօրաց ոչ ինչ յերկուաւ ցեալ՝ զի մեծաւ ցասմամբն Թագաւորն պատուհասեսցէ զքահանայապետն յահ և յերկիւղ ամենեցուն, և զի՝ բուսաղէմ կործանեսցէ՝ որպէս զԵիւբոսն կործանեաց, զի ինդուԼԹ մեայնն տրոփել զոսն ի վերայ ԹշնաառուԼԹԵ ազգին՝ ընդ որում օխայինն։ Այս իբրև մերձ եղև Թագաւորն, ընդ առաջ եղեն նմա Հրեայք նովին չքեղ Հանդիսիւն։ Այս իբրև ետես զքահանայապետն, զի զա նուէնն ՚ի գրոյնեաւ ՚ի տախտակ ոսկի՝ կրեր ՚ի խոյրն և ՚ի Ձակատ, պակեաս. և մատուցեալ երկիւղածուԼԹԵ խոնարհէր և երկիր պագանէր մեծի անուանն, և կրօնիւք և մեծարանօք ողջունէր զքահանայապետն։ Այս ՚ամ ժողովն չարՔՒ լեալ զԹագաւորսն, և ձայն բարձեալ մաղԹէին նմա զՀամ յաՋողուԼԹԵ։ Ա՚ՍՀ զղարմանացումն մերձակայիցն չկարեմ ասել. որք ընդ աչս իւրեանց ԼԹերահաւատեին, ապշեալք ընդ տեսիլն՝ որ ընաւ իակ Հակառակ մնաց նոցա եր և չՀաւատալի։ Իակ Պարմենիոն Հիացեալ, ասէ ցԹագաւորն՝ ԼԹե երկրպագեալգ յամ աշխարՀէ ընդէր քահանայապետին Տրեի երկիր պագանես։ Այս Ա՚զեբսանդր ասէ. ՈՀ քահանայապետին երկրպագեմ, այլ նմա՝ զոր պաշտէն. զի մինչ դեռ էի ես ՚ի Պիա քաղաք ՚ի Ա՚ակեդոնիա, և ՚ի մեծ պատերազմին ընդդէմ Պարսից խորհիւ՝ եԼԹ ինրպէս նուաՃիցեմ զ՚ԱՀա, սա ինքն սովին զգեստիւք երեւեալ յանուրջս ինձ, քաջալերեաց զիս՝ անցանել Համարձակ ընդ կիրճ Տլեսպոնտոյ, և մի երկմտել զի ՃծՆ իւր երԹիցէ առաջի իմ և բեկցէ զՀամբար Պարսից։ Այս ասէր՝ ԼԹե ընդ տեսանել զքահանայապետն ծանեայ զնա ՚ի զգեստուցն և ՚ի Հասակէն և ՚ի կերպարանացն և ՚ի դիմաց, որ յառ և նման էին երեւելոյն ՚ի Պիա. և գիտեմ՝ զի ՃծՆ նոքա նա եգ ՚ի սրտի իմում զպատերազմն զայս. և ոչ ևս երկմտեմ՝ զի պարտեցից զՊարեՆ, և զպետութՀն պարսկաց կործանեցից. վասն այսորիկ երկիր պակի ՃՆ ՚ի քահանայապետն։ Այս ապա գերկս արկ զքահանայապետսն և զքահանայիւք, և պարատեալ ՚ի նոցանէ՝ եկն Հրուսաղէմ և եԼ ՚ի տաՃարն, և մատոյց զոՀ ՚ՈՒՆ՝ որպէս ուսոյց նմա քահանայապետն։ ՈՀ և զգուշակուԼԹիւն Պանիէլի ընծայեն եցոյց նմա. զորս այսր Համառօտիւ ածեմ, վասն խելամուտ լինելոյ ընԼԹերցողացդ՝ զի և Հեռաւորքն Հանդերձեալք մերկապարանոց էն առաջի ՃՆ։

Ա՚ՂԴ ծանոյց ՃԾ մարգարէիւն՝ զի նորա է մեծութՀն և իշխանութՀն, և ուր կամի՝ տայ զնա, և քառնայ՝ յոր

րոց գեղջանին նովաս. և իմաստուԹի և զօրուԹի նորա դէպք և պատահարք յամ յաւիտեանս գործին. և ինքն՝ որպէս կամի՝ նորոգէ զերեսս երկրի, կացուցանէ զԹագաւորս և փոփոխէ, և բառնայ զպետուԹիս՝ որպէս հողմ զփոշի ի կալոց, և հետք ոմն երևեսցին [1]։ Այս ա֊հեղ փոփոխմանքն ցուցանէ՝ զի ամ բնակիչք երկրի իբրև զոչինչ համարեալ են նմա, և ինքն է բարձրեալ, և տէրուԹի նորա աղգաց յազգս, և ըստ կամաց իւրոց առնէ յերկինս և յերկրի, և չիք որ ընդդէմ դառնայցէ ձեռն նորա։ Այմին իբր զվերմապետական առեալ զուարԹնոցն [2] եռես մարգարէն կարգեալ հսկող և վե֊րատեսուչ պետուԹեց և Թագաւորաց, ի դիտել եԹէ երբ պէս վարիցին զիշխանուԹիս՝ յոր կացուցանէ զնոսա ամ պաշտօ֊նեայս իւր։ Այլ եԹէ զեղծիցին իշխանքն, զուարԹուն հոգիքն՝ վրէժխնդիրք փառաց ամ իւրեանց՝ բողոքեն առ նա [3] ածել պատուհաս անիրաւացն և ապաշնորհաց, քակել զամբարտաւանուԹիս նոցա, ընկենուլ զնոսա յանդունդ, և զարհամարհն ի մարդկանէ յարուցանել ի տեղի նոցա։

Դան. է։ Այգ ողոգայն էա աթոռ զկարևոր ձմարտուԹեամն՝ տես֊լեամբ յորից գազանացն, որ ելանէին ի ծովէ ի բաղ֊խել յորից հողմոց զծուին. որոյք օրինակի զսկիզբն գնա֊բադիր և զիշատաչած յորից յաղԹ պետուԹեցն, որ հան֊դերձեալ էին տիրել ցՀետ միմեանց ընդ տիեզերս։ Այհա զին էր տեսիլն, այլ ձնչդատախ։ Օ ի ծնան աղիւզք և դղորդմանքք պետուԹիքն այն, եԹէպ արեամբք և դիա֊կամբք, բռնուԹիք և անգԹուԹիք վարեցին զիշխանու֊Թիւն, և պարծանս քաջուԹիւ վարկան ի սփռել զահ և զաւեր ընդ ամ երկիր. սակայն ամ ձգամբք իւրեանց ոչ զերծան ի հանապազորդ արկածից և յանգնկալ խուճապմանց։ Այանուն ապա դրօշմ մարգարէն զնա֊գաթիր իւրաքանչիւրոց պետուԹեցն։ Օ զաբելմացւոցն օրինակեալ ի մատակ առիւծ Թևաւոր, և զՊարսից և զՄարաց յարք զիշխանաձ, ապա զՀոնացն միահեծան

1 ԻմաստուԹի և հանճար և զօ֊րուԹիւ նի է, և նա փոխէ զժամա֊նակս և զժամս, կացուցանէ զԹա֊գաւորս և փոխէ։ ... Դու ես, աբբայ, աբբայից աբբայ՝ որում ձեռ երկնից ԹագաւորուԹ հղօր և պա֊տուական էա։ ... Ամենեցուն ... և երեն իբրև զփոշի կալոյ ամբարայ֊նոյ, և առ զնե սատկուն հողմոյ, և տեղի ոչ գտանէր նոցա։ Դան. ը. 20-35։

2 Մ երկնքեցամբ զուարԹնոյ է բանս, և պատգամ սրբոյ է հարցուածս. զի ծանիցեն կենդա֊նիք՝ եԹէ տիրէ բարձրեալն Թա֊գաւորուԹեան մարդկան, և ում կամի՝ տացէ զնա. և զարշամարճն ի մարդկանէ յարուցանել ի վէ֊րայ նորա։ ը. 14։

3 Դատաստանս նորա հաւաքեցա֊ցին՝ ասացէ զնա. և զարշամարճն ի մարդկանէ յարուցանել ի վե֊րայ նորա։ ը. 14։

պետութիւն տալաւորագոյն գրոշմ՝ ի յորեքգլխի և ի քա-
ռաթև ինձ խայտաբղետ օրինակեալ զԱղեքսանդր[1],
յորում չար ընդ բարւոյ կցուրդեր, և էր ինքն փոյթ և
սաստիկ ի խորհուրդս, երագ յաչխարհակալել, որպես
հաւ թէթեւ սլացեալ յորս՝ քան թէ ծանուռ բանակաւ և
ազնիւ մարտի ընդ երկիր գնացեալ, նպաստիւք քաջու-
թեան և ձարտարութեամբ զորագլխացն՝ յորոց չորք զօրաւ-
վիցն եղեալ նմա յաչխարհակալութիւն, ապա յիւրեանս
զպետութիւնն նորա բաժանեցան։

Ա. Նահապետիս յայս և այլ ինչ տիպս յաւելու այլուր ասք. ժե։
մարգարէն. զի զկարգ յաջորդութեամբ թագաւորացն Պարսից իշխուցեալ, զհետ երից առաջնոցն Կիւրոսի և Կամբիսեայ և Վարեհի՝ յայտատպատում առնէ զյաւնիսն յորորդին, իսա զԱլեքսէս, և զվճանալ նորա գանձիւք և զօրութիւք քան զամենեսեան՝ որ նախ քան զնա թագաւորեցին, և զի հասեալ ի ծայր մեծութեան և զօրացեալ՝ ժողովեսցէ ամբոխ զօրաց բազմաց ի լայնատարած տերութենէն իւրմէ, և յաչխարհն ելլադացւոց արշաւեսցէ[2]։ Յակ անդ զկայ առեալ մարգարէին, և զելս խաղացման մեծի ամբոխին լուեալ, յայտնապէս տայ ի-մանալ՝ զի Վ Ալեքսէս մեղկն և անզօր և ապիկարն ոչ ինչ ի մեծամեծ խորհրդոցն վճարեսցէ։ Ա յլ ի նոցունց չհաւնաց, յորս ընդունայն արշաւեսցէն Պարսք, յարիւ-
ցէ թագաւոր անհանգոյն Վ Ալեքսեայ, Վ զԱղեքսանդր[3] մեծն՝ հզօր և արի, որ յաջողեսցէ առնել զամ կամս իւր, և տարածեսցէ յաչխարհ հեռի զտերութիւն իւր, և աւերածովք ազգաց նուաճելոց կանգնեսցէ իւր պետութիւն՝ որում ոչ ոք ընդդէմ կարասցէ կալ։ Ա յլ ի կարճել զանձն յամրի անկասկած, կորուսցէ ընդ կենաց զհզօր պետութիւնն, և ոչ պայազատ կայցէ նմա։ Ա՛ւ միա-
հեծան նորոգ պետութիւնն ոչ ինչ յերկարեալ ի շուք և ի զօրութիւն՝ յոր Վ զԱղեքսանդրիսն ամբարձաւ, բաժանեա-
ցին ի չորս հողմս երկնից. և ի բաժինն անտի ոչ միայն չորք մեծամեծ պետութիւնք՝ եզիպտացւոցն և Ասորւոց և

1 Ես տես այլ գազան երրորդ երիցս ի վերայ Թագաւորութեացն Յունաց։
զինն, և չորք թևք թռչնոյ ի վերայ նորա, և չորք գլուխք գազանին, և իշխանութիւն տուաւ նմա։ Է. 6։

3 Եւ յարիցէ թագաւոր հզօր, և տիրեսցէ տերութեամբ բազմաւ, և արասցէ ըստ կամս իւր. և երբեք յարիցէ, թագաւորութիւնն նորա փշրեսցի և բաժանեսցի ի չորս հողմս երկնից, և ոչ ըստ ետերութեան նորա, և ոչ ըստ տիրելոցն նորա։

2 Ահա երիք թագաւորք յարիցեն յերկրիդ Պարսից, և չորրորդն մեծասցի մեծութեամբ քան զամենեսեան. և յետ զօրանալոյ նորա ի մեծութեան իւրում յա-

փոքուն Աբիոյ և մահեդռացւոցն՝ կացցեն, այլ և բա-
զումք յօտարաց և ի խուժական ազգաց գաւառս ի
նմանէ հատեալ՝ կանգնեսցեն ուրոյն պետութիւս։

Դան. ը։ Եւ ապա մարգարէն որպէս պայծառագոյն երանեալ
նկարագրեալ՝ բովանդակէ զտիպս պատկերին, զպատե-
բազմունս, զտակաւ յառաջխաղացութիւն և զվերևէջ եր-
կուց նախանձորդ պետութեացն։ Որպիսական խոյին, ո-
րոյ մի յեղջերացն բարձր էր քան զմիւսն, գուշակէ զա-
ռաջնումն՝ ի պետութեանցն՝ զի ի Պարսից և ի Մարաց
կացցէ, և ի միաբանութիւն երկուց ազգացն հաստատեա-
լի զօրութիւն նորա, սակայն պարսիկն քան զՄարն ի վեր
ելցէ. զի քաղաք ի քաղաքէ ընդարձակեսցէ զաշխարհա-
կալութիւն իւր, նախ ընդ արևմուտս դիմեալ և զԼիւդա-
ցիսն նուաճեալ և զգաւառս փոքուն Ասիոյ և զՀելա-
կիա, և ապա դարձցի ընդ հիւսիսի, և ընկձեսցէ զԿիս
ի Հայաստանեայս և զազգս քնակեալս մերձ ի ծովն Կաս-
պից. ապա տարածեալ ընդ հարաւ՝ ընդ Լծով արկցէ
զԱրկաստոս և զԱբարիա. այլ ընդ արևելս մի իշխեսցէ։
Ապա անկեղեղ քօխուն զմիահեծան պետութիւն Յու-
նաց ցուցանէ. զի տեսանէր զմահեդռացւոց զօրացն
խաղալ յարևմտից ի վերայ պարսկացւոյն պետութեան,
և զզօրագլուխն նոցա լը զօրութեանն և փառաւոր. և ձանա-
պարհ մեծ հատանել նոցա, և անդ ի բնին իւրում
զՀնամին խնդրել. և զԹեթևա ընդ երեսս երկրի սահե-
ցուսին բանակին նոցա, զի և յերկիր ոչ մերձենայր. և
զօրհասական հարուածոն՝ զոր աճէրն, և զյաղթութիւնն՝
զոր ի ձակատս բազումս կանգնելոց էր, և զի կործանելոց
էր զՊարսիցն և զՄարաց միապետութիւն՝ զամբոխն և
զանօգնական յամենեցունց ի մերձակայից և ի նէրա-
կից ազգաց։ Այլ ի բուն ծայր մեծութեանն ամբառ-
նալ նորա, բարձցի Արքեսանդր՝ զօրութեանն նորա մեծ, և
ընդ չորս կողմանս երկրի բաժանեալին կացցէ միապե-
տութիւնք Յունաց չորք մեծամեծք, այլ ոչ ինչ հանգոյն
այնմ՝ զոր կանգնեացն Արքեսանդր։

Օ ինչ քան զայսպիսի պայծառ և ձշգրիտ և մանրա-
պատում գուշակութիւնս առաւել զարմանալի կայցէ, որ
և զանորդի զանժառանգ մահ Թագաւորին պատմեն, և
զաժանել տերութեանն նորա՝ ի չորեսին զօրավարսն։ Այլ
զընագիրն իսկ ածից, որ ունի այսպէս.

"Յամին երրորդի Թագաւորութեան Խաղտասարայ ար-
քայի, ես Դանիէլ էի ի Շ օշ յապարանն, որ է յեր-
կիրն Ելամայ, և կայի ի վերայ Ուբալայ։ Ամբարձի

զաչս իմ և տեսի, և ահա խոյ մի կայր հանդիպակաց Ուբալայ, և եղջիւրք նորա բարձունք, և մին բարձրագոյն էր քան զմիւսն, և որ բարձրն էր՝ յետոյ ելանէր։ Զխոսա նեի զխոյն՝ զի ոգորէր ընդ ծով և ընդ հիւսիսի և ընդ հարաւ, և ամ գազանք ոչ կային առաջի նորա, և չէր որ ապրէր ի ձեռաց նորա. և առնէր ըստ կամայ իւրոց, և մեծանայր, և ես միտ դնէի։ Եւ ահա քօշ մի այծեաց գայր յարևմտից ընդ երեսս երկրի, և չէրկիր ոչ մերձենայր. և քօշն եղջիւր մի էր ի միջ աչաց նորա. և եհաս մինչև ի խոյն եղջերաւորն, զոր տեսանէի զի կայր հանդիպակաց Ուբալայ, և յարձակեցաւ ի վերայ նորա զօրութեամբ ուժոյ իւրոյ, և տեսանէի զնա հասեալ մինչև ցխոյն։ Ողբացաւ և եհար զխոյն, և խորտակեաց զերկուսին զեղջիւրսն նորա, և ոչ գոյր զօրութիւն խոյին՝ ուշնել զդէմ նորա. արկ զնա չերկիր, և ոտիւք իւրոյ կոխան արար զնա, և ոչ ոք էր՝ որ ազատիցէ զխոյն ի ձեռաց քօշին։ Եւ քօշն այծեաց մեծացաւ մեծութիւն յոյժ. և ի զօրանալ նորա՝ խորտակեցաւ եղջիւր նորա մեծ, և ելին այլ չորք եղջիւրք ի ներքոյ նորա ընդ չորս հողմս երկնից»։

Պարտ էր բազում ինչ ի բանս մարգարէութեանցս նկատել, այլ յուշիմ և ի բարեպաշտ միտս ընթերցողաց թողեալ զնա, զայս մի ինչ հարևանցի՝ որպէս ոչն էր պարտ՝ յիշեցուցանելով։ Ողի չէք ինչ ընդ տիեզերս առանց հրամանացն ՅՀ գործեալ, որ ինքնիշխանաբար վարէ զպետութիւնս և զազգս և զիւրաքանչիւր ոք, այլ զարուեստս իմաստութիւնք իւրոյ և զշքաշս խնամակալութիւնն քոզարկէ քնական պատճառօք և դիպող պատահարօք։ Որ ինչ արտաքոյս վեպք պատմին, զպաշարել և զառնուլ քաղաքաց, զյաղթութիւնս և զպարտութիւնս, զկանգնել և զկործանել պետութեց, խորհրդով մարդկան թուին գործեցեալ և դիպաց արգասիք, իբր թէ ձեռն ոճն չիցէ ի նոսա, և կարծիցի իսկ Յողայուցեալ ՅՀ զազգս և զիւրաքանչիւր ոք՝ գործել նոցա զամ ըստ մտի իւրեանց և ըստ հանճարոյ և ըստ ցանկութեանց, և միայն թերևս զշրեական ազգին փոյթ ունել նմա զժողովրդեան իւրոյ և զժառանգութեանն։ Այլ ամ առ ի մերժել զթիւր և զամպարիշտ կարծիսն՝ ընդ ժամանակս ժամանակս լուծանել զլուծութիւն, և փարատել զամպս՝ որովք ծածկի, և ի տեսիլ ածէ զարուեստս տեսչութեան իւրոյ, նախապատմեալ մարգարէիւքն ի հեռաստանէ՝ որ ինչ ի վերոյ ազգաց երկրի պատրաստեալ է։ Որպէս Դանիէլի

եղոյզ զկարդ և զյաջորդութիւն և զայլ և այլ նկարագիրս յորից պետութեցն, ընդ որովք հանդերձեալ էր գնամ ազգս արկանել. զբաբելացւոցն, զՊարսից և զՀայոց, զՀնդկաց և զՀռոմոյ։

Ամին իրի և վերկուց մեծաց աշխարհակալացն՝ զԱլիքրոսի և զՔսէրքսանդրէ՝ երկարապատում ասաց, գՏիմն արկուէն և զկործանողէ յաղթ պետութենէն։ Ո կիւրոս՝ երկերիւր ամաւ յառաջ քան զգալ Նորա՝ յանուանէ կռ էր. և զյաղթութիւնս նորա և որ ինչ դեպք և պատահարք եղեն ի նուաճելն զԱբաբելոն, որպիսի ինչ էր լեալ ի սկզբանէ, ի ձեռն Հասայեայ մտաւդիւ պատմէ։ Յս ասա զՔսէրքսանդրէ ի ձեռն Դանիելի նկարագրէ տպաւք և դրոշմիւք՝ որ նմա միայն պատկանին, յայտնագոյն գնա ծանուցեալ՝ որպէս յառաջանի գնա կռչելով։

Յայս բանիւք ածախօսք անհասեմք, գանձք ցանկալիք, բանալի են մեզ յիմաստս ծածուկ խորհրդոցն այ ի վաթել զաշխարհ։ Ի նշոյլ Ճառագայթիւց սուտ զգօն և բաթպաշտ միտք և գնահատգոյն խորս նկատէն, և որովք գլորից մեծամեծ պետութեցն ասացեալ է՝ զԱլիւրոսէ զՔսէրքսանդրէ զԱբաելոնի և զՏիւրոսի՝ խրատին նոքիմբք և յայտ դեպս արտաքնոյն վիպաց հայել, և զարմանալ ընդ անամփոփելի ձեռն այ ի վերայ այմ մարդկան և աշխարհաց, որոց բաղդ յիմաստութիւն նորա և յիշխանութիւն և ի կամ հաստատեալ է։

Յս որպէս հաձոյ և զարմանալի եղեն Քսէրքսանդրի պայծառ և մանրապատում և աւետաւոր գուշակութիւնք գնմանէ՝ ոչ հարկ է ասել։ Յայլ նա մինչ դեռ Կիւրուսա զեմ էր, ժողովեալ զՀրեայս՝ հրամայեաց խնդրել որ ինչ կամիցին։ Յս նոքա խնդրեցին կալ յօրէնս հարց իւրեանց, և յեօթնեւորդս ամաց ապահարկ լինել, զի զամն եօթնեւորդ ոչ էր օրէն նոցա սերմանել, և ոչ ժողովելին արդիւնս։ Յս լուաւ նոցա Քսէրքսանդր. այլ և զՀրեայս՝ որ էին ի Բաբելոն և ի Պարս խոստացաւ ազատ առնել ի նոյն օրէնս, քաղցրաւութիւ խոնարհեալ յաղերս քահանայապետին, և եթէ ոք զնուաւրել նմա կամիցի և գնա յիւր օրէնսն և ի սովորութիւնս Հողւոյ։ Ո ասն որոյ բաղուածք զնուաւրեցան նմա։

Յս ընդ ելանել նորա Յերուսաղէմ՝ ընդ առաջ եղեն նմա սամարացիք շքով մեծաւ, հրաւիրել գնա և ի տաձար իւրեանց գալ այց առնել։ Ո ի համարեին աւաւել քան զՀրեայս լսելի լինել, և գնոյն ընդոյն և զմեծամեծմն Հս գտանել ի նմանե, փոխանակ զի միա-

մտեալ հնազանդեցան և ձեռն ևս յօգնականութիւն ետուն նմա ։ Այլ յայս ապաստան՝ հանդիսիւս մեծաւ գային հրաւիրել զնա ի քաղաք իւրեանց ։ և ուր հաբիւր այր սամարացիք, որ էին ընդ զօրս նորա, յաւելին և նոքա յաղագս քաղաքացոյց իւրեանց ։ Պատճառաւ զնացանէ Աղեքսանդր, այլ ասէ ։ Հարկ է ինձ գնալ Այգիպտոս, և ոչ կարեմ դանդաղել ։ այլ ի գառնալ այս բէն, եթէ յայդոցի ինձ, եկից առ ձեզ ։ Այլ խնդրեցին ի նմանէ զթողուլթիւն հարկաց եօթներորդայն ամաց, և եհարց Թագաւորն՝ թէ Հրեայք իցեն ։ նոքա երկիսօս ետուն պատասխանի ։ և Թագաւորին ոչ յամեալ ի քննել զաղերս նոցա, զայն ևս եթող ի ժամանակ դարձի իւրոյ, և երթայր ի Պաղա ։

Այլ Պաղացիք կալմ կային ամրապահօք զօրօք՝ ոչ ընդ Հետիս հրամայէր, մի ի նեքբնեաց Պարեհի ։ Այր քաջ և տիրասէր լեալ ուժգնի պահ կալաւ քաղաքին ընդդէմ Աղեքսանդրի ։ Ընդ ի մտել Այգիպտոս՝ հարկ կէր զբաղաքն զայն նուաձել, զի չգայր այլ ձանապարհ ։ և պաշարեաց զայն Աղեքսանդր, և զամ առ բուեստս մարտի և զսպառազինութիւն և զմարթանս ի կիր արկեալ, յետ երկուց ամանց ձեռնհաս եղև առնել զքաղաքն ։ Այլ վասն յերկար յապաղմանն անդ և զի վէրս կրկին ընկալաւ՝ սրտմտեալ ընդ Հետիս և ընդ ամ զօրսն և ընդ բնակիչս քաղաքին, արար անդթութիւն մեծ՝ որում չմարթի և ոչ իւիք արդարանալ ։ Ի ետ կոտորել ի նոցանէ բիւր մի, և զայլս հանդերձ կանանբք և մանկտւով վաճառել ։ Ոսկ իբրև մատուցաւ զօրավարն՝ որ ի վերջնում յարձակման գերեաւն էր՝ լի գեղ բասանձ վիրօք, փոխանակ գովելոյ զքաջութիւն և զհաստատմանէն նորա, արբեցեալ խնդութենէն՝ որ և ի թշնամին սովոր էր մեծարել զարիւթիւն, ասէ ։ Ո՛ի մեռցիս, այր դու, որ մահու ցանկաս ։ այլ լեր պատրաստ ի կտտանս՝ որ ինչ վրէժխնդրութիւն նորահնարս կազմիցէ ։ Այլ զօրավարն խրոխտագոյն առանց երկիւղի հայեցեալ ընդ Թագաւորն, ոչ ինչ սպառնալեաց բանիցն ետ պատասխանի ։ Ընդ վէհական լռութենէն նորա բարկացեալ Աղեքսանդր, գուեաց և ասէ ։ Ջեսէք զայնդուքն համրութենէն, փոխանակ զի պարտ էր ծունր ածել յաղերս խնամարհել ։ այլ եթէ ոչ ի բարբառ, լռութից ի հեծութենի գյամառ լռութենէն ։ Այլ[1] զբարկութենէ ի

1 Ասա գյասուցն չբլէ ի կատաղութենէ, ի յերկուղ բաղդին զբարն փոխալ ։ Կ ։ Կ--ւթ ։

Դէմ. ԺԷ. 526 ։
Արիան. Բ. 101 ։
Կ--ւթ. Ը. Է ։
Պլուտ. յԱլեք. 629 ։

կատաղութիւն շրջեալ, զի ի նախկին բարուցն բաղդիւն փոխեալ էր, հրամայեաց պարան ընդ կրկունս ոտիցն ծակել անցուցանել, և ի քարշ ածել կառաւք ղքաղաքն մինչև սպանցի։ Որոյ պանծայր Աքիլլեայ նմանել, զոր նախնի իւր կոչէր. զի ընդհանէ Հոմերոս վիպէ զղիւահն Աքտորի զպարսպահան Ցրուագայ ի քարշ արկեալ. և զնախանձէն ընդ չարիս պարծանս վարկաներ։ Նազդոյն երկոքին, այլ առաւել Աղեքսանդր՝ զի ընդ կենդանին անգթացաւ փոխանակ հաւատարմութեան և տիրասէր քաջութեան՝ որով զՀատատացեալնմա զամբոյն պահեաց. որ մանաւանդ զարմանալոյ և վարձուց արժանի էր առ ի թշնամւոյ իսկ, և ոչ անողորմ պատուհասին։

Օ մեծ մանն աւարին՝ զոր էառ ի Պարսս առաքեաց առ Ոլղմպիա մայր իւր, և առ քոյր իւր Կղեոպատրա և առ բարեկամս իւր։ Նոյնպէս դաստիարակին իւրում Լեւնիդեայ պարգեւեաց հինգ հարիւր հրկիզ խոտնկս, և հարիւր՝ զմասոյ, յիշեցուցեալ զիրացան՝ զոր ի տիս մանկութեան իւրում եղեալ էր, և գուշակութեանն ինն նորոյ աշխարհակալութեան համարեր զայն։ Օ ի ի միում աւուր յարքանել նորա խոնկս լիաձեռն ի հուր զոհին, ասէ մանկածուն. Աղեքսանդրէ, յորժամ դինկաբերս նուաձեսցես զաշխարհն՝ յայնժամ շռայլեա զխոնկս, զարդիս ինայեսջիր յոր ունիսդ։ Նմին իրի գրեաց յայնժամ Աղեքսանդր. Ոչգիտեմ քեզ խոնկս և զմուռս առատ. արդ այժմ դադարեա և մի ինայեր, և մի ձչդեր առ դիմն։

Պլուտ. ժէ. 526։ Աւրէլ. Ե. 104։ Պլուտ. յԱ. ձէտ. 679։ Կուրտ. Ը. Ե։

Նչ առեալ զՎաղա՝ նատոյց անդ պահակսպանս, և խաղաց զօրաջն Ալեքսիպատս, և յաւուրն եօթներորդի եհաս ի Պեղուս։ Ոնդր բաղումք յեգիպտացւոց յաքաղաքացն եկեալ էին՝ անձնատուր լինել հնազանդել նմա։ Օ ի վանս կարի ատելութեամն ընդ պարսիկս՝ ոչ ինչ փոյթ ետ նոցա ումբ և հնազանդել, միայն թէ զվնեփ իւրեանց խնդրեսցէ որ ի նոցանէ, և ազատեսցին ինքեանք և կրօնք իւրեանց ի խստութենէն և ի նախատանացն։ Օ ի թէպէտ և մտաբ և նանիր կրօնք իցեն, զի և ոչ նանրագոյն քան զեգիպտացւոցն մարթին, այլ զի հայրենի աւանդք են՝ չիք ազգ որ զնախատինս նոցա առպահաս առնիցէ. այլ առաւել այն քան զնմանէ ցուցանէ և գրդռէ զոգիս։ Ընդ զԱլիս աստուածն նո-

1 Պատրէ օրինակ չարեաքն ի նախանձ։

Ուրար. Ըգլ. Ե. ձէ։

ցա Ալվթոս բաղում արհամարհանօք կրծոխյն և աղգին սպան, և ոստիկանք պարսիկք՝ զբոս ի վերայ աշխարհին կացոյց՝ հանգոյն նմին և նոքա ոտնհար լինելիս նոցա։ Նմին իբրև խեռային ընդ պարսիկս եգիպտացիք. որք և սուղ ինչ յառաջ ի գալ անդր Ալմնտայ Ջոկատիսն, յօժարեցին միաբանել ընդ նմա և ձեռն տալ ի վանել զպարսիկս։

Ետայց եր Ալմնտաս դասալիք հատուածեալ Ալղեքսանդրէ ի Դարեհ, և ի պատերազմին առ Իսոս՝ յոնական գնդին զօրավարեալ, մեկնեցաւ ընդ Տրիպոլիս Ալսորիս չորիւք հազար արամբք. և կալեալ ի նաւսայն՝ որչափ պէտք էին, և զայլսն հրձիգ արարեալ նաւարկեաց ի Ալիպրոս. և անտի անցեալ ի Պեղուս՝ հառ զայն, պատրեալ զքաղաքացիսն իբր թէ կուսակալ ի Դարեհէ գայր Ալղկիպտոս փոխանակ Ասթակեայ, որ սպանեալ առ Իսեաս։ Եւ կալեալ զքաղաքն հզօր, ապա մերկացաւ զխորհուրդս իւր, և կամեր ուժգին առնել զպարսիկն, հաշակ հարեալ՝ եթէ գամ մերժել զպարսիկն։ Եւ բազումք յեգիպտացւոց՝ որ ազատել միայն ի խիստ տերանցն ցանկային, միաբանեցին ընդ նմա։ Եւ դեպ ուղիղ խաղաց ի Ալեմիս ի մերկաբաց զաք աշխարհին. և ի նախկին ձակատս յաղթող լեալ, արգել զպարսիկս ի քաղաքին։ Ալ անզգոյշ լեալ կամ յաղթութենէ՝ եթող զզօրսն այսր անդր յաւար. և ի վերայ միացելոցն եհաս Թշնամին, և հար կոտորեաց, և զինքն զզօրագլուխն ընդ նոսա։

Չարկածիկ ասի ոչ միայն չմեղկեալ եգիպտացիք ի հակառակութենէն ընդ պարսիկս, այլ և առաւել զայրացեալ ընդ մտել Ալղեքսանդրի ի սահմանս նոցա՝ կազմեց և պատրաստ յընդունել զնա եկին ընդ առաջ ամբոխիւ, ձեռն տալ հնազանդել նմա. և մանաւանդ յանկասկածելի ամրութենէ յաղթող քանակին յուսացեալ, որպիսի ոչն եր Ալմնտայ, աներկիւղ համարձակ միաբան նեցին ընդ նմա ամենեքին։ Ալաղէս՝ որ ի Ալեմիս հրամայէին՝ խորհեցաւ զի ընդունայն ձիգն եր դիմակալել հզօր զօրութենէն, և ոչ ձեռն տեառն իւրոյ Դարեհի բառական եր յօգնել նմա, նուաձեցաւ և եթող զդրունս մայրաքաղաքին առաջի յաղթականին, և ետ ի ձեռս նորա զուարճ հարիւր քանքարս և զամ կամ աւելի։ Եւ զամ Եգիպտոս կալաւ Ալղեքսանդր՝ առանց ուրուք ընդդիմանալոյ նմա։

Ի Ալեմիս խորհուրդ կալաւ Ալղեքսանդր գնալ ի Պաս. Ե. Ե։

ԱՄԱՀ. ՆՒ մեհեան Լիմնի Վիա ։ Լաւ էր մեհեանն այն յատաղուտս Լիբիոյ՝ի խորս, երկոտասան աւուրց գնաց հեռի՝ի Մեմփեայ ։ Վասն որդի Աղլի, յետ աշխարհատեր ջրոյն, սկսաւ քանակեցուցանել զԱրգիպտոս և զԼիբիա. և յետ սակաւ ժամանակի՝ի մոռանել կառպատուածն յաշխարհն՝ վերադարձ դից պաշտեցաւ յերկոսին աշխարհին՝ յորս զաւակն նորա քնակէր. և կառուցաւ նմա մեհեան՝ի մէջ անապատին յերկիրն ընդարձակ Լիբիա քառասուն ասպարէզս, ՝ի կղզւոջ իմն՝ի մէջ աւազին ծովուն կացեալ։ Ոնա Հելլէնք Ոիւս անուանակոչեցին, և եգիպտացիք Լիմոն, և ապա յետ ժամանակաց երկուցն՝ի մի կցեալ անուանց՝ կոչեցաւ Վիոս Լիմնի[1]։

Ի բազմամտանգ և՝ի յանդուգն ուղեկցացութիւնն մնափառութեն մնէաց գնաս. քանզի՝ի Հոմերոսի գիրսն և՝ի հինաւանդ յառաապելասպատում մատեանս տեսեալ զդիւցազունսն աստուածորդիս, ցանկայր՝ի պարս նոցա և ինքն խառնիլ, և խորհեր հանդոյն նոցա զմի ոք՝ի դիցն կոչել իւր հայր. և ընտրեաց զԼամմոդ Լամմին, և զքուրմս կաչառեալ՝ ուսոյց նոցա զհնարս իրին՝ի զուր ոք ջանայր շրջել զմիտս նորա՝ի վէս և՝ի խօլասկան խորհրդոյն ։ Վասնզի տնաքացեալ յաղեքսանդիա, ասէ Պլուտարքոս, ՝ի խիստ և յանմեղկելի բարս զառաջեալ էր. որ հրամայեն ևեթ, և չհամբերել խրատուս, և առաւել հակառակաց բանից, որ զարգել և զվտանգս արհամարհէ, և պատշաճ զանհնարինսն վարկանի. և համառօտիւ ասացեալ, ոչ միայն Թհնաւեայ՝ այլ և տեղեաց և ժամանակաց և բնաւ իսկ կարգաց բնութեան հնարի իշխել։ Լաւ այս ամ չարիք՝ի յերկար յաջողութեց յաձախեն, որոյք և կարի սնդակաղմըն տապալին, և՝ի մոռացումն իսկ ածեն զբնութեն՝ թէ են մարդիկ ։ Որպիսի օք աշխարհակալ անաւանի և առ մեօք եկաց ընդ հետս Լեքսանդրի Թևակոխեալ, և անգր և մղեաց զվայրագ քաջութեն՝ յանկասելի միտս պանծացեալ[2]։

3673 . 331 Ի Մեմփեայ էր Լեքքանդր առ գետոնիս մինչ՝ի ծով, և ընդ ծովեզրն խաղացեալ անցեալ զԱնոպաս՝նկատէ զծովափն հանդէպ կղզւոյն Վարոսի պտակաւաւոր՝ի քնակութեն քաղաքի, և տեղագրէ զքաղաքն և զվայրս մեհենից և զհրապարակաց, և զՎիճակրատ Հալտարաս

1 Վասն այսորիկ զԱմմոն Լամմեայ, Յայնժ Դիոդորոս անուանեն, այս (Կաւատամ ՃՈ. 8.) այս ինն ցամ. ինն է տալոյ Դիոդ. (Եգիպ. Ը. 151)
զոր Լամմեի նոյ Քամոյ յեգիպտոս, 2 Կատարեալ ծէ. ասէայ Սենեկայ։

պետ ի վերայ շինուածոյն կացուցանէ զանուանին՝ որ
զԱլեքսեմեայ մեհենին Ալիփեսոս կառոյց զայրեցեալն Ա-
րտեմտաեայ, և զքաղաքն յիւր անուն կոչէ Աղեքսան-
դրիա, որ եղև ապա մայրաքաղաք Թագաւորութեանն։
Ոչ վասն անդորր նաւահանգստեանն, զի աստի միջեր-
կրականն ի նա յանդիման ծովն, և անտի Լեղոս և ծովն
Կարմիր հուպ էր, անդր արևելից և արևմտից վաճառաք
ժողովելիս. և ի սուղ ժամանակի ընդ բարգաւաճազոյն
քաղաքաց Աղեքսանդրիա պայծառացաւ։

Ընտ մինչև ի մեհեան Ամմիի Վիպայ էին ասպա-
րէզք հաղար և վեց հարիւր, քնաւ գրեթէ անապատք
աւազուտք։ Յոր զաւուրս երկու տոկացին զօրքն մինչ
չև ի մեծ յահագին անապատն մտանել. այլ ապա յան-
եղը յանհուն աւազին լի եղեն արշաւօքօ. զի իբրև ի
խորս ծովու փակեալ, ի կշիռ ակն չտեսանէին քնա-
կութիւն, և ոչ ծառս ուրեք. և հետք իսկ հերկոյ ոչ է-
րևէին։ Ոչ ոչ այս միայն, այլ և ջուր սպառեաց ի
ոմիսկ՝ զոր յուղոս բարձեալ բերէին յանջրդի ասա-
ղուտն, և մեռանէին ի ծարաւոյ. և լերինք ևս աւազա-
կոյտք՝ զոր հողմն դիպանէր՝ ծածկէին զնոսա, որով եր-
բեմն հինգ բիւրքն Կամբիւսեայ կորեան։ Ոչ հուր յայմ
կողմանց արձակեր, և օդն տապադոյն դժուարաշունչ,
այլ դէպք ըստ բախտի լեալ կամ ի դիցն ուրեմն տես-
չութենէ՝ որպէս վիպագիրքն ասեն՝ ամպ խիտ ծածկեաց
զարևն, և զօրքն սիրտիեցան՝ այլ չև ևս բուժեալք ի
ծարաւոյ։ Այս ամպրոպք ի տարափ լուծան, և ելից
իւրաքանչիւր զոիկ ջրոյն և արբին, և կէսք պապակեալք
բերտնաբացեալ ի վեր կային յանձրևն։ Ըստգամիտ
ընթերցողացն Թողլի է խորհել զարժանն զհրաշից, ո-
րովք պատմագրացն հաձոյ Թուեցաւ սեթևեթել ըզ-
վէպսն։

Օ աւուրս բազումս ընդ անապատն գնացեալ, մերձ
ի պատգամատեղն տեսին հրաման ագռաւուց՝ զի գնա-
իագնաց գրօշիւքն Թևասպարեին, մերթ յերկիր իջեալ
գադարեալ՝ ի յամել բանակին, և մերթ յառաջեալ
իբրև կարապետք զօրացն, մինչև հասին ի մեհեանն։
Որ զարմանալի իմն յընդարձակ անապատին ի Թանձր
մայրեաց ծածկեր, ընդ որս և նշոյլք ձառագայթից ա-
րեգականն խափանէին, և աղբիւրք բազումք բարեհամք
զանտառն ոռոգանէին՝ դալարագեղ զմայրին պահեալ։
Վերձ անդր և այլ իմն անտառ ասէն Թէ եր, և ի միջն
նորա աղբիւր՝ արեգականն կոչեցեալ. և ջուր նորա էր

գաղջ առաւօտուց, և՛ ի հասարակ աւուր ցուրտ, և սկսեալ ընդ երեկս ջերմանայր՝ մինչև՛ ի մէջ գիշերի եռալ, և ապա ըստ մերձել տունջեան եղկանայր, յար՛ ի փոփոխմունսն՛ ի նոյն օրինս կացեալ։

Այսպէս դիտելոյն զայս՛ ի դից քանդակագործք կամ որպէս պատկերագործքն նկարեն՝ նոյնպիսի ինչ էր և՛ ի մեհենի անդ պաշտեցեալ պատկերն, այլ՛ ի զմբխտոյ և՛ ի գոհար ականց կռեալ նոսթազադէմ մինչև ցմկնջն՝։ Իբրև մատեաւ Թագաւորն՛ ի մեհեան անդր, քրմապետն իբրև՛ ի դիցն կոչեաց զնա որդի Աքրամազդայ. և Թագաւորն խնդութիւ ընկալաւ՛ ի հայր իւր զաստուածն։ Ապա եհարց՝ Թէ ելիւ պատրաստեալ նմա՛ ի հօրէն իւրմէ Աբրամազդայ տիրել աշխարհն. և քրմապետն փառասիրութիւ Թագաւորին սպաս արարեալ, զուշակեաց միահեծան ունել նմա զտիեզերս։ Հարց դարձեալ Թագաւորն՝ Թէ սպանողք հօր իւրոյ ետուն ամենեքին ըզվրէժ. և քրմապետն սաստեաց և ասէ. Հայհոյես, անմահ է հայր քո. այլ սպանողք փիլիպպեայ լուծին ամենեքին զվրէժ։ Իակ դու մխտայաղի լեալ, և ընդ դիմի դասեցեալ։ Իբ՛ի կատարել զոհին՝ նուիրեաց Թագաւորն հարուստ ընծայս դիցն. և զբուրմունն ոչ աբար անտես, զի բարւոք սպասաւորելոյն նմա։

Իբ՛ ամբարհաւաճեալ՛ ի դիցախառն ազգ իւր, և՛ ի վեր քան զչափ և զպայման բնութիւ մարդկան ձգտեալ, դառնայր գայր յաղթանակաւ զձանապարհն։ Իբ՛ յայնմ հետ ամ ուրեք՛ ի նամականին, ի հրավարտակս և՛ ի դատակնիքս այսպէս վերնագրեր։ Աքրամազդայ Իմպեայ հօր որդի Աքեքսանդր արքայ։ Օ՞ր Աղիմպիայ մօր նորա տուղ և հանճարեղ բանիւ կշտամբեալ, ասաց նմա՛ ի ձեռն հրեշտակի. Պատարեա և մի գրգռեր զիս ընդ Հերայ։ Վերջ. ի գիւղ ժէ. ։

Ինչ գեռ Աքեքսանդր՛ ի մնոտիս զբաղեալ՝ մնափառէր ընդ մեծաբանացն պերճ անունն, ծիծաղելին զնաւ վաւ ազգք. և կէսք, որ չև և գերեալ էին՛ ի վատ մարդահաճութիւ, յերեսս իսկ յանդիմանէին զնա. որք առպա ծանր տոյժս ընդ համարձակութիւն լուծին, որպէս տեսցի ընդ հետս։ Իբ՛ ոչ միայն հայր իւր կոչեր զԱքրամազդ, և զանձն և՛ հարեր խաբել՝ եթէ մարթէր, այլ և զաստուածութիւ Թեկն ածէր. մինչև վերնախնամ

՝ Ասոր գծագրութիւն են բան կարթիւ, և գինիս տալոյ ի գեղոյ խմոնս։

տեսչութեանն աւարտեալ՝ որ ինչ նուաճն գործելոց էր, հաւասարեցոյց զնա մահկանացուաց։

Ի գառնալ Ալէքսանդրի ի մեհենին Ամմոնի Վիայ՝ հասեալ ի Արեւմտեան լուծս, որ են մերձ ի փարոս կղզի, եկն տեսանել զհինաւրեակ քաղաքն՝ որ շիներ. և ի բնակութեն նորա հրաւիրեաց անդր ի բազում տեղեաց զմարդիկ պայմանօք բարեաց. և ամբոխ մեծ ի Հրեից անդր գաղթեցոյց, չնորհեալ նոցա ազատութեն պարգեւս մեծամեծս։ Օ ի ոչ միայն յօրէնս և ի կրօնս Յ-նէոպ. ընդ իւրեանց եթող զնոսա, այլ և առնելոյն հաւասարեաց դէմ Եգիպ. զնոսա ընդ մակեդոնացիսն՝ զորս բնակեցոյցն անդ։ Ընդ սի էանց ի Նեմիխս կատարել զձմեռնն։

Օ այնու ժամանակաւ կառուցանելոյ նորա զԱղեքսանդրիա՝ ասէ Ապրոն զպատուեալ Թուղթն Ճարտասրեալ Արիստոս. զորմէ այլուր լիցին մեզ բանք։

Ինչ գեռ Ալէքսանդր ի Նեմիխս էր, ուղղեալ Եբրիտ. ք. յարդարեաց զնոր Եգիպտոսի։ Եւ կացոյց անդ ի վե- 108։ րայ զօրացն որս մնակեդոնացիս, զի յայլազգիս թեպա- Կոտր. ք. ե. հաւատեաց. և զաշխարհն ի մարզս բաժանեալ, զօրագլուխս ի նոսա ընդ իւրով ևեթ հրամանաւն կացոյց, երկուցեալ տալ ի մի ոք զիշխանութեն ամ զօրաց մեծի և բազմամարդոյ աշխարհին։ Լսակ ի վերայ իրաց կայոյց զԱղոլոմասպ եպիսատացի. քանզի կամէր զնախնի օրէնսն և զհին աւանդս պահել անփոփոխս Եգիպտոս, և առ այս զբնիկ եղիպտացին հմուտ հայրենի կարգացն ձահագոյն վարկաւ քան զերկիր օտար՝ որպիսի ոք և երն։ Եւ զԵգիպտոսն վերակացու հինաւածոյ քաղաքին եդ՝ յեր բազ յառաջադիմելոյն գործոյն. զնա և ի վերայ հաւկաց Ալբաթոյ կացոյց։ Ալյր Եգիպտոսն՝ այր անզգամ՝ անդր քան զամ պայման վերծեալ իշխանութեն, առանց ողբմութեն հարստահարեաց զազգս։

Օ՛ր Ղեւսանդր դարձեալ յԱթենպոսէ, խորհի գնալ ի վերայ Դարեհի. և ի լուռ առնել խորամ լռեալ գնահ պինդ նորա, առնի զպատրաստ յոտաբանաւորութիւնն նմա. և անցեալ ընդ Եփրատ և ընդ Տիգրիս, հասանէ ընդէր Դարեհի. և վասն ճակատուս մեծի պատերազմին առ Գաբեղաս։

Դիոդ. ԺԷ. 530։ Ասէրան. Գ. 111։ Պլուտ. յԱղեք. 681։ Կուրտ. Գ. Ը։ Յոսէփ. Ժօ. ՃԲ։

Բայց Ղեւսանդր ուղղեալ զերծս աշխարհին Ասիոյ գնայր, մեկնեցաւ անտի գարնանոյն՝ գնալ յարեւելս ի վերայ Դարեհի։ Եւ յանցանել ընդ Պաղեստինէ՝ լուաւ համբաւ չարագոյժ։ Օր յորժամ չուս առնէր գնայր նա յԱթենպոս, կացոյց ի վերայ ասորւոց և պահ դեստինացւոց զՊնդրոմաք՝ զոր յայմ մեծարէր. և Ալնդրոմաք վասն երաց ինչ ուղղաբեր եկն ի Մակրիա. և սամարացիք սահակեալ, յարմուկ չհոթելից հուր հարին զտանէն՝ ուր էին, և զնա այրեցին ի ներքս, ոհա՛ չեալք՝ որպէս կարծեմ՝ վասն գտանելոյ հնորհս Հրեից Թշնամեաց իւրեանց յՂեքսանդրէ, և ինքեանց անտես լինելոյ։ Եւ ծանրացաւսուն լեալ Ղեքսանդր, զամենեսին՝ որ հաղորդք էին չարեացն՝ ետ սպանանել, և զայլս ի բաց վարեաց ի Մակարիոյ. և փոխանակ նոցա հատուած ի մակեդոնացւոցն ածեալ բնակեցոյց, և ըզյաւելուածն երկրին ետ Հրէից ի ժառանգութիւն։ Եւ ի Տիւրոս յաւեալ ժամանակս ինչ, յերբիւբեաց զերծ աշխարհին՝ զոր զհետ իւր Թողեալ ի խաղալ իւրում յաշխարհակալութիւն։

3673. 331 Ընդ մեկնել նորա անտի, եհաս առ նա մի ի ներքինեաց՝ գուժել զմահ տիկնոջ Դարեհի, զի այն ինչ մեռեալ էր։ Եւ դարձաւ Ղեքսանդր, և չորաս ի խոր բան Ալսիգամբեայ, որ լի արտասուօք անկեալ յերկիր՝ ողբայր ընդ արբայազն օրիորդս. և առ նմա զարթոյց դին մնալոյ, ողբալոյ և այնու՝ զի անգէտ էր չարեացն, որ նմա առաւել աղետաբերք էին՝։ Եւ միխիթարեաց զնոսա Ղեքսանդր գԹով և քաղցրութիւն ախտակցեալ ի սրտէ. և շքով մեծաւ և ամ առատութեամբ յուղարկաւորեաց զչէնոյն։ Իսկ մի ոմն ի ներքինեաց սենե-

1 Ողբալի այնու խոկ՝ զի չև զգայր աղետիցն, որ յաճախագոյնք էին նմա։ Կ. Կուրտ։

կապանաց գերելոց ընդ տիկնայն՝ փախուցեալ ի քա-
նակէն, գոյժ եբեր Պարեհին։ Իսկ յոյժ տրտմեցաւ Պա-
րեհ ընդ մահ տիկնոջն, մանաւանդ զի չհամարեր զսպատ
շաՀ յաղարկաւորութենէն սպասաւորեալ նմա. այլ հանդ
դարտեցոյց զնա նեղբլինին, պատմեալ նմա որչափ ինչ
արար Աղքանդր ընդ դշխոյն ի մահուն նորա, և որ-
չափ յառաջագոյն մարդասիրեր։ Իսկ ընդ այն իսկ Պա-
րեհ եղև յանդնարին կասկածանս, և մերժեցաւ ի նմա-
նե հանպիտ։ Իսկ առեալ մեկուսի զնեղբլինին, ասէ.
Աղթե տակաւին տեր քո և Թագաւոր իցեմ, երդմնեցուս-
ցեալ զքեզ ի ԱիՀր աստուած՝ որ համասփիւռ Ճառա-
գայթիւքն լուսաւորէ զտիեզերս, և յայնս աբքունի, մի
Թագուցաներ չկինէն՝ եթե ընդ մահուն Պատուիրայ և
զբարին ինչ նորա ողջայեմ, կամ Թե գերեալ պարմա-
նուց յաղթողին՝ նախ քան զկեանս զիաւն կորուսեալ
իցէ։ Նայնժամ նեղբլինեցին անկեալ յոտս նորա աղա-
չէր՝ մի զԹիւր կարծիսն զառաքինութենէն Աղքանդրի
կարծել, և մի զնախատինսն զայն առնել կնոջ և քեռ
իւրոյ. և մի՝ ի վշտին դանձն ի մեծ սփոփանացն զրկել.
զի ոչ ի դոյզն ինչ ումեքէ պարտեցաւ, այլ որ քան զկա-
րիս մարդկան գեր ի վերոյ էր. զի առաւել զարմանալի
է, ասէ, Աղքանդր ժուժկալութեամբն՝ զորոյ անչուշտ
հաւաստիս եցոյց կանանցն Պարսից, քան զօրութենէն
ի վերոյ Պարսից։ Իսկ երդմամբք և ահագին նզովիւք
հաստատեաց զասացեալսն, և որ ինչ յայգագս իմաստու-
թենէն և ժուժկալութենէ և մեծախոհութենէ Աղքանդրի
գիտէրն՝ պատմեաց զնմա։ Նայնժամ Պարեհի մտեալ ի
դահլիճն առ առագանին, և զձեռս ի վեր ամբարձեալ՝
մատոյց զաղօթս զայս դիցն. Ով, որ խնամքդ զազգ
մարդկան, և ի վերոյ Թագաւորաց պետութենէդ ունիք
իշխանութենէ, տուք ինձ յանդորր հանել զբազդ Պար-
սից, և նովին փառաւք՝ որով ընկալայ՝ Թողուլ զայն զա-
ւակի իմում, և յաղթօղ լեալ Թշնամեաց՝ փոխարինել
բարութենէն Աղքանդրի, զորս յոժարեաց առնել ընդ
կարևոր սիրելիսն իմ՝ ի նեղութենէ իմում։ Իսպա եԹէ
օրհաս վախճանին պետութենէ Աղբեաց մերձեալ է, և ի
դիցն ցասմանէ կամ ի յոզդոզդ հաստատութենէ մարդ-
կայնոցս իրաց կործանեսցի, շնորհեցէք ինձ դէպ Աղքա-
նդրի և մի այլ ումեք յաթոռն Պիւրոսի նստել։

Իսկ չոբ արար Աղքանդր հեհաս ամ զօրաքն ի Թա-
սակն, և անց ընդ Ափրատ կամրջաւ, և երեթայր ի Տի-
գրիս պատահել Թշնամւոյն։ Իսկ հիացս ի խաղաղութիւն

հրաւիրեալ զնա Վաբէհի, ապա քանզի յիմ պետու-
թենէն տիպեր հրաժարել, կալմեցաւ անդրէն ի պա-
տերազմ։ Եւ ժողովեալ ի Վաբէլոն զօր բազում յոյժ,
գիտալ աւելի քան զպատերազմին առ Խաեաւ, դիմեաց
նոքօք ի Վինոեէ. և ծածկեին դաշտք Ասիրացւոց
յամբոխել նոցա։ Եւ իբրև գիտաց զի ոչ ինչ կարի հե-
ռի էր Թշնամին, յղեաց ի վերայ նորա զԱատրոսատ զօ-
բապետ այրուձիոյն ընտրիւք հեծելովք հազար արամբք.
և զԱղեոս կողմնապետ աշխարհին ետ վեց հազար հե-
ծեալ, խափանել զանցս գետոյն առաջի Ազքայանդրի,
և ապականել զամ երկիրն ընդ որ անցանելոց էր. այլ
նա անագան ժամանեաց։

Ասայ Տիգրիս քան զամենայն գետս արևելից առա-
ւել սրընթաց է. և ընդ ուղիս բազումս խառնեալ, և
վէմս ստուարս մեծամեծս աղխաղխեալ բերէ. և վասն
կարի երագութեն կոչեցաւ Տիգրիս, որ ի պարսիկ բար-
բառոյ Թարգմանի նետ կամ տեգ։ Եւ առաքեաց Ազեք-
սանդր հետաքննել զհուն գետոյն. և գտաւ յայնմ մին
չև ցկուշտ երիվարին, իսկ ի խորն մինչև ցլանջս։ Եւ
լուսանաձև զզօրսն կարգեալ, յայլ և յայլեակ Թև զայր-
ուձին զատոյց, և ոչ յոյժ աշխատ եղեն յանցս գետոյն
մինչև ցհոսումն յորձանաց ջուրցն. և զգինսն դէպ վե-
րոյ ունէին։ Ասայ Թագաւորն ընդ հետևական գնացը
հետի. և նախ յառաջ քան զամենեսեան եհաս յայն կողս,
և ձեռամբ արարեալ՝ ցուցանէր զհունն զօրացն, զի հրն
չումն ձայնին չհասանէր առ նոսա։ Եւ ի քարանցն զօր
գետն աղխաղխեալ բերէր, և ի Թափոյ վայրկենէն
ջուրցն տագնապեին յոյժ, և ոչ կարէին կանգուն կալ։
Եւ առաւել այնոքիկ աշխատ լինէին, որոց ընդ զինս
իբրեւնց և զկայ բարձեալ էր. զի չկարացեալ պինդ
կալ, ի յորձանուտն վարէին. և հարկ էր զբեռինսն ի
բաց Թօթափել։ Եւ կոտք կարասւոյ տատանեալ ընդ
ալիս, կործանէին զառագումն, և զօրացն ամաւարեալ
զիւրաքանչիւրսն զերծուցանել, առաւել ի միմեանց խու-
ճապին՝ քան ի գետոյն։ Ասայ Թէպէտ և Թագաւորն
գոչէր առ նոսա՝ զգինսն միայն ապրեցուցանել, և զայլ
ամ խոստանայր տալ նոցա. այլ նոքա ոչ լսէին, զի և
խրատն և հրաման յաղթակ աղաղակին հեղձանէր։ Եւ
անցին յայն կողս ընդ հունն ծանծաղագոյն. ընդ որ մեղ-
մագոյն հոսէր ջուրն. և ոչ ինչ՝ բաց ի սակաւ կահէն կո-
րեաւ։

Ամբեքէր դայլն զօրօք սպառսպուռ ջախջախանս մա-

կեգոնական բանակին ածել յանցս գետոյն, եթէ խիզա-
խէին Թշնամիք ։ Եւ Ալեքսանդրոս ասէ առ ձեռն պա-
տրաստ կալը յաղթութեի՛ եթէ յանցանել նոցա խառն
ի խուռն ընդ գետն՝ ի վերայ հասանէր , անագանեաց
մնչև ի կազմել նոցա ի ռազմ։ Եւ բաղդն առընթեր
կայր հանապազ Աղեքսանդրի , որով և ընդ Պորանիկն
գետ էանց յանդիման բիւրաւորացն հեծելոց և հետևա-
կաց , որ ի գետեզրն միայն նմա ։ և ընդ լերանցամէջ
Կիլիկեայ՝ եկեալ ի բաց անարգել զկիրճն , յորս դղրդն
գնդաւ մարթեր խափանել զանցս նորա ։ Ալ ան այսորիկ
ոչ յոյժ զարմանալի է ընդ կարի համարձակութիւն , որ է
տիպ նկարագրին Աղեքսանդրի , որով յանդգնեալ՝ ի
մեծամեծ վտանգս խիզախէր ։ քանզի անվրէպ յաջո-
ղութեամբն՝ ոչ ինչ երկմտէր թէ գուցէ յանդգնիցի՛ ։

Եւ գետոյն զաւուրս երկուս բանակեալ , հրամայեաց
զօրականին պատրաստ լինել առ վաղիւ ի չոյ ։ Եւ
յառաջմամբ պահու գիշերոյն ի պարզ և յանամայ երկ-
նի նաւագեացս լուսնի , և ապա թուէր յարիւն նեղիկեալ ։
Եւ ամ զօրքն ի կասկածանս ելից մեծի պատերազմին՝
յերկիւղածութեի և յարհաւիրս ըմբռնեալ , սրտնջէին՝
իբր թէ հակառակ կամաց դիցն մնիցէին ի ծագս երկրի ,
և զգոյցս բարկութեին յայտնիցեն երկինք , և գեաք խա-
փանիցեն զանցս նոցա , և աստեղք գհանապազորդ պայ-
ծառութի իւրեանց ծածկիցեն , և ամ ուրեք երկիր ա-
մայի և անապատ ընդառաջ նոցա դիպիցին , և բիւրա-
ւորք զարիւնս իւրեանց հեղուցուն վասն փառամոլու թե
մնցն՝ որ զհայրենիսն արհամարհէր , զհայրն ուրանայր ,
և աստուած զանձն կարծեցուցանէր ։ Եւ իբրև տըր-
տունջք համարձակէին՝ ի բազուկ և յաղմուկ , թագաւորն
ոչ ինչ խոռվեալ ընդ արկածն՝ ժողովեաց զսպայս ի
խոռան իւր ։ և կոչեցեալ զիշն եգիպտացիս զաստեղա-
գետս հմուտս , հրամայեաց պատմել զպատճառս երևու-
թեն ։ Ասացեալ թէպէտ և քաջ գիտէին նոքա զնուաղելս
լուսնին զտոյգ պատճառս , այլ առանց բնախօսական
ճառից՝ արև գ՞ելլենան ասացին , և զմարսս լուսնի ,
իբր թէ նեղուցեալ մեծ խաւարմանէն սպառնացեալ պար-
սից ։ և օրինակս բազում հաւաստեաց աներկբայելի ի
յառաջ ժամանակաց ածին ։ Եւ ինչ հզօրագոյն յորդո-
րեկ զինառնազանին՝ իբրև զնապաշտութեի ։ յողդողդ և

1 փոքր զարմանք են յանդգ- գուցէ յանդգնութե գործիցէ ինչ-
նութեի նորա , որով առաւելն զ- կ. կ--ը ։
բացաւ ։ զի ոչ երբէք երկմտէր՝ թէ

բարկացող է, այլ նահրահաւատ կրօնիւք դիւրանասց ըղձից և գուշակաց՝ քան առաքնորդաց իւրոց։ Որով՛ի պատճէ պատասխանւոյ եգիպտացւոյն ընդ բանակն, քաջալերեցան և խրախուսեցին զօրքն ՚ամ։

Օ՚այն եռանդն նոցա պատեհ առեալ Թագաւորն, յերկիրսորում պահեալ գիշերոյն խաղացոյց զնահակն. և էր յայնմ Ջիզբիս, և լերինք Աորգուաց ՚ի ձախմէ։ Եւ ընդ այգն լուսեաք, որ երթեալ էին, գարձեալ պատմեցին՝ եթէ գայ Ա՚արեհ. և վաղվաղակի ռազմ կարգեալ, ինքն առաջի զօրացն երթայր։ Ա՚ՀԼ էին՝ որք գայինն՝ գունդ լրտեսաց պարսից՝ հազար այր հեծեալ, և վաղվաղակի ընկրկեցան ՚ի բանակեաղ իւրեանց՝ որ էր հեռի ՚ի տեղւոջէն հարիւր և հիսուն ասպարիզաս, որպէս ստեալ գեալ գիտաց Թագաւորն։

Ա՚այց յառաջ քան զայս ըմբռնեցան Թուղթք Ա՚ահրեհի, յորս հրապուրեր զՀելլէն զօրականն՝ դաւաճանել զարքայ. զի բազում անգամ փորձեաց գնենգն անառգործոյն լի վատութեամբ, և նովաս քան ՚ամ իւիք գաղջեցոյց զյիշատակ իւր։ Եւ մինչ խորհեր Ա՚ղեքսանդր ընթեռնուլ զԹուղթն յատենի, զի և ՚ի հելլէն գնդին ՚ի սէր և հաւատարմութենէ վստահ էր՝ որպէս ՚ի բնիկ գընդացն մնակեղծացուց, գադարեցոյց գնա Պարմենիոնի՝ երկեցուցեալ չարկանել այնպիսի ինչ ՚ի միտս զօրացն. զի մարթէր միւամ ումեք ՚ի չարին ժպրհել զի յայմ ինչ յանգգնի ագահութենէ։ Եւ Թագաւորն լուաւ հանդարեղ խրատուն նորա. և խաղցոյր գնայր զօրօքն։

Ապա Ա՚արեհ երկիցս աղերսեալ զԱ՚ղեքսանդր ՚ի խաղաղութենէ, և ոչ լսելի լեալ, ՚ի գէն ապաստան եղև. այլ յաղթեալ ՚ի մարդասիրութենէ նորա՝ զոր արար ընդ ընտանիս իւր, առաքեաց անդրէն գնա տասն յաւագ իշխանաց յազգականաց իւրոց՝ խօսել միւանգամ ՚ի խաղաղութենէ օգտակարագոյն նմա գաշանիք, և գոհանալ զբարութենէ նորա։ Ա՚ինն իրի ՚ի վերայ ՚ամ գաւառացն, զոր յառաջագոյն յանձն առեալ էր տալ ՚ի նա մինչև ցգետն Ա՚լիս, յաւել և զմի երկիրն ընդ Ա՚ղեսպոնտ և ընդ Ա՚փրատ, զոր ունէրն խակ Թշնամին՝ նախ քան զընդորհել նորա։ Ապստեցաւ ընդ հրեշտական Ա՚ղեքսանդր և ասէ. Ա՚րթայք տուք յինէն պատգամ Ա՚ահրեհի. Թշնամեաց պատերազմողաց ՚ի նահիր են գոհութիք զմիմեանց. ոչ վասն իւր ինչ, այլ վասն իմ գթալ ցեալ մարդասիրեցի յիւրան, ՚ի բնէ ածեալ ՚ի գութ և ոչ առ հնորհս ինչ նորա։ Օ՚ր ՚ի կարիս Թշնամեաց չկա-

բեմ ոանհաւր լինել. և ոչ ընդ գերւոյ և ոչ ընդ կա-
նայս պատերազմ է ինձ, այլ այնոցիկ Թշնամի եմ՝ որոց
է զէն ի ձեռին։ Լթե զխաղաղութիւն առանց մեղմե-
խանաց խնդրեր, խորհեի արդեօք տալ նմա. այլ զի
ոչ դադարէ ի հրապուրելոյ զզօրս իմ նաւմակաւոյ և
կարասւով ի մատնութիւն, և զբարեկամս իմ ի սպա-
նանել զիս, հաստատեալ եմ՝ հալածել զնա մինչև ի
սպառ, ոչ իբրև զնենգաւոր և զԹշնամի այլ իբրև զՀէն
մի չելուզակ։ Լաւրուք առատաձեռնեմ շնորհել ինձ
զիմն. երթայք ասասջիք նմա, եթէ երկրորդ իմ խնդրե
լինել և ոչ հաւասար՝ լուսոյց Թերևս նմա. ապա Թէ այլ
ազգ, ոչ կրկին արեգակամբք և ոչ երկոքումբք տե-
րամբք վարեսցի երկիր. կամ այսօր խոնարհել, կամ
վաղիւ պատերազմ, ընտրեսցէ զմին. և մի այլազգ
ինչ յառաջնմէն՝ յուսասցի յայսմ հետէ յայնողութեամբ
բաղդին։

Լայց Թէպետ և Պարեհի պայմանքն չէին արդար,
այլ և ոչ Լղեքսանդրի պատգամն արդարագոյն էր։ Օ՛ի
նա զպարտութիւն իւր չծանուցեալ, կամ գեթ չառնսու-
յանձն խոստովանել զայն. իսկ սա արբեցութիւն բաղդին
յանզգայական ծայր խօլութեամբ զերծտիտումն ածէ՝ այնու
զոր ասէին. Լև կրկին արեգակամբք և ոչ երկոքումբք տե-
րամբք վարեսցի երկիր։ Օ՛ի զինչ քան զայսպիսի բանս
ամբարտաւանական կայցէ, եթէ այս մեծութեամբ իւ
ցեն։ Լյե հրաժարեալ պատգամաւորքն դարձան և պատ-
մեցին Պարեհի, կազմել ի պատերազմ։ Լյե բանակե-
ցաւ ՚ամ զօրութեամբն մերձ ի Պարգամիւ քաղաք առ Լհա-
մել գետով՝ յանմացառուտ դաշտի, հեռի Լվրբեզայ։
Լյե յառաջագոյն զբանակեցոն հրամայեաց հարթել,
զի այրուձին և կառք անխափան վարեսցին. խրատեալ
պարտութեամբն ի կիրձան Կիլիկեայ։ Լյե տատասկս
հրամայեաց սփռել առաթուր այրուձիոյ Թշնամեացն։

Լիբրև այս ՚ամ ազգ եղև Լղեքսանդրի, զաւուրս չորս
քանակեալ՝ ուր էրն, հանգոյց զզօրսն, և փոս և պատ-
նէշ շուրջ եդ. քանզի խորհեր անդ զկարասին և զա-
նօթս և զխառնաղանջն Թողուլ, և զզօրսն մինագինեալս
առանց կահուց խաղացուցանել։ Լյե յառաջսուտ պա-
հու գիշերոյն չու արար, պատահել ընդ այգն Պարեհի.
որ ի համբաւ գալստեան նորա Ճակատեցոյց զզօրս իւր,
և Լղեքսանդր Ճակատեցուցեալ գայր. զի երկոքումբք

1 Ջատատակ չերեմնի բնեհատ յիւվերսան փեփէ, զի ինեա յոռս է
ոտեորդ փոքենալ, որոնեն էրթ ի բիվերսոյն ոտիքեն վոսնոյեն։

կամ երիւք փարասխօք հեռի էին ի միմեանց բանակք երկոցունցն ։ Իբր հասեալ ի լեառն մի , ուստի ամ բա նակ Թշնամեացն երևէր , զտեղի եառ անդէն . և ժողո վեաց զսպաս զօրացն զմահեդմացիս և զայլազգիսն խորհել վասն պատերազմին , եթէ վաղ ընդ փոյթ ձա կատ մղիցեն , կամ թէ բանակեսցին ի տեղւոջն ։ Իբր յաղթեաց յետինս այս բան խորհրդի , քանզի հարկ էր տեղեկանալ վայրացն և յօրինուածոյ ձակատուն Թշնա մեաց . և նովին կարգաւորութեամբ ձակատուն բանա կեցան ։ Իբր առեալ ընդ իւր Ղեքսանդրի զմեկնակա զէն հետևակազօրն և զթիկնապահ գունդս իւր , շրջե ցաւ ընդ գաշտն՝ դիտել տեսանել ուր դիպոզագոյն մին ցի պատերազմ ։ Իբր իբրև դարձաւ , վերստին կոչեաց ժողով և ասէ . Ի՞նչ է պիտոյ յորդորել զձեզ , զի ձեր կորովդ և արուեստիւք հզօրագոյնս խրախուսեն զձեզ ի փառս . բայց միայն գիտասցեն զօրքդ՝ զի ոչ ի նուաճել զմիւսնիսկ կամ զկիպտոս պատերազմին , այլ զԱ՛սիա լրիւ իւրով . և ընդ բազում աշխարհսն անցեալ և ընդ գետս և ընդ սարս լերանց , չմարթի անդրէն անվտանգ դառնալ առանց կատարելոյ զյաղթութիւն ։ Իբր ասպա արձակեաց զնոսա ի հանգիստ ։

Ապայ Պարմենիոն խորհուրդ ետ նմա՝ գիշերամարտիւ դիւրաւ զձեռնափիս բեկանել յետզկարծումն ի մեծն ։ Ընդունի Թագաւորն լուր ի լուս ամենեցուն պատասխանի ետ և ասէ . Ղեքսանդրի ոչ վայելէ գողանալ զյաղթու թիւն , այլ ի տուընջեան մարտեալց և յաղթեցից ։ Այսոքան ետ զպատասխանին , այլ խոհական . զի վտանգ մեծ էր գիշերի ի բազմամբոխ զօրսն յարձակել յերկիւղ անձա նօթ ։ Օ՛ն և Պարեհի կասկածեալ ի յանկարծ յար ձակմանէ նոցա , քանզի և ոչ պատնէշ ածեալ էր զբանա կաւն , զնմ զդիշերն զայն ընդ սպառազէն զօրսն հսկեր . որ քան զնմ ինչ առաւել մեսասկար եղև նմա ի պատե րազմին ։ Մոլորութիւն էր Ղեքսանդրի ի մեծամեծ վը տանգս հարցանել զիոյն . և զնմ հրաման պատասխանի ետ նոցա խղճական երկիւղածութեամբ կատարէր , առ ի հաշտ առնել ընդ իւր զդիս ։ Իբր զի պատերազմին մեծ առաջի կայր , յոր մահեդոնական պետութեանն բազդ հաստատեր , կոչեաց առ ինքն զԱ՛րիստանդր , զի վստահ էր ի նա , և ընդ նմա առանձինն զոհս և նուէրս մատոյց Երկիւղի [1] աստուածոյն , ի փարատել որպես կարծեմ՝

1 Փόβῳ երկիւղի. այս է ոգւոյ և Φοίβῳ փեբեայ կամ Ապողոնի։ ընթերցողաց գնաւորեալ բանին, Ե

զարհաւիրս զօրականին, զի զարհուրեալ էին ի տեսիլ
ահեղ բանակի թշնամեաց։ Իբրեւ հարցուին իւրով պաշ-
տամանն զգեստուն, աղաւնիձի ի ձեռին, և քօղ զգլխով,
ինքն նախ բարբառեր զաղօթմն Վախայ և Ի[ն]ենասայ և
Յաղթուհեր զիջն, և Թագաւորն կոչորեր։ Ի վախձա-
նել աղօթիցն՝ յորաւ Ա[ղեքսանդր ի խորան իւր հանդ-
չել զինացուած գիշերին ի քուն. և ի հոգս կեղակարծ
ելից մարտին ոչ կարեր նիրհել. այլ ասպա ընկղեալ մար-
մնոյն տագնապաւ մտացն, խոր ի քուն մինչև ցառաւօտ
հնչեաց՝ ըստ ոչ սովորութեան իւրում։ Իսկ զօրավարացն
ընդ այգն ժողովեալ առ խորանի նորա՝ զի տացէ պա-
տուէր, զարմանային ընդ յամել նորա ի քուն. և ին-
քեանք հրաման ետուն զօրացն առնուլ կերակուր։ Ա[յլ
Պարմենիոն զարթոյց զնա և ասէ. Յե հնչեաս խաղա-
զութիւ, մինչ պատերազմին բազդին քում անօրէն առ-
դուբս կայ։ Յե նա ասէ. Իսկ ընդէր խռովիցիմ, մինչ
գայ Թշնամին նուաճիլ ի մեզ։ Յե առեալ զգենան, ի
ձի աշտանակեաց. և ընդ կարգս զօրացն ընթացեալ,
յորդորեր զնոսա սիրդ ունել և յաւելուլ զանուն քա-
ջութեանէ իւրեանց և զկանխակալ փառն։ Յե ի մծտա-
լուտ ահեղ վտանգին գնալ յաջողութեանէ մարտին ի գէտն
իսկ զօրավարին նկատէին զօրքն. զի ոչ երբեք այսպէս
լուրջ և զուարթ երևեալ էր. զի պարզ և վստահ կեր-
պարանաւն՝ որպէս զառհատեալ յաղթութեանն ընդ
ծայրէ։

Կարի ընդհատ էին ի միմեանց բաղմութեամբ զօրքն
երկոքեին, և առաւել քաջութեամբն։ Պարեհն՝ թէ
յոյժ նուազ՝ էին վաթսուն բիւրք հետևակաց, և բիւրք
չորք հեծելոց. իսկ Ա[ղեքսանդրի չորք բիւրք հետևա-
կաց, և հեծեալք պակաս քան զուարթ հազար. այլ սա
բայս՝ կորովի բազուկք, նորայն՝ խառնաղանջ ամ-
բոխ, և ոչ զօրք. խրտուիլ մանաւանդ և կեղծիք զար-
հուրանաց, և ոչ ձամբար։

Իսկ յօրինուած ձակատուցն՝ ոչ յոյժ այլազգ էին ի
միմեանց։ Ի կրկին կարգ յաջ և յահեակ թև հե-
ծեալքն, և ի միջի հետևակք կացին, հանդերձ բնիկ
գնդապետօք ըստ ազգս իւրաքանչիւրք. և զօրավարք ի
վերայ նոցա։ Ա[յլ զառաջեաւ ձակատուն Պարսից էին
երկերիւրք գերանդազէն կառք, և փիղք հնգետասան։
Յե եկայ Պարեհ յառաջնումն կարգի ի միջին, և առ

1 Յուվե ի վերադիր առեալ տան վերին բիւր ղեկ- զբաղ նորա առեալ։

նովաւ գունդք Թէոփապահք՝ ընտիրք զօրացն. և վհատակազունդն հելլէն կացոյց զնոսա, որ միայն կարող էին կալ առաջի մակեդոնական փաղանգին։ Այլ զի քան զՀակատ Թշնամեացն՝ իբրև մեծատարած եր յոյժ, խոր հեր պատել զնոքօք, և շեղ և շիտակ հարկանել։ Ոչայց Աղեքսանդր՝ ի խափանել զվտանգն՝ պատուէր ետ զօրաւարացս երկրորդ կարգին ժամանել ընդդէմ յարձակման Թշնամեացն յետ կուսէ, կամ շեղակի զԹևան ունել զի պատսպարեսցին առ՝ ի կողմն կուսէ՝ ի բաղխել Թշնամեացն։ Այլ յառաջամարտիկս՝ ի Հակատուն կացոյց զմեծ մասն աղեղնաւորացն և զպարսաւորաց և զհետամիզ զօրացն՝ զդէմ ունել գերանդազէն կառաց, և խրտուեցուել զձիսն Թանձրատարափ նետիւք և տիզօք և քարամբք։ Այլ սպայից Թևոցն պատուէր ետ՝ տարածանել զզօրսն որչափ մարթէր առանց բեկանելոյ զամրութիւն Հակատացն։ Իսկ զաղեաւաղէնն և զգերին, ընդ որս էին և մայր և որդի Դարեհի, եՀեղ՝ ի բանակատեղն, և պահապանս՝ ի զօրացն գունդ փոքրիկ։ Պարմենիոն՝ ի ձախ մէկ, որպէս միւնոյն, հրամայեր. և Աղեքսանդր յաջմէ։

Այսպա առ միմեանս կացին բանակքն երկոքին. բայց Աղեքսանդրի փութացեալ՝ ուր գտատեսկան արկեալ էր Թշնամեացն, երկայներ զեղոյր յաջակողմն՝ խուսեալ անտի՝ ի բաց, և զթշնամիս ընդ իւր ձգեր։ Այլ երկեաւ Դարեհ՝ Թէ գուցէ՝ ի յարդարեալ գեռնոյն՝ ի բաց ձգիցի յանկարծ և՝ ի խորտաբորտ երկիր, և գերանդազէն կառքն խափանիցին. և պատուէր ետ ձախակողմեան հեծելազունդին, որ յաջմէ Թշնամեացն զեղեայր, յառաջ խաղալ և պատել զկողիս մակեդոնացւոց՝ զի մի անդր եւս տարածանիցին։ Ընդդէմ նոցա առաքեաց Աղեքսանդր զվարձկան այրուձին, որում Ենիդաս հրամայեր. այլ զի նա չքաւէր զդէմ ունել բազմամբոխ Թշնամեացն, յաւել յօգնականութիւն նմա զդունդն պեռոսայի՝ որում Աղետաս հրամայեր, և զայլազգի հեծելազունդն։ Ընկերակեցան զառաջինն պաբսիկք. այլ ապա անդրէն յարձակեալ, կացին՝ ի մարտ. զի և Թուով բազումք էին, և զրահիւք պատսպարեալ՝ ինքեանք և երիվարք նոցա։ Ձոյժ տաժանեցաւ այրուձին Աղեքսանդրի. այլ քաջութեամբ ժուժկալեալ, յետոյ ապա վանեաց զՀնամին։ Այլ վարեցին պարսիկք զկառս գերանդազէնս ընդդէմ մակեդոնական փաղանգին՝ առ՝ ի քակտել զայն, այլ չայլողեաց նոցա. զի՝ ի շուինդն Հակառակ տիզաց ընդ առապա, և՝ ի տարափոյ նետիցն՝

որ յՅՄ կողմանց տեղւոյն, խրտեաս երիվարքն. և բա-
զումք ի կառացն յետս ընդդէմ ի վերայ տերանցն
դառնային, և զայլոց զսանձիցն կալեալ փաղանգակա-
նաց՝ ձգէին ի վայր զՀեծեալս, և փողոտէին զնոսա. և
նիւթք ի կառաց վարեցան ընդ դունդս մակեդոնացւոց,
այլ նոքա Ճանապարհ արարին՝ որպէս պատուիրեալ էր
նոցա, և ոչ ինչ իսկ վնաս եղև նոցա։

Այլ Աղեքսանդր իբրև ետես, զի միահամուռ ՅՄ
բանակաւն շարժէր Պարեհ՝ գալ անկանել ի վերայ նո-
ցա, խորհեցաւ հնարս ի խախտից իւրոցն։ Ի սաստկա-
գոյն խուռն մարտին, ուր մակեդոնացւոցն ահագին վը-
տանգ ի վերայ կայր, Քրիստոնդր գէտ՝ հրաման դեալ
ի Թագաւորէն՝ եկայ ի միջ զօրացն, սպիտակազգեաց՝
ուղիղ գահիկ ի ձեռին, և ազդ առնէր ձայնիւ մեծաւ՝
որպէս թէ տեսանել զդէմսով Թագաւորին արծուի սա-
ւառնեալ՝ առհաւատչեայ անշուշտ յաղթութեն։ և ձե-
ռամբ արարեալ՝ ցուցանէր գոյն զօրացն։ Ոչ նոցա՝ ի
հաւատս գուշակին բանի՝ ցնորէին աչքն ի տեսիլ հա-
ւուն, և զուարթագոյնք խիզախէին ի մարտ։ Ձայնմ
վայրի տեսանէ Թագաւորն զԱրետաս, զի զայրուձին՝ որ
զաջոմբն պատէր՝ հարեալ և խոռվեալ, հերձանեալ զա-
ւազս Ճակատուն Պարսից, անդր և ինքն եհաս ընտրե-
լովք գնդոցն, և ի սպառ խորտակեաց զձախոյ Թև
Թշնամեացն. և ոչ եմուտ զհետ փախստեից, այլ դար-
ձաւ յահեակ՝ անկանել ի խուռն, յորում էր Պարեհ։
Ընդ ի տեսիլ երկուց Թագաւորացն՝ խրախուսեցին եր-
կուստեք զօրքն. և էր Պարեհ ի կառս բազմեալ, և
Աղեքսանդր հեծեալ յերիվար. և երկոքեան շուրջ պա-
տեալ ի սպայից և յընտրելոց զօրաց, որոց զոգիս ի
բռին եդեալ էր ի վերայ տերանցն իւրեանց։ Լուաւ մեղ
պատերազմ խիստ, և բազում արեան Ճապաղիք. և ե-
հար Աղեքսանդր գեղարդեամբ զվահանակիր Պարեհի,
և պարսիկք և մակեդոնացիք կարծեցին զԹագաւորն
հարեալ և սպանեալ. և գաժիւք և կականաւ Պարսից
լքան ՅՄ զօրքն։ Ազգականք Պարեհի՝ որ ի ձախմէն
էին՝ փախեան ընդ Թիկնապահն, Թողեալ զկառս սր-
քայի. այլ որ ընդաջմէն էին՝ շուրջ պահ կալան ընտրաւ.
Ոչ պատմին այսպէս՝ Թէ մերկացաւ յաշխժամ Պարեհ
զդաշոյն, և խորհէր գնալ զիւրովին, և մի զվատ փա-
խուստն յանձն առնուլ։ Ալ իբրև ետես ի կառաց
զիւրմն՝ զի դեռ ևս ժուժկալէին ընդդէմ Թշնամեաց,
ամօթ համարեցաւ լքանել զնոսա. և մինչ դեռ նա տա-

տանէր ընդ յոյս և ընդ վհատութիւն, տակաւ ընկրկէին պարսիկք՝ հարեալ և պակասեալ. զի ոչ ևս պատերազմէր անդ, այլ կոտորած։ Յաւ դարձուցեալ Վարդհ զկառս իւր, փախեաւ ընդ այլմն. և յաղթողք հետապնդեցին նմա։

Ինչ դեռ յայնմ ժամ թևի մակեդոնացւոց իրքս այս գործէին, և աներկայելի էր անդ յաղթութիւն, վտանգ մեծ եհաս ահեկին՝ յորում Պարմենիոն զօրավարէր։ Զի ջնկատ մի հեծելոց Պարսից և հնդկաց և Պարթևաց, որ յիմ պարսկաստանէ բանակին ընտիրքն էին, հերձեալ զհետևակագունդ ձախոյ թևին՝ թափ անցին գնացին մինչ ի բանակատեղն։ Յաւ անդ գերին ի տեսանել զիւրեան՝ վառեցաւ ի զէն, որ ինչ առ ձեռն նմա էին, և միահամուռ ընդ այրուձիոյն անկաւ ի վերայ մակեդոնացւոցն՝ որք ի գիմաց և ի թիկանց հարեալ լինէին։ Յաւ Ալեքսիադեայ աւետիս եւոան՝ թէ յաղթեաց Վաղրէհ, զի այնպէս կարծէր. և թէ ամ կամն առաւ, և հասանել նմա ազատութիւն։ Յայլ տիկինն խնամուն ոչ դիւրահաւան եղև ցանկալի լրոյն, թէ գուցէ կանուխ խնդութեամբ զբաթերար յաղթօղն գրգռեացէ. ոչ ցնծացաւ, և ոչ այլազգ ինչ խօսեցաւ, այլ խաղաղ և հանդարտ՝ որպէս յառաջն՝ եկաց մնաց ելից իրացն։ Յայց Պարմենեայ ընդ շրնդն յարձակման Թշնամեացն՝ աղդ արարեալ էր Ալեքսանդրի զմօտալուտ վտանգն, և ընկալեալ պատուէր՝ զդոյշ լինել չզեկամեալ զամբոխ թիւն գնդին, Թողուլ ի բաց զկարասին, և յաղթութեանէ միայն ուշ ունել, որով զիւրեանցն և զթշնամեացն ժառանգէր։ Օրավարք, որ յերկրորդում կարգի ի բնէն հետևակացն հրամայեին, ի յարձակել Թշնամեաց ի բանակատեղն յաւարի առնուլ զկարասին՝ պատեցան յետ կուսակ, և զգաղտնի ի Պարսից սպանին, զայլս հալածեցին. այլ ոչ կարացին հետեւակ գնդաւն հասանել զհետ հեծելոց Թշնամեացն։

Ալ պա և Պարմենիոն անկաւ յաղեղ և վտանգ, զի Ինազեոս յարձակեալ ամ հեծելազնդաւն ի թևէ պահարեր զմակեդոնացիս. և ազդ արար նա Ալեքսանդրի զվտանգն մեծ, և ասէ. Ա՛ղ հասիր, զի ոչ ևս ժուժկալել կարեմք։ Յայց Ալեքսանդր հալածեր զԴարեհ. և մերձ հասեալ փախստեից, անչնարին ևս շտապալ երթայր՝ զբռամբ ածել զՎարեհ, և վհատիլ զպատերազմին։ Յայլ գոյժ առեալ՝ ամապարեաց յետս յօգնութիւն ձախոյ թևին, մունչելով ցասմամբ՝ զի զորմն լքա-

ներ և զյաղթութիւն, և զի յաջողեաց Պարեհի փախչել, քան թէ իւր ի հալածել։ Այլ պատահեաց նմա յոչոչ այրուձին Թշնամեաց, որ աւար հարեալ զաղխամօղին՝ դառնայր գայր պնդակազմ, յաղթօղ մանաւանդ և ոչ յաղթեալ. և հարան ընդ միմեանս ուժգին և ամէն քան զառաջինն։ Օ ի կուռ զհետ միմեանց գային խուժադուժքն ի չոչ և ոչ ի հնչակս, և դժուարբին էր հերձուլ զնոսա և բեկանել. և ոչ որպէս միշտն՝ տեգրնկէց լեալ, հնար առնուին երիվարօքն։ այլ մեհանիւ ահագնեան զահագնան յերկիւղ յերիվարացն ընկենուին։ Այն անկան ի Թիկնապահսն Աղեքսանդրի աջք իբրև վաթսուն. և Աքիստիոն և Կինոս և Վենիդաս վիրաւորեցան. այլ զյաղթութիւն ինքն կալաւ, և ոչ ոք ի Թշնամեաց ապրեցաւ, բայց միայն ոք ընդ գունդս զօրաց նորա միջանուխ լեալ փախեան։

Օ գայժ առեալ Վաղեայ զպարտութիւն Պարեհի՝ լքաւ ընդ բեկումն իւրոցն, թէպէտ և ինքն զօրացեալ էր. և ոչ ևս սաստկացոյց զպատերազմն ի վերայ խուճապելոց Թշնամեացն։ Այլ զարմանայր Պարմենիոն ընդ յանկարծ Թուլանալ հարուածոցն. այլ որպէս արդարև հմուտ զօրավար, զնմ ինչ յօգուտ ի կիր արկեալ՝ խրատսեր զնա, և զերկիւղ Թշնամեաց համարեր առհասարակ պարտութիւն նոցա, և մեծ փառս՝ բովանդակել զյաղթութիւն։ Այլ քաջալերեալ արիացան զօրագլուխքն, այլ յայլմէ լեալ. և ձիարձակ մնացեալն ի վերայ Թշնամեաց յարձակեցաւ, և աղմկեալ և խռովեալ զնոսա՝ ի փախուստ դարձոյց։ Այնգր հասեալ Աղեքսանդր, զարմանայր ընդ զօրանալ անդրէն իւրոցն և ընդ բեկումն Թշնամեաց. և դարձաւ անդրէն հալածել զԱրսակ, եր և Պարմենիոն ընդ նմա։ Այլ էին մինչև յԱրբելա, քանզի անդ կարծեր գտանել զնա իւրով գնդաւն. այլ նորա անցեալ գնացեալ էր, Թողեալ Թշնամւոյն զդրանձս իւր և զաղեղն և գասպար։

Այս վախձան եղև մեծի աշխարհակործան պատերազմին։ Արբիանոս զԹիւ անկելոցն անդ ի Պարսից եւ բեսուն բիւր վարկանի՝ աւելի կամ պակաս, Թող զգերեալսն. յորմէ գԷթ զմեծ կորուստ նոցա իմանամք, և զմանեդմնացեացն սակաւ. զի զսոցա զանկեալսն նոյն ինքն Արբիանոս համարի նուազ քան զՀազար երկերիւր այր, առաւելագոյն մասամբ ի հեծելոցն։ Այրև պատերազմն այս յամենեան հոկտեմբերի [1], ի նոյն աւուրս [3673. 331]

1 Ջի Բեռերոփն հեւսն ամն հանդեպ մերոյ հոկտեմբերի։

յորս երկեամ մի յառաջ առ Խոսրով խմբեցաւ պատեր-
բազմին։ Իսկ վասն զի Վտուգամէր առ որով բեկաւն Վա-
բեր՝ էր աւան փոքր յատորեստան և անծանօթ, կոչե-
ցաւ պատերազմին այն Երբեղային պատերազմ. զի մեր-
ձաւորագոյն ի տեղի Ճակատուն էր Երբեղա քաղաք։

ԳՕՏՈՒԱՆՑ Բ.

Հրոաձել Հրէից զինուորսն ի Երբեղա, և Հաբելն, զի օձ է զի-
պեալ էր, և առնուլ ասաբ բազմագանձ ճեմարանէն. և հրկիզ առ-
նել զարդուանէս Պերսիոլեայ ի գինեբռոս։

Դիոդ. ԺԷ. 538։ Աւրէլ. Բ. 127. 133։ Պետ. յԱԽ. ձեռ. 685։ Կուրդ. Շ. ՇԼ։ Յոսէփ. Բ. ԺԲ։

Իսկ և իսկ ղՀետ յաղթութենէն զոհս գոհացողականս մատոյց դիցն Երբեսանդր. և ապա բաշխեաց պարգեւս բազումս արիացելոցն ի մարտին, և ետ նոցա ասպարանս և բարձ և պատիւ և իշխանութիւս։ Վանաւանդ յոյ-նական դնդին Հնորհս կալեալ՝ զի սպարապետ կացուցին զնա Հոմանք ընդդէմ պարսկախառն բանակին, հրա-մայեաց զՀամ բռնաւորս՝ որ յարուցեալ էին ի Հելլադա՝ բառնալ, և գործոյնսեալ զազգս յազատութենէ ինքնս-երին յիւրաքանչիւր իրաւունս կալ։ Յոյս առ պղատացիան գրեաց՝ կանգնել անդրէն զքաղաք նոցա վասն նախանձուն նախնեաց նոցա, զի եդին զանձինս ի վերայ հասա-րակաց ազատութենէ։ Յոյս առ կրոտոնացիան յԻտալիա առաքեաց բաժին յաւարէն՝ վասն փայիդայ ըմբշի կրո-տոնացւոյ մարդասիրութենէն և քաջութենէ։ Օ և նա յա-ռաջ քան զամս բազումս ի ժամանակի պատերազմին Վարայց[1], յորում Հոմանք Հոմանս լքին զընկերս Հե-լլենս՝ Համարեալ զբեկումն նոցա անկանգնելի, սպառա-զինեաց նաև մի մարտիկ յընտից իւրոց, և չորաս ի Վա-զամիս՝ Հաղորդ լինել վանգի Համազգեացն։ Օ ի յոյժ սիրօղ էր և պարգևատուս առաքինեաց Երբեսանդր, ա-սէ Պլուտարքոս. և պարտս լինի Համարել՝ անմահ առ-նել զյիշատակ նոցա, վասն ապագային արդեօ և նա-խանձելի ընծայելոյ զնոսա։

Ոայց Վարեհ յետ պարտութենէն՝ դիմեալ սակաւա-ձեռն զնդաւ ի Իկաս գետ, անց յայն կոյս. և խրա-տեալ ի բազմոց՝ քակել զկամուրջն, զի մի Թշնամին Հա-

[1] Լիւդոփ հարեանի զիւր զոյս Նշանակէ. Ը. ԽԷ։

լածեսցէ զնա, մեծախոհութիւն ետ սպառասխանի[1]. Վասն լինել ինձ կեալ մանուածք բիւրաւորաց՝ իմոցն և հաւատարիմ նիզակակցաց, և մատնել զնոսա թշնամեացդ. զի նոյն և նոցա իրաւունք են փրկութեան. Թողցի և նոցա Ճանապարհ անխափան։ Այս ընդ քաղաքս բազումս փախստեամբ անցեալ, եկն եհաս ի միջոցումն պահու գիշերոյն Ալբեղա։ Կնտի ընդ լերինս Հայոց դիմեաց ի Վարս, հանդերձ աւագանւովն և թիկնապահօք սակաւ արամբք. այլ զՃանապարհայն յաւելան ի նա Հոյնք երիս հազար։ Այս զՃանապարհն զայն եկն, քանզի դուշակեր դիմել Ալեքսանդրի ի Խաբելոն և ի Շօշ՝ յարգասիս յաղթութենն, և զի չմարթեր իսկ ամբոխիւ մեծաւ ընդ այն հետևել. իսկ ընդ միւսն այրուձի և կառք դիւրաշարժին, և եր երկիրն ընդ այն արգահանդ։

Ընդ սակաւ աւուրց եհաս Ալեքսանդր ի Ալբեղա, և եգիտ ի նմա սպաս բազում արքունի, և հանդերձս փարթամս, և ընտիր ընտիր ինչս ցանկալիս, և չորեքհազար զոր քանաքար, և զշատ մեծութենէն բանակին, զոր Դատեհ ի խազալ իւրում ընդդէմ նորա՝ եթող անդ, որպէս յառաջ ասացաք։ Ասայց հարկ եղև նմա վազ մեկնել անտի. զի ի նեխոյ հոտոյ դիականցն, որովք ամբաստանեալ ծածկեր, ախտք ժանաք Ճարակէին ի զօրսն. և դիմեաց ընդ գաշտս ի Խաբելոն, և յաւուրս չորս եհաս ի Վէնոխս. ուր տղբիւր հզակաւոր բղխէ յայրի կուսոյր առատ, որով զպարիսպն Խաբելոնի ասեն մածուցեալ։ Այս առաւել զարմանալի, վտակք հրեղէնք ընդ ծերպ ինն իբրև յանսպառ աղբերէ՝ հոսէին, և ուղխ նաւթի առատահոս ինքեալ ծաւալեալ՝ լիճ մեծ առ ծերպիւնն զործեր. և եր յար և նման նաւթին կոլոյ, և դիւրաւառնալ. զի չև ի հուր հոտոտեալ, ի շրջասիւռս Ճանչ բոցոյն բորբոքեր, և վառեր զվիշտն զայմ։ Օ կարի դիւրայրեաց անօսրուեցեր նորա ցուցին բարբառ թագաւորին ի հասանել նորա ի Խաբելոն. քանզի շնեթ անտի այսր անդր հեղեալ ընդ փողոցն՝ որ ածէր յարքունիս, ի գլխոյ ուղտոյն բոց ի նոսա մատուցին. և ի քեթել ական ընթացեալ բոցոյն ընդ շնեթն ծայր ի ծայր, և զի գիշեր ևս եր, ամ ուղտն բոցեղէն երևեր։

1 Քաւ լեցի ինձ մատնել զնա ես լեցի Ճանապարհ փախստի անդամ ի ձեռս թշնամեացդ զբիւրս խափան, որ ինձ էին։ Յոյժ։ բիւրոց նիզակակցաց. այլ և նո-

Իջրև մերձ եղև Ղեբեսանդր ի Խաբելոն, Ահազ՝ որ յետ Ճակատուն առ Ղբեղաս անդր ամբացեալ էր՝ եկն որդւովքն հանդերձ, որ ի չափ հասեալ էին, անձ-նատուր լինել և տալ նմա զքաղաքն։ Ուրախ եղև Թա-գաւորն ընդ գալուստ նորա. զի ոչ թեթև ինչ աշխա-տութիւն էր Հզրը և պաշարապինդ քաղաքին նուաճումն. և զի երևելի ևս էր այրն և զօրաւոր, և ի պատերազ-մին յայնմիկ փառաւորեալ արուեստիք, մարթէր օրինա-կաւ նորա յորդորել և այլոց, և անձնատուր լինել։ Եւ եմուտ ի քաղաքն առաջնորդելով զօրացն՝ որպէս ի պատերազմի. և բազմութիւն յոյժ ի վերայ պարսպացն խռնեալ կային, և բազմագոյնք ևս ընդ առաջ գային՝ վաղագոյն զնոր տէրն իւրեանց տեսանել, այր Հռչակ համբաւոյն առաջի նորա երթայր։ Ահագոհան պահպա-նապետ ամրոյն և գանձապետ՝ ոչ ինչ յետնեալ քան զԱհազոս ի սպաս Թագաւորին, ծաղիկ ընդ փողոցս ետ սփռել, և սեղանս արծաթեիս երկուստեք կանգնել, և խունկս ի նոսա և ազգս ազգս իւղոց անուշից ծխել, և ընծայս զՀետ բերել Թագաւորին հօտս խաշանց, զբազմութիւն ձիոց, և առիւծունս և յովազս գառագղօք։ Ո՛չ ետ գային մեզք՝ երգս պարսիկս նուագելով. և ա-պա քաղդեայք և գէթք և երաժիշտք բաբելացւոց, որ ստէպ նուագարանօքն երգեին օրհնութիւն Թագաւորին. և քաղդեայք զշարժմունս աստեղաց և գյեղանակաց փոփոխմունս գնային։ Խակ հեծելազունդն բաբելացի ի վերջ հետևեալ, չքեղ կազմածովք առն և ձիոյ զան-ցանէր զամենեսեան։ Եւ զամբոխն զՀետ հետևակա-զօրացն կացոյց Թագաւորն. և ինքն ի կառս բազմեալ, և Թիկնապահք շուրջ զնովաւ, եմուտ ի քաղաքն, և եկն որպէս յաղթանակաւ յարքունիս։ Եւ ի վաղիւն հրա-մայեաց ածել առ ինքն զՅեմ կահ և զգանձս Խաբէհի. և յարծաթոյն, զոր եգիտ ի Խաբելոն, բաշխեաց պար-գևս հեծելոց մանեղոնացւոց՝ միւսմ միւսմ վեց ինաս, և այլազգեաց՝ երկուս, և հետևակաց մանեղոնացւոց՝ կրկին ինաս, և այլազգեաց՝ չկրկին առնակին նոցա։ Եւ խրատեալ ի մոգուց՝ զորս ստէպ ի խոր հուրդ կոչէր, հրամայեաց կանգնել վերստին զմեհեանն կործանեալս ի Խաբերսեայ, և զԽելոն՝ որ վեհ քան զՅեմ էին պաշտեր ի Խաբելոն։ Եւ կացոյց ի վերայ իրաց աշխարհին զԱհազոս, և զՊողոդորոս ամիխոշե-սեցի ի վերայ զօրացն՝ զորս եթող անդ։

Ետայց աղմուկք պատերազմաց ոչ խափանեցին զախորդ

ժակ նորա և պատկուեցի գիտուեցոյ . և խօսեր ասէպ
ընդ քաղդեայս , որ ի վաղ ժամանակաց յաստեղաբաշ-
խուեցիսն պարապէին , և անուանիք էին ի գիտուեցն ;
Այլ ածին առաջի նորա զաստեղագիտուեցս նախնեաց Պրէպ. ա-
իւրեանց , զհազար ինն հարիւր և երից ամաց , ի ժամա- Սիմպլիկ. ն-
նակէ Ալեքսանդրի , առաքեաց զնոսա առ Արիստոտէլ : երիսիս. ք.

Ի Հաբէլոն առաւել քան յայլ ամ քաղաքս յամեալ
Ալեքսանդրի , արար պատս մեծ հրաշանագաց զօրակա-
նին : Վասնզի անդ գրգռանք և հեշտուեցիք և ծանակա-
գոյն զեղխուեցիք ի կրօնս համարէին . և ոչ տիկնաց մե-
ծուհեաց՝ տաի և պայման գոյր լիտուեցեանն , յոր պարտ
ծէին մանաւանդ առանց ամօթոյ և հայհոյանաց
ծածկելոյ զնաղուեցիսն : Ընդ բանակն յաղթօղ Ալեքս
ընկղմեալ ի գրգանս Հաբելոնի՝ յաւուրն երեսուն և
ի չորս , ոչ ևս կարէր արուեցիսս կատարել՝ եթէ հասա-
նէր նմա մարտնչել ընդ ոսոխի : Այլ որ ուստեք ուստեք
գային յաւելուին ի նա զօրքն , նոքա սակաւ ինչ փոխա-
րինեին պատսն : Վասնզի Ալինատա վեց հազար հե-
տեւակս , և հինգ հարիւր հեծեալս մակեդոնացիս Ալե-
տիպատրեայ ած . և վեց հարիւր հեծեալս , և երեք հա-
զար և հինգ հարիւր հետեւակս թրակացիս , և չորեքհա-
զար հետեւակս վարձկանս ի Պելոպոնեսեայ , և չորեքա-
րիւր հեծեալս : Վարձեալ նոյն ինքն Ալինատա անձնա-
պահս թագաւորին հած յաղտագունդ մանկտուցն մա-
կեդոնացւոց պատանիս յիսուն , որք և ի ձաշ սպասաւո-
րին նմա , և զնժոյգս նորա ի պատերազմի ածէին , և
յորս ընդ նմա երթային , և փոխանակաւ պահ ունէին
առ գրան սենեկին նորա : Ի գնդէ աստի աւագ իշխանք
զօրաց և քաղաքաց ընտրեին :

Ի Հաբելոնի մեկնեալ եմուտ Ալեքսանդր ի Սիտա
կենէ գաւառ , յերկիր բերրի և առատ ամ բարեաք . և
եղև անդ ժամանակս բազումս : Այս առ ի չքեղկելոյ զօ-
բացն անգործութիւն , եղ մրցանակս քաջացն , և դասա-
ւորս մարտադիրս կացոյց՝ զակնատեսս քաջութիւն նոցա
յառաջին պատերազմունսն , ի ըստ այմ դատեալ՝
զմրցանակսն տացէն : Այս ուրեքից արանց , որ կորով-
գոյնք գտան , ետ իշխանութիւն ի վերայ գնդից հազար ա-
րանց . վասն որոյ կոչէցան հազարապետք . զի անդ նախ
կազմեցան հազարեակք գունդք հզօրք , քանզի յառա-
ջագոյն հինգ հարիւր այր ի մի գունդ կազմէին , և գնդա-
պետք ոչ ի վարձ քաջութեան կային : Ի չքնաղ տեսարանն

խռնեցան զօրքն, ոչ ի գինւոյ միայն քաջուքեաւ մրցողացն՝ այլ և ի քինւոյ դատաստանի մատուադացն. զի ոչ ինչ դժուարին էր զօրաց, ի զինական մրցուքեաւ անխոթ դառաւորացն, դատել՝ թէ ակնառուքեամբ եւթէ ըստ քաջուքեաւ վարձատրեցին։ Այլ հարկ էր արդարուքեաւ բազմաւ պարգեւացն բաշխել։

Յազուադ ինչ կարեւոր փոփոխմունս արար ի հրահանգս զինուց, որ ի նախորդաց նորա օրինադրեալ էին։ Օ ի զամ այրուձիոն ի մի գունդ կազմեաց, ոչ ինչ զայլ ազգին և զինիկն խտրեալ. և ի վերայ նոցա կացոյց՝ զօրս ինքն կամեցաւ։ Յակ յառաջագոյն ընդ այլ և այլ դրօշս ազգ ազգ խմբէին, և գնդապետք համազգիք իւրաքանչիւրոց կային։ Այլ պատերազմականն փոյ կոչ առներ ի չոս. այլ զի ամբոխ ազգաւորին զՆուշան փողոյն նուաղեցուցաներ, նմին իւրի հրամայեաց դրօշ զնոր բանաւն իւրով պարզել ի տեսիլ համ զօրացն։ Վարձեալ և բոց ի գիւղերն, և ծուխ ի տունջեան եդ ի նշան։

Այսպա գիմեալ ի Շօշ, յաւուրս քսան ի Յաբելոնէ անդր եհաս։ Այլ ի մճռել նորա անդր, Աբդոլտես կուսակալ երկրին յղեաց ընդ առաջ նորա զորդի իւր՝ հրաւիրել զնա ի քաղաքն։ Օ այս կամ յանձնէ արար Աբդոլտես, և կամ Թերևս ի հրամանէ Վարէհի, զի յաջսեցէ Աղեքանդր յաւարառութիւն։ Վառօք բազմօք մեծարեաց Աղեքանդր զազատորդին. և նա առաջնորդեաց Աղեքանդրի մինչև յՐհովասպ գետ հաւկաւոր՝ աջնէ և բարեհամ ջրոյն։ զի անտի ևեթ ըսկէին Թագաւորք Պարսից, և ուր և երթային՝ զհետ իւրեանց և ջուր ի գետոյ անտի ածէին յանօթս արծաթիս, եռաւոյեալ նախ ի հուր։ Ընդ առ գետոյն եկին առ նա Աբդոլտես արքայավայել ընծայիւք. յորս էին և տաճիկ ուղտք կարի երապշնեցաք, և փիղք երկոտասան՝ զորս Վարէհի ի հնդկաց տուեալ էր ածել։ Այս մտեալ Աղեքանդրի ի քաղաքն, էառ ուսք գանձս բազումս անհաշիւ. և ձոյլ արծաթոյ, և քծուսրս իբրև հինգ թիւր քանքարաց, և կահ և կարասիս, և բազում այլ ինչ անգին՝ որ ի վաղ ժամանակաց հաւաստաւորեալ ժողովրդոց մեքերեալ էին, զբիւրոն և զկեանս նոցա կեղեւով խիստ հարկահանուելք։ Այս որ քնիկ Թագաւորացն կոչ ծեր պատրաստեալ և որգւոց նոցա և զաւակիկ նոցա յետ նոցա, ի միւմ ժամու ձեռն օտարին կալաւ գայն, և ի պաշտաձն ի կիր արկ։ Օ ի որպէս հաւատարիմ գանձապետ՝ ոչ յայլ ինչ շահագնդ անբաւ գանձուցն Թագաւերք

Ե՛ր.ա.ձ՟ը։

պահել, բայց միայն ի մշտնջենական քաջայն, և ի վաստա-
կաւորացն վարձս։

Այր ընդ գանձան և լիասուն բիւր կին՝ երմիոնեան
Ծիրանւոյ [2], զի Աերմիոնէ ազնիւն ելանէր. և ի հա-
րիւր և հինսունն ամաց գանձեալ պահէր Ծիրանին այն ան-
եղծ և փայլուն։ Այնն և այլ չքնաղ և ցանկալի իրք,
զորս Աիսերքսի Աղեքսադայ բարձեալ եր. և անգրիք
պղնձիք Աբմոգեանն և Աբիստոփհանի, զորս Աղեք-
սանդր դարձոյց Աթենս. և ելին մինչև յաւուրս Ադ-
րիանոսի անդ [3]։

Ի մեկնել գնալ իւրում ի Պարսս, կացոյց ի Շ օշ
իշխան զԱրքեղայոս, և ետ նմա գունդ պահակական ե-
րեք հազար արանց. և ի վերայ միջնաբերդին կացոյց
զԱազար զաւագ գրանն. և նմա ետ գունդ մի հազա-
րաց մակեդոնացւոց, զներս ի զօրացն՝ որ ոչ կարէին
ընդ կարաւանին գնալ։ Այս զԱզոլիտ կացոյց ի խու-
ժաստանին նախաբաք։ Այս եթող ի Շ օշ գմայր և զոր-
դիս Պարեհի. և բեհեզս ծիրանիս բաշուձն՝ որ ի Ադ-
կեդոնիոյ յղեալ էին նմա, և զգեստս մակեդոնացիս
Ճոխս ետ Աիսիգամբեայ, և զսատարս ևս այոցիկ. զի
զնմ մեծարանս որպէս մեր սերելոյ առնէր նմա։ Այս
ասաց նմա ի ձեռն հրեշտակի, զի Թէ հաճոյ լիցին նմա
գործածքն՝ հրամայեսցէ սատարացն ուսուցանել Թո-
ռանց իւրոց գաստերաց՝ գործել զգեստս ի զբօսանս յընդ
ծայուն նմա։ Ետայց Աիսիգամբեայ տʼաձեռն ընդ պարթ-
ևեն, ելայ ի լսել զբանն. զի մեծարանքն այն Թուէին
նմա յերգիծանս. քանզի առ տիկնայս Պարսից չիք ա-
ռաւել նախատելի ինչ քան զսայ գործել։ Այս դարձան
ընծայաբերքն առ Թագաւորն, և պատմեցին նմա զորպէս
մուԹի տիկնոջն. և չքաւ լինքնին Թագաւորն՝ անբասիր
առնել զանձն, և մխիԹարել զնա, և ասէ. Աչս զոր
զգեցեալ եմ, տիկին մայր, քերցն լինց գործած և պարթ-
գև է. բնիկ սովորուԹիւն չանցոյց զիս. մի զանգիտել
իմ ի նախատինս ընկալցիս։ Աէ ինչ ի բարւոյ և ի սո-
վորուԹեց աշխարհիդ՝ զորս ուսոյ պակաս արարի մինչև
ցայժմ, որպէս Թուի ինձ. զի ուսոյ Թէ ի յանցանս հա-
մարի առ ձեզ՝ որդւոյ առաջի մեր անհրաման բազմել,

1 Մարդի հանէ առնել խոշոմ գանձոյն ըստ այնմ, զի նմա ծիրան՝ ոչ ջաճառեր գնեն հարիւր տասն կոյն։

2 Երմիոն տազա Աերգեա, ուր գերազ այսց ընծայեն Աղեքսանդրոյ։

3 Ջատրի տերեսոյն Աերմիոնէ և Աերգեա Աերմիոնէ, զոր Աերգեան Աե-
ղեսոպերի ընծայէ, ոչն ի Վեղե-
սոպերի ընծայեն Թագաւորաց։

և զու ինքնին գիտես՝ զի առանց քոյոյ հրամանիդ ոչ բացվեցայ, և արգելուի՝ յորժամ երկիր պագանելն կաւ մէիր ինձ, և առ՝ի մեծարանս զկոչումն իսկ զՈղմպիայ մոր իմոյ քեզ կուտեմ։

Երկու ինչ, որպէս ինձ Թուի, կարեւորս և ընտելագոյնս ասել՝ի դեպ է՝ի միտ առնուլ։ Նախ զի պարսիկք, ազգ խրոխտ և ամբարհաւաճ, զոր մեծարանս ճնոզացն առնեին։ Օ՜իւրոսին աստանօր յիշեմ զմեծին, որ՝ի բազում աշխարհակալութենն և՝ի ծայր բադգին՝ ոչ ընկալաւ զՆիաքսարայ քեռւոյ իւրոյ զԿրաւէրն ցանկալի, զի տայր նմա զդուստր իւր կնութեաճ և զայմ աշխարհն Պարսից պաշտատական, մինչև եհարց զծնողս իւր, և էառ հրաման՝ի նոցանէ։ Նոյնպէս և մեք ոչ առեալ եաւ ինչ ուսանիմք՝ զի և չեր համարձակելի առնոսա որգւոյ, թէպէտ Թագաւոր եր և Թէ հզօր, առաջի մոր անհրաման բազմել, և՝ի յանցանս համարեր այն՝։ Այժ՝ի բարուց ասել այլ ազգ զմեր գտանեմ։

Նա երկրորդ, երանելի նահնոց պարզութենն ցանկալի հետք՝ի վէպս յայս նշմարեւ. զի՝ի վաղ ժամանակս և տիկնայք մեծազգիք՝ի վաստակս պիտանիս և՝ի տարժաճ նաւարս իսկ պարապէին։ Որ ինչ գիրք զՊերեկայ և զՊաբելայ և զայլոց բազմաց ասեն, այն յայտնի է ամենեցուն. այլ և՝ի Հոմերոսի գիրն տիկնայք արքայաճունք ջուր յաղբիւրաց բարձեալ բերեն, և լուացս առնեն։ Նա ասա քորք [2] Պղեքսանդրի, գտաերք հզօր Թագաւորի, զղեակ եղբօր իւրեանց օստայնանկեն։ Նա Լուկրետիա անուանին ընդ աղախնայսն զասր մաներ։ Նա տիեզերականն Գոստոս զձեռագործս տիկնոջ և քեռ իւրոյ զգենոյր ժամանակս բազումս։ Նա ոչ յառաջ քան զբազում ժամանակս՝ առ հիւսիսական ազինս համադամք՝ի դշխոյին խաչագործելին՝ի ձաշս։ Համառօտիւ ասացեալ՝ զբազումն և վաստակ, և առանին իրաց հոգ, և ընդստուն կեանք ազգի էն անկ, յորս և սահմանեացն իսկ զնոսս ՚ՁԾախնամ տեսչութեի։ Պայ գայսոսիկ, որ ընդ աշխարհի գրեթէ առին սկիզբն, արհամարհս ինն զեղծումն յաւետենս գործեաց։ Նա զինչ ընդ այնոցիկ փոխանակեաց ընդ խիստ և ընդ ուժգին ձգանց, որոց կարող լիներ տկար քնութենն առողջ

1 Գիտեմ զի չէ օրէն առ ձեզ. բազմել որդւոյ առաջի մոր՝ առանց նորա հրամանին։ Կ. Կ--ուց։

2 Մայր, այս զոր զգեցեալս եմ՝ ձեռագործ քերցն իմոց և պարգև է ինձ։ Կ. Կ--ուց։

անդէաձբ , և ընդ առաւելն երկաեր բազմաղազաղ կե-
նացն յօգուտ : Վ|իրգ յուլիանէ , անգոծձուելի ընդ-
արմացուցիչ , ընդվզրախօսուելիսն , մտոտի զբօսանքբ ,
ձատերասիրուելի և առ ի խաղս մնալուելի : Լ|ըդ եր-
կու այս նկարագիրբբ կացցեն ընդդէմ միմեանց , և տես-
ցի՝ յորմէ զգօն և ողջախոհ միտբ և չշմարտին և քնա-
կանին ախօրժակբ դատնիցին : Լ|ԱՀ զայս պարտ է՝ ի
փառս իգական տոհմին և ազգիս վկայել , զի բազումբ և
առ մեզ տիկնայբ , և ս և մեծազգիբ , իբրև ի պարտս ինն
և ի զբօսանս վաստակին՝ ոչ ի մտտիս , այլ ի հաստա-
տագոյն վաստակս և ի հայեցայեել անձամբ անձին ինչ
ի կահուցն : Չաւելից խոկ , զի և բազումբ ի զարգա-
ցումն հանձարոյ պարապին՝ ախօրժաբար զբրովբ եկեալ
ի մտագիբ և յօգտակար ընձեռցումն :

Լ|ղեքսանդրի արգահատեալ զ|իսիգամբիս , և մեկ-
նեալ ի նմանէ , եկն հասս ի գեան՝ որ ի դաւառակա-
նացն կոչեբ Պասիտիգրիս [1] : Լ|ս ինն հազար հետևակօք
և երեբ հազար հեծելովք՝ զբոս յագբիացոց և ի Չու-
նաց վարձեալ էբ , և երիւբ հազարօք Թրակացւովբ օգ-
նական գնդաս անցեալ յայն կոյս , եկն Յ|Ղբսիա գա-
ւառ՝ որ մերձ է ի Շ օշ , և ձգի մինչև ի սահմանս Պար-
սից , և կիրճ անձուկ անջրպետէ ընդ նա և ընդ սեսա-
ցիս . և կուսակալ գաւառին էբ Մ|ազատ նահապետ :
Ս|ա ոչ ըստ դէպս և ըստ բանտի գնահանձն փոփոխեբ .
այլ տիրասեբ անդրժելի խորհրդով եդ ի մոի միտս ի
սպառ դիմամարտել : Լ|ս էբ ամբացեալ ի քաղաքի իւ-
րում ի սեպացեալ գահաւանդի , չուրջ վախիւբ անդրն-
դովք պարսպեալ : Լ|ընդ ի վտանգել քաղաքին՝ ի միջ-
նաբերդն ամրացաւ . և անտի հրեշտակս արարին քաղա-
քացիքն առ Թագաւորն արս երեսուն աղաչաւորս , և
զ|Մխիգամբիս յաղերս ածեալ հաշտ արարին գնա : Լ|ս
ոչ միայն ներեաց Մ|ազատեայ , զի էբ կարևոր ազգական
Մ|խիգամբեայ , այլ և զմմ գերին արձակեաց , և ազա-
տեաց զամենեսին՝ որ նուաձեցանն , և յատաջնին կարգն
եթող գնոսա . և վերծոյց զքաղաքն յաւարհարուելէ ,
և հրաման ետ քաղաքացւոցն գործել զերկիր իւրեանց
ապահարկ առանց ՝մմ սակի և բաժից : Լ|ս առաւել
ինչ չնորհեցէ մեր որդի յաղթական :

Օ ոբսիացիսն նուաձեալ , ապա զկնս ի զօրացն ետ
Պարմենեայ ածել ընդ դաշտս . և ինքն թեթեւագնէս

1 Սա այլ գետ է , քան ԷՏիգրէ :

պնդօքն խաղաց ընդ գօտիս լերանցն մինչև յարևմտեան Պարսից. և յաւուրն հինգերորդի եհաս ի պահակն Հօշայ։ Ընդ Արիոբարզան զբարալետան՝ որ յամ կոձմանց սեպասեալ եր՝ յորիւք հազար հետևակօք և եօթն հարիւր հեծելովք կալեալ, զնուժական զօրսն ի գահ լերինն կացուցեալ եր բարձր քան զնետընկեց. և պատուար ի լերանցամէջ կիրճն ամբարձեալ, բանակէր ինքն զօրօք առ ստորոտամբն։ Այլ իբրև մատեաւ յառաջ Ալքսանդր պատահել նմա, վէմս ստուարս անհեղեղս ի բարձուէ լերինն խուժական զօրքն գլէին. որք առապարաց ի հոլովելն Թիկդս տուեալ, և աստիճ ևս ոլորմանբ վայրաբերեալ, ողջոյն իսկ գունդս զօրաց համայն ընկճեալ խորտակէին։ Ընդրմ Թագաւորն զարհուրեալ՝ փող հնչեցոյց ի նահանջ. և յոյժ տրտմէր, արգելեալ յանբռնադատ յանառիկ կիրճն։

Այլ մինչ դեռ ի վարանս եր, մի ոմն ի գերեաց՝ յազգէ յոյն՝ մատուցեալ յանձն էառ ածել զնա ի կատար լերինն ընդ այլ ճանապարհ։ Այլ նորա Թողեալ զբանակն և զզօրսն ի Պրատեր, և պատուէր տուեալ՝ խարդախ խիտ առ խիտ բորբոքել, զի մի Թշնամիք կասկածիցեն զշուրջ իւրմէ, էառ ընդ իւր գունդս ընտիրս, և դիմեալ գնաց ընդ զարտուղի ճանապարհ՝ ընդ որ առաջնորդէրն։ Այլ էր ճանապարհն անգնալի, և քարաժայռք սոքրիք՝ ընդ որս և ոտին կռուանն զօրացն Հազիւ գտանէր։ Այլ հիւսք ձեանց բարձրաբերձք, զոր հողմն դիզանէր, տապանապէին զնոսա յոյժ. զի որպէս ի վիշս անկեալ զօրացն ի նոսա՝ ձիւնաթաղ լինէին. և որ ընկերին ձեռն տայր, յաձախ և ինքն ընկղմէր։ Այլ արշաւիքք գիշերոյ, և երկիրն անծանօթ, և զառաջնորդէն կասկած, յաւելուին գերկիւղս։ Այլ անդնարին ձգամբք և վտանգօք հասին ի գլուխ լերինն. և ինքեալ տեսին զպահակեցաց գունդն Թշնամեաց, և եկիր կացին սպառազէնք յետոյ նոցա՝ մինչ նոքա անկասկածք ի բազում յապահովի էին։ Այլ ոմանց ի նոցանէ յանդգնեալ և ընդդէմ դարձեալ կոտորեցան. և ձիչ նոցա և փախուստ տեսին սաստափ դիմելոց ի բանակն՝ աշս պակուցանօղս ածեալ անդր, նախ քան զպատերազմ զզօրսն ի փախուստ ձեպեցին։ Ի չորինդն ամբոխին յառաջ մատեաւ Պրատեր, որպէս ի մեկնել իւրում պատուիրեալ եր նմա Ալքսանդր, և կալաւ զկիրճն՝ զոր չև կարացեալ եր նուաձել։ Այլ ընդ այլ կողմն Փիլոտաս և Ալկիմաս և Կենոս և Պողիսպերքեան հարին խորտակեցին ի սպառ

զպարսիկս, անփախուստ յիմ կողմանց պաշարեալ զնա. և սակաւք ի նոցանէ ապրեալքն պախարիժք եղեն։ Ասոյ Աքիոբարզան զերծաւ հեծելովք ումանիք ընդ լերինս։

Զքեքսանդր անմեկնելի ի նմանէ բաղդիւն զերծեալ ի մծտալուստ վտանգէն, գիմեաց անդանդաղ ի Պարսս. և զձանապարհսն եհաս առ նա գիր ի Տրդատայ, որ կոչակալէրն ի Պերսեպոլիս, զի ի համբաւ գալստեան նորա՝ կամէին քնոսիկիք քաղաքին կողոպտել զգանձս, զորս յատանգի եդ առ նմա Դարեհ, և ձեպեր գնա՝ վաղ հասանել ուշել զայն. զի գիւրին էր առաջի նորա ձանապարհն, և ընդ Ասորաստ՝ միայն մնայր անցանել նմա։ Աչ եթող ղՀետևական, և ընդ այրուձին խոնջ յերկայն ճանապարհէն՝ ցայգագնաց լեալ, անց զԱրբաստ խաւ ընդ կամուրջն՝ զոր կանխեալ աւուրբք յառաջ կա ռուցեալ էր։

Իբրև մերձ եղեն ի քաղաքն, տեսին գունդ մեծ. տե սիլ ողբալի յոյժ գունն ուրեք ի վեպս ընթերցեալ։ Օ՛ի էին Հոյնք գերեալք ի պատերազմին՝ որք ծերք իբրև ութ հարիւր [1]. ընդ որս անթնաւթիք ազգս ազգս պատուհասից ալարեալ էր պարսկաց, զկիսոց ձեռս հատեալ, զայլոց զոտս, զումանց զունչս, և զայլոց ումանց զականջս, և խարտեաւ ի դէմս նոցա տառս պարսիկս գրոշմեալ. և պահէին զնոսա յատակ նշաւակի ի չարե ցուցանել ի նոսա զաչս և զանագորոյն սիրտ իւրեանց։ Աչ թուէին նոքա խուճապք մանուանդ, և ոչ մարդիկ. զի բարբառոյն միայն գրեթէ ճանաչէին։ Ալ կարաց Աքեքսանդր առանց արտասուաց հայել ի տեսիլն յայն. և ի կարդալ նոցա միաբան զողորմելիքն, քաջալերեաց զնոսա, և խոստացաւ գարձուցանել զնոսա առ կանայս իւրեանց ի հայրենիսն։ Աչ նոքա փոխանակ ինդուլեիք՝ խոովեալ և վարանեալ, և կէաք տարակուսեալ ասէին. Ընդէր երթայցեմք տեսիլ լինել Աղեքսանդրի սովին կեր պարանոցք՝ որ ամենայն քան զեղեցիկ արշաւիկ էն։ Թաքստեամբ միայն սիրիկիցիք ի թշուառութիւնս, և գաւառ ցանկալի հիքացս՝ լիցի միաւորելիք և մուացօրեք կորուսելոց բարեացն։ Աչ որպէս զերկայն ուղին հատա նիցեմք. հեռի Աղբոպայ վարեալք ի ծագս արևելից, տակաւցեալք ի ծերուիթէ և խեղք, տուկայցեմք աշխա

1 Այլ գէթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Հայոց։
2 Կորիւնոս ընթերցաւոր այր զերկիան ասէ։

տուլենն՝ որ զյաղթող բանակն պարտասեցոյց ։ Ի սու ի՛ ձի մեզ ծածկել զԹշուառուն մեր , և կատարել զնեռս յերկիր՝ որ ի տեսիլ աղետից և չարեաց մերոց սովոր եալ է ։ Լակ այլք , յորս Տայրենասիրութիւն քան զնոմ կիրսն բռնանայր , ասէին ։ Որ ի սիրտս մեր չէր անկեալ՝ չնորհէն դիք , զՏայրենիս զկին և զորդիս և զնոմ բա րեքենս կենաց՝ վասն որոց առելի է մահ ։ Այրե մինչև ցայժմ Տամբերեցաք դառն լծոյ գերութենս . և զինչ քան զայս դէպք բարեբաղդք կայցեն , չնչել մեզ դար ձեալ զսիւք ազատութենէ , դառնալ ի բնիկ սովորութենս և յօրէնս և ի սրբութենս , և մեռանել մերձ առ կանայս մեր և առ որդիս ։ Այլ առաջնոցն աղերս յաղեցաց , որք խնդրեցին ի Թագաւորէն կալ անդէն յաշխարհին՝ ուր ի քաղաւմ ամաց կէին ։ Յոր լուաւ նոցա Թագաւորն ։ և պարգևեաց միւմ միւմ նոցա երեք Տազար դրամակշռիւ , և պատուհաստ տան՝ հինգ առնացի և հինգ կանացի , և կրկին լուծս եզանց՝ ի գործել զերկիրը և ի սերմանել ցորեան ։ Յոր գաւառապետին պատուէր ետ զգուշանալ զի մի ոք մեղիցէ նոցա , և յոմ Տարկաց ազատ ի բաց արձակեալ լինիցին ։

Այս է Թագաւորել . չմարթէր զկռնաւեալ անդամս նոցա յանգուիթ պարսկացն անդրէն դարձուցանել , այլ յաղատուլենէ և յապահովի և յառատուլենէ կացոյց զնա սա ։ Յրանելի է Թագաւոր՝ որ ընդ բարեբարելն բերկրի , և այր աղիք գիւրագորով են ի Տէգս ։

Ի վաղիւ անդր ժողովեաց Ալեքսանդր զզօրավարսն , իսօսեցաւ ընդ նոսա և ասէ ։ Ձիք քան զՊերսեպոլիս քաղաք աղիտարար Յունաց , որ նախնի Թագաւորաց նիսան է Պարսից և մայրաքաղաք աշխարհին . անտի յորդեցին Տեղեղք զօրաց՝ ոյսդանել զԱլեքսադ . անտի երբեմն և Դարեհ , և Ինքեքսես զՏետ նորա , զաղամս ղէտ մարտին զնանձ ածեալ բորբոքեցին յամայութիւն Ասորոյս ։ Կործանմամբ քաղաքին այսորիկ՝ զնախնեաց ոգւոցն զվրէժ խնդրեսցուք ։

Այսց կանխեալ փախեան անտի պարսիկք , յո ուրեք ոք և աՀապարեաց երկիւղիւն . և եմուտ անդր Թագաւորն փաղանգաւն ։ Ալ էր անդ աւար բազում ի յադուրդ ագահութեան զօրացն . և զամենեսեան՝ զորս և գտին ի քաղաքին՝ կոտորէին ։ Ալոց Թագաւորն վաղվաղեաց արգել զնախձիրն , և մի ի պարկեշտութէն կանանցն Տնասակար լինել ։ Ինաղաքս բազում մեծագանձս , զկնս պատերազմաւ , զայլս դաշամբք , կալեալ էր ։ այլ

կարի յոյժ առաւել եգիտ ի սմա գանձս։ Օ՛ի այսր զամ աշխարհին մեծութիւնս իբրև ի չտեմարանս ամենեսեան էր Պարսից. արծաթ և ոսկի շեղջակուտեալ, և կահք և հանդերձք անգին. զի անդ զեղխութիւնն արբունիք էին, և չէ գտաւ ի գանձսն երկոտասան բիւր քանքար, որ ի ծախս պատերազմին սահմանեցան. և վեց հազար քանքար յաւելան ի կշիռն մեծ, ի նուաճել Պասարդադայ քաղաքին՝ որ ի Կիւրոսէ կառուցեալ էր, և անդ Թագաւորք Պարսից զԹագ կապէին։

Ինչ դեռ Աղեքսանդր ի Պերսեպոլիս էր, և կաղմէր ի չոր ընդդէմ Դարեհի, արար ինքեան մեծ բարեկամաց իւրոց, և գինեբռաս անչափ։ Ի կանայս՝ որ էին ընդ կոնակամն՝ էր և Ստատիկեցի, ընդ որում ի ժամանակին յայնմիկ Պտղոմեայ ոգին կապեալ էր՝ որ ապա Թագաւորեացն Աղեքսիպտոս։ Կա յընթրիսն մեղմով և Ճարտարութիւն գովեալ զԹագաւորն, որպէս է այնպիսեացն յաձախ սովորութիւն, ապա ի վերջնում նուագին զուարթութիւն և քաղցրութիւն ասէ. Ճանկալն էր ինձ գեղեցիկ զբաս առնել կոնոյս, և հրդեհել զՀայաստան կապ արբունիսն Պարսից՝ որ զԱթենս հրձիգ արար, և ջահ ի ձեռին՝ ինձէն զհանձն արկանել յանդիման արքայի, զի պատմէր ընդ ամ երկիր՝ թէ կանայք ընդ Աղեքսանդրի Հայոց արշաւեալ, առաւել քան զամ զօրաւորս՝ որ ընդ ծով և ընդ ցամաք մարտնչէին, լուծին զվրէժ Հայոցդ՝ փոխանակ ամ չարեացն՝ զոր արարին ընդ նմա Պարսք։ Ոչափս հարին ամ կոչնակաքն. և Թագաւորն յարուցեալ յընթրեացն, ծաղկապսակ ջահ ի ձեռին մատեաւ գործել զմեծ քաջութիւն։ Ոչ ամ զօրքն ընթացեալ զհետ նորա աղաղակաւ պարսիք և կայթամաք, շուրջ եղեն զպալատամն. և այլ մակերդոյ նացեքն ի շուինդն աղաղակին դիմեալ ջահիւք լուցեալք, հուր հարին շուրջանակի զասպարանիցն։ Ասյց Թագաւորն երագ զղջացեալ՝ հրամայեաց խափուցանել զհրդեհն. այլ տարաժամ էր հրամանն։

Աղեքսանդր առատաձեռն էր ի բնէ, և յաջողութիւնք յաւելին զմիտուն նորա ի բարերարել. և քաղցրութիւն և մարդասիրութիւն արգոյ ևս յոյժ զպարգևան ընծայեցուցաներ. և ևս առաւել ազատագունդ մանկտւոյն մակերդացոց՝ Թիկնապահաց իւրոց յիսնից՝ առատաձեռներ։ Որովք շռայլելն Թուեր Աղեմպիայ մեր իւրում. որ և զբեացն իսկ առ նա, և ասէ. Լաւ է առատաձեռնել առ բարեկամսդ արքայաբար. այլ և առատաձ-

ԱՄԱՀՆԻՔ ԹԷ չափ և պայմանք են։ Ի ագաւորացս հաւատասրես զնոսա. և մեծացեալ ի քէն, յոլովն իւրեանց բարեկամս ի նուազումն քոյոցն։ Օ այս Ղևմպիա յամառ գրէր առ նա. և ոչ ումեք զդիրս նորա յայտներ Ալէքսանդր։ Ա.յլ ի միամ աւուրց մինչ դեռ ընթեռնոյր զմին, և եր բաց ի ձեռին նորա, մատեաւ Լիւեստիան և կացեալ յուսոյ նորա, ընթեռնոյր և ինքն։ Լաւ ոչ արդեւ զնա Թագաւորն. այլ հանեալ զմատանին, եդ զկնիքն ի շրթունս նորա՝ զի մի ումեք յայտնեսցէ զայն։ Լաւ առ մայր իւր պարգեւս մեծագինս յղեր, այլ յիրս աշխարհին և յառաջնորդութիւն՝ ընաւ չմերձեցոյց զնա. և ի գանգատելն նորա դառնագին, երկայնամտեաց ընդ խոժոռութիւնն նորա։ Լաւ Ա.ՀՆտիպատրէայ նամակ առ բաստանութեանց ընկալեալ վասն նորա, յրնթեռնուել զայն՝ ասէ. Ա.յլ չգիտէ Ա.ՀՆտիպատրոս, զի կաթիլ մի ի մայրենի արտասուացն զրիւրս այսպիսւոյ նամակակցոյ եղծանէ։ Լաւ քանիւն և գործով յայտ արար, զի ընդ որգւոյ պարտ՝ քաջ գիտէր և զբարւոք քաղաքավարութիւնն, և խեղամուտ էր մեծի վտանգին՝ Թողլոյ զառաջնորդութիւն աշխարհին և Ա.ՀՂևմպիա, ի կին մի այսպիսի։

ՑՕԴՈՒԱԾ Ժ.

Դարեհ վերնել Ա.ՀԷքբատանայ, և նեղփաս կալեալ կապել զղեկապետ ի Ռնսեայ զբաւվաբք Ռակրբաղաց. և վասն Ռնսեան փախըստեանն ի տալեալ Ալէքսանդրի, և խոցոտելոյ զԴարեհ, որ ել հասեալ Ալէքսանդրի՝ անդէն մեռանի. և առ Ա.ՀՀսկեմենէս զբէն նորա յղել Ալէքսանդրի։

3674. 330 Պիտ. ԺԷ. 540։ Աբրհան. գ. 133։ Պլոտ. յԱՀ. 689։ Կուրտ. Ե. 2։ Յուսեփ. ԺՅ. 6Է։

Օ Ղերսեալոյս և զՊատարագ տուաձեալ, խորհուրդ կալաւ Ալէքսանդր երթալ ի վերայ Դարեհի՝ որ եր հասեալ Ա.ՀԱրբատան ի մայրաքաղաք աշխարհին Պարսից։ Լսին տակաւին Դարեհի երեք բիւրք հեւեւակաց, յորոց չորեքհազար Հայոյն մինչև ի սպառ հաւատարիմք ընդ նմա կային. և այլ չորեքհազար պարսաւորք կամ նետաձիգք էին նմա. և հեծելազ աւելի քան զերեք հազար, առնեղբին զրեթէ բակտրիացիք, որոց Լհեսոս մարզպետ Ռակտրիոյ զօրավարէր։ Դարեհի առ փոքր մի զարտուղեալ յարշաւէ ձանապարհէ, և յառաջ վազեալ զկարասին, և զսպայս զօրացն Ժողովեալ խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Ա.յրք զինուորակիցք իմ, ի բիւ-

րուց բիւրաց աշխարհազօր բանակիս՝ գուք անյողդողդ կացէք ընդ իս յամր արկածս բաղդին. առանց ձերոյ հաւատարմութեդ և ախդակազմ արուեստից՝ ցնորք էին թուէին թագս ։ Պատալիքք և դաւաճանիք արդ ի քաղաքաց իմ իշխեն. ոչ ընդ քաջութեն կալեալ զիշխանութի, այլ զի ի վարձս անարժանին հրապուրեալ սատակեսցի քաջութի ձեր ։ Այլ դուք, զի յանձն առէք բաղդին ի մէջ հետևել և ոչ յաղթողին, արժանի էք դիցն պարգևաց. և եթէ չկենդ ոչ՝ սակայն ի նոցանէ գնաւոյ ունին կալջիք, մի երկմտիցիք ։ Ընդ այդպիսի սպայդ և ընդ զօրս՝ ընդդէմ աշաւորագոյն թշնամւոյ խիպախեցից ։ Այս զնայդ. նուաճիցեմ ի թշնամին, և միայնեմ վարձս ընդ վատութե և ընդ վհերոտութե ունել հրաժանաւ նորա զկատակալութիւն փոքու գաւառի ։ Ո՛չ անգր, մի ոք կալցի իշխանուէ ի բառնալ կենդ զնդագս և ոչ ի գնել. համայն զսա ընդ կեանս կորուսանիցեմ։ Եթէ ամենեցուն ձեր զսոյն քաջութի ի մոլ եղեալ է, և զոչի ի բռնին կալեալ, որպէս է իսկ, անշուշտ է ձեզ ազատութի, և ոչ պերձասցի ի ձեզ և ոչ ոտնհար լիցի մակեդտացին ։ Ի ձեռն ձերում է՝ որով վրէժ կամ զրաւ չարեացգ գործիցէք ։ Ընդակեցին ամենքին. Պատրաստ եմք գալ ընդ քեզ, և հեղուլ զարիւն մեր ի վերայ քո ։

Այս մինչ զօրքն յայսմ մտաց խորհրդէն էին, Աթաբեգն ատագ իշխան ի դրան Պարսից և զօրավար այրուձիոյն՝ դաւ ընդ Ասեսի եդ, ընդ զօրավարին բակատրիացւոց, գործել ոճիր մեծ և կապել զԹագաւորն շղթայիւք, կալեալ գնա դիւրաւ ի ձեռն գնդագ իւրեանց ։ Վասնի խորհէին ի վտանգել զԱղբսանդրէ՝ մանել նմա զԱրեհ կենդանի, և փրկել զանձինս. ապա եթէ փախուցեալ ամրանայցեն սպանանել զԱրեհ, և զԹագաւորուն լիւբեանս նուաճեալ դառնալ ի պատերազմ։ Այս զօրքն դիւրաւ կացուցան եղեն նոցա. զի երկեցուցին զնոսա զօրավարքն՝ թէ ընդ վախս մտիք, և ընկճիցիք ընդ հուսկ ընդ փլատակաւ պարսկայնոց պետութե՝ որ մերձ է ահա ի կործանումն. իսկ բակտրիա կանգ առաջի ձեր է, և զիրկան սփռեալ զանբաւ մեծութե՝ տարածանել ։ Այլ Թևսէտ և զանխուզ իրքս այս գործէին, զդաց Աթարեհ այլ չհաւատաց ։ Խրատեաց զնա յաւնական գնդին զօրավարն փոխել առ իւրան զնացն, և Թիկնապահս յիւրոյն կացուցանել ։ յորս վստահ էին անկասկած. այլ ոչ լուաւ նմա Աթարեհ, և չէլխեաց

զնախատինան զայն առնել պարսիկ զօրականին, և ասէ. Լաւ է կրել զնենգ՝ քան դատապարտել զնոսա. չարեաց բաղդին երկայնամտեալ՝ յանձն առնուին մտադիւք առ իմն կալ, քան ամրանալ առ օտարս՝ Թէպէտ և հաւատ տարիմք և տիրասէրք իցեն. և անագանեխ ինձ մահ, եթէ արդարև անարժան կենաց յիմոյս գատիմ։ Լ՚ամէն վաղ ծանեաւ զի կարի խնամատարեալ էր խրատն. քանզի կալան զնա նենգաւորքն և կապեցին ոսկի շղթայիւք՝ իբր թագաւորի պատիւ արարեալ, և ի բակտրիական աշխարհն կառաջ զնա վաւիւք ածէին։

Եւ հասեալ Լ՚ղեբանդրի Ա՚կեստան, լուաւ զի Թագաւորն Պարսից հնդեբուկիք աւուրբք յառաջ մեկ նեալ էր անտի. և պատուէր ետ Պարմենեայ զամ գանձս՝ զոր յաւարի էառ ի Պարսից՝ դնել անդ ի Սէլեւկիա քաղաքն յամրի. և նոտոյց գունդ հզօր ի պահն։ Լ՚եթաւան բիւր քանշար զգանձան Թուէ Սպարաւն. իսկ Ա՚ռաստինոս ոչ աւելի քան զբիւր մի։ Լ՚այս հրաման ետ նմա խաղալ ի Ա՚լբկաս ընդ աշխարհն Կադուսից՝ Թրաք կայսրևքն և այլազգի զօրօք և հեծելովք, բայց ի գնդագ Թիւնապատից իւրոց։ Լ՚ետ առ Կղիտոս գրեաց, որ վասն խօթուԹէն կայր ի Շ՚օշ, ընդ հասանել Ա՚կեստան՝ առնուլ ընդ իւր զգունդս, զորս եձող անդ, և գալ գումարել ընդ իւր ի ՊարԹեաս։

Եւ այլովք զօրօքն խաղայց ինքն ի վերայ Պաբեհի. և յաւուրն մեռանականերորդի եհաս ի Հրադիս[1], որ աւուր լոյս Ձանապարհաւ հեռի է ի գրանցն Կասպից։ Լ՚ՄՀ Պաբեհի ընդ կիրձն անցեալ գնացեալ էր. և Լ՚ղեբանդրի յուսահատեալ զի ամ շտապաւ չմարԹեր հասանել գՀետ նորա, անդ զաւուրս Հինգ բանակեցաւ՝ արծարծանել զզօրսն. և ապա դիմեաց ի ՊարԹեւս։ Եւ յառաջնումն աւուր առ գրունս Կասպից երեկօ Թեալ, ի վաղիւ անդր անց ընդ կիրձն. և լուաւ՝ զի կալեալ էր Պաբեհ նենգաւ, և սպրիւս զնա ածէր Լ՚ենոս, առաջի իւր վարեալ՝ զի մի փախիցէ, և զի ամ քաւ նախն հնազանդեին նմա՝ քաց Ա՚յրտաւազդ և ի Հայաստանեայց, որք գաբչեցեալ յեղեռնաւոր գաւոյն, և զի ոչ զօրէին խափանել զայն, զարտուղի ընդ լերինս մեհենեալ գնացին։ Ա՚յնմ իրի ստեպ ևս տապնապաւ երեմայր զՀառնասպարէն։ Պահեաս խուժադուժք ընդ հասանել նորա, Թէպէտ և չէր պարտ զանպիտեալ նոցա՝ եԹէ Լ՚ենոս, որ

1 Հրադիս, այն որ ոմանց յիշեալ է ի գիրս Տիմիթեայ։

Սիրեք. ԺԸ. գլխ.

Յունաս. ԺԸ. գլխ.

պէս ՚ի տիրասպանութենէն, խիզախեալ ՚ի մարտս. զի և ամբոխիս և զօրութիւն առաւել եկիս քան զինչսմիս, և անխոնջ ընդդէմ պատասխանոց զօրացն յերկայն ձգեալ պարհէն։ Իսկ անուն և համբաւ Աղեքսանդրի՝ հզօր ՚ի պատերազմի՝ պակոյց զնոսա, և փախչէին։ Իսեոս և դաւակիցք նորա հասեալ առ Պարեհ, յորդորէին զնա հեծանել ՚ի ձի, և փրկել զանձն ՚ի ձեռաց թշնամեաց։ Նա պատասխանի ետ և ասէ. Խնդրեսցեն դիք ՚ի մօտոյ զվրէժ իմ։ Իսկ զաղաւութիւն Աղեքսանդրի կարդացեալ, չէաւ յանձն ընդ տիրանենգն գնալ։ Նոքա առ կարի սրամտութենէն նեռատարը զնա արարին, և խոց վիրալից Թողեալ զնա՝ գնացին։ Իսկ յետ սոսկալի տիրասպանութենէն՝ բաժանեցան ՚ի միմեանց, զի բազում ուրեք զՀեոս փախստեան նոցա տեսեալ՝ տարակուսեցան թշնամին, եթէ զՀետ նոցա հեծանիցէ, և կամ գեթ բաժանեսցի զօրութենէ նորա։ Իսկ դիմեաց Նաբարզան ՚ի Ալ ըրկասս, Իսեոս ՚ի Իակարիա, և հեծեալք սակաւք ընդ նոսա։ Իսկ զօրք պարսկիք առանց զօրավարի՝ այլ ոք այլուր օգտեալ ցրուեցան, յոլ և երկիւղ և կամ յոյս վարեր զնոսա։

Իսկ ՚ի յոյզ և ՚ի խնդիր առնէին զեալ եղև ՚ի տեւողջ ուրեք մեկուսի գտանել զՊարեհ, նեռատարը կարեվէրք անկեալ ՚ի վերայ սայլի մերձ ՚ի շունչ վախճանին։ Իսկ մինչ գեռ ՚ի վերայ ողջոյն կայր, զօրացեալ խնդրեաց ջուր. և անդ ՚ի մակեդոնացւոյն ոմն, Պաղխատրատ անուն նորա, մատոյց նմա արբուծն. զի էր նորա գերի ՚ի պարսիկ, և Թագրմանեաց նմա։ Իսկ իբրև էարբ զջուրն Պարեհ, դարձաւ ՚ի մակեդոնացին և ասէ. Չաղէտս եղբայրանս իմոյ բաղդին ՚ի սփոփուն ինձ գտար առ իս, զի մի յետին բարբառաբս կորիցեն։ Պատասխանի Աղեքսանդրի՝ զի ձրի երախտաւորեալ ՚ի նմանէ մեռանիմ. Շնորհասպարտ եմ նմա վասն բարութեանցն՝ զոր արար ընդ մայր և ընդ կին և ընդ որդիս իմ, և ապրեցոյց զնոսա հանդերձ ամ շքով նախնոյ մեծութենէն նոցա։ Չայօդեաց ցին դիք զինուց նորա, և միահեծան կալցի զանիեգերս։ Իսկ պարտիցիմ մաղթել վրէժխնդրութ ՚ի նմանէ ՚ի վեր բայ եղեռնաւոր տիրասպանիցն։ զթագաւորաց ամենեցուն վրէժն պարտի իսկ խնդրել։ Իսկ կալեալ զձեռանէ Պաղխատրատեայ, ասէ. Ա՚յսպէս՝ զոր առնեմն՝ արա Աղեքսանդրի. և զայս գրաւ իմոյ սիրոյս և երախտագիտ սրտի մատուսջիր նմա չկնէն, որ այլ ինչ չունիմ տալ։ Իսկ զայս ասացեալ եհան զոգի։ Իսկ ահա եհաս անդր

ԱՄԱՀՆԻ Կ՚ղեքսանդրոս. և տեսեալ զդէն Վարեհի՝ ողջս առեալ կախանեաց ՚ի վերայ նորա. և առ զուԹ գորովոյ ընդ տարապարտ աղէտս նորա՝ ծածկեաց քղամիտն զմայմին նորա, և հրամայեաց զմասել զնա, և պահուՀել զգագաղն չքով՝ ըստ վայելչին արժանեաց Թագաւորի. և յղեաց զնա առ Միխթամբիս, Թաղել զնա պարս կական օրինաւք ՚ի գերեզմանս Թագաւորացն առաջնոց։

3674 · 330 Այս ժամանակ Վարեհ յերկորդումն ամի հարիւրորդի երկոտասաներորդի ոլիմպիադին, ամաց յիսնից, զվեց ամ Թագաւորեալ։ Այս էր ինքն հեզ և խաղաղասեր. և յամ Թագաւորութեանն իւրում՝ բաց ՚ի սպառնալենէն Կարիգեմայ՝ այլ ինչ բռնութեի կամ անգԹութեի ոչ առնէր, կամ ՚ի բնութենէ և կամ զի չեղև նմա պարապ յամբոխելի մարտին ընդ Կ՚ղեքսանդրի ՚ի սկզբանէ գահակալելն մինչ ՚ի սպառ։ Ի նոյն նմա պարսկային պետութեին վախճանեցաւ, տեսեալ զերկերիւր և զվեց ամ ՚ի գահակալուԹէ մեծին Կիւրոսի՝ որ հիմնեցոյցն զպետութեին։ Այս կացին ՚ի նմա երեքտասան Թագաւորք. Կիւրոս, Կամբիւս, Ծերդ մարդն, Վարեհ վշտասպեան, Կսերքսես մեծն, Կրկայնաձեռնն Կրտաշես, Կսերքսես կրտսերն, Սոգդիանոս, Վարեհ Հարձորդի, Ուչեղն Կրտաշես, Կրտաշես Ալքոս, Կշէս, և ինքն Վարեհ Կոդոմանոս։

ԳՕՊՈՒԱՆ ԺԱ.

Որ ինչ վարեալ ՚ի Կրճանան Պաբսէց պետութեանն եղեն պատմաբան։

Եայց Թէպէտ և Վարեհի Կոդոմանեայ մահ՝ Թուական մեծ պարսկայնոյն գտանի լեալ միահեծան պետութեին, ոչ այն միայն կործանելոյ նորա եղև առիԹ։ Կ՚ԹէՀ ՚ի վեպս Թագաւորացն՝ զորոց պատմագրեցի՝ հասարակաբար հայիցէ ոք, և զնկարագիրս նոցա նկատեսցէ, և զառաքինութեանսն առաջորդութեի նոցա ՚ի պատերազմի և ՚ի խաղաղութեան, տեսանէ զպատճառս չարեացն ՚ի հեռուստ մեծաքայլ յառաջագայեալ ՚ի համակործանն տապալումնին։

Նախ առաջին պատճառս խախտելոյ և կործանման նորա՝ անդուստ ՚ի սկզբանէ իւրմէ և յառաջնմէ սահմանէն ՚ի դեպ ե կարծել. զի յայլաբարոյ և ՚ի ներհակա-

կիր կրկին ազանց պետուն էին այն եկաց ի մի։ Պար-
սիկք զգաստք ժիրք և պարկեշտք, Արք մնափառք
զէրիք և հեշտասէրք էին։ Ականատես և անպաճոյճ
կենցաղ Կիւրոսի, և հարկ հանապազորդ զինուորութեն
ի բազում աշխարհակալութեան և ի պահ աշխարհացն
ի հինից Թշնամեաց չամ կողմանց, զապականարար
ախտից ծաւալումն առ ժամանակ մի կասեցուցին։ Այլ
իբրև ամ ինչ նուաճեալ հնազանդեցաւ, ապա Արացն
ի քնէ միտումն ի պերճութեն և ի զրգանս վաղ մեղ-
կեաց զժուժկալ պարսիկն, և ի սուղ ժամանակի զերկա-
քանչիւրոցն ախորժակս գրաւեաց։

Այսմ բազում և այլ ինչ պատճառք կցորդ եղեն։
Ասելոն նուաճեալ՝ արքեցոյց զինչեցողսն դեղեալ բա-
ժակաւն, և կախարդեաց զնոսա ի հրապոյրս հեշտու-
թեն, պատրաստեալ սպաս և արքանեակս զեղխութե,
և զրգանացն կայսնի արուեստիւն և ձարտարութե. և
գանձք մեծահարուստ գաւառաց աշխարհի էին առաջի
նոցա՝ ի լիութե ամ ցանկութե նոցա։ Ինքն իսկ Կիւ-
րոս, որպէս այլոց ասացի, պատճառս այսմ էտ՝ առանց
գուշակելոյ զհետեւումն չարին. և խոտորեցոյց անդր
զսիրտ ժողովրդեանն պերճ և պայծառ տեսիլն խոնջմամբ
զհետ աշխարհակալութեանցն, երեւեալ փառօք ի միջ զո-
րացն՝ որ յաղթութեց նորա հաղորդք էին, և զօշոտեալ
զայս նոցա, և զարմանալի արարեալ նոցա զպերճու-
թե՝ որ նախ արհամարհն էր, և քաջայաղթ արութեց արժա-
նի մրցանակ ցուցեալ գշուք և զմեծութիս, և զայնոսիկ
ուշ նպատակի և արդասիս արութեց։ Այս ամբոխն վա-
ռեալ ի տենչ տեսլոցն՝ զի մեծարդիր զնոսա այր թա-
գաւոր ամենեւին անստգտանելի, օրինակաւ նորա հաս-
տատեցան շռայլել զանձինս ի նոսն։

Այս առաւել այնու սերեցան չարիքն, զի սահմանեաց
և դատաւորաց և իշխանաց և կուսակալաց՝ շքով կան-
դիման լինել ժողովրդոց, և պայծառ փառօք կեալ յիւ-
րաքանչիւր մարզս, որպէս զի զմեծվայելչութե թագա-
ւորին՝ ի գէմ ածիցեն։ Ոչով դատաւորք և իշխանք ի
շուք աւագութեն ուշ կալեալ՝ երևելի սպասուքն միայն
խորհեին յայլ մարդկանէ որոշել։ Վարձեալ և նոցա
ձիովք յիւրաքանչիւր գաւառս նախանձեալ, և ինքեանք
միջասահման բաղդին նախանձելի լինէին, և սա ստորին
բաղդին։

Այս պատճառք վատթարեցուցիչք իրերօք օգնեալ,
և ընդ հանուր աշխարհն զօրացեալ, ի սուղ ժամանակի

զպարսիկ առաքինուէին աղաղտեցին։ Կործանուումն այնր աշխարհին ոչ իբրև զՀոռոմոյն եղև տակաւ անաղտաբար ի վայր հակեալ, և ի հեռաստանէ գուշակեալ, և ի մոլթ և ի ինեցուկ ստէպ կազդուրեալ։ այլ ընդ վախճան նեղ Կիւրոսի՝ փոխեցաւ ազգն, և Թագաւորք ընտաւ այլազարդք յաջորդեցին. բարձաւ խիստ և սերտ գաստիարակութէն պարսիկ մանկտուցն. և վարժոցք ժուժկալութէն և համբերութէն և նախանձու առաքինութէն և տաժանաւոր և վրնական հրահանգաց անհետ եղեն։ Նոյնպէս մեծաւ ի շուք և ի մեղկութէն՝ որ արդ էին յաչխարհին, ի ցանկալի պարզութէն կենաց հարցն գաղջեցաւ. և մինչ չև ազգն այն անցեալ էր, յաջորդեաց ազգ այլ ներհակակիր այլակամ և տարախոհ յառաջընմէն, ամբարտաւան, մեծախառն, մեղկ, վայրենի, հաւատագրուժ. և տիպք նկարագրին նորա, որով ընտրէրն յիմ ազգաց, եղև մոլեգին զառածումն ի զեղխութէն ի շռայլութէն ի շուայտութէն և ի գինեբերս։ Դեպ իսկ է ասել, զի պարսկային պետութէնն ի տղայութեան զըսուռամութէն այլոց պետութէնցն եթեր. և էր սկիզբն նորա հանգոյն վախճանի այլոցն։ Ի ծոց իւր զաչխարհաւէրն կրէր, և Թագաւորք՝ յաջորդ քան զնախորդ զընտանի չարն տածէին։

Ո՛չ ետ ձախող արշաւանացն Պարեհի և Վկսերքսի ի Յունաստս և յԱթլաղա, Թագաւորք որ յաջորդեցին՝ անտենչք աչխարհակալութէ՛ յոյլք և մեղկք և անխնամ մեղք եղեն. և անփոյթ արարեալ զհրահանգս զինուց, ընդ կիրթ և ընդ պատերազմաիրթ զօրականին՝ փոխանակեցին ամբոխ խառնաղանջ, բռնի յիմ աչխարհաց ժողովեալ։ Նոյնպէս բազում ուրեք տեսաք, ոմ՛ամ՛րութէնն բանակին նոցա և որպէս միայն զօրավիգն՝ էր գունդն հելլէն վարձկան. ասացից իսկ, թէ և ի նա միայն էր յոյս նոցա, և զնա ի ձակատ ընտիր գնդաց թշնամեացն կացուցանէին։ Նա միայն յիմ զօրացն Պարեհի զպարտս իւր անթերի արար, և մինչև ի սպառ հատատարիմ եկաց. և զՀելքսանդր Կեմնոն միայն հռոդացի տագնապեցոյց։

Ո՛ սպայս հմուտս և զձարտարս անարգեալ, զերևելիս յիմ՛ ազգէ յառաջորդութէն զօրաց կացուցանէին. և էր յաձախ ոմ՛ քաջութէն նոցա յազգն և ի ձախսութէ և ի համբաւն, և որք շռայլ սեղանով և երևելի սպասուք և թիկնապահաց և գերդաստանաց և նեբբնեաց և կանանց բազմութէ՛ որոշէին յայլ մարդկանէ։ Նո-

այն ամէն ոք ի շուք և ի մտափառ պերձութիւն՝ քան ի չու պատերազմի խոնեալ, ուսմամբ ի խուռն զօրացն յաւելուին՝ ի ձեռներեցութիւն զսուզ քաջակին, և ի դանդաղեցուցանել զնա ի չու և ի շարժմունս յոյսով աղաչելոյն. և ոչ ի տեղոջ ուրեք մարթեր յերկարել նմա, և տևել կալ յանդիման թշնամոյ մինչև ի վախճան գործոյ մեծի պատերազմի։

Ծադաւորքը Պարսից փակեալ յարքունիս, զգաղեալ ի հեշտութիւս, և իրաց աշխարհին անգէտք, վստահելին Թագուհին զամ իշխանութիւն ի ներքինին, ի կանայս, ի մարդահաճոյ և ի փաղաքուշ սպասաւորսն. որոց մի ինչ հոգ էր, զամ ստոյգ քաջութիւն՝ որ էր նոցա ի կասկած ծանա՝ յետս մերժել, և զձեռասունս իւրեանց յառաջ մատուցանել ի բարձ և ի պատիւ, և ի վերայ կարևոր գործոց կացուցանել զայնոսիկ՝ որ օգտի և փառաց իւրեանց սպաս առնէին, և ոչ որ աշխարհին բարւոք սպասաւորէին։

Պարձեալ և այլ իմն հասարակաց սովորութիւն Թագաւորացն ձեռներոյց զկործանումն աշխարհին։ Ոչ յառաջին սիոց ուսեալ ի սպասաւորութիւնս փաղաքշոյ և ի մարդահաճութիւնէ և ի բոլորանուէր հնազանդութիւնէ, և ամբարտաւանեալ ընդ մեծութիւնէ իւրեանց, համարեին զամ մարդիկ ի ծառայուէ իւրեանց և ի հաճոյս լեալ։ Ցդէպ էին պարտուց Թագաւորի, և օրինաց բարւոք և զգօն առաջնորդութիւնէ, և արգարակորով դատաստանի ստոյգ քաջութիւնէ, և ընտրելոյ զարս՝ որ ի վարչութիւնէ աշխարհին արքանեկել կարասցեն նմա։ Ոչ գիտէին զի երբ խանութիւնէ աւանդէր ի նոսա առ ի խնամս և ի բարութիւնէ ժողովրդոց։ Ձկեր առեալ նոցա զիարձ քաղցր բերկրութիւնէն ուրախ առնելոյ զժողովուրդս, և յարդարելոյ զպահապետաւ աշխարհին բարեկենդանութիւնէ՝ հանդոյն մեծին Կիւրոսի, որ երբէն հայր սիրելի էր ամենեցուն, և ի մահուն նորա սուգ էառ զամ աշխարհն։ Ոչ յայլ նոցա մեծութիւնէ՝ այն իսկ էր, լինել յահ և յերկիւղ ժողովրդոց, և անխափան զամ ախտն գրգռել։

Սովին չարաչար դաստիարակութիւնէ Թագաւորք մեղկք և մոլիք ուսեալ, բեռնին մեծի ինքնակալութեանն ոչ տալ կային, և չէր մարթ նոցա զընդարձակ աշխարհին զտաժանաւոր առաջնորդութեան զամ իբրև յանձանձել. և յոլովութիւն և հեշտախտութիւնէ ապուշք և անզգաստեր լեալ, զկարևորս ընդ զբօսանաց փոխանակելին։ Ոչ ի նոսա և բարեբարոյք ի բնէ՝ քաջ յարմարք բարւոք խոհ

ԱՄԱՀՆՒՔ գաւօրելոյ. այլ ի հրապոյրս հեշտուհի զերծանն և նոքա, և անպայման իշխանութեան և բարեբաստութեան մեծ խոտո- րեցուցին զսիրտ նոցա. և սովորելոցն ի մարդահաճուհի չմարթեցին քան մի խոտ ի խորհրդեան լսել, և ոչ փոքր մի ինչ հակառակելոյ ումեք կամաց նոցա տանել։

Այս վասն զի իւրեանցն ևեթ միտուքեն սիրօգք էին, և զնմ ինչ ընդ այնմ փոխանակելին, ոչ ինչ զարմանք են՝ զի և չէին սիրելիք ժողովրդեան։ Օ դարեհ ի թշուառութենէ ժամանակին՝ և զօրավարքն և նախարարքն և ազատանին և ծառայք և ժողովրդին, ամենեքին լքին զնա. և ոչ գտաւ ոք տիրասէր հաւատարիմ և անկեղծ և բարւոյ նոցա ցանկացօղ։ Ընդ և ձանձրոյ միա- հեծան պատուհէն բարեքէր զնահակից տիարութենէն. և վասն զի անհեդեդ պերճ և գոռոզ իշխանութենէն չգնոյր ի սիրտ ժողովրդեանն, ի մի հարուած՝ հակայամէս պատ- կերն յերկիր անկեալ կործանեցաւ։

ԳՕՊՈՒԱՆ ԺԲ.

Օ՛ն Նչխանէ Պարսից զՊահերան, և փրենէ առ Պեղոպոնէս ընդ նմա. անդր արշաւել Պոխպապրէայ, և յաղթել ի դիմա ուր- բեւ ճակատս, ուր և Պէլս անկանի. և վասն Պղեհանդրի լուսն ընդբեմ Նէսոսի, և Գալէսարեայ Պյաղնոյ պշնայնն ի հեռաւ- գանն գալ ի գնս նորա. և ի գառնալ ի Պարնես՝ շուայել Պղ- ղեհանդրի ի գեղխուրն և ի փրգանս, և յառաջ մղել զնոսա ընդ- բեմ Նէսոսի. և վասն կախաճանաց Նենի փորձելոյ արդոյն ի Գի- լոպոյ, և ապանուհէ նորա՝ հանդերձ Պարնեսա հարբն էարով։ Պղհանդրի նռասձել գազան բազմոմս, և դնել ի Նախրնա հա- սանել. և վասն Նէսոսի կալել ածելոյ առ նա։

Ա՛ինչ դեռ այս իրք եկն Ա՛սիա, որպես ի վեր անդր 3614. 330
ասացաք, եղեւ ապստամբք Ա՛լեքսադա և ի Ա՛ակեդոնիա ; Դիոդ. ԺԷ.
Ա՛եմինն, որ ի Գրաբիկա յղեալ եր Ա՛ղեքսանդրէ, 330։
վտարանդեալ ի նմանէ՝ յարոյց անդ ի վերայ իւր զզօ- Կորփ. Ը. ա.
րութիւնս Պնտիպատրէայ ; Նա սպարտացիք զդէմ պատե- առեալ ընկերին զգուշ մակեդոնացւոյն, և ձգեցին յիւ- րեանս գրեթէ զամ Պեղոպոնես. ի Տալակ համաձայնն Պնտիպատրոս յարդարեալ զերս Գրաբիկոյ, որպես մար- թեր, դարձաւ շտապաւ Ա՛լեքսադա. և աւրմնդակս վաղվաղակի առ Պղեքսանդր արձակեաց, ազդ առնել նմա զամ որ ինչ իրք գործեցին ։ Նա հասեալ առ թշնա-

միս, խորհուրդ կալաւ ձախատել ի մարտ։ Եւ ինն սպաթաւգոց երկու բիւրք հետևակաց, և երկու հազար հեծեալ, և զօրավարքն Կոգիս Թագաւոր նոցա. իսկ Կետիպատրեայ երկպատիկ և առաւել ևս զօրք ևին։ Կայց Կոգիս ի նեղ և յանձուկ տեղի մղեաց զպատերազմին, անպիտան առնել զազգումն ամբոխին։ Եւ հզօր ձախատամարտիւ անհնարին ձիղն երկուստեք ի վերայ փաղաց հայրենեացն գործեցին. կէսք ի կանգնել զնախնի պարծանսն, և այլք ի չկործանել զոր ունէին, հաւասար քաջութեամբ խրախուսեալ տային պատերազմ, նոքա յաջատութեն և սոքա յիշխանութեն։ Վինչ դեռ ի նմին տեղւոջ ուր սկսան՝ էր պատերազմին, զօրանայր Կոգիս. այլ Կետիպատրեայ զխախուտ պատճառեալ, ձգեաց զթշնամին լընդարձակ դաշտ. և ծաւալեալ զզօրս իւր՝ զօրացաւ, քանզ յօգուտ արկեալ զազգմունքին զօրացն։ Կայց Կոգիս սպառազինութեամբն և առյդ տեսլեամբ, և առաւել ևս՝ քաջութեամբն նշանաւոր երևելի էր ի զօրսն. և խոնեցաւ զնովաւ մարտն. և նորա զարմանալի արուեստ ի խոտան անդ գործեալ, խոց վիրալից ի վերայ վհանին ածաւ յիւրոցն ի պատերազմն ի բաց։ Կայց զօրքն ոչ ինչ վհատեցան. այլ ի դիպող տեղւոջ զնայ առեալ, կուռ մնդակազմ կարգեցան կացին առաջի հարուածոյ թշնամեացն։ Եւ յերկար դիմակալեալ, ապա սկսան կասել. զի ի քիրտն հարան, և ոչ ևս ընդ բեռամբ թացելոց զրահիցն ժուժկալէին. և ընկրկեալ, ապա ի փախուստ դարձան։ Կայց Կոգիս ընդդէմ հալածէացն ամենեցայ դարձեալ ձգնեցաւ, մինչ տկարացեալն էր ի վերացն, և անվեհեր անպարտելի կայր. այլ ի բազմութեն նոցա ընկճեալ, զնն ի ձեռին անկաւ մեռեալ։

Եւ ահա անկեալքն ի սպարտացւոց ի ձախատու անդ, էղեն աւելի քան զերիս հազարս. իսկ ի մակեդնացւոց՝ ոչ ինչ աւելի քան զՀազար այր, այլ Հազիւ որ թէ անխոց դարձաւ։ Եւ ոչ միայն սպարտացւոցն և նիզակակցաց նոցա զօրուն բեկեալ ի պատերազմի աստ, այլ բարձաւ յայս և յայնցանէ՝ որք կատարածի մարտին մնային ձեռն տալ նոցա։ Եւ վաղվաղակի լուր արար Կետիպատրոս առ Կեքսանդր ահ ցածութեամբ և զգուշութեամբ, զնորագիտուէ աւագանեայ ի կիր արկեալ ի մաղձնել զպայծառութեն յաղթուէն, զի մի նախանձ արկցէ նմա. քանզի գիտեր զվերջիններ նախանձ նորա, զի զայլոց փառս ի նուազութեն իւրումն վարկաներ. որ և ոչ յայն

ժամ լռութեամբ անհանգիստ զաւեհին կարաց լսել՝։ Եւ ոչ իշխեաց Նոտիպատրոս սահմանել ինչ յիւրմէ. այլ հրաման ետ սպարտացւոց հրեշտակս առնել առ Թագաւորն, և ի նմանէ առնուլ պատգամ։ Եւ ներեաց նոցա Թագաւորն, բայց միայն առաջնորդք ապստամբութեն պատուհասեցան։

Կոչ. Իսկ յետ մահուն Վարեհի՝ Ղեքսանդր հալածեր զԱեսոս, որ ի Խալտրիա ամրացեալ Թագ կապեալ կոչէրն Թագաւոր Պրտաչէս։ Եւ ոչ կարացեալ հասանել զնմա նորա՝ դարձաւ ի Պարթեւս. և լեալ յԱկամոնպղէ աւուրս քանի մի, հրաման ետ ածել անդր ամ ուստեր պաշար։ Եւ մինչ դեռ ի քաղաքն անդ էր, լուր հնչեաց յամ բանակին՝ թէ Թագաւորն յագեցեալ աշխարհակալութեամբք, խորհի դառնալ ի Աակեդոնիա։ Եւ վաղվաղակի որպէս ի ձայն փողոյ յետադարձ՝ դիմեցին զօրքն խելայեղեալ ինն ի վանս իւրեանց. և զիւրաքանչիւր բեռինն կապեալ, ի սայլս զկարասիսն բարձին, և զամ բանակն լցին աղմկաւ։ Ա՛ղվաղակի հնչաս շէնդն յունին Ղեքսանդրի. և զարհուրեալ յամօտէն, կոչեաց առ ինքն ի խորան իւր զսպայս զօրացն, և սկսաւ ողոքել առաջի նոցա աղերսական յանդիմանութեամբ, զի ի կիսոյ փառաց ասպարիզին կասեալ՝ կորակոր քան յաղթօղ ստիպէր դառնալ յաչխարհ իւր յետադարձումն պահուն։ Ա՛նդա միւթաբեալ քաջալերեցեալն զնա, ասէն. Ա՛զմունդն այն յետադարձ՝ եռանդն ինն և մտերմութեամբ՝ ամբոխին՝ վաղ զիջցի, և չիք վտանգ չարի. բայց խօսեացի ազբայ ընդ զօրականին ողոքով և քաղցրութեամբ, և հնազանդեսցին նմա։ Եւ լուաւ նոցա Թագաւորն։ Ա՛ւայց եր վըհպակ համբաւայն հնչեալ՝ յարձակել նորա զկէս ի հեռւէն զօրացն առատ վարձուք. յորմէ մակեդոնացիք համարեցան զրաւ լեալ պատերազմին, և ամ զօրացն արձակուրդ։

Եւ ժողովեաց Ղեքսանդր զամ զօրս իւր, խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Ի մեծամեծ արուեստիս զօր գործեցաք ցարդ, զօրականք քաջք, յագեցեալ փառաք փութաչք ի հանգիստ. ոչ ինչ զարմանամ։ Ա՛ղուել անդր զազգս՝ զօրս նուաճեցաք, առաւել կալաք մեք գաւառս՝ քան քաղաքս այլք։ Ա՛թէ մարթէր Թողուլ անկասկած

1 Ա՛ղեքսանդր պարտութեան և ոչ լռելեան. զի նուազումն Թշնամեացն ցանկացեալ ընդ յաղ. փառաց իւրոց համարէր՝ զայլս Թուլեի Ա՛նտիպատրեայ զբարեր, առաւելութեի։ Կ. Կոչ։

զստացուածս մեր ի միջ զօրաց, զորս երազ պատեհագոմաւ պարտեցաք, ապաքէն և ես խորհէի և փութայի դառնալ ի տուն իմ՝ տեսանել զդիս, զմայր իմ, զքոյրս և զժողովուրդ իմ, և ի գիրկս հայրենեաց վայելել ի փառս՝ զոր ստացայ ընդ ձեզ։ Արդ այս փառք վաղ չիջնէին, առանց բովանդակելոյ։ Զուսայցէք՝ թէ օտարի տեառն ընտելացեալ ազգք, այլակրօնք ի միմեանս, այլաբարբառք և այլալեզուք, պարտութեամբն և նուաճիցին ի ձեզ, և ոչ ի զէն դառնայցեն ի շտապել մեր ի գաղձ։ Ոչ զինչ էև ևս պարտեալքն գործիցեն։ Օ՜իմ՛դ. լեցուք վատութեամբ թերի գայթութիւն. և այս առաւել զայրագնէ զիս, Թողցո՛ք անպատուհաս զերեզն և զոսկերք Ներսէսի։ Ցաւժայցէք տեսանել զգաւազան Պաթրեկի ի տիրասպան ձեռս վիրագին, որ իբրև զգերի մի շղթայեալ զնա՝ յերուզահաբար սպան, և չեթող մեզ զփառս ընորհելոյ կեանս Թագաւորին։ Ինդ՛ր վաղա գոյն չտեսանեմք զնա ի կախաղանին, զի տացէ Քաւարարաց աւետեցուն և ազգաց երկրի զարդար վրէժս եւ զերեզաւոր տիրասպանութեանն։ Ցնորիցին աչք իմ. Թուիմ տեսանել ի դէմս ձեր զգատակնիք մահու նորա, և ի բարկացայտ աչսդ սպառնալիս՝ Թանալոյ ընդ հուպ զձեռս յարիւն նենգաւորին։

Ոչ միայն զեռ բանքն ի բերան նորա էին, ծափս հաբեալ ազազակելոյն զօրքն՝ գնալ ջհետ նորա յիւղ և առաջնորդեցեք։ Ոչ ոչ աստ միայն, այլ և ամ ուրեք բանիւք նորա խրախուսելին զօրքն. և յամ վհատութիւ՝ միով բարբառով նորա քաջալերեր ամ բանակին ի զուարթութիւն և յաժխոյժս մարտի, որ հանապազ ի դէմս նորա գոյին։ Օ՜այն եռանդն նոցա պատեհ առեալ Թագաւորն, խաղաց ընդ Պարթևս. և յերիր աւուր հասեալ ի սահմանս Ալբկատց, կալաւ զաշխարհն. և ապա նուաճեաց զԱ՜արգաստան, զԱ՜ղբիա, զԱ՜րանգիա և զԱ՜ղուանիա, և այլ աշխարհս բազումս, ընդ որս յաղթեալ զանակաւն երազընթաց լիներ քան զկարաւան ուղևորի։ Ոչ յամախս եւ զտիւ և զգիշեր անդադար հասլածէր զնշանակս, չհանգուցեալ զոգւոյն։ Ոչ անհնարին երագութեամբն հասանէր յանկարծ ի վերայ ազգաց, որք ի հեռուստ ոչ ինչ կասկածէին, և յանպատրաստս տիպն ի վերայ անկանէր. որպէս զայս գնմանէ վաղ ժամանակաւ յառաջ գուշակեալ Դանիէլ, օրինակեալ գնա յինձ և ի քօշն Թեղեկընթաց՝ որ յերկիր չմերձենայր։

Կ՚ուզէ. Ը. Իսկ Ղաբաղցին՝ գաւակից Ղեւեայ՝ յառաջագոյն գրեալ առ Ղվեքսանդր, և խաղաղութեան բանս ընկալեալ ի նմանէ, իբրև լուաւ թէ եր նա ի Օ ագրակարտ մայրաքաղաք Ալ ըսկանաց, եկն առ նա ընծայիւք, և զՂաձ գուէ ներքինի ած նմա. որ յոյժ մեծարոյ եղև ապա արքային, որպէս և Ղաբեհի սիրելին եր։

Ի ժամանակին յայնմիկ Ղալեետրիս դշխոյ Ղմազոնացն ցանկացեալ տեսանել զնա, եկն Ճանապարհ հեռի յաշխարհէն իւրմէ։ Եւ իբրև մերձ եղև ի խորան նորա, առաքեաց ազգ առնել՝ թէ ահա դշխոյ գայ՝ ըղձիւք տենչացեալ տեսանել զքեզ, և մերձ հասեալ է։ Եւ հրաւիրեաց զնա Թագաւորն. և հրամայեաց ետ Ղալեետրիս բազմաբեղուն՝ որ ընդ նմա էին՝ կալ անդ, և երեքարիւր կանմբք եկն առ Թագաւորն։ Եւ իբրև եհաս զնա, էջ ի ձիոյն. և նիզակաւք կրկին էին յաջմանն։ Եւ հանդերձ Ղմազոնացն ոչ պարտաճախիք զմարմինն, այլ զգենուն առ ցա յահեկ թողոյր ի բաց, և խորշաքաղ ի ծունկն հանդերձեալ՝ ոչ ի վայր իջանէր։ Եւ զահեկի սոխին ի մնուցանել զդաւտերն պահէին, խարեալ զայսոցանէ զոմանս առ ի յաղոզակ նետաձգութեանն, և ի տէգընկէցս. և վասն այսորիկ Ալխատնկէ [1] կոչեցան։ Եւ ինչ զարմացաւ դշխոյն ընդ տեսիլ Թագաւորին. և պշուցեալ Հայեր ի նա, և ոչ լսար համբաւոյն զկերպարանս նորա տեսանէր. զի խուժադուժիցն՝ վեհ կերպարան ահաւոր եր, և զգաստ ըստեղծուածովք՝ համարիէին արիական մեծամեծ իրաց բաւական [2]։ Ապա յայտնեաց նմա վասորհուրդ գալստեան իւրոյ, զի ցանկայր ունել ի նմանէ որդի, և զամենն արժանի համարէր տալոյ ժառանգս տերութեանն նորա։ Ալին իրի հարկ եղև Ղվեքսանդրի յամել անդ ժամանակս ինչ, և լեալ այնորիկ Ղալեետրիս զարձաւ յաշխարհ իւր, և Թագաւորն ի Պարթեւս։ Օ այս այսպէս կացուցեալ վասն ոմանց վիպոց. բայց հանճարեղ մատենագրաց առասպելք իրքեւ այս Թուին, և բնաւ իսկ Ղմազոնացն վէպք։

Կ՚ուզէ. Ը. Ձայնմ հետե Ղվեքսանդր զյաճախութիւն և զժուժիւս լուեալ, որոյ ամենեցուն զարմանալին եր, և որք աւագ բաղդին կարեւորք են, փոխեալ ի պերձութիւն և ի գեղ-

1 Ա՛μάζονες Ամազոնք ի յոյն բարբառոյ ի հայ նշանակին անստինք։

2 Պշուցեալ Հայեր Ղալեետրիս անքթեալ ի Թագաւորն, և զկերպարան զիներ, զի ոչ ըստ համաս առ խուժադուժն՝ վայելուչութիւն և մարմնոյ մեծութիւն. և մեծամեծ իրաց այնորիկ Թուէին ձեռնհաս. որոց կերպարան վեհ բաղդն հաճեցաւ տալ։ Կ. Կ՚ուզէ։

խուճիւն՝ ի զրգանս ախտիցն եհեղ զանձն, և բնաւին այլ չայլմէ եղև։ Կնայաբարելին ի վտանգս և չաշխատութեան մարտի՝ ի բերկրանս հանգստեան պատեցաւ. վայրկի մի խաղաղութեան առեալ՝ Թողաւ ի հեշտութեան. և որպէս սպառազինութեանք Պարսից չյաղթեցին, չաղթեցին նմա ախտք նոցա։ Կնմանեալ ի խաղս, չամճռայս, ի կանայս և ի շուայտութեն պարապէր, զսիւ և զդիւրեր ի գինեբերութս անցուցանէր։ Կնդ ամբոխ գուսանացն և նուագածուաց՝ զրոս ի չոշնաստանի կոչեաց՝ ընդ նոսա ոչ չատացեալ, և կանանց՝ զրոս գերի ածեր՝ ցուցս հրամայեր երգել զիւրեանց աշխարհին։ Կայլ տեսեալ զմին ի կանանց անտի տրտմագոյն, զի աչունականն ամենաճաճութեն պատկառեր լինել, և էր նա չքնաղ, և պարկեշտութեն չաւելցեր զգեղ նորա, զի զաչսն ցածուեսամբ ի խոնարհ ուներ, և հայեցուածքն ծածկել զգենմն, գուշակեաց Թագաւորն ի կերպարանաց նորա զբարեսոհմութեին, և եհարց զնա, և ծանեաւ զի էր նա Թոռն Ովքոսի՝ որ նախ քան զսակաւ մի ի Պարսս Թագաւորեր, դուստր որդւոյ նորա, և ամուսնացեալ Կ շահապէտ արքայազին և զօրավարի մեծի բանակի։ Կւ զԹագեալ ի նա վասն արքունի ազգին՝ Թէ ուստի յոր գան բաղդ անկեալ էր, ազատեաց զնա և գարձոյց չառաջին մեծութեին. և հրամայեաց խնդրել գտանել զայր նորա, և տալ նմա զկին։

Կայց էր Կղեքսանդր ի ընկ գԹած և մարգասէր. և Պատ. ՀԱ-
չարկաճա ուսմկին ողորմէր։ Կնակեռնացոյց ուրուն չարուն ՀՀ. 687.
ջրոյն ոսկեբաղճ առաջի նորա վարելով՝ ի գործ արքունի, վաստակեցաւ ջորին յուղոջ, և ոչ կաս կարէր գնալ և ոչ յոտին կալ. և ջրեպանին զբեռնն բաձեալ՝ տանէր աշխատութեք մեծաւ Հանապարհ հեռի։ Կտես զնա Թագաւորն զի ընդ ճանուռ բեռաւորն պարտասեալ՝ կամէր ի բաց արկանել զայն ի Թեթևանուն, և ասէ ցնա. Օ օրաց ցիր, այր գու, և զիարդ մի կս Հանապարհդ երթ՝ ածել զբեռնդ մինչև ի վրան քո, և քեզ տուեալ լիցի։ Կս ի խաղալ երբեմն չտապաս ընդ անապատ անջրդի փորուս հեծելազնդաւ գՀետ Կարեհի, պատահեցին նմա արք մակեդոնացիք՝ որք ջուր ի տիկս ածէին ջորւովք. և տեսեալ զնա ծարաւահոգի Թալկացեալ ի տօթաժամու, սաղարթս ի ջրով փուԹացեալ մատուցին նմա։ Կհարց զնոսա Կղեքսանդր՝ Թէ յո՞ զջուրդ ածէք։ Կս նորա ասեն. Կյո մանկունս մեր. այլ մի հոգասցի արքայ. եԹէ տոքա կօրհնեն, այլք ընդ քեզ յաւելցին մեզ։ Կս ընդ

կալեալ Թագաւորին զսաղաւարտն, և շուրջ հայեցեալ յայրուձին, զի կարկառեալ պշուցեալ հայեին ցանկու-
Թեամբ յրմնելին՝ պապակեալ բջջաք, ոչ խորք և ոչ
ումմ մի ի ջըցին, այլ գարձոյց զայն յարմն՝ որ մատու-
ցանելին. և գոհացեալ զնոցանէ, ասէ. Ողբաւէ գա ամ
գնգիս. և եթէ ես ըմպիցեմ, առաւել և այլոցն երկ-
նեցայի ծարաւ, և մեռանիցին պաաքեալ և նուազեալ։
Իսկ հեծելազնդին գորովեալ ընդ մեծախոհութի և ընդ
բէնս կոչեաց ժողովրդոց ։ Ցկար ասպետն յարդար բո-
ղոքոյ խղճի մտաց , զոր մարդահաճութեան և մոտի ձար-
տարմտութեան չկարեն լռեցուցանել ։

Կոպաքին մեղաւ յոյժ Կղիտոս , և ոչ արդարասցի .
չէր պարտ նմա հաղորդ լինել բանիցն՝ որ աղարտեին
զպահս փիլիպպեայ , յորմէ զբարիսն ընկալեալ էր , և
ոչ հաւանել ինն ախոյսիկ ցած և ժուժկալ լռութեամբն .
մարթէր իսկ նմա մեղմով և զգուշեալ վկայել քաջութեանն
նորա , յոր ի չյաջողէլն՝ տրտմութեն էր նմա , այլ ոչ ինչ
ինաս ։ Կայց խոհ կրտամբութեն և թշնամանօք ըղ-
պատշաճ մեծարանսն չհատոյց դիցաներ անձին ար-
քայի . զի թէպէտ և անիրաւ և բռնաւոր Թագաւորք
իցեն , չէ օրէնն նախատել և արհամարհել զնոսա , այլ
ցածութեամբ մեծարել զնոսա , զի նոքա աստուածք են յեր-
կրի ։ Կայլ զկերբուքն մեղմին , և ծածկեն իսկ զյան-
ցանս Կղիտոյ . զի Թագաւորի ի կոչունս հրաւիրեալ
ղեք , և շուայտեալ ընդ նմա , և արբեցուցեալ զնա ,
Թուի ի բաց դնել զիշխանութեն , և մոռացուցանել զայն
կոչնակատացն , և կամի ինն ընդ ազատախոս համարձակ
յահաւր զոյցս՝ որ ի գիներբուսն լինին յաձախ . և ե-
թէ խոժոռն ընդ հաւասարել նոցա ընդ իւր , անձին մեղ
դիցէ , զի նախ ինքն ընդ նոսա հաւասարեաց ։ Կայց թէ-
պէտ և յանցանել յանցանիցէ ոք յայսպիսի դէպս ,
չպարտի արեամբ գյանցանսն քաւել ։

Կայն զբարկութեն հզօրի՝ շանթի նմանեցուցանէ [1] . զի
ընդ զօրութեամբ աջակցեալ զոր աւեր չպոծնիցէ . իսկ զինչ
եթէ և արբեցութեն ի նոսա յաւելցի , և այս ահա տե-
սանիմ Կղեքսանդր . աւաղ , զի ի դէպ ժամանակի ոչ
ձգնեցաւ ի նուաճել զկրկին ախտսն , այլ մանաւանդ
հաստատեցաւ ի նոսա օրինակաւ միոյ ի մանկածուացն .
զի անգտնին ի դաստիարակութենէն բարկացող գնա ա-
սեն ուսեալ [2] : Օ ինչ առաւել գձուձ և գժպատեհ կաք-
ցէ Թագաւորի քան զարբեցութեն . զինչ գազանագոյն և
սպանողագոյն կայցէ քան զբարկութեւնն ։ Կղեքսանդր
յաղթող եղեալ ազգայ բազմաց՝ յերկուց կայսրանէ
ախոյեն պարտեցաւ , որ զգեղեցիկ արուեստից նորա ըղ-

1 Շանթ է բարկութեն՝ ընդ զո-
րութեն : Պոռզ. Սիր.

2 Եւ ոչ սակաւ նոցա մոլորու-
թենէն ապականեն զբարս . զի որ-
պէս Դիոգենէս բաբելացի ասաձ-
դէ , որ ինչ ախտիւքն Աւետիքեայս
մանկածուս վարակեցոյց զԿղեք-
սանդր , անգտնին ի մանկական
հրահանգացն ածեցին ընդ հզօր և
մեծ Թագաւորին ։ Ա-ինիպ. ա. ։

փառանն չկրնացին։ Օ՛ի այլոց մանաւանդ Ճգներ յաղթել, ասէ Աստուած՝, և ոչ անձին. և ոչ գիտէր ոք մեծ և փառաւոր քան զՔրիստոս իշխանութեի՛ է անձին իշխել։

Օ՛ասուրս տասն՝ Ի՛ղեքսանդրէ՛ի Ա՛րաբիանդ կացեալ՛ի սեպտեմբեր և առ՛ի յայտ առնել զզեղջ մտացն, անց ապա՛ի Ա՛ղեքսիպոլա գաւառ սահմանակից Մակեդեայ. զի անդր ոմանք յապստամբեաց ամրացեալ էին։ Ընտի եին զօրօք՛ի Ա՛ էմն Վ՛ոբիէնէ, յորում Աիսիմիոր իշխեր. և եր ամրոցն անմատոյց, այլ աշխատութեամբ բազմաւ մատեաւ անդր Թագաւորն, և՛ի ձեռն Աքսիաքեայ տեայ իշխանի Համազգեայ նորա, որ ընդ իւր միաբանեալ էր, խնարհեցոյց զԱիսիմիոր՛ի հնազանդութեի՛. և զնոյն ինքն կացոյց՛ի վերայ ամրոցին. և պարգեւս մեծամեծս խոստացաւ տալ նմա, թէ հաւատարիմ կացցէ։

Ընտի խորհէր արշաւել՛ի Վայս, զի անդր Ապիտաւմէն առաջնորդ ապստամբացն ամրացեալ էր. այլ լսեթէ բակից նմա բազդն եթարձ՛ի նմանէ զաշխատութենէն։ Օ՛ի հինգ Ապիտամենեայ տաղտկացեալ յանկեաց և՛ի Թըշուառ կենացն՝ զոր ընդ առն իւրում կրեր, և բազում անգամ յորդորեալ զնա անձնատուր լինել յաղթականին, և ոչ լսելի լեալ, խողխողեաց զնա գիշերի, և ապրեսմբն շաղախեալ ած զգլուխ նորա առ Թագաւորն։ Վայց Թագաւորն զարհուրեալ՛ի տեսլենէն, մերժեաց զնա ամենեւի՛ի բաց։

Իւ հանեալ զզօրս՛ի ձմերոցաց՝ ուր յերից ամաց ձմերկինն, դիմեաց՛ի Աեփազ գաւառ։ Իւ զանասպարտ հայեն եղև մերկ աստիկ, և՛ի խիտ և անդադար փայլատականցն շանապին զօրքն և լքանկին. և որոտիւնոստ ձարձատմամբ՝ առաջի նոցա շանթք անկանէին. և ոչ յառաջ իշխէին զօրքն գնալ, և ոչ զկայ առնուլ։ Իւ ահա յանկարծ տարափք կարկտահառն իջրև զՀեղեզս անկանէին. և՛ի կարի ցրտոյ, մանաւանդ աշխարհին, պակղեր անձրևն ընդ անկանել յերկիր։ Իւ տագնապկին զօրքն. բայց միայն Թագաւորն անրնկձելի՛ի վշտաց, գնայր գայր ընդ բանակն, քաջալերեր խրախուսեր զզօրսն, և զծուխս՛ի հիւղից հեռաստանեայց ամբարձեալ ցուցաներ, և յորդորեր զնոսա վաղագոյն անդր Ճեալել հասանել։ Իւ հրաման ետ նոցա Հարկանել մայ-

1 Ձաղթող եղեալ Թագաւորացդ ցաւ Նուաձէալ բաց յախտէնէն։ . . բազմաց և ազգաց, նկուն եղև՛ի Աձգին իշխել գերագոյն իշխաբարկութեի. զի զամ ինչ ցանկա- նութեի է։ Սենեկ. ողբ. ձէ։

բիս, և փայտակոյտս այսը անդր խարոյկս բաղում ուրեք լուցանել, և կեցոյց զանասին. այլ կորեան ի զօրսն արք աւելի քան զՀազար։ Այլ ի խիստ մըրկին որ ինչ վնաս սպայիցն և զինուորաց լեալ էր, զայն հատոյց նոցա Թագաւորն։

Այլ երբև հանդեան, չու արար խաղաց ընդ աշխարհն Ասիաց, և զերկիրն յատականուէիէ եդ։ Այսպա հրաւիրեաց զնա Ալէքսիարտ, և արար նմա ձաշ մեծ՝ առ խոժական ձոխութիէ։ Այլ էր Ալքսիարտեայ դուստր Հարոքսանէ օրիորդ չքնաղագեղ և զուարճախօս, հանդերձ հաւատուէիէ և հանճարով։ Այլ ի գեղ նորա հարեալ Թագաւորն հարմացոյց զնա իւր, աքօղեալ զանձն պատճառանօք խորագոյն հաստատելոյ զբարեկամուէիէ յերկոսին ազգսն, իբր շահակից զնոսա արարեալ՝ զի և մի ինչ խտիր կայցէ ընդ յաղթօղն և ընդ յաղթեալ։ Այլ մանկեդմացիք զչարեցան ընդ Հարսանիսն, և սրտմտէին աւագանին ընդ նախատինսն՝ զի գերւոյն փեսայ եղև Թագաւորն. այլ յորմէ հետէ կղիտոս սպանաւ, ոչ ոք իշխեր համարձակ խօսել. և ի վերին երեսս ակնառուէիէ գովելն զնա՝ որ մարդահաճուէիէ և վատ շողոմուէիէ բարւոք արբանեկէն[1]։

Այլ Ալէքսանդր խորհուրդ կալեալ արշաւել ի Հնդիկս, և անտի դիմել յԱվկիան, պատուեր ետ կանխաւ զգուշանալ զնմ ի մի կրձիճն ինչ խորհրդոց իւրոց յետ կուսէ յարիցէ՝ երեք բիւր մանկտի ընտրանաւս յիմ ազգաց կազմել զինուորել իւր ի պատանդ։ Այլ զԱլրատեր յղեաց ի վերայ ապատամբաց ոմանց, և կացոյց զնոսա գիւրաբ ի հնազանդուէիէ։ Այլ զՆօրակենէ գաւառ Պողիսպերքոն նուաճեաց ընդ լծով նորա։ Այլ երբ իւր խաղաղուէիէ եղև նմա յիմ կողմանց, ապա երթայր ի Հնդիկս։ Այլ էր Հնդկաստան աշխարհ փարթամագոյն ընդ տիեզերս՝ ոչ միայն յաձախուէեամբ ոսկւոյ, այլ և մարգարտով և ակամբք պատուականօքք. և բնակիչք աշխարհին չուայլեալ նոքօք առաւել քան զնայելականն գեղ պձնին. և համբաւեր զզօրաց աշխարհին՝ ասպարս ոսկեզէնս փղոսկրեայս կրել։ Այլ Թագաւորն, զի ոչ յամձն առնոյր լինել իւրք ի վայր, արար վահանս արձաթապատս զօրացն, և սանձս ոսկեզօծս ձիոցն, և զարդս

1 Ա՚ՀԼ յետ Կղիտոս մեռանել երեսս՝ որ բարւոքն մարգահաճէ՝ ըստ ոչ ևս էր աշտուէիէ, և առ հաւանէին։ Կ։ Կ՚՚ԻԳ։

զրահից ոսկի և արծաթի. և պատրաստեր արշաւել երկոտասան բիւրուք նովին կազմութիւն։

Իբրև ետ ինչ կազմ եր ի չոլ, զայն ժամ պատեհ վարկաւ ի մերկանալ զհեղինուշ խորհուրդ ետծական փառաց ցանկութենէն, և փութայր կատարել զայն։ Օ՛ի ցանկայր կոչել որդի Աբրամաղդայ, և համարել խոկ, իբր թէ և մեզ մարդկան իշխիցէ որպէս լերուժի. և կամէր՝ զի անկեալ երկիր պագանիցեն նմա մակեդոնացիք, որպէս պարսիկք Թագաւորացն իւրեանց։ Ի խոլական ցանկութենէն հրապուրեցեալն զնա և մարդահաճոյք, ժանտախտք ապականիչք արբունեաց, և քան զսպառազէնն Թշնամիս երկիւղալիք Թագաւորացդ՝։ Ալ որ ի մակեդոնացւոց յանձն էառ զվատ պաշտօնն, ոչ որ ի քաց եկաց յօրինաց աշխարհին. այլ ամ չարեացն պատճառք եղեն ոմանք ի Յունաց, որոց զեղծումն բարուցն նախատինք էին ազգին ուսուցչապետի դիտելեաց և առաքինութեանց։ Մինչդերեք Աղեքսդայ խոտանաւք՝ էին արդեօք նմա քան զիշխանս մակեդոնացիս համացեղս, և քան զղօրավարս իւր։ Ահա նոքա այնպիսիքն չերկիւնս զնա բարձրացուցանէին, և՝ի վեր քան զՀերակլ և զԴիոնիս զէին։

Յօն հաւաքեցոյց և արար ինձոյս շքով մեծաւ, և հրաւիրեաց զամ առաջս դբանն զմանկեդոնացիս և զՅոյնս և զմեծամեծս Պարսից. և վայրկի մի բազմեալ ընդ նոսա ի չաշ, ապա մեկնեցաւ ի բաց։ Յայնժամ Աղէոն մի ի շողոմայրարացն խօսել կալաւ, և չերկարաբանոյն նուաստ զգովեաց զԹագաւորն, որպէս այս ամ չառաջագոյն կազմեալ պատրաստեալ էր։ Ասա ի կարգ արկեալ՝ Թուէ որ ինչ բարիս արարեալ էր ընդ իւրեանս. և դուբիւն զիմիսարէնն ցուցանէ, զոյն ինկոյլ առնել զՀատուցումն, և զաստուածական պաշտօնն ընծայել նմա, որպէս դասանելիսն իսկ զնա որդի աստուծոյ։ Ի օրինակ ի ներքս ածեալ զպարսիկս, և զՀերակլ և զԴիոնիս, զև նոքա նախանձուն ժամանակակցացն չաղԹեալ՝ ապա աստուածացան, և ասէ. Ի՞նձ այլք երկմտեն զարկիս արդար հատուցանել քաջութենէն Աղեքսանդրի, այլ ես հաստատեալ եմ ի դառնալ նորա այսրէն՝ երկիր պա-

1 Յայսոցիկ խղճ վարեաց զնա զղօրութենէ նոցա չաճախագոյն քան և ինասակարն մարգահաճութենէ, զեղծմամբ հրապուրէն։ չար անձինն ի Թագաւորաց. զի Կ. Կ-ուէ։

գանել նմա ։ Այլ դուք նմանող լերուք ինձ ամենեքին , մանաւանդ իմաստանգոյնքդ՝ յօրինակ այլոցն , ի հա- տուցանել զպարտական պաշտօնն մեծի արքային ։

Հայտնի իսկ ի կալիսթենես ձգելին բանքն ։ Վասնզի Կալիսթենես ազգական էր Արիստոտելի ։ և Արիստո- տել էտ զնա սակաւ իւրում Աղեքսանդրի , ընկերել նմա Յարշաւանսն ի Պարսս ։ Օր ի Թուէ խոհեմ և լուրջ բարուքն քաջ յայմոսք ի իրատեւել զնա և ի հասեցուցա- նել ի յանդուգն բերմանցն՝ յոր եւանդն մանկութեն զառածաներ զնա ։ Այլ սոգտաներ՝ որպէս ոչ ունելոյլ ողջախոհ և յանկուցող բարս աւագանւոյ , և զի զաս- փոյն չգիտեր՝ ի միջասահմանին կալ՝ վատ փաղաքշա- նաց և անմեղելի խօտուելե ։ Օր Արիստոտելի ընդ- ունայն ջանացեալ մեղմել , և գուշակեալ զյարիս խիստ համարձակախօսութենն , զհոմերական տողն ստէպ յեղաշ նակէր ,

Ա՛ աղամեռիկ լեգիս , որդեակ , զի՞նչ խօսիս ։ Իլիական . ԺԳ . 95 ։

և ոչ սիսալեաց գուշակութեն նորա ։

Ընդ Կալիսթենես , իբրև ամենեցուն լուութեն եղև , և ամենեքին ի նա պշուցեալ նայեին , խօսեցաւ այսպէս ։ Այլ թէպէտ ոչ ինչ աւելի քան զպատշաճն եր ի բանս նորա , որպէս ինձ թուի , այլ ուր դէպքն պահանջին հա- կառակ կալ կամաց հզօրի և ընդդիմախօսել՝ անդ և ցած և պատկառելի նախանձ՝ բերոստ և ստահակ բա- զում անգամ թուի ։ Այսե . Այնէ աստ էր Թագաւորն , և լու ի լու նմա զանազդ խօսէիր , չէր պարտ առնել պատասխանի . զի ինքն իսկ լռեցուցանէր զքեզ , զի մի ի խուժական օրէնս զառածեցուցանիր զնա՝ ասելի առնել զանձն և զիառս նորա անարժան մարդասհաճու- թիւդ ։ Այլ զի չէ աստ , ես փոխանակ նորա տաց պա- տասխանի ։ Ա՛ արիանիմ զԱղեքսանդր և ե արժանի համ փառաց՝ որ վայելէին մարդկան . այլ բազում ինչ խոիր է ընդ պաշտօն դիցն և ընդ մարդկան ։ Այսպա մեհեանք վայելին և բագինք և ուխտք և զոհք , սոցա գովութիւք և մեծարանք ։ Օ Թագաւորս ողջունելիք , և հնազանդ դիմք նոցա կամակար , և հպատակ կամք և հաւատա- րիմք նոցա . այլ դիցն երկիր պագանելք , տօնս յօրի-

1 Ընդ մէջ անաչառ խոտուելե ուղի զերծ ի փառամոլութենէ և ի վատ մարդահաճութենէ գնալընդ վտանգաց ։ Տալիս . գործէ . ՟Բ . ՟Ե ։

նեմք, և երգս և օրհնութիւնս նուագեմք։ Այս աւանիկ և դիցն այլ և այլ պաշտամունք են՝ ըստ պայմանի մեծութեանցս. զի զկաստոր և զՊողիտեւկիս՝ ոչ որպէս զՀերմէս և զԼիոս պաշտեմք։ Այլ խանգարեացուք զկարգն, դից զմահկանացուացն տալով, և մահկանացուցեալքդ զդիցականն։ Ո դիցամուեր անձին արքայ ըզպատշաճ պաշտօնն՝ այլում որ ընծայեալ, ո՛չ ապաքէն ի ցասումն գրգիցէ զաքեայ. իսկ ի դիցն ցասմանէ ո՛չ զանգիտիցեմք՝ զանհաղորդականն նոցա պաշտօն մահկանացուցեալ։ Այնք որ իբրև զՊղեքսանդր քաջ, գիտեմ և ես, և ոչ աշխարհակալ նման նմա մեծութեաբ և փառաբ. այլ մարդ է և նա, և ոչ աստուած։ Յոմանց մերկանալոյ ի մահկանացուէն չէ հնար նման աստուածանալ. և անագան՝ որչափ մարթի ցանկալիք մերկանալ նման յայնմանէ։ Հելլէնք զՀերակլէս յետ մահուն պաշտեցին հրամանաւ պատասխանւոյ պատգամախօսին. իսկ երբ յաղթեալք յաղթականին հետուն օրէնս, զի Պարսից նմանիցեմք։ Նոյն լեցի՝ զի Պղեքսանդր առ ի նոյնպէս ձեռ զՊսիա ընդ Ալեքսադր, անց ընդ Ալեքսպոնտ, և ոչ զԱլեքսադր ընդ Պսիա։

Ի խոր լռութեբ ունկնդրացն յայտնի էին խորհուրդք մտաց նոցա. և Թագաւորն ծանեաւ ի ներքոյ վարագուրին լսելր զնմա. և ազդ արար Կղէոնի լուծանել զվէճն, և ասաց՝ Պարսից միայն ըստ բնիկ սովորութենն երկիր պագանել ի մտանել իւրում։ Այլ յետ սակաւ միոյ եամուտ ի ներքս, որպես ի կարելոր գործոց դառնալ. և փութացեալ երկիր պագին նմա պարսիկք։ Պողնպերքոն մատ առ նմա կայր, և հասեալ զմի ոմն ի Պարսից յերկիր հարեալ զդէմն, և ասէ ցնա ընդ խաղ, Չար ուժգնագոյն։ Այլ Թագաւորն պատրեալ ընդ կատականս նորա, հրամայեաց արկանել զնա ի բանտ, և լուծաւ երախանն։ Ասացեալ Թէպետ և յետոյ ազատեաց զնա, այլ ոչ ևս զկնախութենէն։ Ո՛ի ի վերայ նորա պատճառս տարապարտս յուզեալ, սպան զնա։ Վասնզի Այծմողաւս ի մանկագոյն սպայիցն, որ մերձ կայր Հանապազ Թագաւորին, գժգոհեալ ընդ նմա վասն իրաց ինչ՝ դաւ գործեաց նմա։ Այլ յայղողեցին դէպք յայտնել դաւոյն ի ժամադրին, և դաւաձանքն կալեալ և գաւեալ՝ սպանան. և ոչ ոք զկնախութենեալ ամբաստանեաց ի դաւակցութենէն։ Այլ զի Ալբմնդաւեաց մտերիմն էր, այն միայն շատ համարեցաւ նմա ի դատապարտութենէ, և արկաւ ի խաւարչտին բանտ ի չղթայս. և ցամ դառն

տանջանս կրեալ առ ՚ի յանձն առնուլ զմեղանս, և զանմեղութիւն իւր մինչև ՚ի սպառ խոստովանեալ, կտտամահ եղև։

Լ[illegible]թէ արդար խօսել զՅուստինեայ կարծիցէ, [illegible]. ժե. Լ իւսիմաքոս աշակերտ և մտերիմ բարեկամ Լալիսթէս ՚ի նեայ տեսեալ զնա յանողորմ և յերկար տանջանսն, զեղ մահու արբոյց նմա ՚ի կարձել զյաւն։ Լ՚ւ թագաւորն ծանրացաւսումն լեալ ընդ այն, հրամայեաց գեշ արկանել զնա ամեհի առիւծու։ Լ՚ՍԼ Լ իւսիմաքոս այր կորովի և անվեհեր՝ ձորձով գեհենն պատեալ՝ արկ յորկոր գազանին, և զլեզուն ՚ի բաց կորեցաց, և սպան զնա։ Լսկ թագաւորն ՚ի փորձ մեծի քաջութեն նորա՝ զգաստացաւն ՚ի զարմանս փոխեալ, ասաց նմա մեծարանս և սէր։ Լուբրիոս առասպել զլեզս զայս վարկանի, զի և բերէ ժ. ա. իսկ զկերպարանս առասպելացս։

Այլոյն այս որպէս ախորժելի Թուի. այլ ոչ ինչ իբրև զտարապարտուց զանողորմ մահ Լալիսթենեայ եղև ՚ի նախատինս Լզեբսանդրի։ Օ՚ի էր նա արդարև իմաստասէր, անյեղամիտ, բազմահմուտ, անմոլար, խոստակեաց, բարեկրօն, և ոխերիմ թշնամի ամ կեղծեաց և մարդահաճութեն։ Զկեր նա այր արքունեաց, ուր դիւրադարձ և դիւրահաւան և ողորկան միտք պիտին, և խորամանկ իսկ և նենգաւոր, կամ գեթ կեղծ և մարդահաճոյ։ Յառաջս հրաւիրեալ ՚ի ձաշ արքային, դուն ուրեք երթայր. և յորժամ յանձն առեալ գնայրն, լուսթէ և տխուր դիմօք յանդիմանէր զնմ զասս և զդործս բազմականին։ Լովին սուղ ինչ խիստ բարուքն՝ գանձ անկշռելի էր ձշմարտասէր թագաւորի. զի ՚ի բազմանոյն մարդկանէն, որ շուրջ զՆզեբսանդրիս կէին, նա միայն իշխեաց խօսել զձշմարտութեն։ Լ՚ՍԼ ուր գտանէին իշխանք մեծարղեաց այսպիսւոյ գանձուն, և որ գիտէին յօգուտ ՚ի կիր արկանել զայն։ Լ՚ժուարաւ ձշմարտութեն առ մեծամեծս մերձի ընդ Թանձրամած ամպ իշխանութեն նոցա և սպասաւորութեն մարդահաճոյ առաքանչն։ Լ՚հաւոր պատուհասիւն զգոյշ եղեն ամ լաւ որեարն ՚ի խրատելոյ զտոյգ օգուտն թագաւորին. և յայմ հետէ ոչ ոք համարձակ ՚ի ժողովս խօսեր, և տիւրասէրքն իսկ և բարեղոյն հասարակաց նախանձաւորք՝ ոչ ևս պարտ համարէին յանդիմանել զնոցունք։ Լ՚մենհետև մարդահաճութեն միայն լսելի էր նմա, և պարտ[illegible]բեալ զսիրտ նորա զեղծոյց. և արդարութեն ընկալաւ պատուհաս ամբարշաւաճ իղձ նորա յանհաղորդական

պատուհանն, ընդ որում փոխանակեաց զայրն լաւ քան զնա աւագանին։

Վարձեալ վերստին կրկնեմ ընդ Աւետիս։ Ալիս Թէոդոս սպանումն ի յաւերժ նահատիս եղև Աղեքսանդրի, և մեզ անծնելի. և ամ լաւութիւք և պայծառ արուեստիք ոչ ծածկէն զամենի նորա։ Այո, զպարա կախումբ զաշխարհակոյտ ձամբարն փղոյ Աղեքսանդր, ասէ Աւետիս, ընկէց յանձուոյ և կորոյս զՀոյը Թագաւորս երկրի, նուաճեաց զազգս և զգաւառս առանց Թուոյ, եհաս մինչև ցԱվկիան, և զահհմանս տերութեանէ իւրոյ ի ծագաց Լուսոյ մինչև ի ծագս արևելից տա րածեցոյց, այլ նա և զկալսեդոնիկես սպան. և եղեւն այն յանցանացն, զամ արուեստից նորա զխառն ժանտա ցուցանել [1]։

ԳՕՊՈՒԱՆ ԺԵ.

Զոմ Աղեքսանդրէ ի հնդիկս. և ասա ի մէջոյ յաղագս հնդկաց բանի. և ի գալուստ յոգուանա անառուիկս յարքայէն նորա, և բաղամ վրանօթօթ հնգեան նուաձել սնոսա. և ընդ Աստղս և ընդ Հիդասպ գետ անցանել. և վասն մեծի յաղնաւորէն ընդդէմ Պուրոսի, և կռուոցանել սնա անդրէն յաղնան։

Կարդ. Ը. Ե։ Օ երթիկնքուն զօրացն խափանել կամեցեալ, չու ա րար Աղեքսանդր՝ գնալ ի հնդիկս՝ Այն իսկ ինքեան յօգուտ էր շարժուն և պատերազմ. զի ի հանդարտու թէ՝ և զկամեսկալ յաղթութեացն զվառս ալարտեր։ Վառամոլութէ խօլ մղեաց գնա յարշաւանն անօգուտ և ի բազմավտանգ. զի ի վաղնջուց առասպելապատում վէպս հելլենական ընդերցեալ էր, թէ Դիոնիս և Հե րակլէս՝ որդիք Դևսի և նոքա՝ անդր ի հնդիկս հասեալ

[1] Եւ զայս Աղեքսանդրի յան ցուման անմահ՝ ամ առաքինութիւք նորա և յաղթութիւք ոչ ընդեն։ Զի թեպետ զբիւրս բիւրուց պարս կաց սպան, սակայն և զկալսեթե նէս. և եթէ զԴարեհ մեռոյց զաղգի պետութեան զիշխեցոյն, սակայն և զկալսեթենէս սպան։ Եւ թեպետ զամ ինչ մինչև ցՀվկիան նուաձեաց, և ընդ Հվկիան իսկ նորագաղթ նաւատորմիս նա զաց, և ի ծագս Թրակիոյ մին չև ի ծագս արեւելից զպետութիւն տարածեաց, սակայն և զկալսեթենէս սպան։ Զի թէ և քան զամ Թագաւորս և զզօրագարս՝ որ ի վաղնջուց ժամանակս կացին՝ գեր ի վերոյ անցեալ էիցէ, ոչ ինչ յամ քաջութիւնն՝ սպանութենէնն կալսեթենէսոյ փոխաբերեսցէ։ Մնէն. Խոր. Բ. Ը. ծԲ։

էին, և յաւուրսն յայնմիկ քան զնոսա. և յաւելուին մարդահաճոյք հրապուրել զնա ի ցնորական յանհեթեթ խորհուրդն։

Տէս ինձ զկարծեցեալ դիւցազանցն փառս և զքաջութիւն, յորոց երևելի պայծառութիւնն բազումք շլացեալ զարմանան ընդ Ա՛ղեքսանդր։ Այլ որպիսի՞ ինչ էն. միայն յանկուածիւն արշաւելոյ ընդ տիեզերս, ի խոովել զխաղաղութիւն ազգաց՝ որոց ոչ էր ինչ ի մտի ձեռս. Թշնամի համարել՝ զորս ոչն ծառայեցեն նմա. կործանել սատակել՝ որ իշխեցեն պահ ունել ազատութեանէ իւրեանց և ընչից և կենաց ընդդէմ յելուզակ հինին, որ ի ծագաց երկրի տարապարտուց արշաւեցն ի նոսա։ Յանիրաւ հարստահարութիւնն յաւել զանմիտ և զանհամար խորհուրդ նուաձելոյ աշխատութեանէ մեծաւ և մեծամեծ վտանգաւք զամբոխ ազգաց բազմաց յոյժ՝ քան որչափ ի հնազանդութենէ մարթեցին ունել, և զգառն հարկ՝ հանապազորդ պատուհասելոյ զապստամբս, և անդրէն ի ծառայութենէ կացուցանելոյ։ Ի՞նչ ասիցի հանդուրժել պատկեր աշխարհակալութեանն հնդկաստանեայ, զոր առաջի կայ ինձ պատմել. այլ նախ զաշխարհին և զբարուց հնդկացն, և զչքնաղ իրաց երկրին սուղ ինչ կամիմ ասել։

Օ հնդկաստան աշխարհ պաղտմիոս յերկուս բաժանէ՝ յայս կոյս և յայն կոյս Գանգէս գետոյ. և ոչ անց յայն կոյս Ա՛ղեքսանդր, և ի Գանգէս խակ ոչ եհաս։ Հնդկաստան յայս կոյս Գանգեայ ցկրկին գետս մեծամեծս սահմանի. ցՅնդոս՝ յորմէ աշխարհն անուանակոչի, և ցԳանգէս։ Ցայն ինքն պաղտմիոս յարևմտից կողմանէ դնէ նմա սահման զպարոպամիս և զԱ՛քաքոսիա և զԿեդրոսիա, որ են սահմանակաք կամ սահմանակից աշխարհին պարսից. և ի հիւսիսոյ զլեառնն Իմաւոս՝ որ ի մեծն Վկիւթիա է. յարևելից զԳանգէս, և ի հարաւոյ զՂվկիան կամ զՀնդկաց ծով։

Հնդիկք ազգ ազգս, ասէ Ա՛րրիանոս, և չիք ի նոսա պոփ. եր. 324։ ստրուկ, որպէս և ոչ ի սպարտացիսն։ Ոչ այլ սպարտացիք զոյլազգիս տարկաբար ծառայեցուցանեն. իսկ հընդիկք և ոչ զօտարս։ Ել կանգնեն զամբան մեռելոց, այլ զհամբաւ համարին շրիմս մեծամեծ արանց։ Ի՞արթէ և եօթն կարգ զանազանել ի նոսա։

Ցանկին և պատուականագոյն սակաւաւոր քան զայլս՝ Իրաբամնցն, որ են որպէս աւանդապահք կրօնից, զորոց ի յաջորդսդ ասացօւք։

Երկրորդ կարգ աւագագոյն՝ մշակացն, որ արգոյք էն առ նոսա. և է նոցա միայն պատաղանի՝ ի գործել զերկիր, և ոչ երբեք՝ ի զինուորութիւն կամ՝ ի սպասաւորութիւն վարին՝ ի մարտ. և՝ ի ժամանակս պատերազմի անլոյծ օրէնք էն՝ Թողուլ զնոսա և զերկիր նոցա՝ ի խաղաղութեան։

Երրորդ կարգ՝ հովուացն, որք զհաշխնս և զարջառս դարմանէն բացօթեայք, և ոչ բնակէն՝ ի գիւղս կամ՝ ի քաղաքս։ Ինդ լերինս թափառական վարեն կենցաղ, և յաճախէն յորս։

Չորրորդ կարգ՝ վաճառականացն և արհեստաւորաց և նաւավարաց և նաւաստեաց։ Եւ սոքա ամենեքին, բայ յառաջնմէ կարգէն, հարկատուք էն թագաւորին. բայց միայն որք զդէնս պատերազմի դարբնեն՝ ապահարկ էն. և հաս իակ՝ ի ժողովրդենէ կարգեալ է նոցա։

Հինգերորդ կարգ՝ զինուորացն. նոցա գործ պատերազմ է, և ոչ այլ ինչ. ամ ինչ նոցա յաշխարհէն պատրաստի, և՝ ի պատերազմունս իակ ոռճիկ առատ բաշխի նոցա, և յամ ժամանակի աղատ և անհոգ կեան։

Վեցերորդ կարգ՝ վերակիտողացն, որ դէտք կան այլոց, և քննեալ զիրս քաղաքաց և անդաստանաց՝ զամ բան հասուցանեն առ թագաւորն։ Ի պաշտօնի յայն կամ յասպագութիւն ընտրին արդարակորովքն և անկեղծք, լաւք և հայրենասէրք։ Երբեք ուրեք զումեք նոցա չերև սոգիւա նենգութեամբ, ասէ նոյն մատենագիրն։ Երանի՛ ազգին, եթէ այս այսպէս էր. այլ գեթ երևի այսու՝ զի նշմարտութիւն և արդարութիւն՝ ի պատուի էին առ հնդիկս, և խարդախութիւն և նենգութիւն՝ ատելի։

Իակ եօթներորդ կարգ՝ առեւտականացն ժողովոյ հասարակաց, որ օգնեն թագաւորին՝ ի յանձնառութիւնս իրաց աշխարհին։ Ի նոցանէ կան դատաւորք, ոստիկանք, կուսակալք, զօրավարք և սպայք զօրաց ընդ ծով և ընդ ցամաք, մնքեսպետք և հարկահանք, և ամ գանձաւորք։

Եւ այս ամ կարգք չհաղորդին ընդ միմեանս ազգահատնութիւն. և ոչ է օրէն կրսպակաւորի ընդ երկրագործի ամուսնանալ. զայս և զայլսդ կարգացն իմս։ Եւ ոչ արուեստս կրկին միւամ ունէք ՀրամանՀ է գործելոյ, և ոչ կարգ՝ ի կարգէ փոխելոյ։ Ցէս ինձ քանի յաղողութեամբ արուեստք և ձարտարութիւնք սովին կարգաւ զարգանային. զի անցնիւք զնուքն յաւելցուր՝ ի հանձար և՝ ի

խելամտութիւն նախնեացն, յորոց անընդհատ յաջորդութիւն զարուեստն ժառանգեր։

Խազում ինչ մարթեր յօրէնս յայսոսիկ խորհել, այլ կարգ բանիս չթողացուցանէ. զայս միայն յուշ առնեմ, զի ահա ամ խնամատուն առաջնորդութեամբ և բարեկարգ պետութեաց առաւելագոյն խնամք եղեն յերկրագործութեան և ի հովուութեան, որ են կրկին անասալ աղբերք ճոխութեան և առատութեան. և անհոյժ առնել զմին կամ զմիւսն զարևոր օրինաց քաղաքավարութեան յանցումն է։

Օ արմանամ և ընդ վերադիտողացն կարդի հաստուն. զի որպիսի ինչ և էիցեն սակայն լուտեաք կարգեալ էին կուսակալացն և ոստիկանաց և դատաւորաց. որով միայն հնար էր խափանել գպրիտակութեան և զբրնութեան, որ հեռի յարբունեաց յանապայման իշխանութեանն յաձախեն։ և որով միայն մարթեր թագաւորին հմուտ և տեղեակ լինել իրաց աշխարհին. զի առանց այսր չէ մարթի բարւոք ուղղել զժողովուրդն՝ զոր ՚ձեռնամ տեսչութեան ետ ՚ի ձեռս նորա, և անձամբ պարտի վարել զայն, և յայնմանէ չկարեն ազատ առնել զնա պաշտօնեայք, որպես ոչ ղիւխանութեան նորա զրաւել։

Կամիմ և ոչ զայս անլիշատակ առնել, զի ՚ի հնդիկս՝ ՚ի յունեայ ամոյ միոչ ՚ի սեպտեմբեր և ՚ի հոկտեմբեր՝ անձրևք յորդք յաձախեն, և գժուարին գետոց անցք, և ստէպ հեղեղք առնեն։ Ցնս քանի առաւել աշխատութեի էր զօրացն Ալեքսանդրի յայնմ յեղանակին խաղալ ընդ աշխարհն։

Օ հնդկաստան աշխարհի իրս հասարակաւօսկ լսով, սուտ ինչ և զիտաց ասացից, որ անդ քան ամ ուրեք յաձախ են, փիղ է վիթխարի և հզօր քան զամ չորքոտանիս. և են ՚ի վերայ բարձունք միոչև ցերեքտասան և ցհնգետասան ռանուչափ։ Իսկ տարեւոր ժամանակաւ կենդանասաերին յարգանդի մեր, և մեռանին հարիւրապատիկ, հարիւր և քսանամեայ, և ևս երկայնակեացք են։ Թէ լսեցեալք նախնեացն։ Կենդիէ փղին կամ պատիճն երկայն և մատիչ է, որպես փող ստուար. և է այն նման փոխանակ ձեռն[1], և ՚ի բազում կարիս օգնէ նմա զիւրարձամ ձասլատմամբն և անպատում ուժովն։ Ոչ ան-

1 Ձեռն տուաւ փղի, զի ըստ Ձեռ քան զփիղ ուշիմ ՚ի կեն. տուաւ մարմնոյն՝ գժուարին էր դանել, և ո՞քան զնա հակայաձև, ձարակել նմա։ Կիւ. յոչ. բն. բէյ. անդ. ա. չէ։ բ. ՃԻԳ։

բառանդաղ անհեղեղ յայլմանդամ կենդանիս այս, զգօնութեամբն և ձարտարութեամբ՝ հալն ուշդ մարդ. կայոյ ։ Ընտելանայ և ածի ի համբոյր , և երթեալ գետ է , մինչև հիւծել տրտմութեամբ ի կորուսանել զտէրն , և մերթ զիւրովին իսկ գնայ՝ ի մեղանչելն ինչ նմա կամ ի սպանանելն զնա ի ժամանակի կատաղութենն . և ուշիմ է առ ուսումն ։ Լըրհանաս , հատատարին վիպագիրը , տեսի՝ ասէ՝ զմի ի փղաց ճնծղայս ի սրունն կապեալ , զի պարերբ և մերթ զմին ի ճնծղայիցն մերթ զմիւսն պատճառն երաժշտաբար հարկանէր ի մէջ պարաւորաց փղաց , չափով և թուով զարմանալի ա. րուեստիւ ։

Լոյն ինքն երկայնագոյնս և զօրինակ որսոյն նկարագրէ ։ Ընդ շրջապատ մեծ՝ փոս հատանէն լայնատարած իբրև քսան ոտնաչափ , և խորայատակ ոտնաչափս հնգեւտասան՝ աւելի կամ պակաս . և անցեն շաւիղ ընդ կողմն մի թողուն, դալարի դարանաւոր՝ կամրջաւ գործեալ , զի մի կասկած ինչ խորագէտ կենդանին կալցի ։ Ո՞հոյն պեղեալ ի խրամին՝ երկուստեք դիզանեն ի բարձրութիւն իբրև զպատուար , և դարան յարտաքնումն գործէն՝ Թաքչել ի նմա և լրտեսել զփիղն ընդ ծակ ։ Լե՛ի բաւկի անդ թողուն երիս կամ չորս փիղս մատակս ընտելացեալս ։ Յոկ արուաց տեսեալ զնոսա ի հեռուստ կամ ի ձայնէ նոցա զգացեալ՝ անդր դիմեն , և պատեալ զնորա մէնն՝ ընդ շաւիղն ի ներքս մտանեն ։ Լե՛ դարանամտիցն բեկեալ զկամուրջն , ընթանան ի մերձակայ շէնս՝ կռչել օգնականս ։ Լե՛ զաւուրս քանի մի սովով և ծարաւով նուազեցուցեալ զնոսա , ապա հեծեալ յընտանի փիղս՝ մտանեն ի բակն և յարձակին ի նոսա . և փաթթով պարտասեցուցանեն զնոսա կենդանեալս ։ Լե՛ պարտեալ զնոսա , հեծնուն ի վերայ . և խոց մեծ զպարանոցաւ նոցա գործեն , և արկանեն անդր պարան՝ զի առ ցաւս վիրին մի կարասցէ խեղդել ։ Լե՛ նոքա նուաճեալ հլուաբար , ընդ այլ փիղսն գան ի տուն . և բուծեալ խոտով և գալար ցորենով , ընտելանան տակաւ գանիւք և սովով՝ մինչև ձայնի տերանցն հնազանդել , և իմանալ զբարբառ նոցա ։

Լե՛ զի ի վաղ ժամանակս փիղք ի պատերազմունս վարեին՝ ամենեցունցն է յայտնի . այլ յամենս իւրեանց բանակին առաւել զեան գործէին քան թշնամեացն ։ Ի ժանեաց նոցա , մանաւանդ թէ ի վրիժակէն , գործի փղոսկրն ։ Ընդ Ալէքսանդր դառնամ ։

Իբրև եմուտ նա ի հնդիկս [1], Թագաւորք գաւառին կոչեր. ջ. ընդ. ե-ձե: կրտսերք սակաւաւորք եկին ամենեքին ընդ առաջ՝ հնազանդել նմա. և կարգային զնա երրորդ որդի Պոխայ [2], Աբրիան. ջ. 182: և աւէին. Օ՜ դիմիս և զՀերակղէս ի համբաւոյ գի- 195: տեմք, այլ զքեզ՝ դէպք յաջողեցին մեզ՝ դեմ յանդի- Պլուտ. մե. 697: ման տեսանել: Արդասիրութեամբ ընկալաւ զնոսա Յոհան. մթ. Թագաւորն, և հրամայեաց գալ նոցա ընդ իւր և առաջ նորդել: Իբրև ոչ ևս ոք երևեր, զԱփեսիոն և զՊերդիկկաս յղեաց ընդ կէսս ի զօրացն՝ հնազանդել զքաղաքսն: Իբրև պատուէր ետ նոցա խաղալ միանգամ դէմ գետ, և պատրաստել նաւս՝ զի յայն կողս զբանակն անցուսցե: Ի՞նչ զի գետք բազումք էին առաջի նոցա, ազուշիկ ետ գործել զնաւհնեայսն՝ առ ի քակել զնոսա և ի սայլս բարձեալ բերել, և ապա անդրէն կազմել յանցս գետոց: Իբրև կրատերայ պատուէրն տուեալ գալ զՀետ իւր փաղանգաւն, ինքն պրուձիոնի և մեհենապետին զօրօք յառաջ խաղաց: Իբրև գիւրին պատերազմաւ վանեալ և խորտակեալ զԻփիկրատեսս ընդդէմ իւր, ըզՀետ եղև նոցա մինչև ի քաղաքն՝ յոր ամրացան: Իսկ իբրև եհաս զՀետ նորա Կրատեր, խորհեցաւ Թագաւորն անդէն ի սկզբան աշացուցանել զազգս՝ որոյ չև զմտիկդնական զնուոց զիտրճ առեալ էր. և զքաղաքն սաստիկ պաշարեալ՝ պատուէր ետ հրձիգ առնել զամուրսն, և զնմ՝ բնակիչս սրով կոտորել: Իբրև ինքն յՐմ Թանալ զալաթսաքն հեծեալ ի ձի, նետիւ խոցեցաւ. այլ չեկաց յետս՝ մինչև էառ զքաղաքն, և հրամայեաց սրակոխ առնել զամենեսեան զգօրս և զբնակիչս, և մի ի տունս խնայել:

Իբրև նուաճեալ զազգն անոնգան, դիմեաց ի Նիւսա քաղաք. և բանակեցաւ մերձ ի պարիսպսն յետ կուսէ անտառին՝ որ զտեսիլն խափանէր: Իբրև ի գիշերին յայնմիկ եղև ցուրտ սաստիկ, որպիսումն չէր պատահեալ զօրացն. այլ ըստ բախտի նոցա՝ գարնան չարին առ ձեռն պատրաստ կայր. և չարին մայրի բազում, և լուցկին հուր ունէ, և ջեռեալ հանդեան զօրքն: Իբրև զաղաքացիքն միանգամ ի գուբս յարձակեալ, և ձեռս ի գլուխս յետս դարձեալ, երկպառակեցան՝ կէսք ի տալ զքաղաքն, կէսք ի ժուժկալել: Օ՜այն զզացեալ Թագաւորին՝

1 Կ՝ասէ թէ Հնդիկք յայնմ ժամանակի ոչ ունէին զիտրճ, եւ ոչ գիտէին գործածել զայն: 2 Ընդ այս տեղի Յոհան՝ ասէ զԱղեքսանդրի զնալ ի գետն Գանգէս, եւ անտի դառնալ ի Պարսս: Բայց ամենայն պատմագիրք հակառակին ասելոյ:

ԱՄԱՀ·ՆԴ նստաւ զքաղաքաւն առանց մարտի պատերազմի, մինչև յուսահատեալ քաղաքացոց յերկար պաշարմանէն՝ անձնատուր եղեն. և մարդասիրեաց ՚ի նոսա Թագաւորն։ Այլ վասն զի հիմնադիր քաղաքին զ՚Ալէքսիա զաստուածն վարկանէին, զաւուրս տասն զօրքն ամ խաղս և խրախճանս ՚ի լերինն անդ արարին ՚ի պատիւ դիցն՝ որ պաշտէրն անդ։

3677 · 327 Այնժամ եկն ՚ի Պաեդալա գաւառ՝ ամայի ՚ի բնակչաց, զի փախուցեալ էին նոքա յանմատոյց լերինս. հանգոյն նոցին և Այկադերայ բնակիչքն փախեան՝ նախ քան զմտանել նորա անդր։ Այլ ինքն իրի փոխեաց զկարգ պատերազմին, և սփռեաց ընդ բազում տեղիս զզօրսն, մի անգամայն նուաճել զթշնամիս։ Այս ոչ ոք ընդդիմանայր նմա, և որք խիզախէինն ՚ի դիմամարտ՝ բեկեալ խորտակէին։ Պտղոմէոս յեղակարծում յարձակեալ, էառ քաղաքս բազում փոքրկուն. և Այղեքսանդր զմեծամեծան կալաւ. և համախմբեալ զզօրս իւր, անց ընդ Այովասպ [1] գետ. և զԱյենոս նստոյց զՀոխ և զբազմամարդ քաղաքաւն, զոր բնակիչք աշխարհին Այազիրա անուանեն։

Այպա դիմեաց ՚ի Աազագս. որոց Թագաւոր նոցա Այշական ոչ յառաջ քան զբազում ինչ ժամանակս մեռեալ էր, և Այղէոփիս մայր նորա Թագաւորէր ՚ի քաղաքին և յաշմ գաւառին։ Այնին նմա երեք բիւրք հետեւակաց ՚ի նեղքս. և քաղաքն ձեռագործիւ և ՚ի բնէ ամրացեալ էր, և արուեստ և բնութի մրցէին ՚ի նմա։ Օ՚ի յարեգ կուսէ ուղևաճոս գետով պարսպէր, և Թումբքն ուղղաբերձ ամբարտակեալ էին. յարևմտից և ՚ի հարաւոյ անհեղեղ քարաժայռիւք սեպացեալ, և առ ստորոտով նոցա խորափիտք ժամանակաւ գործեալ. և ուր ոչն էին խորք, անդ անհնարին աշխատութեամբ վիհս սոսկալիս անդնդախորս բացեալ էր։ Այնչ դեռ անդ զքաղաքաւն շրջեալ Այղեքսանդր հետազօտեր զամուրն, հարաւ նետիւ ՚ի գլուխն. և ՚ի բաց կորզեալ զերկաթն, և ոչ զվէրն պատեալ, եւ՚ի ձի, և դարձեալ զններ զամուրն։ Այլ՚ի նուս ձիոյ զոտն ՚ի կախ ունելով, մինչ արիւնն մածեալ կակծեցուցանէր, աւանդեն զայս ինչ ասացեալ նորա. Այնենքին երդմամբ վկայեալ Այրամազդայ որդւի կոչեն գլուս, այլ վերք իմ աղաղակեն

[1] Գետս այս այլ է ՚ի Կովասպայն, որ հոսէ ընդ Շօշ։

և զգամ՝ զի եմ որդի մարդոյ[1]։ Սակայն ոչ էջ՛ի ձիոյն, մինչև դիտեալ ետես զնա, և զկարևոր պատուէրսն ետ։ Ապա զօրացն կէսք զտուննս արուարձանեայցն քանդեալ՝ զնիւթս վլատակս՛ի խոռոչսն արկանէին. այլք զբուննս ծառոց անդր հատեալ ընկենուին, և կէսք կարկառա- կոյտս քարանց. և այնպիսի եռանդն էր զօրացն առնե- ցուն, զի յինն աւուրս գործն կատարեցաւ, և կանգնե- ցին անդ զաշտարակսն։

Ընկաց չինաց Թագաւորն վիրին ողջանալոյ. եկն ե- տես զգործն, գովեաց զիոյթ զօրականին, և յառաջ մատուցեալ զկազմածսն՝ նետս Թանձրատարափս զմարդ- կաւն տեղացոյց, որ պահ ունէին պարսպացն։ Ա.յլ ա- ռաւել ևս խուժադուժքն՛ի բարձրաբերձ անհնարին աշտարակացն զանգիտէին, որ առանց սպասաւորութե մարդկան՛ի դիցն լինն տեսչութենէ երևէին շարժել, և՛ի վեր քան զզօրութիւն մարդկան՝ խոյքն պարսպա- մարտք և տեգրնկէց նետակալ մեքենայքն, որ նոյ չքնաղ և զարմանալիք Թուէին. և ոչ ևս յուսացեալ ժուժ- կալ լինել քաղաքին, ի միջնաբերդն ամրացան։ Ա.յլ և ոչ անդ զանձինս յամրի վարկուցեալ, հրեշտակս արա- րին անձնատուր լինել։ Ա.ւ եկն դշխոյն առ Ա.ղեքսանդր բազմութեբ տիկնաց՝ որ բաժակօք գինի ածէին նմա՛ի նուէր։ Ա.ւ մեծարեաց զնա Թագաւորն, և կացոյց ան- դրէն յիշխանութիւն իւր։

Ա.նտի զՊողիսպերքոն առաքեաց զօրօք յՈրա քաղաք, և կալաւ զայն անաշխատ. քանզի բազումք՛ի բնակչաց գաւառին յԱ.ւորնին ամուր քարն փախուցեալ էին։ Ա.ւ համբաւ զՀերակլեայ պատմէր՝ զվէմն զայն պաշա- րեալ, և սասանութբ երկրին՛ի բաց վանեալ։ Վ.արա- լեառնս այս ոչ իբրև զայլսն բազում գահաւանդակօք բաժանեալ է դիւրելանելի, այլ լայնանիստ և սրածայր՛ի ձև նպատակի ամբարձեալ անձկանայ՛ի բարձրութե։ Ա.ւ գետն Ինդոս ոչ ինչ կարի հեռի յաղբերէն՝ առ ստորոտով նորա հոսէ ընդ ուղղաբերձ ամբարտակս։ Ա.ւ յայնմ կողմանէ էին աղտիւրք մեծամեծք, զորս հարկ էր ընուլ՝ առ՛ի մարտնչել ընդ ամրին։ Ա.յլ յաջողու- թիւն՛ի դէպ եկեալ, գտաւ մերձ՛ի տեղին անտառ. և հրամանեն ետ Թագաւորն՝ հարկանել մայրիս, և ոստա- քանց առնել, զի դիւրաւ բունքն բարձեալ կրէցին. և

1 Հաստատութբ վկայեն ամե- նեքին՝ զի որդի եմ Ա.րամազդայ.

այլ խոցուածս իմ աղաղակէ զի- նել ինձ մարդ։ Սէնէկ. Բ.ուրր. ծ։

ինքն զնախկին կոչնչն արկ անդր՝ի խոր ձահիճն։ Ի տե-
սին յայն զաղաղակ խնդութեանն հարին զօրքն. և ամ-
բաստանեցին անշնարհին եւանդեամբ աշխատ լեալ յա-
ւուրս եօթն զգործն կատարեցին. և հարկանէին զա-
մուրն։ Այլ վասն զի կարի վտանգ էր, զգուշացուցին
զԹագաւորն՝ մի դիմագրաւել անդր։ Իսկ նա, իբրև
փղ հարաւ, ոչ ունեալով ժոյժ պատուէր ետ Թիկնա-
պահացն խրախուսել զՀետ իւր. և յառաջ քան զօրսն
մատուցեալ ընդ զառ՝ի վերն սողոսկեր։ Ել և անմա-
տոյց Թուեցաւ վայրն, և ամ զօրքն դիմեցին զՀետ նո-
րա։ Այնպին էր վտանգն, այլ նոցա աներեւոյն՝ի մէն
եդեալ էր՝ յաղթել կամ կորնչել. և բազումք՝ի գետն
հոսեալ, ՝ի յորձախոր պտոյտն ընկղմեալ։ Այլ որ
՝ի բարձունն մերձ լինէին, ՝ի վերայ նոցա բարբարոքն
վէմն ստուարս գլէին. որովք մնեալ գահավիժէին ընդ
ողորկ ժայռն, յորս և կռուան ոտին ոչ գոյր. և ոչ ինչ
քան զհեսիլն զայն սոսկալի էր։

Յաղաւորն տրտմեալ յոյժ ընդ կորուստ բազմաԹիւ
քաջաց զօրականացն, հրամայեաց փող հարկանել, յետս
կոչել զզօրսն։ Այայ Թէպէտ և ոչ ևս յուսայր նուաճել
զամուրն, և հաստատեալ էր ձեռնՀաւճ լինել՝ի պաշա-
մանէն, այլ դեռ ևս պատճառէր չԹողացուցանել զայն,
և զաշտարակն և զկապարծս յառաջ մեր։ Իսկ հնձ-
դիկք՝ի Թշնամանս նմա՝ խնդոյս մեծ զաւուրս երկու ըղ-
ձիւ և զդիւրէր գործէին, զամ լեառնն և զշրջակայ
վայրս՝ի ձայն Թմբկացն և ծնծղայից հնչեցուցանելով։
Իսկ յերրորդումն գիշերի լռեցին ձայնք, և ջահիւք ամ
լեառնն բորբոքեալ պայծառանայր՝ տեսիլ զարմանալի։
Պիտաց Թագաւորն՝ Թէ առ՝ի փախուստ հնարեին
զայն, զի յաղջամուղջ գիշերին անվտանգ ընդ գահա-
վէժ վտակն գնայցեն. և պատուէր ետ զօրացն ձայնիւ
մեծաւ աղաղակել. Այս պահեան փախուցեալք. և բա-
զումք մատ առ կուրծս կարծելով հասեալ զթշնամին,
մղեցան՝ի վտիտն, և մահու չարաչ կորեան։ Այս կա-
լեալ Ալեքսանդրի զվէմն՝ սքանչելի իմն անահնկալ յա-
ջողութեն, զոհս և գոհութեի մատոյց գիւցն։

Այսու դիմեաց Ալեքսողիմա, և կալաւ զայն. և զա-
ւուրս վեշտասան խաղացուցեալ զզօրսն, եհաս Ալնդռոս
գետ. և անդ Ալբեստիոն զամ կարևորս անցի զօրացն
պատրաստեալ էր, որպէս զպատուէրն ընկալաւ։ Այայ
Թագաւոր երկրին՝ի սակաւ ժամանակաց մեռեալ էր,
և որդւոյ նորա Ամիեայ հրեշտակ արարեալ առ Ալքե-

սանդր՝ զի հաձայիւք նորա զհայրենի թագաւորութիւնն ժառանգեսցէ : Յորժամ ընկալեալ զհրամանն՝ մայր գալըն առեան նորա ի գահակալել : Յորժամ ետես ընդ առաջ նոր- բա ամ զօրաբն . և իբրև մօտ եղև , մտրակեալ զձին՝ յառաջեաց ինքն . անտի և Աղեքսանդր մնեաց առ նա զերկիւղն : Խօսեցաւ ընդ նմա հնդիկն թարգմանաւ , և ասէ . Դամ ամ զնուազորութիւն իմով տալ քեզ . քո եմ և ես և ամ թագաւորութիւն իմ , որ միայն ի վե- րայ փառաց մարմնոյդ , և ոչ ինչ ակագին է քեզ՝ բայց միայն հաւատագրժութիւն : Ողազաւորն զարմացեալ ընդ միամտել բարբարոսին , ազ խաղաղութիւն ետ նմա , և դարձոյց ի նա զամ իշխանութիւնն : Յորժամ ետես մատոյց ար- քային փիղս յիսուն և վեց , և առնդեայ բազում մեծա- մեծս անհնարին : Ետրոց զնա թագաւորն . Օ՞րքան ե- թէ մնակաց , որո՞ց առաւել պէտք էն քեզ : Յորժամ ա- սէ . Վանզի թագաւորք կրկին նեղեն զնս պատերազ- մաս , զնուազաց առաւել կարօտ եմ քան երկրագոր- ծաց : Յորժամ ետես թագաւորքն կրկին Աքիսար և Պոլբոս , և Պոլբոս հզօրագոյն . և երկոքեան յայն կոյս Հիդասպեայ իշխեին : Ամիս գահակալեալ կոչեցաս Տաբսիղէս , որ բազմաց ի թագաւորաց երկրին նոյն անուն էր : Յորժամ լուայ մեծամեծս ետ Աղեքսանդրի . և ոչ Աղեք- սանդր առատաձեռնութիւն ի վայր գոսա քան զնա :

Ի վաղիւ անդր հրեշտակք յԱքիսարայ եկին առ Ա- ղեքսանդր , պատուիրանաւ՝ արկանել զամ երկիրն ընդ իշխանութեամբ նորա . և դաշինք երկոտասեք կռեցան , և դարձան հրեշտակքն առ իւրեանս : Լայց Աղեքսանդր ամայր՝ զի ի հաշակեալ համբաւէն ահիւ նուաձեսցի և Պոլբոս . և պատգամ որպէս ծառայի յղեաց նմա՝ հար- կատու լինել և գալ ընդ առաջ իւր ի մուտս սահմա- նաց թագաւորութեն : Խրոխտացոյն ետ Պոլբոս պա- տասխանի , ասէ . Լսիկ ընդ առաջ քո չելս սահմանաց իմոց , զնն ի ձեռն՝ պատահել քեզ : Ի ժամանա- կին յայնմիկ հասին և երեսուն փիղք յօգնութիւն Աղեք- սանդրի , և եղեն ի զօրավիղն մեծ նմա : Յորժամ կացոյց զԱքսիդրէս ի վերայ ամ փղացն . և խաղաց գնաց մին- չև յեզր Հիդասպ գետոյ : Յորժամ յայն կոյս գետոյն բա- նակէր Պոլբոս՝ խափանել զանցս նորա . և զառաջեաւ բանակին փղս ուղեսուն և հինգ յաղեղս հուժկուս Հա- կատեցուցեալ էր , և յետոյ նոցա երեքարիւր կառս , և երիս բիւրս հետևակաց . իսկ հեծեալք ոչ ինչ աւելի էին նմա քան զվեց կամ վեցին հազար : Պոլբոս բարձեալ

բերեր ի միջէ ի փղացն. և փիղն վիճելոյն յաղթեաց դամ քան զայլսն եր, և ինքն Պաւլոս բարձր հասակաւ քան զհասարակաչափ մարդիկ. և բազմափայլ գինուքն ոսկեղինօք և արծաթեղինօք վեհ և ահաւոր երեւէր. և արիւնքն համեմատ կերպարանացն եր նմա. և հանձար և խոհեմութիւն՝ ըստ պայմանի բերս ազանցն.

Իսայց մակեդոնացւոց ոչ միայն թէնամին, այլ և գեան ինքն ահագին եր՝ մեծատարած չորից ասպարիսաց լայնութիւն, և խորաջուր ծովատիպ յատակաւն, որում հուն ուրեք ծանծաղ ոչ գոյր յանցս. Իսւ ոչ լայնութիւն հոծումն նորա մեզմէր, այլ իբրև զուղիս ընդ անձուկ խոխոմ՝ սրընթաց ինջներ, և ի ստէպ բեկանելոյ խոխոջող փրփրատեսակ ալեացն գուշակէին՝ զի եր գետն քարախտ և լի ժայռիւք. Իսկ գետեզնն աշաւոր և՝ ծածկեալ զօրօք և ձիովք և փղօք. զի կային անդ աշտարակաձև գազանքն, և ի վարչացն գրգռեալ սոսկալի ձայնիւն յաձախէին զահ թշնամեացն. Իսւ յայնմ ամի ոչ վհատեցան զօրքն՝ անսասան արիւթիւ, խրախուսեալք միասյաղթ անվրիպելի յաջողութիւն. Իայց ոչ յուսային ընկնել յաղթել յորձանաց ալեացն, և անվտանգ յափն մտանել.

Իսւ էին ի գետն կղզեակք բազումք խիտ առ խիտ. և անդր անցեալ ի լեզ հնդիկք և մակեդոնացիք՝ զղէնսն ի գլուխս կրելով, մրցեին հանապազ ընդ իրեարս՝ յանդիման երկուց թագաւորացն, որոց ցանկալի խակ եր փոքն այն, և ի նախաշաւիղ թեթև մրցմանէն՝ զմիաձամառւռ պատերազմին էլսն գուշակէին. Իչն սպաք եր կու ի զօրս Իզեքսանդրի Իգեսիմաք և Իիկանովը, աբիւսիրեալք լի քաջութիւք, որք օգնականութեամբ անցողդողդ բաղդին յամ վտանգս անվեհեր խիղախէին՝ Իսւ քա ընդ քաջս ի մանկտուխն՝ որոց զոգիս ի բռնի կալեալ եր՝ տեգս միայն բարձեալ ընդ իւրեանս, անցին ի լիւղ ի մի ի կղզեացն՝ յորս էին թշնամիք. և անդ անպատրաստ պար, յանդգնութեամբն ևեթ ամրացեալք, սպանին ամենեքին բազում ի նոցանէ. Օ բազմամտանգ գործն վշարեալ, մարթեր նոցա դառնալ փառաբեր յետս. այլ յանդգնութիւն ի յաջողելն չգիտէ զսփ. Իինչ գեռ նոքա արհամարհանօք և ոտնարութեամբ իմն միայնոյն այնոցիկ՝ որ յօգնութէ պարտէզոյն հասանէին, և ահա պաշարեցան ի զօրաց՝ որ անտես ի նոցանէ լողացեալ հասին անդր ի կղզին, և ընկէցան ի հետաձիգ նետից նոցա. և որք աճապարեալ ընդ գետն փախչէին, կէսք

յալեացն վարեալ և կեսք ի յորձանն ընկլուզան։ Եւ յոյժ յաջողութեամբն այնուիկ վստահացաւ Պովղոս, որ ի գետեզերին կայր ի գնին։

Իսկ Աղեքսանդր ի վարանս տարակուսին, քանզի բռնութեամբ համարձակ ընդ գետն անցանել անհնար էր, զձարտարութեն և զգաւ կուեաց յօգնութեն։ Պատուէր ետ այրուձիոյն ընդ ուրեք ուրեք փորձ փորձել գիշերային, և զաղաղակ հարկանել՝ որպես թէ ահա անյապաղեն ամ պատրաստ կազմութեամբ։ Նոքօք անմարթ կատեալ կայր անդ։ Եւ ի յաձախ աղաղակելն նոցա, Պովղոսի տեսեալ զի ընդունայն էր աղաղակն նոցա և սպառնալիք մոտի, ոչ ևս շարժեցաւ ի տեղւոջէն, այլ սուրհանդակս ընդ գետեզրն արձակեր։ Եւ երբև ոչ ևս էր վտանգ ի միահամուռ բանակէ թշնամեաց ի գիշերապահսն անցս գետոյն, ապա ամ փութեալ խորհէր Աղեքսանդր յայն։

Եւ էր ի գետն հեռի ի բանակէ նորա մի ի կղզեաց՝ մեծագոյն քան զայլսն և անտառախիտ, քանզ յարմար ի ծածկել զնորհրդդ նորա. անտի խորհեցաւ անցանել յայն կոյս։ Եւ առ ի պատրանս թշնամեաց՝ զի մի զգայցէն, ելեալ ի բանակէտէն զկրատեր և զօրս բազումս ընդ նմա, պատուէր տուեալ ի հարկանել փողոյն բառնալ աղաղակ մեծ, զի խռովեսցին հնդիկք՝ կասկածեալ թէ կազմիցին յանցս գետոյն։ և ամայր շարժելոյ Պովղոսի ի տեղւոջէ բանակին հանդերձ փղօքն, կամ յընկերկել կամ ի մատչել ի գետեզրն ընդդէմ նոցա։ Եւ ընդ կղզին և ընդ բանակն զԱղեքսանդր և զՊորգիաս այլազգի հեծելովքն և հետևակօք կացոյց։ և նոցա պատուէր ետ անցանել զօրօքն յայն կոյս՝ մինչ լինքն ի կռիւ կացի զհնամիս։

Ո այսոսիկ պատուիրեալ, ասպ զայլն ամ զայրուձին և զհետևակազօրն ած գիշերային ընդ ձանապարհ հեռի ի գետեզերէն անտեսաբար ի կղզին կողմն՝ յոր խորհէին անցանել։ Եւ յաւել ևս ի պատրել զթշնամին կանգնեցոյց զնորան իւր ի բանակին՝ ուր եթող զնրան տեր, գէմ յանդիման Պովղոսի. և Թիկնապահք շուրջ կային հանդերձ ամ կազմութեամբ պահպանութեամբ մեծի արքայի։ Եւ Պտտաղոսի, որ էր իւր համատ, և ևեթ պարանօքն և երեսօք ոչ լինչ անմանս, մանաւանդ ի հեռուստ՝ գետոյ ընդ միջ անցանելով զգեցոյց զպատմուճան իւր, որպես թէ անդ ի գետեզերին լինքն թագա-

աորն կացցէ, և ոչ այլ ինչ այլոյր հնարս գործիցէ։ Այլ նա ի կղզին՝ յոր ասացաքն՝ անցանէր, և ելանց իսկ անդր հանապազ, և ամ ինացեալ զօրքն ընդ նմա, մինչ դեռ Թէնամիք ընդդէմ կրտսերայ Ալեքսեայ Օ ի յարեաւ յանկարծ մերկիկ մեծ, որ Թուէր խափան լինել խօր հըրդոյն՝ այլ օգնական եղեալ նմա, սքանչելի ինն քաղիբ Թագաւորին՝ որում և խօրք յելս և ի հնարս փոխին. զի յաջորդեաց մերկիկն տարաբ հոծ և սաստիկ, և հողմ ուժգին և որոտընդոստ փայլատակմունք, մինչև զօրացն այլ ղինկեր չտեսանել, և չլսել զյարբառս միմեանց։ Այլ ղէքսանդրի մնացն միայն մարթեր յարկածից անտի չկողդողդել. նա առաւել ևս վտանգաւն իրաիսուսեր. զի շինդն և ամպրոպք և աղջամուղջն ծածկէին զանցսն, փող հնչեցոյց մեռանելոց զօրացն ի նաւս. և ինքն նախ զիւր նաւսին ելոյծ. և աւանդէն ասացեալ նորա յայնժամ. Արծիւք, ո աեղեացիք, Թէ և ի վտանգս յայսոսիկ խիզախիցեմ վասն գումելոյ ի ձէնջ. Օ ի ոչ ինչ Ա.-Ի. յա. հզօր զօրավիգն եղև յանմահն Թէի յիշատակի նորա, որ դ.-ա. 6յ4. պէս Քաուկիդիդեայ և Ալեքսիոսիոսի վկայէ։ Այս այնպէս փոյթ էր նմա պատմելոյ յաղգս ապագայս, զի ցանկայր վայրիկ մի վերկենցաղել և լսել որ ինչ խօսիցին զնմանէ՝ որք զվէպս իրաց իւրոց ընդեռնուցուն։

Այս զօրքն ելին յայն կոյս, և ոչ ոք գրեթէ ընդդիմանայր նոցա. զի Պաւլոս անկասկած կայր, ընդդէմ Կրատեայ միայն պահ կալեալ՝ զի մի ընդ գետն անցանիցէ, Օ ի Կրատեր, որպէս զպատուէրն ընկալաւ, դղրդիւն մեծ առնէր՝ իբր Թէ ընդ գետն խորհեցեալ անցանել։ Այս հասին ամ նաւք յայն կոյս, բայց ի միջէն՝ որ մէջեալ ի մի ի ժայռից բեկաւ։ Այս իբրև եղ Ալեքսանդր ի ցամաքս, Հակառեցոյց զանասին փոքրիկ. զի էին նմա վէց հազար հետևակք, և հինգ հազար հեծեալ։ Այս էառ ընդ իւր զայրուձին, և պատուէր տուեալ հետևակացն՝ փութալ դալ գՀետ իւր, յառաջեաց ինքն։ Խորհէր ի մտի՝ զի Թէ և ամ զօրուԹեամբ պատահէին նմա հնդիկք, կարի քաջ այրուձիսն յաղԹեր նոցա. և Թէ այլազգ և ինչ իրք դիպէին, սակայն դիւրին էր նմա յերկարաձգել զպատերազմն՝ մինչև ի հասանել հետևակացն. ասա և Թէ Թէնամիք խուճապեալ փախչէին, մարԹեր հալածել զնոսա և կոտորած մեծ գործել։

Այլ եղև Պաւլոսի՝ Թէ անց ընդ գետն Ալեքսանդր. և զօրահատոյց արար, յղեաց զնի յորդւոցն ընդդէմ նորա՝ երկոքումբք հազարօք հեծելովք և հարիւր և քսան

կառաք։ Օ՜ նոսա Ա՛ղեքսանդր յառաջապահս բանակին Թշնամեաց վարկաւ, և համարեր՝ թէ զհետ գայցէ ամ ձամբարն։ այլ իբրև գիտաց՝ զի զօրահատոյց արարեալ էր, հարաւ ուժգին ի նոսա։ Եւ ի ձակատու անդ անկաւ Պովրայ որդին չորեքարիւրովք հեծելովք. և ամ կառքն գերեցան, յորս էին վէց վէց այր. ասպարաւորք կրկին, և երկու աղեղնաւորք աստի և անտի կային. և երկուք կառավարք, որք ի խառն մարտի և նոքա մարտնչէին, նետս ի լոց կապարձիցն արձակեալ ի Թշնամին։ Եւ այն ամ ասպառազինութիւք ընդունայն եղեն անդ. զի ի հեղեղաց անձրևաց ողողեալ էր երկիրն, և չմարթեր երկարացն պինդ կալ, և յոլովագոյնք ի կառացն ծանրութեն ի տիղմն խրէին։

Օ գոյժ առեալ Պովրոսի՝ մեռանելոյ որդւոյն, և զի զօրքն բեկան, և զի հասանէ գայ Ա՛ղեքսանդր, վարաներ մնալ նմա անդ առաջի Արատեայ՝ որ այլովք զօրօքն սպառնայր անցանել ընդ գետն։ Եւ խորհուրդ կալաւ դնալ ընդդէմ Ա՛ղեքսանդրի. զի ի գէպ իսկ էր կարծել նմա՝ թէ մեծաւ զօրութեն գայցէ Ա՛ղեքսանդր։ Եւ Թողեալ միայն փիղս քանի մի ի տեղւոջ բանակին ի խոչ այսոցիկ՝ որ յայն կոյս գետոյն էին, չու արար երիւք բիւրուք հետևակօք, և չորեքհազար հեծելովք. և կառք երեքարիւր ընդ նմա, և երկերիւր փիղք։ Եւ հասեալ յաւազուտ երիվր ի տրամ գետին, ուր ձիանն և կառք համարձակ վարէին, ձակատեցոյց զզօրսն՝ ակն ունելով Թշնամւոյն։ Եւ զփիղս զառաջեաւ ի մի կարգ կացոյց՝ հեռի ի միմեանց հարիւր ոտնաչափ. և յետոյ նոցա ըղհետևակս, զի պատապարեսցին գազանօքն։ Ա՛ռանդի ընդ անջրպետսն չիշխէին մտանել հեծեալք Թշնամեաց, վասն ձիոցն խրտելոյ ի փղոց. և ա առաւել հետևակիք չիշխէին՝ առ վտանգի մնձելոյ ի գազանացն, և զի իւրքն յետ կուսէ փղացն կային։ Եւ հետևակս սակաւ յաջ և յահեակ ձև փղացն կացոյց յամրութիւն. և նոքա ի ձևէ հեծելովք պատսպարէին, և առաջի նոցա կարգեալ կային կառք։ Ա՛յս կարգ էր Պովրայ ձակատուն։

Այեղ հասեալ՝ զտեղի եառ Ա՛ղեքսանդր, և մնայր հետևակացն. որոց ոչ ինչ յամեալ՝ հասին շտապաւ գհետ։ Եւ առ արծարծանելոյ զնոսա նախ քան զմիլն ի մարտ, զի խոնջք և վաստակք էին ի ձանապարհէ, շարժեաց խլրտեցոյց այսր անդր գայրուձին, և ետ նոցա պարապ հանդստեան։ Եւ իբրև ամ ինչ կազմ էր, և հետևակազօրն արծարծեալ, փող հնչեցոյց։ Ա՛յլ ոչ

բարւոք վարկաւ ընդ բունն պատահել բանակին Թշնա-
մեաց, ուր էին հեռեւակքն և փիղք կարգեալ, նովին
երկիւղիւն՝ վասն որոյ այնպէսն զնոսա ձակատեցոյց Պաւ-
լոս։ Այլ զի էր նա զօրաւոր այրուձիով, խաղաց ըն-
արէւլք իւրոյն ի վերայ ահեկի նորա. և զկնոսս հե-
ծելազնդաւն և զԼեմետրեայն ընդ նմա անդր ի մա-
սին յարձակեցոյց յետ կուսէ ձախոյ այնր հեծելազնդին,
մինչ ինքն ի գլխոյ և ի կողէ յարձակէրն։ Իսկ Սե-
լեւկեայ և Ինտիգոնեայ և Ֆաւրոսի, որ հետեւակացն
հրամայէին, պատուէր ետ անշարժ կալ՝ մինչև ինքն հե-
ծելազնդաւն իւրով խառնվեցուսցէ զայրուձի Թշնամեացն
և զհետեւակազօրն։

Այս իբրև մերձ եղև քան զնետընկէց, յղեաց հեծելայս
հազար աղեղնաւորս՝ նետաձգել յահեկի հեծելապետնդն
Պաղլայ, զի մինչ նոքա խառնվեալ զայնու աղմկաւն իցեն՝
ինքն ի թևէ անկցի ի նոսա։ Իսկ հնդկացին կազմեալ
ամրակուռ զհեծելազօւնդն, յառաջ մատեան ընդդէմ
Լ՚ղեքսանդրի։ Ի վերայ նոցա կենոս ի վերջէ յարձա-
կեցաւ, որպէս պատուէր առեալ էր. և Տարկ եղև
հնդկաց ձակատել չմտ կուսէ, ընդդէմ հազար աղեղ-
նաւորացն, ընդդէմ Լ՚ղեքսանդրի, և ընդդէմ կենոսի։
Այս զայն խոշձապուճն նոցա ի յանկարծ յարձակմա-
նէն՝ պատեհ առեալ Լ՚ղեքսանդրի, հարաւ ուժգին ընդ
դիմամարտս իւր. որոց ոչ կարացեալ կալ առաջի խիտ
և սաստիկ հարուածոյն՝ բեկան, և յետոյ փղացն ամբա-
ցան անկասկածելի պատնիշին։ Այս փղապանքն մղեցին
զազգանն ընդդէմ հեծելազնդի Թշնամեացն։ Յայնմ
վայրի փաղանգն մակեդոնական շարժվեալ յանկարծ՝ պա-
տեցաւ զգազանօքն, և զփղապանս և զփիղսն ևս հարկա-
ներ նիզակօք։ Լ՚այլ այն ձակատ ոչ հանդոյն առաջնոյն
լինէր. զի դիմեալ անկանէին գազանք ի գունդս, և ըղ-
կարի ամրակուռն բեկանէին, և ոչ ինչ կատաղութեան
նոցա դիմակաց էր։ Այս այրուձին հնդկաց տեսեալ զհե-
տեւակազօրն մակեդոնացի՝ զի յահէ գազանացն կասեր,
գաձաւ անդրէն ի հարուած. այլ այրուձին Լ՚ղեքսան-
դրի՝ հզօրագոյն և պատերազմիմբոր՝ միւսանգամ եբեկ
զնա, և գարձեալ զհետ փղացն պատսպարեցան։ Իսկ
յայնժամ ամ այրուձին մակեդոնական միահամուռ
ռազմ գործեալ, ահ և աղմուկ արկանէր՝ ընդ որ և
բաղխէրն։ Այս փիղքն խոցեալ, և բաղումք ի նոցանէ
ամպի ի վարչաց միացեալ, աղմկեալ խառնվէին զկարգն.
և առ յաւուցն մնջեգնեալ, ոչ ևս ընդ իւրեանսն և ընդ

թէհամի ընտրեին. այլ այսր անդր յախուռն բերեալ, առ աճուր գնամ դիմակաց տապալելին: Իսայ մակե- դոնացիք անջրպետ յառաջագոյն թողացուցեալ ընդ գունդս, առաջի յարձակելոց գազանացն ձանապարհ առնելին, և նետիւք գնոսա հարկանելին. որոց խրտու- ցեալ ահիւն և աղմկաւ, յետս դառնային: Ալէքսանդր պաշարեալ այրուձիովն զթշնամիս, հրամայեաց հետեւա- կացն գունն գործել՝ ի ձիսն վերջին, և ամ սաստկութիւ անկանել՝ ի նոսա. և յաղողուեցաւ մեծաւ արարին զպա- տուէրն: Ալաւելագոյնք յայրուձիոյն անկան, և՝ ի հե- տևակաց ոչ սակաւք. բայց գունդն նոցա յամ կուսէ նեղեալ՝ ի փախուստ դարձան: Իսկ Պաւրատեր, որ մնա- ցեալովք զօրացն ի բանակէտին կայր, մինչ Ալէքսանդր ընդ Պաւլոսայ մարտնչէր՝ անց ընդ գետն. և անմոլո- գնդաբն ի վերայ փախստեկացն անկեալ, ոչ սակաւս ի նոցանէ՝ ի փախչելն եհար քան զկարեալս ի մարտնչելն:

Այլ անկան ի ձակատս անդ ի հնդկաց երկու բիւրք հետևակաց, և երեք հազար հեծեալք. և կառքն խոր- տակեցան առ հասարակ, և՝ ի փղոց կէսք սպանեալ, կէսք կալեալ եղեն: Ալդ և երկոքին որդիք Պաւլոսայ ան- կան, և Ապիտակէս կուսակալ գաւառին և ամ սպայք հեծելոց և հետևակաց, և կառավարք և փղապանք: Իսկ ի զօրացն Ալէքսանդրի, որ էին յառաջնում ձա- կատուն վեց հազարք, կորեան ութսուն այր հետևակք, տասն ազեղնաւորք հեծեալք, և հեծեալք գաղձեալ քան ի Թիւնասպահաց արքայի, և երկերիւր յայլոցն:

Իսկ Պաւլոս՝ որպէս արդարև զօրավար և զօրական՝ անվհեր սրտիւ Ձգնեալ, իբրև ամ այրուձին և հե- տևակք մեծաւ մասամբ բեկան՝ ոչ որպէս զԱաւերն ա- բար, որ ի հանգոյն վտանգին՝ արքային արքայն նախ քան զամենեսին փախչէր, այլ սա պինդ ի ձակատուն տեղւոջ եկաց՝ ցորչափ և գունդ մի իւրոցն հետևակ կամ հեծեալ աննկուն կայր. այլ ապա խոցեալ յոտ իւր, զի էր երևելի կերպարանօքն և քաջուԹիւ, խու- սեաց փղան: Օ որ Ալէքսանդրի ի շքեղ նշանացն ճանաչեալ, և ցանկացեալ ապրեցուցանել զնա, զՋաբ- սիդես զհամախարհիկն նորա զհետ ձեպեցոյց: Ալոյ հե- ռի քան զնետընկէց կացեալ անվտանգ ի հարուածոյ, և ձայն զինի նորա եդեալ գոչէր. Կայ և լուր զպատ- գամ Ալէքսանդրի: Պաւլոսի դարձուցեալ զաչս, եւեթ զնախնի ոսոխն, և ասէ. Ա՛ւդ Ջաբսիդեայ ձայն է, մատնչին հայրենեաց և աշխարհին: Այլ զինէր նետա-

հար առնել զնա, այլ նա աճապարեաց ի փախուստ։ Եւայց Պղեքսանդր տակաւին ցանկայր փրկել զքաջ թագաւորն. և այլը ևս ի սպային յղեաց զհետ նորա, յորս էր և մի ի վայելչուց բարեկամաց նորա Պերտիկ, որ յորդորեացն զնա թախանձանօք գալ՝ առ յաղթօղն արժանի նմա։ Եւ բազում գժկամակութեբ յանձն առեալ գայր առ Պղեքսանդր. և Պղեքսանդր յառաջագոյն գիտացեալ եղ զնդ առաջ նորա, առեալ զնդ իւր և զոմանս յիւրոցն։ Եւ ի մօտեւն նորա կառեաւ Պղեքսանդր, և հայեր զնդ կերպարանս և յաւարտ հասակին նորա. զի էր Պոլեոս բարձրահասակ քան զհինգ կանգուն [1]։ Եւ չէր ընաւ ընկճեալ ի թշուառութենէն, այլ վտահութեամբ յառաջ մատչէր՝ որպես զքաջ և զգօն պատերազմող, մեծարեալ վասն արիաբար պահ ունելոյ աշխարհին ի հուժկու թագաւորէն՝ որ յաղթեացն նմա։ Խօսեցաւ նախ Պղեքսանդր. և վէհ և վայելուչ բարբառեալ, ասէ. Օ՛ ինչ կամիս, Պոլեոս, Թէ արարից զնդ քեզ։ Եւ նա ասէ. որ ինչ վայել է առնել զնդ թագաւորի։ Պղեքսանդր ասէ. Եւ ոչ ինչ այլ խնդրես։ Պոլեոս ասէ. Իչ ևս, ամ ինչ ի միում բայնմ բոլանդակի։ Եւ Պղեքսանդր հաճեցեալ զնդ մեծախոհութեբն նորա, զի առաւել լինի ի թշուառութենէն պայծառանայր, ոչ միայն զթագաւորութիւնն եթող ի նա, այլ յաւել ետ նմա և այլ գաւառս, և զամ պատիւ և մեծարանս և սեր արար զնդ նմա։ Եւ եկաց Պոլեոս հաւատարիմ նմա մինչև ցմահ։ Պրդ զնդ ո՛ յերկուցն պարտ է առաւել զարմանալ, զնդ յաղթօղն թէ զնդ յաղթեալ, ոչ գիտեմ։

Եւ ի տեղոջ ձակատուն կառոյց Պղեքսանդր քաղաք, և առ գետռին՝ ուր էանցն յայն կոյս. զմին կոչեցեալ Վիկիա, զի անդ յաղթեաց. և զմիւսն Հոկեփաղա, զի անդ Բեւկեփալն երիվարն մեռաւ։ Եւ թագեալ զգ. դիակունս անկելոց զօրացն, ապա հանդէս խաղուց և զոհս գոհացզակամս դիցն կատարէր ի տեղոջ յոր զնդ Հիւսասն էանց։

Պ՛յլ չգիտեր յոմանչ էրն յաղթելի։ Օ՛ արմանալի զնդ երագ աշխարհակալել նորա, և զնդ տապալել դիւրաբ զիսոչ և զխուեթ անկոխելի, և զքաղաքս անառիկս նուաճել, և զնդ անլուր այդողդող բաղդ նորա զերծանելոյ յանձողսլրելի վտանգաց՝ յոր յանդգնութեբ

1 Եօթն ոտնաչափ և ին։

մղեալ անկանէրն : Ա.յլ՝ի խեղամտութիւն խորհրդոց ԱՄԱՀ·ՆԲ
գժուարադէպ պատահարացս այսոցիկ , որ հակառակ
իսկ են հաստարակաց կարգի , հարկ է բարձրագոյն պատ-
ճառս իմանալ՝ անճանօթս արտաքնոցն վիպագրաց , և
Ա.ղեքսանդրի ինքնին գլխովին : Օ՛ի և սա հանգոյն Կիւ-
րոսի արքանեկէր այնմ՝ որ " տիրէն Թագաւորութեան
մարդկան , և ումմ կամի՝ տացէ զնա " : Օ՛ պատուէր , զոր
ընկալաւ Կիւրոս՝ի կործանել զԱ.բելոն , զնոյն հառ
սա՝ի վերայ պարսկացնոյն պետութեանէ և արևելից : Նը-
կոցուն նոյն էր որ յաջողէրն , և առհաւատչեայ յաղ-
թութեն նոյն , նոյն ինքն խնամակալ , և որ փրկէրն զնո-
սա յամէ վտանգաց՝ մինչև զհարկ պաշտամանն և զսպա-
սաւորութի լցին : Օ՛ի և սմա Ձահաւորի ասացեալն ՏՆ
զԿիւրոսէ . " Կալայ զաջոյ ձեռանէ նորա՝ հնազանդե- ԵՈՀ . ԽԵ :
ցուցանել առաջի նորա զազգս , և զգօրութի թագաւո-
րաց խորտակեցից . և բացից առաջի նորա զդրունս , և
քաղաք մի փակեացին : Ես երթայց առաջի քո . զլե-
րինս հարթեցից , զդրունս պղնձիս խորտակեցից , և զը-
նիպս երկաթիս փշրեցից : Եւ տայ քեզ զգանձս խաւա-
րինս , և զաւանդս աներևոյթս բացից քեզ : . . . Ես կո-
չեցից զանուն քո , և ընկալայց զքեզ . և դու զիս ոչ ծա-
նեար " : Ա.յս հաւաստի և բուն պատճառք հրաշալի
յաջողութեցն Ա.ղեքսանդրի , անսասան արիութե նորա ,
հաւատարմութե զօրացն ընդ նմա , անվհատելի յուսոյն
և վստահութեն ընդ յաղթութի , ընդ որ արիապոյնք՝ի
սպայէն հիացեալ զարմանային :

ՑՕԴՈՒԱԾ ԺԶ .

՚Ի ԴԷՔԵՀԵՍԱՅ ՀՆԴԿԱՑ ԱՐՇԱԻԵԼ Ա.ՂԵՔՍԱՆԴՐԷ . Ի ԱՍՊ ՚Է ԴԷՋԵՑԷ
Ա.ՂԱՔԱՏԱՆԱՑՆ ԲԱՆԻ . ԱՂԷ ԽՈՐՀԻ Ա.ՂԵՔՍԱՆԴՐ ԳՆԱԼ ԴԻՆՀԼ ՚Է Վ.ԱՆ-
ԳԼԱ , Ի ՎԱՆ ԲՈՂՈՔԱՑ ՅԱՄ ՂՕՐԱՑՆ Ի ԱՂԷՔՍԱՓԱՆ ՅԱՆԴԷՊՀԱՆՈՒԼԷԱՆ՝
ՀՐԱՃԱՐԵԼ ՆՈՐԱ ՚Է ԽՈՐՀՐԴՈՑՆ , Ի ՊԱՀՎԱՀԷԱՆ ԱՈՒՆԵԼ ԱՀՀԱՆ ԱՐՇԱՒԱ-
ՆԷՆ . ՆՈՒԱՃԵԼ ՊԱՄ ԱՂՔԱ ՊՃԱՆԱՊԱՐՀԱՑՆ , Ի ՎԱՆ ՌԵՃԷ ՎՏԱՆԳԷՆ՝
ՈՐ ԷՀԱՑ ՆՀԱ ՚Է ՊԱՀԱՐԵԼ ՂԱՔԱՂԱՔ ՊՍԷԴՐԱՓԱՑՆ . Ի ՅԵՏՈՑ ԱՊԱ ՀԱ-
ԱՆԵԼ ՊՊԱՀՎԱՀԷԱՆ , Ի ՊԱՊԱՐԱՑԱՓԵԼ ՚Է ԴԱՐՁ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ :

Ո՛Չ ՀԵՏ ՌԵՃԻ ՅԱՂԹՈՒԹԵՆ , ԶՈՐ ԿԱՆԴՆԵԱՑ Ա.ՂԵՔ- 3677 . 327
ՍԱՆԴՐ ՚Ի ՎԵՐԱՅ ՊՈՒԼՐՈՍԻ , ՄԻՋԱՄԻՒՍ ԵՂԵ ՅԱՇԽԱՐՀՆ ԿՈՒՐՍ. ՔՐ. Ա:
ՀՆԴԿԱՑ . Ե ՔԱՂԱՔՍ ԲԱԶՈՒՄՆ Ե ԱԶԳՍ ՆՈՒԱՃԵԱՑ : Օ՛Ի
ԶԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵՆ ՈՐՊԷՍ ԱՐՈՒԵՍՏ Ե ՊԱՐԱՊՈՒՄՆ ՈՒ-

նեը, և ի նորանոր շահատակութեիս հանապազ մտաբեր եր ըղձիւ և եռանդեամբ, պարտս ինն և հարկ համարեալ՝ բռնադատել զնմ քաղաքս, և յամ գաւառս ասպատակել, և սատակել զամ ազգս՝ որ ոչ գլուխ նորա յանձն առնուին. իբր թե տգիտա յանձն ձգեցէ զնորը ինչ յանկեան ուրեք անկոյս թագեալ, և չհասուցեալ անգր աղմուկ և աւեր: Ընդ նա ընդ Վկեսին և ընդ Խրայոմ ընդ գետս մեծամեծս. և ազգ եղև նմա զի ազգք բազումք աշխարհին միաբանեալ էին՝ պահ առնել ազատութեան իւրեանց, ընդ նոսա և կամեցեալ՝ ազգ հուժկու և իրաց պատերազմի հմուտ, և բանակեալ կային առ հզօր քաղաքաւն՝ որ կոչէր Ամդաղ: Նա եր թեալ ի վերայ նոցա ձակատու պատերազմի, նկուն ա բար զնոսա. և զքաղաք նոցա կալեալ, հարթ յատակ արար:

Աւրէլ. է. 275 : Ե ի գաթ. հնգէ. 324: Սոզ. ժէ. 15: Պլուտ. յԱնէս. 701: Կեդր. ը. ե.

Վեպ եղև օր մի, յառաջնորդել նորա զօրացն, և առնել հնդիկս՝ ձեմ առեալ ի գաղարտէ խօսելին ընդ միմեանս. և իբրև տեսին զնա, ամենեքին ի միասին սկսան դոփել զերկիր ոտիւք: Նա ի հարցանել նորա զպատճառ մասնէ զնոր իրին պատճառս, նոքա զերկիր ցուցեալ՝ ասեն. Օ ի իւրաքանչիւր ումեք, Աղեքսանդրէ, է չափ երկրի՝ զոր կոխեն. և դու մարդ ես հանգոյն այլոց, բայց միայն զի խռովասէր ես և փառասէր, և ընդ ծով և ընդ ցամաք տարագիմ գնաս՝ առնել չարիս ընդ այլս, և ընդ քում անձինդ իսկ: Ամէն վաղ կամ անագան մեռանելոց ես, և ոչ առաւել քան զգերեզմանդ ժառանգեսցես երկիր: Ընդ ինչ զայսքեսյաւ թագաւորն ընդ բանին. սակայն յուղխից փառացն զառածեալ, բարւոյն՝ որում խելամուտն եր՝ գործով հակառակեր:

Օ իրաքանցս ասէ Աբրիանոս, թէ են արդեօք յաշխարհին, և յամ հարկաց ի բաց արձակեալ ազատ. բայց միայն խորհրդականութեամբ օգնեն թագաւորին, զնոյն սպասաւորութեի մատուցեալ նման՝ որ ինչ մեզք թագաւորին Պարսից: Նա են զոհարարք հասարակաց և իւրաքանչիւրոց, և առանց ուրուք ի նոցանէ զոհ ոչ մատչի, զի անհաճոյ դից վարկանին զայն հնդիկք: Պահեն յաստեղագիտութեի և յախտարս, և գուշակեն յաձախ ջամանակաց և կենդանակաց փոխոխմանս. և որոց երից գուշակութիքն սխալեն՝ ոչ նս օրէն է նոցա գուշակել, այլ դատապարտին ի լռութի:

Զանդաւ ոչ յոյժ այլազգագոյնք են ի հնդեանց, բայց

Մարթոնի. զի զաչխարհ արարած և եղծանելի ասեն և գնատաձև, և որ սոեղծն գնա և վարէ՝ լի փառօք նո- բա զնամ երկիր, և՝ ի ջրոյ հեւթէ համարին զնա՝: Այս վասն անմահութեանէ հոգւոյ, և չարագործաց տանջելոյ՝ ի գժոխս, զՊղատոնի զուսումն ունին՝ առասպելս հանդոյն նմին՝ ի տանջանսն խառնեալ: Խազումք՝ ի նոցանէ մերկք չըՆչին. վասն որոյ Մերկիմաստակս զնոսա կոչեն Հնդիք, Աքանչելի իմն զխոստ և զժուժկալ կենաց նոցա պատ- մի. զի է կերակուր նոցա ոնդ, և ջուր ըմպելի նոցա, Այս վասն զի փոփոխմանէնս ոգւոց՝ ի մարմնոյ՝ ի մարմինս գնեն, յանասնոյն՝ ի մարդիկ և՝ ի մարդկանէ յանաս- սունս, նմին իրի և՝ ի մոլ հրաժարեն: Ի նոցանէ, ա- սեն, Պղեթագորայ զմսոբմնափոխութեէ աղանդն առեալ, Օ աւուրս ցըուն յառին կան, զդէմս յարևելս հաստա- տեալ, և՝ ի բոցակիզագոյն լեզանակի: Լմեռն համարին սպասել մահու և ընկճել հասակաւն կամ ախտիւ, այլ կանխեալ քան զօրհասն՝ կենդանւոյն կամակար պրկին: Ել պատուին առ նոսա վախճանեալքն ծերութեամբ. և զիարդիկն, յոր աձիւնանան, համարին անսուրբ առնել՝ եթէ ոչ կենդանւոյն մանրիցեն անդր: Լակ կեաք զգօնա- գոյնք և ընտելագոյնք՝ ի քաղաքս կեան՝ կենցաղակիցք մարդկան. և անձնասպանութիւն ոչ միայն չհամարի առ նոսա առաքինութէ և արիութէ, այլ և վատութէ վար- կանին զայն՝ իբր ոչ երկայնամտելով օրհասի մահուն, և եղեռն՝ իբր յանդգնելով կանխել քան զհրաման դիցն:

Ալիկերան՝ ի Ցուսկուզեանն զարմանայ ընդ անսասան արիութէ հնդկաց, ոչ միայն խնասանոցն արանց, այլ և կանանց՝ նոցա. զի միոյ առն կանայք՝ ի նախանձ մեռեալ վիճէին՝ թէ ով՝ ի նոցանէ՝ ի վերայ առն իւրեանց մեռա- նիցի: Այս որ ոք՝ ի նոցանէ առաւել սիրելին էր նմա՝ ի կենդանութէն, նմա չնորհն այն անկ էր. և դատաւորք կարգեալք՝ խոտիւ քննութէ, զիրաւունս ասսի և անտի լուեալ, նմա զվճիռն տային: Այս որ չնորհին այնմ՝ հան- դիպէին, ընթացեալ՝ ի մահ անյողդողդ մտոք անձառ խնդութէ ելանէր՝ ի խարոյկն. և արտասուօք և տիրու- թեամբ պարտեալքն մեկնեալ գնային:

Օ Մերկիմաստակն և Պորփիւր բազում մասամբք Յ-ս Մ-ահ-

1 կանայք՝ ի հնդիկս, իրրև ու- րուք՝ ի նոցանէ այրն մեռանիցի, յառեան՝ ի վէմ դան՝ թէ ո՞ի նո- ցանէ առաւել սիրելի էր առնն. քանզի բազմականաչք են արք առ նոսա: Նշ որ յայնմէն՝ ի դառապ- տանէ, ուրախութէ ածեալ յիւ- րեցն՝ ընդ առն իւրում մասչի՝ ի խարոյկն. և որ պարանի՝ տխուր դառնայ: Կիւ. Տ-ոն. Խոչ. Ե. հէ.

հանգոյն այսմ նկարագրէ : Իրաքմանիք , ասէ , խոտաձա
րակը և ընդակերը , և մրգովք կերակրին : Սահաւոր
են , և հուսկ իսկ մնել յանասունս՝ սիրջ է առ նոսա :
Օ մեծ կէս առնիքեան և գիշերոյ՝ պարապին յօրհնու-
թիւնս գից , և աղօթից և պահոց ստեպ կան : Խազուկք
ի նոցանէ մնակացք յանապատս բնակին անդինչ և
անկանայք , և ըղձիւ ցանկան մահու . ծանրատաղտուկ
է նոցա կենցաղս , և մնան ապաժոյժք մեկնելոյ հոգւոյն
ի մարմնոյ : Արքա կան և այժմ առ հնդիկս , և կոչին
Իրամք կամ Իրամինք . և ի բազում ինչ իրս գնահա
նեացն Իրաքմանց աւանդս և զկրօնս ունին :

Ա՛րդ Ալեքսանդրի հասեալ ի քաղաք մի , յոր մերձ
անդր բազումք ի Իրաքմանցն բնակէին , ցանկացաւ խօ
սել ընդ նոսա . և եթէ հնար ինչ էր , ուսանել զմնաս ի
նոցանէ ընդ իւր : Այլ գիտացեալ զի ոչ յայլ ուրեք
գնային , այլ պարտ եր անձամբ երթալ առ նոսա , ոչ
վայել համարեցաւ զայն փառաց իւրոց , և ոչ օրէն՝ ստէ
պել զնոսա հակառակ օրինաց և սովորութեան իւրեանց
գործել : Ա՛յլ զԱնեսիկրիտ զնմաստասէր մեծ զաշակերտ
Դիոգենէսի Շ նականին յղեաց առ նոսա . և նա ոչ ինչ
կարի հեռի ի քաղաքէն եդիտ Դիոգենասան այր ի նոցա
նէ , որք յառաւօտի մինչև ցերեկոյ՝ մերկք անշարժք ա
նեալիս կացեալ , ապա ընդ երեկս մտանէին ի քաղաքն :
Այս մատուցեալ առ մի ոմն ի նոցանէ , որում անուն էր
Կալանոս , եցոյց վասն որոյ իրաց եկեալն էր : Իսկ նորա
ժպտեալ ընդ զգեստս և ընդ կօշիկս նորա , ապա խօսե
ցաւ և ասէ . Ի սկզբանէ գարի և ցորեան ծածկէը զեր-
կիր , փոխանակ այժմուս փուշոյ . և ոչ ջուր միայն , այլ
և կաթն և մեղր և ձէթ և գինի զեւտհետեալ գնային :
Իսկ մեղաք մարդկան կերպարանափոխ եղև բարեկեն-
դանութեին , և դատապարտեաց զնոսա Ա՛րամազդ յեր-
կայն և ի տաժանաւոր աշխատութիւն վասն ապերախ-
տութեանց նոցա : Ա՛յս գիտացեալ յապաշաւել նոցա , դա
ձոյց զնոսա յառաջին լիութեին . այլ արդ ի նոսն անկաւ
գութիւն գարձեալ յեղաչջելն իրը : Այրևի յայտնապէս
իմաստասիրացն այնոցիկ աղօտ ինն գնահատեղծէն զե-
րանելի կեանսն գիտել , և զի վասն մեղայն դատապար-
տեցաւ ի վաստակս :

Ա՛յս Անեսիկրիտ մատեաւ առ Ա՛նդանիս , որ էր ե-
լիցագոյն և որպէս առաջնորդ գնդին , և նա ասէ .
Օ արմանամ զի Ալեքսանդր ի Տոգս առաջնորդութեին՝
ցանկայ իմաստութեե . սա նախ զիմաստասիրութիւն ընդ

աշխարհակալութիւնէ լծորդեաց[1]։ Այդ ժէ և առնէրին, որք հանձարով իւրեանց կարող են ազգել յայլս զիմաստութիւնն և իշխանութիւնն հրամայել, յանկարծ խմաստասիրեին։ Այլ էր ազատ, ոչ գիտեմ, զերկար և զտաժանաւոր ուղեգնացութիւնն յանձն էառ. և զինչ ի տար աշխարհս հեռաւորս ինդրելոյ։

Այլ ազատեաց զնոսա Ալեքսիկրիա՝ Թողուլ զնիստ կեանսն, և գալ յարել Ալեքսանդր՝ յաղնուական և ի բարերար տէրն, և ընուլ պարգևօք և փառօք։ Զոր Անդանիս իրօնիտ ինն խմաստասիրաբար ասէ. Օ՛ կայ իմ ընդ Ալեքսանդրի. և ես որդի եմ Ամմազդայ. ոչ ինչ իւիք կարօտ եմ, և ոչ իմիք ցանկամ, և ոչ զանգիտեմ ուսուեք։ Յորչափ կեամ, մատուցանէ ինձ երկիր զկարևորն պարէն. և ի ծանրատաղտուկ գժպհի ընկերէ աստի (ի մարմնոյ) ընդ հուպ ազատեացե զիս մահ։ Հեզագոյն գտաւ քան զնա Կալանոս. զի թէպէտ և հակառակեր նմա և արգելոյր զնա առաջնորդն, և վատ զնա յանդիմանէր, վասն այլում տեառն և ոչ ՚ի միայոյ ծառայելոյ, այլ նա եկն զհետ Ալեքսիկրիտեայ. և խնդութիւն բազմաւ ընկալաւ զնա Ալեքսանդր։

Ալդգը հնդկաց առակախօսք եին, և յաձախ նմանուէր Թեամբք զիմաստս մտացն յայտնէին։ Ալսմ ի ուրեք ի վէպս օրինակ. զի ի խօսել երբեմն Արաքմանին ընդ Ալեքսանդրի վասն օրինաց իմաստուն քաղաքավարուեան, եցոյց նմա ակնարև խորհրդաւոր նշանակաւ զձգրիտ պատկեր տերութեան նորա։ Օ՛ տաբաճեաց յերկիր արջառակաւն մեծ՝ չոր և սեղմ, որ ՚ի կոխել զգին աստի՝ անտի ամբառնայր. և չուրջ ընդ ամ եգերսն կոխեալ, եցոյց նմա զի ՚ի խանարհել մոյ ՚ի ծայրից՝ այլք ամբառնային։ և առա իբրև ՚ի միջն կոխեաց, կշիռ կայր կալն ամ ծայրիւքն յերկիր մածեալ։ Ցայտ իմն այսպէս առնէր Արաքմանն, թէ պարտ է նմա ՚ի միջ աշխարհին կալ, և մի ՚ի տար աշխարհս դեգերել։ Օ վախճան կատարածի խմաստասիրիս տեսցուք ի յաջորդոգ։

Ալայց Ալեքսանդր սահմանն արշաւանիցն զսպառուն ազգաց եգեալ, և զազգ անհնազանդ՝ Թշնամի իւր վարձ կուցեալ, խորհէր և ընդ Լիկս գետ անցանել։ Ալզ և զի նմա՝ զի նմա՝ զի յայն կոյս գետոյն մետասան աւուրց գնաց ճանապարհ էր ընդ անապատ միտև ցԱրանգես, յգետն

Կոռդ. Թ. Ա. Ասրիան. Հ. 221. Ե ՚ի. 255։ Պլուտ. յԱլ. Ալես. 699։ Դիոդ. Ժէ. 559։ Յոսէփ. Ժդ. 9։

1 Ջնա միայն եաես՝ զի ՚ի զինս խմաստասիրեր։

մեծ քան զնմ գեսս աշխարհին հնդկաց. և անդր քան զնա Պանգարք և Պրաաք բնակէին, և Թագաւոր նոցա պատրաստեր պահ ունել ի դուռն աշխարհին երկու հա-զար հեծելովք, և քսան բիւրուք հետեւակաց. և կառք մարտիկք էին նմա երկու հազար. և աշագին ևս, փղք երեք հազար։ Այլ իբրև զոյցս այս ընդ բանակին համ-բաւեցաւ, զարհուրեցան զօրքն, և յաձախեաց յամե-նեցունց տրտունջ։ Պակեդոնացիքն՝ որ ընդ այնչափ աշ-խարհս հատեալ անցեալ, և ընդ զրահիւք ծերացեալ, և ստէպ դարձուցեալ զայն հայհոյ փախչումամբ ի քաղցր հայրենիսն, բողոք բարձին և ասեն. Ել դադա-րել Ալեքսանդր պատերազմ ի պատերազմ և աղէտս ի վերայ աղետից յաւելուլ, մինչ դեռ ասա հազիւ յերկ-ամեայ ահագին աշխատութենացն զերծաք, ի տարա-փոցն և յորտրնդոստ ամպրոպացն։ Այլ դէպ սրտա-ռուչ ողբովք գուժ արկանէին. և ըմբոստագոյնք յայտ-նի իսկ աղաղակէին՝ Թէ ատի և անդր չենկնիմք։

Այդ եղև Ալեքսանդրի ամբոխ խռովութենան, և զի ժողովք գաղտ գործէին ի բանակին. և առ ի խափա-նել զլուծանգ չարեացն՝ կոչեաց ի խորան իւր զզօրա-գլուխս, և պատուէր ետ ժողովել զզօրն, խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Ամբ զինուորակիցք իմ, գիտեմ զի բա-զում ինչ հնդիկք ի զարհուրեցուցանել զձեզ ածին ի հաւքաւ. այլ զոյցքն այն և արուեստք նենգուԹիւ ոչ յեղակարծ են ձեզ։ Օ այդոսիկ և Պարսք զերծին կիւ լինկեայ մեծաբանեին՝ և զյաղաղաւրած գաշտացն Ալ-ջազետաց, և զգետոց զՀիփբիսի և զԽփերատայ, Թէ ի-ցեն խոչք անկոխելի. այլ քաջութեամբ ձերով տապա-լեցեալ զնոսա։ Ամբդ այժմ տօրքանայեցէք՝ զի մինչև ցայսր զՀետ իմ եկիք։ Վերապանծ Հգամբք զանհիւ զաւառսն նուաՀեալ անդր ևս քան զՀնաբատրա և զգ-Կովկաս զաշխարհակալուԹիւնդ ածէք, և յերկրիդ ձեր բում իմանեն գնան գեսք հնդկաց. և արդ յոդողդեն միտքդ ընդ Լիսս անցանել՝ կանգնել և առ եզերք նորա ախոյեան որպէս զՀիդասպեան։ Ընդասաց փղացն վա-տասրտիցեք, զորս կուտական բանիւքն ստուարացուցա-նեն. և փորձիւ իսկ ոչ գիտիցեք, զի ի տեսրան առա-ւել վնասակար են գազանքդ՝ քան ի Թշնամին։ Լազ-մանթռիս յաձախագունդ բանսակաւն զարհուրեցուցանեն զձեզ. և իցէ յաձախագոյն քան զԼարեհին։ Ընատատ անեզը արարեալ զՆսիս ձերով յաղԹութիքդ, տարա-ժամ արդ հաշուիք զգունդս Թշնամեաց։ Պարտ եր

կանխել, և մինչ ընդ Յունաստան անցանեաքն, հայել անդստին ի սակաւութեն գնդիդ։ Օ՛ի արդ և Պիւրեթը յաւելան ի մեզ, ընդ մեզ և բանտարկիք և Պոդիքը և Պաւլը զինուորին. և ի վերայ փառաց մերոց նահատակ կին։ ՊաՏՈՒ ելեմ ի խուժադուժն յունացեաց. ի ձեզ, և ոչ յայլ ոք յունացեալ եմ, և ի յաղթող բազուկդ յեցեալ. ձեր եւեթ քաջութիւնդ առհաւատչեայ յաղթութեցս իմոյ է անսխալ։ Ունչհարկ է ինձ, ցորչափ դուք ընդ իս իցէք, հանդէս համարոյ առնել զօրաց իմոց, և ոչ թշնամացն. բայց միայն եթէ նուիրն վստահութիւդ և մտադիւրութիւն և յայտ հետ լինիք ընդ իս։ Ունչ ևս վասն փառաց եւեթ ձգնիմք, այլ ի վերայ կենաց։ Այեթէ կասեմք, փախստեայք թուիցիմք յերեսաց թշնամեաց. և լծցուք մեք արհամարհք, նոքա ահաւորք. և գիտէք իսկ՝ զի ահիւ անուան վէմքն պատերազմ։ Այ ինձ իշխաստնուիլ, այլ զաղերս ի կիր արկանեմ։ Ձեռն տուք, ապաչեմ, ոչ ի տէր ձեր և ի Թագաւոր՝ այլ ի ձեռնասուն ձեր և ի զինուորակից. մի բեկանէք զպերճ արմանենիս՝ որ ի ձեռին իմում է. սա Հերակղի և Պոհնիսի հաւասարէ զիս, եթէ ոչ նախանձ յափշտակեսցէ լինին զիս։

Այս զօրականքն լուռ եւեթ կային, զաչս յերկիր արկեալ. և ասէ դարձեալ. Ձկամնջս խլից խօսիմ, ոչ ոք լսէ ինձ, ոչ ոք պատասխանէ։ Ա քայ, մնասնեցայ, Թուզանիմ ի ձեռս թշնամեաց. այլ թէ և միանգամ միայեմ, սակայն յաւաչ մնասեայց։ Պկիւթը և բակտրացիք՝ հաւատարիմք քան զձեզ՝ գայեն գՀետ իմ, յուլ և ածիցեմ զնոսա. երեքամբք ապա յաչխարհ ձեր պարձանօք մնասուքեզդ, գասալիքք և տիրանենգք։ ՊաՏՈՒ ես կալայց զյաղթութեն՝ յորմէ յուսահատեալք էք, կամ զիարաց մահ՝ որում միայն յայտ հետ տենչիս փափաքեմ։

ՊաՏՈՒ ոչ կարաց սրտառուչ և յորդորող Ճառիւն և ոչ ինչ տալ բարբառել զօրացն. զի ի սխուր և յանկոյծ լուռեթե միայն զօրագլխացն և սպային, զի նոքա ցուցցեն նմա՝ թէ ոչ ի տիրասիրութենէն չետս կային, այլ զի վերալիցք խանձք և վաստակք՝ ոչ ևս զօրեին գնալ յառաջ։ Այս ոչ ոք ի զօրապետացն իշխեր ի թիկունս կալ նոցա, զի այն ինչ Պղիտայ և Պալխաթենի իրքն անցեալ էին։ Այս որոց բազում անգամ ի պատերազմի զչեռանն ի վերայ թագաւորին եդեալ էր, անդ ի վտանգն յայն ոչ խիզախէին՝ խօսել նմա զՀմարտութենէն։ Այս մինչ դեռ

զօրքն ամ և սպայք կարկեալ կային, և ոչ զայս ի վեր
էչխեին ամբառնալ, յանկարծակի շշունջ լինի լեալ, տա-
կաւ զօրաւորք յողբս և ի կականաւօր հեծուելն. մինչև
Թագաւորին զգաստանն ի գուէթ չրջել, և ոչ ունել ժոյժ
յարտասուաց։

Իմինչ դեռ ամ ատեանն յարտասուս և ի խոր լռու-
Թեան էր, համարձակեցաւ Կենոս մատեաւ առ Թագա-
ւորն խօսել, Խրթև տեսին զնա զօրքն՝ զի ի բաց առ-
նոյր զաղաչարան, զի այս օրէնք էին ի խօսել ընդ ար-
քայի, աղաչեցին զնա վասն ամ զօրացն առնել աղերս.
և նա խօսեցաւ և ասէ. Ով, տեր արքայ, ոչ փոխեցաք
մեք. քաւ և մի լինի։ Այլ սէր և նախանձ և հաւա-
տարմաՒի է ի մեզ և եղիցի. ընդ քեզ, յով և երթիցես,
պատրաստ եմք գնալ և ի մահ. այլ Թէ տաս հրաման
զօրացդ պարզ և անկեղծ խօսել, լսել աղաչեմ քաղց-
րուԹիւն գնոցա աղերս նոցա, յոր վիշաք անշնարինք
ստիպեն գնոսա։ ՀաղԹեցեր, տեր արքայ, մեծուԹիւ
քոյոյ՝ ոչ միայն Թշնամեաց քոց, այլ և քում զօ-
րականիդ։ Որ ինչ մահկանացու բնուԹեաս պայմանի եր,
գնաց գործեցաք. անցաք ընդ ծովս և ընդ ցամաք, և ի
ձագ երկրի ահա հասեալ կամք, և միւս այլ երկիր խոր-
հիս աշխարհակալել, գնալ հետազօտել նոր հնդկաս-
տան՝ սոցին հնդկացս իսկ անծանօԹ։ Այսէ խորհուրդդ
այդ քում քաջուԹեդ արժանի, այլ քան զմեր ի վեր
է, և գեր ի վեր քան զզօրուԹիէ մեր։ Ահա դէմք բոլո-
րից ժոգունեալ, և մարմինք վիրօք ծածկեալ և սպեօք
խորացեալ են։ Ականք արդ կեցցեն յելեւոյն ընդ քեզ
ի պատերազմ, զայն գու ինքնին իսկ քաջ գիտես. և
սակաւքս այս՝ որք յայսչափ ի բազում վտանգաց և
յաշխատուԹեանց զերծան՝ ոչ ևս խրախուսանեն, և զօրեն
իսկ ոչ գալ կշեռ քո։ Ցենչան դառնալ ի հայրենիսն առ
ընտանիս իւրեանց, և վայելել ի խաղաղուԹիէ յորգա-
սիս Ձրանցն և յաղԹուԹեանց։ Աերեսկիր նոցա զուՒնչ
զայս, ընդակից ամ մարդկան։ Ով քաւականուԹիւն
կալչիր բաղդին քում սահման, տեր արքայ. և Թէպա-
մեացդ ամենեցուն յաղԹողդ, յաղԹեա և անձին քում,
և յաւելցին քեզ փառք։

Այս մինչ դեռ բանքն ի բերան էին, յաձախեցին
յիմ կողմանց աղաղակ և ողբք խառնաձայն, տեր և
հայր զԹագաւորն կոչելով։ Այս ապա սպաքն, մանա-
ւանդ որ աւերքն պատկառելի էին և կարի իսկ սիրասիրք,
ճնոյն աղերս արկին։ Ի.ԼՀ Թագաւորն չև ևս զիջեալ,

քանզի յոյժ դժուարին է հզօրի խոնարհել, մեկնեցաւ ԱՄԱՀՆԻ
եկաց ի խորան իւր զաւուրս երկու, և ոչ խօսեր և ոչ
ընդ մտերիմ բարեկամն, զի թերևս փոխեսցին զօրքն
ի խորհրդոցն, որպէս պատահէ յաձախ։ Յայլ իբրև և
տես՝ զի անյողդողդ կայիցէ ի խորհուրդս իւրեանց, քա-
րոզ կարդացոյց՝ պատրաստել ի դարձ. և լի եղեն զօրքն
անձառ խնդութիւն։ Այն օր քան զամ աւուրս եղև ի
փառս և ի մեծութիւն Աղեքանդրի, զի ընդ սիրոյ զօ-
րացն զսակաւ ինչ մանն փառաց և մեծութենէ իւրոյ փո-
խանակեաց. և հնչէր ամ բանակն գովութեամբ և օրհ-
նութեամբ նորա, զի յաղթեցաւ ի զօրացն՝ անյաղթե-
լին յամ ումեքէ։ Ձիք յաղթանակ զոյդ այնմ աղաղա-
կի ցնծութեանն և գովութեանց՝ որ ի սրտին բղխեն ի
պարզ և ի կենդանի աղբերէ. և ընդ՝ը ոչ յոյժ ցանկ
կայցեն այնմ իշխանք։

Ձերիս, կամ թէ կարի առաւել, ի չորս ամիսս աշ-
խարհակալեաց Աղեքանդր զամ երկիրն ընդ Ինդոս և
ընդ Ինփաս, որ ցարդ ևս կոչի Ինձնաձայ, այս ինքն է
Հնգաջուր, վասն հնգից գետոց գնալոց ընդ այն։ Այնչ
ևս չու արարեալ էր, եա կանգնել բագինս երկոտասան՝
ի նշան յաղթութեանն ի գոհութեի դիցն։ Այլ ի գոհացու- Դիոդ. ԺՀ.
զական նուէրսն չաւել կարի իմն մեսփաուութեի չհաւա- 563։
տալի։ Ատենացն՝ զորս կանգնեաց՝ էր բարձրութեի եօ-
թանասուն և հինգ ոտնաչափ։ Յոր հրամայեաց գործել
բանակեղէն եւասպատիկ շրջապատիս առաջնոյ բանակին,
և փոս շուրջանակի հատանել յիսուն ոտնաչափ ի խո-
րութեի, և տան ի լայնութիւն. և իւրաքանչիւր ի հե-
տևակաց կազմել ի խորանս իւրեանց մահճակս կրկին՝
երկայնս եօթն ոտնաչափ և կէս, և թողուլ. և հեծելոց
առնել մեծս ձիոց՝ կրկին մեծութեի սովորականին, և
զայն ամ ըստ նմին պայմանի։ Յոր խորհէր՝ ընդունայն
անհեթեթ պարծանաբան թողուլ առ յապայս արձանս
դիւցազնեայ և գերաշխարհիկ մեծութեի, և կարծեցու-
ցանել զանձն և զիւրսն գեր քան զմարդիկ։

Յոր գարձաւ Աղեքանդր անց այսրէն ընդ Ինդրայտա, 3678. 326
և եհաս ի Պաղրոս զամ երկիրն՝ զոր մինչև Յինփաս կա-
լեալ էր. և հաշտեցոյց զնա ընդ Քաքսիղեայ, և արար
խաղաղութեի ի մէջ նոցա ուխտիւ գաշանց՝ որ երկաքան
չիւրոցն էր յօգուտ։ Ինտի եկեալ բանակեցաւ առ ե-
զերբ Աղեսինեայ։ Այլ ի յորդ անձրևաց զեղաւ գետն, Աւրէլ. գաւմ.
և ողողեաց շուրջ զգաշտավայրս. և հարկ եղև Աղեք- Ագրիպ. ԺԵ.
անդրի փոխել զբանակն ի բարձունս։ Ինդ Կենոս մե- 69։

ռաւ աստիւ հիւանդութիւն. և սուգ առ ի վերայ նորա թագաւորն և ամ զօրքն. զի ոչ գոյր յամ սպայս իբրև զնա. և յամ պատերազմունս առաքինանայր։ Էր նա ի սակաւուցն՝ որք առանց իւրեանցն օգտի և փառաց՝ ցանկան բարւոյ աշխարհին, և որք տիրասէր նախանձու զամ տոյժս յանձն առեալ՝ համարձակին խօսել զՀնամանդուհւոյն առաջի թագաւորի։

Եւայց Աղեքսանդր պատրաստեր ի չոլ։ Էին նմա ուրք հարիւր նաւք՝ ընդ պատերազմիկս և ընդ անցի նաւս ի կրել զօրս և պաշարս։ Էր իբրև ամ ինչ կազմ եր, մանի զօրքն ի նաւս ի մուտս բազմատեղացն ըստ Աբիստաբուղեայ, որ հանդիպի ի վերջ հոկտեմբերի. և յաւուրն հինգերորդի եհաս նաւատորմիղն ի գետս խառնունս Հիդասպեայ և Աքեսինեայ. և յոյժ աշխատ եղև անդ. զի ի խառնել յորձանաց հոսման երկուց գետացն յիրեարս՝ ալեկոծութեն որպէս ի խորս ծովու զօրն ծեր ի տեղւոյն։ Էմուտ ապա յաշխարհ Աբիսիդրակաց և Մալլեացւոց, որ էին աղգք պատերազմողք աշխարհին, և միշտ ի գրգիռ կային ընդ միմեանս. այլ յայնժամ միաբանեալ ընդդէմ հասարակաց Թշնամւոյն, ժողովեցին բիւր մի հեծելոց, և ուրթ բիւրս հետևակաց առ ոտից և կօրովիս, և կառս հինս հարիւր։ Ի բաղում Ճակատս հարաւ ընդ նոսա Աղեքսանդր, և հաւ ի նոցանէ քաղաքս. և ապա եհաս ի վերայ քաղաքին Աբիսիդրակաց, ուր մեծաւ մասամբ ամրացեալ էին։ Էր հրաժայեաց վաղվաղակի սանդուղս ի պարիսպսն կանգնել. և ի գանդաղել զօրացն, յափշտակեալ զմի ի սանդղոց ի ձեռանէ միոյ ի զինուորացն՝ ինքն նախ ել ի վեր ի վերայ պարսպացն, ծածկեալ ասպարաւն. էին ընդ նմա Պեւկեստ միայն և Լիմնէոս։ Յայնժամ զօրացն խթացեալ վասն վտանգի Թագաւորին, դիմեցին և նոքա ընդ վերելսն յօգնութիւն. այլ սանդուղքն բեկան, և Թագաւորն միայ անօգնական։ Էր նշանակ արձանացեալ նետից՝ որ յաշտարակաց և ի մերձակայ տեղւոյն, յանդգնութիւն քան արիութեամբ՝ արկ զանձն ի քաղաքն ի մէջ բազմամբոխ Թշնամեացն։ Արկ էր նմա, մինչ էն յատն կացեալ ի մահ կամ ի գերութիւն մատնել. զի և ոչ հնար էր նմա պահ ունել անձին, և զվրէժ ծանուր իւրոյ խնդրել։ Ալ յայնժամ կշռութեամբ յոտնկելոս անկեալ՝ եկաց կանգուն սուր ի ձեռին, և վանեաց զմերձակայսն, և սպան զզօրագլուխ Թշնամեացն՝ որ դիմեր հարկանել զնա։ Էր առ ստուար ծառով յա-

ջողեալ անկանել նմա, յեցաւ ի բուն նորա, և վհատ-
նաւն պատսպարէը ի նեաւից՝ որ ընկէնուին ի հեռուստ.
զի ոչ ոք իշխեր մօտել ի նա՝ յահէ մեծի քաջայանդուգն
գործոյն և ի հրացայտ աչացն։ Ալ մի ոմն ի հնդկաց
լարեալ զկամնալիճ աղեղինն, զի եռանասչափ նետը էին նմի,
յաջ ի կողինն ընդ զլահնն եհար զնա։ Նէ յառաստ հոս-
մանէ արեանն՝ անկան զէնքն ի ձեռանէն, և եղև իբրև
զմեռեալ։ Ընդ եր տեսանել զաշխարհակալն մեծ և պատ. ի
պայթողին ազգաց հասեալ ի մահ. ոչ ի գլուխս բանա- բաղդ Աղէք.
կի, կամ ի պաշարել զքաղաք հզօր, այլ յանկեան 344.
միում աննշան քաղաքի՝ յոր յանդգնութեամբն մղե-
ցաւ։ Նէ որ խոցեացն զնա, լի խնդութեամբ դիմէր
դիակապուտ առնել. այլ իբրև զայն զազգ Թագաւորն,
զօրացաւ առ վրէժ քինուն, պնդեաց զանձն, և առ
խարխափ ընդ կարաւանդա զրահիցն մահաց սուր ի կուշտ
նորա։ Նէ ահա ոմանք յառաջնոց ի սպային, Պեւ-
կետա և Տեմնոս և Տիմոս, և սակաւք ի զօրացն և-
լեալ ի պարիսպն, հասին յայն վայր. և անհնարին
ձիւն գործեալ ի փրկել զԹագաւորն, շուրջ կացին զնա
վաս պատնէշ ընդդէմ բռնութեանն Թշնամեաց։ Ընդ զգ-
Թագաւորացն սաստկացաւ մարտ. բայց զօրքն, որք ի
պարիսպն ընդ սպայս ելեալ էին, նգաստարեալ արարին
զդուռնն փոքրիկ՝ որ ընդ մէջ երկուց աշտարակացն էր,
և խուժեցին ի ներքս ընդ այն մանկեդնացիք. և վաղ
զքաղաքն նուաճեալ, ի սուր սուսերի կոտորէին զայր
և զկին զծեր և զտղայ։ Նէ փութով մեծաւ ածին զձա-
գաւորն ի խորան իւր, և վիրաբոյժք՝ հատին ձարտա-
րութեամբ զբուն նետին, առանց չարժելոյ զսլաքն՝ որ
էր ի վիրին։ Նէ մերկացուցեալ զնա, տեսին՝ զի ձան-
կաւոր էր սլաքն, և չէր մարթ անվտանգ կորզել զայն՝
առանց լայնելոյ զվիրաբերանն. որում այսողդողդ ա-
րիութեամբ ժուժկալեաց Թագաւորն, և ոչ ոք ունէր
զնա։ Ալ ապա ի յորդահոս արեհնէն նուազեալ ան-
կաւ, և համարեին զնա մեռեալ. բայց ի դադարել ա-
րեանն՝ տակաւ անձին զգացեալ, ընտրեր վերձակայն,
Նէ զսիւն զայն և զվիշերն զորքն զրահաւոր շուրջ զնա
բանաւ նորա կայրն, չմիկնեալ անտի՝ մինչև լուան զօղ-
ջոյն նորա և զդիւրել ցաւոցն։

Օ աւուրս եօթն ի գարման վիրին եկաց անդ Ալէք-
սանդր. և մինչ չև խոցն սպիացեալ էր, ազդ եղև նմա՝

1 Զնա ... յոյնքամ վէրաբոյժք զարեալ էին ի բնավայ։

թէ Տալակեր Համբաւ մահու զնմանէ առ խուժադուժն. և հրամայեաց կցել յիրեարս նաւս երկու, և կանգնել ՚ի միջի գետոյն իւր ՚ի տեսիլ ամ բազմութեն, զի որք մեռեալն զնա կարծէին՝ տեսցեն զնա, և ընդունայն լիցին խորհուրդք և ամ յոյս նոցա։ Եւ ՚ի վայր կոյս գետոյն էջ ընդ հոսանն փոքր մի հեռի ՚ի նաւատուրէն, զի անխռով ՚ի դղրդմանէ թիոցն՝ յանդորրոյ զօրանայցէ։ Եւ իբրև հաստատեցաւ յառողջութիւն, և կարէր այնուհետև ելանել արտաքս, ածին նմա դեսպակ թիկնապահ զօրքն. իսկ նա հրամայեաց ածել զերիվար իւր, և հեծաւ ՚ի վերայ։ Եւ ամ զետեղերքն և անտառք շուրջ յանահի հնչեցին ընդ աղաղակ ցնծութեն զօրացն, որք ՚ի մեռելոց լինն համարեալն զնա յարուցեալ։ Իբրև մերձ եղև ՚ի խորան իւր, էջ ՚ի ձիոյն, և չորս վայրիկ մի՝ շուրջ պատեալ յամբոխէ զօրաց, որոց կէսք զձեռս նոցա համբուրէին, այլք զծնգուղքն փարէին, ոմանք ՚ի քղանցս հանդերձիցն մերձենային, և այլք ՚ի դէմն ևեթ պշուցեալ հայէին. և արտասուօք ամենեքին օրհնէին զնա, և ուրախս վասն առողջութեն և կենաց նորա զնէին։

Եւ ժամանակին յայնմիկ հասին հրեշտակք մալլեացիք և զօրագլուխք աւագք Ալբսիդրակացն, որք իբրև հաւրիւր և յիսուն, և քաղաքապետք և կուսակալք, ընծայիւք հանդերձ, առնել նմա մեծարանս, զի Թոլգեն զնոսա ՚ի բազմաժամանակեայ ազատութենէն՝ յորմէ ոչ յանձն առնուին հրաժարել, և նախարար ՚ի վերայ իւրեանց կացուցանել, և հարկատու լինլին և տացեն պատանդս։ Եւ պահանջեաց Թագաւորն հաղար այր յաւագաց նոցա պատանդ, զի և զպատերազմ նորա մալեցիցն՝ մինչև զընաս աշխարհն հնազանդեցուսցէ։ Եւ ետուն նոքա զառոյգս. և կառս հինգ հարիւր յաւելին տալ, զոր էր պահանջեալ Թագաւորին. վասն որոյ ոչ զղրմեալ՝ դարձոյց ՚ի նոսա զպատանդսն, և զինելոցսդոս կացոյց կուսակալ աշխարհին։

Յայժ ուրախ եղև Թագաւորն ընդ հրեշտակութիւնն ընդ այն. և օր ըստ օրէ յաւելեալ ՚ի զօրութեն, բերկրեր ՚ի վայելս և յարգասիս յաղթութենէն և առողջութեն. կարի և այնու՝ զի յանգիստ կորստենէն զերծաւն։ Ո՛չ այն ժամ խնդութեն պատեհ համարեցան աւագանեացն դրանն և մտերիմ բարեկամք նորա ՚ի մատուցանել առաջի նորա զաղերս, և ցուցանել նմա զերկիւղ իւրեանց։ Խօսեցաւ ընդ նմա Արատեր և ասէ. Ա՛րդ սակաւիկ մի

ոգի առնուամբ, տէր արքայ, յերկիւղէ և ի ցաւոց. զի հաձեցան դիք դարձեալ յայրոդել քեզ. Հոյժ զերջ է մնոց մերոց, զի Թողաք ի մեծի վտանգին զՀայրդ և զթագաւոր. Ի՛մեպետ և չմարթեր մեզ գալ զհետ քո, այլ ոչ եթէ այնու արդարանամք. եղեռն գործեցաք, զի և յանհնարինս ոչ խիզախեցաք ի վերայ քո. Խնայեա՛ ջեր, տէր արքայ, մի՛ ևս յաւելուլ մեզ զվիշտն զայն. Լ՚ւան մի փոքրիկ ընդ քո՛ւմ կենացդ փոխանակիցի. Թո՛ղ ի մեզ զնաեմ արուեստիւնն և զթեթև մրցմանս. Յարժանին պահեսջիր զանձն քո. Վեռ ևս սարսեմք երկիւղիւ ի յիշել զերծն՝ որ առաջի աչաց մերոց գործեցաւ. զի ահա ձեռք վատաց դիակապուտ առնէին զթագաւորդ մեծ ընդ տիեզերս. Ա՛յնբեա մեզ ասել, տէր արքայ. զի գու քոյոցդ անձինդ ոչ կեաս, այլ մեզ. Խնայեմք կենաց քոց՝ յոր մերս հաստատեալ են, և աղաչեմք զքեզ ժողովուրդ քո և որդիք՝ զգուշացոյն ինայել ի կեանս քո, եթէ ոչ վասն անձինդ՝ զեթ վասն քոյոցդ, և ի բարեկենդանութիւն ամ աշխարհի.

Վ՚ուէթ անկաւ ի տիրասեր բանից նոցա ի սիրտ թագաւորին, և միւսմ միւսմ գիրկս արկեալ առաւել լինի գորովով, ասէ. Ո՛կարեմ զարժանին չնորհ ունել ըզձէնջ, ա՛քաջք և ընտիրք քաղաքացոց իմոց և բարեկամայ. ոչ միայն զի այժմ զկրկութիւն ձեր ընդ իմում փառանակեք, այլ և զի ի սկզբանէ պատերազմիս զկորձ և զհաւատոխս նախանձու և զտիրասիրութիւն ձերոյ ընկալայ. և ընդէր ցանկանայեմ յերկարել ի կեանս, բայց միայն ի վայելել այլ ևս ի ցանկալի բարեկամութիւդ. Լ՚ւլ Թոյլ տուք ինձ ասել, զի տարաիսկ եմք ի միմեանց. դուք երկայնաւուրս մաղթեք ինձ, և Թէ հնար իցէ՝ անվախճան. Ես զկեանս ոչ ըստ աւուրց չափեմ, այլ ըստ փառաց. Ա՛րթեր ինձ զիղձս աշխարհակալութեան պարծրել ի սահմանս Ա՛ակեդոնիոյ, և հայրենի աշխարհաւս շատացեալ կալ և մնալ յոյլ և գիրգ կենօք ամենայնի շատացեալ կալ և մնալ յոյլ և գիրգ կենօք ամենայնի Թագաւորս ծերութիւն. Ա՛յլ ոչ Թուով ամաց, այլ բազմութիւք յաղթութեաց իմոց համարիցիմ յերկարակեաց լեալ. Կարծեցեք Թէ զկ՚ուրացոք և զ՚ինա ի մի իշխանութիւն կացուցեալ, և նուաճեալ զկրկին զնշաւիր մանուսն տիեզերաց, ի տանեբորդում ամի Թագաւորութեն և յերեսներորդում տիոց իմոց՝ կասկիցեմ ի կնոջ չքնաղ ասպարիզիս, և ոչ ևս վաստակիցեմ ի փառս՝ յոր բոլորանուէրս եմ. Վ՚ախիցէք զի ի փառաց աստի աղնուանայ ա՛մ, և դուշնաքեայքն փսխին ի ստոյգ և ի

հաստատուն մեծութիւն։ Չկր կորնչի երկրի և պատերազմ մղելեմ, իբր ի թատեր կամ ի տեսիլ ամ աչխարհի։ Ի Մեծամեծս ցարդ գործեցի. այլ երկիր յորում եմք՝ կշտամբէ զիս, զի մեծամեծս ևս կին մի գործեաց աստ Ը ամիրամ, զայնչափ զբազում ազգս հնազանդեցուցեալ, զբաղաքսն բազումս կառուցեալ, և զսերձ հրաշակերտս յամենուն կառուցեալ. և չիցեն նա խաոնիք լինձ՝ չև ևս հաւասարել փառաց նորա։ Ի.ԱՀ անցուցից իսկ վաղ զնովաւ, եթէ ձեռն տայցէք եառնդեան իմում։ Չառանին գաւդ և ի մատնութիւ, որոյ բազմագոյնք ի Թագաւորաց կորեան, անտի և էթ պահեցէք զիս, և այլն ամ յիս ապաստան։ ամ արկածից պատերազմիս եղէց երաշխաւոր։

Խորագոյն զնկարագիրը Ի.ղեքսանդրի յայտնէն Ձառքս այս. զի ոչ ընտրեր զստոյգ փառաց կերպարանս, ոչ զքաջ կիզձն նորա ոչ զկարգ և ոչ զկատարումն գիտեր, և յոռում չէրն իսկ բնաւ կացուցաներ զայն. զառածեալ ի մոլորութիւն ռամկին, նորայոյն յիւրումն հաստատեր։ Ո կեանս վասն փառաց համարեր ունել, և յանպայմանն յանկարգ աշխարհակալութիւն վարկաներ զփառս. և ի յախսուռն բերմունս ցանկութիւ կարճեցեալ փառացն՝ ոչ բանին հպատակեր, ոչ առաքինութիւ, և ոչ մարդասիրութիւ կարգաց. և իբր թէ չհաճոյք փառամոլութիւ նորա՝ օրինք նին ամ մարդկան, գժպատուհ Թուէր նմա՝ թէ զօրավարքն և զօրք այլազգ լինէ իշխեին խորհել կամ գժկամակել ընդ այլանդակ կամն նորա։

Ի.ւ յետ խօսելոյն ընդ նոսա՝ արձակեաց Ի.ղեքսանդր զժողովն. և զաւուրս բազումս ի նմին տեղւոջ բանակեալ եկաց։ Ի.ւ ապա նաւարկեաց ընդ գետն, և զօրքն գնային առ եզերքըն ընդ ցամաք. և եհաս ի Ա.աբրակա, յաղգ հզօր ի հնդիկս։ Ա.որոց վեց բիւրս հետևակաց ժողովեալ էր, և վեց հազարս հեծելոց, և կառս հինգ հարիւր. այլ ի հասանել Ի.ղեքսանդրի՝ յարհաւիրս ըմբռնեալ, հրեշտակս արարին՝ անձնատուր լինել։ Ի.ւ կառուցեալ անդ քաղաք յիւր անուն, եմուտ յերկիրն Ա.օվսիկանայ մեծաշարունտ արքային. և ապա ի սահմանս Ա.ամնայ Թագաւորին։ Ի.ւ ի պաշարել զնի ի քաղաքաց նորա, հարաւ կարեվեր Պաղոմէոս. քանզի հնդկաց զամ նետս և զսուսերս իւրեանց Թունաւորեալ էր, առ ի մահ վիրաւորել զՀերձամիս։ Ի.ւ սիրեր զնա յոյժ Ի.ղեքսանդր, և ակն ածէր ի նմանէ. և ի տագ-

նապ մեծ լեալ վասն այսորիկ, պատուէր եւս ածել առ իւր զմահիձնն նորա, զի ստէպ այց արասցէ նմա։ Ղազա կան իսկ էր նա արքայիւն, և կէսք զնմանէ ասեն՝ Թէ հարձորդի էր Վիլիպպեայ։ Այլ էր այրն ի քաջաց կռ րուածոց բանակին, անուանի ի պատերազմի, հզօր եւս ի խաղաղութենէ. Թշնամի ամէ զեղխութեան, առատաձեռն յորդ։ դիւրամատոյց, և քնաւ իսկ հեւսի ի պերձութէ յոր այլք յիշխանաց մակեդոնացւոց զառածանելին ձո խութեանն և բարեբաստութեամբ. Թագաւորին Թէ ժողովրդեան առաւել մեծարոյ էր՝ չկարեմ ասել։ Ընդն տեսեալ Ղեքսանդրի յանուրջս վիշապ մի՝ որ խոտ ինն նմա մատուցանէր ի դարմանն վիրին Պաղոմեայ։ Այլ հրամայեաց խնդրել զխոտն զայն և գտանել, և դնել ի վերայ խոցոյն. և ի սակաւ աւուրս ողջացան վէրքն յոբախտութէն ամէ բանակին։

Յառաջ եւս ի վայր կոյս գետոյն նաւարկեալ, եհաս ի Պատաղ յելս Շ նաւն ի վերջ կոյս յուլիսի։ Ալոյլ Սեպտ. ժէ. ի Պատաղ նաւատորմին մինչև ի Պատաղ եղեն ամիսք ինն 692։ և աւելի։ Ընդ մնդոս բաշխեալ ի կրկին առաջս լայնա տարածս՝ պատ առեալ կողմն ինն իբրև զՀելլադայ Ղեղոսի գործէ, այլ մեծ յոյժ քան զնա. յորմէ և դարջոջոջումն ա նուանն կալաւ։ Ո ի որ ինչ Հելլադայ առ Հելլենս, և Պա տանէնոսնշանակէ առ հնդիկս, ասէ Ղրրիանոս։ Այս անդ Դիոդոր. Հեր. կառոյց Ղեքսանդր միջնաբերդ և նաւահանգիստ և զէ 314։ նարան նաւաց։ Այս ընդ աջակողմեան առաջս գետոյն նաւարկեալ երթայր Ալվկիան, մանեալ անձանօթ գե տոյն զամբոխս քաջացն, որոց միայն յոյս էր ի յանդուգն արշաւանին յանվրիպելի բաղդ Թագաւորին։ Այս ասպա բեզս չորեքարիւր նաւարկեալ, ապա ազգ արարին նմա նաւուղիղք՝ զմտանէն ի ծով, քանզի հողմք ծովայինք ընդհին։ Իբրև զայն լուաւ Թագաւորն, լի ինդութեամբ զնաւաստիսն քաջալերէր՝ Թի վարել ամէ զօրութէք, և ցզօրն ասէր. Ահա ի բազմատենչալի կատարած վաս տակոդ հասանէք. ոչ եւս դիմակալել զօրութէն ձերոյ, և ոչ յաւելուլ ինչ մարթի ի փառս ձեր։ Այսուհետև առանց ձգանց պատերազմի և ձախաղեաց արեամն՝ ուր նիք զաշխարհ. ի ծագս ուր տիեզերք սահմանին, անդր քաջութէն ձեր հասանէ. և տեսանիցէք ընդ հուպ զանա տեսս ի մարդկանէ, դիցն աւելի անմահից ակներեւս։

Այս իբրև հուպ ի ծովն մատեան, անակնկալ դէպք մակընթացուէ և տեղի տալոյ ջուրցն խռովելոյ զնա սա, և արկ ի վտանգս մեծամեծս զնաւատորմն։ Ոչ ի

զլայնատարը զաշխարհածովիս իբրև զմիջերկրականն կար-
ծեցեալ, որ միայն ծանօթ էր նոցա, և անզգալն իսկ էին
անհարթութիւնք նորա, յայսուշ եղեն ի տեսանել զսա
ուռուցեալ ամբարձեալ և ծածկեալ զդաշտս, և վար-
կանելին ի ցասմանէ դիցն հասեալ պատուհաս յանդըդ-
նութէ իւրեանց։ Այլ իբրև ժամբ սակաւք ի վերայ անց
ցին, դարձեալ ապրուեցին և արհաւիրքն ոչ ինչ նուազ քան
զառաջինն յաձախեցին՝ ընդ զիջանել անդրէն ջուրցն և
մեկնել ի բաց, և ընդ ջրասոյզ երկրին ի վեր երևել։
Այլ նաւատորմին եհաս նեղութիւն մեծ. զի խրեցան
նաւք, և ընդ դաշտս ցիր և ցան սփռեալ կային կազ-
մածք նաւացն, և բեկորք թիակաց, և քայքայելոց
տախտակացն իբրև ի վայրենի մրրկէ բաղխեալ։

Ի վախձան ինդնեցունց ամսոց ընդ գետս նաւարկու-
թենն՝ հասեալ Ա[ՈՎկիան, և զսակաւ ինչ մասն ընդար-
ձակութենէ ծովուն անչափաբար նկատեալ, համարեր զտե-
սիլն զայն զկայեալսն մեծի աշխարհակալի՝ փոխարկեաս
արժանի վաստակոցն և բիւրաւորաց կորստեանն զձա-
նապարհայն։ Այլ մատոյց զոհս դիցն, և Պլիսդոնի ու-
րոյն. և արկ ի ծով զուարակս զենեալս, և բաժակս ու-
կիս բաղումս. և մաղթեաց ի դիցն՝ մի ումեք չետ իւր
զծայր արշաւանին իւրոյ կոխել։ Այլ ածեալ հասուցեալ
չայեմ կողմանէ զաշխարհակալութենէ իւր ի ծագ երկրի,
համարեցաւ հասեալ չուշ նպատակին. և ամբարձա-
ւաձեալ, դարձաւ առ իւրսն՝ որք ի բանակէն և ի
նաւատորմէն կէսք կացեալ էին ի Պատաղ և շուրջ
զնովաւ։

ԳՕԴՈՒԱՆ ԺԱ.

Ա ման երթալ Աղեքսանդրի առ ձեզ ընդ անապատս, և հասանել ի Պատարտ՝ ուր էր ընդերն Կիւրոսի. և Ափթոպոյ ներքինապետ ապանանել զառաջ զԱրիմն նախարար հպրդ. և Պալանոսի հնդիկ կամաւոր մահ ի խարոյկին. և Աղեքսանդրի էին առնել զԱպարիթ զոտնաւոր Դաւթեան. և Աբեդայ Այբենոս հասանել, և ապստել Դեմոնենի. և վտարանձել զօրացն մակեդոնացոց, և ման Աղեքսանդրի ցածոյանձել պաշտօնին, և երթալ զԱթենոպոլ տրոս ի Պահեպոնիոյ, և զԱրտաթեր փոխանակ նորա կացուցանել. և առաք նորա ընդ մահ Այգեսպինի։

Աղեքսանդր դարձեալ ի Պատարտ, պատուեր ետ նաւատորմին կազմել ի չոլ. և կացոյց զօրավար ընդ ծով զԱրքեսիոն, զի նա յամր սպայիցին իշխեաց յանձն առնուլ զգաղմանագնաւարիուձին՝ ընդ ծով քնաւին անձամբ։ Ուրախ եղև թագաւորն ընդ յօժարութեն նորա. և գոհացեալ զնմանէ, և գովեալ զնա, պատուէր ետ նմա՝ նաւատորմին ընտրելով նաւաց իւրոց լրտեսել զծովեզերս Պոնտոսի մինչև ի խորս Պարսից ծոցոյն։ Նա զպատուէրսն տուեալ, դիմեաց ինքն ընդ ցամաք ի Բաբելոն։

Եայց Արքեսիոն յամեաց Պոնտոս, և ոչ իսկ և իսկ գիտաց Աղեքսանդրի չոլ արար, զի էր ժամանակ նաւարկելոյ. քանզի անդ ամարայնի հողմք ի հարաւոյ հնչեն ի ծովուն, և ի հիւսիսոյ ձմերայնի. և ձմեռն չև էր հասեալ։ Այլ և իբրև թեպետ և ցվերջս սեպտեմբերի յաստեաց, այլ չև էս հասեալ էր ժամանակ չուոյ, և աւուրս ինչ նաւարկեալ՝ հարկեցաւ վասն հողմոյն ընդդէմ լինելոյ յապահովել կալ ուրեք զաւուրս քսան և չորս։ Ի այսոսիկ Արքեսիոս մանրապատում առնէ, Ձիգրիտ օրագրաւ նաւարկութեանն, ի յիշատակաց գրոց նորին իսկ Արքեսիոսի։

Աղեքսանդր մեկնեալ ի Պատարտ՝ խաղաց ընդ ովրիսա ցիս, որոց մայրաքաղաք աշխարհին կոչեր Ովրա կամ Հաամբակիս. և կրեաց սով ուժգին յերկիրն յայն, և ամբոխ բազում ի զօրացն կորոյս, հաղիւ եղեալ յաշխարհին չորիցն մասամբ բանակին՝ երկոտասան բիւրուց հետեւակացն և հնգետասան հազար հեծելոց։ Հազումբ իսկ յախտից և ի ջնասակաւ կերակրոց և ի սաստիկ

Արրի. պատմ. հնդ. 334։

ԱՄԱՀՆԴ տօթոյ եղէն մեռեալք, այլ խիստ եւս կոտորած ի զօրսն սոքա գործեաց՝ ընդ երկիրն խոպան և անարօր, յորում վայրենի ազգն բնակեր խիստ և գժնդակ կենօք։ Իբրև արմատք սպառեցան արմաւենւոյս երկրին, նախ զգրաստս կարասեակերս, ապա զերկիաքս հարկեցան ուտել. և առ ի չգոյէ բեռնաբարձից՝ զձոխս և զփարթամ աւարսն այրելոյն, վասն որոց ի ծագս երկրի զարշահամն արարեալ էր։ Յորմէ ի լրումն ազետից չարեացն՝ ամբոխ բազում ի բանակէն ժանտախտն կորոյս, որ յաձախ զՀետ սովոյ յաջորդէ։

Օ աւուրս վաթսուն Ձանապարհորդեալ՝ հասին ի սահմանս Վարդոսիայ, և գտին անդ առատութիւն մեծ։ Իսկ բաց ի Օ ի էր երկիրն բարւոյ, և թագաւորք և նախարարք՝ որք մերձ անդր բնակէին՝ առաքեցին նմա զիւրեանս պատարագ։ Յոր յաւուց անդ ի հանգիստ զօրացին. և ի կատարակաւոց կոզմինցն հնդկաց էտ ածել բազմութիւն բրիվարաց և բեռնաբարձ գրաստուց, յորմէ երկրէն որ ընդ իւրով իշխանութիւնն էր. և զՀեծելազօրն ձիաւորեալ անդրէն, և կազմածս որոց պէտք էին՝ էտ, զինս գեղեցիկս իբրև զառաջինսն. զի դիւրին էր նմա ի մեծաց տալ բերել յայնմհարկէն Պարսից, որ յայնժամ ի խաղաղութեան էր և ի բազում առատութիւն։

3679 · 325 Յհաս ասպ ի Կրման, և անց ընդ աչխարհն. ոչ որպէս աչխարհակալ ի չուս պատերազմի՝ այլ յայլակերպս ինն իբրև զաստուածասպարարին հանդերձ եամ լկտութիւնք, բազմեալ ի շքեղ կառս՝ լծեալ յոմանց երիվարաց։ Յր էր ի կառն բարձանաւադակ ըստ օրինակի թագաւոր քառակուսի կանգնեալ, ուր զեղեցկին զտիւ և զգեղ էր։ Յառաջի և զկնի կառաց նորա այլ կառք գնային, կեսք վրանաձև մեծագին գործովք և ծիրանեօք ծածկեալ, և կեսք իբրև զտաղաւարս սաղարթիւք ծառոց հովանացեալ։ Յր առ Ձանապարհսն և առ դուրս տանց՝ կարասք բազումք գինւոյ եդեալ կային, և ըմպատնակք մեծամեծք առընթեր և բաժակք և սկահակք յարբունս զինուորացն։ Հնչէր գաչն եամ ի ձայն նուագատանացն, և ի բարբառս աղաղակի աստուածապարարքացն՝ որք խելայեղեալ իմն հերարձակ այսր անդր ընթանային, մատնեալք յեամ ցոփութիւնս։ Օ ի ցանկայր Յզեքսանդր յաղթանակին Վիմանիսի, զորմէ առեն՝ ընդ եամ Յսկս նովին հանդիսիս անցեալ յետ աչխարհակալելոյ զՀնդիկս։ Յր գեօթն օր անկարգ և անառակ չուն տեւեաց, և ոչ սթափեցան զօրքն յարբեցութենէն։ Յոր

ըստ բախտի նոցա լեալ, ասէ Պետրոս, ոչ անկաւ ի սիրտ պարտելոց Թշնամեաց՝ գալ հասանել ի վերայ նոցա յայնժամ. զի հաղար այր քաջազէնք և քաջասիրտք կարէին պարտել դիւրին պատերազմամբ զյաղթօղսն տիեզերաց զընկզմեալս ի գինւոյ և ի զեղխութեն։

Եկարիոն անմիկնելի յափանցն նաւարկեալ անդատին ի տեղւօքէն՝ ուր Յոզոս յանգի ի ծով, եկն եհաս մինչ ի ծոցին Պաբսից. և մատեաւ Յերմոսիա կղզի, որ արդ կոչի Որմուս։ Յոր լուեալ զի Աղեքսանդր հնգեքսմբք աւուրբք հեռի եր անտի, կացոյց յամրի զնաւատորմն, և եկն առ նա չորիւք արամբք։ Մնագաւորն վարանեալ հոգայր զնաւատորմէն. և իբրև գիտաց թէ Եկարիոն միայնակ գայ, համարեցաւ զնմ նաւսն կորուսեալ, և զնա միայն յամենեցունց նաւաբեկեալն յաջողութեամբ ինն զերծեալ. և առաւել ևս ի տեսանելն զնա՝ ի նոյն կարծիսն հաստատեցաւ. զի եկն նա և արքն՝ որ ընդ նմա՝ տժգունեալք և հիւծեալք, և հագիւ ձառնչէին։ Յոր առեալ մեկուսի զՆեարխոն, և ուրախ լեալ ընդ նմա՝ զի ողջամբ ընկալաւ զնա, մինչ անմիտ թաթ սգոյ աւաղեր զկորուստ նաւատորմին, նա անդէն պատասխանի ետ. գոհութիւն դից, տեր արքայ, չկորեաւ նաւատորմիղն քո։ Յոր պատմեաց ուր և որպես եթողն զայն։ Յոր արտասուեաց Աղեքսանդր, և ասէ. Ունեմ են ինձ աւետիքս քան զաշխարհակալութեն ամ Ասիոյ։ Յոր մնագիւրութեք լուաւ ի նմանէ զկրս ձանապարհին, և զձանգամանս վայրացն՝ որպէս լրտեսեալ եր. և արձակեաց զնա ըստ յառաջագոյն պատուիրանին ելանել ընդ Եփրատ ի Բաբելոն։

Ի կրման եկին բաղումք առ Աղեքսանդր՝ բողոք ունել զանիրաւութեք կուսակալաց և սպայից, որք ի կողմանս կողմանս հարստահարէին զժողովուրդս, մինչ ելքն չէր անդ։ Օ՛ի ի տար աշխարհէն չկարծէին թէ դառնայցէ. և զամ յափշտակութիւն և զբռնութեն և զանգթութեն և զանիրաւուն առնէին ընդ ազգս։ Յոր ողբմեալ ի նեղութեանն նոցա, և յարդար բողոքոյ նոցա սրտմտեալ, ետ սպանանել զամ զնաւապետս, և ընդ նոսա վեց հարիւր զօրական՝ որ բռնութեն նոցա և անօրէնութեց դահիճք եղեն։ Օ նոյն խոստացեալ արար և յապայն ընդ ամ սպայս՝ որ խուեին զոք. և ցանկալի առ յար ամ գաւառաց նուաճելոց՝ կեալ ընդ իւրև։ Օ՛ի պարտ համարեր Թագաւորի՝ տալ զհաւոր օրինակն, վասն ուղղելոյ՝ զի պարտ է նմա նուաճել զտահակաւ-

թէն. վասն փառաց՝ զի մի հաղորդեսցի անիրաւութեանց, որ յիւր անուն գործիցին. վասն սիրոյ թէ ժողովրդեանն՝ զի խնդրեսցէ զնոցան վըճիռ՝ զոր ինքեանց ոչ է օրէն խնդրել. և վասն աներկիւղութեան աշխարհին՝ զի արդար ուղղութեան պարապել ջնա՛ի վտանգաց բազմաց, և զաղմուկս իսկ բազումս ցածուցանել։ Լ՚ղեաք են, և կարի չար ազէտք աշխարհի՝ ուր զրկանք և տառապանք և հարստահարութեի և զեղծումն անպատուհաս յաճախեն, և ուր ատատ իշխանութեի զբամիկան և եւթ անհանի, և ոչ երբեք՛ի կեղեքիչս նորա։

Լ՚ղեքսանդր՛ի լսել զանցս յայոդակ նաւարկութեանն Նէարքոսի՝ բերկրեաւ, ցանկացաւ և ինքն նաւել և ձա նապարհորդել ընդ ծով. և խորհէր մեկնել՛ի Պարսից ծոցոյն, և պատել զԼ՚ըաբիաւ և զԼ՚իրիկեաւ, և՛ի միջ երկրակամն մտանել ծով ընդ կալպեան կիրձն՝ որ Հե րակլեայ արձանքն կոչին, ուր բազում անգամ խորհեցան գնալ, և միանգամ հրամանաւ Լ՚եքսաւոլայ արքային եգիպտացւոց յայոդեաց, որպես այլուր ասա ցաք։ Լ՚ւ ապա խորհէր գնալ՛ի Կարքեդոն, ընդ որում ոխայրն, և խոնարհել զսերձնութեի նորա. և անտի ան ցանել՛ի Սպանիա, որ Լ՚երերիա առ Հոյնն կոչէր՝ Լ՚ի բեր գետոյ. և ապա զԼ՚ալեան լերամբքն խիզախել ան ցանել, և պատել զծովվերբերք Լատալիոյ, ուստի Լ՚ապի բոս ընդ անձուկ կիրճ մեայր նմա անցանել, և անտի՛ի Մ՚ակեդոնիա։ Ապա այսորիկ պատուէր առաքեաց՛ի Մ՚ինջագետս և Լ՚ոսրիս առ նախարարս՝ կառուցանել բազում ուրեք՛ի վերոյ գետոյն Լ՚փրատայ, մանաւանդ՛ի Ճատպակոն, նաւս բազումս՝ որչափ պիտոյ էր։ Լ՚ւ՛ի Լ՚իբանան լեռնէն ետ հատանել մայրիս, զի ածցէ անդր՛ի Ճատպակոն. այլ կամեցաւ մահուն՛ի դէպն եհան զայն, և զայլ ամ խորհուրդս նորա՝ զորս երկնեցն՛ի մոխ։

Լ՚ւ երթեալ զՃամապարհն, անց՛ի Պասարգադ քա ղաք Պարսից։ Լ՚ւ էր կուսակալ երկրին Ղոսին, աւագ յամ իշխանս կողմանցն այնոցիկ, սերեալ՛ի Կիւրոսէ, և՛ի վերայ մեծութեանց նախնեացն յաւելեալ մեծեր գանձուց՛ի լայնածաւալ աշխարհին բազմաժամանակեայ իշխանութենէն։ Որ և սպաս մեծ արքային մատոյց՛ի ժա մանակի արշաւանին նորա՛ի Հնդիկս. զի կուսակալ գա ւառին մեռաւ, և իբրև երկիրն անտէրունչ խուռեր և աղմկեր՝ յանձն էառ ինքն գյանձանձանս իրաց նորա, և յաւացին կարգն դարձոյց ընա, և կալաւ՛ի նմին մինչև

'ի գալ հասանել անդր Ալեքսանդրի։ Որում ընդ ա-
ռաջ եղ ազգի ազգի պատարագս աճեալ նմա և սպայից
նորա. երիվարս բազումս մարզիկս դեղեցիկս, կառս
դրուագեալս ոսկւով և արծաթով, կահս ւմեծագինս, ա-
կանս պատուականս, անօթս ոսկեղէնս ծանուննս բազ-
մակրնս, հանդերձս ծիրանիս, և չորեքհազար քահքար
արծաթոյ դրամս։ Այլ հատուցումն ծանր և դառն ընդ
պերճ առատաձեռնութեն ընկալաւ։ Օ՛ի ամ աւագոյ
դրան արքային առաւել քան զանկալութիւն նոցա պար-
գեւս բաշխեալ, զԱդու նեղբկնի անտես արար զմոե-
բիմ Թագաւորին. իբր ոչ եթէ մոռացեալ, այլ արհա-
մարհեալ զնա։ Եւ իսրատեալ ևս վասն պատրիկ յումե-
քէ, ասէ. Օ բարեկամս արքային մեծարե Որսեն, և ոչ
զվատ նեղբկնի։ Այլ եհաս բանն այն յականկն Ադուայ,
և զամ զօրութիւն իւր՝ ի կիր էարկ՝ ի կորուստ արքայա-
զինն՝ որ յաղնուականագունէն ընդ ամ արևելս նախնոյ
սերբէն, և էր ամենևին անատփիւտ ուղղութիւքն։ Եւ
հրապուրեաց Ադու արս՝ ի սպասաւորաց իսկ իւրոց,
և հրահանգեաց գնոսա՝ ամբաստան լինել զնմանէ՝ ի դէպ
ժամանակի. և ինքն՝ ի լինել ընդ արքայի առանձինն՝
կասկածանս և կեղակարծիս արկանէր՝ ի միտս նորա դա-
բանաւոր բանասրկութիւք, իբր թէ վայրապար ըստ դի-
պաց բանք ընդ չրթունսն վազելին, և բազում զգուշու-
թեամբ թագուցանէր զպատճառս գժգոհութեն ընդ Որ-
սենեայ։ Այլ Թագաւորն Թէպետ և չերագեաց՝ ի դա-
տաստան, այլ ոչ ևս մեծարեր զՈրսեն. իսկ նա ընաւին
ինչ ոչ գիտէր զգաղտնածածուկ դաւսդն։ Եւ ոչ դադա-
րեր Ադու՝ ի խօսակիցն լինել ստէպ ընդ արքային՝
բամբասել զնա, մերթ՝ ի յափշտակութիւն և մերթ՝ ի
մատնութիւն։

Վ՛ատնգ մեծ ի Թագաւորաց՝ ի մտահաձութիւն անկա-
նելոյ և զառածանելոյ՝ ի բանս սիրելեացն. և վտանգ
կարի յաձախեալ, մինչև սրբոյն Ներսիսեանց հասեալ
ձակեալ գրել առ Լուղինեաս քահանայապետ, զի թէ՝ ի
մոլորութենէ ստոի ազատ իցէ՝ մարթ է քեզ իբր մի
ոք միայնակ՝ ի մարդկանէ պարծել։ Եւ զոր զթագաւո-
րաց ասացի, բնաւ իսկ աւագանւոյ ձահաւորի. ոչք հեշ-
տալուր են յարախօսութենէ, զի հրապուրէ զամբարշաւա-
ձութիւնն նոցա կեղծեօք տիրասեր նախանձուն։ Զարա-
խօսութէ և՝ ի սիրտ արդարակորով ազդէ, և Թողու՝ ի
նմա զտխուր հետն՝ որով երագամէտ առնի՝ ի կասկած
և յերկմտութէ և՝ ի թերահաւատել։ Զարախօս նենգ-

գաւոր՝ երկայնամիտ է և յանդուգն. զի աներկեան է
՚ի պատժոց, և թեթեւ վտանգաւ ծանուցնս ինասէ. Լակ
աւագանին առ յոլոքեր, առ զառաջաւեր մտաց, առ
ամեհիդ բազմախելթ և երկչոտ և թերահաւատ երևե-
լոյ, և զի գառն է խոստովան լինել զպատրանսն և ըզ-
հասնեալ դիւրահաւանութիւն, դուն ուրեք խորագոյն
խոյզ և խնդիր առնեն զանխուել յարախօսութեց, նմին և
րի և առաքինութեի անբիծ և անսոգիւտ հաւատարմու-
թիւն հաստահարիւն ստեպ։

Ո՞րոյ զոխութ օրինակն աստէն տեսանեմք։ Լագոս
զնո՞ր հնարս յառաջագոյն կազմեալ, ապա զնորհուրդն
՚ի վեր եհան։ Ո՞ի իբրև կամէր Ղեբքսանդր զաձիւն
կիւրոսի մեծի աշխարհակալին եղերական սպասուք մա-
ծարել, և հրամայեաց բանալ զշիրիմ նորա, և ոչ ինչ՚ի
նմա եգիտ՝ բայց միայն ասպար հին և փուտ և աղեղունս
կրկին սկիւթացիս և գաշոյն փոխանակ ոսկւոյն և արծաթ
թոյ՝ որովք գերեզմանն նորա լի համբաւէր ՚ի Պարսս, և
պակ ոսկի զատփորուին եգեալ, և ծածկեալ զայն քղամ-
դան, զարմանայր՝ զի թագաւորն հզոր և մեծանուն իբ-
րև զմի ոք ՚ի բազմոց Թագեալ էր, զայն ժամ պատեհ
գտեալ Լագոս, ասէ. Ո՞վ ինչ են զարմանք՝ թէ գե-
րեզմանք թագաւորաց Թափուր կան, քանզի ապարանք
նախարարացն անձկանան ոսկւոյն՝ որ անտի բարձեալ է։
Իմ չէք իսկ յառաջագոյն զշիրիմս զայս տեսեալ. այլ՚ի
Պարեհէ իսկ լուեալ եմ զմիերից անբաւ գանձուց՝ թէ
կային՚ի շիրիմս։ Լյս ուստի՞ շռայլեցէք Ոլրսին, և ընդէր,
բայց՚ի գտանել չնորհս առաջի արքայի՝ ընծայեալ զոր
չկարէրն պահել առանց վտանգի կորստեան անձին։
Լնհաւ ասին զրպարտութիւն էր, և՚ի խոչտանգանս մա-
տուցան մեզ պահապանք գերեզմանին, և ոչ ինչ հա-
ւատիք պահանձեալ գողութեն յայտնեցան։ Ո՞ւրեքն
և եթե նոցա պարտ էր Ղեբքսանդրի անպարտ առնել զՈՐ-
սին. այլ Լագոս ձարտար և ողոք բանիւքն զգածեալ
միտք Թագաւորին, դիւրահաւան և դիւրամատոյց էր
զրպարտութեն։ Լյս դատախազք հրահանգեալք՚ի Լա-
գոսէ՝ ՚ի գէպ ժամուն եկին ամբաստան լինել. և ընդ
բազում չարախօսութիւնսն՝ գանձուց շիրմին կողոպտիչ
գերեզմանակրկիտ ամբաստանեցին զՈրսին։ Լարձաւ
տարակոյս, և ոչ ևս հաւատացաց պէտք էգեն. արկաւ
հեքն՚ի շղթայս՝ մինչ չև զամբաստանութեն ազդ լեալ
էր նմա, և սպանաւ առանց պատասխանի տալոյ և առա-
ջի ոսոխացն կալոյ։ Լհաղ բազդին Թագաւորաց՝ որք ոչ

անձամբ լսեն և քննեն, և որ բիւրուք այսպիսեօք պատ-
րանօք՝ որովք լի են վէպք՝ ոչ զգաստանան։

Լ՚ը ընդ Թագաւորին Պաղտոս հնդիկ, զորմէ յառաջ
ջագոյն ասացաք, անուանի յ՚ամ իմաստուն յիւրում
աշխարհին. որոյ զիմիտ իմաստասիրութիւնէ կէնցաղ վա-
րեալ, սակայն յալիս ծերութիւնն յանձն հառ ընդ առա-
զանին կեալ։ Ա՚ա զամ կեանս իւր զուարճասուն և զերիս Աբդիս. է.
ամս առանց իրիք ախտակրութիւնէ եկեաց. այլ՚ի Պասար 276։
գադ խիթք՚ի փոր նորա անկան, և եղ՚ի մահ անձնա- Դիոդ. ԺԷ.
մահ լինել։ Օ՚ի չհանդուրժէր երկարաձիգ ցաւոցն Պլու-. յԱ- 573։
խանգարելոյ խոր առողջութիւն՝ յոր՚ի կեանն իւրում ք՚ո. 703։
կեցեալ էր, և կասկածէր անկանել՚ի ձեռս բժշկաց, և
բազում ազգի ազգի դեղովք տանջել. և աղաչեաց զՊա-
թագաւորն՝ տալ կազմել փայտակոյս, և յեկանել իւ-
րում անդր՚ի փայտակոյսն՝ հուր՚ի ներքոյ մատուցա-
նել, զի թագաւորն կարծեր դիւրաւ՚ի սոսկալի խորհրդոյն
չրջել գնա. այլ ամ բանիւքն չկարացեալ զհաստատուն
և զանմեղկելի միտս նորա ողջել, յանձն հառ զկիջանել
՚ի կամն նորա։ Եւ եկն Պալանոս հեծեալ՚ի ձի՚ի փայ-
տակոյսն, մատոյց պաղատանս դիցն, և ետ կատարել՚ի
վերայ իւր զամ քաւութիւնս և զպաշտամունս՝ որ՚ի վե-
րայ մեռելոցն պաշտէին, և հատանել հերս՚ի վարսիցն՝
որպէս՚ի զենելոց հատանէին. և գերկու արիւեալ բարե-
կամացն՝ որ շուրջն կային, աղաչեաց զնոսա՝ առնել
զայն օր ուրախութիւնէ, ուտել և ըմպել ընդ Թագաւորին,
և գուշակեաց տեսանել զնա ընդ հուպ՚ի Կաթելոն. և
ապա եւ խնդութիւն՚ի փայտակոյսն, և ընկողմնեալ ծած-
կեաց զերեսս իւր. և՚ի պատել զնովաւ բոցոյն՝ ոչ ինչ
խըրտեցաւ, այլ՚ի նմին կողմանն անշարժ և անյուղդողդ
եկաց, մինչև զարմանալ ամ զօրացն. և մատոյց զանձն
ողջակէզ ըստ սովորութիւնէ իմաստնոցն հնդկաց։

Օ՚որմէ այլ և այլ դատաստանք եղեն, ասէ վկայա- Դիոդոր
գիրն. կիսոց համարեալ զգործն մահ և կիսոր. այլոց
մնափառ և անձնացոյց պարծանս, որպէս երեն իսկ, առա-
նելոյ անուն քաջութիւնէ նորանչան ժուժկալութիւնն. և այ-
լոց զսուտ արիութիւնն գովեալ, որ ցաւոցն և մահուն
չաղթեաց։

Ի սոսկալի պաշտամունսն դարձաւ Պղեբսանդր՚ի տե-
ղի իւր, և զբազումն՚ի բարեկամացն և՚ի սպային կո-
չեաց յրնթերիս. և վասն բանիցն Պալանոսի՚ի մեծաց
բանս նմա խոստացաւ պսակ՝ որում շատն ըմպիցէ։ Եւ
յաղթեաց Պրոմաքոս, չափս չորս գինւոյ արբեալ՝ ուրճ-

և տասն կամ քսան ստամն։ Այլ զմրցանակն ընկալեալ պսակ ի կէտ քանքարոյ, ոչ ինչ աւելի քան զերիս ա-ւուրս ի վերայ յաղթութենէն եկեաց։ Այլ յայլոց կոչնա-կանացն աղբ քառասուն և մի մեռան ի շուայտութե-նէն. և զրաւն հանգոյն տեսարանին լինէր, զոր ըն-ծայեացն Պալանոս ի տեսիլ։

Եւսէբ. պատմ. հպտ. 357։

Ի Պասարգադայ եկն Կիւրեքսանդր ի Պերսեպոլիս. և տեսեալ զաւերս հրդեհին՝ զոր արկն, զղջացաւ ընդ անմտութենէ իւր. և անտի յառաջեաց ի Շօշ։ Կ'ա-ծեր խոն ըստ պատուիրանին՝ ելանէր նաւատորմաւն ընդ Կիփրատ. այլ իբրև լուաւ թէ Կիւրեքսանդր երթայ ի Շօշ, էջ անդրէն մինչ ի գետախառնուածն ի բերան Պա-սիտիգրիս գետոյ, և ընդ վէր կոյս գետոյն խաղաց մին-չև ի կամուրջն՝ ընդ որ եր Ճանապարհն Կիւրեքսանդրի։ Այլ եկին ի մի վայր բանակին և նաւատորմ, և զոն գո-հացոզականս մատոյց Կիւրեքսանդր վասն յաջողութեան գործին, և արարին զօրքն ուրախութենի մեծ։ Այլ փա-ռաւորեաց Թագաւորն զԱրիստոն վասն քաջութենն, ո-րով առաջնորդեալ նաւատորմին՝ ած զնա աղջամբ մինչև անդր ընդ ամենայն բազում վտանգս։

Այլ եին եկեալ Կիւրեքսանդր ի Շօշ զամ ազատա-գունդ գերին, զոր Թագեալ էր անդ. և ամենաւաւորեաց ընդ ինքեան զաղբայրսն օրիորդն զՍտատիրա զանգրա-նիկ դուստր Դարեհի, և զՀնօսկ կրսերն ետ սիրելոյ իւրում Հփեստիոնի։ Այլ առ ի ծածկել զանպատեհն հաւասարութենն այլոց, յորդորեաց ի նոյն և զաւագ իշ-խանս և զմեերիմ սիրելիս իւր, և ընտրելոցն իւրեանց կանայս յաղնուականագունից տանց Պարսից՝ օրիորդս իբր ուխտսն։ Ո՛լ խորհեր ևս Կիւրեքսանդր բազմացն տուրևառիւք ամուսնութեանց՝ խորագոյն զկցորդութենէ երկուց ազգացն հաստատել, զի կացցեն ի մի ընդ իւրս։ Այլ արար հարսանիս պարսիկ օրինօք, և կոչումն մանկ-դնաց-ուց ամենեցուն՝ որոց արարեալ իակ էր անդէն յաշխարհին զՀարսանիսն։ Այլ աւանդէն՝ ինն հազար կոչնականս լեալ անդ. և ամենեցուն նոցա մէն մի քա-ժակ ոսկի պարգև ետ ի նուէր գինւոյ։

Այլ ոչ այս միայն, այլ և զամ պարտս զօրացն կամե-ցաւ հատուցանել։ Կ'ելլ բազումք երկինչելին յայտնել զպարտսն՝ թէ գուցէ հնարիւք գիտել կամիցի Թագա-ւորն զի՛ք ի նոցանէ չուայլեցեն. նմին իբրև կացոյց սեղա-նաւորս ի բանակին՝ հատուցանել իւրաքանչիւր զպարտսն, առանց քննելոյ զանուն փոխատուին և զպար-

տապանին։ Այլ եւ մեծ իմն առատութիւն էր եւ կարի հաճոյական, զի աւանդեն ցբիւր ի քաղաքսդ զդումար արծաթոյն հասեալ, այլ չայսմանէ անուանցն հաճոյ ևս եղև ամենեցուն։ Ասացեալ Աղեքսանդր կրտամբեալ զզօրսն վասն կասկածելոյ նոցա, ասէ. Ոչ եւ չէ օրէն թագաւորի դրժել ժողովրդեան, եւ ոչ ժողովրդեան կասկածել զնմանէ զվատ յանցումն[1]։ Իմմոստ կարի վայելուչ թագաւորի, նման զանկապուտ փառս գործեալ, եւ ժողովրդեան աներկեւանութիւն. այլ միակ զրժումն բանին աղաղաւ զայն անմոռոգելի, եւ է մեծ քան զամ յանցուածս առաջնորդի։

Ի ժամանակին յայնմիկ հասին ի Բ օշ երեք բիւր պարսիկ մանկտի, ամենեքին գրեթէ համամարք. որք Աղեքսանդրի կոչէին, այս ինքն յաջորդք. զի գային փոխանակել ընդ առաջնոց զօրացն, զի նոքա արձակեսցին ի զինուորութէ եւ յերկար աշխատութենէն։ Այս էին նոքա կորովիք եւ կայտառք՝ ընտրեալք յամ աշխարհէն Պարսից, եւ աւանդեալ առ իշխանս նորոց դաստակերտաց Աղեքսանդրի եւ նուաճելոց քաղաքաց, եւ կրթեալ ի նմանէ յամ հրահանգս իրաց պատերազմի, սպրկիկս զգեցեալ, եւ վառեալ ըստ օրինի մակեդոնացւոց։ Այս եկին հարին զբանակ իւրեանց յանդիման քաղաքին, եւ անդէն ձահատեալ՝ անցին ի հանդիսի իբր ի փորձ մարտի առաջի թագաւորին։ Այս յայժ հաճոյ թուեցաւ նմա, եւ առնէր նոցա պարգեւս մեծամեծս. որով ի բնիկ զօրսն մակեդոնացիս նախանձ մեծ էարկ։ Օ՜ի տեսանէր իսկ զնոսա խոնջս եւ տաղտկացեալս յերկայն պատերազմէն, եւ զի ատէպ ի ժողովս տրտնջէին եւ բրթմնջէին, խորհէը զնոր զօրսն հակառակ հնոցն կազմել, եւ սանձահարել զհամարձակութէն նոցա։ Այլ վասնզ մեծ է զազգի միոյ զհեռ յանձն ձգել, եւ զօտարս քան զբնիկս յայնմի մեծարել։

Ի ժամանակին յայնմիկ Աբգար, զոր Աղեքսանդր Պատառ. Ի յարշաւել իւրում՝ ի հնդիկս՝ կացոյց նախարար ի Դեմաբ.85։ բելոն, եւլիք զծառայութէն. և խորհեցեալ ընդ միտս՝ թէ ոչ ևս դարձցի Աղեքսանդր յաշխարհակալութենէ հնդկաստանի, եհեղ զանձն յամ ցոփութենիս, և սպառեաց ի վատթար գեղխութենսն զկեաս ի գանձուց՝ որ առ նմա յատանդի կային։ Այլ իբրև լուաւ՝ թէ դար-

[1] Օ՜ի պարտ է թագաւորի ձրշ- հնազանդելոց համարել ձչմարտա- մարտախօսել առ հպատակս, և խօս զթագաւորն։ Ասէրեան։

ձեալ գայ Աղեքսանդր ի հնդկաց, և խստիւ պատուհասել զկուսակալսն զեղծեալս իշխանութեանն իւրեանց, խորհեցաւ զանձն պատսպարել. և մերկեալ հինգ հազար քանքար, և վեց հազար զօրս ժողովեալ, մեկնեցաւ

Պլուտարք. ի գնաց Աղեքսիկ Աղեքսիոս։ Եւ խոնեցան ընդ առաջ ձաւրատասնօրք վարձկանք արծաթասէրք, վաղ իսկ կաշառեալք յուսով։ Եւ ոչ անտես արար զնոսա Աղբաղ. Փ։ 751։ այլ սակաւ ինչ մասն ի բազում գանձուցն և նոցա ետ ի հրապոյրս։ Եայց փոկիոնի առաքեաց եօթն հարիւր քանքար, և զնա ինչս իւր և զանձն գլխովին ի նա ապատան արար. զի գիտեր զհնոյ զօրութիւն նորա առաջի ժողովրդեանն։

Եւ ժողովուրդն ակն ածէր ի նմանէ վասն ուղղութեան, և մանաւանդ վասն անզօրաքաղաքութեան. Օ և յորժամ հրեշտակք ի փիլիպպոսէ եկեալ մատուցանէին նմա կշիռ բազում արծաթոյ, և հրապուրէին առնուել զայն՝ գէթ վասն որդւոց իւրոց, որոց առ յոյժ չքաւորութեան չէր մարթ ըստ պայմանի հայրենի փառացն կեալ, նա պատասխանի ետ և ասէ. Աղթէ ինձ նմանողք էցեն, ագարակին փոքրիկ՝ որ կեցոյցէ զիս և ած ի փառս յայս, նոյն և զնոսա կեցուսցէ. ապա թէ չէցեն նմանողք, մի լիցի ինձ թողուլ նոցա ինչս ի սպառ և ի զայ-

Պլուտարք. ի բացումն զեղխութեանն նոցա՝։ Եւ ինքն իսկ Աղեքսանդր Փ։ 749։ յղեաց առ նա հարիւր քանքար. և փոկիոն եհարց ցարս՝ որ ածէին զարծաթն, և ասէ. Օ մէ և էր վասն առ իս միայն ի բազմաժողով աթենացիսն յղէ Աղեքսանդր զկշիռս մեծ արծաթոյդ։ Եւթա եւոուն պատասխանի. Օ և զքեզ միայն գիտէ լաւ և առաքինի։ Եւ նա ասէ. Ծողոպէ ապա լինել ինձ և համարել այնպիսի։

Աղդ սա ոչպէս զՀրեշտակս Աղբաղայ ընկալաւ, ոչ ետ հարկ ասել։ Լսեսցաւ ընդ նոսա խստագոյնս, և ծանուցին սպառնացաւ նոցա՝ մի զոք ի քաղաքացոցն կառաւել. և բարձաւ անտի ամ յոյս Աղբաղայ։ Եւ ոչ Աթէ մնացեն աւելի ինչ օգնեաց նմա ի սկզբանն. զի խրատ ետ աթենացւոց մերժել զնա, և զդոյշ կալ յամիրաւ և յանբռնադատ պատերազմին։

Եայլ յետ աւուրց ի համար առնել կամիցին ետեւ Աղբաղ զի ցանկութիւն հայեր Աթեմոսթենի ի բաժակ մի

1 Եթէ ինձ, ասէ, նմանիկցին՝ զի ինձ խմով թողակօք տածել տածուն իմ փոքրիկ և զնոսա մնուս. զզեղխութիւն նոցա և աշեցուցցէ, որ զիսն յոյգ փառս էած. Նեւ. Ի. Նեւ. ի Փ։ ։ ապա թէ չէցեն նմանողք, մի լի-

